

ՄԵՐԶԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ  
ԱՐԵՎԵԼԻԻ  
ԵՐԿՐՆԵՐ  
ԵՎ  
ԺՈՂՈՎՈՒԻՐՅՆԵՐ

XV


АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТРАНЫ и НАРОДЫ  
БЛИЖНЕГО  
и  
СРЕДНЕГО  
ВОСТОКА

XV


ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1989

ՊԱՅԶ



ՄԵՐՉԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ  
ԱՐԵՎԵԼԻ  
ԵՐԿՐՆԵՐ  
ԵՎ  
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XV



ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆԵՑԻԱ

Գ. Կ. ՄԱՐԿԻՍՅԱՆ (Լուծազան), Ն. Մ. ԿՐԱՆՅԱՆ, Ե. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,  
Ե. Կ. ՄՇԻՍՅԱՆ, Թ. Վ. ՍԱՀԱՅՅԱՆ, Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ  
Հասցի: պատմա-հասարակական ինստիտուտ  
Ե. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գիրքը Երասմուսազարյան և Երայիտազարի գրախանուհի  
պատմական գիտ. թանկանոցներ  
Ն. Կ. ՔՅՓՈՒՂՅԱՆԸ, Լ. Թ. Վ. ԿՈՆՍՏԱՆՏԻՆԸ

Редакционная коллегия

Г. К. САРКИСЯН (председатель), Г. М. ЕГАЦЯН, Ш. Х. МГОРЯН,  
Н. О. ОГАНЕСЯН, Р. Г. СААКЯН, Е. К. САРКИСЯН

Ответственный редактор тома  
Н. О. ОГАНЕСЯН

*ժողովուրդում ընտրվելով 1950—1950-ական թվականներին  
Արարական արժեքի երկրներում, Երանում և Քարթլիում տեղի ունե-  
ցած կարևոր քաղաքական իրադարձությունները և սոցիալ-տնտեսական  
զարգացում, միջազգային հարաբերությունների ստանձնի խնդիրներ  
խնայարանված և Երվանու երկրների պատմական զարգացման, քաղա-  
փարախոսության ու գրականության զանազան հարցերի հղումի տեղ և  
Հասկացված նաև բանասիրության հարցերին:*

*Գիրքը հարցնազգում է պատմաբանների, միջազգայնագետների, բա-  
նասիրների լայն շրջաններին:*

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR  
AND MIDDLE EAST

XV

PUBLISHING HOUSE OF THE ACADEMY OF SCIENCES OF THE  
ARMENIAN SSR

YEREVAN—1959

1106050000

Մ 703(03)—89 22—87

ISBN 5—8080

© Հայկական ԽՍՀ ԳԱ Երասմուսազարյան, 1959



## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՈՑԻԱԼ-ԶԱՂԱՋԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

Ա. Ռ. ԼՈՎԱՆՆՈՍՏԱՆ

### ՔՈՒՐՔՈՒՆՅՈՒՄ «ԵՆՈՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆՏԵՊՏԻՍՏԻ» ՄՇԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ (XX դ. 30-ԱԿԱՆ ԲՐ.)

Արդի ժամանակաշրջանում ծավալվող գաղափարական սուր պայ-  
քարը, ի թիվս այլևայլ միջոցների, ներառել է պատմագիտությունը՝ լայ-  
նորեն ոգտագործելով նրա հին ու նորագույն տվյալները: Ահա թե ին-  
չու, ներկայումս, բուրժուական պատմական քննադատության կոն-  
ցենպցիաներին, նվիրված աշխատություններն առավել քան կարևոր  
նշանակություն են ստանում:

Սովետական թուրքագետները մեծ ներդրում ունեն Քուրքիայի  
Հասարակական-քաղաքական մտքի պատմությունն ուսումնասիրելու  
գործում: Տարբեր տարիներ լույս են տեսել քաղմաթիվ հրատա-  
րակություններ՝ նվիրված թուրք գիտնականների պատմական հետա-  
զոտություններին: Թուրքական պատմագիտության մակարդակի և ար-  
դի վիճակի մասին կարևոր հետևություններ և զնահատականներ ենք  
գտնում թուրք պատմաբանների աշխատություններին, թուրքական  
գիտական պարբերականներին նվիրված գրախոսականներում, ինչպես  
ևս առանձին մենագրություններում տեղ գտած պատմագիտական  
ակնարկներում և թուրքական պատմագիտության առանձին պորըլմ-  
ներ արժարծող հոդվածներում<sup>1</sup>:

Թուրք պատմաբանների մեծամասնության համար հիմնական է  
մնում իր արմատներով՝ դեպի բուրժուական նացիոնալիզմի դոկտրի-  
նան զնացող, XX դարի 20—30-ական թվականների բարեփոխում-  
ների ժամանակ ձևավորված «նոր պատմական կոնցենպցիան»:

Սովետական պատմագրության մեջ այդ խնդիրը հատուկ հետա-  
զոտության առարկա չի դարձել, թեև մեր արևելագետների մի շարք  
աշխատություններում այդ առթիվ կարելի է գտնել արժեքավոր շատ

փաստեր և դիտարկումներ<sup>2</sup>։ Այս հարցին հպանցիկ անդրազարմել ևն նաև արևմտյան որոշ գիտնականներ<sup>3</sup>։

Հենվելով հիմնականում Թուրքական ազդյունների վրա, մենք նպատակ ունենք քննարկել սեփա պատմական կոնցեպցիայի ստեղծման պատճառներն ու պայմանները, ինչպես նաև ցույց տալ, թե այն ինչպիսի արտացոլում է գտել Թուրքական պատմական ընկերությունից առաջին աշխատություններում։

1918—1923 թթ. ազգային պայքարի ավարտից և Թուրքական հանրապետության հիմնադրումից հետո երկրի առև զրգից անանսություն, քաղաքականության և մշակույթի ասպարեզում արմատական վերափոխություններ մտցնելու խնդիրը Թուրքական ազգային բուրժուազիայի առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ այնպիսի գաղափարախոսության մշակումը, որի միջոցով կարողանար պատմականորեն հիմնավորել ինքնուրույն զարգացման իր իրավունքը։ Եվ նացիոնալիզմը դարձավ նորաստեղծ բուրժուազիայի գաղափարախոսությունը, որն իր արտացոլումը գտավ նաև այսպես կոչված «նոր պատմական կոնցեպցիայում»։

Իշխանության գլուխ անցնելով, քննալականները ձևականորեն հրամարվեցին պանթուրքիզմի գաղափարախոսությունից և քաղաքականությունից։ 1921 թ. զեկանմբերին, ելույթ ունենալով Ազգային մեծ ժողովում, Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը հայտարարեց. «Պարտնայք, մեր համաքաղաքացիներից, հավատակիցներից և հայրենակիցներից ամեն մեկը մտովին կարող է ունենալ իր մեծ իդեալը, ևս ազատ է և ինքնուրույն։ Ոչ ոք իրավունք չունի խառնելու նրա գործերին։ Մակայն Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հեռու է հիմնավոր և կայուն քաղաքականության, որը կոչված է ազգային որոշակի սահմաններում ապահովելու Թուրքերի կյանքը և անկախությունը։ Ազգը ներկայացնող Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և նրա կառավարությունը ամենևին հեռու են պատրանքներից և իրենց քաղաքականության մեջ բավական համեստ ու իրատես ևն... Պարտնայք, այս ազգն այսօր կառափնարանի հասցրած գործողությունների և արարքների արժանանալը թաքնված ևն պատրանքների ու զգացմունքների մեջ<sup>4</sup>։

Քեմալականները փոխեցին անգամ «թյուրքությունը տերմինը, որը միտժամանակ նշանակում էր Թուրքիզմ (այսինքն՝ Թուրքական նացիոնալիզմ), և Թյուրքիզմ (այսինքն՝ պանթուրքիզմ), փոխարինելով

ախ Եմիլիյեթիլիքը բառով (հետագայում՝ Եուլուաշուլուք), որ նշանակում է նացիոնալիզմ, Միլիյեթիլիքը հայտարարվեց ժողովրդահանրապետական կուսակցության լողունգներին մեկը և մտավ նրա ծրագրի մեջ<sup>5</sup>։

Բայց ո՛ր քեմալականները, և ո՛ր էլ ինքը՝ Քեմալ Աթաթուրքը, հետևողական լզանգեցին պանթուրքիզմի դատապարտման հարցում։ Աթաթուրքը հետագայում ներողամտությամբ զրսեորեց մի շարք անձանց գործողության հանգևոլ, որոնց հողովոճներում և գրքերում պրոպագանդովում էր այդ հետադիմական գաղափարախոսությունը, և դա վկայում է բուրժուական գաղափարախոսության մեջ և երկրի հասարակական կյանքում հետադիմական միտումների դեմ պայքարելու յկամությունն ու անկարողությունը։ Նույնպիսի անհետևողականություն գրսեորվեց նաև Աթաթուրքի առաջ քաշած ժնոր պատմական կոնցեպցիայի և թե թուրքական պատմական կոնգրեսի աշխատանքների նկատմամբ։

Օսմանյան միապետության կործանումից հետո քեմալականների առաջ գրվեց համաղղային պետություն ստեղծելու խնդիրը (1920 թ. հունվարի 28-ի Ազգային համաձայնագրով որոշված սահմանների շրջանակում)<sup>6</sup>։ Այս իմաստով Աթաթուրքը առաջնահերթ էր համարում Եմարպկանց գիտակցությունից արմատախիլ անել միապետության կամ իսլամական աշխարհի հանգևոլ եղած հավատարմության գաղափարը՝ փոխարինելով այն հայրենիքին նվիրվածության գաղափարով<sup>7</sup>։

Այս նպատակին հասնելու միջոցներից մեկը համարվեց պատմությունը, իսկ նրա նախաձեռնությունը ստեղծված Թուրքական պատմական ընկերությունը՝ կոչված էր դառնալու գաղափարախոսության և մշակույթի ասպարեզում պետական քաղաքականությունն անցկացնող միջնորդ։ Թուրք գիտնականների առջև գրված էր իր էությունը նացիոնալիստական խնդիր, այն է՝ ապացուցել անատոլիական թուրքերի բնիկ լինելը և դրանով իսկ բզիտականորեն հիմնավորել նրանց իրավունքը Փոքր Ասիայի տարածքի նկատմամբ։ Պատմության հանգևոլ քեմալականների նման ակտիվությունը պատահական չէր։ Թեպետ հայտնի է, 1919—1922 թթ. Արևմտյան Անատոլիան գրաված հույները հայտարարել էին, թե այն պետք է պատկանի Հունաստանին, քանի որ այդտեղ հեռավ գոյություն է ունեցել հունական քաղաքակրթություն։ Իտալացիները ևս, վկայակոչելով այն փաստը, որ Անատոլիան ժամանակին մտել է Հռոմեական մեծ կայսրության մեջ, 1919—1921 թթ. գրավեցին Հարավային Անատոլիան<sup>8</sup>։

Որպեսզի նման Հայտարարութիւնները անհիմն նկատվին, Աթաթուրքը թուրք գիտնականներին կոչ արեց Քուրքիայի տարածքում ապրած Հնագույն բնակիչների մէջ փնտրել ժամանակակից Քուրքիի նախնիներին:

Բացի դրանից քիմաւականները գտնում էին, որ Քուրքիին նվիրված եվրոպական գիտնականների աշխատութիւնների մեծ մասը ոչ օբյեկտիվ բնույթ է կրում: Սկզբում Քուրքիին Համարում էին բաւառաւ պատիւ<sup>10</sup>, Հետագայում, երբ ակնհայտ դարձավ եվրոպայից Օսմանյան կայսրութեան հեռ մնալը, երան սկսեցին վերաբերվել քամահրանքով և արհամարհանքով<sup>11</sup>:

Աթաթուրքը գտնում էր, որ պատմութիւնը պիտի դառնա ազգային պայքարի հողատու ճակատը: Եթէ Քուրքիի և եվրոպացիների դարավոր թշնամական Հարաբերութիւնների հետեւանքով,—գրում էր նա,— Համաշխարհային պատմագրութեան մէջ պերահչոտում են Քուրքիի հանգեւ պահանջարկների և թշնամական վերաբերմունքի արդուներ հանգիստացող Հայացքները: Քուրքիին նայել են որպէս երկրորդական, քուրքի մաստներով Հետամնաց մի ժողովրդի: Քուրքիին նայել են սոսկ որպէս ռազմիկների, ապառապիչների:

Բացի այդ, եվրոպական պետութիւնները ապավինելով պատմական փաստերին, առաջ են քաշել այն գաղափարը, թէ Քուրքիը իրավազօր չեն այն տարածքների նկատմամբ, որտեղ դարեր ի վեր ապրել են: Այս պնդումները հիմք հանդիսացան բաժանելու Օսմանյան կայսրութիւնը՝ առաջին Համաշխարհային պատերազմի ավարտին<sup>12</sup>:

Եթէ Քուրքիի նկատմամբ նման անբարյացակամութիւնը Աթաթուրքի հոգում խոր զայրույթ առաջացրեց, —գրում է Ու. Իզմիրը<sup>13</sup>:

Անվաճից արդեն պարզ է, որ քիմաւական շարժման հաղթանակից հետո քիմաւականները բոլորչա պատճառներ ունենին դիմելու պատմութեան ուսումնասիրութեանը: 20-ական թվականներին Քուրքիայում ճանապարհորդած սովետական Հետազոտող Յու. Տիշանսկին իր հուշերում գրում է. «Մուսթաֆա Քիմալի իր ողջ ժամանակը վատնում է պատմաւիճակաբանական որոնումների վրա: Հատուկ հանձնաժողովի օգնութեամբ, որի կազմում են Քուրք Համարյա քուրք և եվրոպացի որոշ գիտնականներ, նա ստեղծում է իր պատմական տեսութիւնը, որը կոչված է ապացուցելու, թէ Քուրքիը Հնագույն քաղաքակիրթ ժողովուրդներից են, սկզբնավորել են Հետագա մի շարք քաղաքակիրթութիւնները և որ երանք բարբարոս ու Հեամանաց չեն»<sup>14</sup>: Քուրք-

քիայի պատմությանը առնչվող նյութերը ուսումնասիրելու գործում ներգրավեցին բույր նրանց, ովքեր զբաղվում կամ կարող էին զբաղվել պատմությամբ: Նյութերի հիման վրա կազմվում էին հաշվհաղություններ և ներկայացվում Աթաթուրքին: Այս հետազոտությունների արդյունքը եղավ Աթաթուրքի պատրաստած թուրքական պատմության հիմնական ուղղությունները աշխատությունը<sup>15</sup>, որի առաջարկում ասված էր. «Մեր նախնիները, որ մեծ տերություններ են ստեղծել, զարման նաև մեծ քաղաքակրթությունների ստեղծողներ: Մեր պարզն է՝ հետազոտել, ուսումնասիրել, և թուրքական ժողովրդին ու ողջ աշխարհին պատմել այդ մասին: Եթե թուրք երեխաներն իմանան իրենց նախնիների մեծագործությունները, նրանք իրենց մեղ ուժ կգտնեն ավելի կարևոր գործեր իրականացնելու համար»<sup>16</sup>:

Այս աշխատանքի էլակետային գրույթներից մեկը հետևյալն էր. Հնագույն ժամանակներում, երաշխի և տեսնական այլ բնույթի պատճառների հետևանքով, Միջին Ասիայից քոչվորները մեծ տեղաշարժ են կատարել: Քոչվոր այս ցեղերը խոսել են թուրքական լեզուներով և պատկանել են ալպիական կարճագույն ռասային: Նրանք վերաբնակեցված վայրերն են բերել իրենց առաջավոր մշակույթը: Այս գրույթը զարմավ պաշտոնական տեղ պատմական կոնցեպցիայի հիմքը: Դրա ապացուցմանը նվիրվեց թուրք գիտնականների ուսումնասիրությունների մի ամբողջ շարք:

Այս գովարկնայի լույսի տակ դասախոսներ պատրաստելու համար որոշվեց 1932 թ. Հուլիսին ստեղծել հատուկ գաստեթագներ: Հետագայում դրանք ստացան թուրքական տառչին պատմական կոնգրես անվանումը, և նրա արձանագրություններն էլ հրատարակվեցին այդ անվանմամբ<sup>17</sup>:

Այդ կոնգրեսը կազմակերպվեց թուրքիայի ժողովրդական կրթության մինիստրության կողմից: Մասնակցում էին 232 հոգի, այդ թվում՝ Ստամբուլի համալսարանի պատմության պրոֆեսորներ, լիցեյների, դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների դասախոսներ:

Բնականաբար, կոնգրեսի հիմնական ուշադրությունը բևեռված էր թուրքերի ծագումնաբանության խնդրին: Թուրք գիտնականները որոշեցին ապացուցել Անատոլիայում թուրքերի բնիկ լինելը, ծայրահեղ դեպքում՝ նեոլիթի ժամանակներից բնավորվելը: Այս հարցին էր մասնավորապես նվիրված Աֆեթ Մանի «Նախապատմական շրջանում և պատմության արշալույսին»<sup>18</sup> զեկուցումը, ուր նա կանգ առավ հետևյալ հարցերի վրա.

Երկրի տարիքը: Միշին Ասիայի տեղագրութիւնը<sup>20</sup>: Ժողովուրդների տարածումը և բնակեցումը Երկրի վրա: Ռասաների հարցը: Ո՞վ է Միշին Ասիայի բնիկ ժողովուրդը<sup>20</sup>:

Իր զեկուցման մեջ Աֆենթ Ռանը նկատում է, որ «...զժժար է պնդել, թէ մարդկութիւնը երկրի վրա առաջացել է կոնկրետ մի տեղում: Բայց մարդկութիւնը բարձր քաղաքակրթութիւնը սորանը կարող էր լինել և եղել է միմիայն երկրի մեկ կետում՝ Միշին Ասիայում: Պատմական հետազոտ այդ գաբաշրջանում,—ըստ Աֆենթ Ռանի,—երկրագնդի բոլոր անկյուններում ապրել են երկայնագույն մարդիկ: Միշին Ասիայում առաջացել է մի ուրիշ ուսսա, որը և փաստորեն ստեղծել է նեոլիթի մշակույթը: Հենց նրանք էին, որ առաջին անգամ յուրացնելով հողագործութիւնը և անասնապահութիւնը՝ մարդկութիւնը առջև բացեցին մետաղի գաբաշրջանը: Նրանք խոսել են մեկ լեզվով՝ թյուրքերեն: Այս ուսսան Միշին Ասիայից տարաբնակեցվեց տարբեր վայրերում՝ իր հետ տանելով բարձր մշակույթ: Նա բարձր կուլտուրա է տարել Իրան, Հնդկաստան, Փոքր Ասիա և Ամերիկա: Այդ ուսսայի մի հյուզն էլ խեթերն են, այսինքն՝ պրոտոթյուրքերը, որոնք բնակեցրել են Անատոլիան:»

Աերևմտյան գիտնականները գտնում են,—չարունակում է Ա. Ռանը,—որ եվրոպական քաղաքակրթութիւնը հիմնադիրները եղել են արիական ցեղերը: Նույնիսկ նրանց ինքնեմզման մեջ՝ արի կամ արյա, նկատվում է թուրքական ակունքը: Այն է՝ ար-էր (տղամարդ, մարդ—Ն. Լ.): Արիական համարվող լեզուներում պետք է փնտրել նախ և առաջ թուրքական արմատներ, և ոչ թէ հնդկական կամ պարսկական: Այս հարցում պետք է սպասել մեր թուրք գիտնականների բացատրութիւններին<sup>21</sup>,—եզրափակում է նա:

Հարց է ծագում. ինչի՞ց էլնելով են կատարվում նման եզրահանգումներ: Ամենից առաջ մարդարանութիւնը փաստերից: Տարիների ընթացքում Ա. Ռանը առողջապահութիւնը, լուսավորութիւնը և պաշտպանութիւնը միեւրոպայականների աշակցութիւնը հետազոտել է ավելի քան 64 հուզար մարդկանց, որի արդուներն ամփոփված են նրա շարք ժողովրդի մարդարանական բնութագիրը և թուրքական պատմութիւնը աշխատութիւնը մեջ: Այս կամ այն շրջանի բնակիչները հետազոտվել են առանց նրանց ազգային պատկանելութիւնը նկատի առնելու և դա արվել է միանգամայն զիտակցաբար: Հեղինակը գրում է, որ ցանկացել է յույց տալ թուրքիայի բնակչութիւնը ուսսայական միասնականութիւնը<sup>22</sup>, շնորհիւ ժամանակներից (Փում թե-



փեկի պեղումները) մինչև սամանները, մարդկային կմախքները մար-  
դարանական տեսակետից համարյա նույն բնույթի ենք<sup>20</sup>։ Այսպիսով,  
եզրակացնում է Ա. Մանը, «համարյա միշտ տիրողները և հպատակ-  
ները պատկանելի են նույն այդ էթնոսինք»<sup>21</sup>։

Ինչպես տեսնում ենք, հեղինակի նենդափոխված եզրահանգում-  
ները հարմարեցված են իրենց առջև զբված խնդիրներին։ Մի բան,  
որ արժեքագրվում է նրա հավաքած փաստական «հարուստ» նյութը։

Ժողովրդական կրթության միևնույն շնորհիվ (Բողբույթը) ե-  
լույթ ունենալով թուրք պատմաբանների առաջին կոնգրեսում, ամ-  
բիսից հայտարարեց, որ թուրքերին լեզուն «նախալեզու» է և որ այն  
հիմքն է բոլոր մյուս լեզուներին<sup>22</sup>։

Կոնգրեսում այդ մասին խոսեց նաև Ռընթաթ Սամիչը իր «Թուրք  
լեզվի կապը մյուս լեզուների հետ» զեկուցման մեջ<sup>23</sup>։

«Նոր պատմական կոնցեպցիան» ապացուցելու համար թուրք գիտ-  
նականներն սկսեցին դիմել այնպիսի հակադիտական մեթոդների,  
ինչպիսիք են «Նյուտոնաբանական սովորական նմանությունները։ Նրանք  
«գտան», որ «խաթի», «էթի» բառերը (ինքը՝ Աթաթուրքն առաջարկեց  
խեթերին անվանել «էթի») ոչ այլ ինչ է, եթե ոչ թուրքական «աթա»  
(նախահայր) բառը<sup>24</sup>։

Ռեչիդ Գալիբը իր «Թուրքական առասն և ընդհանուր ակնարկ  
քաղաքակրթության պատմության» զեկուցման մեջ հայտարարեց, թե  
Միջագետքի քաղաքակրթությունը՝

1. տեղական (բնիկ) չէր,

2. նրա ստեղծողը Միջին Ասիայից եկվորներն են,

3. շումերները եղել են թուրանցիներ, ազնիվ ճիշտ՝ թուրքեր<sup>25</sup>։

Իր «Ընդհանուր ակնարկ էգեյան քաղաքակրթության առաջացման»  
զեկուցման մեջ Հասան Չամիլ Չեմբելը ասում էր, թե «եկեթերը, շու-  
մերները, եգիպտական և էգեյան քաղաքակրթությունները մեկ շղթայի  
օղակների նման ձգվում են Այթալից»<sup>26</sup>։

Թուրք քաղաքական գործիչները, ապա նաև գիտնականները որո-  
շեցին մարդկության «նախահայրը» լինելու հպարտութունը ներշնչել  
իրենց ժողովրդին, նրան վերագրելով աշխարհի մյուս ժողովուրդների  
կուսակած վաստակն ու արժանիքները։ Այսպես, օրինակ, Հասգ բելը  
հայտարարեց, թե հենց թուրքերն են «առաջինը վառելի համաշխար-  
հային մշակույթի շահերը և «փրկելի Եվրոպան քարանձավային կյան-  
քից»<sup>27</sup>։

Մրանց լոկ Համարտակություններ լին՝ թուած այդ ժամանակվա ժողովրդական մինիստրի շուրթերից, Լուսավորության ապարեղում երանք վարում էին շատ որոշակի քաղաքականութիւն, այն է՝ երիտասարդութիւնը դաստիարակել ծայրահեղ ազգայնամոլութիւն ոգով։

Էնոր պատմական կոնցենպցիայիչ գլխավոր դրուիթներն ընկան շարիհէ քառահատոր գրքի հիմքում, որ գարնամ պատմութիւն դասագիրք<sup>21</sup>։ ԵՊարիհէ-ում թուրք գիտնականները ավելի հետուն գեացիներ թուրքերի տաղանդին վերագրվեց մշակութի ծաղկումը Հին Գիւստանում<sup>22</sup>, սկիւթներ<sup>23</sup> մտ, Հնդկաստանում<sup>24</sup>, Եգիպտոսում<sup>25</sup> և այլուր, հենվելով նմանական գիտնականների վրա<sup>26</sup>, որոնք երբեմն սխուրանական էն համարում ոչ սեմական և ոչ հնդկութայական ժողովուրդներին և ցեղերին՝ ամենին էլ այդ տերմինի տակ կհատի շունեւալով թուրքերին։ Ահա թե ինչ է գրում ԵՊարիհէ-ը գրութիւն առաջացման մասին. «Այն ստեղծվել է թուրքերի կողմից եսխապատմական ժամանակաշրջանում և տարածվել է ամբողջ աշխարհում»<sup>27</sup>, Հայտնի է, որ Ե.Պ.ա. IV դարի վերջին և III-ի սկզբին Հարավային Միջագետքում առաջացավ հնագույն գրութիւն։ Առաջավոր Ասիայի համարյա բոլոր ժողովուրդները փոխանակելով շումերներից սեպագրերի համակարգը, հարմարեցրին այն իրենց լեզվական առանձնահատկութիւններին<sup>28</sup>, Եթէ հետևելու լինենք թուրք գիտնականների արամաքանութիւնը, համաձայն որի շումերները եսխաթուրքերն են, ապա ողջ մարդկութիւնը պետք է հենց երանց պարտական է լինի, այդ մեծագույն նվաճման համար։

Ինչպես տեսնում ենք, թուրքական գիտնականները իրենց վարկածները հիմնավորելու համար դիմել են հին աշխարհի ժողովուրդների պատմութիւն առանձին փաստերին։ Ուսումնասիրութիւնների ժամանակ կոնկրետ փաստերին անզրադառեալը դրական երևույթ է համարվում։ Մակայն, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը. «Փաստերը, եթէ դրանք վերցվեն իրենց ամբողջութիւն, իրենց կապի մեջ, ոչ միայն համառ են, այլև անվերապահորեն ապացուցիչ բան են։ Մանր փաստերը, եթէ դրանք վերցվում են ամբողջութիւնից դուրս, կապից դուրս, եթէ դրանք կցկատուր և կամայական են, հենց միայն, խուզալիք են կամ որն էլ ավելի վատ բան»<sup>29</sup>։

Թուրք գիտնականները ենդագիտելով փաստերը, պատմական առանձին կոնկրետ ուսումնասիրութիւնների արդյունքները, ԵՊորք



Ասիայում գոյութիւն ունեցած բոլոր քաղաքակրթութիւնները վերագրում են թուրքական տաղանդավոր ազգին<sup>10</sup>։

Հանրապետութիւն Հռչակումից Հետո թուրք պատմաբանների գլխավոր ուշադրութիւնը կենտրոնացվեց շուրջ թուրքական անցյալին՝ սրտնամների վրա։ Այս կապակցութեամբ մեծ Հեռաքրքրութեամբ ուսումնասիրվում էին թուրքերի էթնիկական ակունքները և փորձեր էին արվում ապացուցելու Անատոլիայում նրանց բոլորից վաղ երևան գալը։

Սովետական գիտնական Գ. Ն. Նրեմենը, բնութագրելով 30-ական թվականների թուրքական պատմագիտութիւնը, գրում է, որ այն չի խուսափել սանձան Հիմնագոյութիւններից<sup>11</sup>։ Հազիվ թէ կարելի լինի «հիմնագոյութիւն» անվանել որոշակի նպատակներով պատմութիւնը գիտակցաբար խեղաթուրելը, մանավանդ, որ XX դարի 30-ական թվականներին առաջ քաշված «նոր պատմական կոնցեպցիան», այսօր էլ շարունակում է Հիմնագոյութիւն մնալ թուրքական պատմական ընկերութիւն աշխատանքներում, ինչպես զա եղած է նրա կանոնագրութիւն մեջ։ Թուրքական առաջին պատմական կոնգրեսի ամբիոնից, քառահատոր «Թարիհին» էջերում և այլ աշխատութիւններում թուրք գիտնականները հայտարարում էին, որ պատրաստվում են զրել իրենց ազգի «բնական» պատմութիւնը՝ ի տարբերութիւն հվրոպական հեղինակների, որոնք կանխակալ գիրքերից են ներկայացրել «իրենց ազգի պատմութիւնը»։

Ինչպես բնորոշ է բուրժուական գիտութեանը, այդ խնդրի իրականացման հարցում էլ նրանք հետևողական լպտնվեցին։ Եվրոպական նացիոնալիզմին նրանք հակադրեցին իրենց նացիոնալ-շովինիզմը։ «Նոր պատմական կոնցեպցիան» մշակվեց թուրքական բուրժուական նացիոնալիզմի զարգացման մթնոլորտում՝ միաժամանակ հանդիսակալով նրա արդյունքը և խթանը։ Իսկ, թէ ինչպես է արտահայտվում այն ժամանակակից թուրքական պատմագիտութիւն մեջ և ինչպիսի փոփոխութիւններ է կրել, զա արդեն հասուկ ուսումնասիրութիւն նյութ է։

К ВОПРОСУ О ВЫРАБОТКЕ В ТУРЦИИ  
«НОВОЙ ИСТОРИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ»  
(30-е гг. XX в.)

Резюме

Статья посвящена анализу причин и условий выработки в Турции «новой исторической концепции» (30-е гг. XX в.), ее отражению в первых трудах созданного тогда же Турецкого исторического общества. После победы кемалистского движения, для обоснования прав на создание собственной государственности, турецкими буржуазными идеологами перед учеными была поставлена задача: доказать автохтонность анатолийских туруков, вневечность их обитания на территории Малой Азии. Целый ряд работ турецких ученых был посвящен ее доказательству. Ставшая официальной доктриной эта концепция и сегодня остается руководящей в работах Турецкого исторического общества. Используя, в основном, турецкие источники, автор показывает националистическую сущность этой концепции, дает критику первых работ турецких историков, созданных в ее духе.

- 1 ՅՎ՛՛ Ռ. Մանվել, Ազգա-Քարգիւն ԿարեւորՔրեւեհեր զամուժան Կազմուիւն լուարուուր Ժամանակից Քարք զամուղրիւն մէշ, Երևան, 1964 թ., Կ. Մարտիան, Ռ. Մանվել, Լաշ Եղզուրդեր նոր իրանի զամուժան Էնկազիտուր Քարք զամուղրիւն մէշ, Երևան, 1962 թ., Тверитинова А. С. Фальсификация истории средневековой Турции в кемалистской историографии. «Византийский вестник», VII, 1963, էջ 9—21, С. Ф. Орешкова «Кризис» исторической науки и некоторые новые направления исторических исследований в современной Турции. «Великий Октябрь и Турция», тезисы и резюме докладов и сообщений научной конференции (1977, Тбилиси). М., 1977, ԳԻՐՆԻՎ, էջ 61—66.
- 2 ՅՎ՛՛ Մ. Կ. Յուզալյան, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии. Ереван, 1970; Д. Е. Еремеев, Этногенез туруков, М., 1971.
- 3 Այ՛՛ Քուլմ Կարեւր է նշել B. Lewis, The emergence of modern Turkey, London, 1962; D. Kushner, The rise of turkish nationalism, London, 1977.
- 4 Atatürk'ün özyülev ve demecileri, İstanbul, 1945, с. 1, а. 193—194.
- 5 Aykut Şeref, Kamalism. (CHP programının izahı), İstanbul, 1936, а. 20—25.
- 6 ՅՎ՛՛ Մустафа Кемаль (Ататюрк). Путь новой Турции, М., 1934. т. 4, с. 333.

- 7 B. Lewis, op. cit., p. 229.
- 8 Այն հիմնադրվել է 1921 թ. նախին Քուրդական պատմության ուսումնասիրման ընկերության փոխարեն Կարասուզո ընկերության (սեկետարիայան) մեջ էլված էր, որ այն հաշված է «նոր պատմական ղեկըզգիտլա յուրի սակ պարրերա-չուր իրականացնելու պատմական ուսումնասիրություններ»:
- 9 Համառայե Մուսթաֆ զինադարի, Շույներ սիպուսըրի Արմաչյան Անաս-թյան, 55\* Սеврские морные договоры и акты, подписанные в Лозанне, М., 1927, с. III—XII. Раздел Анатской Турция (По секретным документам б. Министерства иностранных дел) М. 1924; М. Шамсуллоеву Птаны раз-дела султанской Турция и использование ее в вооруженной интервенции Антанты против Советской России (1918—1919). — Турецкий сборник, М., 1958, էջ 22—47.
- 10 The „scoutages of God“—St. Lane-Pool, Turkey. New York, 1914, էջ 3.
- 11 XIX դարում եվրոպական հասարակարանական պետությունների հաշիչ Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրների գաղութացման և գաղութային հայտնություն-ների՝ Բրիտանական, Ֆրանսիական, Գերմանական և այլոց ստեղծման Համառայե նվիրողում յայն տարրում դուով Հեռամայ Արևելքի և սուպուգեմ Ար-մաչյի կեցնեցիանե Յեսախանրեն այն հիմնադրված էր Հնգելի պատմափ-րափայտական սեկեմում: Այն տարրերում էր այսպես հաշված պատմական ժողովուրդները, որոնք թվին էին վերադրվում հին Շույներ ու Համառայեները, եվրոպայի քրիստոնյա ժողովուրդները սիչ պատմական ժողովուրդների շարքին էին վերադրվում Արևելքի ժողովուրդները: 55\* Гегель, Философия истории, Софиевски, т. VIII, М—Л, 1935.
- 12 ТТК, Islam Ansiklopedisi, 10 cüz, İst. 1949, 787.
- 13 U. İğdemir, Yılları İçinden. Ankara, 1976, 209.
- 14 Ю. Ташанский По новой Турции. ОГИЗ, 1933, с. 120.
- 15 Türk tarihinin ana hatları. İst. 1930.
- 16 Նույն տեղում:
- 17 Birinci Türk Tarih Kongresi (Konferanslar ve müzakere tabloları), İstanbul, 1932. Հետադարում՝ IV Kongresi.
- 18 Tarihten evvel ve tarih ferrinde, I TT Kongresi.
- 19 Համառայե Քուրդական պատմագրության սովանդությունների, Միչին Ասիա աշ-խարհագրական հասարակության մեջ ԱՖԿՔ Քեանը ընդգրկում է նաև Պաղինը ու Ալիալը:
- 20 Այս զննարման հիմնական գրությունները Հեռադարում զարգացվեցին Dr. Afetinan. Afetinan. Türkiye halkının antropolojik karakterleri ve Türkiye tarihi (Türk irkinin vatanı Anadolu). Ankara, 1947 զրրում:
- 21 «Երկուցիս բարը, որչիս հեղեթույտական ընկերի սնվանում, գտեմ մեք պատ-մաբյան մեջ սուսչին Քուրդերի ի Հայտ գաղտն մի քանի հազարամյակ սուսչի: 33\* История Древнего Востока, М., 1979, с. 349—350.

22 Dr. Afetinan, op. cit., 28.

23 Նույն տեղում, էջ 49.

24 Նույն տեղում:

25 I TT Kongressi..., a. a. 7—8.

26 Այդ թեզը նկատարում իր արտահայտությունը գրավել լիզվել ծագման, այսպես նշված տարիակն թերթիայում:

27 Թարգմարում 20-ական թթ. հայտնվեցին տեղում բանիկր փրոն տեղանուններով սծումիքրանկն (սեռումնրական բանիկն) և սիթիքրանիկն (սեռնթական բանիկն): Ժամանակակից գիտությունն ապացուցել է, որ խեթերները պատկանում է հնդեգրական լիզուներին շարքին: Տե՛ս J. G. Macquisen, The hittites and their contemporaries in Asia Minor, London, 1975; J. Melnart, Earliest civilizations on the Near East, London, 1965; В. Иванов, Хеттский язык М., 1963, Н. Дьяконов, Предистория армянского народа, Ереван, 1968. Ժամանակակից որոշ թուրք գիտնականներ շնչումում են խեթերին հնդեգրական ծագումը: Տե՛ս Эрзен Афиф, Восточная Анатолия и Урарту. АН Ари ССР, Центр научной информации по общественным наукам, Научно-информационный бюллетень по общественным наукам, Серия III, № 10/64, Ереван, 1963, с. 19:

28 I TT Kongressi..., 117:

29 Խույն տեղում, էջ 201:

30 Խույն տեղում, էջ 8:

31 Tarikh. I. 1. 1932.

22 Խույն տեղում, գ. 1, էջ 65, 69:

23 Խույն տեղում, էջ 69—71:

24 Խույն տեղում, էջ 74—75:

25 Խույն տեղում, էջ 103—105:

26 Եր. ժ. Մարգանիս, է. Պրիթարիս և այլք:

37 Tarikh, c. 1, 41.

38 Տե՛ս История Древнего Востока, с. 181—182.

39 Վ. Ն. Լեւոն, Նիժ, գ. 30, էջ 430.

40 U. İğdemir. Yilların içinden, a. 303:

41 Գ. Ն. Երեմյան, Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 26:


Ճ. Ա. ՄԱՆՄՏԱՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ «ԲԱՅ ԳՈՆՆՐԻ»  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱԽՈՂՈՒՄԸ

Ազգիպատասի սոցիալ-տնտեսական կյանքում 70-ական թթ. սկիզբը բնութագրվում է նշանակալից փոփոխություններով: Պրեզիդենտ Լասերի հանկարծառու մահը, որը հանգեցրեց երկրում քաղաքական ղեկավարության փոփոխմանը, տեղի ունեցավ այն պահին, երբ նվաճամալին միճակում գտնվող տնտեսության ոլորտում անհրաժեշտություն էր դարձել անհապաղ միջոցառումների ձեռնարկումը: Երևան էին հեկե տնտեսական աճի նվազման նշաններ՝ 1969—1970 թթ. 6,9 տոկոսի դիմաց 1970—1971 թթ. այն իջել էր 6,8 տոկոսի՝ 1967 թ. իսրայելական ազդեցիկ նյութական մեծ կորուստներ պատճառով, ռազմական ծախսերն աճեցին, որոնց ծավալը 70-ական թվականների սկզբում համապատասխանում էր Ազգիպատասի ազգային համախառն արտադրանքի 25 տոկոսին: Մոլիգնում էր դրամարժեքի անկումը, չէր բավականացնում մթերքը, համախառն արտադրանքը կտրուկ նվազում էր:

Ջարգացող երկրների տնտեսության պետական հատվածի սովորական թերությունները պատճառ է առիթ ծառայեցին հետադեմ տարրերի էլույթների համար, որոնք սկսեցին ավելի հանախակի և ավելի բարձրաձայն խոսել պետահատվածի վերացման և տնտեսության ղեկավար բարձունքները մասնավոր ձեռնարկություններին հանձնելու մասին: Այդ ժամանակ առաջ եկած տուգու շեղումն շարժումըն էր պատասխան հեղափոխության կերպարանափոխման ընթացքի նախըրգանքն էր:

Ազգիպատասի տնտեսության կապիտալիստները, որոնց առաջնահերթ նպատակը մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը պետության վերահսկողությունից դուրս բերելն էր, իսկ վերջնականը՝ երկրի արտտնտեսության առաջել շահութարեք էլույզնում փրկապետող զերբերի:



զրազուճը, ոգևորված կառավարության աշակցությունից, հանդես էին գալիս Հենց պետական ձեռնարկության գաղափարի քննադատությամբ, պատճառարանելով, որ պետական ձեռնարկությունները փաստորեն մշտապես աշխատում են ոչ չրիվ կարողությամբ, քանի որ ներքին շուկայում նրանց օրին է մրցակցություն չի սպառնում, Ձայներ էին հնչում, որոնք պահանջում էին պետական հատվածի զլխավոր վարչությունների արժեքզիջի վաճառք, զրամատեային, վալյուտային ու հարկային համակարգի վերափոխման, արտահանման—ներմուծման գործառույթությունների բնագավառում պահանջովի գիրքերի փուլացում։

Շնախկին ժամանակաշրջանի սխալների ուղղման պատրվակով Ոգիպտոսի պրեզիդենտ Սադաթը 1971 թ. փետրվարին հայտարարեց հինգ հազար խոշոր հողատերերի՝ նախկինում խլված հողերի գիմաց զրամական փոխհատուցում ապու, 800 խոշոր կալվածատերերի հողը վերագարձելու և բանազրավման քաղաքականությունից հրամարվելու մասին։ Ուշադրության են արժանի այդ նույն տարում հրապարակված երկու օրենքները՝ «Արարական կապիտալի ներդրումների մասին» (№ 65) և «Արարակն առևտրի և զարգացման եզրպատկան զրամատե հիմնադրման մասին» (№ 77), որոնք մատչելի էին զարձկում Ոգիպտոսի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ներթափանցումը՝

Համաձայն № 65 օրենքի արարական և այլ օտարերկրյա կապիտալ ներդրումների բերած շահույթները հինգ տարի ազատվում էին եկամտահարկից, օգտագործած կապիտալ ներդրումներից ստացված մաքուր շահույթը կարող էր փոխազրվել արտասահման ներդրման՝ վալյուտայով։ Օրենքը երաշխավորում էր ներդրման պահից հինգ տարի անց հետագա հինգ տարիների ընթացքում օտարերկրյա կապիտալի դուրս բերում երկրից։ Օտարերկրացի մասնագետներին իրավունք էր արվում օտարերկրյա վալյուտայով արտասահման փոխազրել իրենց աշխատավարձի կեսը։

№ 77 օրենքը նպատակ ուներ արտասահմանից արտոնյալ ալյամաններով օտարերկրյա վալյուտայով միջոցներ ներգրավել պետական և մասնավոր ընկերությունների և ուղղակի ներդրումային գործարքների համար։ Բանկային ազանդները ազգայնացման կում բանազրավման ենթակա չէին, ազանգատների եկամուտները զերծ էին մնում հարկումներից, իսկ զրամատե գործառույթությունները դուրս էին մնում եզրպատկան օրենքների իրավասությունից։

Այժմ արդեն ակնհայտ դարձավ նոր ղեկավարության անտեսական կողմնորոշումը: Գա հույան Արևմուտքի Հեռ կապիտու, եզիպտական անտեսության ֆինանսավորման համար օտարերկրյա մասնավոր և պետական կապիտալի ներդրումն նպատակով ներդրումային միջոցառում ստեղծելու քաղաքականությունն էր: Նոր ուղղության սկզբունքները ձևակերպվեցին 1974 թ. հրապարակված «Հեռկամերյան աշխատանքային փաստաթղթում», որը պաշտոնապես հաստատեց Եզիպտոսի սոցիալ-քաղաքական կողմնորոշման կարուկ փոփոխությունը:

Երաց դռներէ քաղաքականությունը իրավական հենքի վրա դնելու և օտարերկրյա կապիտալին ազգայնացումից ու բռնագրավումից կրաշխիքներով ապահովելու համար, այդ նույն 1974 թ. եզիպտական կառավարությունը հրապարակեց «Արարական և օտարերկրյա ներդրումների և ազատ գոտիների մասին» N 43 օրենքը<sup>1</sup>, Զորս գլխից բաղկացած այդ օրենքը (1—«Արարական և օտարերկրյա ներդրումները», 2—«Երկրամազ ձեռնարկախմբերը», 3—«Արարական և օտարերկրյա ներդրումների և ազատ գոտիների գլխավոր վարչությունը», 4—«Ազատ գոտիները» օտարերկրյա կապիտալին հնարավորություն տվեց մուտք գործել արդյունաբերության, լեռնարդյունահանություն և գրամատները, աշխիքն՝ այն ճյուղերը, որոնք նախկինում պատկանում էին պետական հատվածին: Ազատ գոտիներում գործող միջազգային կազմակերպություններն ու ընկերություններն ազատվում էին ամեն կարգի հարկերից: Օտարերկրյա կապիտալը կարող էր իր գործունեությունը վարել առանց իրենելելու պետական վերահսկողությունից: Հիմնըվեց Արարական և օտարերկրյա ներդրումների գլխավոր վարչություն: Տեսեսություն և պլանավորման մինիստրությանը ենթակա այդ վարչության հիմնական պարտականությունն էր քրաց դռներէ քաղաքականության շրջանակներում հաստատել անտեսական ծրագրերը:

1975 թ. հրապարակվեց պետական հատվածի գլխավոր վարչությունների վերացման մասին օրենքը: Այս օրենքը անխուսափելի արդյունքն էր պաշտոնական այն հայտարարությունների, որոնք պնդում էին, թե ամբողջ պետական հատվածի միասնական ծրագրի որևէ անհրաժեշտություն չկա, քանի որ անտեսական գործունեության յուրաքանչյուր ճյուղ, նույնիսկ յուրաքանչյուր արտադրական միավոր կարիք ունի իր զարգացման սեփական ծրագրերի, որոնք հաշվի են առնում անտեսության այս կամ այն օրինկաի արտադրական գործունեության առանձնահատկությունն ու յուրահատկությունը<sup>2</sup>:







փոփոխություններից մեկն էր կապիտալը և եկամուտների ոչ թե պաշտահան, այլ փոխանահաման կուրսով երկրից արտարկելու թույլատրումը: Փոփոխությունները ընդլայնեցին նաև արտահան և այլ օտարերկրացի ներդրողների կապիտալների հնարավոր ներդրման ուղորտները: Մտցվեց ևս մի փոփոխություն, որի համաձայն Եգիպտոսի բաժինը համատեղ բաժնեատիրական ընկերությունների մեջ չպետք է լիներ 50 տոկոսից պակաս, իսկ տեխնիկա և տեխնոլոգիա մատակարարող ընկերությունները պիտի ընդունեին համատեղ արտահանող ընկերությունների տեսք:

Այս միջոցառումների հետևանքով օտարերկրյա մասնավոր ձեռնարկատիրական գործունեության որոշ աշխուժացում նկատվեց, սակայն այդ աշխուժությունը արտահայտվեց ոչ թե արդյունաբերության կամ գյուղատնտեսության մեջ, ինչպես նախատեսում էր եգիպտական կառավարությունը, այլ անարտադրողական ուղորտներում: Եգիպտական ձեռնարկությունները տեղական և օտարերկրյա մասնավոր հասվածի մրցակցությունը շղթմանալով աշխատում են սոսկ իրենց կարողության քառորդով, շատերը փակվում են: Օրինակ, պետհասվածի 235 ձեռնարկություններից 70-ական թվականների վերջին մնացին միայն 7-ը<sup>9</sup>:

Զնայած ինչպես զենքի մակարդակի, այնպես էլ բաշխումների ուղորտի անարխիայի դեմ կառավարության միջոցառումներին, աշխատավորական զանգվածների գրությունը շարունակում էր մնալ ծանր: 1930 թ. հունվարին ընդունված 10 տոկոսով աշխատավորը բարձրացնելու և սպրուտտի թանկացման դեմ նպաստահատուցում մտցնելու մասին որոշումը պետհասվածի աշխատավորների համար ցանկալի արդյունք չտվեց, գրամարտեզի նվազման ազետավոր շափի հետևանքով, որը 80-ական թվականների սկզբին հասավ 60 տոկոսի<sup>9</sup>:

Երեֆիթաչիս տարիներին աներևակալելիորեն աճեց կաշտակերությունը: Այդ հսկայական շղթման սկսվում էր միջնորդներից և հասնում մինչև կառավարության անդամները: Այսպես, ԵԱԷ-ի վարչապետի նախկին անդակալ Ա. Սուլթանը ամերիկյան Էվեստինգհաուզ էլեկտրիկ գործորենյանց ստացել էր 332 հազ. դոլար՝ 30 մլն. դոլարի էլեկտրատեխնիկական սարքավորում մատակարարելու գործարքագիր ստորագրելու համար<sup>10</sup>, իսկ ԵՔՖՆԳ ընկերությունը, կաշտակելով քաղաքացիական օդատորմիչի մինիստր Նուհին, Եգիպտոսին վաճառեց խտան շարժիչներով ինքնաթիռներ<sup>11</sup>:

Չէր լուծվում նաև բնակարանային սուբ խնդիրը: 1970 թ. Ծգիպտոսը կարիք ուներ 1,11 մլն. բնակարանի, բայց կառուցվեց միայն 27 հազար: 1980 թ. կահիրեում անօթևանների թիվը հասավ 400 հազարի: Ցարեկան ժամ 80 հազ. կահիրեցիներ թողնում են իրենց բնակարանները: Արագ աճող բնակվարձը նրանց կարողություններից վեր է. քանի որ տանտերերը պահանջում են երկրում միջին մասսկան աշխատավարձը 100 անգամ գերազանցող մի գումար:

70-ական թթ. ընթացքում կառավարությունը ի վիճակի չեղավ լուծել նաև փոխադրամիջոցների խնդիրը: Մտա 10 միլիոնանոց կահիրեի բնակչությանը հասնում էր ընդամենը 11 հազ. ավտոբուս: Ալեքսանդրիա քաղաքի փոխադրամիջոցների գլխավոր վարչությունը ճապոնական ԵՄԻցուրիսիա ընկերությունից գնեց տրամվայի հնացած նմուշներ, հրատարակելով ՉՍՍՀ-ի արտահանող կազմակերպությունների օգտավետ առաջարկից: Այդ շահանկեղություն մասնակիցների հասցրած ընդհանուր վնասը գնահատվեց 8 մլն. դոլար<sup>12</sup>:

Երաց ղոճերից քաղաքականությունը դիպում էր նաև գյուղատնտեսությանը: Երևիթահիա քաղաքականության շրջանակներում եգիպտական գյուղում իրագործված սոցիալ-տնտեսական միջոցառումները ուղղված էին խոշոր և միջին հողատերերի մեջ ձեռնարկատիրական գործունեության քաջալերմանը: Արդեն հիշատակված 1971 թ. վերափոխումներից բացի, նախկին խոշոր հողատերերի 600 ընտանիքների հողերի և սենցվածքի վերադարձման համար 1974 թ. վերսկսվեց մի նոր արշավ, իսկ 1975 թ. օրենք ընդունվեց հողատերերի և վարձակալների միջև հարաբերությունների փոփոխման վերաբերյալ: Վարձավճարի լափը բարձրացվեց 20—25 անգամով, հողատերերն իրավունք ստացան լուծարքել վարձակալման պայմանագիրը, եթե գյուղատնտեսության տարեշրջանի ավարտից երկու ամիս անց վարձակալողը մուծած լինի վարձավճարը: Նոր հողերի յուրացման խնդիրը լուծելիս կառավարությունը ձգտում էր ներգրավել մասնավոր կապիտալին՝ քաջալերելով օտարերկրյա կապիտալի մասնակցություններ խառն ընկերությունների ստեղծումը: Ըստ եգիպտական մամուլի հաղորդումների, այդպիսի ընկերությունների ստեղծման վերաբերյալ համաձայնություններ ձեռք բերվեցին ԳՖՆ-ի, ԱՄՆ-ի, Հարավային Եվրոպայի, Սուդանի հետ<sup>13</sup>: Գյուղում տնտեսական օգտատակաճանաչման քաղաքականությունը հանգեցրեց միջին ու խոշոր հողատերերի, հարուստ քաղաքացիների և առևտրականների կողմից հողերի ձեռքբերմանը:

Գյուղատնտեսության բնագավառում վերափոխությունները 70-ական թթ. կեսին ձեռքին նոր երևույթ՝ գյուղատնտեսական առևտրի պահասորդ: Գյուղատնտեսական ներմուծման և արտահանման միջև նեղըզմաժքը սկսեց անընդհատ մեծանալ և շնայած այն ծրագրերին, որոնք նպատակաձգված են գյուղատնտեսական արտադրության ետ մնալու պատճառների վերացմանը, երկրի բնակչության աճի զսպմանը, որևէ նախադրյալ չկա, որ մոտակա տարիներին Եգիպտոսը կկարողանա իրեն ապահովել սննդամթերքով:

Գյուղատնտեսական մթերքների հարաբերակետերեն աննշան ներմուծողից վերջին տարիներին Եգիպտոսը, մասնավորապես ցորենի ներմուծման գծով, գրավում է աշխարհում 5-րդ տեղը: Այսպես, 1979 թ. գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը կազմեց 2 մլրդ. դոլար, որը նրկու տեգամ ազելի է գյուղատնտեսական արտահանումից և 7 անգամ գերազանցում է 1970—1973 թթ. ներմուծումը<sup>14</sup>:

Պետական հատվածի գիրքերի վրա հարձակման և մասնավոր մեկնարկատիրական գործունեության քաշալերման քաղաքականությունը նվաստեց հասարակության սոցիալական շերտավորման ուժեղացմանը՝ մի կողմից պորտաբույժ բուրժուազիայի կենսուտենների աճին, մյուս կողմից աշխատավորական լայն զանգվածների կենսամակարդակի ցածրացմանը:

80-ական թթ. սկզբին սրաց զոներիս քաղաքականության կործանարար հետևանքների մասին սկսեց զրել նույնիսկ եգիպտական պաշտոնական մամուլը: Այսպես, կառավարող Ազգային-ժողովրդական կուսակցության ղեկուցադրում խոսվում էր կկամուտների բաշխման մեջ լուրջ խախտումների մասին: Եվ իսկապես, 70-ական թթ. երկրում ընթանում էր կկամուտների վերաբաշխման պրոցես, հօգուտ ունևոր խավերի: 1982 թ. սկզբի տվյալներով ԾԱՀ-ի բնակչության 1/20 տիրում էր ազգային համախառն արտադրանքի 80 տոկոսին այն ժամանակ, երբ եգիպտացիների 2/3-ը կիսաքաղց էր:

ԵՆՖԻՅԱՆԻՅ քաղաքականության շնորհիվ հարստացած եգիպտացիների նոր խավը Մադասի արոք իրեն վստահ էր զգում, իմանալով, որ համարյա որևէ վերահսկողության չենթարկվելով ցածր վարձատրվող պաշտոնյաների կողմից, որոնց կաշառում էր, ինքը կարող է հասնել այն ամենին, ինչն իրեն պետք է: Իրենց շրջապատելով շքեղությամբ, նորահարուստները ոչ միայն չէին փորձում սքողել այդ, այլ նույնիսկ կարծես ի ցույց էին դնում: Դրանով իսկ նրանք զրգուում էին

ընակչության ընդազուրկ մեծամասնությունը: Հենց այդ տեսքով հակա-  
գրություններն էլ դարձան ֆունդամենտալիզմի տարածման և տարասև  
կրոնական ժայռահեղական խմբավորումների ազդեցության ընդլայնման  
զլխավոր պատճառներից մեկը, որոնց զտն էլ դարձավ Սաղաթը, որը  
ֆունդամենտալիստների աչքում մարմնավորում էր «ինֆիթահի» որպես  
տարեմայան կենսաակտի գրեկորման արատները:

Որպեսզի մեզմի ժողովրդական լայն զանգվածներին և հանգստացնի  
բուրժուազիայի տարրեր խավերին, ԵԱՀ-ի նոր պրեզիդենտ Մուրաբաբը  
առաջ քաշեց «պայքար կաշառակերության դեմ» կարգախոսը: Սաղաթի  
մահին հաշորդած ժամանակամիջոցում եզրիպտական նորահարուստների  
ֆինանսական շահանենությունների բացահայտման հետ կապված խայ-  
տառակությունները ուժելի մեծ թափ ստացան: Ըստ որում զերծ շահացին  
նույնիսկ Սաղաթի ընտանիքի անդամներն ու մերձավորները, որոնք  
մասնակցություն էին ունեցել շահութաբեր գործարքներին: Կառավարու-  
թյան կողմից վերահսկվող մամուլը, պրեզիդենտ Մուրաբաբի իշխանու-  
թյան գլուխն անցնելուց անմիջապես հետո, պահանջեց պաշտոնա-  
տար այն անձանց հեռացումը, որոնք կասկածվում էին կաշառակերու-  
թյան մեջ:

Գիտակցելով սոցիալական ազազակող հակադրությունների սպա-  
նացող պայթյունի վտանգավորությունը, իշխանություններն ամեն կերպ  
փորձում են ժողովրդին համոզել, թե իրենց ձգտումն է վերականգնել  
սոցիալական արդարությունը՝ անհող շահամուտների սանձահարումը,  
այլասերված տարրերին պատասխանատվության ենթարկելը:

Այսպիսին է եզրիպտական տնտեսության մեջ սրաց գոնորի քաղա-  
քականության ձախողումների իրական պատկերը՝ տնտեսական զար-  
գացման անկախ ուղու փոփոխման, ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական  
երկրների հետ համակողմանի համագործակցությունից հրաժարվելու  
տրինալափ հետևանքը:

Ж. А. МАНАСЯН

## ИЗДЕРЖКИ ПОЛИТИКИ «ОТКРЫТЫХ ДВЕРЕЙ» В ЭКОНОМИКЕ ЕГИПТА

Начало 70-х годов охарактеризовалось значительными переменами в социально-экономической жизни Египта: пришедшее к власти новое политическое руководство провозгласило политику «открытых дверей».

В данной статье автор рассматривает проблему воздействия политики «открытых дверей» на экономику АРЕ в период нахождения у власти президента Садата.

Автор подчеркивает такие пагубные последствия этой политики как ослабление государственного сектора, усиление экономической зависимости АРЕ от развитых стран империалистического лагеря, усиление социальной дифференциации общества — рост доходов паразитической буржуазии с одной стороны, и снижение жизненного уровня широких трудящихся масс — с другой.

- 1 B. Hansen, K. Nashashibi. Egypt: foreign trade regimes and economic development. N., Y., 1975, p. 121.
- 2 А. Васильев, Социально-политическая эволюция Египта в 70-е годы — «Азия и Африка сегодня», № 6, 1978 г.
- 3 Law № 43 concerning the investment of Arab and Foreign Funds and Free Zones. Cairo, 1977.
- 4 *الاخبار، القاهرة، 1977*.
- 5 *Moniteur du commerce, International*, P., 1972, № 283, p. 20.
- 6 *MEED*, December, 26, 1976.
- 7 National Bank of Egypt. Economic Bulletin, 1974, № 2, p. 137.
- 8 За рубежом, № 24, 1979.
- 9 *Arab world*, № 14, 1980 p.

10 International Herald Tribune, 27.10.1978.

11 الأخبار، ١٤٠١

12 О. Г. Герасимов, А. Г. Казва, Египет. Десять лет после Насера, М., 1980.

13 الجمهورية، القاهرة، ١٤٠٥

14 Foreign Agriculture, vol. 17, № 16.

15 «Правда», 16.02.1982.

ՆԱՍԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՍԳԵԿՏՆԵՐԸ

Նասերիզմի գաղափարախոսությունը արտահայտում է Եգիպտոսի պատմության մտա քաննամյա փուլի համար բնորոշ՝ հավասարակշռված քաղաքականություն վարելու և միջին ուղուն հետևելու լզտումը: Նասերիզմի գաղափարախոսության ձևավորումը նման էր բժշկանակի երեքմանը, որի ձախ նոճման լայնույթին անմիջապես հետևում էր այ լայնույթը՝:

\* Նասերն ունցել է բարզ և հակասական ուղի՝ պրեզիդենտական տիտոն զրազկեցրած փոխգնդապետից մինչև համաշխարհային մասշտաբի քաղաքական գործիչ, որը հաղթահարելով իր դասակարգային և դասային սահմանափակվածությունը կարողացավ հասնել մինչև իմպերիալիզմի ու սեփական խոշոր ու մասամբ նաև միջին բուրժուաշխայի ղեկ պայքարելու անհրաժեշտության և անխուսափելիության ըմբռնմանը:

Նասերի տեսական պրագմատիկները հիմնականում պայմանավորվում էին կրկրում և զրանից զուրս ստեղծված կոնկրետ իրավիճակով: Մինչև ուկրաս սպաներս կազմակերպության ստեղծումը նրա քաղաքական հայացքները հաճախ համընկնում էին սմուսուլման եղբայրներին հայացքների հետ, բարձրանում մինչև իսկ իմպերիալիզմի քաղաքական ծրագրերն հասկանալու փորձերը, սակայն, նա երբեք չհարեց նախահեղափոխական Եգիպտոսում գոյություն ունեցող որևէ քաղաքական հոսանքի:

Գաղափարախոսության նկատմամբ նվազագույն և ինչ-որ լավով ստիպողական հետաքրքրությունը պայմանավորեց նասերի քաղաքական աշխարհայացքի ուղացած ձևավորումը: Ինչպես նկատել է Բ. Բելկերը, Եգիպտական հեղափոխությունն ավելի շուտ մշուշառ նացիոնալիզմի վրա էր խարսխված, քան հետևողական գաղափարախոսությանը՝:

Նասերի գաղափարախոսության որակական թռիչքների, տեսակական և քաղաքական կյանքի կոնկրետ փոփոխություններին նրա գաղափարախոսության հարմարվելու մասին է վկայում այն հանգամանքը, որ Նասերի 18 տարի իշխանության զույմ գտնվելու ընթացքում (հաշված նաև իշխանության ամրապնդման համար նրա մղած պայքարի տարիները) Եգիպտոսում ստեղծվեցին երեք քաղաքական կազմակերպություններ, հաստատվեցին վեց սահմանադրություններ, հինգ անգամ համարյա ամբողջությամբ փոխվեց Դալիյենների կազմը և երեք անգամ՝ 1955, 1962. և 1968 թթ. ընդունվեցին վարչակարգի գործունեության ծրագրերը և հետևաբար, խոսելի նասերի գաղափարախոսության մասին երկրի կոնկրետ իրադրությունից կտրված, արմատապես սխալ է:

Նասերի գաղափարախոսությունը քաղկեցած էր մի քանի տարրերից, որոնցից կարևորագույնները կապված էին եգիպտական իրականությունում երկու տասնամյակների ընթացքում անդի ունեցած ներքին պրոցեսների աստիճանական իմաստավորման, իսլամական գործոնի և նացիոնալիզմի հետ: Ոչ պակաս կարևոր գեր էր կատարում նաև Եգիպտոսի նկատմամբ արևմտյան երկրների դիրքորոշումը: Մեզ համար առավել հետաքրքրություն ներկայացնում է Նասերի փոխափայլության առաջին քաղկեցուցիչ տարրը:

Հեղափոխության առաջին փուլի տեսարաններից Իհսան Աբդալ Կադուսը գրել է. «Թանն այն է, որ սվլյալ փուլում հեղափոխությունը կարիք ունի սվլելի շուտ պրակտիկ գործերի, քան տեսական դասողությունների կամ վերլուծությունների»<sup>1</sup>: Այսպիսի պարզունակ մտեցման հետ համաձայնվել չի կարելի, քանի որ գաղափարական համապատասխան հենակետի ստեղծման անհրաժեշտությունն ակնհայտ էր, քանի որ ընդհուպ մինչև 60-ական թթ. սկիզբը Նասերի փոխափայլության անկյունաքարը դասակարգերի և դասակարգային պայքարի գոյության մարքոստական ըմբռնման ամբողջական մերժումն էր: Հեղափոխության երկրորդ տարեգարձի տոնակատարության ժամանակ, 1954 թ. Հուլիսի 23-ին, Նասերը հետևյալն հայտարարեց. «Ըստ էության, մեր պետությունը ամբողջ ժողովրդի պետություն է և արտահայտում է բոլոր դասակարգերի շահերը: Այն բանվորների և գյուղացիների, ծառայողների և ուսանողների, կապիտալ ունեցողների և մտավորականների պետություն է, ազգատների և շունտների, ուժեղների և հարուստների պետություն: Մեր պետությունը ամբողջ ազգին է ծառայում»<sup>2</sup>:

Չնայած վերևում բերված մեջբերումում Նասերը թվում է մի քանի դասակարգեր և դասեր, չպետք է մոռանալ, որ մինչև 1960—1961 թթ.



այս ասելով ուղղակիորեն հասկացվում էր սհարուստներն և բազմա-  
ներս: Ավելի ուշ ի հայտ եկան տշահագործողներն և տշահագործվող-  
ներն հասկացությունները:

Այս փուլի նասերի գիրխտոփայության ոչ պակաս կարևոր գործոնը  
պրոլետարիատի գիկատաուրայի խնդրի նկատմամբ խիստ բացասական  
վերաբերմունքն էր, որը մինչև վերջ անփոփոխ մնաց: Ըստ նասերի  
եզրպատական հեղափոխությունը պետք է լիներ հենց սհամազային  
հեղափոխությունն, որը ազգային-ազատագրական հեղափոխություն լի-  
նելով ստավիլ ընդունելի էր, և, հետևաբար, գաղափարական նվա-  
զադույն հիմք պետք է գառնար ազգային միասնությունը: Ընդհուպ  
մինչև 1960 թ. համագործակցելով եզրպատական բուրժուազիայի բո-  
լոր խավերի հետ, երկրի տնտեսությունում բացառիկ իրավունքներ  
տալով նրան, վարչակարգը պետք է պաշտպաներ նրան նաև քաղաքա-  
կան մարդում, շարունակելով ժրաշնությունը քարոզել դասակարգա-  
յին հաշտության տեսությունը. սՄենք ցանկանում ենք անցում կատա-  
րել «հետադիմական գիկատաուրայից զեպի ամբողջ ժողովրդի զիմ-  
կրատիս...», մենք մեր երկրում ցանկանում ենք հասարակական հակա-  
սությունները լուծել խաղաղ ճանապարհով: Այսպիսի գաղափարական  
կենցվածքը նաև հետևանք էր հեղափոխությունից առաջ և նրա առաջին  
տարիներին կուռ քաղաքական ժրագրի բացակայության, ինչպես նաև  
Ծղիպատում գոյություն ունեցող որևէ քաղաքական հոսանքի ենթարկ-  
վելու եզրպատական ղեկավարության լիամության: Մակայն, 60-ական  
թթ. սկզբին եզրպատական հասարակարգի սվերգաստկարգայնությունն  
տեսությունը անհաշտություն կրեց: սՄենք սխալ գործեցինք, հաշտու-  
թյուն կնքելով հետադիմական տարրերի հետ: Մենք կարծում էինք, որ  
ինչքան էլ մեծ լինեն մեր հակասությունները, նրանք այնուամենայնիվ  
մեր ժողովրդի զավակներն են, և որ մենք մեկ քախտի տեր ենք: Բայց  
փորձը ցույց տվեց, որ այդպես մտածելով մենք սխալվել ենք: Փորձը  
ցույց տվեց, որ հետադիմությունը, լինելով իմպերիալիզմի հենարան-  
ներից մեկը, լի խորում իր հերթին հենվել նրա վրա, որպեսզի խլի մո-  
ղովրդից նրա սոցիալական նվաճումները: Փորձը ցույց տվեց, որ հե-  
տադիմությունը պատրաստ է գաշխնքի մեջ մտնել իմպերիալիզմի հետ  
իր կորցրած դիրքերը վերականգնելու համար...: Հետադիմությունը լա-  
բաշահեց ժողովրդական զանգվածների բարությունը, համբերությունը և  
բարեկենցությունը...:

Գրա համար էլ ես հեղափոխութիւնը շարունակելուց, նրա գրոշը ավելի բարձրացնելուց բացի, ուրիշ ելք չեմ տեսնում... Այժմ մենք պետք է ամբողջապէս վերագծահաստենք մեր հասարակարգի իդեալներն ու բարբերք նոր, ավելի խորը հիմքերի վրաս<sup>8</sup>։

Մտեղծված իրավիճակում նասերին անհրաժեշտ էր նոր սոցիալական հենարան գտնել՝ հեղափոխութեան խորացող ընթացքի համար։ Այդպիսի հենարան կարող էին գտնուել եգիպտական հասարակարգի այն բոլոր գասակարգներն ու խավերը, որոնք շահագրգռված էին արձատարական փոփոխութեաններով։ Հենց այդ փուլում է շրջանառութեան մեջ մտցվում բաշխատավոր ժողովրդի զավակները տերմինը, որը հավաքական անուն էր նշելու համար բոլորապէս նոր, բանվորներին, գինվորներին, մտավորականութեանը և ազգային կապիտալիստներին<sup>9</sup>։ Նասերն ավելի է հեռու գնում։ Խորախալի մասին զննուցումում ես փորձում է որոշել եգիպտացիներին՝ հասարակութեան այս կամ այն գասակարգին կամ խավին պատկանելու սահմանները. բանվոր է ես, ով ստանում է աշխատավարձ և արհմիութեան անդամ է։ Գյուղացի է ես, ով իր ընտանիքի բոլոր անդամների հետ տիրում է ոչ ավելի, քան 25 ֆեդդան հողակտորի, ապրում է իր հողակտորում և որի համար հողագործութիւնը գոյութեան հիմնական միջոց է։ Մտավորականներ են բոլոր նրանք, ովքեր գյուղատնտեսական աշխատողների մեջ չեն մըտնում, չեն աշխատում արտադրութեանում, մանր արտադրողներ և ղինված ուժերի ներկայացուցիչ չեն<sup>10</sup>։ Այս սահմանումները վկայում են իր հասարակարգի գասակարգային կառուցվածքի գնահատման խնդրում գասակարգային մոտեցում ի հայտ բերելու նասերի ձգտման մասին։ Արձանագրելով, որ սենոր սահմանագրութիւնը պետք է բանվորներին և գյուղացիներին տրամադրի ժողովրդական և քաղաքական կազմակերպութեանների բոլոր մակարդակների տեղերի կետը<sup>11</sup>, եգիպտական հեղափոխութեան տեսութիւնը նոր որակական թռիչք գործեց։ Այդ ժամանակ արդեն նասերը մոտ էր սոցիալիզմի զիտական ըմբռնմանը։ Ի միջի ալլոց, ինքը՝ պրեզիդենտը, երբեք չի նույնացրել իր աշխարհայացքը մարքսիզմի հետ. բայց մարքսիզմը ունի իր փիլիսոփայութիւնը, և նրա հետ հաշվի չնստել չի կարելի, բայց մարքսիզմը չի ընդունում կրոնը։ Այստեղ ես սկզբունքորեն նրա հետ համաձայն չեմ։ Նա ընդունում է պրոլետարիատի զիկասատուրան, խոսում մի գասակարգի մյուսի նկատմամբ բռնութիւն գործադրելու մասին։ Այս հարցերում մենք տարբեր կարծիքներ ունենք։ Հետևաբար, մեր սոցիա-

լիզմը մի բան է, իսկ կոմունիզմը՝ այլ բան<sup>10</sup>: Իսկ Գիզայում Արա-  
բական սոցիալիստական միության անգամների խորհրդակցությունում,  
1966 թ. զարևանը՝ Նասերն հայտարարեց, «եթե մարքսիզմը պայմա-  
նականորեն ձևակերպենք 20 կետերով, ապա դրանցից առանուրի տակ  
ևս պատրաստ եմ ստորագրել: Միայն երկու կետ են մեզ տարանջա-  
տում մարքսիստներից. այն է՝ պրոլետարիատի դիկտատուրան և վե-  
րաբերմունքը կրոնի նկատմամբ<sup>11</sup>»:

Նասերը բազմիցս հայտարարել է, որ իր ուզին Հեղափոխության  
ուզին է, որի վերջնական նպատակն է սոցիալիզմի եզրույթական մո-  
դելի կառուցումը: 1956 թ. Նասերն առաջին անգամ փորձեց եզրույ-  
թական հասարակությունը ներկայացնել եռամիասնական բանաձև-  
ով՝ սոցիալիստական, կոուլերատիվ, դեմոկրատական: Նա պնդում  
էր, որ կոուլերատիվ, սոցիալիստական, դեմոկրատական է այն հա-  
սարակությունը, որում բարձրանում է կենսամակարդակը, կա սոցիալա-  
կան արգարություն, վերացված են ֆեոդալիզմն ու շահագործումը, կա-  
պիտալի տիրապետությունը, հնարավորություններ են որոնվում երկրի  
յուրաքանչյուր բնակչի համար: Չկան այլևս տերեր ու սարուկներ:  
«Մենք բոլորս քաղաքացիներ ենք մի հանրապետության: Մենք հա-  
ժառանգ ենք, ունենք սեփական արժանապատվության զգացում»<sup>12</sup>:  
1961 թ. հոկտեմբերի 16-ին ժողովրդին ուղղված ուղերձում պրեզիդեն-  
տը նկատեց. «Սոցիալիզմի ամենապարզ և ակնհայտ սահմանումն այն  
է, որ սոցիալիզմի ժամանակ ազգային եկամուտը բոլոր քաղաքացի-  
ների ընդհանուր սեփականությունն է: Բայց առանց ազգային եկամտի  
օրյակաիվ և արգարացի բաշխման, այն (սոցիալիզմը—Գ. Ն.) չի լինի  
բոլոր քաղաքացիների սեփականությունը»<sup>13</sup>: Նույն ուղերձում Նասերն  
հետևյալը հայտարարեց. «Մենք այժմ կարիք չունենք նոր սոցիալիս-  
տական օրենքների, որոնք կհամալրեն արդեն մեր ունեցած սոցիալիս-  
տական օրենքները: Եզրույթական Հեղափոխության հիմնադրույթը,  
որը կանխորոշում էր նրա առանձնահատուկ գիծը, մասնավոր սեփա-  
կանության անձեռնմխելիության ընդունումն էր («մենք հավատում  
ենք շահագործող սեփականության գոյությանը շահագործող սեփա-  
կանության հետ միասին») և հողի ազգայնացման անհրաժեշտության  
ժխտումը («մենք հավատում ենք անձնական սեփականությանը՝ հողի  
մասնավոր սեփականությանը»)»<sup>14</sup>:

Նասերը լավ հասկանում էր, որ սոցիալիզմի կառուցումը վայր-  
կենական գործ չէ: Ելույթ ունենալով Ազգային ժողովի 11-րդ նստա-

չըրչանում, 1964 թ. նոյեմբերին նա առաջ. ՎՄԵՆՔ առաջիմ հետու ենք սոցիալիստական պետություն լինելուց, մենք զտեվում ենք կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու անցումային շրջանում, քանի որ սոցիալիզմը չի նշանակում միայն մի քանի զործարանների ազգայնացում: Մեր անցումային շրջանի սոցիալիզմը ղեկ չի կերպազատվել ֆեոդալիզմի մնացուկների, կապիտալիզմի և բյուրոկրատիզմի ազդեցությունից...: Անցումը սոցիալիզմին՝ աշխատավոր ժողովրդի ղեմակրատական արդարացի հասարակարգին, կարող է իրագործվել միայն սոցիալիզմի ուժերի աճի ուղիով: Սոցիալիզմը ժողովրդի իշխանություն է<sup>16</sup>:

Իր էաներում եզրիպատական հեղափոխության առաջնորդը պնդում էր, որ Եզրիպատում կառուցվող սոցիալիզմը ամբողջապես համապատասխանում էր երկրի զարգացման պայմաններին և որ երկրում կառուցվող ղեմակրատական, կոոպերատիվ, սոցիալիստական հասարակարգը բազալապես կլինի տեխնիկական, քաղաքական և սոցիալական շահագործումից<sup>17</sup>:

Եզրիպատական հասարակության առաջընթաց շարժումն իմաստավորելու փորձերը դրսևորվեցին նաև ղեմակրատիայի հարցում, 1959 թ. ՎՄԵՐ սոցիալական հեղափոխությունը գրքուկում նասերը գրում էր. ՎՄԵՂանում կային կուսակցություններ և կար արևմտյան ղեմակրատիայի մոդել, որին կուրորեն հեռում էին: Դեմոկրատիա այսուհետ չի նշանակում խոսքեր և կուսակցություններ: Իսկական ղեմակրատիան այն է, որում անհատն ազատ կլինի, հասարակությունը նույնպես ազատ կլինի, և կկառուցվի առողջ հիմքերի վրա: Այդպիսի ղեմակրատիան ստեղծվում է սոցիալիստական, կոոպերատիվ հասարակություն կառուցելու նանապարհով, որի ստեղծումից հետո չի մնա այնպիսի մարդ, որը կվաճառահանի երկիրը կամ կտիրապետի նրան<sup>17</sup>:

Դեմոկրատիայի հարցերին է նվիրված Ազգային զործողությունների խարտիայի հիմնգրքի գլուխը: Այնտեղ արձանագրված է հետևյալը. ԵՊԵՊԿրատիան քաղաքական ազատություն է...: Քաղաքական ղեմակրատիան չի կարող անշատվել սոցիալական ղեմակրատիայից, քաղաքական ղեմակրատիան չի կարող իրագործվել որևէ դասակարգի միանձնյա տիրապետության պայմաններում: Դեմոկրատիան ամբողջ ժողովրդի իշխանությունն է և նրա գերիշխանությունը<sup>18</sup> և այլն: Նասերը շատ էր սիրում բառողջ ղեմակրատիա արտահայտությունը, բայց գերազասում էր լճերժանել այն:

Այսպէս էր իրավիճակը թղթի վրա: Երականում ակնհայտ էր ախրապետող վարչակարգի խոսքերի և գործերի միչև եղած տարբերությունը, որում, անկասկած, արտահայտվում էր եզրիպտական ղեկավարութիւնի մանրրուծուական բնույթը:

Հենց ղեկավարութիւնի գոտակարգային սահմանափակվածութիւնը, նրա վախը ժողովրդական զանգվածներից գործնականորեն ի չիք դարձրին եզրիպտական ժողովրդի մասնակցութիւնը հեղափոխութիւնը, շնայած հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական հեղափոխութիւնի խնդիրները լուծելիս սերանք (սկզաւ սպանիրը—Վ. Ն.) կարող էին աշակցութիւնը գտնել առաջադիմական և զեմոկրատական լայն շրջանակներում: Բայց նրանք այդ շրջանին մի շարք սուբյեկտիվ (նշտորոշ զազափարախոսութիւն, բովականաչափ քաղաքական փորձի բացակայութիւն), ինչպէս նաև օբյեկտիվ (առաջադիմական կազմակերպութիւնների տարանջատվածութիւն, որը և նրանց միչև առաջացրել էր մրցակցական ոգի) պատճառներով<sup>15</sup>: Դեռ ավելին, երկրի ղեկավարութիւնը ոչ մի կերպ չէր ցանկանում թույլ տալ ժողովրդական զանգվածների մասնակցութիւնը պետութիւնի կառավարմանը և միայն ճակատագրական, չգնաժամային իրազրութիւններում էր նասերը դիմում ժողովրդին: Եզրիպտական ժողովուրդը շատ հազվադեպ էր նախաձեռնութիւն զրահորում և դուրս գալիս երկրի քաղաքական թատերաբեմ: Այդ բանն ունի մի քանի պատճառ: Առաջին հերթին պրիվիլեգիան նասերի անձը, շնասերը օրենքի ազդու էր և հնարավորութիւն սահմաններում սգտագործում էր առաջնորդի ժողովրդականութիւնը՝ աղգային միասնութիւնը առերևույթ պահպանելու համար: Դրա համար էլ նա ժողովրդին համախմբում էր միայն իր անձով և, հասարակութիւնի քուրք մնացած ընտրախավերին ղեկ նետելով, թույլ չէր տալիս միջանկյալ հաստատութիւններին կանգնել իր սեփական պետական իշխանութիւնի և զանգվածների միչև Պատասխանատվութիւնն իր վրա վերցնելն հանգեցրեց ժողովրդի մեծամասնութիւն անպատասխանատվութիւնը<sup>16</sup>, Երկրորդ, ժողովրդի պասիվ աշակցութիւնը ապահովում էր կոնկրետ միջոցներով, այն է՝ ինքնակալութիւնի սապալումը, անգլիացիների վտարումը երկրից, հողային բարեփոխումները, աղգայնացումները և այլն: Բացի այդ, ինչպէս ճշտորեն նշել է Լ. Բինդերը, սեփականութիւնն ու ժողովուրդը նույնացվում էին ոչ միայն ձեռնարկ ղեմոկրատական իմաստով, այլ նաև թույլատրելի քաղաքական դիրքերի սահմաններում և զափնեպսակները բաժանե-

լիսա<sup>21</sup>, իր դերն ունեցավ նաև վարչակարգի կողմից ուղածո կազմակերպված ընդդիմության խստորեն ճնշումը, ինչը բավականին ակնառու ցույց տվեց իշխանության ամբաստանյալ պայքարի փուլը (1952—1954 թթ.), Սվ վերջապես պակաս կարեոր չէր նաև նասերի թերահավատորեն արամազորված լինելն իր ժողովրդի հանդեպ, «Նեղափոխության փրկիսփայլություն» աշխատությունում նասերը դրել է. «Մեր ուղին քաղաքական և տնտեսական ազատությունն է, և մեր դերը նրանում խնամակալի դեր է: Մեր ժողովուրդն այժմ նման է քարավանի, որը փորձում է ընթանալ կենտրոնական Հանապարհով, բայց նա բազմաթիվ հարվածներ է կրում... Դրանից քարավանը կարող է կազմալուծվել: Խմբերը կարող են ժողովել: Մեր դերն այն է, որ հավաքենք ցրված մասերը, սգնենք նրանց գտնելու ճիշտ Հանապարհը<sup>22</sup>, Տասներկու տարի անց այս վերարերմունքը ոչ մի փոփոխություն չկրեց, բնկվ զրա է ընկած ժողովրդին զատարակնելու պարտականությունը<sup>23</sup>:

Ակամայից հարց է ծագում, արդյո՞ք նասերը զիջատուր չէր Ազիպատցի հայանի հրապարակախոս Մուհամմեդ Հասանելի Հեյրալը այս հարցին բացասական պատասխան է տվել, պնդելով, որ նասերը ժողովրդի ցանկությունն էր կատարում, երբ ոչնչացրեց միապետությունը, ազգայնացրեց Սուեյի շրանցի ընկերությունը և այլն: Հեյրալն ընդունում էր, որ շեյխ փուլում (50-ական թվականների վերջ 60-ական թվականների սկիզբ) Հասարակական քաղաքականության ստեղծման գործում ժողովուրդը չէր մասնակցում, և Ազիպատսը նասերի ժամանակ զեմոկրատիա էր ըստ Համաձայնության և ոչ թե ըստ մասնակցություն<sup>24</sup>, Շատ անհամոզիչ է հնչում, քանի որ վերինից որոշված Նեղափոխությունը, զիտարկվող ամբողջ ժամանակահատվածում, երկրի կառավարման մեջ պահպանեց զեմոկրատիկ բնույթ, հենց զրա համար էլ նասերյան փուլի Ազիպատսի պատմության արևմտյան հետազոտողների բացարձակ մեծամասնությունը, ինչպես նաև մի շարք արաբ հեղինակներ այն եզրակացությունն են հանգում, որ նասերը զիկատուր էր: Ավելի ուշ՝ 1983 թ., այս եզրահանգմանն է եկել նաև Հեյրալը, գրելով, որ «Մենք ամբողջովին գտնվում ենք մեկ և միակ իշխանության շրջանակներում: Սա է զեմոկրատիայի պրոբլեմը Ազիպատսում: Դեմոկրատիայի պրոբլեմը Ազիպատսում ավելին է, քան զեմոկրատիայի ճգնաժամը<sup>25</sup>:

Ացանկանայինք բերել իր՝ նասերի կարծիքն այս առթիվ՝ ամերիկյան Էթոլոմբիա բրոթքասթինգ սիսթեմն ուղիորհազորղումների ըն-



կերտման քաթակից Ծրենք Քիփրինգին տված հարցազրույցում: Այն հարցին, թե ի՞նչ է ինքը մտածում դիկտատի մասին, պրեզիդենտը պատասխանեց. «ԸՅԹՆ մեր զգոնությունն ու ձգտումը՝ ժողովրդի շահերը մտքի լիզացնել և ուղղել ապագայի կառուցման համար եշանակում են դիկտատուրա, ապա ես, ամենայն հավանակա՞նությունով, դիկտատոր եմ: Կարելի է այսպիսի համեմատություն հիշել. հովիվը պահպանում է հօտը գայլերի հարձակումից և նրանց թույլ չի տալիս պատանոտել ոչխարներին: Այդ հովիվը գայլերի այքում արդյոք դիկտատոր չէ՞...: Դա ստել է ձեր հռչակավոր ստաշնորդ Արքահամ Լինջոլնը: Այնպես որ, իրերի նկատմամբ վերաբերմունքը կապված է տեսակետից»<sup>26</sup>:

Մենք հակված ենք կարծելու, որ դիկտատի տարր (և ոչ փոքր), անկասկած, տեղ գտել է, սակայն, պրեզիդենտի գաղափարախոսությունում անդի են ունեցել լուրջ փոփոխություններ, որոնք արտահայտվել են նրա ցանկությունում՝ ժողովրդին տալ իրոք դեմոկրատական իրավունքներ: Գնա ավելին, կյանքի վերջին տարիներին պրեզիդենտը (նորից իր գասակարգային պատկանելիության շրջանակներում) հանդեց պետության կառավարման մեջ ժողովրդի մասնակցության անհրաժեշտության մտքին, հասկանալով, որ հեղափոխությունը զանգվածներն են կատարում, և ոչ թե մարդկանց մի փոքր խումբ, և կամ, մասնավանդ, մեկ, թեկուզ և ականավոր, անձնավորություն: Ինչպես նկատել է Նասերը «Հակասությունները, որոնց մենք բախվում ենք հետադիմական ու կապիտալիստական հասարակարգից սոցիալիստականին անցնելիս, պահանջում են ժողովրդական զանգվածների, աշխատավոր ժողովրդի հետ մերձեցում: Ընկել է ժամանակը, երբ մենք պետք է հենվենք ժողովրդի գիտակցականության և ոչ թե կառավարության միջամտության վրա»<sup>27</sup>. Ժողովրդական զանգվածների նկատմամբ Նասերի վերաբերմունքի նման փոփոխումը ճշտորեն երևում է նրա իշխանության տարիներին ստեղծված քաղաքական կազմակերպությունները վերլուծելիս, երբ զանգվածների դերին բացասաբար վերաբերվելուց ես անցավ ոչ միայն քաղաքական կազմակերպության ստեղծման անհրաժեշտության գիտակցմանը, այլև որոշակի քայլեր կատարեց սոցիալիստական երանգի կուսակցության միջուկը ձևավորելու գործում: ԸՅԹՆ սկզբում Նասերը համոզված էր, որ «կուսակցությունը միակ ճանապարհն է, որով գաղութարարությունը կարող է թափանցել երկիր»<sup>28</sup> և որ Եգիպտոսում քաղաքական կազմակերպությունների երևան գալու հետ մեկտեղ «մարզիկ մոռացան իրենց հիմնական նպա-

տակները և բոլոր շանքերն ուղղեցին միջկուսակցական երկպառակություններին<sup>20</sup>, ապա նրա հայացքների էվոլյուցիան այդ հարցում ցույց է տալիս հետևյալ արտահայտությունը. «...քաղաքական կազմակերպության անկայությունը բացիալիստական միության շրջանակներում վերջինիս կամեղացնելն<sup>21</sup>»:

Պրեզիդենտի հայացքների այսպիսի էվոլյուցիան վկայում է, որ լինելով սկզբում զիկատատորական վարչակարգ, Եգիպտոսը զանգազ, բայց ճշտորեն գնում էր զեպի գեմեկրատիա: Եվ մենք ոչ մի բարոյական իրավունք չունենք Եգիպտոսի պատմության այդ շրջանը միանշանակորեն զիկատատորական համարել:

Г. В. НОВИКОВА

## НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ИДЕОЛОГИИ НАСЕРА

### Резюме

В статье изложены некоторые компоненты философии президента Насера, связанные с постепенным осмысливанием внутренних процессов, имевших место в египетской действительности на протяжении двух десятилетий. Прослеживается постепенное отступление воззрений Насера от теории «надклассовости» египетского общества до приближения к научному пониманию социализма; рассматривается эволюция взглядов президента в отношении к народным массам; дается краткая характеристика «египетского социализма».

1 Н. П. Белая, Е. М. Примяков, Египет: время президента Насера, М., 1981, с. 266.

2 R. W. Baker, Egypt's uncertain revolution under Nasser and Sadat, London 1978, p. 34.

3 *Մեջբերումն ըստ* Nissim Rejwan, The Nasserist ideology. Its exponents and critics, New York, Jerusalem, 1974, p. 70.

4 *مجموعة خطب و تلميحات و بيانات الرئيس جمال عبدالناصر، القسم الأول، ص 178*  
*مجموعة خطب و... القسم الثالث، ص 72*

5 *Եգիպտոսի պատմություն*, էջ 568:

6 *الميثاق، القاهرة، 1971*، ص 14



- 8 J. Waterbury, *The Egypt of Nasser and Sadat: the political economy of two regimes*, New York, Princeton, 1983, p. 325.
- 9 الميثاق، ص 72
- 10 Г. А. Насер, *Проблемы египетской революции. Избранные речи и выступления 1952—1970 гг.*, М., 1979, с. 113.
- 11 *Մեջբերումն ըստ Բելես*, *Մուրադ Բելես*, էջ 274.
- 12 مجموعة خطب و... من القسم الثالث، ص 276
- 13 *Նույն տեղում*, էջ 264.
- 14 *Նույն տեղում*, էջ 265.
- 15 الاهرام، القاهرة، 1974/11/27
- 17 جمال عبد الناصر، ثورةنا الاجتماعية، القاهرة، 1969، ص 183-184
- 18 الميثاق، ص 72
- 19 О. В. Козлукович, *Революция «Свободных офицеров» в Египте*, М., 1984, с. 111.
- 20 P. J. Vatikiotis, *Nasser and his generation*, London, 1978, p. 198.
- 21 L. Binder, *In a moment of enthusiasm: political power and the second stratum in Egypt*, Chicago-London, 1978, p. 304.
- 22 G. A. Nasser, *Philosophy of the Revolution*, New York, 1955, p. 71.
- 23 *Նախնի Կոնգրեսները ՀՍՄ տեղամեծերի հետ Գեղարյուն 7-8 Տարի 1980 թ.*, ՀՍՄ փակ ժողովներ:
- 24 *Մեջբերումն ըստ Vatikiotis*, էջ 192-194.
- 25 محمد حسنين تهيكل، السلام المستحيل و الديمقراطية الفاشية، بيروت، 1981، ص 23-25
- 26 مجموعة خطب و... القسم الثاني، ص 11
- 27 الاهرام، القاهرة، 1972-1973
- 28 مجموعة خطب و... القسم الأول، ص 11
- 29 *Նույն տեղում*, էջ 214.
- 30 الاهرام، 1972-1973

Վ. Կ. ՍԱԲՎԱՆՆԱ

**ԻՐԱՔԻ ԿՈՄԿՈՒՍԸ ԵՎ ԱՌԱՋԱԳԻՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԿԱՆԱՆՑ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅԲԱՐՈՒՄ (1970-ԱԿԱՆ ՔՔ.)**

Արարական արևելքի շատ երկրներում, այդ թվում և Իրաքում, կանանց ազատագրության հարցը անմիջականորեն առնչվում է ղեմակրատիայի գրսեորման հետ: Կանանց շարժումը սկզբնավորվել և զարգացել է Արևելքի երկրներին յուրահատուկ պայմաններում, սՄԵՐ շարժումը սկզբնավորվել է երկրի ծայրահեղ հեամամեացության պայմաններում, այդ հանգամանքը լի կարելի անտեսել, կանայք տեղից բացակայելու և որևէ հաճաքի կամ ցույցի մասնակցելու համար պետք է անպատճառ թույլտվություն ղերցնեին ամուսնուց կամ ժողովներից: Կանանց մեծամասնությունը շորս պատերի մեջ էր պարփակված, մեկուսացած հասարակական կյանքից, այդ պատճառով էլ այսօր հիմնական հարցը այն է, թե ինչպես հասնել կենդանի ուժեղացմանը հասարակական կյանքում՝,—ընդգծել է Իրաքի կանանց շարժման ճանաչված գործիչ, Իրաքի կոմկուսի Կենտկոմի անդամ Նազիհա Գուլեյմի:

Կանանց շարժման տարբեր փուլերում Իրաքի կոմկուսը գործել է երեք հիմնական ուղղություններով՝ տարածել կանանց ազատագրության հարցի մասին առաջադիմական գաղափարները և մարքս-լենինյան տեսությունը, բացահայտել փոխադարձ կապը այդ հարցի և համահայրենասիրական խեղիբների, ինչպես նաև բանվորների և գյուղացիների դասակարգային պայքարի միջև, մշակել կոնկրետ ծրագրային կոչեր, հասցնել դրանք աշխատավոր կանանց լայն զանգվածներին, ուսումնասիրել նրանց ղերնակը և այն խեղիբները, որոնք ղերարերում են կենցաղին, հաշվի առնել նրանց կարծիքը, տպավորությունները և այլն: Կազմակերպչական առումով կանանց ղեմակրատական կազմակերպություններում ներգրավելու և կին կոմունիստների թիվը ավելացնելու նպատակով, Իրաքի կոմկուսը կարևոր է համարում կանանց գոր-

ժուկն ու թխան աշխուժացումը երկրի արհմիութենական կյանքում: Այս-  
տեղ պետք է նախաձեռնություն ջուցարարին նաև Հենց իրենց արհ-  
միությունները, շատ կարևոր է Հենց իրենց՝ արհմիությունների զնա-  
կանությունն ու հեռուգրականությունը<sup>2</sup>,— ընդգծում էին կոմունիստ-  
ները:

Իրաքի կոմկուսի ծրագրային փաստաթղթերում պատշաճ ուշա-  
գրություն է դարձված գյուղական շրջանների կանանց հետ տարվող  
աշխատանքին: Այդ կանանց մեծամասնությունը անգրագետ էր: 70-  
ական թվականներին ընդունված օրենքների և որոշումների մեծ մա-  
սը, որոնք վերաբերում էին կանանց ազատագրության հարցին, ուշա-  
գրությունից դուրս էին թողնում գյուղական շրջաններում բնակվող  
կանանց վիճակը: Այդ կանայք անտեղյակ էին հասարակական-քա-  
ղաքական կյանքի ընդհանուր բարեփոխություններին: Ե՛րա վերաբե-  
րում է մինչև իսկ առավել գիտակից գյուղացիներին: Եթե գյուղացին  
ինքը գիտակցում է, որ իրեն շահագործում են, ապա այդ նույն միտքը  
չի հաքնում նրա կնոջը: Մենք պետք է գտնենք՝ որևէ մեկին, որը մըշ-  
տապես և սերտորեն կապված լինի գյուղի կյանքի հետ: Այդպիսիները  
կարող էին լինել ուսուցիչներ, բժիշկներ: Վերջին ժամանակներս մենք  
կարողացել ենք հասնել նրան, որ իրենք գյուղացիները՝ մեր կուսակ-  
ցական ընկերները, սկսել են իրենց ընտանիքների անդամներին ներ-  
գրվել կանանց շարժման մեջ<sup>3</sup>: Նազիհա Դուլբյամիի այս խոսքերը  
ակնբախ են դարձնում Իրաքի կանանց շարժման բարդություններն ու  
զմվարությունները: 60-ական թթ. վերջին և 70-ական թթ. սկզբին երկ-  
րում տարվող առաջադիմական հասարակական-տնտեսական բարե-  
փոխությունների ընթացքում հասունացել էր նաև կանանց վերաբե-  
րող կոնկրետ միջոցառումների անցկացումը: Իրաքի կոմկուսի ծրա-  
գրային փաստաթղթերում հասարակական կյանքում կանանց ներգրա-  
վման հարցին հատկացված են հատուկ բաժիններ:

1970 թ. սեպտեմբերին Իրաքի կոմկուսի II համագումարում  
ուշագրություն է դարձված կանանց ամուսնություն և ամուսնալուծու-  
թյան, կտակի, ժառանգության, տղամարդկանց հետ հավասար աշ-  
խատավարձի, աշխատավոր կանանց վիճակի բարելավման հարցերին: Մեկ  
անգամ ևս ընդգծված է հասարակական կյանքում կանանց գերի  
բարձրացման կարևորությունը<sup>4</sup>:

1970 թ. Իրաքում ընդունվեց նոր աշխատանքային կոդեքս: 151  
հոդվածի համաձայն սահմանվում էին կանանց և տղամարդկանց հա-

մար հավասար աշխատավարձ, աշխատածամ, կենսաթոշակ և աշխատանքային իրավունքներ: Ըստ 79 հոդվածի § 1-ի արգելվում էր կանանց աշխատանքը զիջերային ժամերին, ինչպես նաև կանանց առողջությանը վնասող ցեխերում և արտադրամասերում: 81 հոդվածը սահմանում էր աշխատանքային կրճատված օր հզի կանանց համար: Կողմնակից ունի համապատասխան կետեր, որոնք վերաբերում են հզի կանանց վարձատրությունները արձակուրդի և նորածնին կերակրելու ժամանակ:

Կարևոր է նկատել, որ արտադրության ոլորտի կանանց այս տարրական իրավունքների օրինականացումը նպաստեց նաև կանանց ակտիվացմանը հասարակական կյանքում:

70-ական թթ. առաջին կեսին, իր աշխատանքները խթանեց նաև Իրաքի կանանց կիզակ: Աշխուժացան Արաբական արևելքի կանանց կազմակերպությունների միջև փոխազդարձ կապերը:

1973 թ. մարտին Քաղաքում կայացած Իրաքի կանանց կոնֆերանսը ընթացավ Էփանանց տեղը հեղափոխական շինարարության ավանգարդում էս նշանաբանով: Կոնֆերանսի մասնակիցների ուշադրության կենտրոնում էին Իրաքի կանանց շարժման ժամայման խնդիրները, կանանց մասնակցությունը ազգային շինարարության հարցերում, նրանց զերի ուսնազացումը ժողովրդական ձեռքբերումների պահպանության գործում: Հետագա տարիներին կիզակ Ռամադյա Նեյրիի, իսկ նրանից հետո Մանալ ալ-Ալուսիճ գլխավորությամբ արդյունավետ աշխատեց և զարգացրեց Իրաքի կանանց ազատագրման հիմնական նպատակներն ու ուղղությունները, շարունակելով այդ կազմակերպության բարի ավանգարդները, որոնք սկիզբ էին առել զնակո առաջին նախագահի՝ կանանց շարժման վետերան Նազիհա Դուլեյմիի գլխավորությամբ: Նշենք, որ Նազիհա Դուլեյմին 1959 թ. հուլիսին Արդևի Քերիմ Կասեմի կառավարման ժամանակ նշանակվեց մունցիպալիտետների մինիստր: Նա առաջին կինն էր Արաբական Արևելքում, որին վստահվեց մինիստրություն ղեկավարել: Նշենք նաև, որ 1959 թ. զեկահեմբերի 31-ին կառավարության վերակառուցման առիթով, նոր կառավարության կազմում ընդգրկվեց նաև Մաուդի Խալիլ Իսմաիլին՝ երկրորդ կին մինիստրը, Իրաքում, որին վստահվեց բարձրագույն կրթության մինիստրի պաշտոնը:

70-ական թթ. առաջին կեսին աշխուժացան Իրաքի կանանց կիզակ կապերը Միրիայի, Սզիպտոսի, Լիրանտեի և արաբական ալլ

երկրների կանանց կազմակերպությունների միջև կանանց միջազգային գեմոկրատական ֆեդերացիայի շանքերով անց էին կացվում տարբեր միջոցառումներ, այդ թվում պարբերական թեմատիկ սեմինարներ: Քննարկվում էին քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում կանանց դերի ուժեղացման հարցերը:

Աշագրության արժանի է այն փաստը, որ 1970 թ. սեպտեմբերի 23-ին Թաղապետ կայացրած կանանց քաղաքի ցույց, հազարավոր կանանց մասնակցությամբ, ի աշակցություն պաղեստինյան շարժման: Միաժամանակ հզվեց ուղերձ պաղեստինյան ազատագրության շարժման կազմակերպությանը, որի առկա ստորագրեցին ինչպես Իրաքի կանանց Լիգայի, այնպես էլ Քուրդստանի կանանց կազմակերպության ղեկավարները, որոնք հանդես էին գալիս անդա՛նտ պաղեստինցի կանանց և երեխաների վիճակի մասհոգությամբ: 1973 թ. հոկտեմբերի 8-ին Իրաքի կանանց Լիգան դիմեց յուր կանանց իտալացիական ազդեսխան դատապարտելու հոշով, նշելով ս'իմում ենք կանանց վճռականորեն և միատեսական շարքով կանգնել մեր ժողովուրդի, ինչպես նաև նզխատուի և Միրիայի արարական ժողովուրդների առաջադիմական ուժերի կողքին, դատապարտելով իտալացիական նոր ազդեսխանա՞ն: Իրաքի կանանց Լիգայի ներկայացուցիչները մասնակցեցին նաև Ասիայի և Աֆրիկայի երկրների կանանց սիմպոզիումի աշխատանքներին՝ սկիներ և հասարակական զարգացումը թեմայով, որ կայացավ 1975 թ. մարտին Ալեքսանդրիայում և կազմակերպված էր Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության կազմակերպության կողմից, կանանց միջազգային տարվա շրջանակներում: Այդ սիմպոզիումի մասնակիցները առաջարկեցին ստեղծել Ասիայի և Աֆրիկայի կանանց կազմակերպությունների օգնության ֆոնդ և կոչ արեցին ամրապնդել համագործակցությունը միջազգային գեմոկրատական կազմակերպությունների հետ: Այդ միջոցառմանը մասնակցող կանայք հույս հայտնեցին իրենց ավանդը ներդնելու ազատագրող երկրների ժողովուրդների պայքարում՝ հանուն տնտեսության զարգացման, անկախության և իրենց ազգային հարստությունների վրա վերահսկողության, պետությունների հետ տնտեսական հարաբերությունների ամրապնդման, իրավահավասար իրավունքների հիմքի վրա: Ընդունված փաստաթղթում նշված է հիտլերյան ֆաշիզմի դեմ պատմական հաղթանակի երեսնամյա հորեյանի նշանակությունը և Բան-

դունգում կայացած կոնֆերանսի քսանամյակի լրանալու տարելիցը<sup>10</sup>, Այդ հավաքների կին մասնակիցները հատակ պատկերացնում էին կանանց դերը հասարակական-քաղաքական կյանքում, պատասխանատվությունը իրենց երկրներում կանանց շարժման զարգացման ուղղությամբ: Կանանց միշտադաշին տարվա առիթով Իրաքի կանանց կիզայի գործադիր կոմիտեն մշակեց ամբողջական ծրագիր, նվերով երկրի կանանց վիճակի պահանջներին: Մեծ անդ հատկացվեց ուսման և մշակույթի խնդիրներին: Հանձնարարականներում նշված էր, որ «լուսավորության և պրոպագանդայի մարմինների միջոցով անհրաժեշտ է անցկացնել գաստիարակական աշխատանք կանանց շրջանում, որը կնպաստի նրանց հասարակական գիտակցության բարձրացմանը: Նախապաշարումների և հետամնաց հայացքների դեմ պայքարում ազգային, մշակութային կյանքում կենդ կարևոր դերի յուսարանման հարցում կարևոր նշանակություն կարող են ունենալ տարբեր կարգի միջոցառումները, որոնք անց կկացվեն ողջ երկրի շրջանակներում Իրաքի կանանց կիզայի և այլ հասարակական կազմակերպությունների ջանքերով»<sup>11</sup>:

Գործադիր կոմիտեն հանդես է գալիս լրացուցիչ միջոցներով, որոնք նպատակ ունենին առավել լավով ներգրավել կանանց արտադրության ոլորտում և նրանց առաջ քաշել ղեկավար պաշտոններում: Արաբական երկրների կանանց համընդհանուր ֆեդերացիան ամեն կերպ աջակցում և ուղղություն էր տալիս այդ միջոցառումներին<sup>12</sup>:

Սակայն նշենք նաև, որ շնայած կառավարության խոստումներին՝ մեծապես ուշացել և նպաստել կանանց ազատագրմանը, Իրաքի կանանց կիզայի շատ նախաձեռնություններ այդպես էլ չիրականացան:

1973 թ. հուլիսի 17-ին Իրաքի կոմկուսի և Բաաս-ի միջև ստորագրվեց միացյալ գործողությունների և համագործակցության մասին խարտիան բնակատը ողջ ժողովրդին է, այն պատկանում է բանվորներին, գյուղացիներին, հեղափոխական ինտելիգենցիային, զինվորականներին և ոչ զինվորականներին, կանանց, արհեստավորներին, ուսանողներին և մտավոր ու ֆիզիկական աշխատանքի բոլոր մարդկանց: Այդ բնակատի օտեղծումը նշանավորում է մեր ժողովրդի հեղափոխական շարժման գլխավոր նպատակի՝ մեղքերումը և հանդիսանում է կարևոր շրջադարձային կետ մեր երկրի քաղաքական կյանքում»<sup>13</sup>:

Պետևս 1968 թ. Իրաքի կոմկուսի առաջարկած նախագծի<sup>14</sup> շատ գրույթներ արտացոլվեցին Ազգային գործողությունների խարտիայի էջերում: Իրաքի Հայրենասիրական ազգային առաջադիմական ճակատի ծրագրում ընդգծված է ժողովրդական մասսաների, այդ թվում և կանանց մոբիլիզացման կարևորությունը, բժշկության մասսաների մոբիլիզացումը քաժնում նշված է՝ քրանվորների, գլուղացիների, ուսանողների, ինտելիգենցիայի և կանանց Համախմբումը արժիությունների, ընկերությունների և միավորումների միջոցով օրենական իրավունք է, ընդգծված խարտիայում<sup>15</sup>, բնագավառությունը գտնում է, որ երիտասարդ տղաների և աղջիկների Համախմբումը երիտասարդական կազմակերպությունների շայն ցանցի օգնությամբ կարևոր անհրաժեշտություն է<sup>16</sup>, բնագավառությունը գտնում է, որ կենդ մասնակցությունը բոլոր գոյություն ունեցող կազմակերպություններում, միություններում և Հաստատություններում կարևոր անհրաժեշտություն է, որ պետք է իրականացնել լայնորեն:

Բնագավառությունը աշակցում է տարբեր կանանց կազմակերպություններին, նպատակ ունենալով հնարավորություն տալ կանանց գրավել իրենց արժանի տեղը և ակտիվ զեր խաղալ հեղափոխական շինարարության գործում և ազգային պայքարում<sup>17</sup>:

Ազգային գործողությունների խարտիան Իրաքի կանանց Համար ապահովում էր աղամարդկանց հետ հավասար քաղաքական, տնտեսական, սոցիալական իրավունքներ:

Բնագավառական արժիությունները, գլուղական միավորումները, ուսանողական և կանանց կազմակերպությունները կարող են ակտիվ զեր խաղալ հեղափոխական սոցիալական վերափոխումների իրականացման արագացման գործում և իրենց ավանդը ներմուծել քաղաքական, տնտեսական և մշակութային րնագավառներում նոր հաջողությունների ձեռքբերման ճանապարհին<sup>18</sup> ընդգծված է խարտիայում: ԵՄոցիալական նպատակները բաժնում, (կետ 7) հանգամանորեն ներկայացված են Իրաքի կանանց վիճակը և նրանց ազատագրման նշանակությունը ամբողջ հասարակության համար: ...<sup>19</sup>ինը, կրելով ճնշման, շահագործման և հետամնացության բեռը, որը կրել է մեր ժողովուրդը, կրել է նաև իր մարդկային արժանապատվության բոլոր նվաստացումները, որոնք խեղանդամել են նրա ազատ, գիտակից և ստեղծագործական մասնակցությունը հասարակական և մարդկային կյանքում<sup>20</sup>: Հայրենասիրական ազգային առաջադիմական ճակատի



մասնակիցները գտնում են, որ «Սոցիալական վերափոխումների ընթացքի զլխավոր խնդիրներից է հատուկ հոգատարություն ցուցաբերելը կնոջ նկատմամբ, որպեսզի նա կարողանա համակերպվել նոր պայմանների հետ»<sup>20</sup>,

Իրաքի առաջադիմական ուժերը կնոջ ազատագրության հարցի հետ էին կապում նաև աճող սերնդի դաստիարակության հարցը: Միաժամանակ հանձնինք Իրաքի կանանց նրանք տեսնում էին անկախության, ազատության, զեմկրատիայի և հասարակական առաջընթացի համար պայքարող մարտիկների: Այսպես, խարտիայում մասնավորապես նշված է. «Մեր հասարակությունը, որի առջև դրված են իմպերիալիզմի, սիոնիզմի և ուսկոփայի, հետադիմության և մեզ շրջապատող այլ վտանգների դեմ պայքարի հարցերը, շփոթ է գրկված լինի մեր հասարակության կեսը կազմող կանանց ակտիվ օգնությունից, բացի այդ կնոջ ազատագրումը կապանքներից և հետամնացության մնացորդների քուր ձևերից, հանդիսանում է նոր սերունդի դաստիարակման շիշա սկիզբ, որը ընդունակ է կրելու հայրենասիրական և ազգային պատասխանատվությունը»<sup>21</sup>:

Կարևոր է նշել, որ Իրաքի ղեկավար Բաաս կուսակցությունը իր փաստաթղթերում նշում է երկրի կանանց ազատագրության ընթացքի արագացման նշանակությունն ու կարևորությունը: Իրաքի Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության 8-րդ ռեզոլուսիոնում համապատասխան քաղաքական հաշվեհարկության մեջ ասվում է, որ անհրաժեշտ է պայքարել հանուն տեղական քաղաքականությունները նսեմացնող, նրանց մարդկային գոյությունը միակողմանի դիտող հետադիմական, հետամնաց դրսևորումների և գաղափարների դիմակադեման»<sup>22</sup>:

Նշենք նաև, որ 70-ական թթ. առաջին կեսը հարուստ է ներքին քաղաքական կյանքում զրական տեղաշարժերով: Սոցիալ-անտեսական վերափոխումների ծրագրի իրականացման ընդհանուր միտումը ուղղված էր Իրաքի ողջ հասարակության առաջադիմական զարգացման օգտին: 70-ական թթ., ինչ խոսք, փոխվեց կնոջ վիճակն Իրաքում: Բուլղար լրագրող Դոնկա Պետրևսովան, որը այցելել է Իրաք կանանց շարժման պատվիրակության կազմում, իր հոդվածն անվանել է՝ «Իրաքի բաց այցերը»: Նա նշել է. «Թղթի ֆարքիկայում կանայք ղեկավարում էին բարդ տեխնիկան, հսկում էին ավտոսայլակները: Բասրայում մենք հանդիպեցինք նկարչուհի Ազիլա Արասի հետ (քաղաքում առայժմ միակ կին նկարչուհու): ...Կանանց արդեն

շատ կարելի է հանդիպել երկրի հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում: Հենց այն հանգամանքը, որ կանայք ավելի հաճախ են դուրս գալիս տնային տնտեսության իրենց ևեղ աշխարհից, ավելի լայնորեն են մասնակցում հասարակական արտադրության ոլորտում, առաջին պլան է մղում մտնական հաստատությունների հարցը, որոնց գլխավոր կազմակերպիչը իրաքի կանանց համընդհանուր ֆեդերացիան է<sup>23</sup>: Այնուհետև նշված է, որ Բազդադում բացված «Բարաամ ալ-Տաուրա» մանկապարտեզը կանանց կազմակերպության վերջին հաջողություններից է:

Հոգատարությունը մատաղ սերնդի հանդեպ նույնպես նոր երևույթ է Արևելքի շատ երկրներում, այդ թվում և իրաքում, որտեղ երեխաները 7—8 տարեկանից ստիպված էին իրենք իրենց ապրուստը հոգալ: Ազգային զործողությունների նարախայում հատկապես նշված է «Պետությունը նույնպես պետք է հոգ տանի նախադպրոցական շրջանի երեխաների մասին, ընդարձակելով և զարգացնելով մատրնների և մանկապարտեզների ցանցը, քանի որ դրանք դաստիարակչական հաստատություններ և միջոցներ են, որոնք հեշտացնում են պետության կողմից կանանց առջև դրված խնդիրների իրականացումը<sup>24</sup>:

Երկրի առաջադիմական ուժերի համատեղ ջանքերով զգալի չափով նվազել է անզրագիտության ասկոսը՝ հասնելով 25-ի, բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդգրկված աղաների և ուղղիկների թիվը զրեթե հավասարվել է: Շեշտակի նվազել են երեխաների մահացության զեպքերը: Մոցիալական վերափոխումների ժրագրում մեծ ուշադրություն է դարձված մոդերնական լուսավորությանը: 1978 թ. վերջին ուսուցման ոլորտում ընդգրկված էր երեխաների 90%-ը բազարում և 60%-ը գյուղական շրջաններում<sup>25</sup>: Այս տվյալները ուշադրության արժանի են մի այնպիսի երկրի համար, ուր 1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխության նախօրինն բնակչության անզրագիտության ցուցանիշը 85% էր<sup>26</sup>:

Միամամանակ ավելացել է արդյունաբերության ոլորտում ընդգրկված կանանց թիվը՝ 1972 թ. խոշոր արդյունաբերական կենտրոնների բանվորների ընդհանուր թվի (13,741) 11,3%-ը կանայք էին, 1973 թ. 13%-ը<sup>27</sup>, 1976 թ., թվով 248,5 հազար արդյունաբերական աշխատողներից (չհաշվելով կամքարդյունաբերությունը), 20,53 հազար կամ ազգային արդյունաբերության աշխատողների 8,26%-ը կանայք էին<sup>28</sup>:

1977 թ. մարզահամարի ավյայնեցով, երկրի տնտեսությունում աշխատում էին 7—9 տարեկան 4590 երեխա, նրանցից մոտավորապես 40%-ը գյուղատնտեսության ոլորտում և նրան հարող շյուղերում, 24%-ը վերամշակող արդյունաբերության և 14%-ը շինարարության բնագավառներում: Երկրի տնտեսության մեջ զբաղված էին 10—14 տարեկան 141,608 երեխա, նրանց 63%-ը գյուղատնտեսության մեջ և հարակից նյութերում, շինարարության ոլորտում 15%-ը: Առաջին տարիքային խմբում աղջիկները կազմում էին ընդամենը 16,5%, իսկ երկրորդում կեսը:

Աշխատունակ տարիքի ներքին ցուցանիշը՝ 15 տարեկան, որ սահմանված է օրենքով, համապատասխանում է ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցողների տարիքին և կիրառվում է 50-ական թթ. սկզբրից: Աշխատանքային օրենքը սրվելու է 15—18 տարեկան զեռահասակների ծանր և արտամասնյա աշխատանքի օգտագործումը գիշերային ժամերին: Մինչև 16 տարեկան զեռահասակների աշխատօրի տևողությունը 7 ժամից չպետք է գերազանցի (հոդված 36): Վերջին տարիներին ընդունված օրենքներն ու որոշումները (պարտադիր տարրական կրթության մասին օրենքը 1978 թ., երեխաների խնամակալությունը պետության կողմից, պետական մանկական հաստատությունների հիմնումը, զեռահասակների ընդգրկումը պետական սեկտորի ձեռնարկություններում և այլ միջոցառումներ) զգալի չափով նվազեցրին աշխատող զեռահասակների թիվը, որը 1977 թ. կազմում էր 229 հազար (15—19 տարեկան)՝

70-ական թթ. վերջից 15—45 տարեկան բուր անզբաղեա քաղաքացիների համար կազմակերպվեցին հատուկ զասընթացներ: 1977 թ. մարզահամարի ավյայնեցով անզբաղեա բնակչության տեսակարար կշիռը կազմում էր 53%՝ կանանց շրջանում՝ 70,7%, տղամարդկանց՝ 36%<sup>23</sup>,

Երկրի տարբեր շրջաններն էին ուղարկվում կուլտուր-լուսավորական բրիգադներ՝ կազմակերպված Իրաքի կանանց կիզմի կողմից, որոնք սգնում էին կարգավորել բժշկական սպասարկումը և վերացնել բնակչության անզբաղիտությունը<sup>24</sup>:

Կնոջ ազատագրության ուղղությամբ կարևոր իրազարմություն էր ընտանիքի և ամուսնության մասին օրենքը: Նշենք, որ դեռևս 1959 թ. ընդունված ընտանիքի և ամուսնության մասին միասնական կողմնորոշումը չէր նորություն էր: Իրաքի հասարակական կյանքում և դիտվեց, որ-

պես 1958 թ. Հուլիսյան Հեղափոխության լավագույն ձեռքբերումներից մեկը: Այդ մասին հիշատակում ենք, քանի որ հետագա տարիներին Իրաքի կանանց իրզան բազմիցս անդրադարձել է այդ օրենքի կենսագործման վիճակին: Թելուքս նշված է Իրաքի կանանց լիցայի հոգվածում, որ գրվել է «Ժենչիկի միրա» միջազգային հանդեսի համար՝ «Իր բնութեով առաջադիմական կողմերը համանություն գտավ քնակչության լայն խավերի կողմից: Բայց նրա ընդունումից քիչ անց հետադիմությունը անցավ հարձակման, կողքերում մտցված փոփոխությունները հանգեցրին նրան, որ 1963 թ. առաջադիմական միջոցառումների մեծամասնությունը ի լիք դարձավ»<sup>21</sup>:

Ընտանիքի և ամուսնության մասին նոր օրենքի նախագծում Իրաքի կանանց իրզան նոր առաջարկություններ փոխանցեց: «Կազմակերպվում էին լայն քննարկումներ, որոնց ժամանակ իրավաբանները, փաստաբանները, գատավորները, ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, պարզաբանում էին այն կարևոր փոփոխությունների բովանդակությունը, որոնք նախատեսվում էր մտցնել ընտանիքի և ամուսնության մասին օրենքի մեջ»<sup>22</sup>: Թելուքս արարական շատ երկրներում, այնպես էլ Իրաքում ընտանիքի և ամուսնության մասին օրենքը քաղաքացիական օրենքի մի մասն է, և կարգավորում է գույքային և անձնական հարաբերությունները: 1977 թ. այդ օրենքը հավելվեց նոր կետերով հօգուտ Իրաքի կանանց: Փոփոխությունները վերաբերում էին ժառանգության իրավունքին, խնամակալությունը, ամուսնալուծությունը: Ըստ նոր օրենքի, իրաքցի կինը իրավունք ունի ամուսնալուծության, ստանալով ամուսնուց ապահարզան: Ունեցվածքի բաժանման ժամանակ կանայք տղամարդկանց հետ սնեն հավասար իրավունքներ:

«Սա լհիշեցի որոշման բոլոր կետերը,—գրում է «Իրաքի բաց աչքերը» վերը նշված հոդվածի հեղինակը.—սակայն դատելով իրաքցի ընկերուհիներին հուզված և ուրախ տեսքից, պարզ էր՝ տապալվել էր կնոջ հանդեպ ունեցած վերաբերման զարավոր ավանդույթների մի աշտարակ ևս»<sup>23</sup>:

1976 թ. մայիսին կալաքով Իրաքի կոմկուսի III համագումարը Կուսակցությունը ուղենշեց կնոջ ազատագրության նոր հարցեր և խնդիրներ: Կուսակցությունն այդ հարցին չուրջ ուշադրություն էր դարձնում և կոչ էր անում կոմունիստներին հետևողականորեն աշխատել կանանց, երիտասարդության, ուսանողության շրջանում՝ նպաս-

տակ ունենալով նրանց միավորել և դարձնել այնպիսի կազմակերպություններ, որոնք իրենց ծրագրերը, գործունեությունը և զնկավար մարմինների կառուցվածքը որոշելիս առաջնորդվեն ազգային գաշինքի սկզբունքներով<sup>34</sup>։

1970—1975 թթ. կին կուսակցականների թիվը զգալի աճեց։ Իրաքի կոմունիստները կարևոր խնդիր էին համարում կանանց կազմակերպություններում կոմունիստների գործունեությունը, այդ կազմակերպությունների աշխատանքներին ուղղություն տալու նպատակով։ Իրաքի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուզար Ազիզ Մուհամմեդը 3-րդ համագումարի հաշվետու զեկուցման մեջ ընդգծել է, որ շնայած առաջադիմական ազգային հայրենասիրական նահատի ծրագրում հաստատված է կանանց կազմակերպությունների գործունեության նշանակությունը, սակայն երկրում ստեղծված են կոմանց և երիտասարդական կազմակերպություններում կոմունիստների գործունեությունը խանգարող պայմաններ։ ԵՎափոք, այդ շահերը,—նշել է Ազիզ Մուհամմեդը,—հաջողություն չունեցան (նկատի ունի Իրաքի կոմունիստների շանքերը կանանց կազմակերպություններում գործելու համար բաաս կուսակցության հետ համագործակցության դալը), քանի որ շարունակվում էին հետևողական պահանջները Դեմոկրատական երիտասարդության միությունը, Իրաքի հանրապետության համընդհանուր միությունը և Իրաքի կոմանց լիզան արձակելու մասին, այսինքն այն կազմակերպությունները, որոնց զնկավարության կազմում մասնակցում էին մեր ընկերները։

Այդ ամենը կուսակցությանը ստիպեց որոշում ընդունել իր գործունեությունը այդ կազմակերպություններում ժամանակավորապես ընդհատելու մասին, բարդություններից խուսափելու համար, նպատակ ունենալով պահպանել երկու կուսակցությունների համագործակցությունը չափառում, հույս ունենալով բարենպաստ պայմանների, այդ կարևոր դեմոկրատական գործունեության ընդգծումում գտնելու համագործակցության ավելի հարմար նդանակ<sup>35</sup>։

Իրաքի կոմկուսի զնկավարի այս խոսքերը ընդհանրում են ինչպես Իրաքի կոմկուսի, այնպես էլ կանանց լիզայի գործունեության ողջ բարդությունը։ Քաղաքական այսպիսի միջոցառում Իրաքի կոմկուսը իր 3-րդ համագումարում ընդունեց կանանց ազատագրության մասին բանաձև։ Բանաձևում ընդգծված է բոլոր առաջադիմական ուժերի, հատկապես կանանց կազմակերպությունների շանքերի ակտիվացման

անհրաժեշտությունը, լուծելու համար կանանց լրիվ ազատագրության հետ կապված խնդիրները և բարձրացնելու համար նրանց դերը երկրի հասարակական և քաղաքական կյանքում: Իրաքի կոմկուսը կուսակցական կազմակերպություններին կոչ էր անում բանախօսակցներ աշխատանքը կանանց ներգրավելու համար աշխատանքային, հասարակական և քաղաքական գործունեության մեջ, ինչպես նաև նրանց մասնակից գարձնելու հանուն անդրադիտության վերացման պայքարին, Իրաքի առաջադիմական զարգացման ընդլայնմանը սոցիալիզմի ուղիով՝ միակ նշմարիտ հասարակարգի, որը վերջնականապես կազատագրի կենտր դասակարգային շահագործումից և սոցիալական նշումից, կապահովի նրա լիիրավ հավասարությունը կյանքի բոլոր ոլորտներում<sup>26</sup>:

70-ական թվականներին Իրաքի կանանց դերը նկատելի բարձրացավ երկրի տնտեսական կյանքում: Մակաբն հասարակական-քաղաքական կյանքում նրանց մասնակցության համար Իրաքում քաջակալում էին նպատակադր պայմաններ:

Ռազաքական խորտականությունը պատճառով հաղարավոր իրաքյի կանայք զրկված են ալսոր աշխատանքի, ուսման, իրենց երեխաներին խաղաղության և բարեկամության ոգով դաստիարակելու իրավունքներից, քանի որ րուսախտական դաստիարակության և կրթության ցանցը ներթմված է շովինիզմով... Կարևոր խնդիրը, որն ալսոր կանգնած է մեր առջև, պայքարն է հանուն ղեմնկրատիայի հաստատման, քանի որ միայն այդ պայմանով է հնարավոր իրականում ապահովել ինչպես ողջ աշխատավորության, այնպես էլ կանանց իրավունքները: Մենք հանգես ենք զալիս հանուն այն նպատակի, որպեսզի կանանց քաղաքական իրավունքների թվում հաստատվի նաև սեփական լեզու կազմակերպություններում գործելու իրավունքը, որպեսզի առաջադիմական կանանց շարժումը առաջադիմի և զարգանա<sup>27</sup>:

1977 թ. սկսվեցին երկրի առաջադիմական ուժերի և առաջին հերթին կոմունիստներին հետապնդումներն ու նրանց հալածանքները: Հենց այդպես էլ վերնագրել է իր հոդվածը ԵՊրուլիմի միրա ի սոցիալիզմա հանգեսում Նազհիա Դուլեյմին՝ բննդդիմ ռեպրեսիաների և հետապնդումներին<sup>28</sup>, Իրաքում զարձակ անհնար նաև այն միջոցառումներին իրականացումը, որոնք կանխատեսված էին կենտր միջազգային տարվա առիթով:



Ամփոփելով մեր խոսքը, նշենք, որ Իրաքի կոմկուսի կապերը կանանց շարժման հետ ունի առանձնակերպ պատմություն: Դեռևս 1943 թ. Բազդազում կայացավ կանանց առաջին ցույցը: Այն կազմակերպված էր Իրաքի կոմկուսի կողմից: Իրաքի կոմկուսի համար հոբելյանական տարում 1984 թ. հրապարկվեց կուսակցության գործունեությունն ամփոփող նյութ, այդ թվում՝ Իրաքի կոմկուսի 50 տարին— էջեր Իրաքի կոմկուսի պատմությունից, ուր նշված է նաև Իրաքի կոմկուսի հիմնադիր Յահյե հողվածի մասին, տպագրված՝ «Ալ-Կադա» (սլիմք) թերթում 1943 թ.: Այդ հողվածում Յահյե նշել է՝ «Գլխավոր թշնամին, որը հանդես է գալիս կնոջ ապրելակերպի փոփոխության և նրան ստրկական վիճակից ազատելու դեմ, նույնն է, որը, նաև հակառակում է ժողովրդի ապրելակերպի փոփոխությանը և ազատագրմանը: Այդ թշնամին ստարերկրյա ազդեցությունն է և նրա հենարանը՝ հետադիմությունը և ավանդույթները, որոնք լին համապատասխանում ժամանակակից դարաշրջանին»<sup>35</sup>:

Անցել է ավելի քան քառասուն տարի. կանանց շարժումն Իրաքում հասել է զգալի հաջողությունների: Ամրապնդվել են Իրաքի կոմկուսի կապերը կանանց կիցայի հետ, որը 1982 թ. նշեց իր երեսնամյակը: Իրաքի կոմկուսի ապագիր արդանների էջերում պարբերաբար լուսարանվում են կանանց շարժման խնդիրները: Սակայն կանանց շարժումը քաղաքական առումով, դեռևս մասսայական ընդլայնվել է:

Երկրի կոմունիստները, առաջադիմական Խասարակական գործիչները և կանանց շարժման ակտիվիստները դիտակցում են, որ բառը դեռ հակայական աշխատանք կա հենց իրենց՝ կանանց, մասսայական կանանց շարժման համար: Դրա հետ մեկտեղ կանանց շարժումը, որը իր հատուկ խնդիրները ինչն է լուծում, չի կարող հաջողության հասնել առանց բանվոր դասակարգի շարժման վրա հենվելու, առանց սերտ կապերի մոնոպոլիստների դեմ, հանուն խաղաղության, դեմոկրատիայի, սոցիալիզմի մղված պայքարի<sup>36</sup>:

Իրաքի կոմունիստների շուրջը ստեղծված անհանգուրժելի մթնոլորտը ստիպեց կուսակցության ղեկավարությանը 1979 թ. մայիսին որոշում ընդունել դուրս գալու Ազգային ճակատի կազմից և անցնել անլիզալ գործունեության<sup>37</sup>:

Հայրենասիրական ազգային-առաջադիմական ճակատի փլուզումով անավարտ մնացին նաև նրա ծրագրային փաստաթղթերի իրա-



կանացումը, այդ թվում և վերջ նշված այն կետերի պրակտիկ իրագործումը, որոնք վերաբերում էին կանանց ազատագրության հարցին:

Իրաքի ղեկավար շրջաններին երկրի կանանց ազատագրության հարցը հետաքրքրում էր կապված անաստական զարգացման հետ: Ինչ խոսք, առաջադիմական անաստական վերափոխումների ուղղությամբ, զգալի տեղաշարժեր գիտվեցին նաև կանանց ազատագրության հարցում: Անժ թվով կանայք զուրա եկան իրենց տների շրջապատերի շրջանակներին, ընդգրկվելով անտեսության ոլորտում: Նվազեց անզրագիտության տոկոսը: Դրական տեղաշարժեր գիտվեցին լուսավորության բնագավառում:

Որքան էլ փոքր են 70-ական թթ. տոկոսային առավելությունները նախկին համեմատությամբ, որոնց մենք անդրադարձել ենք սույն հոդվածում, այնուհանդերձ եկատի ունենանք, որ խոսքը վերաբերում է արարական աշխարհի ազատագրված երկրներից մեկին, որի նախահանձապետական շրջանի ցուցանիշները անզրագիտության, երեխաների աշխատանքի շահագործման, կանանց վիճակի մասին անմխիթար էին:

Կանանց ազատագրության հարցը աշխատատար, ժամանակ պահանջող խնդիր է Իրաքի պայմաններում: Միաժամանակ անհրաժեշտ են համապատասխան խթանումներ և ղեմնկրատիայի լիակատար գրսևորում: Չնայած այն հանգամանքին, որ 70-ական թթ. Իրաքի առաջադիմական ուժերի համար եղանակտիվ ստեղծագործական տարիներ՝ կոմկուսի երկու համագումարների գումարումը, ազգային հակառի ստեղծումը և այլն, սակայն պրակտիկ գործունեության համար ռեալ պայմաններ չապահովվեցին: Կանանց շարժումը նշված ժամանակահատվածում ընթանում էր դժվարին պայմաններում: Ընդունված որոշումների և օրենքների շատ կետեր դժվար, կամ բոլորովին չէին կիրառվում: Հարցականի տակ էր առնված մինչև անգամ Իրաքի կանանց կիզայի գոյության անհրաժեշտությունը: Հետևողականությունը լցուցարներից նաև 1975 թ. ընտանիքի և ամուսնության մասին օրենքի կետերի կիրառման եկատմամբ, չնայած կանանց մասսաների խանդավառությունը:

1975 թ. սկսած դժվարին պայմաններ ստեղծվեցին Իրաքի կանանց կիզայի գործունեության համար: Անդրադառնալով 70-ական թթ. կանանց շարժման դասերին Նազիհա Գուլեյմին ե՛րաքի կանանց

Լիզալի երեսնամյա պայքարի փորձը Հորեյանական հոգվածում գրում է. «1975—79 թթ. ժանր տարիների ընթացքում, երբ Լիզալի գործունեությունը դադարեցված էր, հայրենասիրական և առաջադիմական շարժումը համալրվեց երիտասարդ կանանց իր խմբերով, որոնք լի էին խանգավառություն և պատրաստակամությամբ պայքարելու համար հանուն կանանց իրավունքների՝ մեր երկրում ստեղծված նոր պայմաններում»<sup>43</sup>,

Ելնելով 80-ական թթ. սկզբի Իրաքի կանանց շարժման ընթացքի սրինակներից, կարելի է ասել, ինչպես յուրաքանչյուր առաջադիմական շարժում, այնպես էլ Իրաքի բնակչության կեսը կազմող կանանց շարժումը ունի զարգացման պոտենցիալ հնարավորություններ:

К. Х. САМВЕЛЯН

## КОМПАРТИЯ И ПРОГРЕССИВНЫЕ СИЛЫ ИРАКА В БОРЬБЕ ЗА ЭМАНСИПАЦИЮ ЖЕНЩИНЫ (70-ые годы)

### Резюме

В статье освещены вопросы эмансипации женщины в Ираке в 70-ые годы. Женское движение в стране зародилось и развивалось в специфических для стран Востока условиях.

Большое место уделено деятельности Иракской компартии. На различных этапах женского движения компартия Ирака действовала по трем основным направлениям: популяризации прогрессивных идей и марксистско-ленинских взглядов на проблему освобождения женщины, выявление взаимосвязей между этим вопросом и общепатриотическими проблемами, а также массовой борьбой рабочих и крестьян; выработка конкретных программных лозунгов, доведение их до широких масс трудящихся женщин, изучение их положения и проблем: организационно, с целью вовлечь женщины в деятельность демократических организаций и приумножить число женщин—коммунисток.

В программных документах Иракской компартии уделено должное внимание работе с женщинами-крестьянками. В 70-е годы большинство законов и постановлений не распространялись на женщин сельских местностей. Они были изолированы от общих перемен в социально-экономической жизни.

Подчеркнута активизация деятельности Лиги иракских женщин в первой половине 70-ых гг. Показаны международные связи этой организации. На фактическом материале показаны некоторые изменения в положении женщины и детей, в связи с осуществлением программы социально-экономических преобразований. В 1975—1979 гг. для деятельности Лиги Иракских женщин в стране не было возможностей. Уроки истории женского движения в Ираке убеждают, что это движение имеет потенциальные возможности.

В статье широко использованы программные материалы Иракской компартии (II, III съездов), Патриотического-национально-прогрессивного фронта. Большой интерес представляют статьи Назихи Дулейми.

- 1 «Проблемы мира и социализма», 1980, № 3, с. 77.
- 2 *Եւրօպ տեղում*, էջ 79.
- 3 *Եւրօպ տեղում*, էջ 80.
- 4 *Մարտի ամսանոցի աշխարհի աշխարհի աշխարհի*, Բաղրամ, 1970, էջ 26—27.  
К. Х. Самвелян, Рабочий класс Ирака в борьбе за упрочение антиимпериалистского строя и демократию, 1979, Ереван, с. 23, 81, 94, 95.
- 5 *Սոցիալիզմ*, Բաղրամ, 17, 6, 1975.
- 6 «Болгарская женщина», 1978, № 12, с. 13.
- 7 А. Ф. Федченко, Ирак в борьбе за независимость (1917—1969). — М., 1970, с. 258.
- 8 *Սոցիալիզմի աշխարհում*, Բաղրամ, 1982, № 120, էջ 126.
- 9 *Իր* К. Х. Самвелян, Участие женщин Ирака в общественно-политической жизни страны (1945—1975 гг.) *Մեր օրերը և Մեր օրերի երկրները և ճանաչողությունը*, IX, Արարիկի երկրներ, Երևան, 1979, էջ 144.
- 10 «Женщины мира», 1975, № 2.
- 11 *Եւրօպ տեղում*, 1978, № 4, էջ 44.
- 12 *Եւրօպ տեղում*.
- 13 «Устав и принципы действий Патриотического и национально-прогрессивного фронта в Ираке», Хельсинки, 1976, с. 14.
- 14 *Սոցիալիզմ*, 17.11.1968.
- 15 «Устав и принципы действий Патриотического и национально-прогрессивного фронта в Ираке», с. 17.
- 16 *Եւրօպ տեղում*.
- 17 *Եւրօպ տեղում*.
- 18 *Եւրօպ տեղում*, էջ 18.
- 19 *Եւրօպ տեղում*, էջ 21.

- 20 *Եւլի տեղում*
- 21 *Եւլի տեղում*
- 22 «Арабская нация одна, ее миссия бессмертна», Политический отчет VIII регионального съезда, январь, 1974, Хельсинки, 1975, с. 187.
- 23 «Болгарская женщина», София, 1978, № 12, с. 13.
- 24 Устав и принципы..., с. 30.
- 25 «Болгарская женщина», 1978, № 12, с. 13.
- 26 «Азия и Африка сегодня», 1979, № 1, с. 44.
- 27 «Սոցիալիստական Իրան», *Բարձրագ*, № 11 (77), 1975, էջ 5.
- 28 С. Г. Гринин, К. Х. Самвелян, — Ирак, — с-р. «Рабочий класс Азии», М., 1985, с. 106.
- 29 *Եւլի տեղում*, էջ 100, 101.
- 30 «Женщины мира», 1976, № 4, с. 44.
- 31 *Եւլի տեղում*, 1975, № 2, էջ 42.
- 32 *Եւլի տեղում*
- 33 «Болгарская женщина», 1978, № 12, с. 13.
- 34 III Национальный съезд Иракской компартии, 1977, М., с. 68.
- 35 *Եւլի տեղում*, էջ 33—45.
- 36 *Եւլի տեղում*, էջ 163.
- 37 «Проблемы мира и социализма», Прага, № 111, 1980, с. 80.
- 38 *Եւլի տեղում*, № 2, 1979, էջ 55.
- 39 «50 лет Иракской коммунистической партии» — (Строки из истории Иракской коммунистической партии), «Երբ և թիվը նշված չէ, էջ 10.
- 40 «Проблемы мира и социализма», 1980, 111, с. 81.
- 41 «Политические партии», М., 1981, с. 140.
- 42 «Սոցիալիստական Իրան», *Բարձրագ*, 1982, № 129, էջ 115.

ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1978—1979 թթ.  
ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅԱՆԸ

1978—79 թթ. իրանական հեղափոխությանն Ազգային Հակաազգամակերպության մասնակցության հետ առնչվող հարցերի ուսումնասիրությունն ու լուսարանումը շահագանց կարեոր է հեղափոխության շարժիչ ուժերից յուրաքանչյուրի տեղի ու դերի որոշման համար:

Իրանի ազգային բուրժուազիայի քաղաքական կազմակերպությունը՝ Ազգային Հակաառը պայքարի մեծ գործն ունի: Այն հիմնվել էր գեռես հուպատերազմյան տարիներին Իրանում ժողովրդած ազգային-ազատագրական շարժման զերիչի շրջանում՝ 1949 թ.<sup>1</sup>, ազգային բուրժուազիայի նշանավոր գործիչ Մուհամմադ Մասադեզի նախահեռուսթյամը և զճուական դեր էր խաղացել Իրանի նազիթարդյունաբերության ազգայնացման գործում: 1953 թ. սոստոսի 18-ին տեղական հետադրմական շրջանների և օտարերկրյա, հատկապես ամերիկյան իմպերիալիստների համատեղ ջանքերով Իրանում կազմակերպված պետական հեղաշրջումից և դեներալ Յ. Ջահեգիի ղեկիմի հաստատումից հետո Ազգային Հակաառն ամենազգաման ճնշումների ենթարկվեց և, փաստորեն, զազարեցրեց իր գործունեությունը:

Ազգային Հակաառի զերառմման համար երկրում նպաստավոր իրադրություն ստեղծվեց 60-ական թվականների սկզբներին, երբ ներքին հակասությունների ժայրահեղ օրման պայմաններում Իրանի Մուհամմադ Ռեզա Փեհլևի շահը հարկազրված էր զերանայել իր տնտեսական, սոցիալական և քաղաքական ըմբռնումները և որոշ զիշումների զիմել: Ի հետևանք, ազգային բուրժուազիայի ուժերը Հնարավորություն ստացան կարն ժամանակով զերահամախմբվել այսպես կոչված Երկրորդ Ազգային Հակաառում (Քարիմ Մանչարիի զլիազորություն) և առաջ քաշել օռը հակամիապետական, բայց օահմանազրական<sup>2</sup> կազմակերպությանը բնորոշ պահանջներ, որոնք հան-

զում էին սահմանադրական միապետության շրջանակներում բուրժուազեմոկրատական ազատությունների պահպանմանը:

1963 թ. հունիսին սակայն, ռեակցիայի սաստկացման պատճառով Երկրորդ Ազգային Հակառանձախողման եզուզ անցնել ընդհատակ:

1978—79 թթ. իրանական հեղափոխության նախօրինակներում ստեղծված որսչափի քաղաքական իրադրություն պայմաններում Ազգային Հակառ, ինչպես և պետք էր սպասել, ասպարեզ ելավ, և ամենակարգի գործունեություն ծավալեց: Երանյանում Ազգային Հակառի Հանաչված գործիչներից մի քանիսին Հաշտովեց 1977 թ. նոյեմբերի 15-ին հիմնել Երրորդ Ազգային Հակառ<sup>1</sup>, որի կազմի մեջ մտան Ազգային շարժման սոցիալիստական կրթան՝ Փարիմ Մանշարիի ղեկավարությամբ, Իրանական ազգի կուսակցությունը՝ Դարիուզ Զարուհարի ղեկավարությամբ և մի շարք պրոֆեսիոնալ միություններ ու խմբեր, ինչպես՝ Մարզու իրավունքների Միությունը, Իրանական ազատության շարժումը, փաստաբանների միությունը և այլն:

Ազգային Հակառի վերակազմավորումն այս անգամ հնարավոր դարձավ սեփմի ալոպես կազմված լիբերալացման քաղաքականության անցնելու հետևանքով, որը շահին պարտադրել էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Քարտերը՝ ելնելով ստեղծված իրադրության մեջ շահի իշխանությունն ամեն կերպ պահպանելու Միացյալ Նահանգների ամերիկյան շահագրգռությունից և պտապործելով մարզու իրավունքների պաշտպանության իր հանրահայտ զեմազոգիկ թեզը:

Օգտվելով առիթից, Ազգային Հակառ, որը կողմնակից էր սելուլյուցիայի, և ոչ հեղափոխության<sup>2</sup>, առանց հապաղելու բաց եամակ հղեց շահին, որտեղ շարարդրված էին պառլամենտը, ինչպես նաև պրոչանական, երկրում միակ օրինական ռեաթախիզ-ն մեյլե (սեղ-գային վերածնունդ) կուսակցությունը լուծարքի ենթարկելու, բոլոր ընդդիմադիր կուսակցություններին և կազմակերպություններին ազատ գործունեության հնարավորություն տրամադրելու և այլ պահանջներ: Բաց եամակին հետեցին նույնանուն բովանդակությամբ մի ամբողջ շարք հանրագրեր<sup>3</sup>:

Զեայած Ազգային Հակառի կազմի խայտարղետությունը, որը, բնականաբար, ենթադրում էր նրա մեջ մտեղ տարբեր կուսակցությունների, խմբերի և առանձին գործիչների տեսակետների և նպատակների անխուսափելի տարբերություն, երբեմն նաև բացարձակ

հակադրություն, այսուհանդերձ, ինչպես վկայում են 1977 թ. դեկտեմբերին կազմակերպության ընդունած ծրագիրը և անմիջապես նրա գործողությունները, այս շրջանում Ազգային հակառի հիմնական պահանջները հստակ էին և զարմայ սահմանափակվում էին սահմանադրական միապետության շրջանակներում զեմոկրատական իրավունքների ձեռքբերմամբ:

Դեպքերի հետագա զարգացումը և մեկուսացման հարավորության հանդեպ ունեցած վախը, սակայն, հարկադրեց Ազգային հակառի րեսորի գործունեության միակզամայն ալլ ոճ, և, հրաժարվելով նամակներով ու հանրագրերով երբևէ հաղորդության հասնելու հույսից՝ միանալ ժողովրդական շարժմանը, որն օրըստօրե աճելի էր ընդարձակվում: Մանավանդ, որ ես իրեն դաշնակից գտավ բարձրաստիճան հոգևոր զեկավարների շրջանում՝ ի զմա այաթուլա Շարիաթ-Մազաբիի, որը նույնպես հակված էր համաձայնողականության, և բավարարվում էր սահմանադրական միապետության հաստատմամբ: Ի դեպ, այս դաշնակցությունը լրջորեն հավանում էր ժողովրդական շարժման զեկավարի գերին: Սակայն շատ շուտով ակնհայտ դարձավ նրա քաղաքական գծի անհեռանկար լինելը: Երկրում տեղի էր ունենում ուժերի ծայրահեղ բեկուցման պրոցես. հակադրվելով շահի ստեղծած զեմոկրական իրավաբանությանը՝ ժողովուրդը կենտրոնացել էր արասահմանում գտնվող այաթուլա հոմեյնու միահեծան զեկավարության տակ, հոմեյնու, որը չէր զադարում կրկնել, որ հաստատ է շահի սեծիմը տապալելու սկզբունքին, և որ շահի կողմից հովանավորվող որևէ կառավարության կազմումը զավանանության կլինի հեղափոխությանը:

Հեղափոխական իրադարձությունների զարգացման որոշակի փուլում քաղաքական իրադրության այապիտի փոփոխությունը զրդեց Ազգային հակառի հիմնովին վերափոխել իր գիրքորոշումը: Այլևս անկասկած էր, որ շահի սեծիմի տապալման հավանականությունը աճելի քան իրական էր՝ զանում և Ազգային հակառի լուրջ վտանգ էր սպառնում հեղափոխության հաղթանակի զեպրում անմասն մեալ իշխանությունից:

Անհրաժեշտ էր հոմեյնու հետ որևէ ձևով համաձայնության գալ: 1978 թ. հոկտեմբերի վերջերին Ազգային հակառի զեկավար Քարիմ Սանչարին շտապեց Փարիզ՝ նա թաքուն հույս ուներ համոզել հոմեյնուն քաղաքացիական պատերազմից խուսափելու համար զրավել



Եվազ անհամահայեցողական դիրքորոշում (որն, ըստ երևույթին, ի նկատի ունեւր Մուհամմադ Ռեզա շահի տապալումն առանց Իրանում միապետութիւն վերացման ընդհանրապես): Մակաբի անդի ունեցած հակառակը: Փարիզից վերադառնալուց հետո Սանչարին հայտարարեց համայնու հետ իր կատարյալ համահայեցողական մասին, և հատկապես ընդգծեց, որ չի մտնի որեւէ կառավարութեան կազմի մեջ այնքան ժամանակ, քանի զեռ երկրում կարգապահի միապետութիւնը<sup>9</sup>:

Ավելորդ չէ նշել, որ Սանչարիի՝ սահմանադրական միապետութեան գաղափարից հրամարվելու և միապետութեան տապալման գաղափարն ընդունելու փաստն առիթ տվեց Ազգային նահատի պառակտման: Իրան կուսակցութեան ղեկավար Եահփուր Բախթիարն, օրինակ, որն առավել բուռն էր արտահայտում իր դժգոհութիւնը, մեզադրում էր Սանչարիին այն բանում, որ վերջինս, իրրն, բնիկ ղիշման էր գնացել՝ առանց որեւէ բան շահելու<sup>10</sup>, և որ «...սահմանափակել էր հետագա մաներման հարավորութիւնը»<sup>11</sup>:

Այնուամենայնիւ, լնայած առկա տարածայնութիւններին, Ազգային նահատն այժմ գործունեութեան հիմնական նպատակ բնարեց հետնյալ ինդիքներին իրականացումը. միապետութեան վերացում, իսլամի վրա հիմնված կառավարութեան ստեղծում և պետութեան ապագա կառուցվածքի որոշման նպատակով հանրաքվեի անցկացում<sup>12</sup>:

Ազգային նահատի այսպիսի սկզբունքային վերակողմորոշումը, որն սկիզբ դրեց նրա գործունեութեան նոր փուլին, միաժամանակ, շրջադարձային եղաւ հեղափոխութեան ընթացքի համար և մեծապես որոշեց նրա նահատագիւրը:

Ազգային նահատի նոր, անսպասելի դիրքորոշումը շափազանց բարդացրեց շահի վիճակը: (Նրա հանձնարարութեամբ 1978 թ. նոյեմբերի 5-ին գեներալ Ազարին կազմեց ղինվորական կառավարութիւն<sup>13</sup>, որն առանց հազարկելու ձերբակալեց Փարիզից նոր վերադարձած Սանչարիին և Զորուհարին<sup>14</sup>: Որոշ ժամանակ անց, սակայն, ժողովրդական շարժման նշման տակ, ստիպված եղաւ նրանց արձակել)<sup>15</sup>:

Այս կոնտեքստում իրանական իշխանութիւններին համար կենսական նշանակութիւն էր ստանում օպորտիւնիստ ինչ-որ մեծ ուժի հետ հաշտեցնելու հարցը: Ընդ որում, առավել իրականաբար էր դիտվում բարդացրեցական կոալիցիոն բուրժուական կառավարութեան ստեղծելու գաղափարի իրականացումը:

Ապագա կառավարութիւն մեշ ընդդիմադիր հիմնական կազմակերպութիւն՝ Ազգային նահատի մասնակցութիւնն ապահովելու դիտարկութիւնը 1978 թ. դեկտեմբերի 14-ին շահը հանդիպում ունեցավ Սանչարիի Հեռ<sup>10</sup>, Սակայն վերջինիս դիրքորոշումն այս հարցում անվերապահորեն բացասական էր։ Հանդիպմանը հաջորդող իր պաշտենական հայտարարութիւն մեշ Սանչարին մեկ անգամ ևս նշում էր, որ Ազգային նահատը հրաժարվում է մտնել որևէ կառավարութիւն կազմի մեշ, քանի դեռ շահը գտնվում է իշխանութիւն գլուխ<sup>11</sup>։

Զհրաժարվելով, այնուամենայնիվ, քաղաքացիական կառավարութիւն ստեղծելու մտքից, որը, ստեղծված իրազրութիւն պայմաններում միակ հուսադրող հնարավորութիւնն էր, Իրանի տիրող շրջաններն այն դեկավարելու համար օպոզիցիայի շարքերից սեծիմի համար ընդունելի թեկնածու էին որոնում։

Միացյալ նահանգները, որը լրջորեն մտահոգված էր Իրանի իրավիճակով, և նրա սպասելի, իր համար ոչ ձեռնտու հեռանկարներով, ամեն կերպ Ապտում էր ազգել դեպքերի զարգացման ընթացքի վրա։ Հայտնի է, որ ԱՄՆ-ը պաշտպանում էր բազաքացիական կառավարութիւն ստեղծելու միտքը, և նրա ներկայացուցիչներն ամենագործն մասնակցութիւնն էին ցուցաբերում օպոզիցիայի շլափավորս գործիչների հետ այդ կապակցութիւնը տարվող խորհրդակցութիւններին։ Ամերիկյան ծրագրի բովանդակութիւնն այսպիսին էր. ելնելով Իրանի ազգային շահերից (ավելի ձիշտ՝ Միացյալ Նահանգների իմպերիալիստական շահերից), շահը պիտք է ժամանակավորապես հեռանա Իրանից, իսկ նրա պարտականութիւնները հանձնվեն այսպիս կոչված Բարձրագույն կոնսուլտատիվ խորհրդին, որի կազմի մեշ կմտնեն Իրանի հիմնական քաղաքական ուժերի ներկայացուցիչները՝ շահի ընտրութիւնը։ Գործադիր իշխանութիւնը կհանձնվի բազաքացիական կապիցիոն կառավարութիւնը՝ օպոզիցիայի շլափավորս թեկ որևէ, առավել հարմար ներկայացուցիչ գլխավորութիւնը<sup>12</sup>, Այս ծրագիրը, որի նպատակը ժամանակ շահելն ու միապետութիւնը փրկելն էր, իրականանալու դեպքում իրանական իշխանութիւններին համար բավական գրավիչ էր։ Սակայն այդ ուղղութիւնը ձեռնարկված առաջին փորձն անհաջողութիւն մատնվեց։ Ազգային նահատի հայտնի գործիչներից մեկը՝ Ղուամ Հոսեյն Սադեղին, որին Միացյալ Նահանգների խորհրդով հանձնարարվեց կազմել բազաքացիական կառավարութիւն<sup>13</sup>, և որն սկզբնապես տվել էր իր համառայնութիւնը, ի վեր-

չո հարկադրված եղա՞վ հրաժարվել<sup>20</sup>։ Պատճառը ոչ միայն այն էր, որ երան այդպես էլ շահառու չեմ համարել այսպիսի գործիչներին մասնիկ կառավարության կազմի մեջ, այլև, զլիսավորապես Ազգային հակառի դիրքորոշումն այս հարցում, որը վճռականորեն պահանջում էր շահի հեռանալը երկրից, և որին վերջինս համառոտ էր դիմադրում էր։ Նույն պատճառներով անհնարին եղա՞վ նաև օպորտյունային մեկ այլ ներկայացուցչի՝ Մոզաֆֆար Բազայիի կողմից կառավարության կազմումը<sup>21</sup>։

Ազգային հակառի իր հայտարարություններում անընդհա ընդգծում էր, որ պայքարը չի զազարեցնի, մինչև զինվորական կարի-նետը հրաժարական չտա և շահը դահրեկեց շարվի։

Ազհարիի կառավարությունը, որի գոյությունն արդեն միանգամայն անիմաստ և աննպատակահարմար էր դարձել, ստիպված էր հրաժարական տալ<sup>22</sup>։ Այս անգամ շահը, զարմյալ Միացյալ Նահանգների խորհրդով, հանձնարարեց կառավարություն կազմել Շահֆուր Բախթիարին<sup>23</sup>, օգտագործելով, անշուշտ, նաև Սանջարիի հետ երաբացահայտ տարածայնությունների հանգամանքը, և թերևս, նաև այն, որ շահի անկեղծ խոստովանությունը, այդ պահին Բախթիարը քաղաքացիական գործիչներից միակն էր, որ ընդունել էր երա այդ առաջարկը<sup>24</sup>։

Ընդգիմազիր որոշ շրջանների աշակցությամբ Բախթիարը ձեռնամուխ եղա՞վ իր ստանձնած միսիայի իրականացմանը։ Գրան անմիապես հարորդեց վերջինիս իր շարքերից վտարելու Ազգային հակառի որոշումը<sup>25</sup>։ Հատկանշական է, որ երա զինվորներից և ոչ մեկը հանգն չեկա՞վ նոր կառավարության պաշտպանությամբ<sup>26</sup>։ Ազգային հակառի այս անգամ ևս վճռականորեն հրաժարվեց մասնիկ կառավարության կազմի մեջ, և, ավելին, բոլորտ հայտարարեց երա գործունեությանը<sup>27</sup>։

Դեռևս 1979 թ. հունվարի 2-ին, ուղիղությամբ իր ելույթում Բախթիարը խոստանում էր գործող Մահմանազրության շրջանակներում ժողովրդի համար ապահովել իրավունքներ և ազատություններ, վերացնել մամուլի գրաքննությունը, ազատել քաղաքական բանտարկյալներին, թուլլատրել քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների օրինական գործունեությունը։ Նա ժողովրդին կոչ էր անում անհապաղ զազարեցնել հակակառավարական ելույթներն ու գործադուլները<sup>28</sup>։

Շուտով, մեկ այլ առիթով, Բախթիարը Հայտարարեց ՍԱՎԱՔ—ի գործունեությունը սահմանափակելու, մամուլի ազատությունը վերահանգնելու և երկրում ռազմական դրությունն աստիճանաբար վերացնելու իր մտադրությունն մասին<sup>29</sup>։

Բախթիարի բացահայտ դեմագոգիկ խոստումների նպատակն, անշուշտ, երկրում սպողիցիայի դեմագրությունն ինչ—որ չափով մեղմելն էր։ Անմիջապես դրան էր ուղղված նաև նրա այն հավաստիացումը, թե շահը մտադիր է ամենամոտ ժամանակներս Հանգստի մեկնել արտասահման<sup>30</sup>։

Ի պատասխան, Ազգային Լեկաառը և ընդդիմադիր մյուս կազմակերպությունները Հայտարարեցին, որ միապետության հարցում անհրաժեշտ է ընդունել արմատական որոշում, և որ միմիայն այդ դեպքում հնարավոր կլինի կայունացնել իրադրությունը<sup>31</sup>։

Հունվարի 11—ին Բախթիարը մեղլիսի Հաստատմանը ներկայացրեց իր կառավարության կազմը և ապագա գործունեության ծրագիրը<sup>32</sup>։ Այն նախատեսում էր ցրել ՍԱՎԱՔ—ը, վերացնել ռազմական դրությունը, վերականգնել ժողովրդի քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, արձակել քաղաքական բանտարկյալներին, անհապաղ պատասխանատվության ենթարկել Հասարակական միուցների կողմադրման և օրինախախտումների մեղավորներին։

Անդրադանալով արտաքին քաղաքականության ընագավառին, Բախթիարը Հայտեց, որ իր կառավարությունը մտադիր է վերանայել Հարավ—Աֆրիկյան հանրապետության և Իսրայելի հետ հարաբերությունները, մասնավորաբար, զազարեցնել նազիի մատակարարումն այդ երկրներին։ Նա Հայտեց նաև, որ կառավարությունը ձրգաելու է հարաբերություններ զարգացնել մուսուլմանական և հարեան պետությունների հետ<sup>33</sup>։

Բախթիարի կառավարության ծրագիրը, որը մշակված էր որոշակի դիտավորությամբ, անշուշտ, աճելի ջան հավակնուս էր, և, երկրում տիրող իրադրության պայմաններում, միանգամայն անիրականանալի։ Այն, ինչպես և պետք էր սպասել, հավանության շարժանացավ Ազգային Լեկատի և ընդդիմադիր մյուս կազմակերպությունների կողմից, քանի որ խոստումների երկար և հրապուրիչ շարունում բացակայում էր ամենակարևորը՝ միապետության վերացման հարցը։

Բախթիարի կառավարության կաշմուճը որևէ չափով չսպաստեց երկրում լարվածության թուլացմանը։ Ավելին, միապետությունը փրբ—

կելու իր շքողարկման միտումով այն էլ ավելի զրգռեց սպողիցիային, որը համառորեն պահանջում էր շահի հրաժարումը զահից:

Ի վերջո, ժողովրդական հզոր շարժման ճնշման տակ 1979 թ. հունվարի 10-ին Մուհամմադ Թեզա Փեհլևի շահն ստիպված եղավ երկրից հեռանալ<sup>24</sup>: Մակաբն նրա այդքան սպասված մեկնումը նա անկարող էր զսպել ժողովրդական շարժման այրիք և վերջնական հալոցանակի հասնելու ընդդիմադիր ուժերի վեհականությունը: Շահի մեկնումն իրավացիորեն զեռնատելով որպես իրանական ժողովրդի պահանջներից մեկի իրականացում<sup>25</sup>, Ազգային նահատի ղեկավար Մանշարին զգուշացնում էր, որ այդ, իրոք մեծ հաջողությունը «...լավեաք է ստիպի յոսանալ այն երկար Էանապարհի մասին, որը զեռ առչնում էք<sup>26</sup>, Ազգային նահատի խոստանում էր «...շահի զինաստիայի և ամերիկյան կապիտալի շահերն արտահայտող ենրկայիս կառավարության զեռ պայքարը շարունակել այնքան ժամանակ, մինչև այն կապավիշ<sup>27</sup>, նույնանման բովանդակություն ուներ նաև Ֆրանսիայում գտնվող հոգևոր առաջնորդ այաթուլա հոմեյնիի՝ Իրանի ժողովրդին ուղղած դիմումը<sup>28</sup>:

Բախթիարը, սակայն, իշխանությունը պահպանելու հուսահատ ձիգեր էր գործադրում: Նրա խնդրանքով հունվարի 24-ին հրավիրվեց մեջլիսի արտակարգ նիստ. որը պետք է քննարկեր ՍԱՎԱՔ-ի ցրման, ինչպես նաև պաշտոնական դիրքի լարաշահման և կոստույցիայի մեջ մերկացված պետական ժառանգներին զատական պատասխանատվության ենթարկելու հարցերը<sup>29</sup>:

Նրա այս հասկենպ միջոցառումն այլ բան չէր, քան սպողիցիայի նուրբ զգացմունքների վրա ազդելու և նրան սիրաշահելու նպատակով արված ուշացած մի մետա, որը, սակայն, սպասված սպավորությունը լիողեց:

Անհաջողության հանդիպեց նաև սպողիցիայի հեռաբազան կոմպրոմիս ձեռք բերելու համար հոմեյնու հետ բանակցելու Բախթիարի փորձը, քանի որ հոմեյնին կտրականապես հրաժարվեց նրան ընդունել, պահանջելով, որ նա, նախ, հրաժարական տա<sup>30</sup>, Եներկայիս կառավարությունը, որն ստեղծվել է շահի ցուցումով երկրում կառավարման միապետական սիստեմի պահպանման նպատակով, այսօր այլ էլ չլուծի, քան հրաժարական տալը, — մամուլի կոնֆերանսում հայտարարեց սպողիցիայի ենրկայացուցիչ Մեհդի Բազարգանը<sup>31</sup>:

1979 թ. փետրվարի 1-ին այաթուլլա հոմեյնին երկարատև վտարանդուրությունից վերադարձավ Հայրենիք<sup>42</sup>։ Իրանական ժողովրդի ամենալայն զանգվածները նրան ցնծություն րդիմավորեցին։ Ըննց Մեհրարազ օգանավակայանում արած իր հայտարարության մեջ հոմեյնին օպոզիցիայի բուրդ ուժերին կոչ էր անում համախմբվել՝ Իրանում միապետական կարգերը, ինչպես նաև շահի դրածո Բախթիարի կառավարությունը տապալելու համար<sup>43</sup>։ Ազգային ճակատն շտապեց հավաստիացնել, որ պատրաստ է հոգևորականության և ազգային-հայրենասիրական մյուս բուրդ ուժերի հետ միասին այսուհետև ևս վեճակներեն պայքարել հեղափոխության վերջնական հաղթանակի համար<sup>44</sup>։

Իզուր չէր, որ Բախթիարին այդքան անհանգստացնում էր հոմեյնիի վերադարձը, և նա այդքան շանքեր էր գործադրում արգելելու նրա մուտքն Իրան։

Այսուհանդերձ, լնայած ազելի քան ակնհայտ էր, որ իր կառավարությունն այլևս որնէ հեռանկար չունի, Բախթիարը համառորեն հրաժարվում էր իշխանությունից հեռանալ։

Փետրվարի 5-ին հոմեյնին հայտարարեց Իրանի ժամանակավոր հեղափոխական կառավարության ստեղծման մասին և պրեմիեր-մինիստր առաջադրեց Ազգային ճակատի ղեկավարներից մեկին՝ Մեհդի Բազարգանին<sup>45</sup>, որը տարիներ շարունակ համագործակցել էր նրա հետ և վայելում էր նրա վստահությունը։ ԷՔազարգանի անցումնային կառավարությունը,—ասաց հոմեյնին մամուլի կոնֆերանսում,—պետք է գործի մինչև Իրանի Իսլամական Հանրապետության հուլիսից։ Այն կնախապատրաստի և կանցկացնի նոր պառլամենտի ընտրություններ, որն, իր հերթին, կընդունի Իսլամական Հանրապետության նոր Սահմանադրությունը<sup>46</sup>։ Ժամանակավոր հեղափոխական կառավարության կազմի մեջ մտան Ազգային ճակատի ղեկավարներ Քարիմ Սանշարին և Դարիուշ Ֆարուհարը, ինչպես նաև բուրժուական այլ կուսակցությունների գործիչներ։

Երկրում, փաստորեն, ստեղծվել էր երկիշխանություն, քանի որ Բազարգանի կառավարության կողքին դեռևս պահպանվում էր Բախթիարի կառավարությունը, որը հննվում էր բանակի վրա, և որն ամեն առիթով սպառնում էր անհրաժեշտության դեպքում դիմել նրա օգնությունը։ (Ազելուրդ չէ նշել, որ Միացյալ Նահանգները ևս, որը միանգամայն որոշակի հույսեր էր կապում Բախթիարի կառավարության հետ, հեռանկարում, նրա տապալման դեպքում, չէր բացառում սաղմական հեղաշրջում իրականացնելու հնարավորությունը)։



Այս անգամ արդեն Բախթիարը փորձում էր բանակցությունների մեջ մտնել Բազարզանի հետ՝ երկու հակասակորդ ուժերի միջև սահմարձակցություննս կարգավորելու հնարավորությունները բնարկելու նպատակով։ Նա նույնիսկ խոստանում էր, ժողովրդական հուզումները դադարեցնելու պայմանով, համաձայնել Իրանի ապագա քաղաքական կարգի որոշման համար հանրաքվեի անցկացման<sup>47</sup>։

Սակայն զեպքերի հետագա, անսպասելի ընթացքն ինքնըստինքյան վճռեց իշխանություն հարցրու Փետրվարի 9-ի գիշերը շահական զվարդիայի ստորաբաժանումները հարձակում գործեցին ռազմա-սպային ուժերի՝ Քեհրանից ոչ հեռու տեղակայված Զարահարազ ժարդական բազայի վրա՝ հաշվեհարդար տեսնելու այն դինձորականների հետ, սվքեր մասնակցել էին ժողովրդական էություններին<sup>48</sup>։ Այս ակտն առաջ բերեց օպոզիցիայի ուժերի բուսն հակազդեցություն, և նրանց դիմադրությունը, փաստորեն, զերածվեց զինված ապստամբություն։

Այս պարագայում, սթափ կերպով գնահատելով ստեղծված իրադրությունը, Իրանի զինված ուժերի ղեկավարությունը նպատակահարմար գտավ այլևս լմիչամտել իրադարձություններին. փետրվարի 11-ին Բարձրագույն ռազմական խորհուրդը որոշում կայացրեց քաղաքական հակադիր ուժերի բախման մեջ բանակի շեղումից մասին<sup>49</sup>։ Իսկ մեկ օր անց Իրանի զինված ուժերի Գերագույն շտաբը, կայսերական զվարդիան և առանձին զորամասեր անցան հեղափոխության կողմը<sup>50</sup>։

Բախթիարին, որը զրկվել էր իր հիմնական հենարանից, այլ բան չէր մնում, քան հրաժարական տալ<sup>51</sup>։

Փետրվարյան զինված ապստամբությունը հաղթանակեց, իշխանությունը երկրում, այս անգամ արդեն ամրոցապես, անցավ Բազարզանի զլխավորած ժամանակավոր կառավարությանը։ Փետրվարի 12-ին Բազարզանը ռազիսով իր էություն հայտնեց, որ Իրանի ողջ զինված ուժերը միահամուռ կերպով միացել են ժողովրդին, և որ միապետությունը զերդնականապես տապալվել է<sup>52</sup>։

Փետրվարի 14-ին ՍԱՎԱՔ-ը պաշտոնապես լուծարքի ենթարկվեց<sup>53</sup>։

Փետրվարյան զինված ապստամբության հաղթանակն, անտարակույս, պետք է գնահատել որպես 1978—79 թթ. իրանական հեղափոխության ամենակարևոր նվաճումներից մեկը, որը, միաժամանակ, սկզբնավորեց նրա զարգացման որակապես նոր փուլը։

Օգտվելով համաժողովրդական աշակցությունից և հաշտությունամր դիմակայելով հակահեղափոխական ուժերի անընդհատ ստեղծություններ-



րին, Բազարգանի ժամանակավոր կառավարությունն սկսեց իրականացնել իր քաղաքական դիմելը, որն ընդգծված զեմեկրատական և հակաիմպերիալիստական ուղղվածություն ունեւր:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներքին քաղաքականության ընտզավառում կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը պետական ապարատի վերջնական զտումն էր պրոչահական տարրերից և սոցիալ-անտեսական ու քաղաքական վերափոխումների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա կառավարության առաջին խնչ միջոցատումներն աներկբայորեն վկայում էին ազգային սեկարություն ապահովման ու պահպանման նրա հաստատմադրության մասին:

Մարտի 13-ին Բազարգանի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց ՍՍՏՍՍՍ օգրեսիվ բլոկից Իրանի դուրս գալու մասին<sup>54</sup>: Ավելի ուշ կառավարությունը լեզվալ հայտարարեց Արևմտաքի հետ իր բոլոր սազմական պայմանագրերը: Նա հրամարվեց Նաև Մերձավոր Արևելքում իմպերիալիզմի ժտեղարմի իր աճանդական զերից և հավաստիացրեց, որ բոլոր, հատկապես հարևան երկրների եկատամբ Իրանի զիրքորոշումն, այսուհետև, լինելու է միայն բարեկամակամ<sup>55</sup>:

Կառավարությունը պաշտոնապես հայտարարեց Խորալիլի հետ բոլոր տեսակի հարաբերություններն ընդհատելու մասին<sup>56</sup>: Դիվանագիտական կապերը խզվեցին Նաև Հարավ-Աֆրիկյան Հանրապետության հետ<sup>57</sup>:

Ուշագրավ էր Բազարգանի կառավարության նազթային քաղաքականությունը: Հայանի է, որ հեղափոխական իրադրության պայմաններում, հատկապես նազթագրծ բանվորների տեսական գործազուների և միշարք ալլ հանդամաներների պատեհառով նազթի հանուլթն ու արտահանությունը լափազանց կրճատվել էր: Արզեն փեարվարի վերջերին պրեմիեր-մինիստրի տեղակալ Յազդին հայտարարեց, որ կառավարությունը ամենամտա ժամանակներս կարգավորելու է նազթի արտահանությունը, և որ գրանից ստացվող եկամուտներն ալլես լեն ժախավելու զենք քենելու նպատակով<sup>58</sup>:

Կառավարությունը մտադիր էր պետական մեծաշնորճ սահմանել նազթի վաճառի վրա և նազթը վաճառել բացառապես Իրանական ազգային նազթային Ընկերության, և ոչ խոշոր ընկերությունների միջազգային Կոնտորցիումի միջոցով<sup>59</sup>:

Համաձայն իրանական մամուլի հաղորդած տեղեկությունների, կառավարությունը շեղյալ էր հայտարարում Արևմուտքի երկրների հետ շահի կառավարությունների կնքած բարտեռային պայմանագրերը, որոնք նախատեսում էին նազիի փոխանակումը զենքի հետ<sup>60</sup>:

Մարտի 30-ին սկսվեց Իրանի պետական կարգի որոշման նպատակով հանրաքվեի անցկացումը: Ժողովրդի նշող մեծամասնությունը քվարկեց երկրում Իսլամական հանրապետություն հաստատելու սպախ<sup>61</sup>:

Ազգային հակառի, Իրանի ժողովրդական կուսակցության և առաջագնմ այլ կազմակերպությունների՝ ժողովրդին օլղղած զինումներում նշվում էր, որ Իրանը թևակոխել է պատմական զարգացման նոր փուլ, որի ընթացքում պետք է իրականացվեն սոցիալ-տնտեսական և քաղաքական վաղուց հաստնացած բարեփոխություններ, և պետք է ամրապնդվի ազգային անկախությունը:

Մակայն շատ շուտով պարզորոշ կերպով ի հայտ եկան հակաշահական պայքարում միասնաբար հանդես եկած աշխարհիկ և հոգևոր օպոզիցիայի միջև գոյություն ունեցող, սակայն մի շարք հանգամանքների բերումով հեղափոխության նախորդ փուլերում վառ արտահայտություն չգտած հակաություններն ու տարաձայնությունները: Չնայած հենց այս փուլում հատկապես ցանկալի ու անհրաժեշտ էր ազգային բոլոր ուժերի միասնության պահպանումը՝ ներքին հակահեղափոխության և օտարերկրյա ինչպիսիքիստական անող ռանձպություններից հեղափոխության նվաճումները պահպանելու և հեղափոխության վերջնական նպատակի իրականացման համար:

Իսլամական հանրապետության ստեղծումից հետո հոգևոր շրջաններն սկսեցին վարել աշխարհիկ զեմոկրատական կազմակերպություններին ապարնեղից զուրո մղելու քաղաքականություն: Համաձայն նոր Մահմանդություն, գերագույն իշխանությունն Իրանում, ըստ Հուլյան, անցավ բարձրաստիճան հոգևորականությունը, որի ներկայացուցիչները և պիտավորում էին Իսլամական հեղափոխական կարճուրդը, կառավարական և պետական մյուս մարմինները: Չնայով ավելի մեծ ազդեցություն էին ձևոք բերում Երևմտական հեղափոխության պահպանները (օփառզարները) և տեղական իսլամական կոմիտեները:

Իրազրությունն ախպիսին էր, որ ժամանակավոր հեղափոխական կառավարության արտաքին զորժերի մինիստր Բարիմ Մանշարին գերադասեց հրաժարական տալ<sup>62</sup>: Ապրիլի 18-ին կազմակերպած մա-

մուլի կոնֆերանսում, անդրազատեալով կառավարութիւնն զործունեութիւնը խաչընդոտող հանգամանքներին, Սանդարին, շահի ռեժիմի անտեսական, քաղաքական և վարչական սխառեմի մնացուկների պահպանման, կառավարութիւնն զործներին ՍԱՎԱՔ-ի և ստարերկրյա հեռախօսութիւնն զործակալների միջամտութիւնն և ուրիշ պատճառների հետ միասին հաճախարակեալ վնասակար համարեց և այն, որ առանձին խմբավորումներ, մասնավորաբար Իսլամական Հեղափոխական կոմիտեները հաճախ անտեսում են կառավարութիւնն որոշումները և կամայականութիւնն են գրսնորում<sup>65</sup>:

Եվ իրոք, Հեղափոխութիւնն Հիշյալ փուլում եռմեյնու կողմից նշանակված ժամանակավոր կառավարութիւնն զործունեութիւնն շրջանակները առավել շարժով սահմանափակված էին և, Բազարզանի իսկ խոստովանութիւնը, բազմաթիւ կազմակերպութիւններ և քաղաքական խմբավորումներ գրեթէ չէին ենթարկվում կենտրոնական կառավարութիւնը և զուրա էին նրա հսկողութիւնից<sup>66</sup>: Իրավիճակով լրջորեն անհանգստացած Բազարզանը հուլիսի 5-ին հետադարձութիւնը իր կազմում ուղղակի հայտարարեց, որ իր կառավարութիւնն առջև դրված նպատակները հնարավոր չի եղել իրականացնել գլխավորապէս այն բանի հետևանքով, որ Եհզափոխական կոմիտեները մշտապէս անարդի միջամտում են կառավարութիւնն զործներին և առաջ են քաշում սահմանափակ պահանջներ<sup>67</sup>:

Պատահական չէ, որ այս շրջանում Բազարզանի բազմաթիւ ելույթների հիմնական թեման կառավարութիւնն և Իսլամական Հեղափոխական խորհրդի բացահայտ անհամաձայնութիւնն էր՝ իր ամենատարրէր արտահայտութիւններով: Նա չէր դադարում արձանագրել այն իրողութիւնը, որ կառավարութիւնն և Իսլամական Հեղափոխական խորհրդի փոխհարաբերութիւններում գոյութիւնն ունեն մի ամբողջ շարք պրոբլեմներ, և որ առկա է Եվրոպիայի լափից զուրա միջամտութիւնը պետական զործներին<sup>68</sup>:

Նոյեմբերի 6-ին Բազարզանը հրաժարական տվեց<sup>69</sup>: Պետական բոլոր զործների վարումը եռմեյնին հանձնարարեց Հեղափոխական խորհրդին, որի վրա էր դրվում նաև սահմանադրութիւնն ընդունելու համար հանրաքվեի անցկացման նախապատրաստութիւնը, պրեզիդենտի և մեյլիսի բնորոշութիւնները:

Իսլամական Հեղափոխական խորհրդի նիստում կայացված որոշման համաձայն խորհուրդն իր վրա էր վերցնում երկրի կառավարման

գործը, իսկ հրամարական տված պրեմիեր-մինիստր Բաղդարյանի կառավարության անդամները առայժմ պետք է շարունակեն իրենց պարտականությունների կատարումը՝ Իսլամական Հեղափոխական խորհրդի անմիջական հսկողության տակ<sup>68</sup>։

Բաղդարյանի հրամարականով 1978—79 թթ. իրանական հեղափոխության մեջ ազգային բուրժուազիայի Ազգային հակառակադեմոկրատիայի մասնակցությունն, իրականում, ավարտվեց։ Այն, նախ և առաջ, արամարտական հետևանքն էր հեղափոխության մեջ հոգևոր և լիբերալ բուրժուական ուժերի կոնֆլիկտի, ուժեր, որոնք իրենց սոցիալ-տնտեսական և քաղաքական ըմբռնումների ասորիություններ հանդերձ, հավասարապես ձգտում էին պետական և տնտեսական գերիշխանություն։

Իսլամական ղեկավարները լավ էին գիտակցում, որ զեմոնրատիայի պայմաններում ազգային բուրժուազիան իր տնտեսական առավելության բերումով ժամանակի ընթացքում դուրս կմղեր կրոնական գործիչներին նաև պետական իշխանությունից։ Այդ պատճառով էլ հեղափոխության զարգացման որոշակի փուլում համադործակցելով ազգային բուրժուազիայի կազմակերպության՝ Ազգային հակառակ հետ, և հաշտությունը ստանալով նրա լիբերալ-բուրժուական միտումները, Իսլամական Հանրապետության հաստատումից հետո անցան նրան մեկուսացնելու քաղաքականություն։

Մյուս կողմից, Ազգային հակառակ, որի սկզբնապես կույնիսկ ակնկալում էր ժողովրդական շարժման ղեկավարությունն իր մեջը վերցնել, հաշտության ընթացքում, քանի որ հոգևոր սպորթիայի համեմատությամբ հեղափոխության մեջ նրա նպատակներն առավել սահմանափակ էին, որք և նրան զրկեց ժողովրդական լայն զանգվածների աշակերտությունից։ Ազգային հակառակ և Մանշարին այսօր այնպիսի վիճակում են, — ասում էր Իրանի ժողովրդական կուսակցության քարտուզար Ն. Քիա-նուրին Իսլամական Հանրապետության հաստատման նախօրյակին, — որ նրանց պաշտպանող ուժերը հնաացան նրանցից։ Նրանք լրենց քաղաքական կշիռը միանդամայն կորցրել են և նրանց միայն անունն է մնացել<sup>69</sup>։

Հետագայում, Իսլամական Հանրապետության քաղաքականությունն իր ընթացքով ընդհանրապես բացասեց Ազգային հակառակ ակադեմիայի վերականգնման որն է հնարավորություն։

УЧАСТИЕ НАЦИОНАЛЬНОГО ФРОНТА  
В ИРАНСКОЙ РЕВОЛЮЦИИ 1978—1979 гг.

## Резюме

Изучение и освещение вопросов, касающихся участия организации национальной буржуазии Ирана—Национального Фронта в иранской революции 1978—1979 гг. в качестве одной из основных оппозиционных сил, имеет безусловно важное значение.

Претендуя первоначально на роль руководителя народного движения, Национальный Фронт, на определенном этапе развития революционных событий, в силу ряда обстоятельств был вынужден прекратить свою деятельность.

- 1 احمد ملكي، تاريخية جنبه ملی، تهران، ۱۳۳۳، ص ۱۷
- 2 A. Faroufhy, J. L. Reverier, L'Iran contre le Chah. Paris, 1978, p. 167.
- 3 P. Balta, Cl. Rulleau, L'Iran insurgé. 1789 en Islam? Paris, 1979, p. 181.
- 4 H. Fürtig, The Upawing and the Islamation of Petty-Bourgeois and Democratic, Bourgeois and Religious Opposition Groups and Organizations in the 1970 as a Basic Precondition for the Eruption of the People's Anti-Monarchist Revolution in 1978-79—„Iran From Monarchy to Republic“, Berlin, 1983, p. 17.
- 5 С. Л. Арсен, Иран в прошлом и настоящем. М., 1981, с. 192.
- 6 H. Fürtig, *سازش انقلابی*, *قسط ۱۷*,  
*؟* *سازش انقلابی*, *قسط ۱۸*.
- 8 «اطلاعات», 28.XI.1978.
- 9 «اطلاعات», 6.XI.1978.
- 10 H. Fürtig, *سازش انقلابی*, *قسط ۱۸*.
- 11 *سازش انقلابی*.
- 12 *سازش انقلابی*.
- 13 «اطلاعات», 15.XI.1978.
- 14 «Пролетар», 13.XI.1978.
- 15 P. Balta, Cl. Rulleau, *سازش انقلابی*, *قسط ۱۶*.
- 16 «Пролетар», 15.XII.1978.
- 17 «Пролетар», 15.XII.1978.
- 18 «Пролетар», 26.XII.1978.
- 19 F. Hoveyda, The Fall of the Shah. New York, 1980, p. 162.
- 20 *سازش انقلابی*, *قسط ۱۹*.
- 21 H. Nahavandi, Iran. Deux réves brisés. Paris, 1981, p. 189.

- 22 F. Hoveyda, *کتابخانه آینه*, ۲۲ ۱۹۵.
- 23 E. Abrahamian. *Iran Between Two Revolutions*. Princeton-New Jersey, 1982, p. 524.
- 24 H. Nahavandi, *کتابخانه آینه*, ۲۲ ۲۰۲.
- 25 «اطلاعات», 6.1.1979.
- 26 «اطلاعات», 6.1.1979.
- 27 «اطلاعات», 6.1.1979.
- 28 «Правда», 3.1.1979.
- 29 «اطلاعات», 6.1.1979.
- 30 «Правда», 5.1.1979.
- 31 «Правда», 6.1.1979.
- 32 «اطلاعات», 11.1.1979.
- 33 «اطلاعات», 11.1.1979.
- 34 «اطلاعات», 16.1.1979.
- 35 «اطلاعات», 16.1.1979.
- 36 «Правда», 21.1.1979.
- 37 «Правда», 22.1.1979.
- 38 «Правда», 22.1.1979.
- 39 «اطلاعات», 24.1.1979.
- 40 F. Hoveyda, *کتابخانه آینه*, ۲۲ ۲۰۳.
- 41 «اطلاعات», 24.1.1979.
- 42 «اطلاعات», 1.11.1979.
- 43 «اطلاعات», 1.11.1979.
- 44 «اطلاعات», 1.11.1979.
- 45 «اطلاعات», 5.11.1979.
- 46 «Правда», 7.11.1979.
- 47 «اطلاعات», 8.11.1979.
- 48 «اطلاعات», 10.11.1979.
- 49 «اطلاعات», 11.11.1979.
- 50 «اطلاعات», 12.11.1979.
- 51 «Правда», 14.11.1979.
- 52 «Правда», 14.11.1979.
- 53 «Правда», 14.11.1979.
- 54 «Правда», 15.11.1979.
- 55 «اطلاعات», 1.X.1979.
- 56 «Правда», 20.11.1979.
- 57 «Правда», 6.III.1979.
- 58 «Правда», 24.II.1979.
- 59 «Правда», 29.II.1979.
- 60 «اطلاعات», «کریهان», «Tehran Journal», 28.III.1979.
- 61 «اطلاعات», 31.III.1979.
- 62 «اطلاعات», 16.IV.1979.

63 «اطلاعات»، 18.IV.1979.

64 «اطلاعات»، 30.V.1979.

65 «Pravda», 6.VII.1979.

66 «Pravda», 27.IX.1979.

67 «اطلاعات»، 6.XI.1979.

68 «اطلاعات»، 6.XI.1979.

69 نورالدین کیانوری، حزب توده ایران چه میگوید، تهران، ۱۳۸۰، ص ۳۲



Լ Մ. ՆՐԿՆԵՐԱՆ

ՍՈՒՌԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ «ԻՐԱՔ ՓԵԹՐՈՒՊՈՒՄ ՔՈՍՓԱՆԻ»  
 ՀԵՏ ԿՈՆՑԵՍԻՈՆ ՀԱՄԱԶԱՏՆԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1963 թ. մարտին Սիրիայում իշխանության գլուխ անցնելուց հետո Քաաա կուսակցությունը ներքին քաղաքականության բնագավառում առաջին պլան մղեց երկրի տեսանական զարգացման մեջ պետության գերի ընդարձակման խնդիրը:

Քաղաքական և սոցիալ-տնտեսական առաջադիմության նախապարհին կարևոր քայլ էր երկրի բոլոր բնական հարստությունների, ինչպես նաև դրանց մշակմամբ զբաղված տեղական և օտարերկրյա ընկերությունների ազգայնացումը:

Ազգայնացումը անմիջականորեն հարվածեց նաև խոշորագույն իմպերիալիստական նավթային մոնոպոլիաների, մասնավորապես «Մոկոնի Վակումի», «ԵՆԷՍԻ» և «ԷՍՍՈՒ» շահերին<sup>1</sup>: Ինչպես հայտնի է, միջազգային նավթային կառույցի շրջանակներում միավորված և այսպես կոչված անկախ նավթային ընկերությունները 60-ական թվականների կեսերին նավթ արդյունահանող արաբական երկրներում ոչ միայն գնա պահպանում էին իրենց տիրապետող դիրքերը, այլ նաև էական բացասական ազդեցություն էին թողնում Մերձավոր արևելքի ընդհանուր քաղաքական իրադրության վրա<sup>2</sup>:

Ազգայնացնելով նավթային մոնոպոլիաների սեփականությունը, Սիրիան ակնառու մեծ ջույք տվեց արաբական աշխարհում իմպերիալիզմի ազդեցության քաղաքական-տնտեսական հիմնական օջախները հաղթումբ վերացնելու հնարավորությունն ու ուղիները: Եվ այս տեսանկյանից սիրիական ղեկավարության գործողությունները կարելի է իրավացիորեն գնահատել նաև որպես ընդհանրապես Մերձավոր արևելքում



Գեոևս 40-ական թթ. սիրիքիչ փեթրուլիումիս և անգլիական կառավարության միչև գաղտեի համաձայնագիր էր կնքվել, ըստ որի ընկերությանը հնարավորություն էր արժում կոնցեսիոն ծախսերի մի մասը վճարել այն գումարի հաշվին, որը հաշվարկվում էր որպես անգլիական գանձարկղ մտնող եկամտահարկ: Համանման համաձայնագրեր էին կայացվել նաև կոնսորցիումի մյուս մասնակիցների հետ: Միայն այդ համաձայնագրի միջոցով 1952—1972 թթ. սերաք փեթրուլիումը լրացուցիչ շահել էր 7 միլիարդ ֆունտ ստեռլինգ<sup>6</sup>: Այսպիսով արհեստականորեն իշնցվում էր ընկերության փաստացի շահերի գումարը, ինչը և նրան հնարավորություն էր ընձեռում էականորեն կրնատել Իրաքի և Միրիայի կառավարությունների կատարվող կոնցեսիոն մասնահանումները<sup>7</sup>:

Միրիայի և սերաք փեթրուլիումիս միչև բանակցությունների առաջին փուլը տեղի ունեցավ Գամասկոսում 1966 թ. սեպտեմբերի 10-ից 17-ը: Սեպտեմբերի 18-ին ընկերության ներկայացուցիչները ընդհատելով բանակցությունները մեկնեցին Լոնդոն, որն իրեն կապված էր դիրեկտորների խորհրդի հետ խորհրդակցելու և անհրաժեշտ փաստաթղթեր պատրաստելու հետ<sup>8</sup>:

Պարզ է, սակայն, որ այդ որոշումը իրականում բուլտյովին այլ պատճառ ուներ: Ընկերության ներկայացուցիչները գրաված դիրքը անմիջապես և համողիչ կերպով ցույց տվեց, որ ընկերությունը ոչ միայն չի ձգտում լուծել խնդիրը, այլ նաև մտադիր է ամեն կերպ ձգելու բանակցությունները, որպեսզի ժամանակ շահի սիրիական կառավարության վրա քաղաքական ճնշում գործադրելու համար: Գեո սվեյին, այժմ արդեն կասկած չի հարուցում այն, որ խուսափելով Միրիային ուղղակի պատասխան տալուց, սերաք փեթրուլիումիս ղեկավարությունը ելնում էր երկրի քաղաքական կուրսում արժատական փոփոխման հնարավորություններից: Ընդ որում խոսվում էր ինչպես պետական հեղաշրջման, այնպես էլ ղեպի աչ որակական տեղաշարժի մասին, որոնց կարող էր հանգեցնել այդ շրջանում նկատվող երկրի ներքաղաքական իրադրության խիստ որումը և հարևան երկրների հետ Միրիայի հարաբերություններում լարվածության աճը:

Այսպես, հոկտեմբերի սկզբին Միրիայում բացահայտվեցին երկու դավադրություններ, նախապատրաստված 1966 թ. փետրվարին իշխանությունից հեռացված աչ բուստիսաներ Մ. Աֆլակի և Մ. Բիտարի, ինչպես նաև Բասա կուսակցության սեղիոնայ ղեկավարության նախ-

կին անդամ մայրը Ս. Հատումի կողմից: Սիրիայի պրեզիդենտ Ն. Աթա-  
սին, նշելով շիրաք փեթրոլիումիս մասնակցությունը այդ դավադրու-  
թյուններին, ընդգծեց, որ նրանց նպատակն էր «ձեռնապարհ բացել  
հետադիմության, նավթային մոնոպոլիաների և իմպերիալիզմի հա-  
մար, հարված հասցնել հեղափոխությանը և ի չիք դարձնել նրա նվա-  
ճումները ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առաքանդներում»<sup>10</sup>:

Սիրիայում առանձնահատուկ մասնակցություն առաջացրին նաև  
սեպտեմբերի վերջին ի հայտ եկած հազորագրությունները իր սահ-  
մաններում ֆուրքական զորքերի համակենտրոնացման մասին, որը  
կրում էր բացահայտ պրովոկացիոն բնույթ<sup>11</sup>:

Բանակցությունների երկրորդ փուլը Գամաակոսում նույնպես կոնկ-  
րետ արդյունքներ չափեց: Ընդ նորից ընկերության ներկայացուցիչներին  
մեկնումը (տեղոն ուղեկցվեց սիրիա-խորալիական սահմանում ռազմա-  
քաղաքական լարվածության որմամբ<sup>12</sup>: Այսպեսի եհամընկումներե  
կրկնությունը նաև հետագայում, իրավունք էր տալիս կառավարող կու-  
սակցության օրգան սէլ Բաաս քերթին պնդելու, որ զուտ ֆինանսա-  
կան կարգի հարց քննարկելիս շիրաք փեթրոլիումը ներկայանում է  
որ թե որպես նավթարդյունահանող ընկերություն, այլ որպես մի քա-  
ղաքական կազմակերպություն, որը փակուղու առջև է կանգնեցնում և  
հետաձգում բանակցություններն տամեն անգամ, երբ նոր դավադրու-  
թյուն է պատրաստվում (Սիրիայի դեմ—Լ. Ք.), և վերսկսում է դրանք,  
երբ այդ դավադրությունը խափանվում է...»<sup>13</sup>:

Մի շարք միջոցներ նախատեսելով Բուրայիի նախահարձակողա-  
կան քաղաքականությանը զիմազրավելու համար, սիրիական ղեկա-  
վարությունը միաժամանակ միջոցառումներ իրականացրեց շեղօրաց-  
նելու համար Քուրդիայի պրովոկացիաները: Այսպես, Սիրիայի վար-  
չապետ Յու. Զուլյնը հոկտեմբերի 23-ին որոշեց կայանք դնել երկրում  
ապրող ֆուրքահայատակների սեփականության վրա<sup>14</sup>: Ընդունելով այդ  
որոշումը Սիրիան մասնավորապես ելնում էր նրանից, որ այդ շրջա-  
նում Քուրդիան ակտիվորեն միանում էր իմպերիալիստական շրջան-  
ների՝ սիրիական փողովրդի և նրա ղեկավարների վրա ռազմաքաղա-  
քական ճնշում գործադրելու բոլոր փորձերին:

Պարզ է նաև, որ Քուրդիան ինքն էլ շահագրգռված էր շիրաք փեթ-  
րոլիումին աշակցելու գործում, քանի որ ներկայացնելով իրեն որպես  
այդ ընկերության շահերի լեյծնառնող պաշտպան, Անկարան հույս ու-  
նեի համագործակցություն հաստատել նավթային բիզնեսի հետ: Այդ

կապակցութիւնը պետք է հիշատակել արարական մասնույի հաղորդումներն այն մասին, որ «Երաք փեթրոլիումը» քննարկում է Քուրթիայի տարածքով նավթամուղ անցկացնելու նախագիծ, որի իրականացումը կախված կլինի Միրիայի հետ ընկերութիւն քանակցութիւնների արդյունքից<sup>15</sup>։ Պետք է նշել, սակայն, որ սիրիական ղեկավարութիւնը այդ նախագիծին լուրջ նշանակութիւն չափեց, այն դիտելով որպէս զատարկ սպանանալիք<sup>16</sup>։

1960 թ. հոկտեմբերի 26-ին սկսվեց քանակցութիւնների ներքոյ փուլը, որի ժամանակ նախաձեռնութիւն հանդես բերելով Միրիան նոր պահանջներ ներկայացրեց յերաք փեթրոլիումին<sup>17</sup>։ Այսպէս, ընկերութիւն ներկայացուցիչներին փոխանցվեց Միրիայի գատական մարմինների որոշումը՝ յերաք փեթրոլիումին մաքրային կարգը խախտելու համար 1,5 միլիոն դոլար անգանձելու մասին<sup>18</sup>։ Միատեմանակ Գեյր Զորի աշխատանքային հարցերի գծով արքիարամային գատարանը ընկերութիւնից պահանջեց 1,25 մլն. դոլար փոխհատուցում տրամադրել իր ընտանիքավոր ծառայողներին, որպէս անապատային պայմաններում աշխատանքի հաճիւնավար<sup>19</sup>։ Ընկերութիւն ներկայացուցիչներին քննարկմանն հանձնվեց նաև Միրիայի արձմերթիւնների ֆեզերացիայի հայցը, որում յերաք փեթրոլիումը մեղադրվում էր նրանում, որ բժշկական ծախսերը մտցնելով ծախսերի բաժնում, նա խախտել է ոչ միայն գոյութիւն անեցող պայմանավորվածութիւնը, այլև Միրիայի սոցիալական ապահովութիւն համակարգին 4,95 միլիոն դոլարի վնաս է հասցրել<sup>20</sup>։

Քանակցութիւնների հետագա ընթացքի համար կարևոր նշանակութիւն ունենին Բասա կուսակցութիւն Ծ-րդ ազգային համագումարի որոշումները։ Էնավթը,—ասվում էր դրանցում,—լինելով արարների հիմնական ռեսուրսը, այժմ ի սպաս է դրված զազութարարութիւնը ու նրա մոնոպոլիաներին և օգտագործվում է հետադիմական վարչակարգերին աշակցելու համար։ Արարական նավթը պետք է ծառայի արարական ամբողջ ժողովրդի շահերին և նրա գլխավոր խնդիրներին՝ առաջին հերթին Պաղեստինի խնդրի լուծմանը<sup>21</sup>։ Համագումարը նշեց նաև, որ Միրիայի առաջ քաշած պահանջները յերաք փեթրոլիումին հանգեցրին նրան, որ իմպերիալիստական շրջանները սկզբում փորձեցին նրկրի հեղափոխական վարչակարգը տապալել ներքին հետադիմական ուժերով, իսկ այդ փորձերի ձախողումից հետո հակափոխական քաղաքականութիւնն աշխուժացրին Իսրայելի ղեկավար շրջանները<sup>22</sup>։

Ավելի մանրամասն այս գրույթը վերլուծվեց Միրիայի արտաքին գործերի մինիստր Ի. Մախուսի հայտարարությունում: Նա նշեց, որ Իսրայելը, նազիստական մոնոպոլիաների ետևում կանգնած իմպերիալիստական շրջանների կողմից նախապատրաստված, նախահարձակում է պատրաստում Միրիայի դեմ: Միոնիստական պետության ակտիվացման հիմնական պատճառները Մախուսը համարում էր Միրիայի «Երաք փեթրոլիումին» ներկայացրած պահանջները և Քասա կուսակցության ժողովրդապաշտպանական պատերազմի միջոցով Պաղեստինն ազատագրելու կոչությունը<sup>23</sup>:

Նոյեմբերի 24-ը Միրիային պարզ դարձավ, որ բանակցությունների արդյունավետ շարունակումն անհնար է առանց արձատյան միջոցների ձեռնարկելու և որ ստեղծված իրավիճակում մեռնում է միայն մեկ այլընտրանք... պայքար բոլոր ձևերով, ընդհուպ մինչև նազիստական դադարեցումը<sup>23</sup>:

Միրիայի գիրքերի ընդհանուր ամրապնդմանը, մասնավորապես «Երաք փեթրոլիումին» հետ վարվող բանակցություններում, նպաստեց Միրիայի և Նզիպատի միջև Կահիրեում 1956 թ. հոկտեմբերի 4-ին համառոտ պաշտպանության պայմանագրի կնքումը: Այդ պայմանագրերը արարական աշխարհի առաջադիմական ուժերի Միրիական ժողովրդի օրինական իրավունքների համար մղվող արդարացի պայքարի հետ համերաշխության ամրապնդման գործն էր: Այս առթիվով «Այ Քասա»-ն, նշում էր. «Նեղափոխական ուժերը, միավորելով արարական զանգվածներին միասնական շարքերում, զեռական հակահարված են տալիս իմպերիալիզմի այդ նախահարձակողական պլաններին»<sup>24</sup>:

Նոյեմբերի 26-ին Միրիան «Երաք փեթրոլիումին» վերջնագիր ներկայացրեց, հայտարարելով, որ եթե ընկերությունն անմիջապես սպառի պատասխան շատ իր պահանջներին, այլապես նրա նկատմամբ կձեռնարկվեն խիստ միջոցներ<sup>25</sup>: Այդ որոշումն ընդունվեց հաշվի առնելով Միրիայի համար հեռավոր բոլոր հետևանքները, այդ թվում նաև Իսրայելի հետ ռազմական առևակատումը: «Միրիական ժողովուրդը, — շեշտում էր այս կապակցությամբ սիրիական ղեկավարությունը, — անվախորեն դիմադրում է «Երաք փեթրոլիումին» և նրա ետևում կանգնած արտաքին ուժերին...» Այսօր ժողովուրդն այդ առևակատմանը պատրաստված է ավելի լավ, քան երբևէ անցյալում<sup>26</sup>:

Միրիայի վերջնագրին ի պատասխան «Երաք փեթրոլիումը» փորձեց վճել: Նեղ ներքաշել իրաքին և, օգտագործելով վերջինիս շահա-

գրգռվածությունը նավթամզումը շարունակելու գործում, երկպառակտություն սերմանել արարենքի միջև<sup>27</sup>: Սակայն, ինչպես ցույց տվեցին նոյեմբերի 22-ին Դամասկոսում տեղի ունեցած սիրիա-իրաքյան բանակցությունները, որոնց ընթացքում կողմերը քննարկեցին սիրիական վերջնագրի բոլոր հնարավոր հետևանքները, շրջաք փեթրոլիումիւ կանխատեսումներն ու ծրագրերը իրական հիմք չունեն: Բաղդադի լեւ Քիլագո թերթը, մեկնարանելով Դամասկոսի բանակցությունները և ընդգծելով երկրի առաջադիմական ուժերի համերաշխությունը Իրաքի կառավարության դիրքորոշման հետ, նախազգուշացնում էր, որ ընկերության քաջշունչի տակտիկան Միրիայի և Իրաքի նավթին վերաբերող իրավունքների նկատմամբ կարող է նրա համար բացասական հետևանքների հանգեցնել<sup>28</sup>:

Հաշվի առնելով Իրաքի շահագրգռվածությունը նավթամզումը շարունակելու գործում, Սիրիան պաշտենուպես հավաստիացրեց, որ կուպակովի նավթամուղի անխափան աշխատանքը նույնիսկ այն դեպքում, եթե շրջաք փեթրոլիումը և փորձի արհեստականորեն զաղարեցնել նրա աշխատանքը: Սիրիան, միաժամանակ, բարձր գնահատեց իր մղած պայքարի հետ համերաշխության արտահայտումը, որը գրեկորվեց իրաքյան կառավարության և արաբական աշխարհի այլ ասուլուգիմական ուժերի կողմից<sup>29</sup>:

Նոյեմբերի վերջին Սիրիայի կառավարությունը արգելեց ընկերության ամեն տեսակ սարքավորումների շարժումը պոմպակայանների միջև, իսկ ղեկավարների Թ-ին որոշում ընդունվեց Բանիաս մղված յուրաքանչյուր տոննա հում նավթի դիմաց 5 շիլինգ 5 պենտի լավով հարկ գանձել: Նույն օրը Սիրիայի կառավարությունը կալանք դրեց շրջաք փեթրոլիումիւ ամբողջ ունեցվածքի վրա, հայաարարելով, որ այն կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ ընկերությունը չի վճարի 3,7 մլն ֆունտ ստեռլինգ՝ հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակամիջոցում նոր գներով նավթամզում կատարելու համար<sup>30</sup>:

Սիրիայի գործողություններն Իրաքի կողմից ընդհանուր հավանություն արժանացան: Գեկտեմբերի Թ-ին իրաքյան կառավարության ղեկավար Ն. Տալեբը, արժանիորեն գնահատելով Սիրիայի ձեռնարկած միջոցառումները, միաժամանակ ընդգծեց, որ Սիրիայի կողմից շրջաք փեթրոլիումիւ ունեցվածքի վրա դրած կալանքը սշպետք է, որ իրաքյան նավթի տեղափոխումը կանգնեցնելու կամ նրա արտահանման լավերը կրճատելու համար առիթ տառ<sup>31</sup>:



ԵՐՐԱՅ փեթրոլիումիչ ունեցվածքի վրա կալանք դնելու մասին չուրերը ԱՄՆ-ում և Անգլիայում շատ լուրջ անհանգստութիւն առաջացրեցին: Այսպէս, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի ներկայացուցիչն այդ ստիժով հանդէս եկավ հասուկ հայտարարութիւնմը, որում նշեց, որ ԱՄՆ-ը շատ ուշադիր և անհանգստութիւնմը է հետևում դեպքերի զարգացմանը, և միտմամանակ հասկացրեց, որ ամերիկայն կառավարութիւնը ժայրահեղ բացասական կզնահատի նավթարդյունաբերող երկրներին և նավթային մոնոպոլիաների միջն գոլութիւն ունեցող հարաբերութիւններին բնույթն արմատականորեն փոխելու ցանկացած փորձը<sup>25</sup>:

Այնուամենայնիվ, Միբիայի վնասական գործողութիւնները հանգցրին այն բանին, որ ԵՐՐԱՅ փեթրոլիումը ստիպված եղավ որոշ գիշումներ անել և առաջարկեց վեճը լուծել Միբիայի օգտին տարեկան կոնցեսիոն մասնահանումները մտաւորապէս 2,55 մլն ֆունտ ստեռլինգի շափով ավելացնելու միջոցով: Միբիան, սակայն, հրաժարվեց այդ ղեպաստեց, կրկին հաստատելով իր սկզբունքային պահանջները՝ իրեն հասանելիք մասնահանումները 50%-ի շափով ավելացնելու և 40 մլն ֆունտ ստեռլինգ իրեն հասցրած վնասներն հատուցելու մասին<sup>26</sup>: Ի պատասխան՝ ԵՐՐԱՅ փեթրոլիումիչ ղեկավարութիւնը ղեկտեմքերի 10-ին զազարեցրեց իրաքյան նավթի անդափոխումը սիրիական Բախրաս նավահանգիստը<sup>27</sup>:

Դեպոստ նրան, որ նավթամզման դազարեցումը ղգալի հարված էր Իրաքի շահերին, Բազդազը պաշտոնապէս շարունակում էր պաշտպանել սիրիական պահանջները: Դեկտեմքերի 10-ին վարչապետ Ի. Տալիբն հայտարարեց, որ Իրաքը ցանկացած պարագաներում ԵՐՐԱՅ փեթրոլիումիչն պիտի պահանջի իր հասույթի վնասումը նավթի տարեկան սովորական հասույթի շափերով<sup>28</sup>: Իրաքի այսպիսի դիրքորոշումը Միբիային թույլ տվեց իր հերթին լրացուցիչ ձեշում գործադրել ընկերութիւնմ վրա, և ղեկտեմքերի 13-ին փակել իր տարածքով դեպի լիբանանյան Տրիպոլի նավահանգիստն անցնող նավթամուղը<sup>29</sup>:

Ողջունելով Իրաքի դիրքորոշումը և ընդգծելով իր գործողութիւններին համաարարական բնույթը, Միբիան ևս շարեց նավթային մոնոպոլիաների թելադրանքի վերացման մեշ շահագրգռված բոլոր ումերին աշակցել իր իրավացի պահանջներին: Ինչպէս նշվում էր սիրիական կառավարութիւնն պաշտոնական հայտարարութիւնում Ե...Իրաքի արտը մոզովուրդն՝ ու արաբական մշուս երկրներին ժողովուրդները Միբիային

աշակցում են, քանի որ լավ են հասկանում նրա գիրքերուման սկզբ-  
բունջային գրգապատեանները, որը քննադրվում է ոչ քն մասնավոր  
նկատառումներով, այլ որոշվում է համաարարական շահերից էլեն-  
լով<sup>37</sup>:

Ե՛րաք փեթբրտիումիս փորձերը՝ բախել Միրիայի և Իրաքի շահերը  
ու միայն ցանկացած նպատակին շահեղին, այլ ընդհակառակը,  
նպատակցին այն բանին, որ երկու արարական երկրներն հանդես գան  
միացյալ ճակատով՝ նրանց գիրքերուման միասնականությունը հավա-  
նություն տալով բազմազան Եկս-Մասուրա ալ-Լերաքիյանս ընդգծում  
էր, որ Իրաքը նավթային մոնոպոլիաների վրա է դնումս նրանց  
օրստրուկցիոնիստական գիրքերուման, քաշքշուկի և Միրիայի պահանջ-  
ներին պատասխան տալուց խուսափելու պատեհաւով ստաշացած լար-  
ված իրադրութիւն ստեղծմանս պատասխանատւութիւնը<sup>38</sup>: Իր հերթին  
Միրիան, նշելով սիրիա-իրաքյան հարաբերութիւններում երկպառակաու-  
թիւն սերմանելու իմպերիալիստական շրջանների փորձերի անհաջողու-  
թիւնը, ընդգծում էր, որ Իրաքն ի վիճակի է, ինքնուրույն մշակել իր  
նավթային հարստութիւնները, և որ Ե՛րաք փեթբրտիումիս զործողու-  
թիւնները միայն կարագացնեն նրա սեփականութիւն ազգայնացման  
վերաբերյալ իրաքյան կառավարութիւն որոշումը<sup>39</sup>:

Դեկտեմբերի 16-ին Իրաք ժամանեց Միրիայի օրտաքին գործերի  
մինիստր Ի. Մախուսը, որին իրաքյան ղեկավարները նորից հավաստ-  
տիացրեցին իրենց գիրքերումաը<sup>40</sup>: Իր հերթին Ի. Մախուսը հայտա-  
բարեց, որ Միրիայի տարածքով անցնող Ե՛րաք փեթբրտիումիս նավ-  
թամուղն իրականում իրաքյան ժողովրդին է պատկանում և միաժա-  
մանակ նշեց ընկերութիւն ազգայնացման հարցը ցնեարկելու անհրա-  
ժեշտութիւն մասին: Նա ընդգծեց նաև, որ ստեղծված իրադրութիւնում  
առանձնահատուկ նշանակութիւն է ձևք բերում արարական երկրների  
ակտիվ հակաիմպերիալիստական գիրքերումը, և որ այդ ուսումով  
նրանց դերն այսօր այի տարբերվում 1956 թ. սուեզյան պատերազմում  
նրանց կատարած դերից<sup>41</sup>:

Բազդադում Միրիայի կողմից Ե՛րաք փեթբրտիումիս ազգայնաց-  
ման հարցի բարձրացումը տաղնապ առաջացրեց ոչ միայն ընկերութիւն  
ղեկավարութիւնում, այլ նաև բրիտանական կառավարութիւնում: Նքն  
նախկինում Անգլիայի ղեկավար շրջանները խուսափում էին որևէ հայ-  
տարարութիւն անելուց, միտումնավոր ձևով ընդգծելով Միրիայի և  
Ե՛րաք փեթբրտիումիս միջև ծագած տարաձայնութիւնների զուտ տնտե-

սական և ֆինանսական ընելիքը, ապա այդ պահին նրանք որոշեցին իրենց վերաբերմունքը դրսևորել բանակցությունների նկատմամբ և սրբիական կառավարության վրա քաղաքական շնչում գործադրել: Այդ բանն արվեց բավականին թողարկված ձևով: Այսպես, Դամասկոսում Անգլիայի դեսպան Լ. Հվանսը Միրիայի Արաքին գործերի միևնույնությանն հայտարարեց, բանի որ «երաք փեթրոլիումը» Անգլիայում պաշտոնապես հաշվառված ընկերություն է, ապա անգլիական կառավարությունն իրեն իրավունք է վերապահում մեկնարանել բանակցությունների ընթացքը առաջիկա փուլերում<sup>12</sup>:

Իր ներքին «երաք փեթրոլիումը» իրաքյան կառավարությանը տեղյակ պահեց, որ նավթամուղի փակման կապակցությամբ լի կարող ընթացիկ աարում Իրաքին ամբողջությամբ վճարել կոնցեսիոն մասնահանումները: Պարզ է, որ «երաք փեթրոլիումի» հայտարարությունը Միրիա-իրաքյան համերաշխությունում երկպառակտություն սերմանելու նոր փորձ էր<sup>13</sup>: Այս հայտարարության հակադրինական լինելու մասին եղեց մասնավորապես բաղդադյան «Սաուֆ ալ-Արաբը», որը գրեց, թե «երաք փեթրոլիումի» իրավունք չունի ոսնահարել իրաքյան ժողովրդի շահերը միայն այն բանի համար, որ Բաղդադը պաշտպանում է Միրիայի իրավացի պահանջները<sup>14</sup>:

Իրաքի՝ Միրիային պաշտպանելու կուրսի ուժեղացմանը նպաստեց նգիպտական ղեկավարությունը, որը անդեկայրեց իրաքյան կառավարությանն այն մասին, թե նգիպտոսն իրեն համարում է վեճի մեջ ներքաշված անմիջական կողմ<sup>15</sup>: Միաժամանակ Ազգային ժողովի հատուկ հրավիրված նիստում Եգիպտոսի վարչապետ Ա. Միզկին ելույթ ունեցավ համերաշխությունը Իրաքի արդարացի պահանջների հետ միաժամանակ, ընդգծեց, որ իր երկիրն ամբողջովին պաշտպանում է Միրիայի կառավարությանը ժողովրդի շահերի պաշտպանության գործում<sup>16</sup>:

Նավթային մոնոպոլիաների տնտեսական թելադրանքի, «երաք փեթրոլիումի» հետում կանգնած ԱՄՆ-ի և Անգլիայի իմպերիալիստական շրջանների՝ արարական առաջադիմական վարչակարգերի, տուրքին հերքին Միրիայի, վրա ուղղված քաղաքական համագործակցության ամրապնդման հարցերը քննարկվեցին 1967 թ. փետրվարին Իրաքի ղեկավարների Կահիրե և Դամասկոս կատարած այցելությունների ընթացքում: Այդ այցելությունները, — նշում է Օ. Գերասիմովը, — որոնց ըն-

թացքում քննարկվեցին առաջին հերթին նավթային պրոբլեմները, ակնհայտորեն ազդեցին նավթային էզեկսիտացիայի կարգավորման վրա<sup>17</sup>։

Արդյունքում «Երաք փեթրոլիումը» ստիպված եղավ վերականգնել բահեկցուիթյունները Սիրիայի հետ 1967 թ. մարտի 2-ին Գամասկոսում ստորագրվեց Սիրիայի առաջնորդ Իրաքյան նավթի տեղափոխման նոր համաձայնագիրը։ Սիրիայի օգտին կոնցեսիոն մասնահանումները բարձրացվեցին 50%-ով, որը ուժի մեջ էր մտնելու հետին թվով 1968 թ. հունվարի 1-ից և Սիրիայի կառավարությանը լրացուցիչ տալիս էր 11 միլիոն դոլար։ Միաժամանակ «Երաք փեթրոլիումը» պարտավորվում էր Սիրիային վճարել 1955—1965 թթ. առաջացած պարտքը 40 միլիոն ֆունտ ստեռլինգի չափով<sup>18</sup>։

Վերջում ելնեք, որ Սիրիայի հաշուգումյունը «Երաք փեթրոլիումին» հետ կոնցեսիոն համաձայնագրի վերանայման համար մղված պայքարում ուներ ոչ միայն կարևոր տնտեսական, այլև քաղաքական մեծ նշանակություն։ Հասնելով իր օրինական պահանջների ամբողջական բավարարմանը, Սիրիան ամբողջ արարական աշխարհին ցույց տվեց ներգաղութարարության քաղաքականությանը դիմակայելու խնդիրների արմատական լուծման հնարավորությունը և, այդպիսով, ոչ միայն նպաստեց արարական ժողովուրդների նավթային հարստությունների ազգայնացման կուրսի ամրապնդմանը<sup>19</sup>, այլև զգալի հարված հասցրեց Մերձավոր արևելքում իմպերիալիզմի դիրքերին։

Г. М. ГРИГОРЯН

## БОРЬБА СИРИИ ЗА ПЕРЕСМОТР КОНЦЕССИОННОГО СОГЛАШЕНИЯ С «ИРАК ПЕТРОЛЕУМ КОМПАНИ»

### Резюме

В августе 1966 г. сирийское правительство потребовало от империалистического нефтяного консорциума «Ирак Петролеум Компани» увеличить на 50% отчисления за тризлит нефти из района Киркука (Ирак) в сирийский порт Баниас, а также выплатить Сирии долг в размере 40 млн. ф. ст., образовавшийся в период 1955—1965 гг. в результате различных финансовых махинаций совета директоров консорциума.

Добившись в марте 1967 г. полного удовлетворения своих законных требований, Сирия наглядно продемонстрировала все-

му арабскому миру возможность коренного решения задач по оказанию противодействия политике неоколониализма и тем самым не только активно способствовала укреплению курса на национализацию нефтяных богатств арабских народов, но и нанесла ощутимый удар по позициям империализма на Ближнем Востоке в целом.

- 1 Л. Н. Медведко, К востоку и западу от Суэца, М., 1980, с. 74.
- 2 Р. Н. Андресан, А. Я. Элянов, Ближний Восток, Нефть и независимость. М., 1961; Л. Н. Комлев, В борьбе с нефтяными слугами, М., 1976.
- 3 *المبعث*, ١٩٦٤-١٩٦٦.
- 4 The Middle East and North Africa 1966-67. Europa Publications Limited, London, 1966, p. 65.
- 5 Р. Н. Андресан, А. Я. Элянов, *١٩٦٤, ١٩٦٥, ١٩٦٦*.
- 6 J. Kinche, Palestine or Israel. The untold story of why we failed, 1917-1923; 1967-1973. London, 1973, p. 231.
- 7 *١٩٦٦-١٩٦٧* *١٩٦٧-١٩٦٨* *١٩٦٨-١٩٦٩* *١٩٦٩-١٩٧٠* *١٩٧٠-١٩٧١* *١٩٧١-١٩٧٢* *١٩٧٢-١٩٧٣* *١٩٧٣-١٩٧٤* *١٩٧٤-١٩٧٥* *١٩٧٥-١٩٧٦* *١٩٧٦-١٩٧٧* *١٩٧٧-١٩٧٨* *١٩٧٨-١٩٧٩* *١٩٧٩-١٩٨٠* *١٩٨٠-١٩٨١* *١٩٨١-١٩٨٢* *١٩٨٢-١٩٨٣* *١٩٨٣-١٩٨٤* *١٩٨٤-١٩٨٥* *١٩٨٥-١٩٨٦* *١٩٨٦-١٩٨٧* *١٩٨٧-١٩٨٨* *١٩٨٨-١٩٨٩* *١٩٨٩-١٩٩٠* *١٩٩٠-١٩٩١* *١٩٩١-١٩٩٢* *١٩٩٢-١٩٩٣* *١٩٩٣-١٩٩٤* *١٩٩٤-١٩٩٥* *١٩٩٥-١٩٩٦* *١٩٩٦-١٩٩٧* *١٩٩٧-١٩٩٨* *١٩٩٨-١٩٩٩* *١٩٩٩-٢٠٠٠* *٢٠٠٠-٢٠٠١* *٢٠٠١-٢٠٠٢* *٢٠٠٢-٢٠٠٣* *٢٠٠٣-٢٠٠٤* *٢٠٠٤-٢٠٠٥* *٢٠٠٥-٢٠٠٦* *٢٠٠٦-٢٠٠٧* *٢٠٠٧-٢٠٠٨* *٢٠٠٨-٢٠٠٩* *٢٠٠٩-٢٠١٠* *٢٠١٠-٢٠١١* *٢٠١١-٢٠١٢* *٢٠١٢-٢٠١٣* *٢٠١٣-٢٠١٤* *٢٠١٤-٢٠١٥* *٢٠١٥-٢٠١٦* *٢٠١٦-٢٠١٧* *٢٠١٧-٢٠١٨* *٢٠١٨-٢٠١٩* *٢٠١٩-٢٠٢٠* *٢٠٢٠-٢٠٢١* *٢٠٢١-٢٠٢٢* *٢٠٢٢-٢٠٢٣* *٢٠٢٣-٢٠٢٤* *٢٠٢٤-٢٠٢٥* *٢٠٢٥-٢٠٢٦* *٢٠٢٦-٢٠٢٧* *٢٠٢٧-٢٠٢٨* *٢٠٢٨-٢٠٢٩* *٢٠٢٩-٢٠٣٠* *٢٠٣٠-٢٠٣١* *٢٠٣١-٢٠٣٢* *٢٠٣٢-٢٠٣٣* *٢٠٣٣-٢٠٣٤* *٢٠٣٤-٢٠٣٥* *٢٠٣٥-٢٠٣٦* *٢٠٣٦-٢٠٣٧* *٢٠٣٧-٢٠٣٨* *٢٠٣٨-٢٠٣٩* *٢٠٣٩-٢٠٤٠* *٢٠٤٠-٢٠٤١* *٢٠٤١-٢٠٤٢* *٢٠٤٢-٢٠٤٣* *٢٠٤٣-٢٠٤٤* *٢٠٤٤-٢٠٤٥* *٢٠٤٥-٢٠٤٦* *٢٠٤٦-٢٠٤٧* *٢٠٤٧-٢٠٤٨* *٢٠٤٨-٢٠٤٩* *٢٠٤٩-٢٠٥٠* *٢٠٥٠-٢٠٥١* *٢٠٥١-٢٠٥٢* *٢٠٥٢-٢٠٥٣* *٢٠٥٣-٢٠٥٤* *٢٠٥٤-٢٠٥٥* *٢٠٥٥-٢٠٥٦* *٢٠٥٦-٢٠٥٧* *٢٠٥٧-٢٠٥٨* *٢٠٥٨-٢٠٥٩* *٢٠٥٩-٢٠٦٠* *٢٠٦٠-٢٠٦١* *٢٠٦١-٢٠٦٢* *٢٠٦٢-٢٠٦٣* *٢٠٦٣-٢٠٦٤* *٢٠٦٤-٢٠٦٥* *٢٠٦٥-٢٠٦٦* *٢٠٦٦-٢٠٦٧* *٢٠٦٧-٢٠٦٨* *٢٠٦٨-٢٠٦٩* *٢٠٦٩-٢٠٧٠* *٢٠٧٠-٢٠٧١* *٢٠٧١-٢٠٧٢* *٢٠٧٢-٢٠٧٣* *٢٠٧٣-٢٠٧٤* *٢٠٧٤-٢٠٧٥* *٢٠٧٥-٢٠٧٦* *٢٠٧٦-٢٠٧٧* *٢٠٧٧-٢٠٧٨* *٢٠٧٨-٢٠٧٩* *٢٠٧٩-٢٠٨٠* *٢٠٨٠-٢٠٨١* *٢٠٨١-٢٠٨٢* *٢٠٨٢-٢٠٨٣* *٢٠٨٣-٢٠٨٤* *٢٠٨٤-٢٠٨٥* *٢٠٨٥-٢٠٨٦* *٢٠٨٦-٢٠٨٧* *٢٠٨٧-٢٠٨٨* *٢٠٨٨-٢٠٨٩* *٢٠٨٩-٢٠٩٠* *٢٠٩٠-٢٠٩١* *٢٠٩١-٢٠٩٢* *٢٠٩٢-٢٠٩٣* *٢٠٩٣-٢٠٩٤* *٢٠٩٤-٢٠٩٥* *٢٠٩٥-٢٠٩٦* *٢٠٩٦-٢٠٩٧* *٢٠٩٧-٢٠٩٨* *٢٠٩٨-٢٠٩٩* *٢٠٩٩-٢١٠٠* *٢١٠٠-٢١٠١* *٢١٠١-٢١٠٢* *٢١٠٢-٢١٠٣* *٢١٠٣-٢١٠٤* *٢١٠٤-٢١٠٥* *٢١٠٥-٢١٠٦* *٢١٠٦-٢١٠٧* *٢١٠٧-٢١٠٨* *٢١٠٨-٢١٠٩* *٢١٠٩-٢١١٠* *٢١١٠-٢١١١* *٢١١١-٢١١٢* *٢١١٢-٢١١٣* *٢١١٣-٢١١٤* *٢١١٤-٢١١٥* *٢١١٥-٢١١٦* *٢١١٦-٢١١٧* *٢١١٧-٢١١٨* *٢١١٨-٢١١٩* *٢١١٩-٢١٢٠* *٢١٢٠-٢١٢١* *٢١٢١-٢١٢٢* *٢١٢٢-٢١٢٣* *٢١٢٣-٢١٢٤* *٢١٢٤-٢١٢٥* *٢١٢٥-٢١٢٦* *٢١٢٦-٢١٢٧* *٢١٢٧-٢١٢٨* *٢١٢٨-٢١٢٩* *٢١٢٩-٢١٣٠* *٢١٣٠-٢١٣١* *٢١٣١-٢١٣٢* *٢١٣٢-٢١٣٣* *٢١٣٣-٢١٣٤* *٢١٣٤-٢١٣٥* *٢١٣٥-٢١٣٦* *٢١٣٦-٢١٣٧* *٢١٣٧-٢١٣٨* *٢١٣٨-٢١٣٩* *٢١٣٩-٢١٤٠* *٢١٤٠-٢١٤١* *٢١٤١-٢١٤٢* *٢١٤٢-٢١٤٣* *٢١٤٣-٢١٤٤* *٢١٤٤-٢١٤٥* *٢١٤٥-٢١٤٦* *٢١٤٦-٢١٤٧* *٢١٤٧-٢١٤٨* *٢١٤٨-٢١٤٩* *٢١٤٩-٢١٥٠* *٢١٥٠-٢١٥١* *٢١٥١-٢١٥٢* *٢١٥٢-٢١٥٣* *٢١٥٣-٢١٥٤* *٢١٥٤-٢١٥٥* *٢١٥٥-٢١٥٦* *٢١٥٦-٢١٥٧* *٢١٥٧-٢١٥٨* *٢١٥٨-٢١٥٩* *٢١٥٩-٢١٦٠* *٢١٦٠-٢١٦١* *٢١٦١-٢١٦٢* *٢١٦٢-٢١٦٣* *٢١٦٣-٢١٦٤* *٢١٦٤-٢١٦٥* *٢١٦٥-٢١٦٦* *٢١٦٦-٢١٦٧* *٢١٦٧-٢١٦٨* *٢١٦٨-٢١٦٩* *٢١٦٩-٢١٧٠* *٢١٧٠-٢١٧١* *٢١٧١-٢١٧٢* *٢١٧٢-٢١٧٣* *٢١٧٣-٢١٧٤* *٢١٧٤-٢١٧٥* *٢١٧٥-٢١٧٦* *٢١٧٦-٢١٧٧* *٢١٧٧-٢١٧٨* *٢١٧٨-٢١٧٩* *٢١٧٩-٢١٨٠* *٢١٨٠-٢١٨١* *٢١٨١-٢١٨٢* *٢١٨٢-٢١٨٣* *٢١٨٣-٢١٨٤* *٢١٨٤-٢١٨٥* *٢١٨٥-٢١٨٦* *٢١٨٦-٢١٨٧* *٢١٨٧-٢١٨٨* *٢١٨٨-٢١٨٩* *٢١٨٩-٢١٩٠* *٢١٩٠-٢١٩١* *٢١٩١-٢١٩٢* *٢١٩٢-٢١٩٣* *٢١٩٣-٢١٩٤* *٢١٩٤-٢١٩٥* *٢١٩٥-٢١٩٦* *٢١٩٦-٢١٩٧* *٢١٩٧-٢١٩٨* *٢١٩٨-٢١٩٩* *٢١٩٩-٢٢٠٠* *٢٢٠٠-٢٢٠١* *٢٢٠١-٢٢٠٢* *٢٢٠٢-٢٢٠٣* *٢٢٠٣-٢٢٠٤* *٢٢٠٤-٢٢٠٥* *٢٢٠٥-٢٢٠٦* *٢٢٠٦-٢٢٠٧* *٢٢٠٧-٢٢٠٨* *٢٢٠٨-٢٢٠٩* *٢٢٠٩-٢٢١٠* *٢٢١٠-٢٢١١* *٢٢١١-٢٢١٢* *٢٢١٢-٢٢١٣* *٢٢١٣-٢٢١٤* *٢٢١٤-٢٢١٥* *٢٢١٥-٢٢١٦* *٢٢١٦-٢٢١٧* *٢٢١٧-٢٢١٨* *٢٢١٨-٢٢١٩* *٢٢١٩-٢٢٢٠* *٢٢٢٠-٢٢٢١* *٢٢٢١-٢٢٢٢* *٢٢٢٢-٢٢٢٣* *٢٢٢٣-٢٢٢٤* *٢٢٢٤-٢٢٢٥* *٢٢٢٥-٢٢٢٦* *٢٢٢٦-٢٢٢٧* *٢٢٢٧-٢٢٢٨* *٢٢٢٨-٢٢٢٩* *٢٢٢٩-٢٢٣٠* *٢٢٣٠-٢٢٣١* *٢٢٣١-٢٢٣٢* *٢٢٣٢-٢٢٣٣* *٢٢٣٣-٢٢٣٤* *٢٢٣٤-٢٢٣٥* *٢٢٣٥-٢٢٣٦* *٢٢٣٦-٢٢٣٧* *٢٢٣٧-٢٢٣٨* *٢٢٣٨-٢٢٣٩* *٢٢٣٩-٢٢٤٠* *٢٢٤٠-٢٢٤١* *٢٢٤١-٢٢٤٢* *٢٢٤٢-٢٢٤٣* *٢٢٤٣-٢٢٤٤* *٢٢٤٤-٢٢٤٥* *٢٢٤٥-٢٢٤٦* *٢٢٤٦-٢٢٤٧* *٢٢٤٧-٢٢٤٨* *٢٢٤٨-٢٢٤٩* *٢٢٤٩-٢٢٥٠* *٢٢٥٠-٢٢٥١* *٢٢٥١-٢٢٥٢* *٢٢٥٢-٢٢٥٣* *٢٢٥٣-٢٢٥٤* *٢٢٥٤-٢٢٥٥* *٢٢٥٥-٢٢٥٦* *٢٢٥٦-٢٢٥٧* *٢٢٥٧-٢٢٥٨* *٢٢٥٨-٢٢٥٩* *٢٢٥٩-٢٢٦٠* *٢٢٦٠-٢٢٦١* *٢٢٦١-٢٢٦٢* *٢٢٦٢-٢٢٦٣* *٢٢٦٣-٢٢٦٤* *٢٢٦٤-٢٢٦٥* *٢٢٦٥-٢٢٦٦* *٢٢٦٦-٢٢٦٧* *٢٢٦٧-٢٢٦٨* *٢٢٦٨-٢٢٦٩* *٢٢٦٩-٢٢٧٠* *٢٢٧٠-٢٢٧١* *٢٢٧١-٢٢٧٢* *٢٢٧٢-٢٢٧٣* *٢٢٧٣-٢٢٧٤* *٢٢٧٤-٢٢٧٥* *٢٢٧٥-٢٢٧٦* *٢٢٧٦-٢٢٧٧* *٢٢٧٧-٢٢٧٨* *٢٢٧٨-٢٢٧٩* *٢٢٧٩-٢٢٨٠* *٢٢٨٠-٢٢٨١* *٢٢٨١-٢٢٨٢* *٢٢٨٢-٢٢٨٣* *٢٢٨٣-٢٢٨٤* *٢٢٨٤-٢٢٨٥* *٢٢٨٥-٢٢٨٦* *٢٢٨٦-٢٢٨٧* *٢٢٨٧-٢٢٨٨* *٢٢٨٨-٢٢٨٩* *٢٢٨٩-٢٢٩٠* *٢٢٩٠-٢٢٩١* *٢٢٩١-٢٢٩٢* *٢٢٩٢-٢٢٩٣* *٢٢٩٣-٢٢٩٤* *٢٢٩٤-٢٢٩٥* *٢٢٩٥-٢٢٩٦* *٢٢٩٦-٢٢٩٧* *٢٢٩٧-٢٢٩٨* *٢٢٩٨-٢٢٩٩* *٢٢٩٩-٢٣٠٠* *٢٣٠٠-٢٣٠١* *٢٣٠١-٢٣٠٢* *٢٣٠٢-٢٣٠٣* *٢٣٠٣-٢٣٠٤* *٢٣٠٤-٢٣٠٥* *٢٣٠٥-٢٣٠٦* *٢٣٠٦-٢٣٠٧* *٢٣٠٧-٢٣٠٨* *٢٣٠٨-٢٣٠٩* *٢٣٠٩-٢٣١٠* *٢٣١٠-٢٣١١* *٢٣١١-٢٣١٢* *٢٣١٢-٢٣١٣* *٢٣١٣-٢٣١٤* *٢٣١٤-٢٣١٥* *٢٣١٥-٢٣١٦* *٢٣١٦-٢٣١٧* *٢٣١٧-٢٣١٨* *٢٣١٨-٢٣١٩* *٢٣١٩-٢٣٢٠* *٢٣٢٠-٢٣٢١* *٢٣٢١-٢٣٢٢* *٢٣٢٢-٢٣٢٣* *٢٣٢٣-٢٣٢٤* *٢٣٢٤-٢٣٢٥* *٢٣٢٥-٢٣٢٦* *٢٣٢٦-٢٣٢٧* *٢٣٢٧-٢٣٢٨* *٢٣٢٨-٢٣٢٩* *٢٣٢٩-٢٣٣٠* *٢٣٣٠-٢٣٣١* *٢٣٣١-٢٣٣٢* *٢٣٣٢-٢٣٣٣* *٢٣٣٣-٢٣٣٤* *٢٣٣٤-٢٣٣٥* *٢٣٣٥-٢٣٣٦* *٢٣٣٦-٢٣٣٧* *٢٣٣٧-٢٣٣٨* *٢٣٣٨-٢٣٣٩* *٢٣٣٩-٢٣٤٠* *٢٣٤٠-٢٣٤١* *٢٣٤١-٢٣٤٢* *٢٣٤٢-٢٣٤٣* *٢٣٤٣-٢٣٤٤* *٢٣٤٤-٢٣٤٥* *٢٣٤٥-٢٣٤٦* *٢٣٤٦-٢٣٤٧* *٢٣٤٧-٢٣٤٨* *٢٣٤٨-٢٣٤٩* *٢٣٤٩-٢٣٥٠* *٢٣٥٠-٢٣٥١* *٢٣٥١-٢٣٥٢* *٢٣٥٢-٢٣٥٣* *٢٣٥٣-٢٣٥٤* *٢٣٥٤-٢٣٥٥* *٢٣٥٥-٢٣٥٦* *٢٣٥٦-٢٣٥٧* *٢٣٥٧-٢٣٥٨* *٢٣٥٨-٢٣٥٩* *٢٣٥٩-٢٣٦٠* *٢٣٦٠-٢٣٦١* *٢٣٦١-٢٣٦٢* *٢٣٦٢-٢٣٦٣* *٢٣٦٣-٢٣٦٤* *٢٣٦٤-٢٣٦٥* *٢٣٦٥-٢٣٦٦* *٢٣٦٦-٢٣٦٧* *٢٣٦٧-٢٣٦٨* *٢٣٦٨-٢٣٦٩* *٢٣٦٩-٢٣٧٠* *٢٣٧٠-٢٣٧١* *٢٣٧١-٢٣٧٢* *٢٣٧٢-٢٣٧٣* *٢٣٧٣-٢٣٧٤* *٢٣٧٤-٢٣٧٥* *٢٣٧٥-٢٣٧٦* *٢٣٧٦-٢٣٧٧* *٢٣٧٧-٢٣٧٨* *٢٣٧٨-٢٣٧٩* *٢٣٧٩-٢٣٨٠* *٢٣٨٠-٢٣٨١* *٢٣٨١-٢٣٨٢* *٢٣٨٢-٢٣٨٣* *٢٣٨٣-٢٣٨٤* *٢٣٨٤-٢٣٨٥* *٢٣٨٥-٢٣٨٦* *٢٣٨٦-٢٣٨٧* *٢٣٨٧-٢٣٨٨* *٢٣٨٨-٢٣٨٩* *٢٣٨٩-٢٣٩٠* *٢٣٩٠-٢٣٩١* *٢٣٩١-٢٣٩٢* *٢٣٩٢-٢٣٩٣* *٢٣٩٣-٢٣٩٤* *٢٣٩٤-٢٣٩٥* *٢٣٩٥-٢٣٩٦* *٢٣٩٦-٢٣٩٧* *٢٣٩٧-٢٣٩٨* *٢٣٩٨-٢٣٩٩* *٢٣٩٩-٢٤٠٠* *٢٤٠٠-٢٤٠١* *٢٤٠١-٢٤٠٢* *٢٤٠٢-٢٤٠٣* *٢٤٠٣-٢٤٠٤* *٢٤٠٤-٢٤٠٥* *٢٤٠٥-٢٤٠٦* *٢٤٠٦-٢٤٠٧* *٢٤٠٧-٢٤٠٨* *٢٤٠٨-٢٤٠٩* *٢٤٠٩-٢٤١٠* *٢٤١٠-٢٤١١* *٢٤١١-٢٤١٢* *٢٤١٢-٢٤١٣* *٢٤١٣-٢٤١٤* *٢٤١٤-٢٤١٥* *٢٤١٥-٢٤١٦* *٢٤١٦-٢٤١٧* *٢٤١٧-٢٤١٨* *٢٤١٨-٢٤١٩* *٢٤١٩-٢٤٢٠* *٢٤٢٠-٢٤٢١* *٢٤٢١-٢٤٢٢* *٢٤٢٢-٢٤٢٣* *٢٤٢٣-٢٤٢٤* *٢٤٢٤-٢٤٢٥* *٢٤٢٥-٢٤٢٦* *٢٤٢٦-٢٤٢٧* *٢٤٢٧-٢٤٢٨* *٢٤٢٨-٢٤٢٩* *٢٤٢٩-٢٤٣٠* *٢٤٣٠-٢٤٣١* *٢٤٣١-٢٤٣٢* *٢٤٣٢-٢٤٣٣* *٢٤٣٣-٢٤٣٤* *٢٤٣٤-٢٤٣٥* *٢٤٣٥-٢٤٣٦* *٢٤٣٦-٢٤٣٧* *٢٤٣٧-٢٤٣٨* *٢٤٣٨-٢٤٣٩* *٢٤٣٩-٢٤٤٠* *٢٤٤٠-٢٤٤١* *٢٤٤١-٢٤٤٢* *٢٤٤٢-٢٤٤٣* *٢٤٤٣-٢٤٤٤* *٢٤٤٤-٢٤٤٥* *٢٤٤٥-٢٤٤٦* *٢٤٤٦-٢٤٤٧* *٢٤٤٧-٢٤٤٨* *٢٤٤٨-٢٤٤٩* *٢٤٤٩-٢٤٥٠* *٢٤٥٠-٢٤٥١* *٢٤٥١-٢٤٥٢* *٢٤٥٢-٢٤٥٣* *٢٤٥٣-٢٤٥٤* *٢٤٥٤-٢٤٥٥* *٢٤٥٥-٢٤٥٦* *٢٤٥٦-٢٤٥٧* *٢٤٥٧-٢٤٥٨* *٢٤٥٨-٢٤٥٩* *٢٤٥٩-٢٤٦٠* *٢٤٦٠-٢٤٦١* *٢٤٦١-٢٤٦٢* *٢٤٦٢-٢٤٦٣* *٢٤٦٣-٢٤٦٤* *٢٤٦٤-٢٤٦٥* *٢٤٦٥-٢٤٦٦* *٢٤٦٦-٢٤٦٧* *٢٤٦٧-٢٤٦٨* *٢٤٦٨-٢٤٦٩* *٢٤٦٩-٢٤٧٠* *٢٤٧٠-٢٤٧١* *٢٤٧١-٢٤٧٢* *٢٤٧٢-٢٤٧٣* *٢٤٧٣-٢٤٧٤* *٢٤٧٤-٢٤٧٥* *٢٤٧٥-٢٤٧٦* *٢٤٧٦-٢٤٧٧* *٢٤٧٧-٢٤٧٨* *٢٤٧٨-٢٤٧٩* *٢٤٧٩-٢٤٨٠* *٢٤٨٠-٢٤٨١* *٢٤٨١-٢٤٨٢* *٢٤٨٢-٢٤٨٣* *٢٤٨٣-٢٤٨٤* *٢٤٨٤-٢٤٨٥* *٢*



1945 թ. ՆՐԱՆՍ-ԼԵՎԱՆՏՅԱՆ ԻՊՆԱԿԱՄԻ ԿՈՍՏԱՄԱՐ ԱՐԱՐԱԿԱՆ  
ԼԻԳԱՑԻ ԳԻՐՓՈՐՈՇՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ԵՌԻՐՋԸ

35 С. М. Штененко, Генеральный штаб в годы войны, т. I, М; 1968, с. 54.  
Այսպէզ էր գտնում սովետական 45-րդ բանակը: Իրան-Քուրթիան սահմանին կանգնում էր Հրանգուլին և անեկային բրիգադներով սովետացում 15-րդ Հեկկայ-զորային կորպուսը, ինչ Քուրթիան Քարգի վրա Հարմակիցի Իրանի վարումը:

36 Գերմանական զինանախնդները Հայաստանի մասին կրկին երևան կնան սպանակիցներին արդեն սույ սովետական գերմանական զինանախնդական գործչւյում շինելու Գրանց նախում արդիւնակ լին զերմանական գործարարման զարմի փոփոխութիւնները՝ Քուրթիայի Հնա Հնապա Հարարութիւնների Հարցում: 1912 թ. անուանը Գերմանիայի արապին զորեկի միմարտութիւնը կարծեք մի ճանչումն գառապարտի պարտարարի գառապարտելի շարունականութիւնը տառանցքին երկրների նկատմամբ՝ պատերազմումաւ, Այսպէս անց էին գտել Քուրթիան կառավարման նկատմամբ աննշում Գերմանիայի թուրք պահանջները՝ այսպէս 1910 թ. Հոկտեմբերի 19-ի անպարտ-Քուրթիան պայմանագրից: (DZA Potsdam, A. A., P.-I. № 51173, Bl. 82 ff.)

37 «Документы МИДа Германии», док. 26, с. 52: Պապինը՝ արապին գործերի մինիստր-թիմը, 1912 թ. սեպտեմբերի 26-ին:

38 «Документы МИДа Германии», док. 27, с. 80. Պապինը՝ արապին գործերի մինիստր-թիմը, 1912 թ., սեպտեմբերի 27-ին:

39 «Документы МИДа Германии», док. 27, с. 98.

40 «Документы МИДа Германии», док. 26, с. 91; док. 25, с. 110-111.

41 «Документы МИДа Германии», док. 25, с. 88. Գիմանը՝ Յիզուկի-սովետներին, 1912 թ. նոյեմբերի 5-ին:

42 ADAP, Ser. E, Bd. 2, Dok. 120. Ռիքրեմարտը՝ Պապինին, 1912 թ. ապրիլի 5-ին:

45 «Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941—1945 гг.», т. 1, док. 77, с. 69. **Ձեռնիք՝ Ի. Վ. Ստալինի, 1942 թ. Հեղանակիչի Թ—ԻԵ:**

44 1942 թ. Հեղանակիչի 25-ին նամակայում Քուրթյայի գեղան Քանդրալը այս երկրի պրեմիեր ժեներալի տեղակալի Վա գրույթի ժամանակ կնք, որ սեռ-սաստանք, ինչպես և ստանկներում, Քուրթյայի Կամար ստանի ինժեներն է և որ Քուրթյայի կարգանակի իրոտ շեղարթյունի պահպանելու:  
(„Документы МИДа Германии“, док. 32, с. 124).

45 J. Glascock, op. cit. s. 137.

Սալայնեղադի մտ և Լյուսիտայի Աքրիկայում գերմանական թանակի պարտու-  
թյունի Քուրթյայի կառավարող շրջաններում կրկնակի սեպտեմբր ստան բերնը:  
Գերմանական գեղանի վերաբերմամբ, զարեակիցներն Կալիանակը Է-Ալյանիկի  
ժոտ, Քուրթյայի գեղանի գործիչների կողմից բնականից սեղանային թեթևա-  
թյամբ: Թանկի երանք, ինչպես կում է Պաղենը, կրկն կրկնակի շն զարեկ  
գերմանական թանակի ժամկետային իրենց երկրի Լյուսիտում, արևմուտքում  
և Կարպում: (F. von Papen, Memoirs, London, 1952, p. 493.)

Շեղանակակը, Սեղանակի միտթյունում գերմանական թանակի նուսանք Քուր-  
թյայի կառավարող շրջաններում ժեթ հրամարտարթյուն ստան բերնը: Քուրթյայի  
Գլխավոր շտաբի պետի տեղակալ Ալքը Գլխավորը Գերմանական գեղանական  
կարգից շեթ թաղանում սայն ժեթ ժամանակայիններ, որ սեղանիկն կրկն շեթ  
աջարակն Կարպենկու: գործողարթյունի Արեկյան ժամանակում, որը պետի սպա-  
ճակիցը կեղանային տեղանակարթյունի: („Документы МИДа Германии“, док. 33,  
с. 126. Պաղենը՝ արտաքին գործերի միտթուրթյունը, 1942 թ. զեղանակիչի  
2-ին): Գալեակիցներն Կալիանակի նկատմամբ Քուրթյայի նման սեղ-  
անի մտան է կում Ստամբուլում գրեմար Լյուսիտան Քնյնը, սՔուրթյայի  
բոլորովին շեթ ցանկանա տեղակ Անգլիայի գալու մղուր միտթուրթյունի կ-վից  
(Սեղանի նկարը), Լյուսի կողմից Կարպուրթյուններ է ցանկանում Սուստաներ  
զեթ մեթ արշականի ժամանակ և անկեղտորեն ժամանակում է կրանով, որ շոտ  
թն թիլ կրկնարտե պարթարում մեթ ունիցը գույն շրմանականերեն՝ Կալիկու  
Կամար ստաներին: Այս իմաստով նա ազնի թիլ է շուտարգուրում, շան կրկն-  
թանի պատմարգը վերջնական Կալիանակի վերաբերյալ Քուրթյայի տեղանիցը  
ժարտանիկան կառնանիկն է: („Документы МИДа Германии“, док. 35, с.  
132: **Ձեռնիքը՝ արտաքին գործերի միտթուրթյունը, 1942 թ. զեղանակիչի Թ—ԻԵ:**)

46 ...մին տեղանական Կամարտարտային կարպուրթյան շրմանից միտթուրթյունի արտ  
Քուրթյայի ինքնին շոտ նշանակարթից գեղան է սայտ ազնի շոտ ժամանակու տեղից է  
սայնի նրան ուղեկցող տեղանից կալմը մրենքով, նման շրմամբ շեղանակում է  
տեղանու արտաարգ սաղմանական իրամիտանիկներում: Այս իսկ պատմարտով,— Կա-  
զարում էր Անգլարայում Կանգարական գեղանարգ մանցը Վերնյան Լուսարթյունի  
պրեմիեր միտթուրթյուն և արտաքին գործերի միտթուր միտթուր Կալիկուին,— սեղանում  
նա շեթ ուղում Կալիանայ, որ Ազանայում, իրականում ունի էլ շեթ կամարտիկն  
(„Восток и вторая мировая война“, Секретные и дипломатические доку-

- ments из истории хануна и верою войны. Док. 157, с. 232 «Վերջին Վանդակը Բ. Գալլիթի», 1912 թ. փետրվարի 13—15):
- 47 «Переписка...», т. I, док. 109, с. 88—89. Վ. Չերչիլը՝ Բ. Վ. Գալլիթի, 1912 թ. փետրվարի 1—15:
- 48 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 291.
- 49 «Переписка...», т. I, док. 109, с. 88—89.  
Մեծամասն կառավարությանը ազգում Մեծամասն գրեթե միմյուրի Շարա-  
րայությունների տեսանկյունը և անգլո-թուրքական կոնֆերանսի նախաձեռնե-  
լան Վանաթյունները պարտավում էին Ազտայի բանակայությունների ընդմի  
ժամին ոչ լիով անգլիկություններ: Այնուհանդերձ Պարզայի բազայանականության  
անգլիական գնահատան բազայով լավատեսությունը ընդունվեց բազայաններ  
գուպու («Պարսիսկա...», док. III, էջ 86—87. Բ. Վ. Գալլիթի՝ Վ. Չերչիլի):
- 50 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 292.
- 51 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 293.
- 52 A. Cretziana. The last opportunity, London (1967), p. 57.
- 53 Շուր. В. Л. Исраэлян, Л. Н. Кутяков, Дипломатия агрессора. Германо-  
итало-японский фашистский блок. История его возникновения и краха,  
М., 1967, с. 280.
- 54 У. Черчилль. Вторая мировая война, т. 4, М., 1965, с. 693.  
Բուրքայան պետական գրեթեները պետում էին, որ «Գերմանիայի լրիվատար  
պարտությունը առի՞ն հուր Պալատաներն զանազու մեծագույն զանազու Պար-  
չույն և Ներպայի նամար» (F. von Papen, op. cit., p. 494—495; T. A'as v  
Turkish Foreign Policy 1939—1945, Ankara, 1965, p. 107):
- 55 Շուր. В. Л. Исраэлян, Л. Н. Кутяков, указ. соч. с. 280.  
56 Պարզայի տրայան գրեթեներ միմյուրը մի անգամ չե, որ ախ միայն է աք-  
տանայան, թե «Գերմանիայի Վարաճար պարտությունը, կոնֆարսի նախա-  
բազայանությունը ներպայում և թուր կոնֆերանսի Պալատաներն է թե՛-որ կերպ  
կոնֆերանս զու պարտավումը: Մեծամասնագույն գտնում էր, որ ախ ներքինը, որոնք  
բուր նախյան կար լանեն ներպայի ինգլիկալիտանական պատերազմի նա,  
պետ է կարգի և անգլոմանդայան բյով (ազնակերպեն՝ առճանապահվելու նա-  
մար թուր պարտավումը նկատի են առնում Պարզայան, Լուստաներ, Բուլ-  
գարիան, Լուրալայան, Պալատան և Լուրպարիան» («Венгрия и вторая ми-  
ровая война, док. 157, с. 291):
- 57 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 291.
- 58 «Переписка...», т. I, с. 102.
- 59 Дж. Эрнан. Большая стратегия. Август 1943—сентябрь 1944, М., 1968,  
с. 232—233, 241; Documents on American Foreign Relations, vol. VI, с. 2 Ե,  
60 Միակերպում ազգերի կազմակերպությունում Պարզայի անգլոմանդայան Շարա-  
րայան 1945 թ. փետրվարի 4—11-ը Շարալայում տեղի ունեցած ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի  
և Մեծ Բրիտանիայի կառավարությունների ղեկավարներին շրջմի կոնֆերանսում  
(«Тегеран—Патэ—Потсдам» Сб. документов, М., 1971, с. 157—158)
- 61 1944 թ. զգրուներ, Թուրքական գրեթեներն անգլիկալիտաները գրեթեներն էլ ինա-

զոր շարքի կարեկրով նաևակն էր սովորական զորքերի Ղրթմուճ և Սև ծովում տարած հաղթանակների, (Kriegstagebuch des Oberkommandos der Wehrmacht 1941—1945, Bd. IV/1, S. 810—811.)

62 1944 թ. ապրիլի 20-ին Միջլիսում Մենենկելդուլուն խուսով էր Քուրքիայի ճաշին ոչ թե իբրև լեզու պնտաթյան, այլ ինչպես «Մեծ Բրիտանիայի և նրա գաղութներիցների գաղտնալսի», «նրա սելպես պատանի, որ Քուրքիայան ազգի շունից պահանջին, որ մեկը մեկ սեղան էս զենք զիրքենեք, զս մեկ համար սեղանիկու շարժեր լինե՞ն, Սկից գիտակցարար և նյութապես միշտ պատրաստ գտնվենք,— շարունակեց հայտարարել Մենենկելդուլուն (բառ T. Aislin, cit., p. 121—122).

1944 թ. սեպտեմբերի 2-ին նաևակն Գերմանիայի նա Քուրքիայի գիմնակցական հարաբերություններն իջման ճարին հայտարարությունը Այդ թային Քուրքիայան կառավարությունը քուցազարար ստիպողական թույլ սվեցու Մի հանգամանք, որ լիզին համապատասխանում էր իրերի խնկան գրոթաները Ինչպես ստում ձե՛ Քուրքիան և Գերմանիան արածանկեցին որպես բարեկամներ («Pravda», 30.8.1944, «Большевик» № 16, 1944; H. Knatchbull—Hugessen, op. cit., p. 202; F. von Papen, op. cit., p. 527; KTB-OKW, Bd. IV/1 p. 679). Ճապոնիայի նա Քուրքիայի գիմնակցական հարաբերություններն իջումը 1945 թ. հունվարի 2-ին, իսկ հունվարի 12-ին՝ ըստ լենդ-լիզի սովետական Միության թևներն սեղանիկուց գաղտնակիցներն նազինի համար նեղուցներն բացումը ես արդյունք էր Արևմտյան գաղտնակիցների լիպայսուց ճեղման:

63 1945 թ. փետրվարի 20-ին Անկարայում անգլիական և ամերիկյան զնույանները սեղանիկուցին Քուրքիայան կառավարությունը Ղրթմի կենճերանեմ արդյունքը: Փետրվարի 22-ին Քուրքիայան կառավարությունը պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ճապոնիային, Քուրքիայան կառավարությունը բացահայտերն թեզունեք, որ այդ թային է գիմեկ իրեն ստաշարկան գաղտնակներն ճեղման սուկու...Մենեք պատերազմի մեջ մտանք գերմանացիներն և Ճապոնացիներն զեմ՝ միմիայն գաղտնակիցներն պահանջով.—հայտարարեց Քուրքիայի պրեզիդենտը.—նրանք համար զս երնն ինչ որ նշանակություն ուներ, որի համար էլ պնգում էրնու (İnönü'nün Söylerv ve Demeçleri, İstanbul, 1946, p. 394).

ԳԱՂԵՍՏԻՆԻ ՀԱՐՅՈՒ ԳՅԷ-Ի ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մերեւոյնք արեւելքում ԳՅԷ-ի ազդեցութեան ուժեղացումն ու շրջանի երկրներում երա տնտեսական էքսպանսիայի շափերի մեծացումը արդյունք էին արեւմտագերմանական մի շարք կառավարութիւնների 70-ական թթ. և 80-ական թթ. սկզբին մերձավորարեւելյան շահագործողութեան քաղաքականութեան: Ընթացող դարգացող երկրների նկատմամբ իմպերիալիստական տերութիւնների ընդհանուր քաղաքականութեան հունով, շանաչով խանգարելի հեղափոխական պրոցեսների զարգացումն ու նրանց պահելի կապիտալիզմի ուղեքում, ԳՅԷ-ը արարական, հատկապես նազիթարդյունահանող երկրների հետ փոխհարաբերութիւնների ավելի մկում մեթոդների ու ձեւերի տնական որոնումների մեջ էր, որը երբեմն, թեկուզ և ձեւականորեն, կարծես թե հակասում էր իր գլխավոր դաշնակցի՝ Միացյալ Նահանգների շահերին:

Փամանակակից փուլում ԳՅԷ-ի արարական քաղաքականութեան մեջ կարեւոր տեղ է զբաղում մերձավորարեւելյան ընդհարման կարեւորագույն հարցերից մեկը՝ պաղեստինյանը: Եվ հենց պաղեստինյան հարցի նկատմամբ ֆեզերալ կառավարութեան դիրքորոշման հայելում էլ անհրաժեշտ է դիտել ինչպես մերձավորարեւելյան կոնֆլիկտի նկատմամբ ԳՅԷ-ի դիրքորոշման էվոլյուցիան, այնպես էլ ընդհանրապես երա մերձավորարեւելյան քաղաքականութիւնը: Արեւմտյան Գերմանիայի կառավարութեան առաջ ժամանակակից փուլում հանապազօր կեղծում է մերձավորարեւելյան համապարփուկ կարգավորման շրջանակներում պաղեստինյան հարցի լուծման ուղիները հստակորեն ձեւակերպելու խնդիրը: Ներկայումս գործնականում ԳՅԷ-ի քաղաքական քաղաք ուժերի կողմից դիտակցվում է այդպիսի կապը:



Սովետական պատմարան է. Գժիտրինը դիտել է ավել, որ պաղեստինցի արարների որպես պաղեստինյան ժողովուրդ համախումբը պատմական մի գործընթաց է, որի վկանները մենք ենք՝ և այդ պրոցեսի հետ մեկտեղ երկու տասնամյակ է, որ շարունակ հարկ է լինում հիմնավորել պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման, ընդհուպ սեփական պետականություն ստեղծելու իրավունքը: Այժմ Խորալիյց բացի ոչ ոք չի համարձակվում քացահայտորեն հերքել պաղեստինյան ժողովրդի այդ իրավունքը: Անականորեն այժմ այդ իրավունքի գործադրման օգտին է հանդես գալիս նաև ԳՅԸ-ի կառավարությունը:

Սակայն պաղեստինյան հարցը որպես կազմիտի, ԳՅԸ-ի ուշադրությունը գրավեց լուրջ 70-ական թթ.: Մինչ այդ, հետևելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1967 թ. նոյեմբերի 22-ի բանաձևին, Բեռլինում խոսում էին սոսկ բազմականների հարցի՝ կարգավորման անհրաժեշտության մասին և ընդգծում, որ պաղեստինցի գաղթականների խնդիրը մերձավորարևելյան կոնֆլիկտի առանձնապես ողբերգական շերտն է: Ինչպես հետագայում կանցիւր Վ. Բրանդտը նկատեց, այդ ձևակերպման մեջ առաջին հերթին շեշտվում էր հարցի մարզկային կողմը և ԳՅԸ-ը ակտիվորեն մասնակցում էր գաղթականներին օգնության ցույց տալու ՄԱԿ-ի հատուկ ժրագրերին՝ 1967 թ. սրամադրիլով 50 միլիոն մարկ: Պաղեստինյան հարցի վերաբերյալ առաջին ու ընտրաբարական հայտարարություններին մեկը 1972 թ. մայիսին արտաքին գործերի մինիստր Վ. Շեկելի ելույթն էր, որում նշվում էր, որ մերձավորարևելյան կոնֆլիկտի կարգավորումը բանհարին է թվում առանց պաղեստինյան հարցի արդարացի լուծման, այլ խոսքով՝ Պաղեստինի հարցի արդեն չէր տարանջատվում մերձավորարևելյան կարգավորման մյուս խնդիրներից, ինչպես նախկինում: Պաղեստինի հարցում ֆեդերալ կառավարության դիրքն ավելի հստակ ձևակերպմամբ սահմանվեց 1973 թ. հոկտեմբերյան պատերազմից հետո, երբ նավթարդյունաբանող արաբական երկրների նավթային ընդհատի սպառնալիքը, անկասկած նաև ԱՄՆ-ի պրոխորայնելյան կուրսն անվերապահորեն աշակցելու հարցում լիամասշտաբ, հանգեցրին այն բանին, որ ԳՅԸ-ը կողմ քվեարկեց Եվրոպական տնտեսական միության (ԵՏՄ) 1973 թ. նոյեմբերի 6-ի հայտնի հայտարարությանը: Այդ հայտարարության մեջ նշվում էր, որ Մերձավոր արևելքում խաղաղություն հաստատելիս բանհրաժեշտ պիտի լինի հաշվի առնել պաղեստինցիների օրինական իրավունքները և ոչ թե լուրջ սուշադրության առնել գաղթականների հարցը ինչպես Անվտանգության խորհրդի Ց 242 բանաձևում

էր՝ Այդ հայտարարութիւնը հետագայում հիմնարար դարձաւ պաղեստինեան հարցին ԳՖՁ-ի մտտեցման համար և երբեմնակի, այս կամ այն շափով, լրացվեց ու մեկնաբանվեց պաշտօնական անձերի կողմից:

1974 թ. ապրիլին կանցելի Բրանդան արգեն հիշեցնում էր այն մասին, որ «պաղեստինցիներին կյանքը, իրավունքն ու ապագան» կայուն և արդարացի խաղաղութիւն անբաժան տարրերն են, ոչ թե երկրաշրջանում նպեստամի քաղաքական կարգավորման մի մասը, Պաղեստինի հարցը «մարդկային» խնդրից վերանցնել «քաղաքական» հարցի: Նեղերաւ կառավարութիւնը դա կապակցեց թալմ մարզերի քաղաքական կառուցվածքի հարցի հետ, որտեղ ապրում են պաղեստինցիները և կամ որտեղ վերադառնալու են, այլ խոսքով՝ Հորդանան զետի արեմտյան ափի և Ղազալի գոտու քաղաքական վարչակառուցի խնդրի հետ: Գրա հետ մեկտեղ ԳՖՁ-ի կառավարութիւնը խուսափեց աշակցել պաղեստինեան սեփական պետութիւն ստեղծելու սկարծիքին՝ զտնելով, որ դա կնշանակէր տիրազարկութիւնների կանխում՝ մինչդեռ ԳՖՁ-ին սանհրածնշտ է հաշվի առնել այդ ուղղութիւնը անմիջականորեն մասնակից կողմերի նախաձեռնութիւնները՝:

Պաղեստինի հարցը ԳՖՁ-ի դիվանագիտութիւնն սկսեց հարաճուն հոգս պատճառել Թարատի համարարական հայտնի վեհաժողովից հետո, որի 1974 թ. հոկտեմբերի 28-ի բանաձեւում Պաղեստինի ազատագրութիւն կազմակերպութիւնը (ՊԱԿ) ճանաչվում էր Պաղեստինի արար ժողովրդի որինական միակ ներկայացուցիչ և այդ հիմամբ էլ ՊԱԿ-ի ղեկավար Ծ. Արաֆատին հնարավորութիւն էր սրվում հանդես գալ ՄԱԿ-ում: Իսրայիլական պատմարան Ա. Նոյշտադը գտնում է, որ հենց 1974 թվից ԳՖՁ-ը սվելի շատ հակված է արարական համառ խնդրանքները՝ հատկապես պաղեստինեան հարցը արարների հայեցակետով լուծելու ուղղութիւնը՝: «Շպիգելը հանդեսի իր հարցադրույցի մէջ Ծ. Արաֆատը նշում էր, որ ԳՖՁ-ը ՄԱԿ-ի 19-րդ ընդհանուր ժողովում (1974 թ.) պետք է հանդես գա այն բանի օգտին, որ պաղեստինցիների հարցն առաջիկայում դիտվի որպես ոչ թե գաղթականների հարց, այլ որպես իր նակատագրի համար պայքարող ժողովրդի ձգտում: «Մենք՝ պաղեստինցիներս, —ասում էր նա, —հուսով ենք, որ ֆնդերաւ կառավարութիւնը ծայրահեղ զեպում լեզուութիւն կպահպանի, և թե արդեն իսկ կանդնած լէ պաղեստինեան իրավունքի կողմում»:

1974 թ. նոյեմբերի 19-ին ՄԱԿ-ում Պաղեստինի շուրջը եղած վիճարանությունների ընթացքում ԳՖՆ-ի ներկայացուցիչ Ֆոն Վեյմարը այն սուպավորությունը թողեց, որ իր երկիրն իբր աչակցում է ՊԱԿ-ի դիրքորոշմանը: Նա հանդես եկավ հզուտ պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքի, հզուտ մերևավորարենկյան ընդհարման կարգավորման շրջանակներում արարական սեփական պետական իշխանության ստեղծման՝ մի հողատարածքի վրա, որի բնագրավմանը Բուրայելը պետք է վերջ տա, կամ էլ ընարքի մի այլ լուծում: Եվ սակայն, ԳՖՆ-ի արտաքին գործերի մինիստր Գեեշերը Բոննի Բունդեստագում վրձնականորեն սահմանազատվեց այդ հատից, հայտարարելով, որ այն կանխորոք չի ընթերցել, թեկուզ և, գտնում է, որ «ՊԱԿ-ը ուշ կամ շուտ րանակցությունների մասնակից է դառնալու»<sup>9</sup>: Իսկ 1975 թ. ապրիլի 14-ի մամուլի հայտարարության մեջ, արդեն առանց Բուրայելի հավանական քննադատական վերարքերմունքի նկատմամբ մտավախության, Գեեշերը շրաժարվեց պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի վերարքերյալ 1974 թ. ՄԱԿ-ում ԳՖՆ-ի պատվիրակության հայտարարությունից<sup>10</sup>:

Այն, որ խաղաղ որևէ կարգավորում չի կարող շրջանցել պաղեստինցիների ճակատագիրը և ԳՖՆ-ն էլ, ինչպես գտնում էր Գեեշերը, սպարտավոր է իրապաշտության անհրաժեշտ զգացողություն դրսևորելու հաստատում է նաև ՊԱԿ-ի հեա շփումների հաստատման փաստը: Այսպես, 1974 թ. դեկտեմբերին Բունդեստագի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Գ. Շրյոգերը (արտաքին գործերի նախկին մինիստր) հանգիպում ունեցավ Յ. Արաֆատի հեա, ինչին Բոննում իտրայելական դեսպանությունն աղարդյունարեն փորկեց խանդարելու Եվ սակայն, դա երբեք էլ չէր նշանակում, որ ԳՖՆ-ը որևէ քայլ էր ձեռնարկում ՊԱԿ-ի ճանաչման ուղղությամբ, ինչը պարզորոշ ու աներկրա շեղավեց կանցլեր Լ. Մմիզաի կողմից. «Քանի դեռ ՊԱԿ-ը հտտակորեն չի ճշտորոշել իր դիրքորոշումը երկու հարցերում, նախ՝ երաշխավորված սահմանների պայմաններում Բուրայելի գոյության իրավունքի և ապա ահարենկական քայլերից հրաժարման խեղրում, ապա չի կարելի լրերեն մտածել ՊԱԿ-ի ճանաչման մտտին: Թեկուզ և դա չի նշանակում, որ ԳՖՆ-ը չի հասկանում պաղեստինցիների հուսակտուր վիճակն ու կարիքները: Այնուամենայնիվ գրանք երկու տարրեր բանեք են»<sup>11</sup>:

Եվ որպեսզի չզոգոհեցնեն ԱՄՆ-ին, որը «իսթ կնայեր ըստ իւր-  
թյան ՊԱԿ-ի պաշտոնական ճանաչմանը համազոր որևէ քայլէ»<sup>17</sup>,  
ԳՅԸ-ը և ԵՏՄ-ը Եվրոպական-արարական երկխոսութիւն կազմակերպ-  
ման կապակցութեամբ հանդես եկան ՊԱԿ-ին դիտորդի պաշտոնական  
ստատուս տալու ղեմ, Արարական պետութիւնների լիգային առաջար-  
կելով բանակցութիւնների ընթացքում փաստաթղթերում շնչել պատ-  
վիրակների ազդութիւնը:

Ճանաչելով պաղեստինեան ժողովրդի ինքնորոշման իրավունքը,  
ԳՅԸ-ը ՊԱԿ-ին կոչ արեց Իսրայելին և դրանով վերացնել տայգ ճանա-  
պարհին կանգնած Հոգերանական և քաղաքական դժգոհութիւններէ  
խոչընդոտելու: Եւրոպայի ճանապարհին այլընտրանք չկա և երբ այդ  
հարցը լուծվի, այն ժամանակ էլ երրորդ պետութիւնների կողմից ՊԱԿ-ի  
ճանաչումը կզարգարի հարց լինելուցը<sup>18</sup>: Բոննի պաշտոնական անկիւնք  
գտնում էին, որ պաղեստինցիների իրավունքի և Իսրայելի իրավունքի  
միջև առկա է ներքին հասակ փոխկախովածութիւն, երկուսն էլ պետք է  
ուշադրութեամբ անվեն: ՊԱԿ-ը և Իսրայելը պետք է մեկը մյուսին ընդ-  
առաջ ղեան, ղեն զցելով մեկ կամ մյուս կողմի տպատմական լավա-  
զույն իրավունքի վերաբերյալ ամեն մի միտք<sup>19</sup>: ՊԱԿ-ի և պաղես-  
տինցիների նկատմամբ ԳՅԸ-ի այդ վերաբերմունքը, երանց՝ որպես  
ժողովրդի, արդարացի իրավունքի համահավասարեցումը այն պե-  
տութեան իրավունքին, որը ստանտակ է տվել այդ ժողովրդի ինքն-  
որոշման իրավունքը, Թիւ-Ավիվում խիստ ցնեազատութիւն և դժգո-  
հութիւն տոտը բերեց<sup>20</sup>: ԳՅԸ-ի և Իսրայելի միջև պաղեստինեան հարցի  
չուրքը քաղաքական տարաձայնութիւնն ազելի ու ազելի սրվեց: ԳՅԸ-ը,  
ճանաչելով պաղեստինցիների պետականութիւն ունենալու իրավունքը,  
Եւրայելցիներին քաղաքականորեն զցեց ճակատագրի ցմայելին»,—  
հայտարարում էին Իսրայելում: Բոննում Արարական պետութիւնների  
լիգայի ներկայացուցիչների և ԳՅԸ-ում ՊԱԿ-ի գրասենյակի վարիչ  
Ա. Տրանչի՝ արևմտագերմանական պետական գործիչների հետ ակ-  
տիվ շփումներին, ԳՅԸ-ի պարբերական մամուլում և հեռուստատեսու-  
թեամբ Յ. Ալտաֆաթի ելույթներին ի պատասխան Իսրայելը ֆեզերալ  
կառավարութեանը կոչ արեց որպես ժամադասպանների օրդանը Բոն-  
նում փակել ՊԱԿ-ի գրասենյակը<sup>21</sup>: Սակայն այդ կոչն անպատասխան  
մնաց, և ՊԱԿ-ի նկատմամբ Բոննի պաշտոնական դիրքորոշումը չփոխ-  
վեց:

Պաղեստինի հարցում ԳՖՀ-ի դիրքի նշուման մեջ որոշ նորերանգ-  
ներ ի հայտ եկան 1977 թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում: Ը. Զ.  
Գենշերը ՄԱԿ-ի ամբիոնից հայտարարեց, որ պաղեստինցիների ինքնու-  
րոշման իրավունքի ներքո ԳՖՀ-ը հասկանում է շիր ազգային ինքնու-  
թյունը արդյունավետորեն արտահայտելու իրավունքը՝ «Հայրենիքի ան-  
հրաժեշտությունը»: Եվ ելնելով դրանից, մինիստրի ելույթում պարզա-  
բանվում էր. ֆեդերալ կառավարությունը դեմ է բռնազրավված արա-  
բական տարածքներում իսրայելական բնակավայրերի հիմնադրմանը<sup>17</sup>:

1979 թ. մարտին «Եգիպտոսի և Իսրայելի միջև խաղաղության  
պայմանագրի» կնքմամբ ավարտված քննադեղյան բանակցություն-  
ները բաց պահեցին պաղեստինյան ժողովրդի հարցը: ԳՖՀ-ը հիմ-  
նականում հավանություն ավելի քան Ֆեմպ-դեիդյան համաձայնագրի ար-  
դյունքին, սակայն արարական երկրներում իր դիրքերն ամրապնդելու  
նպատակով հանդես եկավ հոգուս պաղեստինցիների պետական ինք-  
նուրույնության իրավունքի, ընդունելով, որ Մերձավոր արևելքում հա-  
մապարփակ խաղաղության բռնալին պաղեստինյան հարցի լուծումն է,  
որը ներառում է Հորդանանի արևմտյան ափի ու Գազայի գոտու ա-  
պագայի և ինքնուրոշման իրավունքի հարցերը<sup>18</sup>: Իսկ ԵՏՄ-ի 1979 թ.  
մարտի 26-ի հայտարարության մեջ էլ նշվեց, ցանկալի է, որ Ֆեմպ-  
դեիդյան պայմանագիրը հաշվի առնի «Պաղեստինյան ժողովրդի ներ-  
կայացուցիչներին, որոնք պետք է մասնակցեն բանակցություններին»<sup>19</sup>:  
Գենշերը 1979 թ. սեպտեմբերի 3-ին որոշակիորեն ասաց նաև, թե  
ԳՖՀ-ի կարծիքով մերձավորարևելյան կարգավորման վերաբերյալ բա-  
նակցություններում ովքեր պետք է ներկայացնեն պաղեստինցիներին.  
հենց իրենց՝ պաղեստինցիներին է պատկանում իրավունքը որոշելու,  
թե ո՞վ պետք է ներկայացնի իրենց և թե ուրիշ ոչ որ չի կարող հա-  
վանել այդ իրավունքին<sup>20</sup>: Իսկ նյրոպական խորհրդի 1980 թ. հու-  
նիսի 13-ի հայտարարության մեջ, որից 80-ական թթ. սկզբին ձև-  
կանորեն կառույց էր ԳՖՀ-ը, արդեն ավելի որոշակիորեն շեշտվում էր,  
որ բանակցություններին պետք է մասնակցեն պաղեստինյան ժողո-  
վուրդն ու ՊԱԿ-ը<sup>21</sup>:

70-ական թթ. վերջին թվում էր, որ ԳՖՀ-ը ուր որ է հանաչելու է  
ՊԱԿ-ին: ԳՖՀ-ի կառավարող շրջանների երևելի ներկայացուցիչներից  
մեկը, Բուդեհատագում Ալտա դեմոկրատական կուսակցության (ԱԳԿ)  
գեպուտատ Յու. Մեյլեմանն իր կուսակցության համապումարում նշեց,

որ Իսրայելը պարտավոր է անհաշի պաղեստինցիների ինքնորոշման հազմակերպություններն ու նրանց կազմակերպությունը՝ ՊԱԿ-ը, որի հետ և պետք է բանակցություններ մոնտրվի: ՊԱԿ-ն, իր հերթին, պետք է վերջ տա ահաբեկչական գործողություններին և անալի Իսրայելին<sup>22</sup>:

Քննադատելով ԳՅԸ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը, շարինգերյան ԵՊԻ վելաբա հեղանքով գրում էր, որ նկատվում է բազմաթիվ կազմակերպության առաջնորդի, ՊԱԿ-ի ղեկավար Արաֆատի հետ հանդիպման նկատող գերմանացիների հեղեղ<sup>23</sup>: 1979 թ. հուլիսին Յու. Մելլեմանը (այն մարդը, ում վատահում է ԳՅԸ-ի արտաքին գործերի մինիստր Գենշերը), իսկ 1979 թ. սեպտեմբերին Նախկին կանցլեր ԳՄԿ-ի և Ազգային անվտանգության ինտերնացիոնալի Նախագահ Վ. Բրանդտը հանդիպում ունեցան Յ. Արաֆատի հետ<sup>24</sup>: ՊԱԿ-ի ղեկավարի հետ արևմտադերմանական երկու ազգային գործիչների զրույցների դաստն իսկ, անկախ այն բանից, թե ի՞նչ պատրվակով դրանք տեղի ունեցան, բացառապես դրանքումն էր Ռոննի՝ մերձավորարևելյան կարգավորման պրոցեսին, որպես քաղաքական ուժ մասնակցելու նկրտման, առանց սակայն իր վրա վերցնելու արաբա-իսրայելական բախման միջնորդակությունը առաջնությունը: Ընդգիմագրությունը այդ հանդիպումները զնահաանց որպես շեղում Արևմտաքի բնդհանուր մոտեցումից՝ ՊԱԿ-ի հետ ընտել բանակցությունների սեղանին: Ընդգիմագրության ղեկավար Հ. Կուր, քննադատելով պաղեստինյան հարցում ԳՅԸ-ի կառավարության գիրքորոշումը, նշեց, որ Իսրայելի հետ փոխհարաբերությունները հենց դրա հետևանքով են վատթարացել<sup>25</sup>: ԳՅԸ-ում Իսրայելի ղեկավար Մերոցը ֆնդերալ կառավարությունից պահանջեց պարզ ու հստակ սահմանադրումել Յ. Արաֆատի հետ Ռունդեստագի դեպուտատների հանդիպումներից: Մակայն կառավարությունը հրաժարվեց վերջիններիս գործողությունները զատապարտելուց<sup>26</sup>:

ԳՅԸ-ի մերձավորարևելյան քաղաքականությունում նշմարվող բարաբասիրական հակումը և նրա արտաքին-քաղաքական հայտարարություններում այս ժամանակաշրջանում պաղեստինյան հարցի լուծման նշանակության շեղավորումը մի կողմից հարկ է դիտել որպես արևմտյան առաջատար տերություններից մեկի Մերձավոր արևելիքում քննադնիդյան պրոցեսը փակուղուց դուրս բերելու փորձ, որը միաժամանակ իր վրա է վերցնում Նույնիսկ պահպանողական վարչակարգ ունեցող արաբական երկրներում հակաարևմտյան տրամագրությունները սանձահարողի գերը: Մյուս կողմից ԳՅԸ-ը շանում



էր զսպել արարական աշխարհում բնեւացումը, որ կապված էր «Տո-  
կունութիան և հակազդեցութիան ճակատին» գոյութիան հետ: Գրա հետ  
մեկանով ԳՅԷ-ը, կատարյալ իրապաշտութիամբ վերաբերվելով 80-ական  
թթ. սկզբին Մերձավոր արևելքում ստեղծված իրավիճակին, Իսրայելի  
վրա ճնշում էր բանեցնում մեկ ու միակ նպատակով. Քույլ շատ,  
որ արարական ազգային-ազատագրական ուժերի «մախացման» խթան-  
ելիչներից մեկը հանդիսացող Իսրայելը խուլքնդատի արարական նավթ-  
արդյունաբերող երկրներից Արևմտյան Նիլոսյա, այդ թվում ԳՅԷ  
հասող նավթի անընդմեջ մատակարարումը: Դեպի զարգացած կապի-  
տալիստական երկրներ ԳՅԷ-ի արտահանության կրճատումը արևմտա-  
գերմանական մոնոպոլիտներին մղեց ավելի լայնորեն ներթափանցելու  
արարական շուկաները և դրա համար էլ պաղեստինցիների ինքնորոշ-  
ման իրավունքի նկատմամբ ֆեղերալ կառավարութիան դրական վերա-  
բերմունքը կարժես թե արարական աշխարհ մտնելու ամացաթղթներից  
մեկն էր:

Գրա հաստատումն էր 1981 թ. ապրիլի 30-ին կանցլեր Եմիդատի  
ելույթը, որի մեջ նա հայտարարեց. «Իսրայելցիները մի որ պետք է  
ընդունեն, որ պաղեստինցիներն իրավունք ունեն մտածելու իրենց ճա-  
կատագրի մասին, որը և պետք է ներկայացնեն: Ուրիշ ոչ որ պետք չէ  
հաստատի դա, բացի իրենցից: Եվ եթե նրանք պետք է ստեղծեն սե-  
փական պետություն կամ ցանկանան այդ, բոլոր դեպքերում որում են  
իրենք: Նրանք պետք է ունենան պետական ինքնուրույնության իրա-  
վունք: Բացի դրանից, նա նշեց, որ եթե ՊԱԿ-ը Արևմուտքում նախկի-  
նի նման, առանց տարբերություն զնելու նրա ներսի խմբավորումնե-  
րի միջև, դիտվելու է իրեն ահարեկիչների կազմակերպություն, եթե  
այդպիսի վերաբերմունքը շարունակվելու է նաև այսուհետև, ապա  
դա լավագույն մեթոդն է ՊԱԿ-ին հանձնել Մոսկվայի գերկը: Իսկ դա  
անխուհեմ էս<sup>27</sup>: 1982 թ. Լիբանանի վրա իսրայելական արգեսիան ԳՅԷ-ի  
կողմից պարզապես դատապարտվեց: Բունդեստագում լոկ սակավաթիվ  
ձայնեք թողորեցին պաղեստինցիներին քաղաքականապես և ռազմա-  
կանորեն ոչնչացնելու Իսրայելի մտադրութիան դեմ<sup>28</sup>:

1982 թ. հոկտեմբերի 1-ին ԳՅԷ-ի կանցլեր զարմավ Լ. Կուլը  
(ՔԴՄ-ՔՄՄ) որը ԱԳԿ-ի հետ խմբակցութիան մեջ մտնելով կազմեց  
նոր կառավարությունը: Այս անգամ էլ արտաքին գործերի մինիստր  
զարմավ Լ. Դ. Գենշերը Պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի  
հարցում ԳՅԷ-ի վերաբերմունքի փոփոխություն կրելու առաջին նա-



խանչնաններն արդեն նկատվեցին նախքան նոր ընտրությունը: Այսպես, Գենչերը գնուն Լ. Եմիգաի կառավարության արտաքին գործերի մինիստր եղած ժամանակ, 1982 թ. հուլիսին ղեպի Եզրպատս և Լորդանան իր ուղևորությունից վերադարձին հայտարարեց, որ պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի կենսագործումը մեծ զոճարությունների հետ է կապված, և ԳՖԼ-ն ու ԵՏՄ-ի նրա ընկերակիցները այժմյան իրազրության մեջ սպետք է մտածեն պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի հարցում իրենց դիրքորոշումը նշտորոշելու մասին<sup>29</sup>:

Կանցլեր Կոլի կառավարական հայտարարության մեջ պաղեստինցիների ինքնորոշման իրավունքը կասկածի տակ չլրվեց, սակայն ընդգծվեց, որ Պաղեստինի ժողովուրդն ինքը պետք է որոշի, թե ո՞վ պետք է իրեն ներկայացնի բանակցություններում, իսկ ՊԱԿ-ի նկատմամբ Ֆեդերալ կառավարության վերաբերմունքը մնում է նախկինը, այն կախում է ունենալու Բարալիլի նկատմամբ ՊԱԿ-ի վերաբերմունքից, ինչը որ պետք է պարզ ու հստակ արտահայտվի անվտանգ սահմաններում Բարալիլի գոյության իրավունքի նանալմամբ: Գենչերը գտնում էր, որ ՊԱԿ-ն այժմ գտնվում է պարզունացման ճանապարհին և հարկ է հուսալ, որ այդ ընթացքում հանգելու է Բարալիլի նանալմանը<sup>30</sup>:

1983 թ. մայիսի 4-ի իր կառավարական հայտարարության մեջ կանցլեր Լ. Կոլը կարճառոտ բնութագրեց այն հիմնական սկզբունքները, որոնց հենվելով Ֆեդերալ կառավարությունը մտադիր է վարել իր մերձավորարևելյան քաղաքականությունը: Մեր մերձավորարևելյան քաղաքականությունը կողմնորոշված է Բարալիլի գոյության իրավունքին, պաղեստինցիների ինքնորոշման իրավունքին և բնության գործադրումից փոխադարձաբար հրաժարվելուն<sup>31</sup>:

Այսպիսով, կարելի է հավաստիորեն ասել, որ պաղեստինյան հարցը 80-ական թթ. ևս մնում է ԳՖԼ-ի մերձավորարևելյան քաղաքականության կարևոր մի տարրը:

ПАЛЕСТИНСКАЯ ПРОБЛЕМА В  
БЛИЖНЕВОСТОЧНОЙ ПОЛИТИКЕ ФРГ

Резюме

В ближневосточной политике ФРГ важное место занимает палестинская проблема. И именно в спектре отношения федерального правительства к палестинской проблеме раскрывается эволюция позиции ФРГ к ближневосточному конфликту, в частности, и ее ближневосточная политика вообще.

Признавая право палестинского народа на самоопределение ФРГ призывает ООП признать право Израиля на существование.

- 1 Е. Дмитриев, Палестинский узел, М., 1978, с. 288.
- 2 *Zeitungsbericht*,
- 3 Bulletin des Presse- und Informationsamtes der Bundesregierung, 13-12-1969, № 153, S. 1238; 26-04-1974, № 50, S. 492.
- 4 Bulletin, 23-05-1972, № 60, S. 582.
- 5 „Orient“, 1973, № 4, S. 179.
- 6 Bulletin, 19-04-1974, № 49, S. 473; 26-04-1974, № 50, S. 492.
- 7 A. Neustadt, Die deutsch-israelische Beziehungen im Schatten der EG — Nahostpolitik, Frankfurt a. M., 1983, S. 281.
- 8 „Der Spiegel“, 7-10-1974, № 41, S. 151.
- 9 „Der Spiegel“, 23-12-1974, № 52, S. 18.
- 10 *الاعلام، 14 نيسان 1975*
- 11 „Le Figaro“, 3-02-1975.
- 12 „The Financial Times“, 14-02-1975.
- 13 *الاعلام، 21 آذار 1975*
- 14 Bulletin, 2-04-1975, № 42, S. 405; 24-09-1975, № 116, S. 1153; 10-12-1975, № 132, S. 1262; 11-02-1977, № 12, S. 109.
- 15 „Die Zeit“, 28-11-1975.
- 16 H.—D. Genscher, Deutsche Außenpolitik, Bonn, 1977, S. 222.
- 17 Bulletin, 27-06-1978, № 69, S. 651.
- 18 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 104, Bonn, 1978, S. 4961.
- 19 „Dritte Welt“, Dokumentation, Bonn, 1979, S. 75.
- 20 Bulletin, 6-09-1979, № 102, S. 950.
- 21 Bulletin, 17-05-1980, № 71, S. 599.
- 22 „Das Wichtigste ist der Frieden“, Dokumentation des Verteidigungspolitischen Kongresses der FDP, Baden-Baden, 1980, S. 55.
- 23 „Die Welt“, 29-08-1979.
- 24 „Christian Science Monitor“, 15-08-1979.

- 25 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 118, Bonn, 1979 S. 1722—  
—1723.
- 26 „Frankfurter Allgemeine Zeitung“, 10-07-1979; „Die Welt“, 13-07-1979.
- 27 Bulletin, 6.05-1981, № 40, S. 346.
- 28 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 121, Bonn, 1982, S. 6446.
- 29 „Frankfurter Allgemeine Zeitung“, 17-07-1982.
- 30 Bulletin, 11-11-1982, № 100, S. 995—996; 18-01-1983, № 20, S. 188; „Frank-  
furter Allgemeine Zeitung“, 7-02-1983.
- 31 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 124, Bonn, 1983, S. 72.

## Մ. Տ. ՔՈՋԵՅԱՆ

## ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՊԱԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԻԼԹԻՉԱՄ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ

Օսմանյան կայսրության ֆեոդալական ինստիտուտների շարքում իր ուրույն տեղն ունի հարկահանության կապալային, այսպես կոչված՝ իլթիզամի համակարգը: Ակիզը առեկտով կայսրության պատմության առաջին հարյուրամյակներում, այն գոյատևել է ընդհուպ մինչև XIX դ. վերջերը և, բնականաբար, խոր հետքեր է թողել երկրի սոցիալ-տնտեսական կյանքում:

Իլթիզամը վաղուց գտնվում է Թուրքիայի միջնադարյան և նոր պատմությունն ուսումնասիրող մասնագետների ուշադրության կենտրոնում: Տարբեր աշխատություններում սույն հարցին անդրադարձել են ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան հեղինակները<sup>1</sup>: Սակայն մինչև որս այն հատուկ ուսումնասիրության առարկա չի եղել: Այս առումով ներկա աշխատությունը իլթիզամի էությունը և զարգացմանը նվիրված առաջին փորձերից մեկն է և, հետևաբար, չի կարող հաճուհանել սպառիչ լինելուն: Ի՞նչ բան է իլթիզամը, ե՞րբ և ի՞նչ պայմաններում է սկիզբ առել, զարգացման ի՞նչպիսի փուլեր է անցել և ինչ դեր է խաղացել կայսրության սոցիալ-տնտեսական կյանքում:

Պետական հարկերի գանձման իրավունքի վաճառքը մասնավոր անձանց՝ որոշ գրամական փոխհատուցումով, որը լայն տարածում էր գտել Օսմանյան կայսրության տարածքում, պատմական գրականության մեջ հայտնի է որպես իլթիզամի համակարգ:

Ինչպես հայտնի է, առևտրից, արհեստներից և հողագործությունից ստացված եկամուտները կուտակվում էին մայրաքաղաքում գտնվող պետական գանձատնում (harine-i ümera): Եկամտի ազդյունները կոչվում էին մուկատաաներ (mukataa)<sup>2</sup>: Օրինակ, մետաքսի արտադրությունից և առևտրից կորզվող հարկերի և տուրքերի միագումարը կոչվում էր մետաքսի մուկատաա (ipek mukataasi), աղի արդյունահանումից ստացվող եկամուտը՝ աղահանքերի մուկատաա (tuz mukataasi) և այլն:

Յուրաքանչյուր մուկատաայի վարչութուն կառավարվում էր գործերի կառավարչի (Emin) կողմից: Այս վերջինս իր աշխատանքի գիմաց ստանում էր որավարձ, կամ էլ իր անօրինությունն տակ զանվող մուկատաայից զանձված հավելյալ գումարը յուրացնում էր: Սակայն նկատի առնելով այն հանգամանքը, որ էմինները շահագրգռված չէին պետություն կամուտաներն ավելացնել, վերջինս աստիճանաբար սկսեց նախապատվություն տալ մուկատաաններից հարկեր զանձելու իրավունքը կապալային հիմունքներով (ber yech-l iltizam) վաճառքի հանձնում: Այսպես սկիզբ առավ իլլիզամի ինստիտուտը:

Օսմանյան ժամանակագրություններում և նրանց հիման վրա շարադրված հայրենական և արտասահմանյան ուսումնասիրություններում գերիշխում է այն տեսակետը, որի համաձայն իլլիզամը արմատավորվել է Օսմանյան կայսրությունում XVI դ. կեսերից սկսած: Նման կարծիքի հետ չի կարելի համաձայնել, քանի որ վերջին տասնամյակներում հայտնաբերված արխիվային փաստաթղթերը վկայում են, որ իլլիզամը գործություն է ունեցել շատ ավելի վաղ: Նույնիսկ թուրք պատմարան Յ. Յուզելը, առայժմ մեզ անհայտ աղբյուրների վրա հենվելով, պնդում է, որ այն կիրառվել է Օսմանյան պետության հիմնադրման օրից: Պարզապես XVI դ. կեսերին այն տարածվել է նաև հողից զանձվող հարկերի վրա և վերածվել մի ամբողջական համակարգի:

Իլլիզամի էությունը հետևյալն էր: Յուրաքանչյուր տարի կրոնական տոներից մեկի, հաճախ ուսմադանի, նախօրյակին մայրաքաղաքում և զիլայիթների կենտրոններում մուկատաաները անուրդի էին հանվում: Սովորաբար այդ իրավունքին տիրանում էին ամենաբարձր կապալագին առաջարկողները, որպես կանոն՝ պետական բարձրաստիճան պաշտոնյաները: Այդ անձինք ստանում էին մյուլթեզիմ (իլլիզամի հանձնառու) մականունը:

Այն պաշտոնյան, որը մուկատաայի նկամուտների շափը տեղում որոշում և անմիջակունքորեն գանձում էր հարկերը, կոչվում էր ամիլ (amil): Իլլիզամի տրվող մուկատաաների ամիլները հենց իրենք մյուլթեզիմներն էին: Պետության կողմից նշանակված էմինները տեղերում հսկում էին մյուլթեզիմների գործունեությունը: Ծ՛վ էմինը՝ և՛ ամիլը առանձին մատյաններում գրանցում էին հարկերի տեսականին և շափը, ապա երկու մատյանների տվյալները համեմատում իրար հետ: Սրանով պետությունը շահում էր թույլ շտալ, որպեսզի մյուլթեզիմը յուրացնի նկամուտների մի մասը:

Քանի որ մյուսթեղիմը ի վիճակի չէր անձամբ շրջել ողջ գավառը և գրազվել հարկահանությանը, նա վարձում էր գործակալներ, որոնք օրավարձով հարկահավաքի պաշտոն էին կատարում: Սովորաբար ամենակամատարբը մուկատաանները բաժին էին հասնում մայրաքաղաքի շյուրուկրատիայի ներկայացուցիչներին, երբեմն էլ՝ խոշոր սիփահիներին<sup>9</sup>: Հաճախ էր պատահում, որ դեռ վարձակալության ժամկետը չըրացած, պետութունը իլթիզամը վերազանառում էր ավելի բարձր կապալագին առաջարկողին: Ըստ Թուրք հեռագրատող Մ. Ակղազի վկայության, Բուրսա քաղաքի Դատական արձանագրությունների արխիվում (ser'iyye sicilleri) պահվում են այս փաստը հաստատող բազմաթիվ նյութեր: Բերնեք գրանցից մեկը:

«Բուրսա քաղաքի կազմի 17 սեչերի 864 (16 մայիսի 1557) տարեթվով գիմումից: Հեծեյազորի զորամասի 21-րդ վաշտից Արզուլքերիմը, 192-րդ վաշտից Մեհմեդը և 122-րդ վաշտից Իսկենդերը (կազմին) գիմեցին հետևյալ խնդրանքով. նթն Բուրսայի խոստա (արքունական) մուկատաաններից գանձվող մետաքսի, նծարի և մաքսերի իլթիզամը խլվի այն երեք տարով վարձած ոմն Ալիից և վաճառովի Իրենց, ապա նրանք պարտավորվում են կապալագինն ավելացնել ևս 580 000 ալլահ<sup>10</sup>:

Պատահում էր, երբ մյուսթեղիմները տարբեր շունապարհներով ձեռք բերած մուկատաանները տեղնուտեղը և, բնականաբար, ավելի բարձր գնեքով՝ վերազանառում էին կամ մասնատելով կապալի էին տալիս առանձին անհատներին: Մասնատված մուկատաայի յուրաքանչյուր մասը կոչվում էր «pare mukataasi»: Նթն մյուսթեղիմը ի վիճակի չէր լինում կանխիկ վճարել ամբողջ կապալավարձը, այդ դեպքում նա պարտավորվում էր այն մուծել մաս առ մաս (kist taksid)<sup>10</sup>:

Կայսրության հզորության շրջանում պետութունը աշխատում էր մուկատաանների կառավարումը հանձնել իրենից անմիջական կախման մեջ գտնվող էմիրներին, սակայն երբ վրա էր հասնում հերթական ֆինանսական ճգնաժամը, երբից ստիպված էր լինում գիմել մյուսթեղիմների ժառանգյալներ: Ըստ աղբյուրների վկայության, XVI դ., երբ կայսրությունը հասել էր հզորության գագաթնակետին, մուկատաանները հիմնականում տնօրինել են էմիրները<sup>11</sup>:

Սովորաբար կապալառուության ժամկետը սահմանափակվում էր մեկից երեք տարով: Այս կարգը հաղվազեպ էր խախտվում: Ավելի հաճախ կիրառվում էր մուկատաանները մեկ կամ երկու տարով իլթի-

զամի տալու պրակտիկան<sup>12</sup>, Անկախ պետութիւնը վճարած կապալա-  
վարէից, ամիլը՝ լինեք նա էմին թե մյուլթեզիմ, սույն գումարի 0,02  
տոկոսի լափոսով մի գումար եւ հատկացնում էր արքունիքի կրտսեր  
սպայակազմի ժախտերը հոգալու համար:

Քացի վեզիրներէից և փաշաներէից, իրենց վստահած տիրույթներէից  
հավաքովոց հարկերը իլթիզամի էին տալիս նաև սանչակաների կառա-  
վարիչները և նույնիսկ որոշ խոշոր սիփահիներու Այս դեպքում ևս  
տակա էր պետական եկամուտների կապալի տրվելու փաստը, սակայն,  
ի տարրերութիւն մինչև այստեղ շարադրվածի, տվյալ դեպքում գոր-  
ծարքը կնքվում էր ոչ թե կենտրոնական կառավարութիւն և կապա-  
լառուի, այլ շարքային պետական պաշտոնյայի, որն այդ տիրույթի ան-  
միջական տերը չէր, և մասնավոր անձերի միջև<sup>13</sup>, Դա որակապես նոր  
երևույթ էր Օսմանյան հասարակութիւն տնտեսական կառուցվածքի մեջ,  
որը որոշ ժամանակ անց ժնունդ էր տալու նոր սոցիալական հարա-  
բերութիւններին: Այսպիսով առաջանում էր պորտաբույծ շահագործող-  
ների բովանկան երկար մի սանդուղք, որի յուրաքանչյուր աստիճանին  
թառած կապալառու ձգտում էր իրեն ենթակա իլթիզամից առավե-  
լագույն շահույթ կորզելու: Ինքնին հոսկանայի է, որ ինչքան երկա-  
րում էր այդ սանդուղքը, նույնքան սաստկանում էր հարկատու զանգ-  
վածների կեղեքումը:

Իլթիզամի սիստեմի տարածման ժամանակ պետութիւնը կանգ-  
նեց իր համար բացասական մի փաստի առջև: Վերևում նշել էինք, որ  
նորընծա կապալառուները, ի վիճակի չլինելով կապալավարձը կան-  
խիկ վճարել, պարտավորութիւն էին ստանձնում այն մուծել մաս առ  
մաս: Սակայն հաճախ էր պատահում, երբ մյուլթեզիմները այս կամ  
այն պատճառով ուշացնում էին մուծումները, իսկ այս հանգամանքը  
խանդարում էր պետական միջոցառումների ֆինանսավորումը: Այդ  
իսկ պատճառով իլթիզամների վճարքի ժամանակ կենտրոնական  
կառավարութիւնը սկսեց ոգտվել հարուստ գրամատներերի ժառանգու-  
թիւնից: Որոշ մեծահարուստների պետական զանձատան վարչու-  
թիւնը տրամադրում էր, այսպես կոչված Եարտոնյալ մուլտակներս  
(imtiyazli senetler) ու այս վերջիններս ձեռք էին բերում կապա-  
լառու-մյուլթեզիմներին երաշխավորելու մենաշնորհը<sup>14</sup>, Այսպիսով  
պատմաբան իչամ խոշոր գրամատներերի մի կորպորացիա, որի ներ-  
կայացուցիչները հիմնականում բնակվում էին Պոլսո Ղալաթիո թա-  
ղամասում և ապրում էին բացարձակապես ի հաշիվ իլթիզամներից  
ստացած տոկոսների<sup>15</sup>:



Նորընծա խալի ներկայացուցիչները հայտնի դարձան ԵՊանձարա-  
նի դրամափոխները (hazine sarrallari) տեսնելու Ընդ որում նրանց  
ծառայությունները սկսեցին զիմել ոչ միայն մյուլթեղիմները, այլ նաև  
վիլայիթներում կառավարիչ նշանակվող փաշաները, որոնք որպես կա-  
նոն՝ ծառայության սկզբում միջոցներ չէին ունենում<sup>16</sup>։

Դրամափոխ-սարքաֆները 2500-ից մինչև 10000 զուրուշ արժու-  
թյունով մուսուհ կենց բերելու հարկ (berat harci) էին մուծում և  
կապալագինը ամբողջությամբ մուծելուց հետո արտոնյալ մուսուհները  
հետ էին ստանում<sup>17</sup>։ Այստեղից հետևում է, որ ամեն մի սարքաֆ միա-  
ժամանակ կարող էր երաշխավորել լուր մեկ մյուլթեղիմի և նա պահեց,  
երբ գործարքը կնքվում էր, մյուլթեղիմը մեկնում էր իր տիրույթը, ուր  
կառուցել էր տալիս իր դոլյակը և ստեղծում սեփական շահագործման  
ապարատը, որի մեջ մտնում էին՝ երկու խորհրդական, երկու թիկնա-  
պահ, մեկ սպա և երեսուներից ցառասուն հոգուց բաղկացած զինված  
մի շուկա, որը նրա տիրակալության օրոք կատարելու էր ստեղծանա-  
կան ֆունկցիա<sup>18</sup>։ Չնայած այն հանգամանքին, որ մյուլթեղիմը պա-  
տասխանատու էր նաև տվյալ վայրի անվտանգության համար,  
սակայն նա բացարձակապես զբաղվում էր հարկեր կորզելով։ Նրա  
գործակալները զիշեր-ցերեկ շրջում էին փողոցներում, որպեսզի  
հայտնաբերեն և ձերբակալեն տորինազանցներին։ Այս հասկացու-  
թյան տակ էին մտնում խաղամուղները, հարբեցողները, զիշերով ա-  
ռանց կանթեղի տներից զուրս եկած անցորդները և այլն։ Սակայն հա-  
ճախ էր պատահում, երբ տորինազանցներին ցուցակի մեջ էին ընդ-  
գրկվում նաև տեղի ունեւորները, որոնք ի վիճակի էին բարձր փրկա-  
զին ղեւարել<sup>19</sup>։

Ուշագրավ է այն փաստը, որ առաջին սարքաֆները զուրս են և-  
կել կայսրության տարածքում քնակություն հաստատած հրեաների  
միջից, որոնցից մի մասը՝ առավելապես մահմեդականություն ըն-  
դունողները, հաճախ դարձել են նաև մյուլթեղիմներ<sup>20</sup>։ Սակայն հայ  
առևտրական բուրժուազիայի ձևավորումից հետո, հայազգի և մասամբ  
հույն սարքաֆները դարձան զերիշխողը XVIII դ. և հատկապես XIX դ.  
առաջին կեսին խոշոր իլլիթիզմների առյուծի բաժինը գտնվում էր հայ  
դրամատերերի, հատկապես պոլսահայ սարքաֆների հսկողության  
տակ<sup>21</sup>։

XVII դ. առաջին տասնամյակներում, այսինքն չելայիների շարժ-  
ման<sup>22</sup> մայրամուտից հետո, պետական հողերի ճեշող մեծամասնու-

Քյունը կազմող թիմարների քանակը խիստ նվազել էր: Դարի զեսերին պետությունը որոշում է պահպանված թիմարների մոտ 50 տոկոսի նկատմանը զերցնել անմիջական հսկողություն տակ: Այս պահից ըսկրած, զանազան պատճառներով անտիրական մնացած թիմարները կամ զավթվում են բարձրաստիճան պաշտոնյաների, առավելագույն մայրաքաղաքային բյուրոկրատիայի ներկայացուցիչների կողմից, կամ պետության կողմից կապալի են տրվում: Նախկին սիփահանների մի մասը եւ վերածվում է մյուլթիզիմներին<sup>23</sup>:

XVII դ. վերջերին իլթիզամի ինստիտուտը ենթարկվեց որակական փոփոխությունների: 1695 թ. հունվարի 30-ին Բարձր Դուռը հրապարակեց հասույթի մի հրովարտակ, որով նախկինում սահմանափակ մասնկետով կապալի տրվող մուկատաաները վերածվում էին անժամկետ կամ ցմահ տիրույթների<sup>24</sup>:

Պետական մուկատաաները ցմահ կապալի տալու երևույթը ստացավ սեմալիքյաննի սիստեմն (malikane sistemi) անունը, իսկ այս հիմունքով իլթիզամի տրվող մուկատաաները սկսեցին կոչվել սեմալիքյանններ<sup>25</sup>:

Պետությանը այս քայլին դիմելու դրոշմին մի շարք կարևոր հանգամանքներ, որոնցից ամենաէականը, արտաքուստ, ֆինանսական ղեկավարություններն էին: Այդ ղեկավարությունները բացառվում էին հետևյալ պատճառներով.

— XV—XVI դդ. խոշոր աշխարհագրական հայտնագործությունների հետևանքով ինչպես Եվրոպան, այնպես էլ Օսմանյան կայսրությունը հեղեղվել էր անդրօվկիանոսյան էթան ոսկով ու հատկապես թուրքական հիմնական դրամամիավորի հումք հանդիսացող արծաթով, որի հետևանքով թուրքական ակշիս խիստ արժեքավորվել էր:

— Այդ նույն պատճառով Եվրոպան Արևելքին կապող առևտրական մայրուղիները փոխել էին իրենց ուղղությունը, իսկ զա հարվածեց առևտրին ու արհեստներին:

— XVI—XVII դդ. կայսրությունում ժողովրդած ներքին խռովությունները, որոնք պատմությանը հայտնի են բեղլայիների շարժումն ընդհանուր անվամբ, մեծ վնաս էին հասցրել պետության եկամուտներին, քանզի հարկահանույթյան մեծաշեղծն ստանձնած մյուլթիզիմները կամ չէին կարողանում, կամ էլ, օգտվելով ողջ երկրում տիրող անխելանությունից՝ հրաժարվում էին կատարել կապալավարների հերթական մուծումը:

—ժամանակին Օսմանյան բռնակի հիմնական կործող հանդիսացող սիփահիների հեծելազորը կորցրել էր ռազմական նշանակությունը, այդ իսկ պատճառով քանակը հեղհեռե համալրվում էր վարժական ներշնչներով, որոնց ֆինանսավորման համար ահեղի միջոցներ էին պահանջվում:

—Մահմանափակ ժամկետով իլլիզամներ ներք բերդները մտահոգված էին կարճ ժամանակահատվածում ստադիալառչն շահույթ կորչել, այդ իսկ պատճառով խլում էին հարկատուների վերջին ունեցվածքը՝ դրանով իսկ ղտանգելով պետության եկամուտների ապագան:

Այս արտաքին երևույթների կողքին կար նաև մի ներքին պատճառ, որի նշանակությունը դժվար է գերազանահատել. XVII դ. վերջերից ուսմանյան ֆեոդալիզմը քնակոխեց իր զարգացման ամենարարձր փուլը, որի ստաղին նշանները եղան կենտրոնական իշխանության քուլացումը և նախկինում լիովին կենտրոնից կախված վայրերի, սանջակների և սիփահիների ֆեոդալիզացիան: Դրա անմիջական հետևանքը եղավ սեպարատիստական և ապակենտրոնական միտումների ուժեղացումը, որոնց հիմնական նպատակը պետական հողերի վրա մասնավոր սեփականատիրության հաստատումն էր<sup>21</sup>:

Մալիքյանների համակարգի տարածմանը համընթաց իլլիզամի առարկա է դառնում նաև հողը, հիմնականում՝ իրենց պարտավորությունները չկատարող սիփահիներից խլված, կամ մարտի դաշտում սպանված սիփահիներից թափուր մնացած թիմարները<sup>22</sup>:

Այս համակարգի որոշ մյուլթեղիմների քանակն ուղղակի կտրված էր վիլայեթներում ու սանջակներում տարածված հողատիրության ձևերի՝ խասսերի, վաքրֆների, զեամեթների և թիմարների քանակից<sup>23</sup>: Մակայն պատահում էր, երբ որևէ վիլայեթի կամ սանջակի բոլոր եկամտի աղբյուրները կենտրոնանում էին նույն անձի ձեռքում:

Մալիքյանների ընձեռած հնարավորությունները զրդեցին պետությանն այն տարածել բոլոր հարկատեսակների վրա: Մատ լանցած ամենանեկամտարեր մալիքյանները վերածվեցին վեդիրների, փառաների, ինչպես նաև պալատական կանանց (տիկին սուլթանների) մասնավոր կալվածքների<sup>24</sup>:

Մալիքյանների վարձակալները ևս նախընտրում էին օգտվել կապալառու մյուլթեղիմների ծառայությունից, իսկ իրենց քնակվում էին որևէ խոշոր քաղաքում և ապրում ի հաշիվ ցմահ տիրույթներից ստացած ունեռայի<sup>25</sup>:

Մրանք, որպէս կանոն, մալիքյանններում հարկերի հավաքման և ներքին անվտանգութեան պահպանման գործը հանձնարարութեամբ էին իրենց փոխանորդներին, այսպէս կոչված՝ սվոյզօդաններին<sup>31</sup>։ Վսլվոգաններն էլ իրենց հերթին, հարկերի հավաքման գործը կապալի էին տալիս երկրորդական մուլթիբնդիներին<sup>32</sup>։ Փաստորեն մալիքյաննների բնակիչներն անմիջական կախման մեջ էին մուլթիբնդիներից, ծայրահեղ զեպրում՝ սուրաշիններից<sup>33</sup>։

Եթէ նախկինում իլլիթզամը պետութեան և առանձին անհատների միջև կնքվող մի գործարք էր, ապա մալիքյաննի սխտեմի օրինականացումից հետո այն վերածվեց մասնավոր անձանց միջև կնքվող մի գործարքի։ Այս հանդամանքն ունեցավ, ինչպէս վերևում եշեյինք, ոչ միայն անտեսական, այլ նաև սոցիալական հետևանքներ։ Այս պահից սկսած մուլթիբնդի գտնելու ազնիւ լայն հնարավորութեանն և ստանում անզական ամազանու ներկայացուցիչները՝ այսանները<sup>34</sup>։ Ընդ որում, իլլիթզամները կապալի տալիս նախապատմութեանը սկսում են այսաններին տալ ոչ միայն մալիքյաննների տիրակալները, այլ հենց ինքը՝ պետութեանը։ Օգտվելով իրենց նյութական հնարավորութեաններից և բարձրաստիճան իշխանավորների հովանավորութեանից, այսաններն աստիճանաբար իրենց ձեռքում են կենտրոնացնում տվյալ շրջանի բոլոր իլլիթզամները։ Այսպիսով պատմարեմ է իջնում ոչ պաշտոնական մի պաշտոնատար անձ, շահագործողների մի նոր տարատեսակ, որին Կ. Մարքսը բնութագրել է որպէս կոպիտ գրամի հանդեպ ազահ մի նորնուկի<sup>35</sup>։

Ազնիւ ու շրջանում տեսնում ենք, որ իլլիթզամի սխտեմը տարածվում է նաև վարչական պաշտոնների վրա։ Այսպէս, 1604 թ. սեպտեմբերի 29-ին Քյուլյուք Հայմանայի սուրաշիի պաշտոնը 15 հազար աղանով կապալի է տրվել ոմն Հասան բին Ռեչեբի<sup>36</sup>։ Սովորաբար վարչական պաշտոններին հավակնում էին վերոհիշյալ այսանները, որոնք XVII—XVIII դդ. աստիճանաբար շեղացրեցին կադիների և զորահրամանատարների իշխանութեանն ու վերածվեցին սանչակների միահեծան կառավարիչների։ Իլլիթզամի շեղումը բարձր դիրքի հասած այսանների մեջ ամենահզորը թերևս Կարասոման-Օղլուների տոհմն էր։ XVII դ. Սարուխանի սանչակի (ժամանակակից Իզմիր) բոլոր մուկոտատաները, իսկ հետագայում նաև բոլոր վարչական պաշտոններն անցան այս տոհմի ներկայացուցիչների ձեռքը, որոնք մինչև 1816 թ. արևմտյան Փոքր Ասիայի մի իշխան տերերն էին դարձել<sup>37</sup>։

Մալիքյանների սխառնի տարածվելն ուղեկցում էր գյուղացիների մասսայական հողազրկմամբ: Վերջիններս ապրուստի միջոց հայթայթելու հույսով լքում էին պապենական օջախը և մեկնում խոշոր քաղաքներ: 1724 թ. հրապարակված սուլթանական հրովարտականերից մեկում խոսվում էր այն մասին, որ «և՛ տուճիկի և Անատոլիայի թիմարների և զնամեսների բնակիչներից ոմանք լքում են իրենց ընկավալը, հրամարվում են զբաղվել հողամշակությամբ և լցվում են Պոլիս: Չնայած պետության կողմից ստեղծված զանազան արգելքներին, Պոլսում գործադուրկների թիվն օրեցօր աճում է»<sup>36</sup>: Ընական է, որ գյուղացիների մասսայական հոսքը դեպի խոշոր քաղաքներ պայմանավորված էր ոչ թե նրանց «հողամշակությամբ զբաղվելուց հրամարվելով», այլ ֆեոդալիզմի զարգացման հետևանքով գյուղում նոր սոցիալական հարաբերությունների ստեղծումով, որին պակաս կերպրում չունեցավ նախ իլլիթիզամի, ապա նաև նրա բարձրագույն փուլը հանդիսացող մալիքյանների սխառնը:

Զգալով վերահաս վտանգը, կենտրոնական կառավարությունը փորձել է վերացնել ցմահ կապալառության սխառնը, բայց արդյունքի չի հասել: Օրինակ, 1715 թ. սուլթան Ահմեդ III-ի հրահանգով մալիքյանների ստատուս ունեցող պետական հողերը կրկին պետք է վերածվին կարճաժամկետ մուկատաաների<sup>37</sup>, սակայն այս որոշումը մնաց թղթի վրա: Մալիքյանների սխառնի շտրհիվ պաշտոնի և դիրքի հասած վալիները, մյուսփեսայիմները և այսնները ոչ որի թույլ էին տալիս օտնահարել իրենց «հարստահարելու իրավունքը»<sup>40</sup>:

Համանայն XIX դ. առաջին կեսին Փոքր Ասիայում շրջադայած եվրոպացի էանապարհորդների վկայության, հիշյալ մամանակաշրջանում իլլիթիզամի սխառնը շարունակում էր բուռն փառչում ապրել: Ամեն տարի հողային հարկի (vergi) գումմման իրավունքը անուրդի էր հանվում ըստ վիլայիթների, սանջակների, կազանների և նահիլների: Անուրդներին սրպես երաշխավոր հանդես էին գալիս հայ, երբեմն էլ հույն սարքաֆները<sup>41</sup>:

XIX դ. 30-ական թթ., կրք Օսմանյան կայսրությունում սկսեցին անցկացնել վերնախավային բարենորոգումներ, խնդիր դրվեց նաև իլլիթիզամը վերացնելու մասին: Այս ձգտումը արձագանք գտավ նաև 1839 թ.-ի սուլթանական հրովարտական, որը հայտնի է Գյուլխանեի «հաթթը շերիֆ» կամ Թանզիմանյան հրովարտակ անունով: Հաթթում մատնավորապես ասված էր. «Իլլիթիզամը մի ազնու էր, որից պետու-

Յյունը երբեք պոստ չտեսաւ: Այն նշանակում էր մի ամբողջ շրջանի քաղաքական ու տնտեսական բախտը վստահել մի անձնավորութեան, որն իր ազահութեանը հագորդ տալու համար ծծում էր ժողովրդի արյունը<sup>42</sup>: Չնայած նախ քան ին, որ 1842 թ. փետրվարին պետութեանը ստիպված եղաւ վերականգնել, իսկ 1847-ին ևս հինգ տարով երկարացնել իլլիիզամի գործունեութեան ժամկետը<sup>43</sup>, սակայն նոր արտադրական հարաբերութիւնների ստեղծումով այս ինստիտուտի գոյատեւման հետազոտութիւններն արդէն սպառված էին: Առանձին զեպերում իլլիիզամի պրակտիկան կիրառւում էր միշտ կայսրութեան վախճանը<sup>44</sup>, սակայն երկրի տնտեսական կյանքի ընդհանուր ֆոնի վրա նախ արդէն որակ չէր կազմում:

Ուսումնասիրութեան արդյունքները թույլ են տալիս հանդի հետևյալ եզրակացութիւններին.

Իլլիիզամը որպէս հարկահանութեան սխեման կիրառվող երկվույթ, գոյութիւն է ունեցել Օսմանյան պետութեան կազմազոյգման ժամանակից, սակայն այն կուս սխեմայի է վերածվել լոկ XVI դարում: Այն արտադրական և հասարակական հարաբերութիւնների խորքում տեղի ունեցող պրոցեսների ծնունդն էր: Ընդհանուր պատմական անեղենը տանում էր դեպի ավելի բարձր մակարդակի արտադրական հարաբերութիւնների ստեղծում: Այս հանապարհին իլլիիզամը հնի՝ ֆեոդալիզմի զարգացման ստորին փուլին յուրահատուկ պետական հոգատիրութեան, և նորի՝ մասնավոր հոգատիրութեան մեծի պայքարի ծնունդը հանդիսացաւ:

Իլլիիզամի վերահումը մալիքյանների սխեմայի, թուրքական ֆեոդալիզմի էվոլյուցիայում մի նոր փուլի սկիզբն էր նշանակում: Այս փուլն ավարտվեց կենտրոնախույս մպումների կրող հանդիսացող խոշոր հողատերերի՝ ալանների երևան գալով:

Իլլիիզամի սխեման մեծուպէս նպաստեց առևտրական բուրժուազիայի մեծւորմանը, որը պատմական այլ միշտավայրում կարող էր վերածվել արդյունաբերականի: Սակայն օսմանյան հասարակարգի բնորոշ առանձնահատկութիւնները թույլ չտվեցին կապիտալիստական հարաբերութիւնների խորացմանը:

Կատարելով իր պատմական առաքելութիւնը և հող նախապատրաստելով նոր արտադրական հարաբերութիւնների համար, իլլիիզամը վերածվեց ֆեոդալական կարգերի կոնսերվացման միջոցի և գուրս մըզվեց նոր ինստիտուտների կողմից:

## ИЗ ИСТОРИИ ОСМАНСКОЙ ОТКУПНОЙ СИСТЕМЫ (ИЛЬТИЗАМ)

В османской налоговой системе, равно как и социально-экономической жизни империи, значительную роль сыграла откупная система взимания налогов, т. н. «ильтизам». Несмотря на это, вопрос этот до последнего времени не подвергался специальному изучению, хотя как отечественные, так и зарубежные османисты в своих трудах неоднократно затрагивали эту проблему. Критически осмыслив источники, главным образом опубликованные в последние десятилетия турецкие документы, автор сделал попытку показать сущность и место этого феодального института в жизни османского общества и пришел к следующему заключению: Ильтизам в османском обществе существовал не с XVI века, как считалось ранее, а с раннего периода его существования, а в XVI в. был распространен также на земельные доходы и был превращен в систему; он явился одним из выражений перехода от государственной собственности на землю к частной, что в тех исторических условиях было прогрессивным явлением; превращение ильтизама в систему пожизненных откупов (маликьяне) ознаменовало вступление османского общества в этап развитого феодализма, о чем свидетельствовало возникновение крупных феодалов-аянов, ставших носителями центробежных устремлений; ильтизам определенно способствовал образованию торгово-ростовщической буржуазии, а в совокупности — складыванию новых производственных отношений. Этим он исчерпал свои возможности и, как пережиток прошлого, был вытеснен из жизни общества новыми общественными отношениями.

- 1 См. А. Ф. Миллер, Мустафа папа Байрактар. Османская империя в начале XIX в., М.—Л., 1947; А. Д. Невичев, История Турции, т. I. Эпоха феодализма, Л., 1953; И. М. Смирнская, К вопросу о разложении феодальных отношений в Сирии, Ливане и Палестине в середине XIX в. — «О генезисе капитализма в странах Востока (XV—XIX вв.)», М., 1952; В. П. Мутафчиева, К вопросу о феодальной иерархии в османской военно-ленной системе (XV—XII вв.). — «О генезисе капитализма в странах Востока (XV—XIX вв.)», М., 1952; Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կարգավիճակը 1600—1870 թթ., Երևան, 1957



Վ. Այվազովի, *Պատմաբան Օսմանյան պետություն, Կ. Ա. Ռ. Վենետիկ 1847*; St. Shaw, *The Financial and Administrative Organisation and Development of Ottoman Egypt*. Princeton, 1962; M. İnalçık, *The Ottoman Empire. The Classical Age, 1300-1600*. London, 1973:

- 2 M. Akdag, *Türkiyenin İktisadi ve İçtimai Tarihât, c. 2, 1451-1559*, İstanbul, 1974.
- 3 Z. Karamürsel, *Osmanlı Mali Tarihi hakkında tetkikler*, TTK yayını, Ankara, 1942 S. 202
- 4 M. Sencer, *Osmanlı Toplum Yapısı*. Devrim strajedisi açısından. İstanbul 1969, S. 295; M. Z. Pakalın, *Tarih Deyimleri ve Terimleri sözlüğü*, İstanbul 1971, c. 2, S. 57-58 madde «litizam» ve «litizimat».
- 5 M. Z. Pakalın, *Նշվ. աշխ.*, M. Akdag, *Նշվ. աշխ.* S. 335-336; M. P. L. d'Aubignosc, *La Turquie nouvelle jugée au point ou Font ammenées les réformes du Sultan Mahmud*, tome 2, Paris, 1899, p. 109.
- 6 M. Akdag, *Նշվ. աշխ.*, էջ 323-326.
- 7 *Ibid*, *Նախն անգում*:
- 8 *Ճաշմանակ ժառանգության զինաց պետական հողերի ժամանակադր սիրահարությունն ստեղծում զնվիրականները, այսպես կոչված զախները և թիմարաները*:
- 9 M. Akdag, *Նշվ. աշխ.*, էջ 329:
- 10 *Նախն անգում, էջ 243*: *Մեզմարաք պատմական գրականության մեջ սարսված է այն կարծիքը, համանայն որի մյուսնեղանները անարդի ժամանակ վերում էին իմիջամտի անբողջ արժեքը, իրականում ազկի հետևի կիրառում էր այս գումարը մաս առ մաս մտնելու պրակտիկան, Հախանակ զնայում անհանկարի էր գտնում գրամտնոն-սարսվաների զեղը այս արժարքներում*:
- 11 *Նախն անգում*:
- 12 M. P. L. d'Aubignosc, *Նշված աշխ.*, էջ 100:
- 13 M. Akdag, *Նշված աշխ.*, էջ 240:
- 14 M. J. Pakalın, *Նշվ. աշխ.*, էջ 37-38:
- 15 R. Kaynar, *Mustafa Reşit Paşa ve Tanzimat*, İstanbul, 1954, s. 178:
- 16 *Նախն անգում*:
- 17 Pakalın, *Նշվ. աշխ.*, էջ 28:
- 18 M. P. L. d'Aubignosc, *Նշվ. աշխ.*, էջ 111:
- 19 *Նախն անգում, էջ 112*:
- 20 M. Akdag, *Նշվ. աշխ.*, էջ 113: *Մույն աշխատության 251-259 էջերում հեղինակը բազմաթիվ արժեքային փաստեր է բերում հրեաների իմիջամտներ մեզ յնրելու մասին, Գրանք հիմնականում Բարսա բազայի գրատան ծուլանակների արժեքից վերջված նյութեր են*:
- 21 S. Yerasimos, *Azgeilismis'lik sürecinde Türkiye*, c. 2, ikinci baskı, İstanbul, 1977, s. 613: *Պատանում էր, որ թիմարաները, զախները և վարձերները մուսթեֆաները ևս իրենց սիրույթները բարձր ապահանքով կազմել էին*

- տալիս արքայֆեթիխն, Վերջիններս իրենց ներքին գրանք վերաբանաում էին երկրորդական մյուսֆեթիխներին և այլն: Տե՛ս՝ N. Berkes, Türkiye'de Çağdaşlaşma, Ankara, 1973, s. 101:
- 22 Այս մասին տե՛ս Մ. Կ. Զուլայան, Հայալիները շարժումը և Հայ մշակույթի վերակառուցման նպատակները, Երևան, 1965:
- 23 M. A. Ubicini, Lettres sur la Turquie, Paris, 1853, s. 288:
- 24 S. Yerasimos, Նշված աշխ., է. 1, էջ 469—470:
- 25 Մյուս (մասնավոր սեփականություն) և միջին կամ մալիք (սեփականատեր) բառերը: Այս հանգամանքը ջուլջ է տալիս, որ պետական ճշգրտության սխալներում առաջ էր եկել մի նոր՝ մասնավոր ճշգրտության գերանման միտում: Ձեռնարկները մալիքայանները առաջ տվյալ մասնատանի տիրակալն էր գտնուում միայն իր կենդանության օրոք և այն մասնակցու իրավունք չուներ: Ստիպելիս զա պետական ճշգրտությունից զրկել մասնավորը կատարված կարևոր մի քանի էր, որը խախտելիս մասնական ավանդական ճշգրտության ճիշդերը:
- 26 M. C. Мейер, К периодизации истории Турции эпохи феодализма.—Туркологический сборник, 1976, М., 1978, с. 75—87:
- 27 Ç. Uluçay, 18. ve 19. yüzyıllarda Sasuzamda eşkiyalık ve halk hareketleri, İstanbul, 1955, s. 7:
- 28 Նույն տեղում:
- 29 Նույն տեղում:
- 30 N. Berkes, Նշված աշխ., էջ 85: Այս շրջանում բազմաթիվ խռատներ և կենդանացողական ճշգրտք բաժանված էին պաշտոնի կանանց միջև, որոնք մեծ հաճությամբ սկսեցին պարզել հարկահավաք-մյուսֆեթիխներին, մասնավորներին, M. A. Ubicini, Նշված աշխ., էջ 7:
- 31 Մյուսֆեթիան սեփական ըստի պարզագույն էր:
- 32 Y. Yücel, Նշված աշխ., էջ 682:
- 33 Սուրաշին կանանկում էր սակայն իրենց կողմից և պատասխանատու էր տվյալ փոքրիկան միավորի ներքին սեփականության համար:
- 34 Այսինքն մասին տե՛ս Մ. Բորայան, Այսուցից և զերբնից լիստիստները Հայաստանում, —2002 թվ. վերաբեր հասարակական գիտություններին, 1981, № 9: V. Mutafchieva, L'Institution de l'ayanlık pendant les dernières décennies du XVII. siècle.—Études Balkaniques, Sofia, 1965, № 2—3, p. 233—247; H. Bowen, Ayan.—Encyclopédie de l'Islam, t. 1, Paris, 1958, p. 801; I. H. Uzunçarşılı, Ayan.—İslam Ansiklopedisi, c. 2, Ankara, 1946, s. 41:
- 35 К. Маркс, Капитал. Критика политической экономии. Т. 3. —К. Маркс и Ф. Энгельс, Соч., изд. 2-ое, т. 25, ч. 2, с. 146:
- 36 Ç Uluçay, Նշված աշխ., էջ 122:
- 37 M. Aktepe, Patrona isyani, İstanbul, 1958, s. 8—9; Ç. Uluçay, Նշված աշխ., էջ 7:
- 38 M. Belin, Türkiye'nin İktisadi Tarihi hakkında tetkikler, Ankara, 1931, s. 191:

- 39 M. Aktepe, *İzmir'de sanat*, *İz* 4—5.
- 40 R. Kaynar, *İzmir'de sanat*, *İz* 178.
- 41 M. A. Ubicini, *İzmir'de sanat*, *İz* 141.
- 42 R. Kaynar, *İzmir'de sanat*, *İz* 178.
- 43 А. Д. Номичев. История Турции. Новое время, т. 2, к. 1 (1792—1839). Ленинград, 1968, с. 129. М. А. Ubicini, *İzmir'de sanat*, *İz* 141.
- 44 W. L. Wright, *Ottoman Statecraft. The book of counsel for vestirs and governors*, Princeton, 1935, п. 9<sup>а</sup>.

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՏՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍՒՈՆԵՐՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ  
(XIX Գ. ՎԵՐՋ XX Գ. ՍԿԻՋՐ)

Օսմանյան կայսրությունը զազուց ի վեր եղել է կապիտալիստական երկրների էքսպանսիայի օրչեկա: Սկզբնապես նրանք իրենց այդ գիտավորությունները հիմնականում իրականացնում էին Քուրդիայում միսիոներական և լուսավորական կազմակերպություններ հիմնելու միջոցով:

Իրենց պետությունների անմիջական աշակցությամբ այդ կազմակերպությունները զբաղվում էին սեփական մշակույթի ու լեզվի պրոպագանդամբ, իրենց երկրի տնտեսական և քաղաքական շահերը հետամտմամբ՝ ձգտում էին երիտասարդությունը դաստիարակել այդ շահերին ձեռնաու ոգով:

Օգտագործելով կապիտալացիոն ուժիմբ, XVI դ. Ֆրանսիան սկսեց Քուրդիա ուղարկել զանազան հոգևոր միաբանությունների ներկայացուցիչների: Քուրդիայի տարածքում միսիոներական առաջին ուսումնական հաստատությունը 1583 թ. հիմնեցին ճիզվիտները<sup>1</sup>: Դա կուստանդնուպոլսի (Ղալաթիա) Սեն-Քենտա-կոլեջն էր: Հետագայում կաթոլիկական միաբանությունները Օսմանյան կայսրության զանազան շրջաններում հիմնեցին ևս մի շարք ուսումնական հաստատություններ: Ֆրանսիացի միսիոներների պրոպագանդան հատկապես հռանդուն բնույթ էր կրում Միրիայում, Լիբանանում և Միլագետքում: Ֆրանցիսկյան և ճիզվիտական միաբանությունները ոչ պակաս հռանդուն էին գործում նաև Կիլիկիայում և Քուրդիայի արևելյան վիլայեթներում: ԵՓոքր Ասիայի րուրը նշանակալից կենտրոններում,—հետագայում նկատելի է Վ. Ի. Սեմյոնովը,—կան կաթոլիկական միաբանությունների միջոցներով պահվող ֆրանսիական զգրոցները<sup>2</sup>:

Տրանսիացիների հիմնած կաթուղիական ուսումնական հաստատու-  
թյուններից բացի, Քուրքիայում բացվել էին նաև իտալական և այլ  
գաղութներ:

Համաշխարհային առաջին պատերազմի նախօրեին կաթուղիկ հո-  
գևորականութունը երկրում հիմնել էր 500 գաղոց, որոնցում ուսում էր  
ստանում 59.414 աշակերտ՝, Իսկ կաթուղիկների ընդհանուր թիվը Օս-  
մանյան կայսրությունում հասնում էր 800—900 հազարի՝:

Միսիոներական գաղութների, ինչպես նաև բարեգործական և այլ  
հիմնարկների գործունեությանը ուղղություն էին ապրիս Քուրքիայում  
եվրոպական տերությունների պաշտոնական ներկայացուցիչները:  
1878 թ. մայիսի 16-ով էրզրումի որբանոցը, Վ. Գուխովսկայան գրում էր,  
որ Ֆրանսիական հյուպատոսը այստեղ աշխատող քույր-Ֆրանսուհի-  
ներին քանընդհատ հիշեցնում էր, թե սերանք կոչված են ուսուցանելու  
երեխաներին, ոգնելու աշխատանքներին ու հիվանդներին՝:

Սակայն այս սմարգասիրականա հայտարարությունները նպատակ  
ունեին սքողել գաղութային տերությունների՝ այլասիրությունից շատ  
հեռու շահերը, ապահովել սեփական տնտեսական և քաղաքական ազ-  
դեցությունը Քուրքիայում: Միսիոներները առանձնահատուկ ուշադրու-  
թյան էին արժանացնում Օսմանյան կայսրության ծայրամասային շրջ-  
անները, մասնավորապես Արևմտյան Հայաստանը: Դա բացատրվում է  
մի շարք պատճառներով, որոնցից հատկապես ուշադրության է արժա-  
նի հետևյալ հանգամանքը՝ Օսմանյան կայսրության քրիստոնյա ճընշ-  
ված, իսլամացման վտանգից ահաբեկված ժողովուրդները, որ շարունակ  
անթակա էին ազգային փոքրամասնությունների նկատմամբ գործա-  
դրվող հալածանքներին ու իրավական սահմանափակումներին, որպես  
բունի թուրքացումից փրկվելու միակ միջոց գերադասում էին կաթուղի-  
կություն կամ, ավելի ուշ, բողոքականություն ընդունելու:

Օգտվելով այս հանգամանքից, միսիոներները ծավալում էին ի-  
րենց պրոպագանդան, հույներին և հայերին խոստանալով, որ նոր դա-  
վանանք ընդունելու դեպքում նրանք կազատվեն հարկերից, այլևս  
սգալվուրս չեն կոչվի և, անցնելով մեծ տերությունների հովանավորու-  
թյան տակ, կփրկվեն բունի ոչնչացման վտանգից: Մատերևս Քյուրբն իր  
սՄարաշի շարքը աշխատության մեջ, խոսնելով կաթուղիկ միսիոներ-  
ների հետապնդած նպատակների մասին, ընդգծում է, որ կաթուղիկու-  
թյան պրոպագանդան ուղղված էր խանդարելու հայերի թուրքացմանը՝:

Սա էլ միտնեմքերն հիմք էր ապրիս կարծելու, որ կայսրության՝ քրիստոնյաներով բնակեցված շրջանները գլուխին ճանապարհ են իրենց նպատակներին հասնելու համար:

Այսպես սրինակ, անգլիացի միտնեմք Գ. Յանզը, ինչպես վկայում է նրա ամերիկացի գործընկեր Սայրըս Համլինը, այն կարծիքին էր, թե սհայ ցեղը այն բաց դուռն է, որով հնարավոր է Քուրդիա մտնել<sup>7</sup>: Պատրաստվելով ըստ ամենայնի տիրել այդ սրաց զանաք, անգլիացիներն արգեն 1701 թ. ստեղծեցին Եկստվածաշնչի տարածման ընկերություն, 1792 թ. երևան եկավ ԵՄԿրտիչ-միտնեմքերի ընկերությունը, 1795 թ.՝ ԵՄԿրտեմքերի լուսնայան ընկերությունը, իսկ 1800 թ.՝ Եկստվածական ընկերության միտնեմքական ընկերությունը և այլ ընկերություններ<sup>8</sup>: Ընդ որում, հավատարիմ Եուրիշի ներքով կրակից շագանակ հանելու իրենց ավանդական քաղաքականությունը, անգլիական գաղտնավարները Քուրդիայում գործունեության ասպարեզը թողել էին ամերիկյան միտնեմքերին, ակնկալելով նրանց միջոցով ներք բերել Եվանգելիս և գործունյա տարր<sup>9</sup>: Այս դիտարկությունները նրանց ամերիկացիներին օգնում էին Քուրդիայում միտնեմքական գաղտնեմք ստեղծելու գործում: Այսպես, Ռոբերտ-կոլեջը բացելու համար Համլինին ֆինանսական օգնություն ցուցաբերելու նպատակով Անգլիայում կազմվեց ԵՔուրդիայի միտնեմքությունը օգնող ընկերություն: Միաժամանակ, 1846 թ. Մալաթիայում հիմնվեց անգլիական միտնեմքական գաղտնեմք<sup>10</sup>: Այդ տարիներին Կասանդրուպոլսում կար երկու, իսկ ամբողջ երկրում՝ 178 անգլիական գաղտնեմք, որանց սովորում էին 12800 աշակերտ<sup>11</sup>: Ա. Ալպոլսյանն այս առթիվ գրում էր. «Ճակատակ անոր, որ Անգլիա առ երևույթ հայերով զբաղել է քաջամե էր, սակայն Քուրդիոյ գաղտնեմք լքած չէր: Միայն Ռուսիոյ հետ բախում ունենալ է կղզուշանար և հայերու մէջ ընաւ չէր գործեր, բայց Պաղեստինի հրէից քարուղծման պատրուակով կը մնար»<sup>12</sup>:

Այսուհանդերձ անգլիացիներին հոգևոր ազդեցությունը Քուրդիայում նշանակալից էր:

Այս իրազրությունը պետք է բացատրել այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունում այդ տարիներին հատկապես լայն գործունեություն էին ծավալել ամերիկյան միտնեմքերը<sup>13</sup>, 1810 թ. Բոստոնում կազմակերպվեց ԵՄատրիկրյա կրոնական միտնեմքի լիազորների ամերիկյան խորհուրդն անունը կրող բարեգործական ընկերությունը, որը Քուրդիայում իր գործունեությունն սկսեց 1820 թ., երբ

միտիսներ Զերնը ու Վերդեսարը Հմյուսնիայում զպրոց և ապարան բացեցին<sup>14</sup>, նրանցից Հեառ ժամանեցին միտիսներենք Մ. Զիսկը և Լ. Փարսունը: 1821 թ. Մ. Զիսկը այստեղից մեկնեց Կաշիբն, իսկ Լ. Փարսունը՝ Օրուսազն: Ակնկալված հաշոգության շահանկալ, ամերիկյան միտիսներենը իրենց կենտրոնը փոխադրեցին Լալիս: 1823 թ. Բիլրովում հիմնավորվեց Վրիսամ Դուդելու Ամերիկյան միտիսներենի գործունեությունը հասկապես բանկազամ XIX դ. 30-ական թվականներից: Վաճառքի ետը շահաներ նեպ բերելու նշանով ամերիկյան բուրժուազիան 1830 թ. Քուրքիայի Հեա կնքեց պայմանագիր, որը ԱՄՆ-ին ապիս էր կապիտալացիոն իրավունքներ և նանալում նրան որպես ՔՔուրքիայում ամենամեծ արտոնությունների իրավունք ունեցող պետություն<sup>15</sup>: Օգտվելով դրանից ռուսերիկրա կրոնական միտիսների գործով լիազորների ամերիկյան խորհուրդը 1831 թ. Կոստանդնուպոլիս ուղարկեց Վ. Գուդելին: 1832 թ. այստեղ եկան նաև մինչ այդ Արևմտյան Հայաստանում նանապարհորդ միտիսներեն Դուսայր և Սմիթը<sup>16</sup>: նրանց լանքերով 1834 թ. Կոստանդնուպոլիս Գերա թաղամասում Հիմնադրվեց առաջին զպրոցը: Եուսով ամերիկյան միտիսներենի ցանցը այնքան ճնդալանվեց, որ XIX դ. 40-ական թթ. միայն Կոստանդնուպոլիսում գործում էր բողոքականների 5 զպրոց<sup>17</sup>: 1834 թ. միտիսներենը Հիմնավորվեցին Իզմիրում, Բուրսայում, Տրապիզոնում, 1845 թ. ամերիկյան միտիսներենը թափանցեցին Մարաշ և Ջելթոն, իսկ 1877 թ.՝ Ալեքսանդ, 1848 թ. միտիսներական կենտրոններ բացվեցին նաև էրզրումում<sup>18</sup>: Ե՛լ չէ ժամանակից ի վեր,—գրում էր Ա. Նրիցովը,—առասաններեն որվող վարկերի, ինչպես նաև այստեղի միտիսներական հյուպատոսական գործակալությունների նկատմամբ Հյուսիս-ամերիկյան նահանգների ցուցարեթով հովանավորության շնորհիվ քաղաքում և մի քանի հարևան գյուղերում լանադրաբար զարգանում է բողոքականությունը<sup>19</sup>:

Ամերիկյան կառավարությունը սատարելով միտիսներենի հաղթությանը, հույս ուներ Արևմտյան Հայաստանում տարազնուկ իր ազգեցությունը և դրանով իսկ խաղնդառել հայերի միջավայրում առանկան կողմնորոշման զարգացմանը:

Ամերիկյան բողոքականները ամբողջ Փոքր Ասիան ծածկեցին դպրանոցների ցանցով, որտեղ քրիստոնյաների երեխաները դաստիարակվում էին բողոքականության ոգով: Միտիսներենի պատակաշահան գործունեության հեռանքով 1847 թ. հուլիսի 3-ին հայ-բողոքականները անջատվեցին լուսավորչականներից և առանձին համայնք կազմեցին<sup>20</sup>:



Քնչ ասել կուզի, Սումսնյան կառավարութիւնը ինքնուրու էր խորացնել հայերի կրօնական անմիաբանութիւնը՝ նրանց միասնականութիւնը պառակտելու միտքով ազգային-ազատագրական շարժումը թուլացնելու նկատառումով:

Այդ իսկ պատճառով սուլթան Աբդուլ Մեշիդը 1850 թ. նոյեմբերի 27-ի իր ֆերմանով հաստատեց ինքնուրույն բողոքական համայնքի ստեղծումը, նրանց թուլաարելով ունենալ հոգևոր զեկաւար, որին ենթարկվում էին նաև կայսրութիւն մյուս բողոքականները (ասորիներ, հույներ և այլք)<sup>21</sup>:

Բողոքական համայնքի պաշտօնական Հանաւումը նշանակում էր բողոքական եկեղեցուն ավելի մեծ հնարավորութիւն առ չույնների և հայերի շրջանում իր ազդեցութիւնը տարածելու համար (պարտական, բարեգործական հիմնարկների ցանցի ընդլայնում, ինչպես նաև հիվանդանոցների, որբանոցների հիմնում, որոնք լայն տարածում ստացան հատկապես 1894—96 թթ. հայերի կոտորածներից հետո) Ամերիկայան կառավարութիւնը, ինչ խոսք, ըստ ամենայնի աշակցում էր իր միսիոներներին՝ այդ քաղաքականութիւն իրականացման գործում:

Էրզրումից հետո ամերիկայան բողոքական միսիայի ներկայացուցիչները երևացին Բիթլիսում<sup>22</sup>, Միածամանակ սկսվեց նրանց քարոզչութիւնը և Կարփութի հայերի շրջանում: Նրանց գործունեութիւն սկիզբը այստեղ վերաբերում է 1852 թ., երբ Գինմորը Խարփութում հիմնեց բողոքական եկեղեցի և դպրոց: Հատուկ ուշադրութիւն են արժանի միսիոներներ Նյույորքի ու Ալեքսը, որոնց 1853 թ. Խարփութում հիմնած աստվածաբանական դպրոցը հետագայում ավելց Քուրթիայում Եամերիկանիզմի տարածմանը մեծապես աշակցած մի շարք միսիոներներ<sup>23</sup>, Քիլիսայում, Մարաշում, Ուրֆայում և այլ քաղաքներում բողոքականութիւն պրոպագանդան գործում մեծ դեր խաղաց Այնթապի միսիոն: 1855 թ. վերջինիս միացավ նախկինում Միրիական միսիայի մեզ մտնող Անտիոքի մարզը՝ Հալեպից մինչև Քեսար, որտեղի գրիստոնյա բնակչութիւն մեզ մեծ թվով Քուրթիայու հայեր կային: Միրիայում միսիայի ընդլայնումը հանգեցրեց ԷՀարավ-հայկական միսիայի ստեղծմանը, որի մեզ մտան Այնթապի, Մարաշի, Անտիոքի, Հալեպի և Ուրֆայի կայանները: Ազանան և Հաշնը ունեին տասնմին կենտրոններ: 1850 թ. ԵՀարավ-հայկական միսիայի ստեղծման այլ քաղաքների միսիոներական կայանները և այն կազմեց Եկենտրոնական թուրքական միսիայ:

Մեծագոյն փաստերը ակնհայտորեն վկայում են, որ արդեն XIX դ. 50-ական թթ. սկզբին Փոքր Ասիայի Արևելյան ամբողջ տարածքը ծածկված էր միսիոներական կենտրոնների ցանցով, որտեղից ամերիկյան միսիոներները տարածում էին իրենց պրոպագանդան, քրիստոնյաների շրջանում ավելի ու ավելի ընդլայնելով սեփական ազդեցութեան սլոուար: Այդպիսի կենտրոնների թիվը շուտով հասավ 115-ի (որոնցից 5-ը գլխավոր կենտրոններ էին, իսկ 110-ը՝ գրանց բաժանմունքները): Նրանցից գրեթէ յուրաքանչյուրն ուներ իր տպարանը<sup>24</sup>: Արևելյան միսիան բացել է 160 դպրոց, որոնք ունեին 4320 աշակերտ, 208 ուսուցիչ: Վերջիններիս մեջ կային ոչ միայն ամերիկացիներ, հույներ, այլև անգլացի բողոքական հայեր: Միսիան ուներ 26 եկեղեցի<sup>25</sup>: Նշանակալից նյութական միջոցների շնորհիվ ամերիկյան միսիոներները թագանցեցին Արևմտյան Հայաստանի բոլոր անկյունները: Նրանց գործունեութեան շնորհիվ 1822—1885 թթ. բողոքականութունը բնութանածների թիվը այստեղ հասավ 45 հազարի<sup>26</sup>: Առանձին կենտրոնների գործունեութունը կոորդինացնելու նպատակով կենտրոնական միսիոներական ընկերութունը զումարում էր ամենամյա համագումարներ, որոնք հերթականությամբ անց էին կացվում միսիայի 5 գլխավոր կենտրոններում: Այդ համագումարների կազմակերպման համար հատկացվում էին խոշոր զումարներ: Այսպես, օրինակ, 1885 թ. էրզրումում կայացած համագումարի համար ծախսվեց 10 հազար ուրլի: Ընդ որում մինչ այդ Քուրդիայում բողոքական պրոպագանդայի նպատակով արդեն ծախսվել էր 25 միլիոն ուրլի<sup>27</sup>: Այդ զումարները արամազրվում էին ինչպես անհատ քարեղործներին կողմից, այնպես էլ արտասահմանյան կառավարական ազդյուններից: Բողոքական միսիոներների գործունեութունը բոս ամենախի աշակցում էին ԱՄՆ-ի կառավարող շրջանները: Երևելքում միսիաները օգտվում են Կոստանդնուպոլսում և Քեհրանում իրենց զեսպաններին աշակցութունից, — գրում էր Ա. Մ. Կոլուբակինը<sup>28</sup>:

Իրենց գրամական հսկայական միջոցներով, սզատարծելով գիտելիքների նկատմամբ բնակչութեան նզատմը, բողոքական կազմակերպութունները Քուրդիայում ընդլայնված պրոպագանդիստական զործունեութուն ծավալեցին: Բավական է տանել, որ միայն 1885—1900 թթ. Ամերիկայի միսիոներները հրատարակել և Քուրդիայում տարածել են կրոնական բովանդակությամբ տարբեր լնդունելով 50000 գիրք և 100000 բրոշյուր: Գրոպագանդիստական նպատակներով նրանք հրատարակում

էին 13 պարբերական (այդ թվում և մանկական, հայերեն շնչկա-  
րերն ամսագիրը): Իրենց գործունեության սկզբից մինչև 1900 թ. մի-  
տրոններն էր ԱՄՆ-ից Քուրթիա եւ առաքել 7 միլիոն գիրք, ընդ որում  
Նրանց գործունեության ամբողջ հասկացումների գումարը հասնում էր  
10 միլիոն դոլարի (որից միայն վերջին տասն տարում ծախսվել էր  
700000 դոլար)<sup>20</sup>:

Անդրադատնալով միտրոններն էր բուն նպատակներին, Քիֆիսում  
լույս տեսնող շնչկականքս թերթը գում էր. սՄիտրոններն էր ամեն  
կերպ աշխատում են մեղցնել հայոց մէջ հայրենիքը և ազգը սիրելու  
րնական զգացումները: Նորա հայերէն տառերով մեզ համար 300-ից  
տակի գիրք ունին տպագրած, բայց դոցանից և ոչ մեկը մէջ կայ ազգը  
և շահարները բառերը<sup>21</sup>:

Գրտութան ժարավ մարդկանց ձեռքը կրոնական գրականութուն  
խցկելով նկատում էր որա հեղինակներից մեկը, միտրոններն էր սՄ-  
զագործութան, արդյունաբերութան, հիդրէնայի և կենսագործունեու-  
թան այլ բնագավառների եզտակար գիտելիքների վերաբերյալ հան-  
րամատելի երկեր լեն հրատարակում: Այդ իսկ պատճառով, եղրա-  
կացնում է նա, բողոքական միտրոններն էր պրոպագանդան ընդհան-  
րապէս շատ քիչ հայտնութուն ունի<sup>22</sup>: Եվ որա բացատրութունը պարզ  
է՝ միտրոններական կազմակերպութունների գործունեութանը առա-  
ջագրվում էր ոչ թէ բնակչութան շահերով, այլ իրենց դոզմաները տա-  
րածելու և խարված մարդկանց իրենց հովաթին բերելու գիտազորու-  
թյամբ, այդ նպատակին ծառայելնելով ամեն մի միջոց՝ ընդհուպ  
Նրանց առանձին խմբերի և հոգեորականութան միջև տարանայնու-  
թյունների հրահրումը: Անդրադատնալով սամեն ինչ քանդելու ձգտող  
անկող բարեփոխիչներն էր գործունեութանը Ա. Կոլլուրակիներ գիպակ  
նկատում էր, որ միտրոններն էր փոխարենը նոր ոչինչ լեն ստեղծում և  
որ այդ իսկ պատճառով, Նրանց շանքերը ժողովրդի մէջ ոչ հազվագիպ  
հակառակ արդյունքն են տալիս<sup>23</sup>, նայած պայմաններին այդ պայթարը  
զանազան ձևեր էր ստանում: Այսպէս, որինակ, ի պատասխան Ներ-  
սիայանի անվան դպրոցի (եւս. գյուղում) ուսումնական ծրագրում ամե-  
րիկացիների կողմից լանկատների ուսմանը մացնելուն, որն ընկալվեց  
որպէս բողոքականութան պրոպագանդա, դպրոցը փակվեց: Հայտնի  
են բնակչութան միտրոններն էր և Նրանց կամակատարների զեմ ուղղ-  
ված ավելի ակտիվ գործողութուններ: Այսպէս, 1848 թ. գիթունցիները  
զիմարեցին միտրոններն էր, որոնք փորձում էին այստեղ դպրոց հիմ-

նել: Այն Հազարդանք, լինում էր, և այնպես, որ լուսավորչական Հայերը ծնեում էին բողոքականություն ընդունած ոսկեգլուխներին: Օրինակ, բողոքականություն ընդունած մի Հայ քահանա Քաթարյան էր ամերիկացի միսիոներ Ամբրիջի տանը: Հայերը պահանջեցին նրան իրենց Հանձնել և նրա մերժում ստացան, սանդուղքներ դնելով պատերով մազլեղով, բակ մտան, ապա կտարելով լուսամուտը, ներխուժեցին տուն, գտան քահանային, ինքնակամ պատժեցին նրան ու տարան իրենց Հեռ<sup>33</sup>:

1845 թ. ամերիկյան միսիոներները փորձում էին Քաթարյանի Մարտի աշնանը դպրոց հիմնելու նպատակով: Մակաթի Հանգիստիցով տեղի բնակչության դիմադրությունը, նրանք ստիպված եղան Հեռանալ քաղաքից: Բողոքականություն ընդունած լոթ Հայեր ծնեի նեթարկվեցին: Մարտի Քաթարյանի միսիոներների նենարկած փորձերը ձախողվեցին նաև 1850—1851 թթ.<sup>34</sup>: Այս փաստերը վկայում են ամերիկյան միսիոներների գործունեության դեմ Հայ բնակչության անող դիմադրության մասին: Այդ գործունեությունը Հասկայաքա շարժում էր լուսավորչական Հոգևորականության դժգոհությունը՝ անմիջականորեն դիպչելով նրա շահերին: Եվ Հայ Հոգևորականությունը պատասխանում էր միսիոներներին ամեն կերպ, ինչպես կարող էր: Հայտնի են Կոստանդնուպոլսի պատրիարքի՝ քաղաքի Բերեք Քաղամասում ամերիկյան զբոսայրոցի բացմանը խանդարելու փորձերը: Գիտենալով, որ միսիոներները օգտվում են քաղաքային չքավորության ծանր կացությունից ու նրանց իրենց ցանցը պցում, Մաթևոս պատրիարքը 1841—1848 թթ. աղքատներին ոգնելու նպատակով Հանգանակություն կազմակերպեց և կարողացավ այդպիսով լուսավորչականության գիրկը վերադարձնել ոչ քիչ թվով ազգային եկեղեցուն: Հարկադրաբար սղավաճանածներին<sup>35</sup>, Դրանից բացի, նույն նպատակով Հայ Հոգևորականությունը նենարկում էր ուսումնական իր Հաստատությունների ցանցի ընդլայնմանը: Ընդ որում, կարևոր է այն Հանգամանքը, որ ամերիկացիների դպրոցների նման Հաստատություններ կառուցելու իրենց միջոցների պակասը լուսավորչական գործիչները շանում էին կոմպենսացնել սովորողների ուսման և կենցաղի ավելի լավ կազմակերպմամբ: Եվ ամերիկյան դպրոցը առաջին իսկ Հայացքից զարմացնում է իր առանձնահատուկ կնիքով, որը նրան շեշտակի տարբերում է աղքատ կահավորված և պակաս ապահովված, բայց, այդուհանգերե, ավելի հանելի տպավորություն թողնող ազգային դպրոցից: Սա վկայում է այն մասին, որ ազգային դպրոցները սշարժում էին ոչ միայն Հայ-լուսավորչականներին,

այլն հաճախ բողոքականների համակրանքը<sup>26</sup>։ Դրանում իրենց ոչ փոքր վաստակն ունենն նաև դպրոցական ուսուցիչները, որոնք իրենց ասներին դաստիարակում էին հարազատ ժողովրդի, նրա ավանդույթների նկատմամբ սիրո ու նվիրվածության սրով։ Ընդ որում նշենք, որ շնայած ուսուցիչներին իրենց կողմը գրավելու բազմաթիվ փորձերին, այդ թվում և բողոքական վերնախավի համագումարներին հրավիրվում, նրանք բոյկոտում էին այդ համագումարները՝ բացահայտելով դրանց նպատակներն ու լուսթյունը։

Փաստերը վկայում են, որ արդեն XIX դ. կեսերին ժողովուրդը ոչ միայն տարերայնորեն էր դիմադրում միսիոներների շարժմանը, այլև առկա էին այդ շարժման կազմակերպման որոշակի միտումներ։ Այսպես, 1846 թ. Կոստանդնուպոլսում ստեղծվեց «Համազգային ընկերություն», որը նպատակ էր դնում պայքարել հայերին բողոքականության հավատադարձելու դեմ։

Այդ կազմակերպության անդամները շնունտ էին ամրացնել ժողովրդի հավատը լուսավորչական եկեղեցու նկատմամբ, ուժեղացնել նրա ազգային զգացումները և խորացնել սերը հայ ժողովրդի անցյալի ու նրա մշակույթի վերարժեքմամբ։ Նրանք ժողովրդին բացատրում էին, թե ինչ վնաս է բերում ունենգատությունը իրենց ազգային շահերին։

Չնայած դիմադրությանը, ամերիկյան միսիոներներին հաջողվում էր որոշակի գործունեություն ծավալել իրենց կենտրոնների միջոցով, որոնց թիվը 1869 թ. հասել էր 21-ի, նույն 1869 թ. Օսմանյան կայսրությունում կար ամերիկյան բողոքականների 185 դպրոց<sup>27</sup>, ապա 1884 թ. դրանց թիվը հասել էր 374-ի<sup>28</sup>։ Նրանք իրենց գործունեությունը հասկապես ուժեղացրին առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։ Մինչև 1910 թ. երկրում գործում էր 430 ուսումնական հաստատություն, որոնցից 6-ը բարձրագույն դպրոց՝ 1219 ուսանողներով, 29 միջնակարգ դպրոց՝ 3012 աշակերտներով։ 1914 թ. Օսմանյան կայսրությունում արդեն գործում էր բողոքականների 675 դպրոց՝ 34317 աշակերտներով<sup>29</sup>։

Ընդ որում առաջին համաշխարհային պատերազմի սկզբին երիտթուրքերի կողմից կապիտուլացիաների լեղալ հայտարարվելու հետևանքով օտարերկրյա, այդ թվում ամերիկյան դպրոցների մեծ մասը դադարեցրեց իր գործունեությունը։ Սակայն պատերազմի ավարտից և Մուզրոսի դինազադարի ստորագրումից հետո (1918 թ.) Անտանտի պետությունները վերականգնեցին իրենց արտոնությունները և վերաբացեցին այդ դպրոցները։ Սակայն ազգային պատերազմի ավարտից

հետ քննալականները կրկին վերացրին եղած արտոնութիւնները՝ Քուրքիայի սուվերենութիւն հետ զրանց անհամառոտեղիութիւն պատճառաբանութեամբ:

1923 թ. պայմանագրում արտասահմանյան դպրոցների հարցը լարժարժվեց: Բայց Իսմէտ-փաշայի նամակում, որտեղ նա հատուկ անգործառնում էր այդ խնդրին, խոստում էր տրվում պահպանել մինչև 1914 թ. հոկտեմբերի 30-ը եղած դպրոցները, պայմանով, որ զրանք անցնեն Քուրքիայի լուսավորութիւն մինիստրութիւն ենթակայութեանը: Միաժամանակ նշում էր, որ այդ ենթակայութեանը չընդունող դպրոցները կփակվեն: Բացի այդ, առաջարկվում էր ստարերիյա դպրոցներում պարտադիր դարձնել թուրքերենի և Քուրքիայի պատմութեան ուսուցումը և արգելել ազգային փոքրամասնութիւնների լեզուների դասավանդումը<sup>10</sup>:

1914 թ. Օսմանյան կայսրութեան գործող ամերիկյան բողոքականների դպրոցներում կրթութեան համակարգն ընդգրկում էր ուսուցման բոլոր աստիճանները՝ մանկապարտեղից մինչև բարձրագույն ուսումնական հաստատութիւններ: Այնտեղ ուսուցումը տարվում էր ամերիկյան համապատասխան ուսումնական հաստատութիւնների ծրագրերով: Միաժամանակ բողոքականների դպրոցներում, անգլերենից բացի, անցնում էին մայրենի լեզու, ազգային գրականութեան և պատմութեան:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ կոլեջներում անցնում էին համընդհանուր պատմութեան լրիվ դասընթաց և այդ այն դեպքում, երբ թուրքական լուսավորութեան մինիստրութեանը այդ դասընթացից հանել էր Ֆրանսիական 1789—1794 թթ. հեղափոխութեանից հետո ընկած ամբողջ ժամանակաշրջանը՝ Օսմանյան կայսրութեան ավատակրտական միապետութեան շահերին չհամապատասխանելու պատճառով:

Յանկանալով շահել, օրինակ, հայ ժողովրդի համակրտեքը, հակառակ Արդուլ Համիդի բռնակալական արգելքներին, երբ թույլ չէր տրվում եռլինիսկ արտօրերել սեյա բառը, շատ կոլեջներում ոչ միայն հայոց լեզուն, այլև Հայաստանի պատմութեան էին ուսումնասիրում: Չնայած սուլթանական գրաքննութեանը բժախնդրորեն հսկում էր պարբերական մամուլի նյութերը, արգելում պատմական ուսումնասիրութիւնները և եվրոպական դասականների երկերը, այդ կոլեջներում ստեղծվում էին գրողաբաններ, որտեղ հավաքվում էին ձեռագրեր, հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով պարբերական հրատարակութիւններ<sup>11</sup>:



Միտիններական զպրոցների սովորողների հիմնական մասը ազգային գորքամասնությունների ներկայացուցիչներն էին Դրա պատճառը այն էր, որ Քուրքիայի մասնական հոգևորականությունը հերձվածողական էր համարում բանհավատներից որևէ բան փոխանելու միտքը, քուրքերին արգելում էր հաճախել այդ զպրոցները:

Սակայն XIX դ. վերջերից բանասեական և քաղաքական հայտերի գործունեների ազդեցության տակ այդ դրույթունը սկսեց փոխվել<sup>42</sup>։ Այժմ 1890 թ. օտարերկրյա զպրոցներում սովորողների մեջ քուրքերը կազմում էին ընդամենը 1%, ապա 1911 թ. նրանց քանակակազմը հասավ 56% -ի<sup>43</sup>։ Այդ պատճառով էլ միտիններական զպրոցների թիվը աճելացավ. այն շրջաններում, որտեղ սհայտների անաստեղան և քաղաքական գործունեները հասկանալիս զգալի էին:

Անհավատներին մոտ առաջինը սովորելու զնացին արառնյայ դասերից սերվածները: Ելուսավորության պատմությունը Քուրքիայում հինգհատորյա աշխատության հեղինակ Օսման էրզինը գրում էր, որ օտարերկրյա զպրոցների թուրք սովորողները հիմնականում այն երեսնաներն են, որոնց ծնողները քաղաքական ու սոցիալական բարձր դիրքեր են զրավում<sup>44</sup>։ Ռուս հետազոտող Ն. Կարինցիը 1910 թ. նշում էր, որ Ե...այդ հոգևոր և աշխարհիկ զպրոցներն են ընդունվում ոչ թե քնակչության լայն զանգվածների, այլ միայն նրա ընտիր խավերի երեսնաները<sup>45</sup>։

Օտարերկրյա ուսումնական հաստատություններն աճարտածները զանում էին առ եվրոպական տերությունները կողմնորոշված պետական պաշտոնյաներ, առևտրականներ, զվճանագնաներ:

Ամերիկյան ուսումնական հաստատություններից մեծ էանություն էր ստացել 1863 թ. Կոստանդնուպոլսում Ա. Լամբերի բացած բնակարան կոլեջը<sup>46</sup>։ Ուսուցումն արեանդ տարվում էր երկու աստիճանով, առաջին աստիճանը տալիս էր ընդհանուր, երկրորդը (չորսամյա ժամկետով) մասնագիտական պատրաստվածություն։ Կոլեջում անցնում էին անգլերեն, ֆրանսերեն և մայրենի լեզուներ, կրոն, ինչպես նաև ֆվարանություն, աշխարհագրություն, պատմություն, ռարտասանություն, քաղաքագիտություն, քաղաքացիական իրավունք, արվեստից պատմություն, բնական գիտություններ, միաժամանակ, ինչպես վերը նշվեց, ուսումնասիրում էին ազգային զրականություն և պատմություն<sup>47</sup>։ Ենարբրա կոլեջի ընթացավարներն իրավունք ունեին ընդունվել ԱՄՆ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Կոլեջը կարևոր դեր էր խաղում բողոքականության պրոպագանդ-



ման, յնչպես նաև Քուրքիայում ամերիկյան ազդեցության տարածման համար հասու կազմերի պատրաստման գործում:

Երկրորդ խոշոր ամերիկյան ուսումնական հաստատությունը Կոստանդնուպոլսի 1871 թ. հիմնված իզական կոլեջն էր (1932 թ. նշվեց միացվեց «Մուսթերա կոլեջին»): Այս երկու խոշոր ուսումնական հիմնարկներից բացի, 1879 թ. արական կոլեջներ բացվեցին Տարսուսում և Ջւլուսեիայում:

Ամերիկյան բողոքականները կարևոր նշանակություն էին տալիս նաև տեխնիկական կրթությանը: Այսպես, Ուրֆայում կար արհեստագործական ինստիտուտ<sup>43</sup>, որտեղ ուսուցանում էին զարքնազործություն, մեքենազործություն և այլ արհեստներ: «Միքայա կոլեջը» (բացված էր 1878 թ., կարբերդ քաղաքում) ուներ ժամանակակից մեքենաներով սարքավորված արհեստանոցներ<sup>44</sup>, 1912 թ. «Մուսթերա կոլեջին» կից բացվել էր ինժեներական ֆակուլտետ: Այս ուսումնական հաստատություններից բացի Քուրքիայում գործում էին ամենատարբեր բնագավառների մասնագետներ պատրաստող ևս մի քանի կենտրոններ: Քնչրուսթի կոլեջը ուներ բժշկական ֆակուլտետ<sup>45</sup>: Հատուկ բժշկական կոլեջ էր բացվել Այնթապում<sup>46</sup>: Մի քանի կոլեջներ ունեին անասնական, հաշվապահական գործի և այլ նյութերի մասնագետների պատրաստման բաժանմունքներ: Այսպես, օրինակ, 1891 թ. Եզմիրում հիմնադրված «Մեքենանյութերը կոլեջը» ուներ վաճառականական բաժանմունք: Բերված ավյալները վկայում են, թե ինչպիսի կարևոր նշանակություն էր ստրվում Քուրքիայում ամերիկյան էքսպանսիային աչակցող կազմերի պատրաստմանը:

Այդ կոլեջների դասախոսական կազմը համարված էր ամերիկացիներից, սակայն կային նաև քուրքեր, հայեր, հույներ: Ամերիկյան ուսումնական հաստատություններում աշխատում էին 750 ամերիկացի և 2300 տեղացի ուսուցիչներ<sup>47</sup>:

Ամերիկյան զարդոցներում սովորողների թիվը հասնում էր 40 հազարի: XIX դ. դրանց հիմնական զանգվածը կազմում էին հայերը և, ընդհանրապես, քրիստոնյաները: Հաս հնարավորին մեծ թվով սովորողներ ընդգրկելու մտադրությամբ ամերիկյան միսիոներները մտքոյ էին անվեար ուսուցման համակարգ: Դպրոցներում կային նաև գիշերաթիկաներ, որրանոցներ, որանց սպասարկող հիվանդանոցային քաժիկներ: Անկախ կրոնական պատկանելությունից կարիքավոր երեխաներին տրվում էր կրթաթոշակ: Հասկանալի է, որ իրենց ծրագրերը կազմելիս Երանք հաշվենկատորեն օգտագործում էին մոզմորդի անասնական և

քաղաքական ծանր վիճակը: «Կարելի է ամենայն վտարուժյամբ ասել, որ ծայրահեղ կարիքը, Հայերի միջավայր թափանցած կրթութիան անհրաժեշտութիան գիտակցութիան հետ մեկտեղ նրանց ստիպում է իրենց երեխաներին տալ ամերիկյան դպրոցներ»<sup>52</sup>:

Մրանից բացի, ամերիկյան միսիոներներն իրենց գործունեության մեջ հատուկ տեղ էին հատկացնում զեմագողիային, այն ամենին, ինչը XIX դ. աղքատները անվանում էն «պրոպագանդա»: Խոսքը վերաբերում է մարզկանց տվյալ միսիոներին քարոզած կրոնին դավանազարկելու նպատակով իրագործված «պրոպագանդային»:

«Միսիայի ուսումնական գործի բոլոր գրույթների և միջոցների միջով,—նշում էր Ա. Կոլլուրակինը,—կարմիր թելի նման անցնում է պրոպագանդայի ձգտումը և անբարյացակամ վերաբերմունքը այլ դավանանքների նկատմամբ: Նրանց գործունեությունը ի մասն ծանոթանալը մեզ բերում է այն նպատակացության, որ պրոպագանդան միսիոներների ոչ միայն գլխավոր, այլև գրեթե բացառիկ նպատակն է. իսկ ամբողջ դպրոցական գործը սոսկ միջոց է այդ նպատակին հասնելու համար»<sup>54</sup>: Ընդհետո, խոսելով այն մասին, թե պրոպագանդան ամերիկյան միսիոներների հիմնական նպատակն է, հեղինակը հիշատակում է անհավանական ցինիզմի այսպիսի մի փաստ. «Խարսիսթի կոչելում ոչ բողոքականները փոքրաթիվ են, իսկ բարձր զաստարակներում՝ գրեթե բոլորովին չկան, քանի որ միսիոներները ամեն ինչից բարձր դասելով պրոպագանդայի գործը, սովորաբար մինչև դասընթացի վերջը չեն հասցնում այն երիտասարդներին, որոնք հավատարիմ են մնում իրենց դավանանքին»<sup>56</sup>:

Այս իմաստով բնութագրական է ամերիկյան դպրոցներից մեկի մի սովորոցի հետևյալ նամակը. «... ինչ վերաբերում է ինձ բողոքականության դավանաբերելուն, այդ մասին դու մի տեհանալուսեալ,—նշում էր նամակում,— միսիոներների համակրանքին արժանանալու համար ես նրանց հավաստիացնում եմ, թե սիրում եմ բողոքական հավատքը և հոգով բողոքական եմ: Բայց ես ու ընկերներս այդպես ենք վարվում քաղաքական նկատառմամբ, այլապես մեզ դժվար կլինե՞ր «ուղարուել գիտությունների դասընթացը. ես երբեք չեմ դավանանի իմ հայրերի հավատին»<sup>56</sup>: Հայերի ժամանակավոր և որոշակի նկատառումներով դավանափոխվելու մասին «Երևակա ամսագիրը» գրում էր. «Արեւելեան քրիստոնեականները իրենց նախնիքներէն սովորած հաւատքն զիջաւ չեն թողուր և բողոքականութիւնը անոնց մէջ պարագայի կրօնք մըն է. եւ այս կրօնքիս հետեւողները առ ժամանակեալ բողոքական են, պաշտ-

պանութեան կարօս ըլլալին, ... կամ տուրքերնին քննելու, կամ իրենք հարստանալով իրենց բաժնին ինկածը զնարկելու կարող ըլլան եւ դարձեալ իրենց առաջին հասարակին կը զանանա<sup>57</sup>։

Ամերիկայան միսիոներները չէին քաջցնում իրենց նպատակները։ Այսպէս, 1855 թ. Քոնաթում բացված դպրոցի հիմնադիր Վան Լեննեպը իր օրագրում գրում էր. որ դպրոցը կոչված է պատրաստել երիտասարդութեանը՝ կրօնին ծանայելու համար։ Նկատի առնելով երկրում լուսավորական գործի վիճակը, նրանք նպատակահարմար էին գտնում դպրոց ընդգրկել քրոնոս խոստումնալից երիտասարդներին, ընդ որում նախապատվութեան տալով նրանց, ովքեր բնագործական կարողութիւններով, իրենց բարոյականով եւ կրօնական նկարագրով կարող էին ազատացնել, թէ իրենք իրոք կոչված են այդպիսի կարևոր գործունեութեան համար։ Ընդամենն, Վան Լեննեպը ընդգծում է, որ սկսածն էի նկարագրով եւ ունակութիւններով երիտասարդներս, որոնք հարմար չեն կրօնական գործունեութեան նախապատրաստվելու համար, դպրոցից ազատ են արձակվում, քանի որ նրանք չեն կարող տեղ ունենալ սթաշակերի կրօնասիրութեամբ տողորում երիտասարդներու հետ<sup>58</sup>, ավելի պարզ ասած, նրանք կողքին, ովքեր պատրաստ չեն ամեն ինչ զօհել բողոքականութեան տարածման նպատակին։ Պետք է անել, որ այդպիսիների թիւը առանձնապէս մեծ չէր։ Դա զարմանալի չէ, բողոքականների դպրոցները սկզբնական շրջանում քիչ էին տարբերվում բուն միջնադարյան ուսումնական հաստատութիւններից. բնակներտների պարագմունքների, ինչպէս նաև հանգստի քոլոր ժամերը խտիվ բաշխված են, ուրախ, ազմկոտ խաղերը վտարված։ Ամեն ինչ պէտք է կատարվի խստաբարս և լուրջ, ամեն ինչում ակնհայտ է հայերի ազգային բնավորութեան, նրանց ապրելակերպի և սովորութիւններին անհարկը պնդանալով<sup>59</sup>։

Ի դեպ, բողոքական միսիոներներին հազիվ թէ հետաքրքրին սեպերի ազգային բնավորութեան, նրանց ապրելու կերպի ու սովորութիւններին հանգամանքները։ Անգամ բողոքական հեղինակները եղջում են, որ ամերիկայան դպրոցները հիմնականում գրառվում էին բնակների կարգի կերպի և արտադրանքի պրոպագանդամբ<sup>60</sup>։

Անգրագատնալով միսիոներների գործունեութեանը, սՄուրեւ ամսագիրը գրում էր. «...բողոքականների դպրոցներում ամերիկայան միսիոներները առելութեան էին բորբոքում հայ-լուսավորչական հովանի, անտարբերութեան ամեն հայկականի և սեր պատվաստում բողոքականութեան նկատմամբ։ Հայ բողոքականների հայրենիքը համարվում

էր Ամերիկան: Քուր դասարաններում կախված էին Անգլիայի և Ամերիկայի քարտեզները և պարսազիր՝ ասույթներ սկսովածաշնչից<sup>21</sup>:

Այս փաստերը վկայում են, որ ամերիկյան միսիոներներն ուսումնական հաստատությունների միջոցով զաղափարապես մշակում էին քրիստոսաբացմանը, գրանոզ իսկ նպաստելով պրոամերիկյան հասանքի ձևավորմանը: Ամերիկյան միսիոներների ամբողջ գործունեությունը կոչված էր գյուրացնել ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական էքսպանսիան Քուրքիայում:

Բանն այն է, որ միսիոներական զարոցների որոշ շրջանավարտների միջավայրում տարածված էր այն ստեղծությունը, թե միսիոներներն իրենց գործունեության մեջ առաջնորդվում էին քրիստոնեական ալլախիրության գաղափարներով, լինապնդելով ոչ մի շահագրգռական նպատակ: Այդ ստեղծության հեղինակներից մեկը՝ Գ. Սաֆարյանը, կոչ էր անում հազատալ սերանց մարդասիրական և քրիստոնեական նպատակների անկեղծությունը, հազատիացնելով թե իբր, միսիոներները՝ ընդհանրապես և, բողոքականները. մասնավորապես նպատակ լուսնին Արևմտյան Հայաստանում բողոքականություն տարածելու: Ըստ նրա, միսիոներները միայն ցանկանում էին հայերին մայրենի լեզվով սնոր կտակարանը ուսուցանել և հայ հոգևորականությունը օգնել ժամանակի ոգուն համապատասխան բարեփոխել լուսավորչական կեղեցիկ: Ընդ որում Սաֆարյանը պնդում էր, թե միսիոներները հետամուտ էին ազելի ազնիվ նպատակի՝ լուսավորություն տարածել Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների շրջանում և, որ նրանցից հետո էր, որ սկրիթության հայկական միավորված ընկերությունը իր ներգրումը բերեց տարրական զարոցների ցանցի ընդլայնման գործում<sup>22</sup>:

Գնահատելով հայերի միջավայրում զանազան միսիոներական ընկերությունների գործունեությունը, Վ. Հայկը հավատացնում էր, թե միսիոներները, օրինակ շառաշնորդվելով կրոնական և մարդասիրական զգացմունքներով՝ ամեն ինչ անում էին հանուն հայ ժողովրդի բարօրության<sup>23</sup>, ամենին լմահոզվելով ո՛չ իրենց, ո՛չ էլ այն ամերիկյան հաստատակների մասին, որոնք ֆինանսավորում էին նրանց գյուծունեությունը:

Ազնիկն, նա պնդում էր, թե միսիոներների լուսավորական գործունեության շնորհիվ սհայ ժողովուրդը առնչվեց XX դ. քաղաքականությանը: Սակայն հայտնի իրողություն է, որ Հայաստանում զարոցների գյուծություն ունեին վաղուց: Կասկածից դուրս է, որ Օսմանյան կայսրությունում հայերի, հույների և քրիստոնյա այլ ժողովուրդների

լուսավորական գործի գրգռմանը շատ ավելի բարձր էր, քան Թուրքի-  
 րինը: Դրանում նրանք պարտական էին իրենց մշակույթի լուսավորա-  
 կան վաղեմի ավանդույթներին, բայց ոչ միտիոններական դպրոցներին: Ը-  
 Մի խոսքով, բանն այն է, որ ամերիկյան և այլ միտիոններների գոր-  
 ծունեությունը շրջափուլ չէր ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես  
 էլ ամբողջ Օսմանյան կայսրության լուսավորական շարժման պատ-  
 մասության մեջ: Այդ իսկ պատճառով, շխտելով Թուրքիայի լուսավորու-  
 թյան զարգացման մեջ միտիոններների գործունեության նշանակությունը,  
 չի կարելի համամիտ լինել հայ մեծ լուսավորիչ, հեղափոխական-դե-  
 մոկրատ Մ. Նալբանդյանի այս առթիվ արտահայտած կարծիքին. «Ամե-  
 րիկյան միտիոնարների շարաշար ընթացքը Տանկաստանի մեջ, մեր  
 խեղճ ազգին աված հարվածները, և Քրիստոսի ավետարանը իրենց ձեռ-  
 քում խաբուսիյան գործիք շինելը դոքա տակավին հարյուրից մեկը չեն,  
 ինչ որ հայանի է լուսավոր մարդոց առհասարակ սրտոց միտնարների  
 վերաբերությամբ, նոցա ասածների հարյուրերորդ մասը տակավին  
 չէ...»<sup>64</sup>, նվ իրոք, միտիոններների լուսավորական, բարեգործական,  
 մարդասիրական և այլ գործունեությունը հարյուր հրրորդական մասն է  
 կազմում այն ամեն բացասականի, որ նրանք բերեցին Արևելք: Իզուր  
 չէ, որ բնորոշելով միտիոններների գործունեությունը, Վ. Ի. Լենինը  
 նշում էր, որ նրանք «...կողպուտաի քաղաքականությունը կեղծավո-  
 րությամբ քողարկում էին քրիստոնեության տարածումով»<sup>65</sup>:

Վերջ քննված փաստերը այս եզրակացությունն ևս մի խոսուն հաս-  
 տատուն են:

Р. С. ДАНИЕЛЯН

## ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРОТЕСТАНТСКИХ МИССИОНЕРОВ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

(конец XIX—начало XX вв.)

### Резюме

Статья посвящена проблемам идеологической экспансии капиталистических стран в Османской империи. Первоначально она проходила в форме учреждения в Турции миссионерских, филантропических и просветительских организаций, которые при непосредственной поддержке их государств занимались пропагандой культуры и языка своих стран. В статье подчеркивается, что их филантропические декларации скрывали далеко не альтру-

истические интересы колониальных держав—обеспечить свое экономическое и политическое влияние в Турции.

Автор подробно останавливается на деятельности американских миссионеров в Османской империи.

Объектом особого внимания капиталистических стран стали окраинные районы Турции угнетенные христианские национальности которой в результате ассимиляторской, шовинистической политики султанского правительства постоянно находились под угрозой исламизации. Используя тяжелое положение наименьшинств Османской империи и, в частности армян, миссионеры вели широкую пропаганду, обещая христианам, что с принятием протестанства они перейдут под покровительство их правительств, и тем самым отпадет угроза их насильственного уничтожения.

Деятельность протестантских миссионеров находила поддержку со стороны султанского правительства. Турецким правящим кругам было выгодно поддерживать религиозную разобщенность среди наименьшинств, с тем чтобы расколоть их единство и таким образом ослабить национально-освободительное движение угнетенных народов.

1 П. Ալպոլանեան, Պատմութեան հայ գրքերի, Գահիրե, 1847, էջ 248.

2 В. И. Семенов, Поездка в Малую Азию в 1901—1902 гг., СПб., 1904, с. 136.

3 E. Meara, Modern Turkey, New York, 1924, p. 130.

4 М. Кемаль, Путь новой Турции, М., 1929, т. I, с. 406.

5 В. Духовская, Из дневника русской женщины в Эрзеруме во время военного занятия его в 1878 г., СПб., 1879, с. 23.

6 С. М. Авопян, Западная Армения в планах империалистических держав, Ереван, 1967, с. 632.

7 П. Ալպոլանեան, Պատմութեանը եզրնայ հայտը, Գահիրե, 1852, էջ 252.

Kirşehirliglu E., Türkiyede misyoner faaliyetleri, İstanbul, 1963, s. 29.

8 П. Ալպոլանեան, Եզրնո աշխ., էջ 254—255. Kirşehirliglu E., Եզրնո աշխ., էջ 29.

9 П. Ալպոլանեան, Եզրնո աշխ., էջ 252.

10 Եզրնո աշխ., էջ 252—253.

11 E. Meara, Եզրնո աշխ., էջ 135.

12 П. Ալպոլանեան, Պատմութեանը եզրնայ հայտը, Գահիրե, 1852, էջ 252. L. J. Gordon, American Relations With Turkey, 1730—1930. An Economic Interpretation, London—Philadelphia, 1934, p. 221.

13 Քուրճիայում գործում էին նաև այլ երկրների միսիոներական գործակալներ: Միայն հաստատեցնապարտում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հային շատ խառնական, շնչի կրակական, երկու ուստիան, երեք ազատարանի և շատ փրկանական գաղտը:





- 26 Խաչն ունդում, էջ 108, Վ. Ո. Արևիկյան, Եղված աշխ., էջ 32:
- 27-Ա. Մ. Կոլոբանի, Եղված աշխ., էջ 126—127, 130; ԱՊՈՐ. ֆ. Կուրեանի ժողով (տպում), 1911, չ. 207, չ. 5:
- 28 Խաչն ունդում, էջ 104, ԱՊՈՐ, Կուրեանի ժողով (տպում), 1911, չ. 207) չ. 5:
- 29 Kirehirlibogiu E., Եղված աշխ., էջ 32:
- 30 «Յրագրեր», 1882, Ձ Թ, էջ 131:
- 31 Ա. Կոլոբանի, Եղված աշխ. էջ 127:
- 32 Խաչն ունդում, էջ 132:
- 33 Յ. Ս. Սրոսուրյան, Заметки о Турнии, — «Записки Кавказск. отд. императорского русского географ. общества», кн. XXV, том I, Тифлис, 1905, с. 27:
- 34 Հ. Չարամբեան, Եղված աշխ., էջ 825:
- 35 Յ. Յ. Չարամբեան, Տեղանկի պատմության նախը պնդանքն ժողովուրդի մեր պրնքը պատմաբանը, Չարսի, 1917, էջ 567, Վ. Ո. Արևիկյան, Եղված աշխ., էջ 10—11:
- 36 Ա. Կոլոբանի, Եղված աշխ., էջ 111, 136:
- 37 Մ. Կեռա, Եղված աշխ., էջ 405:
- 38 Ա. Կոլոբանի, Եղված աշխ., էջ 107—108:
- 39 E. Meard, Եղված աշխ., էջ 181—182, A. Sarnian, Եղված աշխ., էջ 170—171; Чернолуцкая, Несколько слов о народном образовании в Турнии, — «Учитель и школа», 1914, № 19—20, с. 56; F. Ross, The Near East and American philanthropy, New-York, 1929, p. 156:
- 40 Северский мирный договор и акты, подписанные в Лозанне. Под ред. проф. Ключникова и проф. А. В. Сабашни, М., 1927, с. 234; Makerssem Kamil Su, Tirknye cumhuriyet tarih'i, Istanbul, 1957, էջ 134; «Մարմար», 22-VIII.1925 W. Gerard, The Chester oil Concession and the Lausanne Treaty: «The Armentian Review», vol. 28, № 1(109), էջ 39:
- 41 Լ. Չարամբեան, Եղված աշխ., էջ 260; Վանի Հայկ. Եղված աշխ., էջ 408—411, 420:
- 42 Ա. Դ. Желтаков, Ю. А. Петроски, История просвещения в Турнии (конец XVIII—начало XX в.), М., 1965, с. 134:
- 43 O. Ergin, Եղված աշխ., էջ 1751. «Յրագրեր-Կոչընդ», արևել. 1982—1903 թթ. ու մի թուրք շի ազգայն: Այդ Խաչն ժամանակագրությանը հիշյալ Կոչընդ ազգայն էն 156 թվականին, 144 Հայ, 78 Հայն, 2 Հրեա և 17 անհրեյանցի: Ամերիկյան Կոչընդ գրքերը շրջանագրությունը մեջ արձանագրված էն Կոչընդ ընդհանրությանը անհրեյանցի: Մյուսն Կոչընդագրությանը Հեղափոխությանից ընտ թուրքերի միջև կնառնի լավով ազնվացում: ԱՄՆ-ի կառավարող շրջանները հրգում էն ձեռն թվով թուրքերի ներգրավել ամերիկյան գրքերները մեջ, որպեսզի նահանգն Կոչընդ անհրեյան անհրեյանցի և բարեփոխություն: Մյուսն Կոչընդ թուրքական կառավարող շրջանները ևս շահագրգռված էն ավելի ձեռն թվով թուրքերի գրագին կազմեր ունենալ: Թուրքայում նահապետական կարգերի նստատեղից ընտ անարևելյան գրքերներում ավերակների ազգայն կարգը արձանագրելու փորձելը: Այսպես, արդեն 1928—1929 թթ. «Յրագրեր-Կոչընդ» 700 ասանակները 532-ը թուրք էն (ավերակների 75%):

The Middle East Journal, 1961, No 3 p. 263 M. Kemah, Путь новор, Турция, т. 1, с. 313.

- 44 O. Ergin, *Երվանդ աշխ.*, էջ 548.
- 45 Քարվանդ է' А. Д. Желтиков, Ю. А. Петросян, *Երվանդ աշխ.*, էջ 134.
- 46 Մանուկյան ԿԵՆ А. Д. Желтиков, Ю. А. Петросян, *Երվանդ աշխ.*, էջ 145—149.
- 47 К. Д. Мачварянин, Коллежи Роберта в Константинополе. Ваттн, 1902, с. 4—9.
- 48 E. Чирнолуслан, *Երվանդ աշխ.*, էջ 328—330.
- 49 Վանի Հայկ, *Երվանդ աշխ.*, էջ 358—359.
- 50 АВІР, ф. Посольство в Константинополе, 1901, л. 5803, л. 15.
- 51 Լ. Սարգսյանց, *Այլ Քարթուս Հայտնություններ. — ՎՊարեհ, 1889, № 11, էջ 1726.*
- 52 Լ. Чирнолуслан, *Երվանդ աշխ.*, էջ 30.
- 53 А. Коллбаши, *Երվանդ աշխ.*, էջ 117.
- 54 Իսյն տեղում, էջ 120—121.
- 55 Իսյն տեղում, էջ 115.
- 56 Իսյն տեղում, էջ 116.
- 57 տրեմիտ, 1860, № 91, էջ 222—222, տեղումնախ, 1604, № 44, է. 141.
- 58 Ս. Արզրյանյան, *Երվանդ աշխ.*, էջ 865.
- 59 А. Коллбаши, *Երվանդ աշխ.*, էջ 111.
- 60 L. J. Gordon, *Երվանդ աշխ.*, էջ 344.
- 61 Լ. Սարգսյանց, *Երվանդ աշխ.*, ՎՊարեհ, 1889, № 11, էջ 1727—1728.
- 62 К. А. Сарсфян, *Երվանդ, աշխ.*, էջ 160.
- 63 Վանի Հայկ, *Երվանդ աշխ.*, էջ 427, 210.
- 64 Մ. Նարյանյան, ՈՓ, Ծրան, 1949, Կ. 4, է. 204.
- 65 Վ. Ի. Անյն, ՈՓ, Կ. 4, էջ 476.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵՐԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Իմպերիալիզմի գաւառաւորները իր հետ բերեց ոչ միայն համաշխարհային պատերազմներ, խաղաղութիւններ սպառնացող մշտական վտանգ, այլ նաև այնպիսի արյունալից, համախ կրկնվող կամ հարատևող երևութիւններ, ինչպիսիք են ցեղասպանութիւնը և ազարթիկիզը, ռասիզմը և մուլի շովինիզմը ու այդ երևութիւններին համապատասխանող մարդատաշաց տեսակետներ, օրենքներ, քաղաքականութիւն, ինչպես նաև մշակված աշխարհայացք:

Անցյալի համապատասխան փաստերը ցույց են տալիս, որ հիշյալ մեծագոյն սորորգութիւններին, մարդկութեան դեմ կատարված հանցագործութիւններին գլխավոր պատճառները եղել և մնում են՝ կրկնորեն կամ զաւթիւններ ձգտումը տեղացի ժողովուրդներին, տեղաբնակիւններին ձեռքից խլել նրանց հայրենի հողը, կուտակած հարստութիւնը, գուրս վանել նրանց երկրի տնտեսութեան, մշակութի, քաղաքականութեան մեջ գրաված դիրքերից, այդ ամենը ձեռք բերելով նույնիսկ տեղի ազգաբնակչութեանը ֆիզիկապես ոչնչացնելու գեռվ:

Դժբախտաբար, թիւ չեն վերահիշյալ գրույթը հաստատող օրենակները:

Այդ մասին են վկայում Յամանյան կայսրութեան պանթյուրքական շրջաններին, գերմանական Ֆաշիզմի, ԱՄՆ-ի, Հարավաֆրիկյան Հանրապետութեան վերնախավերի քաղաքականութիւնն ու հանցագործութիւնները, թիւներին ցեղասպանութիւնը և այլն:

Ազելի լայն իմաստով ցեղասպանութիւնը, ինչպես նշմարտորեն նշում է Իսախան Ի. Ն. Արցիբասովը, հատուկ է եղել Եթովպիա-ժոզիկներին, թուրքական սուլթաններին, չինական կայսրերին նվաճողական քաղաքականութեանը՝:

Մակայն, ակներև է, որ նախապես պլանավորված, հատուկ միջոցառումներով հասունացված ամբողջ ցեղերին, ժողովուրդներին և ազ-

գրութուններէ սնչացում՝ պատմութիւնը չէր արձանագրել մինչև իմ-  
պերիալիզմի գարաշրջանը:

Համոզիլ տեսով և պատմական մտեցնամբ Պրոսպեր Մերիմեն  
գեռնա անցալ գարում, իր «Կարլոս 9-ի գահակալութիւն» ժամանակա-  
գրութիւնըս վկայում գրում էր. «Մարդուդիմենտայան գիշերը, եռւնինկ  
իր ժամանակի համար մեծ հանցագործութիւն էր, բայց, կրկնում եմ,  
զանգվածային շարքը XVI դ. բոլորովին էլ անպիտի հանցանք չէր,  
ինչպիսին շարքը XIX դ. ք»:

Այն իր շահերով ու հետևանքներով, ավելի սարսափելի դարձաւ  
եռւն գարի վերջին և վերանց ուղղակի ցեղասպանութիւն՝ մեր գարի  
արշաւուսին: Մարդկութեան զմալը հանցագործութիւնն ունի տար-  
րեր ձևեր՝ ազգային-կուլտուրական, բիուզդիական և ֆիզիկական: Վեր-  
ջինս ամենից արժատականն է, քանի որ եսխատեսում է իսպառ ուղն-  
չացնել որևէ ցեղային, կրօնական, ազգային խումբ, միաժամանակ  
ձեռնարկելով ժնկարբերութիւնն արգելող, ինչպես եան ազգային մշա-  
կութիւնը, լեզուն և հետագա զարգացման բոլոր հնարավորութիւնները  
խաթարող միջոցներ»:

Հիշալ եզրահանգումը և գոյութիւն ունեցող փաստերը ցույց են  
տալիս, որ ցեղասպանութեան քաղաքականութիւնը իրականութեան մեջ  
հիմնական գծերով կրկնվում է, անկախ երանից, թէ զրա իրագործող-  
ները երիտթուրքերն են, գերմանական ֆաշիստները կամ այլ կարգի  
անակցիոն գործիչներ ու կազմակերպութիւններ: Տարբերութիւնը նպա-  
տակի կամ շահերի մեջ է միայն:

Մարդկային հասարակութեան, երա առանձին խմբերի ու անհատ-  
ների գործունեութիւնը, գիտակցված վարքագիծը ուսումնասիրում է  
մարքսիստական սոցիալական հոգերունութիւնը: Ըստ երա հիմնական  
գրութիւններից մեկի, երկրի տիրող շրջանների քաղաքականութիւնը և  
գրանից բխող մարդկանց գործողութիւնները բամենից առաջ պայմա-  
նավորված են տվալ հասարակարգի արտադրանքանակով, հասարակա-  
կան փոխհարաբերութիւնների բնութիւնով, հասարակական գիտակցու-  
թեան զարգացման աստիճանով»:

Իր հերթին ամեն մի հասարակարգի սոցիալական եորմերում ար-  
տահայտվում են հասարակութեան, ավելի ճիշտ տիրող զտտակարգի  
պատկերացումները մարդկանց գործերի վերաբերալ, կնկնով բեզուն-  
ված արժեքների որոշակի համակարգից:

Գերմանական ֆաշիստները հայտարարեցին՝ «Գերմանիան վեր է  
ամեն բանից և փորձեցին իրենց ենթարկել աշխարհը: Այդ նպատա-

կին հասնելու համար նրանք սանձազերծեցին երկրորդ համաշխարհային պատերազմը

Պատերազմի նախօրին, Հիուշերը մերձավորների շրջանում քաջահայտեց իր գործունեության ծրագիրը հեռևյալ խոսքերով. «Մենք պետք է զարգացնենք մարդազուրկ անկու տեխնիկան: Եթե ինձ հարցնեք, ինչ եմ ես հասկանում մարդազուրկ իմաստի տակ, ես կասեմ, որ նկատի ունեմ ամբողջ ցեղային միավորների վերացնելը: Եվ այդ այն է, ինչ ես մտադիր եմ իրականացնել: Դա, կույրա ասած իմ խնդիրն է: ...Ես իրավունք ունեմ վերացնել միլիոնավորների՝ ցածր ցեղերից, որոնք բազմաճում են ճիճուների նման: Համախոհների կողմից կանկրետացված այս ծրագիրը պետք է ապահովեր բարիացիների» տիրապետող միեւակը ամենուր, իսկ այսօր ցեղերը պետք է որպես սարուկներ աշխատեին նրանց համար և կամ ոչնչացվեին:

Ահապար ու մարդաայաց այս ծրագիրը առաջինը չէր իր գաղափարական ու քաղաքական ուղղվածությունը: Դրանից զոհու քառորդ դար առաջ, Նույնպիսի թունոս և հակամարդկային արտահայտություններով իրենց նպատակների մասին խոսեցին ժամանակակից Ֆաշիստների ուսուցիչներ՝ երիտթուրքերի պարագլուխները: Ծղտազորներով առաջին աշխարհամարտի տարիներին և նրա նախօրին ստեղծված պայմանները, երիտթուրքերը որոշեցին ի կատար ածել առանյակ տարիների ընթացքում ծրագրված ու մշակված հայերի ցեղասպանությունը:

Ընթերցող լայն շրջաններին վաղուց արզեն հայտնի է, որ 1915 թ. սկզբներին երիտթուրքական կենտրոնական կոմիտեն իր նխտերից մեկուսում վերջնականապես որոշել էր այդ խնդրի իրագործման ժամկետը: Զափազանց բնորոշ էր երիտթուրքական զինավարժների դիրքորոշումը՝ հար և նման Ֆաշիստական պարագլուխների վարքագծին:

Այսպես, հիմնական զնկուցողը, կոմիտեն պատասխանատու բարատուզար զոհու. Նազըմը տասի է... Ե՛ս թրքությունը կենդանացնելու համար ձեզի ընկեր, եղբայր եղա, ես թուրքին, միայն թուրքին ապրելը, այս հողին վրա անկախ իշխան մը ըլլալը կփափագիմ, ոչ թուրք տարրերը թող շնջվեն, որ ազգութիան և կրտսին ալ պատկանած ըլլան, այս երկիրը ոչ թուրք տարրերին մաքրել պետք է...»:

Երիտթուրք պատասխանատուներից Բեհաէդդին Եաչիրը հայտարարեց. «Հայերը կանգնած են մեր համախուսմական և համաթուրքական սրբազան իղեւաններու իրականացման ճամբուն վրա ու մենք անխուսափելիորեն կրախինք անոնց հետ: Ատիկա վեր և դուրս է մեր անձնական զգաշմունքներն ու տրամադրություններն: ...Հինն մեա-

ցած ազգերը՝ անհարազատ և վնասակար խոտերն արմատախիլ ըն-  
լով, մէր հողը մարքելու ստիպված ենք<sup>7</sup>։

Հիշյալ նիստի մեկ ուրիշ մասնակից՝ Հասան Յենմին պահանջելով  
հաշիքի լրիվ բնաշնչումը, գտնում էր, որ գործը հեշտացնելու համար  
անհրաժեշտ է երիտասարդներին ուղարկել բազմաճակատ, որանգ հեշ-  
տությամբ կարելի կլինի նրանց ունչացնել, իսկ բունը մնացող տկար  
ու ձերերը, կին ու երեխաներն ալ կհրամայենք և մի հավատացյալ-  
ները կմարքեն, ինքներնին կկողոպտեն... այս մեր հարմար կտեսնվիս<sup>8</sup>։

Ճեղասպանության բասպետներէ վերահիշյալ մտքերն ու ծրագրե-  
րը ցույց են տալիս ֆաշիստներին ու երիտօրդերին հոգնհարազատ  
կապերը և գործելակերպի հաշորդական փոխանցումը։ Այդ երևույթի  
հիմքում, ինչպես իրավացիորեն նշում է անգլիական պատմաբան Քրիս-  
տոֆեր Ջ. Ուոքերը իր «Հալոստան։ Ապրող ժողովուրդը աշխատության  
մեջ, ընկած են երկու կողմերի քաղաքական և փիլիսոփայական հա-  
վատամբը՝ հացիզմը և պանթուրքիզմը։ Երկու գաղափարախոսություն-  
ներն էլ սպառնալու են բարձր առաջի հասկացությունը և կողմ-  
նակից են ունչացնելու բոլոր նրանց, ովքեր դրան չեն պատկանում»<sup>9</sup>։

Մեկ հողվածի շրջանակներում դժվար է համատեղել կատարված  
ցեղասպանությունների վերլուծությունը, դրանց պատմական արմատ-  
ներն ու հետևանքները։ Այդ պատճառով, և լինելով քաշածանոթ Օս-  
մանյան կայսրության պատմության նոր շրջանի պրոբլեմներին, նախ-  
ընտրելի ենք համարում առ միայն հայկական ցեղասպանության հետ  
կապված «ինչո՞ւ և ինչպե՞ս» հարցերի պատասխանները։ Դրանց անդ-  
բազանալու անհրաժեշտությունը ելնում է թե՛ գիտական նոր մեկ-  
նարանում տալու և թե՛ թուրք ղեկավարների, մտավորականների, գրող-  
ների, լրագրողների և այլ կեղծարարների ելույթներին ինչ-որ մեծ  
հակահարված հասցնելու ցանկությունից։

Ինչպես վերևում նշվեց, մարդկանց խմբային ու անհատական  
գործողութունները կապված են սոցիալական միջավայրի, դասակար-  
գային փոխհարաբերությունների և հասարակական կյանքի որոշակի  
պահանջների հետ։ Օսմանյան կայսրությունում պատմականորեն փո-  
փոխության ենթակա այս գործոնները, իրենց հիմնական գծերով պահ-  
պանվեցին մինչև նրա անկումը և ունեցան վճռական ազդեցություն  
հսկայական երկրի հասարակական հարաբերությունների վրա։ Սո-  
ցիալական պայմանների ու հիշյալ գործոնների շարքում որոշիչ դեր  
խաղացին ռազմաֆեոդալական վարչակարգը և նրա գլխավոր հիմքը

հանդիսացող թուրք վերնախավի տիրապետությունն ու քաղաքակա-  
նությունը, ինչպես նաև մահմեդական կրոնի անառարկելի ազդեցու-  
թյունը սոցիալական ու քաղաքական հարաբերությունների վրա:

Իսկ ի՞նչ կեկրեա գործոններ կամ պատմական պայմաններ ստեղ-  
ծեցին ու անաժորեցին հիշյալ իրավիճակը Օսմանյան կայսրությունում:

Ամենից առաջ՝ թուրքական վաղատուն ցեղերի հաղթարշավներն  
էին զեպի Արևմուտք և դրանց հասարակական հետևանքները XV—XVI  
դարերում, երբ բազմաթիվ պետությունների փլատակների վրա բարձ-  
րացավ օսմանյան բռնապետությունը: Հաղթողի իրավունքով թուրք  
նվաճողները ենթարկեցին տեղական ժողովուրդներին, մացրին իրենց  
օրենքները, զենքի ուժով հաստատեցին իրենց գերիշխանությունը:

Մինչև XVII դ. կեսերը պատերազմն էր նրանց հարստության հիմ-  
նական աղբյուրը, ինչպես նաև հպատակ ժողովուրդների ու մահմեդա-  
կան աշխատավորության վրա դրված հարկերն ու տուրքերը, մշտական  
երևույթ գարձաժ. բռնազրավումներն ու թալանը: Դարեր շարունակ զո-  
յություն ունեցող այդ փոխհարաբերությունները սովորական և օրի-  
նական դարձրին հպատակ ժողովուրդների՝ ուսյալի իրավազուրկ զի-  
նակը և տիրապետողի արտոնյալ, լիիրավ լինելու հանգամանքը: Այդ  
ամենը հիմք ծառայեցին թե՛ համապատասխան քաղաքականության և  
թե՛ հասարակական մտայնության անաժորմանը:

Համաձայն սոցիալական հոգեբանության մեկ այլ դրույթի, հո-  
գեբանական դիրքավորումը ապահովում է համապատասխան վերաբեր-  
մունք զեպի սվյալ երևույթը: Իսկ այդ վերաբերմունքը բերտորեն կապ-  
ված է սովորույթի ու սովորությունների հետ, հաճախ չգիտակցված՝  
անհատի կողմից<sup>10</sup>:

Երիտթուրքերի զեկավարներից Ջենաբ Եհնարեղզինը, արտահայ-  
տելով տիրապետող կարծիքը, գտնում է, որ երկիրը գրավել էին թուր-  
քերը, բերանք էլ պետք է պաշտպանեին ու կառավարեին այնք, ոչ մահ-  
մեդական հպատակներին թողնելով առևտուրը և տնտեսություն վա-  
րելը<sup>11</sup>: Աշխատանքի նման բժասարակական բաժանումը՝ մեկը հրամա-  
յում է, մյուսը կատարում, պահպանվեց կայսրության գոյության հա-  
մարյա ամբողջ շրջանում և հանդիսացավ նրա պատմության սոցիա-  
լական հիմնական գործոններից մեկը:

Մյուս շափազանց կարևոր գործոնը մահմեդական կրոնն էր և  
նրա օրենքների, կարգ ու կանոնի, մարդկային փոխհարաբերությու-  
նների օրենսդիրքը հանդիսացող շարիաթը: Իսլամն ու շարիաթը մարդ-  
կային հասարակությունը բաժանում են երկու դասի՝ մահմեդական



Հավատացյալների և անհավատների կամ գլավուրների Իսլամը Հանդես է դալիս որպես իր Հեանորդների տիրապետութիւնն անհանգող գործուն և ինչպես Կ. Մարքսն է ասում. «անհավատներին հայտարարում է օրհնքից զուրս և ստեղծում է մահմեդականների և անհավատների միջև անբեղձատ թշնամութիւն վիճակ»<sup>12</sup>: Մանուկ հասակից մահմեդականը դաստիարակվում է ալլադավանների հանդէպ թշնամութիւն կամ անհաշտութիւն սգով: Ամբողջ կյանքում նրան հավատացնում են, որ նա բարձր է ամեն մի գլավուրից, կարող է նրան հրամայել, նրանից պահանջել, նրանը վերցնել:

«Մահմեդականը (և ինչքան բարձր է նրա իշխանութիւնը և դիրքը, նույնքան բարձր է նրա զգացմունքը),—գրել է անգլիացի Մ. Մակկոյը,—յի ճանաչում ռայային որպես մարդկային նույն ցեղին պատկանողի, որից ինքն է սերում: Նա գիտում է ռայայի սեփականութիւնը, նրա կյանքը և կանանց, որպես իր օրինական ավարը, և քրիստոնյայի կողմից ամեն մի դիմադրութիւն համարում է հանդիսութիւն, որը պետք է պատժի հենց տեղում»<sup>13</sup>:

Միանգամայն իրավազուրկ հպատակը, որը շուներ հնազադութիւն և իրավունք պաշտպանելու իր կյանքի ամենատարրական պաշմաններն անգամ, ստիպված էր համակերպվել ու ենթարկվել: Մարքսի բնորոշմամբ, անկախ իր սոցիալական դրութիւնից թուրքը տպակահում էր արտոնյալ կրոնին ու ազգութիւնը, միայն նա իրավունք ուներ զենք կրելու և ամենաբարձր դիրք ունեցող քրիստոնյան պարտավոր էր հանդիպելիս ճանապարհը զիջել հասարակութիւն ցածր խավին պատկանող մահմեդականին»<sup>14</sup>: Այս իրավիճակը օրինականացվել էր և դարձել քաղաքականութիւն և առօրյա կյանքի կարևոր կողմերից մեկը: Կրոնական պատկանելիութիւնը դուզահեռ բնորոշվում էին ազգային (էթնիկական) տարբերութիւնները կամ, ավելի ճիշտ, բացառվում էր ալլադգիների գոյութիւնը, նրանք համարվում էին սամանցիներ, իսկ ավելի ուշ՝ թուրքերու Օրինակ, դարձր շարունակ քրդերը շին ճանաչվել որպես ինքնուրույն ժողովուրդ: Այժմ նրանք անվանվում են շինեային թուրքերա կամ քուրդ-թուրքերու նույնիսկ հայերին փորձում են ներկայացնել որպես քրիստոնյա թուրքերի:

Մյուս կողմից թուրք ժողովրդի դարձր շարունակվող արտոնյալ տիրապետող վիճակը, նրա անառարկելի իրավունքները, հասկանալի քրիստոնյա ազգութիւնների նկատմամբ, անզրազանաւրով նրա դիտակցութիւն մեջ, ամբապնդվելով նրանում և անցնելով մի սերնդից

մշուտին, ձևավորվել էր որպես այդ ժողովրդի հոգեբանական կերտվածք, որպես նրա ազգային բնավորությունը

Ասոցիալական հոգեբանությունը ուրիշներից վեր ու գերազանց լինելու ձգտումը կամ մարմաչը համարում է բարձր ուսուսյին պատկանելու անհուսալ զգացմունքի հոգեբանական արդյուրը, որի ակունքը պատմական պայմաններն են, տիրապետող սոցիալական միջավայրը: Անհրաժեշտ է նշել նաև, որ ազգային հոգեբանությունն արտահայտող երևույթները շափազանց կենսունակ ու վարակիչ են, գալիս են վաղ ժամանակների ցեղային սովորություններից և հարատևում են ժողովրդական զանգվածների նիստ ու կացի մեջ: Այս ամենը շափազանց բարեբեր հող են պատրաստում Հեազհետե ձևավորվող էրևոցենտրիզմի համար, իսկ վերջինս, որպես մնայուն գործոն, խանգարում է ժողովուրդների մերկեցմանը, նոր սերունդների ինտերնացիոնալ դաստիարակությունը:

Քրիստոնյաների բռնի կամ ակամա իսլամացումը, ազգային մշակույթի ու լեզվի զարգացման Հանապարհին ստեղծած դժվարությունները, ազգային հալածանքներն ու կոտորածները, ախուսմանային, լսովեցին տիրող վերնախավի և ընդհանրապես թուրքերի ցանկացած արդյունքները:

Այդ միտքը հաստատում են 1911 թ. հոկտեմբերին երիտթուրքական համագումարի որոշումները՝ Քուրքիան իրապես ու ամբողջապես մահմեդական երկիր և թուրքերինը միակ տիրապետող լեզու դարձնելու վերաբերյալ: Օսմանյան պետության կառավարիչները նրա 500 տարվա գոյության վերջին ստիպված էին խոստովանել, որ թուրքական հպատակների օսմանցիացումը պիտի գործադրվի ուշ կամ կանուխ, սակայն, պարզ է թե ասիկա լի կրնար իրականացվել համոզումով, այլ պետք է զինված ուժերու դիմենք<sup>15</sup>: Այսուհանդերձ, հավատացած չլինելով, որ նրանց կհաջողվի լիովին հասնել իրենց հպատակներին, երիտթուրքերը տողանցք են թողնում, նշելով, որ այլազգիները տերան պահել իրենց կրտսեր, բայց ոչ լեզունս: Քուրք լեզվի տարածումը գերազանց միջոց է բնահանգականությունը հաստատելու և մյուս տարրերը ձուլելու<sup>16</sup>: Եվ այս քաղաքականությունը, լինելով սահմանադրական պահանջ, տարվում է ամենայն հետևողականությամբ մինևն որս՝ Քուրքիայում բնակվող բոլոր այլազգի ժողովուրդների նկատմամբ:

Այսպիսով, պատմական ու սոցիալ-տնտեսական պայմանները, թուրք բռնատիրության քաղաքականությունը, ազգային ու կրտնական խտրականությունը հանգեցրել էին մի իրավիճակի, երբ քրիստոնյա և

ու-թուրք մյուս ժողովուրդները կամ նրանց ներկայացուցիչները արժեզրկվել կամ զեզվավացիայի էին ենթարկվել որպես մարդիկ, նրանց գոյությունը չէր պահպանվում ու բացակայում էր արինականությունը մարդկանց փոխհարաբերությունների մեջ՝ այս բոլորից զեպի ցեղասպանությունը մնացել էր մի քալլ, որի իրագործելը միայն ժամանակի խեղդեր էր:

Սակայն այդ երևույթների դեմ ընդգնեցին հաստակ ժողովուրդները, որոնց ազգային-ազատագրական պայքարը ընդլայնվում էր Օսմանյան կայսրության նգնաժամի խորացմանը զուգընթաց: Անցյալ դարի սկզբին այն անկախություն բերեց հերոսական հույն ժողովրդին: Դարի վերջին քառորդին հետզհետե ազատագրվեցին բալկանյան ժողովուրդները, ակտիվացավ իրենց ազգային վերելքն ապրող Հայերի պայքարը: Զենքի ուժով հաստատված պետության կառավարիչները հասկանում էին, որ երկրի միասնությունը հին ձևով պահպանել այլևս անհնար է: Քարեփոխումների փորձերին զուգորդեց օսմանիզմի, ապա պանիսլամիզմի և պանթուրքիզմի կամ թուրքական մեծապետական շովինիզմի քաղաքականությունը: Մինչև 1860-ական թթ. պաշտոնական մարդկանց բազմաթիվ հայտարարություններ, գրագրություններ, ուղղակի ցուցումներ՝ պահանջում էին խեղդել ինքնավարության ամեն մի ձգտում: Երբեմնի մեծ վեզիր և արտաքին գործերի մինիստր Յուսուֆ փաշան իր քաղաքական կտակում պահանջում էր երկրի բոլոր օջևղների համահունչում: Տասը տարի հետո, 1879 թ. մեկ այլ մեծ վեզիր, Քյամիլ փաշան հայտարարում էր՝ «հայ ազգը վերացնելու, անհետ և անձիգ ընելու ներքև մի այդ ի զուրի հանելու համար բան չի պակասի մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք—լիբերալները, քրդերը, կուսակալները, գառավորները, հարկաճանները, ոստիկանները, վերչուպես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կհայտարարենք, և դուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվոր և ոչ պաշտպան»<sup>17</sup>:

Թուրքիայի ղեկավարները, համոզված, որ նախապատրաստական շրջանը ավարտվել է հաշտությունում, խոսքից անցան գործի: Գոյություն ունեցող մի շարք միջազգային փաստաթղթեր, զեսպանների նոտաներ, ուսումնասիրություններ, ուղղակի նշում են, որ վիճակը հայկական շրջաններում խիստ սրվել է և այն կարող է հանգեցնել քրդատեյա ամբողջ բնակչության ոչնչացմանը<sup>18</sup>: Լուսավորության քննազնվառում ղեկավարներից Մուրադ քեյը 1910 թ. ժնկում լույս ընծայած «Թուրքիայի ուժը և թուլությունը» գրքում գրում է, որ զեռև 1882 թ.

հրապարակվել էին հայերին հետապնդելու գազանի կարգադրություններ, որոնք պահանջում էին կրճատել հայկական հրատարակությունները, կազմակերպել բռնություններ, ինչքերի բռնագրավում և այլն<sup>19</sup>։

Իսկ 30-ականների սկզբին «Համիդիե» անկանոն հեծելազորի կազմակերպման հիմնական նպատակը հայկական ազատագրական շարժումը խեղդելն էր, որ և մասամբ իրականացրին թուրքական կոստանալուր բանակի զորամասերի հեռ՝ Սասունի ապստամբության տարիներին։ Մի քանի տասնյակ քաղաքների և այլ բնակավայրերի ղեկավար պաշտոնյաներից ուղղակի պահանջվում էր կազմակերպել շարժեր և գույքի ու հարստության բռնագրավում։

Կոնկրետ, բազմաթիվ փաստերով՝ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողովածուի մեջ ցույց են տրված Արզուլ Համիդի կառավարության կազմակերպած այս հանցագործության զրբվազները։ «Տեղական՝ աշխարհիկ, հոգևոր և սաղմուկան իշխանությունները, — եղված է ֆրանսերեն լեզվով մի փաստաթղթում, — որոշ տեղերում բացարձակ ղեկավարում են բարդերը կամ ուղղակի մասնակցում գրանց... Պալու քաղաքում մասնակցում էին՝ կայմակամը, մուֆտին, սոսիականության կոմիտարը... զորքը և ամբոխը հրավիրում էին մասնակցելու շարժերին, ինչպես պատերազմի պահին՝ փոշեր հեշնցնելով»<sup>20</sup>։ 1894—1896 թթ. դանգվածային կոտորածները մայրաքաղաքում, գավառներում և հատկապես Արևմտյան Հայաստանում 300 հազար զոհերից և հսկայական հարստությունների կորստից բացի երկրում սանդժեցին լսփառանք լսրված վիճակ՝ քրիստոնյաների և մասնավորապես հայերի համար։ Այնուհետև շարունակվեցին հետապնդումները։

Որպեսզի շտեղծվեն պատրանքներ՝ 1908 թ. երկաթուղային հեղաշրջումից հետո վերահիշյալ քաղաքականության փոփոխման վերաբերյալ, ազատության լսփառանք կարճ շրջանին հաշորդեց 1908 թ. Ազանայի շարժը։ Երեստ սրվեցին աղաչյին փոխհարաբերությունները։ «Երկաթուղային», — ելում է շարվազան 1912 թ. ամսանը, — հենց առաջին քայլերից, կարծեք թե զիտմամբ, իրենցից վանում էին Օթոմանյան կայսրության ժողովուրդներին... Նրանց ձգտումը թուրքացնել սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին և ուրիշներին, ընդունել է ավելի կուպիտ ու հետևողական բնույթ, քան Արզուլ Համիդի օրոք էր»<sup>21</sup>։ Ո՛ր մեղիքի անդամ Գրիգոր Զոհրապի ու այլ գործիչների, ո՛չ էլ հոգևոր առաջնորդների ու կուսակցությունների ղեկավարների գիմումներն ու բողոքները լուսնցան որևէ գրական հետևանք։ Հայերին «շեղացնելու

Նախապատրաստական միջոցառումները կատարվում էին համարյա բացարձակ:

Այնուհանդերձ, հարց է ծագում, մի՞թե անխուսափելի էր Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը: Տեսական առումով այդ հարցին կարելի է տալ բացասական պատասխան: Ենդերը կոնկրետ վերլուծելիս մենք հանգում ենք հետևյալ եզրակացություններին: Ցեղասպանությունը երևի անխուսափելի չէր լինի. ա) եթե իրագործվեին անցյալ դարի վերջին նախատեսված ռեֆորմները և Արևմտյան Հայաստանը ձեռք բերեր ինքնուրույն կառավարվելու իրավունքներ և ունենար ոչ թուրք կառավարիչներ: բ) Եթե կյանքում իրականանար երիտթուրքերի առաջադեմ թևի ղեկավար Մեհմեդ Սարահչղզիևի ծրագիրը երկրի ապակենտրոնացման և ոչ թուրք (հատկապես քրիստոնյա) ժողովուրդների ինքնավարության մասին: գ) Եթե տեղի լուծենար առաջին համաշխարհային պատերազմը, երիտթուրք ղեկավարները երկիրը շրջափն այդ սպանդի մեջ և շտանգծվեին համապատասխան պայմաններ գեներցիզը իրացնելու համար: Եվ, դ) եթե մեծ պետությունները իսկապես ցանկանային պաշտպանել քրիստոնյա ժողովուրդների շահերը և թույլ շտային մշտապես տեղի ունեցող կամայականություններն ու բռնությունները: Մինչդեռ վերոհիշյալ բոլոր խնդիրները կրում են թեական բնույթ և նրացից ոչ մեկը ըստացավ դրական լուծում: Հանրահայտ է, որ արդու-համիդների ու քյամիլ փաշաների քաղաքականության հետևանքով ռեֆորմները ձախողվեցին, և ընդհակառակը, սանձազերծվեցին հայահալած միջոցառումները, սկսած անկանոն համիդի գնդերի կազմակերպումից: Սարահչղզիևը երիտթուրքերի կողմից ճանաչվեց հայրենիքի դավաճան և ստիպվեց հեռանալ երկրից: Իսկ վերջիններս իրենց պանթուրքական գաղթողական գլխները կենսագործելու նկրտումներով, իմպերիալիստական Գերմանիայի ղեկավարությունը բնդաշնեցին պատերազմի ժամաչը, մեծացնելով նրա մասնակիցների թիվը: Ե. Ծ. Լուղնովելյաը հավաստում է, որ բազմաթիվ պետական ու գինավորական գործիչների կարծիքով, պատերազմին ռթյուրքիայի մասնակցությունը հետևանքով, համաշխարհային սպանող երկարաձգվեց երկու տարով<sup>22</sup>:

Վերջապես, մեծ տերությունների քաղաքականության հիմքում միշտ ընկած էին իրենց սեփական շահերը և նրանց գործողությունները պայմանավորված էին միայն այդ շահերից ելնելով: Ավելորդ չի մեջբերել Մարքսի ու Էնգելսի եզրակացությունն այն մասին, որ մեծ տերությունները տասնյակ տարիներ պահպանել են Օսմանյան կայսրու-

Քլունում տիրող իրավիճակը, որպեսզի խանգարեն Ռուսաստանի Հեարավոր առաջխաղացումը: Մյուս կողմից այդ իրավիճակը քրիստոնյա հպատակների համար տեղանակում է պարզապես հավերժացնել Քուրթիայի կողմից նրանց կեղծքումը<sup>25</sup>:

Այդպիսով «Քուրթական կարգերը» կ' օրյակափոխվի պատճառներով և սուրյակափոխվի գործանների ազդեցության հետևանքով ցեղասպանությունը դարձրել էին անխուսափելի: Մուշկես ասվեց, քաղաքական ու սոցիալական իրողությունը, Քուրթ կառավարիչների ակտիվ միշամառությանը զնալով սրվում էր: Նրանք մտադիր էին սգտագործել մոտալուտ պատերազմը իրենց ծրագրերը իրականացնելու համար: Հաս իրզրումի ուստական զլիսավոր հյուպատոսի 1914 թ. հոկտեմբերի 9-ի հեռագրի, Արևմտյան Հայաստանի շրջաններում կենտրոնացված էին 2300 հազար մարդ, որոնցից 100 հազարը՝ կանոնավոր զորք... Հայկական շարդը հետամզվել է հարուստ մահամեղականների պահանջով, որոնք նախապես ցանկանում են երաշխիք ունենալ, որ չեն պատժվի Ռուսաստանի կողմից<sup>26</sup>: Ջինված ուժերի կենտրոնացմանը զուգահեռ փոթորիկի նման անցավ բանագրավումների ու թայանի կամպանիան:

Ջորջը մեծ կարիք ուներ հագուստի, մթերքի, զորանոցների, զենքի և այլն ու այս բոլորը պետք է կատարվեր հեարավորին լափ քրիստոնյա բնակչության հաշվին: Հայտարարությունները զորահավաքի՝ տանձերբերլիթես մասին կպղծեցին փողոցներում 1914 թ. հուլիսի 30-ին և մոտակա ամիսներին, զոնա մինչև տեղահանումը, կողոպտված էին խանութները, արհեստանոցները, տները, որոնց վերջնական բանագրավումները ավարտվեցին բանագրված ժամանակ, որը շուտով սկսվեց:

«Օսմանյան հպատակներ հանդիսացող բոլոր հայերին, հինգ տարեկանից վեր, զուրս տանել բնակավայրից և ոչնչացնել» այս էր երիտթուրքական Քալաթի, էնվեր, Ջեմալ փաշաների կառավարության հրահանգը, որը հեռագրով հաղորդվել էր 1915 թ. փետրվարի 27-ին տեղական իշխանություններին<sup>27</sup>:

Հայերը հայտարարվել էին օրենքից զուրս և ենթակա էին բնաջնջման: Այս նպատակին հասնելու համար մորիլիզացվել էին՝ պետության բոլոր մարմինները, կանոնավոր ու անկանոն զորքը, ոստիկանությունը և ամբոխը: Բանտից ազատվել էին մոտ 30 հազար քրեական հանցագործներ, լրացրել խուժանի շարքերը: Արլունոտ հանցագործությունները կատարվում էին անողորմորս, կառավարական մարմինների մշտական հսկողության տակ, որոնք հետևաբար իրենց վրա էին վերցրել մեր զարի առաջին ցեղասպանության ամբողջ պատաս-



խանատուությունը: Երիտթուրքական կոմիտեն այդ ուղղակի խոստովանեց իր 1915 թ. փետրվարի 18-ի հայտարարության մեջ. «Ջեմիաթը սրտեց ազատել հայրենիքը այդ ազգի՝ (հայերի) փառամոլությունից, հայրենասիրական՝ թելադրանքներից մզված իր վրա վերցնելով պատասխանատուությունը անարգանքի համար, որը սեռացնելու է օթոմանյան պատմությունը»<sup>26</sup>:

Անում էր, որ հանցագործության կիրառողները կանգ չառնեին ոչ մի արգելքի առջև: Իսկ սահղծված պայմանները նպաստում էին դրան: Սպանելու ու բռնանալու ցանկությունը, կոզոպտելու ու հարստանալու հնարավորությունները ցեղասպանության ոլորտը ներքաշեցին տասնյակ հազարավոր մարդկանց: Նրանք զնացին հանցագործության համարձակ ու անվախ, քաշ գիտենալով, որ իրենց գործողությունները հաճանություն են արժանանում և ազատ են որևէ պատասխանատուությունից ու պատժից: Ստեղծվեց խիստ լարվածության մթնոլորտ, որի հետևանքով ծայր աստիճանի բորբոքվեցին կրթերը, հետզհետե աճեցին հարձակողական արամադրությունը, գործելու ցանկությունը, ուշանալու մտավախությունը, ինչպես նաև անվստահությունը: Այդպիսի իրավիճակում, գրում է Բ. Պորշենը, առանձին անհատների մտ կարող է լլվիկել ներքին ոչ մի կապ և նրանք դառնում են ընդհանրություն միայն այն շափով, ինչ շափով ընդգծված են միտտեսակ, բացասական, ոչնչացնելու զգացմունքով ղեպի ինչ-որ անձնավորություններ, սահմանումներ, ղեպքեր»<sup>27</sup>:

Հայկական սպանդի կազմակերպիչները անշուշտ հաշվի էին առնել նաև այն, որ շրջաններում, որտեղ տաղարնակչության կուլտուրական մակարդակը ցածր է, ժանր են մարդկանց անտեսական պայմանները, ամբոխի ոգին հատկապես հարձակողական է ու անողորմ: Հանրահայտ է, որ նման արամադրություններով համակված խուժանի շարքերում հետզհետե ավելի անզուսպ են դառնում անհատները, խիստ պակասում է ինքնաքննադատական վերաբերմունքը, մնչվում է պատասխանատուության զգացմունքը՝ ղեպի իր արարքները, առաջ է գալիս ուժի և անհայտ մնալու զգացմունքը կոլեկտիվ գործողությունների ամեն մի մասնակցի մոտ: Նման իրավիճակում ստեղծված հոգեբանությունը անհատին ազատում է մտածելու, սրտելու և որևէ բան մենակ ձեռնարկելու դժվարությունից: Նա չի խորհում իր ամեն մի քայլը: Նա կատարում է այն, ինչ ընկերը, հարևանը, տասնյակ ու հարյուրավոր մարդիկ, առանց հետևանքը ի նկատի առնելու: Որպես կատարվող ղեպքերի ուղղակի հետևանք ամբոխի գործունեության մեջ տեղի է ու-



եկեում գաղափարական և սոցիալ-հոգեբանական ազդեցությունների միացում և պրակտիկ կենսագործում, կամ սերտաճում մարզկանց իրական վարքագծի մեջ: Զանգվածային հիստերիայի, ռազմական, կնդծ հայրենասիրական մոլուցքի, նացիոնալիստական ու շովինիստական արամադրությունների հետևանքով ստեղծված իրավիճակը, անկասկած, զստեում է ֆոն, որի վրա, երբեմն ծավալվում են ամենաողորմական զեպերը<sup>28</sup>:

Այդ ամենը, լիուլի արտահայտվեցին մեր ազգային ողբերգության՝ մեծ Եղեռնի տարիներին:

Հայ ժողովրդի բարեկամ գերմանական հումանիտա Իոհանես Լեփսիուսի, ակադեմիկոսի ու ցավակցողի հայտարարության համաձայն, Քուրբանյան իշխանությունների կարգադրությամբ, երկիրը պատերազմի մեջ մտնելուց հետո բոլոր հայ պետական ժառանգները ազատվեցին աշխատանքից: Հայ ժողովրդին զիտատեցին՝ անշատելով և հեռացնելով նրանից հասարակական, քաղաքական ու կուսակցական գործիչներին<sup>29</sup>:

Ամենից առաջ, 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալեցին պառլամենտի անդամներին, հայտնի հասարակական գործիչներին, լրագրողներին, զրոզներին, ուսուցիչներին, հոգևորականներին և այլ հայ մտավորականներին, մոտ 250 մարդ: 20 օրից հետո այդ թիվը անցավ 3000-ից:

Պատերազմի սկզբին ավելի քան 50 հազար տղամարդկանց տարան բանակ: Բոլոր ձերբակալվածներին և զենքի կոլվածներին հեռուհեռու ոչնչացրին: Հետո սկսվեցին բռնի արտագաղթը, թալանը, սպանությունները: Տղամարդկանց հեռացրին առաջին հերթին: Մնացած ձերբերին, կանանց, երեխաների մի մասին տարան և մահմեդականացրին, շարդին մասնակցող թուրք և քուրդ մեծահարուստներ: Մյուս մասը ոչնչացվեց երկար ու տանջալից ճանապարհորդության ընթացքում: Թափվեց 1,5 միլիոն անմեղ զոհերի արյունը: Մի փոքր մասը միայն հասավ Սիրիայի անապատները, կամ դժվարությամբ գաղթեց երկրից դուրս: Ոճրագործությունը կատարվեց ըստ ծրագրված շահերի, ձեռքի, օգտագործվեցին ֆաշիստական կարգերին հատուկ բոլոր միջոցները: Մեծ Եղեռնը դրկեց հայերին իրենց հայրենիքի մեծ մասից՝ Արևմտյան Հայաստանից և կենդանի մնացածներին ցրեց աշխարհով մեկ:

Սակայն, հայ ժողովուրդը ի դեմս Սովետական Հայաստանի վերածնվեց, բարգավաճեց և դարձավ հզոր Սովետական Միության անբաժանելի մասը:

Բայց ազգային ողբերգությունը խոր ու ծանր հետքեր թողեց հայ ժողովրդի պատմության ու մշակույթի վրա, երա հոգեբանության մեղեկն էր առաջանցի ու պահանջում է ցեղասպանության հանցագործներին և նրանց պաշտպաններին ենթարկել խիստ պատասխանատվության, որպեսզի մարդկությունը մշտապես ազատվի, բացի պատերազմներից, իր համար չափազանց մեծ վտանգ ներկայացնող մյուս կրեույթներից՝ սասիզմից ու ցեղասպանությունից, որից դեռևս տառապում են բազմաթիվ ժողովուրդներ:

Օ. Գ. ИНДЖИКЯН

## СОЦИАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ И ГЕНОЦИД

### Резюме

Геноцид—как ряд преднамеренных, специально подготовленных действий по ликвидации отдельных групп людей, племен, народностей по национальным, религиозным и другим признакам, является порождением империалистической эпохи. Цель подобных преступных действий со стороны пришельцев или захватчиков—лишение местного населения исконной земли, накопленного богатства, занимаемых позиций в экономике, политике и культуре страны.

На примере геноцида арийи в Османской империи, с позиций марксистской социальной психологии анализируется национальная трагедия армянского народа.

Существовавшее веками неравенство между покорителями и покоренными, исповедующими ислам и неверными («гягурами»), турками и нетурками—создало соответствующую общественную атмосферу и социальную среду, при которых граждане одного и того же государства делились на полноправных и неполноправных. А развитие капиталистических отношений и вмешательство империалистических держав еще более обострили внутренние противоречия. Военно-феодалный режим, будучи явным противником новых буржуазных порядков, ожесточил великодержавно-шовиннистическую политику в отношении христианских народов—основных носителей капиталистических отношений.

Веками продолжавшиеся турецкими властями государственная политика угнетения и репрессивные мероприятия создали умонастроения, психологию превосходства среди мусульманского населения. Используя вышеназложенные обстоятельства ту-

репкие верхи подготовили и, начиная с 1890-х провели ряд массовых избиений армян и других групп населения, а свою анти-армянскую политику завершили геноцидом в годы первой мировой войны. Признание этого факта, со всеми вытекающими мерами, требует возрожденный армянский народ.

- 1 И. Н. Арцибасов, За пределами законности, М., 1981, с. 240.
- 2 Проспер Мариме, Избр. соч. в двух томах, т. I, М., 1956, с. 401.
- 3 М. Н. Анджамин, Геноцид в политике империалистических государств, М., 1967, с. 5—6.
- 4 Основы социальной психологии и пропаганды, М., 1982, с. 32.
- 5 Нюрнбергский процесс, т. 3, М., 1966, с. 125—126.
- 6 Եկեղեցւոյ թղթը, Խորհրդանշանական ճանաչողական ծախք, Քննարկ, 1928, էջ 161.
- 7 Եւրօ տնտես, էջ 182.
- 8 Եւրօ տնտես, էջ 165.
- 9 СИ ИНИОН, Геноцид армян 1915 г. в зарубежной литературе (1975—1985), М., 1985, с. 25.
- 10 Основы социальной психологии..., с. 43.
- 11 Maurice Pernot, La question turque. Paris, 1923, p. 125.
- 12 К. Маркс и Ф. Энгельс, соч., т. 10, с. 167.
- 13 Сборник, Положение армян в Турции до вмешательства держав в 1896 г., изд. 2-е, М., 1896, с. 145.
- 14 К. Маркс и Ф. Энгельс, соч., т. 9, с. 6.
- 15 Հովհ. Հակոբյան, Թուրքիոյ գերման հակերան յայտ, Քննարկ, 1918, էջ 28.
- 16 Եւրօ տնտես, էջ 29.
- 17 «Քարէ», 1879, № 7—8, էջ 304.
- 18 Сборник, Положение армян... с. 97.
- 19 Mourad-Beu, La force et la faiblesse de la Turquie, Genève, 1910, p. 50.
- 20 Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна, 2-е изд., Ереван, 1982, с. 146—147.
- 21 «Правда», 1912, 27 июня, № 76.
- 22 Е. Ф. Лудшувейт, Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., М., 1955, с. 309.
- 23 К. Маркс и Ф. Энгельс, соч., т. 9, с. 31.
- 24 Архив ВМФ, фонд 418, оп. 1, ед. хран. 4270, л. 93.
- 25 Р. Г. Саякин, Документы младотурецкого комитета о геноциде западных армян в 1915—1916 гг., «Հրապարակում» հրատ. 1988, № 3, с. 74.
- 26 Եւրօ տնտես, էջ 78.
- 27 Б. Ф. Поршнев, Социальная психология и история, М., 1965, с. 91.
- 28 Основы социальной психологии..., с. 168, 177—178.
- 29 Եւրօ տնտես Երկրամ, Հայաստանի շարժարդ, Կ. Պոլսոյ, 1919, էջ 23.

ԱՆԳՂԱԿԱՆ ՏՈՒՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԼՈՒՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒԹ  
XIX Գ. 80-ԱԿԱՆ ԹԹ.

1882 թ. սեպտեմբերին բրիտանական զորքերը գրավեցին Եգիպտոսը, իր զիջքերն ամրապնդելու և տեսահմանափակ տիրապետություն հաստատելու համար Անգլիային անհրաժեշտ էր հաղթահարել եվրոպական տերությունների հակազդեցությունը, թուլացնել նրանց ներգործությունը և խափանել միջամտությունը Եգիպտոսի ներքին գործերին: Անգլիացիների այս նպատակը հիմնավորված էր այն հանգամանքով, որ Եգիպտոսում գեոևս պահպանվում էր եվրոպական տերությունների համատեղ ազդեցությունը, որը արտահայտվում էր մի շարք միջազգային հաստատությունների գոյությունով:

Ճինանսական վերահսկողության հաստատումը և վարչակառուվարման առանձին օչակների ստարերկրացիների ձևերն անցնելը, այլ խոսքով՝ Եգիպտոսի եվրոպական տերությունների կիսազաղութի վերածումն սկսեց բրիտանական գրավումից շատ օտաշ՝ Մահմեմեդ Սահիբի (1854—1863) և խզիվ Իսմայիլի (1863—1879) իշխանության տարիներին: Արարացեա Ն. Իվանովն իրավամբ գրել է. «ԵՊԻՐՈՒՄ (Եգիպտոսում—Ս. Լ.) շկար արդյունաբերական մի ձեռնարկություն, մի քանակ կամ օտևորական խոշոր ֆիրմա, որ շվերահսկվեր ստարերկրացիների կողմից: Նրանք էլ կոնցեսիաների կամ կապալների հիմամբ կառուցում էին երկաթուղիները, կամուրջներն ու նավահանգիստները: Նրանց ձեռքին էին կամուսալ ծառայությունները, փոստ-հեռագրական կապի կազմակերպումը և այլն»: 1876 թ. խզիվ Իսմայիլի կողմից Եգիպտոսը ֆինանսապես սնանկ հռչակումից հետո ստեղծվեց եզրվական պարտքի վարչությունը, որը վերահսկողություն հաստատեց եգիպտական կառավարության եկամուտների ու ծախսերի վրա և որին կառավարությունը վճարում էր պարտքերի տոկոսները: Վարչության ջրհեղի-կոմիտարներ նշանակվեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի,

Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի մշտական ներկայացուցիչները։ Նույն թվին, հվրոպական տերութիւններին անցկացրած դատական բարեփոխման միջոցով, Ազիպատում հաստատվեցին միջազգային դատարաններ։ Երկու տարի անց, եզիպտական ֆինանսների ստուգելու նպատակով, ստեղծվեց Միջազգային հանձնաժողով և հաստատվեց կապիտուլացիաների ուժիմ։

Գրավման պահից Անգլիան բոլոր շիգերն ի գործ դրեց նշանակազրկելու, իսկ հետագայում լրիվ լուծարքի ենթարկելու Ազիպատում պահանջները միջազգային հաստատութիւնները, որոնց միջոցով եվրոպական տերութիւնները կարող էին վերահսկել երկրում բրիտանական իշխանութիւնների գործունեութիւնը։ Այդ նպատակով Սենթ-Ջեյմսի կանազարութիւնը, որպէս արտակարգ լիազորներ, Ազիպատ գործուղեց լորդ Նորտրուոյին, սրբ Հենրի Գրումմոնդ-Վուլֆին և էվելին Բերինգին (1892-ից լորդ Կրոմեր)՝ որպէս դիվանագիտական գործակալ, ընդհանուր հյուպատոս և Ազիպատի փաստական կառավարիչ՝ 1882-ից ընդհուպ մինչև 1907 թ.։

1884-ին Նորտրուոյի առաջումը կապված էր Ազիպատում գոյութիւն ունեցող միջազգային դատարանների եթէ ոչ ոչնչացման, ապա աւնվազն, նրանց բնույթը փոփոխելու և նրանցում ընդգրկված անգլիացի աստիճանավորների ազգկցութիւնն ուժեղացնելու ծրագրի հետ։

Միջազգային կամ խառը դատարանները հաստատվել էին Կահիրեում, Ալեքսանդրիայում և ալ-Մանսուրում, ըստ որում վերաբնիլ ատյանը գտնվում էր Ալեքսանդրիայում։ Այդ դատարաններն էին լուծում քաղաքացիական բոլոր հայցերը, եթէ կողմերից թեկուզ մեկը եվրոպացի կամ էլ Միացյալ Նահանգների հպատակ էր։ Եշանդես գալով իսկական դաճան մի թագավորութիւնը՝ նրանք չէին ենթարկվում անգլիական իշխանութիւններին։ Գատարանները վերածվել էին եզիպտական պարտքերի տոկոսների նվազեցումը խափանող խոչընդոտի, այլ խոսքով՝ պարտքերի լիկվիդացման օրենքի անթերի ոգտագործման երաշխիքի և խզիվի ստորագրած հրամանագրերի օրինականութիւնն ընդունում էին այն դեպքում միայն, եթէ դրանք կանխորոք համաձայնեցված լինեին վերահիշյալ օրենքը մշակած տերութիւնների ներկայացուցիչների հետ։ Միջազգային դատարանների հաստատման կանոնագրութիւն հիմամբ վերաբնիլ ատյանը բազկացած էր 4 եզիպտացի և 7 օտարերկրացի անդամներից, ըստ որում դատավոր-

ներք նշանակվում էին եզրուպական տերութիւններէ կողմից: Կանոնադրութիւնն առյառն իրավունք էր վերապահում իր կողմը՝ անբավարար գտնելու դեպքում եզրուպական կառավարութիւնից խնդրել անվնասցնելու անգամներէ թիվը, միտմամանակ մատնանշելով այն անձնավորութիւններին, որոնց ինքն արժանավոր էր համարում: Նորարրուկը շանաց գործող կանոնադրութիւն մեղ մտցնել այնպիսի փոփոխութիւններ, որոնք այդ հաստատութիւնը կըրկէին իր անկողմնակալ և անկախ բնույթից: Այդ փոփոխութիւնները վերաբերում էին երկու կետերի. գառավորների ընտրութիւնն ու նշանակման կարգին և դատախազական վերահսկողութիւնն հաստատմանը:

Առաջին կետով ենթադրվում էր հանձին Քերինգի փաստաբնն անգլիացիներէ կողմից ներկայացվող եզրուպական կառավարութիւնն իրավունք չնորհել իր հայեցողութեամբ ընտրելու ստարերկրացի գառավորներին, առանց նրանց ազգային պատկանելութիւնն հարցում որևէ կողմանդման ենթարկվելու: Միայն վերաբնիչ առյառն էր, որ պահպանելու էր իր միջազգային հանգամանքը: Եվ սակայն, այս ժողովորդ գառարանները չէին կարող իրենց անկողմնակալութիւնն բավարար նրայիսինքր տալ, քանի որ նրա անգամները, նշանակվելով եզրուպական կառավարութիւնն կողմից, վերջինից լրիվ կախմանութիւնն մեղ էին ընկնում: Անգլիացիներն իրենց հերթին հարավորութիւնն էին ձևաք բերում իրենց դրածոներին մտցնել գառակազմի մեղ:

Երկրորդ դրույթով ենթադրվում էր գառախազական վերահսկողութիւնն ու իր պաշտոնատան գառական պրիստամներն բաժանմունքն հանձնել արդարադատութիւնն նախարարի անմիջական ղեկավարմանը: Այս կապակցութեամբ Կահիրեում ուսական գլխավոր հյուպատոսութիւնն ներկայացուցիչ Ա. Կոյանզերը արտաքին գործերի մինիստր Ն. Կ. Գիրսին հասցեագրված իր ղեկուցադրում դրում էր. «Ստարահյուպատոսների շահերի տեսակետից այդ փոփոխութիւններն անցանկալի են, քանի որ գառական պրիստամներն անմիջականորեն մինիստրին ենթարկվելու դեպքում (ինչպես ներքեում կանսնենք, արդարութիւնն նախարարին սրպես խորհրդական կցվում էր անգլիացի մի աստիճանավոր, — Ս. 2.) գառարանները հարավորութիւնն պիտի լուսնենան հետևելու իրենց վճիռներէ նշարիտ և անկողմնակալ գործադրմանը: Պետք է պահպանվի տերութիւններին վերապահված իրավունքը՝ գառախազի կողքին ունենալու իրենց ազգութիւնից մի տեղակալ, որպեսզի ապահովվի մեղադրող և հետաքննող իշխանութիւններն գործողութիւններն նշտութիւնը՝ հատկապես եթէ գառարաններին արտա-

սահմանյան հպատակների նկատմամբ քրեական իրավազորություն է տրվելու: Այնուամենայնիվ, առաջին խոչըր զիշումը կատարվեց վարչապետ Ռիպոյի կողմից. անգլիական ներկայացուցիչը Լոնդոն տարավ մինիստրության կողմից մշակված նախագիծն այն փոփոխությունների, որոնք Մեծ Բրիտանիան կցանկանար մտցնել միջազգային դատարանների կազմակերպման մեջ: Ռիպոյը մտազբվել էր Լոնդոնի կողմից հաստատվելուց հետո միայն այդ նախագիծը ներկայացնել մյուս տերությունների քննարկմանը, որոնք մասնակցություն էին բերել Եզիպտոսում միջազգային դատարանների հաստատմանը: Նշանակում է, որ միջազգային բնույթ ունեցող մի հարցում եզիպտացի մինիստրները չվարանեցին խոնարհվել անգլիացիների ցանկությունների առաջ և ընդգծել երկնում նրանց գերակշռությունը:

Այնուհետև անգլիացիները ճիգերն ուղղեցին տեղական դատարաններն իրենց ազդեցությունը ենթարկելու նպատակին, վերջինս լուրջ սպառնալիք ստեղծեց գոյություն ունեցող կապիտուլացիոն սեմինի և միջազգային դատարանների համար: Նրանք կարողացան հասնել այն բանին, որ տեղական դատակազմի մեջ նշանակվեցին երկու անգլիացիներ: Այս կապակցությամբ Ա. Կոյանզեբը եշում է. «Անժանոթ լինելով՝ նապոլեոնի օրենսդրքին և նույնիսկ Եզիպտոսում վարվող արդարագատության սկզբունքներին, որոնք զբված էին տեղական ասյանների կազմակերպման հիմքում, նոր խորհրդականները հաշվով թե ի վիճակի լինեն զեկավարելու իրենց ժառայակիցների գործունեությունը»:

1889 թ. ապահովելով երկու անգլիացիներին նշանակումը տեղական վերաքննիչ ասյանի կազմում, բրիտանական կառավարությունը 1890 թ. պեղեց նաև իր մի երրորդ հպատակի նշանակման վրա: Նույն թվին անգլիական կառավարությունը հաշտվեց նաև արդարագատության նախարարությունում որպես ժամանակավոր խորհրդական նշանակել Զոն Սքոթին, որը Հնդկաստանում վարել էր միանձնյա վերաքննիչ դատավորի պաշտոնը: Այնքան, որքան Եզիպտոսում գործող դատավարման կարգը թիչ ժանոթ էր անգլիական իրավագիտների և միաժամանակ զգալի խոչընդոտ էր օտարերկրյա մրցակիցների միջամտությունները խափանելու ճանապարհին Սքոթի նման փորձառու իրավաբանի նշանակումը գրեթեբուն էր անգլիացիների ցանկության՝ եզիպտական դատարանները իրենց գաղութներում գոյություն ունեցողների օրինակով հիմնական վերափոխության ենթարկել, հեռացնելով անգլիական օրենքներին և սովորություններին անզեռ մյուս բոլոր օտարերկրացիներին:



Արոթին իր պաշտօնավարման առաջին իսկ օրից արդարադատական պաշտօնատան իսկական տեղն ու տիրակալը դարձավ, քանի որ հզիպատական մինիստրութիւյան գլխին ձևականորէն կանգնած մարդիկ ո՛չ բավականաշափ գիտելիք, ո՛չ էլ կամք և ընդունակութիւն ունենին իրենց կարծիքն ու տեսակետը անցկացնելու և պայքարելու անզլացիներէրի ամենազոր ազդեցութիւյան դեմ: Մի տարի անց Սենթ-Ջեյմսի կառավարութիւնը պահանջեց Արոթին նշանակել Եզիպտոսի արդարադատութիւն մինիստրութիւնը կից արդէն մշտական խորհրդական: Այդօրինակ պահանջներն սկզբում տեղական կառավարական շտաբներում խիստ, հաճախ ոչ անկեղծ դժգոհանք առաջ բերեցին: Սիադը հայտարարեց, որ ավելի շուտ հրամարական կտա, քան թէ կատարագրէ նման նշանակման հրամանագիրը ու ետեւիսկ մերժեց ընդունել բացատրվելու համար իր պաշտօնատանը հայտնված Արոթին<sup>10</sup>, Սակայն այդպիսի վերաբերմունքը լլգոթեցրեց Թերինգին: Երջանցելով այդ հակառակամտութիւնը, նա մինևույն պահանջով դիմեց խզիվին: Մեհմետ-Քաուֆիքն ըստ իր սովորութիւն ևնթարկվեց գլխավոր հյուպատոսի կարգադրութիւնը: Հրամանագիրն ստորագրվեց 1891 թ. փետրվորի 3-ին և Եալ-Վակահ ալ Մըսրիչլլա պաշտօնաթերթում հրատարակվեց մինիստրական որոշման հետ, որը Սկոթի նախագահութիւն ներքո հաստատում էր նախադատ առլաններէր գործունեութիւնը վերահսկող: Մի մարմին՝ անդամակցութիւն մեղական դատարաններին կից բնղիացի գլխավոր դատախազի, ներքին գործերի մինիստրութիւն իտալացի իրավախորհրդատուի և վերոհիշլլալ անձնավորութիւններէր կողմից ընտրվելիք դատախազութիւն նրկու անդամների<sup>11</sup>, Այդ կամիտէր կազմում լրեղգրկվեց արդարադատութիւն մինիստրութիւն ազգութիւն մքրանսիացի իրավախորհրդատուն: Վերլէնիս բացորոշապէս զանցառումը ընդունված որոշման դեմ հասկանալիորէն առաջ բերեց Ֆրանսիական շրջանների դժգոհանքը: Յրանսիայի ներկայացուցիչ զը Սրինլին հայտարարեց, որ իր կառավարութիւնը բողոքում է հօգուտ մի այլ տերութիւն Ֆրանսիական իրավունքներէր ստեհարման դեմ, ըստ որում միաժամանակ պահանջեց կասեցնել խզիվի հրամանագրի գործողութիւն մեշ գրվելը<sup>12</sup>, եզիվը մերժեց Յրանսիայի բողոքը:

Բացի գրանից, արտաքին գործերի մինիստր Ջուլֆիկար փաշան ապրիլի 28-ին հրապարակեց № 365 շրջաբերական-հուշագիրը, որով կառավարութիւնը Եզիպտոսում եվրոպական բուր ներկայացուցու-

Քյուններից խնդրում էր միջնորդել իրենց զեկավարների մոտ՝ հավանության տալու հուշագրին կցված հրամանագրին, որը վերաբերում էր Ալեքսանդրիայի վերաքննիչ խառը ասյանի կազմում 5, 8 կամ 9 անգլիացիների հաստիքային անզամ նշանակելուն և խառը գաղաբանների շրջանակներում անգլիերենը գաղափարման լեզու հայտարարելուն<sup>13</sup>։

Աքոթի եզրպետու հրավերման պահից խոչիվի կամ նրա միևիտուների կողմից անգլիացիների պարզորոշապես բացահայտված կամքին ու ցանկությունը որևէ լուրջ դիմադրություն ցույց չարվեց։ Օտար տերությունները ցանկություն դեպքում կարող էին Սկոթի նշանակման զեմ բողոքի օրինավոր հիմքեր գտնելու Այդ աստիճանի ազդեցիկ մի պաշտոնում անգլիացու ներկայությունը խախտում էր ինչպես նախկինում գոյություն ունեցած կարգը, այնպես էլ գաղափան բարեփոխումներին մասնակցություն բերած բոլոր պետությունների դիրքի և ազդեցության հավասարաշափուքյան սկզբունքը։

Մեծ Բրիտանիայի կառավարությունն այդպիսով հող էր նախապատրաստել երկրի գերագույն իշխանությունը փաստորեն իր մէջքը վերցնելու և միաժամանակ եզրպետական գաղաբանների գործունեությունը մրցակից ասարներկրյա ամեն մի միջամտությունից կատարելապես զերծելու համար։ Ինքինզը կոյանդերին ասում էր, որ 1894 թ. կառավարությունը լուծարքի կենթարկի խառը գաղաբանները, եթե նրանց գործունեության երկարաձգված ժամկետի ավարտի կապակցությամբ իր ներկայացնելիք նոր պայմանները տերությունների համեմատության շարժանանան<sup>14</sup>։

Անգլիացիների բացահայտ ամենաշարունակյալ մյուս զխաւոր խոչընդոտը եզրպետում գործող կապիտուլացիաներն էին, որոնք երաշխավորում էին օտարահպատակների անձեռնմխելիությունն ու տեղական գաղաբանների իրավասությունից զերծությունը։ Արդարագաղաբյան միևիտուքյան անգլիացի խորհրդական Ջոն Աքոթի իրավասությունները տեղական գաղափան հիմնարկների վրա տարածումն, ահա, սպառնալիք էր կապիտուլացիաների ուժիմի համար։ Այդ ուժիմի աստիճանական վերացման մյուս միջոցը հանդիսանում էր հրապարակումը պարտադիր բնույթ ունեցող այն որոշումների, որոնք եզրպետական կառավարության կողմից մշակվել էին օտարահպատակների համար և որոնք հավանություն էին գտել Ալեքսանդրիայի ասյանի անդամների անգլիացիներին նվիրյալ մեծամասնության կողմից։ Յրանօթայի դիվանագիտական ներկայացուցիչ մարքիզ Ռեվերտն փոր-

էւնց տերութիւններէ կողմից բնդունված շրջաբերականի Գ հաճելիվածք խմբագրել աշնպես, որ ստարաւագատակներէ համար պարտաւորիչ գառնան միայն աշն զճիւնները, որոնք կընդունվեն ատյանի առանց բացառութիւն թուր անգամներէ միաւաշնութիւնմբ: Այ սակայն Յրան-սիային շնայողկնց հասնել հաճելիվածի վերախմբագրմանը: Կոյանգիբի խոսքերով՝ «1889 թ. տերութիւններէ կողմից առանց որևէ նախապայ-մանի Գ հաճելիվածի բնդունումը եղավ մի մեծ սխալ, որն ստարաւագա-տակներէ դեմ անգլիացիներէ ձեռքը սվնց մի շատ վտանգավոր զենք»<sup>15</sup>:

Ազիպատում միջազգային ազդեցութիւն վերջին հենարանը Պարս-քերի վարչութիւնն էր: Նրա և Ազիպատական Ֆինանսներէ ստուգման Միջազգային հանձնաժողովի դեմ Գրումմունդ-Վուլֆի և Բերիեզի կողմից ձեռնարկվեց մի ամբողջ արշավ, որի նպատակն էր ստվերել այդ հիմնարկներէ նշանակութիւնը:

Օտարերկրյա վարկատուներին Ազիպատսի մեծագումար պարս-քերի և երկրին կվրոպական տերութիւններէ ընձեռած հոգանավորու-թիւն հետևանքով, Ազիպատական Ֆինանսներէ միջակը անգլիական տի-րապետութիւն հաստատման ձեռնապարհի ամենազժվարին տեղում-սերից մեկն էր: Այն կվրոպական տերութիւններին հնարավորութիւն էր տալիս պահանջելու ամյալ հարցի վերաբերյալ միջազգային ստուգման անցկացում, ջուլց տալու անգլիական վարչական սխտեմի սնանկու-թիւնը և զրանով իսկ զգալի հարված հասցնելու բրիտանական հա-վանկութիւններին: Անգլիացի աստիճանավորները հասկանում էին, որ Ազիպատսի կատարյալ տերերը կարող են մնալ այնքան ժամանակ, քա-նի դեռ կվրոպական վարկատուները գոհ կլինեն երկրի ֆինանսական զրութիւնից: Ըննց այդ նպատակով էլ Ազիպատսի ռազմական գրավ-մանը զուգընթաց անգլիացիները ձեռնարկեցին երկրի ֆինանսական կառավարման հարցում իրենց գերակշռութիւնն ապահովող միջոցա-ռումներ: Կոյանգիբի հետ զրույցի ժամանակ Բերիեզն ուղղակի աս-տում էր. «Մենք լրիվ մեր ձեռքն ենք վերցրել երկրի ֆինանսները և հասարակական գործիչի միևիտարութիւնը: Վարչակառավարման այդ երկու բնագավառներում, որոնք մենք ամենից կարևորներն ենք հա-մարում, մենք Ազիպատացիներից ամբողջ ձեռնաճառ ենք ու հենց զրա համար էլ վերցրեցինք մեր անմիջական կառավարման ներքո»<sup>16</sup>: Իր հերթին լորդ Նորտրուուը խոստովանում էր, որ Ազիպատսի ֆինանսա-կան կառավարման գծով անգլիական կառավարութիւն թուր առաջար-կութիւններէ և վերափոխութիւններէ արդյունքն շանկասկած պիտի

լինի միշտագային վերահսկողութեան փոխարինումը Անգլիայի ֆի-  
նանսական վերահսկողութեամբ<sup>17</sup>։

Սենթ-Ջեյմսի կառավարութիւնն այդ նպատակով 1884 թ. որ-  
պէս ֆինանսների մինիստրութեան կից խորհրդական նշույտու գոր-  
ծուչն էր դարձրել Վինսենտին։ Վերջինս պետք է ինքնիշխան տնօրինել  
վարչակառավարման ֆինանսական ամբողջ մարզը, ըստ որում նրա  
գլխավոր առաջադրանքը պիտի լինէր աշխատել կանխելու բյուջէի ա-  
մեն մի գնֆիքիտ, որը կարող էր հանգեցնել անգլիացիների համար  
անցանկալի արդուների՝ Միշտագային ստուգող հանձնաժողովի գու-  
մարման։

Ձգտելով ավելացնել պետական գանձատան հասույթները, Վինսեն-  
տը պնդեց հաստատել նոր հարկեր։ 1888 թ. ծխախոտի մշակութեան  
հատկացվող հողակտորներն ենթարկվեցին նոր հարկի՝ ֆեդանից նախկին  
2,5 եգիպտական ֆունտի գոխարեն 30 ֆունտի շափով։ Բարձրացվեցին  
նաև երկաթուղային սակերը, փոխադրվող ծխախոտի մաքուր և նեղու-  
սով նավարկութեան տուրքը<sup>18</sup>։

Օրըստօրն ծանրացող հարկերը լրիվ քայքայման մատնեցին է-  
գիպտացի դուրացիներին՝ ֆելլահներին։ «Հարկազանձման ևղանակը  
հիշեցնում է խզիվ Իսմայիլի հոռեզույն ժամանակները,—գրել է Կո-  
լանդերը—Գանձատունը բռնազրավում և համարյա ձրի վաճառում է  
դեռ չհնձված բերքը, դրանով վերջնականապէս քայքայելով հողա-  
մշակների բարեկեցութիւնը։ Նգիպտոսում հողը երբևէ այնքան պարտ-  
քերով ծանրարեւելած չի եղել, ինչպէս այժմ... և ներկա վարչակարգի  
ներքո երկիրը բավականին արագաբայլ դեպի քայքայում է գնում»<sup>19</sup>։

Վինսենտի վարած քաղաքականութեան հետևանքով բացն ու պա-  
կասորդը, որոնցով նգիպտոսը մինչ այդ տառապում էր, 1886 թ. ար-  
դեն անհետացել էին պետական բյուջէի հաշվեցուցաններից<sup>20</sup>։

Հոգալով միայն այն մասին, որ պետական բյուջէի տարեկան հաշ-  
վեցուցաններում պակասորդի բացակայութեամբ բնավրոպայի աչքին փո-  
շի փչվի<sup>21</sup>, անգլիացիները Պարտքերի վարչութեան քննիչներին հեա-  
րավորութիւն չէին տալիս գործերի իսկական վիճակին հաղորդելի այն  
նահանգներում, որոնց հասույթներն ուղղակի գանձատուն էին մուտ-  
քագրվում և ապահովում պետական պարտքերի տոկոսների վճարումը։  
Պարտքերի կիվիդացման օրերը Պարտքերի վարչութեանը իրավունք  
չէր տալիս վերահսկել զավառներում եգիպտական կառավարութեան  
գործողութիւններն ու դրանով իսկ դուր էր բաց անում տարրեր շարա-  
շահութիւնների առաջ։ Վարչութեան ռուս լիազոր-թննիչ իշխան Մու-

բուզիի առաջարկութիւնը՝ վարկատուների շահերն ապահովող հաստիքների գլխավոր ազբյուր շորս նահանգներում վերահսկողութիւն սահմանել կառավարութեան գործողութիւնների վրա, շարժանացավ եվրոպական մշտն տերութիւնների լիազոր-քննիչների պաշտպանութիւնը<sup>22</sup>: Այդ տերութիւնների կառավարող շրջանները նախընտրեցին բավարարել Սգիպտոսի ֆինանսների վերաբերյալ անգլիացի խորհրդակցանի կողմից հանուր հասարակութեան ի գիտութիւն պատրաստվող և հրատարակվող փայլուն հաշվետվութիւններով, հոգ շտանելով այն մասին, որ այդ հաշվետվութիւններն ինչքան՞ժ էին համապատասխանում երկրի տնտեսական իրավիճակին և խորամուխ շինելով այն իսկական նարքներին, որոնք տեղական կառավարութեանը թույլ էին տալիս տարեկան բյուջեն էլքի ու մուտքի մարզներում հավասարակշռել:

1886 թ. անգլիական ֆինանսական խորհրդատուն Պարտքերի վարչութեան համաձայնութիւնն ստացավ այն հարցում, որ ինչպես արտադրական պարհակների՝ վարձու աշխատանքով փոխարինման, այնպես էլ նավթային ազբյուրների որոնման և այլ համանման գործերի համար ծախսումներն օրինական ճանաչվեն, հակառակ այն իրողութեան, որ դրանք կատարվել էին առանց կանխօրոք տերութիւնների համաձայնութեան ենթարկվելու<sup>23</sup>: Նմանօրինակ որոշումները բացահայտորեն զեմընթաց էին Պարտքերի վարչութեան կանոնադրութեանը, որի հիմամբ եգիպտական ֆինանսիստներին շէր թույլատրվում իրենց հայեցողութեամբ տնօրինել ընթացիկ տարվա հաստիքները, այն էլ՝ առանց տերութիւնների համաձայնութեանը կանխապես ստանալու:

Անգլիացիների պնդումով Պարտքերի վարչութեանը մերժեց ֆրանսիացի քննիչի առաջարկութիւնը, որի համաձայն վարչութեան անդամները պետք է վերահսկողութիւն սահմանելին եգիպտական կառավարութեան կողմից հասարակական աշխատանքների համար նախատեսված գումարների, ինչպես նաև Սուեզի ջրանցքի մաքրման համար հատկացված 250 հազար եգիպտական ֆունտի ծախսումների վրա<sup>24</sup>:

Այս բոլոր փոփոխութիւնների և որոշումների նպատակն էր թուլացնել Պարտքերի վարչութեան ազդեցութիւնը որպես Սգիպտոսի ֆինանսների վերահսկողութեան ենթարկող միջազգային հաստատութեան: Անգլիացիները նարավորութիւն ստացան առանց հակակշիռ տնօրինել Պարտքերի վարչութեան գանձարկող մուտքագրվող գումարները:

Ռուսշահեր ճիշտ է նկատել, որ 1856 թ. արդեն ւարշավ սկսվեց քննիչներին ամբողջովին նանապարհից վերացնելու համար<sup>25</sup>։ Մեր Հենրի Դրոմմոնդ-Վուլֆը հայտարարեց, որ «Պարսքերի վարչութիւնը բոլորովին հակընդդեմ է գործում ֆինանսական խորհրդակներից ուղղութիւն ստացող կառավարութիւն ֆինանսական բաղաճականութիւնը։ Պարզ է, որ անհրաժեշտ է վերանայել այն հարցը, թե ինչքան նպատակահարմար է այդպիսի լիազորութիւններ տալ օտարերկրացիներին մի խմբի...»<sup>26</sup>։ Իսկ 1890 թ. զննանքներին Ալեքսանդրիայում լույս տեսնող և ոչ առանց հիմքի Ծգիպատոսի իսկական կառավարողների խոսնակը համարվող «Դի էրիպլըն գաղտնուձ հրատարակվեց մի հոգով, որ ուղղված էր ընդհանրապես Պարսքերի վարչութիւն գոյութիւն ու գործունեութիւն դեմ<sup>27</sup>։

Մեծ տեղութիւնների գրաված դիրքը բնավ էլ լիանգարեց անզլիացիների հետագա գործողութիւններին։ Փանի զևո գոյատևում էր Ռուսաստանի համաձայնութիւնը Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ, այդ տեղութիւնների ներկայացուցիչները Պարսքերի վարչութիւն գործունեութիւն միջոցով ընդհուպ մինչև 1887 թ. հակազդում էին Եգիպտոսում Անգլիայի հարաճող ազդեցութիւնը։ Սույակ միութիւն ստեղծմամբ իրավիճակը փոփոխվեց։ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչները եգիպտական հարցերի նկատմամբ չեզոք դիրք գրավեցին, բավարարվելով իրենց փոխառնութիւնների ապկոսները կանոնավորաբար ստանալով։ Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական ներկայացուցիչն իր ֆրանսիական պաշտոնակցին հայտնում էր, որ իր կառավարութիւնն իրեն կարգադրել է լրարծրացնել այնպիսի հարցեր, որոնք կարող են ահա՛ն լինել Անգլիային և որ իրեն հրահանգված է գործել միայն ու միայն Լոնդոնի ներկայացուցչի հետ համախորհուրդ<sup>28</sup>։ Իսկ Պարսքերի վարչութիւնում Գերմանիայի լիազոր բարոն Ռիխտզոֆենը իշխան Մուրուզիի այն դիտողութիւնը, որ վարչութիւն նշանակութիւնն օրըստօրե ընկնում է, պատասխանում էր. «Ի՞նչ անել, երբ կարգադրութիւն ունեն թիկունք տալ անգլիացիներին. անհրաժեշտ է բառացիորեն հետեւել կարգադրութիւնը»<sup>29</sup>։

Միջերկրական ծովի շրջանում ստատուս զվոն պահպանելու վերաբերյալ համաձայնութիւն հիմամբ միջերկրածովյան ամերին վերաբերող բոլոր հարցերում Իտալիան, եսյակ միութիւն երրորդ անգամը, եսյակն թիկունք էր տալիս Անգլիային։



Վարչութիւնում մուսուտանի և Տրանսիայի ներկայացուցիչները, բախվելով իրենց ձախը Անգլիայի բուր անաշարկութիւնների օգտին ազոզ մյուս յորս տերութիւնների ներկայացուցիչների մեծամասնական խմբին և ուրեմն չկարողանալով ոչինչ անել՝ հարկադրում էին միանալ ընդհանուր կարծիքին:

Այսպիսով, Եգիպտոսում իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով անգլիական իշխանութիւններին հաջողվեց հազթահարել կմրոպական տերութիւնների հակազդեցութիւնը՝ երկրում գոյութիւն ունեցող միջազգային հաստատութիւնների իրավունքները սահմանափակելու և ներգործութիւնը թուլացնելու, նրանց կազմում անգլիացի ատիմանազորներ տեղադրելու և դրանով իսկ այդ վարչութիւններն իր ազդեցութիւնը ենթարկելու ճանապարհով:

Արդէն 1880-ական թթ. վերջին Անգլիային հաջողվեց ոչ միայն ամրապնդել իր դիրքերը Եգիպտոսում, այլև անգլիական և ընդհանրապես կմրոպական հասարակական կարծիքը նախապատրաստել այն մտքին, որ նեղոսի գրազումը երկարատև է լինելու:

С. А. АРУТЮНЯН

## УКРЕПЛЕНИЕ АНГЛИЙСКОГО ГОСПОДСТВА В ЕГИПТЕ В 80-ых ГОДАХ XIX ВЕКА

### Резюме

В 1882 году британские войска оккупировали Египет. В целях укрепления своих позиций и установления неограниченного господства Англии необходимо было преодолеть противодействие европейских держав, выражавшееся главным образом в деятельности существующих в Египте международных учреждений.

В статье сделана попытка показать, как путем ограничения прав этих учреждений, ослабления их влияния к концу 80-ых годов XIX века, англичанам удалось не только укрепить свои позиции, но и подготовить европейское общественное мнение к мысли о продолжении оккупации на длительное время.



- 1 Н. А. Малянов, История национально-освободительной борьбы народов Африки в новое время, М., 1976, с. 189.
- 2 Solvin A., The Making of Modern Egypt, L., 1906, p. 202.
- 3 Архив внешней политики России Историко-дипломатического управления Министерства иностранных дел СССР, Москва (архивный фонд АВПР), ф. «Политархив», оп. 482, л. 825, л. 41, Ковалдер-Гирсу, 9/IV. № 16.1887, Каир.
- 4 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 825, л. 61, Ковалдер-Гирсу, 21/V. № 23. 1887, Каир.
- 5 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 827, л. 90, Ковалдер-Гирсу, 25/V. № 29. 1889, Каир.
- 6 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 826, л. 99, Шеглов-Гирсу, 7/VII. № 31. 1888, Каир.
- 7 *Ḥaḥḥ al-ḥaḥḥ, p. 100.*
- 8 АВПР, ф. «Политархив», л. 828, л. 30, Ковалдер-Гирсу, 21/IV. № 11, 1890, Каир.
- 9 АВПР, ф. «Политархив», л. 829, л. 21, Ковалдер-Гирсу, 11/II. № 10, 1891, Каир.
- 10 *Ḥaḥḥ al-ḥaḥḥ, p. 28.*
- 11 *Ḥaḥḥ al-ḥaḥḥ, p. 27.*
- 12 *Ḥaḥḥ al-ḥaḥḥ, p. 30.*
- 13 АВПР, ф. «Политархив», л. 828, л. 78, Ковалдер-Гирсу, 1/V. № 17, 1890, Каир.
- 14 АВПР, ф. «Политархив», л. 829, л. 43, Ковалдер-Гирсу, 18/II. № 13, 1891, Каир.
- 15 АВПР, ф. «Политархив», л. 829, л. 133, Ковалдер-Гирсу, 18/VII. № 33, 1891, Каир.
- 16 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 826, л. 82, Ковалдер-Гирсу, 4/VI. № 25. 1887, Каир.
- 17 *Ḥaḥḥ al-ḥaḥḥ, p. 215.* Ротштейн Ф. А. Захват и закабаление Египта. М.—Л., 1959, с. 215.
- 18 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 827, л. 145, Ковалдер-Гирсу, 24/IX. № 49. 1889, Александрия.
- 19 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 827, л. 167, Ковалдер-Гирсу, 14/XI. № 55, 1889, Каир.
- 20 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 827, л. 159, Ковалдер-Гирсу, 24/IX. № 49. 1889, Александрия.
- 21 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 827, л. 191, Ковалдер-Гирсу, 12/XII. № 16. 1889, Каир.
- 22 *Ḥaḥḥ al-ḥaḥḥ, p. 196.*
- 23 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 825, л. 23, Ковалдер-Гирсу, 5/III. № 11. 1887, Каир.
- 24 АВПР, ф. «Политархив», оп. 482, л. 825, л. 27, Ковалдер-Гирсу, 12/III. № 12. 1887, Каир.

- 15 Ф. А. Рогачев, Захват и закабаление Египта, М.—Л., 1959, с. 220.
- 16 *Ukrainskii russ' E. S. Dmitriyevskiy izdati ukrainskoyshch, kazh' ukraint', (z 220.*
- 17 АВІР, ф. «Политархия», л. 828, л. 199, Копендер-Герсу, 25/XI, № 50, 1890,  
Каир.
- 18 АВІР, ф. «Политархия», л. 828, л. 42, Копендер-Герсу, 21/IV, № 12, 1890,  
Каир.
- 19 *Ukrainskoyshch*

ԿՈՍՏԱՆԿՆՈՒՊՈԼԻՍԻ 717—718 ՔՔ. ՊԱՇՏԱՐՈՒՄԸ ԱՐԱՐՆԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ՝ ԸՍՏ ՀԱՏԿԱԿԱՆ ԱՂՔՏՈՒՐՆԵՐԻ

Արարական խալիֆայութիան գոյութիան առաջին տարիներից սկսած, երա արտաքին քաղաքականութիան կենտրոնում եղել է Բյուզանդական կայսրութիան բոլոր նահանգների նվաճումը և նույնիսկ վերացումը:

Գեպի Բյուզանդիայի տիրույթները կատարած բազմաթիվ արշավանքներից երեքի ընթացքում արարներին հաջողվել է ընդհուպ մոտենալ Կոստանդնուպոլսի պատերին և պաշարել այն: Սակայն, բոլոր զեպքերում էլ նվաճողների ծրագիրը՝ ներխուժել կայսրութիան սիրաք, անհաջողութիան է մատնվել:

Օմայանների կողմից Կոստանդնուպոլսի նվաճելու վերջին փորձը տեղի է ունեցել 717—718 ՔՔ., երբ խալիֆայութունը գտնվում էր իր հղորութիան զազաթնակետին, իսկ Բյուզանդիան, ընդհակառակը, ծայրաստիճան թուլացած էր՝ հաճախակի տեղի ունեցող հեղաշրջումներից, զահի ու իշխանութիան համար մղվող արյունալի պայքարից: Չնայած այդ ամենին, 717 թվականի մարտի 25-ին զահ բարձրացած Ասե Գ իսավրացի կայսրին (717—741) հաջողվեց հմտորեն կազմակերպել Կոստանդնուպոլսի պաշտպանութունը և պարտութիան մատնել թըշնամուն: Բյուզանդացիների տարած հաղթանակը արգելակեց արարների հետագա տուաշխաղացումը զեպի արևմուտք:

Կոստանդնուպոլսի 717—718 ՔՔ. պաշարման մասին տեղեկութուններ առաջին հերթին քաղում ենք բյուզանդական պատմական աղբյուրներից: Ենորհիվ Քեոփանես (752—818)<sup>1</sup> և Նիկեիսը (մահ, 828 թ.)<sup>2</sup> պատմիչների, այս, անկասկած մեծ նշանակություն ունեցող իրադարձութիան մասին հայտնի են գտնում բազմաթիվ կարևոր ու հետաքրքիր մանրամասներ: Արարական պատմաղբյուրներից հարկ է նշել անհայտ հեղինակի «Ակնաղբյուրների և այգիների գիրքը», որտեղ զետեղված է վերահիշյալ պաշարման հանգամանալից պատմու-

թյունը՝ Ապասվածից ավելի սեղմ են այս հարցում մյուս արար պատմիչները: Ալ-Քարաբին (838—923)<sup>6</sup>, Իրն ալ-Ասիրը (1160—1233)<sup>7</sup> դժկամություններ են խոսում խնդրո առարկա իրազարմություն մասին: Ուշագրություն տրճանի են նաև ասորական աղբյուրներում տեղ գտած նկարագրությունները<sup>8</sup>:

Կոստանդնուպոլսի երրորդ պաշարման փաստը չի վերսկսել միջնագարյան հայ մատենագիտներից շատերի ուշագրությունից: Այսպես՝ Ղևոնդը (VIII դ.), Ասողիկը (X—XI դդ.), Անանուն գրուցագիրը (կնդճ Եսայուհ Բագրատունի) (X—XI դդ.), Վարդան Արենիցին (XIII դ.), նաև Հեթումը (XIII դ.) հանգամանորեն կամ թուռիկ կերպով անդրադարձել են այս իրադեպին<sup>9</sup>:

Չնայած հայկական պատմագրություններում Կոստանդնուպոլսի երրորդ պաշարմանը վերաբերող նյութերի առկայությունը, հաճախ ուսումնասիրողները այլաթող են արել դրանք և բավարարվել միայն այլազգի հեղինակների հաղորդումներով: Ֆրանսիացի արևելագետ Մարթուս Կանարը, իր ռեպրանների արշավանքներն ընդդեմ Կոստանդնուպոլսի ուշագրավ աշխատության մեջ, բերելով 717—718 թթ. պաշարումը հիշատակող պատմական սկզբնաղբյուրների մի սովոր ցանկ, տեղ չի հատկացնում այնտեղ և ոչ մի հայ հեղինակի պատմությանն: Պեղել, որ նա ծանոթ չի եղել վերոհիշյալ հայ պատմիչների գործերին, դժվար թե նշմարտացի լինի: Հիշենք, որ Ղևոնդի շեռլիֆաների պատմությունն արդեն 1856 թ. հրատարակվել էր Ֆրանսերեն լեզվով և մատչելի դարձել եվրոպացիների համար: Հավանարար Կոստանդնուպոլսի պաշարման մասին հայ պատմիչների թողած տեղեկությունների, առաջին հայացքից հերիաթային թվացող ընույթն է, որ պատճառ է դարձել Կանարի և այլոց կողմից ցուցաբերած անտարբերություն: Ճիշտ է, այս պաշարմանը վերաբերող հատվածներում հայ հեղինակները թույլ են տվել մի շարք սխալներ, աղավաղումներ, գործողությունների հերթականության ու ժամանակագրության որոշակի խախտումներ ու անճշտություններ, առկա են առասպելական դրվագներ, սակայն այդ հաղորդումները բոլոր դեպքերում իրենց հիմքում պատմական են և մեր խորին համազմամբ կարող են օգտակար լինել բնարկվող իրազարմության ամբողջական ուսումնասիրության համար:

Ք. Պատկանյանը ժամանակին զուգահեռներ է անցկացրել օտար աղբյուրների հիման վրա ստեղծված Կոստանդնուպոլսի երրորդ պա-

չարման պատմութիւնն և Ղևոնգի պատմութիւնն համապատասխան հաստատել միջև և հանգել այն հղբակապութիւնն, որ շնայած ժամակակազարական տարրերութիւններին, ռազմական գործողութիւններին վերաբերյալ մանրամասներում նրանց միջև չկան տարաձայնութիւններ: Եւ թառաղել վստահութիւնն է պահանջում նաև Ղևոնգի ժամանակագրութիւնն համարժէ Այսպիսի անվերապահ մտտեցումը նույնպես կարող է վնասել խնդրին և բազմաթիվ անճշտութիւններին պատճառ դառնալ:

Հայ հեղինակներին չնազույնը, որն իր մատչանում զետեղել է Կոստանդնուպոլսի երրորդ պաշարման պատմութիւնը, հենց Ղևոնգն է: Այդ առթիվ նրա հայտնած տեղեկութիւնները հիմնական աղբյուր են հանդիսացել նաև մյուս հայ պատմիչների համար: Այսպես, Ասողիկը փաստօրէն համառոտ կերպով վերապատմում է մեծ պատմիչին: Անանուն զրուցազրի պատմութիւնն կմախքը նորինց հիշեցնում է նրան, սակայն այն իր հերթին բավականին ինքնուրույն է, հավանաբար Ղևոնգի գործին ազատ ծանոթ լինելու պատճառով: Ինչ վերաբերում է Վարդանին, ապա նրա հայտնած այս ծայրաստիճան համառոտ տեղեկութիւնը՝ «Եւ եկաց յետ նորա (Եղիզից—Ա. Մ.): Հէշմ, որ առաջեաց զհարայր իւր Մուլիմ մինչև ցճիթանիա ոգիս եօթն բիւր: Եւ միւս անգամ զնաց դարձեալ և ծովասուղ լինի ի զօրութենէ խաչին յիսուն բիւր արանց: Եւ կայսր արձակեաց զՄուլիմ պատմել զփաստ Աստուծոյ»<sup>10</sup>, Ղևոնգի տարրերակի ամփոփումն է մեկ-երկու նախադասութիւններ:

Բացառութիւն է կազմում Հեթումը, որի հայտնած թուոցիկ անգնկութիւններն անկասկած քաղված են բյուզանդական պատմական աղբյուրներից: Իր ժամանակագրութիւնն մեզ նա առում է. «29<sup>0</sup> (708 թ.), Ի սորա ժամանակին Տաճիկը եկեալ ի Կոստանդնուպոլիս պաշարեցին զ9 (3) ամս»<sup>11</sup>: Այն, որ կեն 9 թագադրվել է 708 թ. և իշխել 25 տարի, հիշեցնում է Թեոփանեսին, ըստ որի կենը թագադրվել է Քրիստոսի մարզեղութիւն 709-րդ տարում և իշխել 25 տարի<sup>12</sup>: Տարբերութիւնը միայն մեկ տարվա մեջ է: Իսկ այն կարծիքը, որ պաշարումը տևել է երեք տարի, ըստ երևույթին քաղված է Նիկիփորից, որն այդ առթիվ գրում է. «30 ամիսների ընթացքում նրանք պահեցին այն (արարները՝ Կոստանդնուպոլիսը—Ա. Մ.) պաշարման մեջ»<sup>13</sup>:

Ըստ հայ միջնադարյան մատենագիրների, բացառությամբ Հեթումի և Անանուն գրուցագրի, արաբների կողմից զեպի Կոստանդնուպոլիս կատարած արշավանքը և նրա պաշարումը տեղի է ունեցել Օմայան խալիֆա Հիշամ Իբն Աբդ ալ-Մալիքի (724—743) օրոք, Այս սխալը սկսվում է Ղևոնդից և տեղ գտնում թե՛ Ասողիկի և թե՛ Վարդանի մոտ: Ինչպես արդեն վերը նշվել է, Ք. Պատկանյանը անվերապահորեն ընդունել է Ղևոնդի ժամանակագրությունը ավյալ հարցում՝ պահանջելով նրա համար առավել վստահություն, պատճառարանելով, որ մինչ այդ հատվածը պատմիչի ժամանակագրության մեջ հակասություններ չեն նկատվել: Մակայն նման փաստարկը բավարար լինել չի կարող միայն անկասկած թույլ է տրված: Սաթ աղբյուրներում եղած բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ պաշարումն սկսվել է Մուլեյման իբն Աբդ ալ-Մալիք խալիֆայի (715—717) օրոք և ավարտվել Օմար Իբն Աբդ ալ-Ազիզի (717—720) գահ բարձրանալուց հետո, ավելի սուսույց 717—718 թթ. ընթացքում:

Դժգոք է կառնել, թե որոնք են Ղևոնդի թույլ աված նմանօրինակ անհշտության իրական պատճառները: Ն. Ակիևյանն այս հատվածում Ղևոնդի ժամանակագրության ընթացքի խախտումը բացատրում է նրանով, որ մի անհայտ անձնավորություն, որը Ղևոնդի «Պատմության» մեջ ներմտնել է Առն կայսեր և Օմարի թղթակցությունները, միաժամանակ, գիտավորյալ Կոստանդնուպոլիսի պաշարմունը նվիրված հատվածը տեղագրել է Հիշամի ժամանակները: Նա գրում է. «Անիկա Օմարի բառ ազգս քրիստոնէից ցոյց տուած բարեխառնութեան եւ բարեմտութեան քոլորովին անհամաձայն նկատելով Կ. Պոլսի պաշարումը... փոքրիկ ետևառաջութեամբ յաշողած է պատմութիւնը համաձայնեցնել իր հաշակիին»<sup>14</sup>: Մակայն, նման բացատրությունը համոզիչ չէ, քանի որ Օմար խալիֆան եղել է ոչ թե զեպի Կոստանդնուպոլիս կատարած արշավանքի նախաձեռնողը, այլ այն անձնավորությունը, որը հրամայել է մահմեդականներին լքել քաղաքի մատույցները և ետ վերադառնալ: Նրա քաղաքականությունը Բյուզանդիայի նկատմամբ հենց սկզբից հաշտվողական է եղել: Այն, որ նրա խալիֆա հուլակվիլուց հետո զեպ որոշ ժամանակ շարունակվել է պաշարումը, ամենևին չի փոխում զործի էությունը, քանի որ ես, բնականորաբար, չէր կարող անմիջապես դադարեցնել այդքան հեռու գնացած արշավանքը, իսկ որոշ աղբյուրներ հաստատում են նաև, որ Մաուլան ստանալով Օմարի հրամանը ետ դառնալու մասին, երկար ժամանակ

Քաղցրել է այն իր ննթականերից՝ լցանկանալով նեոնուանի վերագառնալ արշավանքից<sup>15</sup>։ Այնպես որ, բուրբուղին հարկ չի եղել տեղափոխել պաշարման հատվածը Օմարի ժամանակներից զեպի Հիշամյուք սոսկ այն պատճառով, որ այդ փաստը կարող էր հակասել նրա քրեականաշատ կերպարին։ Ընդհակառակը, այն, որ նա է դադարեցրել բյուզանդական մայրաքաղաքի պաշարումը, կարող էր նպաստել նրա քրեականաշատության առավել հաստատմանը։

Հայ միջնադարյան պատմիչներից միայն Անանուն զրուցադիրն է, որ Կոստանդնուպոլսի պաշարումը վերագրում է Օմարի (Ամր խալիֆայության տարիներին<sup>16</sup>։ Մակայն այս Օմարը պատմիչի համար ոչ թե որոշակի մի անձնավորություն է, այլ խալիֆաների մի հավաքական կերպար։ Եստի այս պատմիչի ժամանակագրական հայացքների մասին դժվար է, քանի որ նա չի հիշատակում ստույգ տարիվներ, իսկ զեպերի հերթականությունը հաճախ խախտված է։

Անդրադառնալով Ղևոնդին, պետք է ննթադրել, որ նա ստույգ չիմանալով, թե երբ է տեղի ունեցել Կոստանդնուպոլսի սույն պաշարումը, այն շփոթել է Հիշամի սրոք տեղի ունեցած բաշամթիվ արաբայուզանդական ընդհարումներից որևէ մեկի հետ։ Նա արշավանքի սկիզբը համարում է արաբա-խազարական հայտնի պատերազմին (730—731) հաջորդած տարին, այսինքն մոտավորապես 731—732 թթ., որը և նշում է Փ. Պատկանյանը<sup>17</sup>։ Այդ տարիներին, իրոք տեղի է ունեցել մի կողոպտչական արշավանք զեպի Բյուզանդիայի փոքրաթիվական տիրույթները, որն ի զեպ, առաջնորդել է նույն Մասլաման՝ Հիշամի եղբայրը, սակայն այն լուրջ բնույթ չի ստացել և ավարտվել է Կապադոզիայում գանվող եարսիանոն բերդի գրավումով<sup>18</sup>։

Քննարկվող արշավանքին նվիրված հաավածը Ղևոնդը, ինչպես նաև Ասողիկը սկսում են նրանով, որ Իսմայիլի իշխանն սպառնում է հոռոմների թագավորին՝ պահանջելով նրանից հարկատու գտնալ, իրեն, թե չեա այսորիկ (խազարների դեմ մղած պատերազմից հետո—Ա. Մ.) սկսալ գոռալ ընդդեմ թագաւորին Յունաց և յզէր զեսպան առ Անոն կայսր հոռոմոց՝ գալ նմա ի նազանդութին հարկատու թեանք<sup>19</sup>։

Իրոք, մինչև պատերազմի սկսվելը Բյուզանդիայի և խալիֆայության միջև փոխանակվել են զեսպանություններ։ Մակայն, օտարադրյուրները հիշատակում են միայն բյուզանդականի մասին։ Ինչպես վկայում են Քեոփանես և Նիկեփոր պատմիչները, Անաստասիոս Բ



կայսրը (713—715) տեղեկանալով, որ մասնեղականները Քյուլանդիայի գեմ ցամաքով ու ծովով արշավելու նախապատրաստություն են տեսնում, զնսպանութուն է ուղարկում Վալիդ խալիֆայի (705—715) մոտ՝ խաղաղության շուրջ բանակցելու նպատակով<sup>20</sup>։ Ամենին չի բացառվում, որ տեղ գտած լինեն և հակառակ կողմից զնսպանություններ, որը և բխում է հայ պատմիչի վերոբերյալ հաղորդումից։ Պատմիչը ընդհանրապես չի բացահայտում այս բանակցությունների ունեցած ընթացքը։ Այնուամենայնիվ զնայքերի զարգացման հետագա ընթացքը ցույց է տալիս, որ դրանք անարդյունք են ավարտվել, միգուցե հենց այն պատճառով, որ բյուզանդացիները հրամարվել են հարկատու դառնալ խալիֆայությանը, ինչը և վկայում է Ղևոնդը։

Այնուհետև Ղևոնդն ու Ասողիկը խոսում են Մասլամայի առաջնորդած մի նախնական արշավանքի մասին, որը հասել է մինչև Բիթանիս՝ Սանգարիոս-Սանգարիս գետի ափերը։ Այստեղ, ընդհարվելով բյուզանդացիների բանակի հետ, արաբները խոշոր հաղթանակ են տեսնում, որից հետո ասպատակում են երկիրը՝ գրավելով նրա գավառներն ու քաղաքները։ Այնուհետև, մեծ ավարով ու բազմաթիվ զորիներով (80000) իրենց երկիրն են վերադառնում<sup>21</sup>։

Ք. Պատկանյանը, փաստորեն, նույնացնում է Ղևոնդի նկարագրած այս արշավանքը Կոստանդնուպոլսի գեմ արաբների արշավանքի սկզբում՝ Ամորիում քաղաքի մոտ տեղի ունեցած զնայքերի հետ<sup>22</sup>։ Այն, որ Ղևոնդի մոտ առկա են զրվագներ, որոնք հիշեցնում են Կոստանդնուպոլսի գեմ արաբների կատարած արշավանքի ընդունված պատմության սկիզբը, էշմարիս է։ Այսպես, նա նշում է Ղևոնի ցուցաբերած զուշությունը, նրա շանքերն ընդհարումից խուսափելու համար, Մալիմի (Մասլամա) զորքի երեք մասի բաժանվելու փաստը, քրանակի աղբյուր-ճամբարից հեռացնելը և այլն։ Այս ամենն իր արտահայտությունն ունի նաև օտար աղբյուրներում։ Չնայած դրան, մեր և այլազգի պատմիչների միջև կան նաև նկատելի տարաձայնություններ այս հարցում։ Նախ, եթե հայ պատմիչները հաղորդում են, որ արաբները բանակ են դրել Բիթանիայում, Սանգարիոս գետի ափին՝ Նույներին գեմ-գիմաց, ապա օտար հեղինակներն արաբների բանակատեղին համարում են Ամորիում քաղաքի մոտակայքը, որը գտնվում էր Գալաթիայում։ Երկրորդ, եթե հայ պատմիչները խոսում են արաբների զործագրած խորամանկության մասին, որի միջոցով նրանց հաջողվում է բյուզանդացիներին մարտի մեջ քաշել և պարտության մատնել նրանց, ապա

օտար ազրյութենքը պատմում են Անոնի խորամանկության մասին, որի արդյունքը այն է լինում, որ բյուզանդացիներին հաջողվում է խուսափել շեղհարումից և քաշվել դեպի մայրաքաղաք։ Եթե հայկական ազրյութենքը վնասում են, որ արարենք հազիբանակ տանելուց հետո գերիներով ու բազում խնդրությամբ իրենց երկիրը վերադարձան, ապա օտար հեղինակները շնն խոսում և ոչ մի նման վերադարձի մասին։ Ըստ Երանց, Մասլաման Ամորթումից շարժվում է դեպի Պերգամոն, նվաճում այն և նմանում Ասիա Եսահանգում<sup>23</sup>։ Նմանությունների ու հակասությունների առկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ հայ պատմիչներն իրար են միաձուլել երկու տարրեր արշավանքների մասին եղած հազորգումները։ Իրականում, մինչև Կոստանդնուպոլսի պաշարումը, արարենքը բազմիցս ասպատակել են Բյուզանդիան։ Օտար պատմադրյութենքում կան բազմաթիվ հիշատակումներ այդպիսի, արարենքի համար հաջող ավարտ ունեցած արշավանքների մասին, որոնցից մի քանիսը առաջնորդել է Մասլաման։ Քեոփանեսը հիշատակում է մի այսպիսի արշավանք, որը տեղի է ունեցել Կոստանդնուպոլսի պաշարումից երկու տարի առաջ. «Այդ տարի Մասլաման Ռոմանիայում ասպատակ սփռեց, ավարտեց Գալատիան և բազում գերիներով ու թալանով վերադարձավ»<sup>24</sup>։ Այս կարճ նախադասությունն իր բովանդակությամբ հիշեցնում է հայ հեղինակի վերահիշյալ պատմությունը, և մենք հակված ենք կարծելու, որ Անոնի խոսքը վերաբերում է հենց այս արշավանքին, որի նկարագրությունը նա շաղախել է դեպի Կոստանդնուպոլսիս ուղղված արշավանքի սկզբնական շրջանի մասին ունեցած որոշ տեղեկություններով։ Կասկած կարող է հարուցել այն հանգամանքը, որ Անոնը հիշատակում է Բիթանիան, իսկ Քեոփանեսը՝ Գալատիան։ Սակայն չի բացառվում, որ այդ երկու երկրամասերն եղել են արարական ասպատակող զորքի երթուղում, նկատի ունենալով, որ սրանք հարևան Եսահանգներ են և Մանգարիոս գետը երկուսի տարածքով էլ հոսում է։

Այսպիսով, ըստ հայ հեղինակների, արարենքը, ոգևորված ձևեր բերած հաջողությունից, ձեռնամուխ են լինում մի նոր արշավանքի, որը և շուտով վերածվում է Բյուզանդիայի մայրաքաղաքի պաշարմանը։ Մասլաման, որը նորից արարական բռնակի գլուխ էր կանգնած, ներդրում է տալիս եզրորդ՝ Հիշամ խալիֆային, ուղի դառնալ առ նա մինչև կատարեցել զկամս անձին իրոյ, զի ուխտ եղան էր զայս, բառնալ զթագաւորութիւնն և կործանել զքաղաքն ի հիմանց, որ կայի Կոս-

ասանդեուպոլիս, և զգանազան հիմնարկութիւնս սրբոյն Ասփիայ, որ ի վերնոյն իմաստութենէ շինեցաւ յերկրի տուն Աստուծոյ՝ պղծալից դիցապաշտութեանն շինել տեղի երկրպագութեանս<sup>25</sup>: Օտարազգի հեղինակներից այսպիսի երգման մասին հիշատակում է միայն Միքայիլ Ասուրին, ըստ որի Մասւլաման արշավանքից առաջ երգում էր տվել Մուլեյման խալիֆային շվերազանաւ, մինչև որ շեմանի. Կաստանդեուպոլիսը<sup>26</sup>, իսկ ալ-Քարարին վկայում է, որ Մուլեյմանը հրամայել էր Մասւլամային ետ շվերազանաւ մինչև որ շեմանի քաղաքը կամ էլ ինքը նրան ետ շվանշի<sup>27</sup>: Թելպես նկատել է Մ. Կանարը, սա է եղել պատեանն այն բանի, որ եյր Մասւլաման Կաստանդեուպոլիս պատերի տակ ծանր գրության մեջ է ընկել յի համարեակվի ինքնակամ լթի գիրքերը<sup>28</sup>:

Հալ հեղինակները չեն տարվում Մասւլամայի անցած նանապարհի նկարագրությամբ, և նա անմիջապես հայտնվում է Պոնտոսի ափին, որտեղ և բանակ է դնում: Անանուն զրուցագիրը որպես արարների բանակատեղի նշում է երիսուպոլիս քաղաքը, որը գտնվել է Քոսֆորի ափին՝ Կաստանդեուպոլիսին դեմ դիմաց: Այս հարցում հայկական աղբյուրները հակասության մեջ են առար աղբյուրների հետ: Վերջիններին հաղորդումներից պարզվում է, որ արարական բանակի մի մասը անցել է Արշուղսուր և Քրակիայի կողմից մոտեցել քաղաքին, իսկ ծովով սգնության է հասել նավատորմը<sup>29</sup>: Միքայիլ Ասուրին հիշում է նաև, որ մայրաքաղաքը հացով մատակարարելը դժվարացնելու նպատակով, արարները գրավել են նաև Փաղկեղոնը<sup>30</sup>:

Այնուհետև հայ մատենագիրները վկայում են սպանուպոլիսներով ողողված մի հրովարտակի մասին, որ Մասւլաման ուղղել է կոնկաչարին, իսկ վերջինս իր պատասխանում, վկայակուշելով աստծուն, խորհուրդ է տալիս նվաճողին սթափվել և հետանալ քաղաքի մատուցներից, աստծո ցասումից խուսափելու համար<sup>31</sup>: Այլազգի մատենագիրներից շատերն իրենց պատմությաններում հաստատում են կոնկի և Մասւլամայի միջև եղած փոխազարև կապի իրական լինելը<sup>32</sup>: Կոնք բանեցնելով նույր գիվանադիտություն, գազանի կապ է ստեղծում իր և Մասւլամայի միջև՝ ցանկանալով ոգտագործել վերջինիս: Հովանավորությունը կայսերական թագը, զավթելու համար, իր հերթին Մասւլաման համաձայնվում է օգնել կոնկին այն պայմանով, որ վերջինս թագադրվելուց հետո իրեն հանձնի մայրաքաղաքը: Ի վերջո կոնքը հասնում է իր նպատակին և կայսր հռչակվում լիովին մոռացության

մատենելով տված խոստումները: Ահա այսպիսի պարագաներում միանգամայն հնարավոր է, որ խարված ու գաղաղած Մասլաման սպառնալիքներ հզոր իր եսխկին դաշնակցին, արդի ախոյանին: Այս հրովարտակի, ինչպես նաև Առնի պատասխանի տեքստերը պահպանվել են միայն հայկական աղբյուրներում, մասնավորապես Ղևոնդի մաս: Դրովար է պնդել դրանց վավերական լինելը, սակայն բոլոր դեպքերում հակված էք այն տեսակետին, որ Ղևոնդը ծանոթ է եղել Առն Գ-ին ուղղված և նրա մեղքով գրված տարրեր համակների, որոնցից ամենանշանավորը կայսեր և Օմար խալիֆայի միջև եղած թղթակցությունն է, որի վավերական լինելը ընդունում են Ա. Զեֆրին, Ն. Ակիրյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը<sup>31</sup>:

Քանի որ բանակցություններն անարդյունք են ավարտվում, Մասլաման սկսում է հարևակումը քաղաքի վրա՝ ծոզով: Առն կայսրը, անսնելով թշնամու բանակի բազմությունը, ամբռնում է քաղաքի պարիսպներից ներս. բիրտն ծոռն կայսրն Առն գրազմութիւն զօրացն անառապցեալ ի վերայ ծոզուն՝ տայր հրաման կազմել զվանդակակապ կազմած հրկաթեղէն պարսպին, և ազխեալ զգուն շղթայազործ ամբողջին...<sup>32</sup>: Քաղաքը պաշտպանութիւն ետխապատրաստելու վերաբերյալ Թեոփանեսը գրում է. Եվերջինիս (Կոստանդնուպոլսի, — Ա. Մ.) բնակիչները ամբարցրել էին ցամաքային պարիսպը՝ մի մեծ խրամաս փորել, որի ետևում առանց շաղախի մի ցածր շրջապարիսպ կառուցելու<sup>33</sup>:

Ղևոնդը, որին հետևել են նաև մյուս հայ պատմիչները, խուսափում է պատերազմական զործողությունների մանրամասներից՝ բյուզանդացիների հաղթանակի պատճառը տեսնելով միայն աստծո զորութիւն մեջ: Այսպիսի մտանցումը բնորոշ է Ղևոնդի ողջ «Պատմութիւնը», ինչը և նշում է Ա. Տեր-Ղևոնդյանը<sup>34</sup>: Այն առասպելը, որ պատմում է Ղևոնդը՝ կապված աստծո կողմից արարական եավատորմի կործանման հետ, զարմանալիորեն հիշեցնում է Սերեոսի հիշատակած մի առասպել՝ արարների կողմից Կոստանդնուպոլսի հավանարար առաջին պաշարման մասին<sup>35</sup>: Ինչպես Ղևոնդի տարրերակում, այնպես էլ այստեղ, բարեպաշտ կայսեր և քաղաքի բնակչության երկարատև ազոթքները պատճառ են դառնում այն բանին, որ աստված ցույց է տալիս իր զորութիւնը և կործանում թշնամու եավատորմը:

Սերեոսի և Ղևոնդի մեղքերած կիսաառասպելական պատմությունների բովանդակության նմանութիւն պատճառն ըստ երևույթին հետև-

յաին է. Կոստանդնուպոլսի առաջին պաշարումից հետո ստեղծվել է  
այն առասպելը, որը և զբանցել է Մերեոսը: Մտա մեկ զարածցա Ղևոն-  
դը, կարծելով, որ տեղի է ունեցել բյուզանդական մալթաքաղաքի ըն-  
դամենը մեկ պաշարում, հարմարեցրել է Մերեոսի հաղորդումը 716—  
718 թթ. արշավանքին, միաժամանակ զգալիորեն ձևափոխելով այն:  
Այսօրինակ անհշուտության մեջ դեր են խաղացել Մերեոսի տարբե-  
րակի և հրոտրոց պաշարման ընթացքում իրոք տեղի ունեցած որոշ զեպ-  
քերի, երևույթների արտաքին նմանությունը: Ինչպես ևալատորների  
ակտիվ մասնակցությունը, փոթորիկները, վերջապես երկու զեպքում էլ  
արարների միտքինակ պարտությունը:

Որոտրոց պաշարման ընթացքում մահմեդականների ևալատորների  
զլխոժին կործանման փաստը հաստատում են նաև սաաք աղբյուր-  
ները<sup>38</sup>:

Արարական ևալատորների կործանումից հետո զեպքերն ըստ Ղևոնդի  
ստանում են զարգացման հետևյալ ընթացքը. «Եւ զման ինչ մնացեալ  
զորուն ի աախտական՝ տարեալ հանէր յայնկոյս ժովուն յաշխարհն  
Քրակացոց, և զումեսս ի կղզիս հեռաւորս վարեալ ընկնէսյր, քանզի  
էին բազմութիւն զորացն աւելի քան զՄ բիր արանց: Իսկ որի վտան-  
գաւոր նեղութենէն զերթան ի ցամաք՝ ոչ եղն ձեռնամուխ: մատնել ի  
սուր անոզորմ, ալլ ետ հրաման պահել զնոսս պաշարմամբ, զի ոչ  
ուրէք զոյր հար ելանել նոցա ի խնդիր կերակրոց: Եւ սով մեծ լինէր  
ի բանակին նոցա մինչև սպանել զծիս և զչորիս: Ապա յետ այնորիկ  
ձեռնամուխ լինէին ի հարնս և ի ծառայս փոշոտել և ուտել զի լցցեն  
զսովառութիւնն իւրեանց»<sup>39</sup>: Մահմեդականների բանակի մեացորցների  
այս ողբալի արկածների մասին հաղորդում են նաև բյուզանդական, ա-  
սորական և արարական սկզբնաղբյուրները: Այդ առթիվ Քեդիանեսը  
գրում է. «... երբ արարների մեջ սաստիկ սով եղավ, երանք ստիպված  
սկսեցին իրենց սատակած անասուններն ուտել՝ միերին, ալանակներին  
ու ուղտերին: Պատմում են, որ երանք ուտում էին անգամ մեղած գիակ-  
ները, իրենց աղբը՝ շաղելով և փռում կփելով: Նրանց մեջ բռնկվեց  
նաև համաճարակ, որն անթիվ զոհեր տարավ»<sup>40</sup>:

Ըստ Էնկիագրյուրների գրքիս անհայտ հեղինակի, Առն կայսրը  
գիմելով խորամանկության, գրկում է մահմեդականներին մթերքների  
պաշարից, որի հետևանքով սարսափելի սով է սկսվում երանց ճամ-  
քարում<sup>41</sup>:

Համաձայն ստար աղբյուրների, Կոստանդնուպոլսի երրորդ պաշարումն ավարտվում է նրանով, որ Օմար խալիֆան Համոզվելով Քյուզանդիայի մայրաքաղաքը գրավելու անհնարինություն մեղ, ետ է կանչում Մասլամային, որը և որոշ ժամանակ անց վերադառնում է Ասորիք<sup>13</sup>։ Հայ հեղինակների մոտ այս վերջաբանը այլ կերպ է ներկայացվում։ Հաս նրանց, ընկնելով պաշարման մեղ, Մասլաման զթություն է աղերսում Առնից։ Վերջինս իր մոտ է կանչում Մասլամային, նախատում նրան, ապացուցում Տիրոջ զորությունը, ապա ներում շնորհում և թույլատրում վերադառնալ իր երկիրը։ Մահմեդականները զոուչորեն անցնում են Միշերկրական ժովը և զայնս Ասորիք։ Այստեղ Հայրենակիցների կշտամբանքներին ու նախատինքներին Մասլաման պատասխանում է. «Ո՛ր կարծի ընդ Աստուծոյ կուուիչ<sup>13</sup>։ Այս արշավանքից հետո նա այլևս երբեք սուր լի վերցնում ձեռքը<sup>14</sup>։

Դիոնիսիոս Քելմաճրացին, ինչպես նաև Կարամանին հազորդում են, որ Մասլաման ետ վերադառնալու մասին Օմարի հրամանը ստանալուն պես, ինզդրում է Առնին թույլ տալ իրեն մուաք գործել քաղաք նրան այցելելու նպատակով։ Ենա երեսուն ձիավորներով քաղաք մտավ, երեք օր շրջեց և հիացավ թագավորական գործերի վրաս<sup>15</sup>։

Համադրելով Հայ և վերոհիշյալ հեղինակների տարրերակներն այս առթիվ, կարելի է ենթադրել, որ Մասլամայի և նրա զինակիցների հայտնվելը Կոստանդնուպոլսում պայմանավորված է ուղղակի նրանց գերի հանձնվելով։ Այն, որ եղել են արաբներին գերելու դեպքեր հասանում են Քեոփանեսը, ըստ որի, վերադարձի ճանապարհին մահմեդականների նավերից միայն տասը փրկվեցին, որոնցից հինգն ընկան բյուզանդացիների ձեռքը և Միքայել Ասորին, որը նույնպես հաստատում է բյուզանդացիների և բուլղարների գեմ վարած մարտերում արաբներից շատերի գերի ընկնելու փաստը<sup>16</sup>։ Այն, որ Առնն ազատություն է շնորհել Մասլամային և նրա զինակիցներին, պետք է բացատրել նրա ցանկությունը՝ հաշտության դալ խալիֆայություն հետ կայսրության ներքին գործերը կարգավորելու և իր գահի հիմքերը ամրապնդելու համար ժամանակ շահելու նպատակով։

Այսպիսով, հայկական աղբյուրների Կոստանդնուպոլսի երրորդ պաշարման մասին հազորդումները՝ բացի առասպելականից ու հեքիաթայինից, իրենց մեղ պարունակում են պատմական արժեք ներկայացնող գրվածքներ։



ОСАДА КОНСТАНТИНОПОЛЯ АРАБАМИ В 717—718 гг.  
ПО АРМЯНСКИМ ИСТОЧНИКАМ

Очередная арабская военная кампания в Малой Азии обернулась осадой Константинополя в 717—718 гг., но благодаря умелой оборонительной тактике византийцев и некоторым объективным причинам, завоевателям не удалось взять город. Кроме византийских, арабских и сирийских исторических источников, об этой осаде Константинополя сообщают и некоторые средневековые армянские авторы, в частности, Гевоид, Асолик, Вардан и т. д. По той причине, что эти сообщения, на первый взгляд, носят характер преданий, они не были удостоены внимания исследователей. Однако, их подробное изучение выявляет, что они в основе своей историчны и во многом могут способствовать всестороннему освящению вопроса.

- 1 Քեփական Խոստովանոց, Փամակահազուօթյան, Թարգմ. և ծանօթ. Հր. Բարթիկյանի, Երևան, 1963, էջ 98—101 և 105—108.
- 2 Никифора (патриарха конст.) Краткая история (перевод Е. Э. Липшица). «Византийский восток». III, 1950, с. 363.
- 3 Սրբ անգլիկոսի Թարգմ. տ՛՛ս Brooks E. W., The Campaign of 716—718 from Arabic Sources, „The Journal of Hellenic Studies“, vol. X, London, 1899, P 20—29.
- 4 Tarikh al-Tabari, vol. VI, Cairo 1971, էջ 483, 490—513, 523.
- 5 Իրև ալ-Սաֆր, Թարգմ. և ծանօթ. Ա. Տեր-Ղևնդյանի, Երևան, 1981, էջ 70—72:
- 6 Տ՛՛ս Chronique de Michel le Syrien, vol. 2, Paris, 1863, էջ 482—489; Chronique de Denys de Tell—-aire, Paris, 1895, p. 12—14:
- 7 Տ՛՛ս Պատմութիւն Ղևնդեայ Մեծի վարդապետի Հայրց. ՄԳԲ, 1887, էջ 103—112, Խեփականի Տարեկերտ, Աստղիկ Պատմութիւն տիկերտիան, ՄԳԲ, 1885, էջ 128—130, Պատմութիւն Անանի զրաւազորի Վարդեցեայ Հայրո՛ւն Բարձրաւանի, Թարգմ. աստղարան և ծանօթ. Մ. Հ. Գարրիկյան-Մելիքյանի, Երևան, 1971, էջ 78—87, Մեծի վարդապետ Բարձրեղծեցեայ Պատմութիւն Տիկերտիանի ի յոյս ընծայեաց Մ. Հիթի, Մ. 1861, էջ 102; Հեթում, Պատմութիւն, ՎՄանք Փամակահազուօթյանեկը XIII—XVIII դդ. Կ. 2, էջ 38.
- 8 Canard M., Les Expéditions des Arabes contre Constantinople „Journal Asiatique“, t. CCVIII, № 1, Paris, 1926, p. 80.
- 9 Гевоид Варданет, История халифов, пер. К. Паткевича, СПб, 1862, прим. № 164, с. 153.
- 10 Վարդան, Եջրած աշխ., էջ 102:
- 11 Հեթում, Եջրած աշխ., էջ 46:



- 12 Քնոփանես, Եղված աշխ., էջ 161—162.
- 12 Խախփոր, Եղված աշխ., էջ 272: Երկնիտրե սյուսնի շնկած է Հակասաթյունների մեջ պաշարման տեղափոխուից Լուսարկուզ 30 ամիս, եւ ուժուղ իրազարեւոթյանը ամփոփում է 717—718 թթ. ամաններում:
- 14 Ե. Ալիէյան. Ղեկի երեք դրամուցիք. Մասնագրական Լուսապատիւններ, ՃՏՏ, Կ. Փ, Վրննա, 1930, էջ 82:
- 15 M. Canard, Եղված աշխ., էջ 85:
- 16 Պատմութիւն Անանի գրուցարի, էջ 77:
- 17 Դոսոմ, Եղված աշխ., ծանօթ. 169, էջ 155:
- 18 Քնոփանես, Եղվ. աշխ., էջ 119: Ըստ Իրի ալ-Ասիրի Խարտանեկ (Խարտանա) ամբողջ Եղանէլ է Մուսթիս իրն Էրնուժէ և ոչ թէ Մասյանահ: Տէ՛ս Եղն-ալ-Ասիր, Եղվ. աշխ., էջ 82:
- 19 Պատմութիւն Ղեկեղեայ, էջ 102, Հմմտ. Սեփանես Տարունցի, Եղվ. աշխ., էջ 128:
- 20 Քնոփանես, Եղվ. աշխ., էջ 98, Խախփոր, Եղվ. աշխ., էջ 270:
- 21 Պատմութիւն Ղեկեղեայ..., էջ 104, Սեփանես Տարունցի, Եղվ. աշխ., էջ 128:
- 22 Դոսոմ, Եղվ. աշխ., ծանօթ. 164, էջ 133:
- 23 Քնոփանես, Եղվ. աշխ., էջ 101, M. Canard, Եղվ. աշխ., էջ 82:
- 24 Քնոփանես, Եղվ. աշխ., էջ 98:
- 25 Պատմութիւն Ղեկեղեայ..., էջ 103, տէ՛ս եւս Սեփանես Տարունցի, էջ 128, Անանի գրուցարի, էջ 77: Այս զննչի՛նս ապրիտրուփում Մամուս զարգարը Երզնում է արքա Ամուհե Կոստոյ Քարգալարին շրթայակուց երա սառը բերել:
- 26 Michel le Syrien, Եղվ. աշխ., Կ. Չ, էջ 482:
- 27 Tarikh al-Tabari, Կ. Յ, էջ 530:
- 28 M. Canard, Եղվ. աշխ., էջ 87:
- 29 Քնոփանես, Եղվ. աշխ., էջ 105, Brooks, Եղվ. աշխ., էջ 23:
- 30 Michel le Syrien, Եղվ. աշխ., Կ. Չ, էջ 484:
- 31 Մանրամասնոր տէ՛ս Պատմութիւն Ղեկեղեայ..., էջ 102—109:
- 32 M. Canard, Եղվ. աշխ., էջ 87, Brooks, Եղվ. աշխ., էջ 23:
- 33 Տէ՛ս Ղեկի Պատմութիւն, Քարգ. Ենթահ. և ծանօթ. Ա. Տեր-Ղեկեղեայի, Հայ մասնագրիներ, Երևան, 1982, էջ 150—151:
- 34 Պատմութիւն Ղեկեղեայ..., էջ 103:
- 35 Քնոփանես, Եղվ. աշխ., էջ 105:
- 36 Ղեկի, Եղվ. աշխ., էջ 15:
- 37 Պատմութիւն Սեբեոսի, աշխատարկութիւն Գ. Վ. Արքարյանի, Երևան, 1979, էջ 170—171:
- 38 Քնոփանես, Եղվ. աշխ., էջ 108, եւս Խախփոր, Եղվ. աշխ., էջ 272, Michel le Syrien, Եղվ. աշխ., Կ. Չ, էջ 486: Արարական ամանցույթը իր պարզանէլ սրել էր շատափութաններ ալս առթիփ:
- 39 Պատմութիւն Ղեկեղեայ..., էջ 110: Անանի գրուցարի, էջ 85: Ըստ այս զնն-

չիկ Մասունս և Աճառ գործարհները 55 հարզ ափ են գտնու գալիս մի տե-  
մորգարեանկ կզդի, որ կուլում է շեղարասունս:

40 Քևփանես, կղ. աշխ., էջ 107.

41 Brooks, կղ. աշխ., էջ 28.

42 Canard, կղ. աշխ., էջ 20.

43 Գառնաթիւն Ղևանդաշ... էջ 112.

44 Սա թյուրիմացություն է, քանի որ հետազոտում Մասունսն ընդհանր հանդես է  
գալիս որպէս աճեց կզանու, ապրիկը վալիւրում:

45 Denys de Tell-Mahre, կղ. աշխ., էջ 12, Canard, կղ. աշխ., էջ 105.

46 Քևփանես, կղ. աշխ., էջ 108, Michel le Syrien, կղ. աշխ., Կ. 2, էջ 485.

## ԵԳԻՊՏԱԿԱՆ «ՎԱԹԱՆԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՔԵՎԸ»

1875 թ. փաստորեն սեանկ հայտարարված և անգլիական ու ֆրանսիական զաղութարարների կողմից ֆինանսատեսետեսապես ստրկացված Եգիպտոսում 1879 թ. սկզբներին հասարակության լայն խավերում դժգոհանքն ավելի ու ավելի էր վերաճում ընդդիմադրական արամագրությունների կրքերը ծայր աստիճանի բորբոքվեցին այն բանից հետո, երբ նուրբար փաշայի վարչապետությունը գործող սեվրուպական առաջին գահլիճը որոշեց իրր բճանուն խնայողության բանակից արձակել 2500 սպաների, իսկ մնացածները լվճարված աշխատավարձերի վրա խաշ քաշիլով, ոտերկներն էլ կիսովին ցածրացնել: Որոշումը հիմնականում վերաբերում էր բնիկ եգիպտացի, ուրեմն սեվրիական պատկանելիություններ ու ծագմամբ... որոշապես շրջագծված սոցիալական մի խմբի<sup>2</sup>, որի անդամները, ի աարբերություն հրամկազմի ուտեղարնիկ բարձրաստիճան սպաների, բտնակում ծառայությունն ըսկըսել էին որպես զորակոչված ֆելլահ-շարքայիներ և սպայական ցածրը կուումներ ստացել էին 1860—1876 թթ. սուղանական և եթովպական ղինարշավների ընթացքում: Նշանակում է, որ խնայողության զուգահեռ որոշումը հետապնդում էր նաև քաղաքական նպատակ՝ սավերիլ բունակը, ինչպես իր ժամանակին եկատել է եգիպտական գլխավոր շտաբի պետ ամերիկացի գեղապետ Սթոունը<sup>3</sup>, վերացնել երկրի գաղութականացման հարաճելիք փորձերին հակադդիլու կարևորագույն ուժը:

Քիկուղ սոսկ անձնական-գասային նկատառումների մղմամբ Լաթիֆ բեյ Սելիմի տաշնորդություններ 1879 թ. փետրվարի 18-ին բողոքի դուրս եկած սպաները, որոնց թիվում էին աալիա ղինվորներն ու քաղաքացիները, ֆինանսների մինիստրության շնքում արղելափակեցին վարչապետին և մի քանի մինիստրների: Եգիվ Իսմայիլը, որ հանկանալիորեն առեմազն ամերիկացի Սթոունի շափ տեղյակ էր կա-

առավարության որոշման համաժողովին և որ Ն. Ա. Իվանովի պնդմամբ  
երես ամենախիթ քառալորում (զույցն թե նույնիսկ ներշնչում էր) նու-  
բարի կառավարության դեմ տարրեր բնույթի էությունն, զորքի բան-  
հազանդությունը, պատրվակելով, լեղյալ հայտարարեց հեռացում-  
ների հրամանը և մարտի 9-ին, պաշտոնազրկված նուբար փոշայի  
փոխարեն վարչապետ կարգեց իր ավագ սրզուն՝ 27-ամյա զահա-  
ժառանգ Քաուֆմանը՝:

Նվ սակայն այնքան, որքան անզլիացի Չարլզ Ռիվերս Վիլսոնն ու  
Ֆրանսիացի դը Քլինյերը, Ֆինանսների և հասարակական գործերի մի-  
նիստրի իրենց աթոռները նոր զահլիւնում պահպանելով, շարունակեցին  
կիրառել իրենց երկրների թալանարար քաղաքականությունը, բողոքի  
շարժումը ոչ միայն չմեղմացավ, այլև վերելք ապրեց: Նարժումն իր  
գազաթնակետին հասավ մարտի 28-ին, երբ Վիլսոնը խղիվին պար-  
տադրեց իր ֆինանսական ստրկացուցիչ պլանը: Բուռն կերպով բողո-  
քում էին ոչ միայն ժողովրդական զանգվածները, ուլիման, աստիճա-  
նավորությունն ու սպաները, այլև նույնիսկ եզիպտական ժեսոհրդա-  
բանի՝ Երևելիների ժողովի անդամները: Հինց վերջիններիս նախա-  
ձեռնությունը էլ ապրիլի 2-ին ծնունդ առավ սևղզային հայտագիրը  
(առ-կախ առ-վաթանիյա), որում հիմնականում ընդգծվում էին  
իրենց երկիրը կառավարելու հարցում եզիպտացիների անկապտելի ի-  
րավունքը և Երևելիների ժողովի լիազորությունների շրջանակն ընդ-  
լայնելու պահանջը՝:

Եզիպտոսում սվաթանիա-աղզային շարժման ծրագրային առաջին  
փաստաթուղթը հանդիսացող սևղզային հայտագրի հրապարակումը  
արարապետների շրջանում սովորաբար ընդունվում է որպես նախորդ  
տարվա վերջերից կազմավորվել սկսած սվաթանիա կուսակցության  
ծննդյան պաշտոնական թվական: Նվ քանի որ սվաթագիրն ստորա-  
գրել էին ոչ միայն վարչապետ Քաուֆմանը հրամանն անտեսելով իրեն  
լուծարքի ենթարկված շահմարող Երևելիների ժողովի 75 անդամներից  
60-ը, 72 աստիճանավորներ, 60 հոգևորականներ ու բաղարարնակ 42  
երևելիներ, այլև 93 սպաներ, նշանակում է, որ մեծազեցիկ ֆեոդալ  
ազնվականների նախաձեռնությամբ ու մահմեդական ալիմների և սի-  
րիացի քրիստոնյա մաավորականների մասնակցությամբ կազմակեր-  
պականորեն որոշակի տեսքի եկած սվաթանիա կուսակցության շրջա-  
նակներում իր պահպանելի տեղն էր զբաղեցնում նաև սվաթանիա-տե-  
զարնիկ սպայությունը: Վերջինս առաջին իսկ օրից, համենայն զեպս  
ամենաուշը հունիսից սկսած ու մինչև վերջ կազմակերպության մյուս

բազազրատարրերից որոշակի հետազոտութիւն պահպանելու իսկ պատճառով, իր ժամանակին պիտի ընկալվեր ու հետագայում էլ ինչպէս սկզբնաղբրյութենքում, այնպէս էլ արարագիտութիւնն էլ շարունակապէս զարգացնելու որպէս «վաթանի» կուսակցութիւնն էլ շարունակապէս թեւ:

Էշայտագրիչ և «վաթանի» կուսակցութիւնն շնորհիվ իր շուրջ որոշ իմաստով «վաթանի»-ազգային միասնական նախապատեղծած, տվյալ պահին որդուց ղեկավարվող բնութագրական դահլիճը վերջնականորեն լուծարելու նպատակով բնականապէս եզրապահական տարրերից և կառավարութիւնն ստեղծած և երկրում սահմանադրական-խորհրդարանական միասնական կարգ հաստատելով ստարեբերացիների ստեղծութիւնները խափանելու միտող խզիվ, Իսմայիլը, սակայն, Անգլիայի ու Եւրոպայի ճշմամբ հուսիսի 24-ին հարկադրվեց ստորագրել իր հրատարման գիրք և սուլթանի կողմից դահլիճից հայտարարվելով, երկրից վտարանդվեց, եզրիվ հռչակվեց Քաուֆիք փաշան, որի առաջին գործն էլ զավցրել Երևանի բնակիչներին ժողովը, մերթն էլ հոր կարգադրութիւնը մշակված սահմանադրութիւնն նախագիծը, վերահաստատել բնութագրական Ֆինանսական վերահսկողութիւնն սխտեմը և «վաթանի» կուսակցութիւնն տրազացիական թեւն ղեկավար Երիֆ փաշայի փոխարեն վարչապետ կարգելու ռեակցիոն Ֆեոդալ աշխատակցութիւնն պարագլուխ և անգլիացիների կամակատար միտող փաշային: Եզրապատում հաստատվեց ծայրահեղ հետադիմութիւնն ընտանիքական վարչակարգը:

Եթէ շտապանք, որ եզրապահական ազգային բուրժուազիան որպէս դասակարգ դեռ չէր կազմավորվել (Լ. Ռաթմանի խոսքերով «դեռ խոսք լինել չի կարող դասակարգի վերածված և իր միջկուսակցատալիստական շրջապատից ազատագրված բուրժուազիայի մասին»), հետևարար և շտապանք իր միջավայրից ծագած հասարակական-քաղաքական առաջավոր գործիչների մտավորական կազմակերպչալ մի դաս, որ ազգաբնակչութիւնն ամենաշուրջ խաղերի գծովանքին շեշտ և ուղղութիւնն տար, ժողովրդին համախմբող կարգախոս ու գործողութիւնն մղող ծրարներ առաջադրել, ապա հասկանալի կդառնա, թե ինչու «վաթանի»-ազգային միասնական նախապատեղծ պարտութիւնն պայմաններում վերջինիս բազազրատարրերի համախմբումն արագորեն քակտվեց: Եվ ուրեմն զարմանալի չէ, բնավ, որ Քաուֆիքի գահակալութիւնից հետո, ինչպէս և նախկինում, մինչև «Անգլիային հայտագրիչ շուրջ խայտարեցտարրերի միասնականացման փորձը, համաժողովրդական գծովանքը երևան ու պտղավորման մի քանի (ու ոչ միշտ հարազատ) շրջանակներ

ու ասորներ ձեռք էր գտնելու, ավելին՝ ծագմամբ հայազգի Ազիր Իս-  
հակի գլխավորած բնչրութիւն արմատական եւ հոգայականների կող-  
մից շուրջ երկու ասորի ասաշ ասպարեշ նետված «նորայտութիւն» եզրագա-  
ցիներին լուսնոյն էլ այդ շրջանակներում ասորներ բնկայումներ ու  
դրոնորումներ էր ստանալու: Կարիք չկա ասանձեազեւ ընդգծելու,  
որ այդ լուսնոյն իրականում, գոնե իր հոգացողների համար, ուներ հա-  
մանգիպատական-ազգային ընդգրկում, քանի որ փաստորեն ուղղված էր  
ու այնքան բանակի ասորչաւում էլ իրենց-փաշաներին՝ եկվոր մահ-  
մեղական զինվորականութիւն գերակայութիւն գնմ, ինչը վերջին հաշ-  
վով, թեկուզ և կարեւոր, մասնավոր երևույթ էր, որքան՝ երկրի ամբողջ  
կյանքում այդ զորավարութիւն հետ նաև եկվոր-մահմեղական կալ-  
վածատեր ու աստիճանավոր ազնվականութիւն և արևելյան-քրիստոնյա  
կոմսարադոր աստարավաշխատուների բացարձակ գերակայութիւն, հատ-  
կապես իզրայէլական զիվանագիտների ասանարձակ ստանդարտներին և  
Ֆինանսաանասական թաւանարար գործաւորների անհակադէմ տի-  
րապետութիւն գնմ:

Երջանակներից մեկը, որ հետանկարում կենտրոնականն էր գտն-  
եալու, ցածրաստիճան սպայական այն դասն էր, որի հիմքի վրա ասա-  
շացել էր «Վաթանի» կուսակցութիւն թղինվորական թեր: Սույն հոգ-  
վածում մեկը փորձելու ենք ուղղագծել այդ դասի զիմապատկերը, քա-  
նի որ խնդրս ասարկա թղինվորական թեր» ետթաւփիքիւն ժամա-  
նակաշրջանում միառժամանակ հանդես էր գալու որպէս ասազել կամ  
նվազ ինքնուրույն «Վաթանի» կուսակցութիւն, 1879 թ. աշնանը բա-  
զարացիական թեր» հետ մի անգամ ևս ժամանակավորապէս համա-  
ձուլվելուց հետո գլուխ էր բերելու 1881 թ. սեպտեմբերյան հեղաշրջու-  
մը, վերջապէս նույն ասարկա վերջին ու հաշորդի սկզբներին ձեւավոր-  
վելով որպէս «Վաթանի» ասազել հանրահայտ կուսակցական կազմա-  
կերպութիւնը, 1882 թ. գլխավորելու էր եզրագապական ժողովրդի հա-  
կարրիտանական զինյալ պայքարը:

Սկզբից եեթ արձանագրենք, որ հիմնականում եզրագապի արար-  
ներից կազմված ցածրաստիճան սպաների դասը մինչև 1876—1877 թթ.  
բացառապէս, իսկ այնուհետև անվազն մինչև 1881 թ. սեպտեմբերյան  
հեղաշրջումը գլխավորաբար նեղ-արհեստակցական խնդիրներ էր ա-  
ռաջագրել ու հետամտել դրանց լուծման: Եվ իրոք, սպաները, ինչպէս  
մինչև 1879 թ. սպրիլը, այնպէս էլ այնուհետև, ընդգծման արժանի  
համասութիւնը ու հարատեւութիւնը բանակի շրջանակներում եզրագ-

տական արարները և եկվոր տարրերի միջև տալգային իրավահավասարությանն ստիզյան քաղաքականությունը կիրառելու պահանջով էին հանդես գալու:

Բանն այն է, որ փոխարքա Մուհամմեդ Սաիդ փաշան (1854—1863) Բարձրագույն Դռնից իրավունք ձեռք բերելով հարգելու Մուհամմեդ Ալիին 1841 թ. պարտադրված սահմանափակումները և իր զորքի թվաքանակը հասցնելու նրանում հաղարի, նոր եռանդ էր հազորդել զեռ իր զորահրամանատար եզրոր՝ Իբրահիմ փաշայի կողմից նախաձեռնված սպառնալից արարականացմանն զործին: Այլ խոսքով նա շարունակել էր 1840-ական թթ. փոխարքայի, իսկ այժմ արդեն սուլթանի հավանության պարտադրաբար ենթակա լեզող սպայական ցածր աստիճանները արարներին շնորհելու քաղաքականությունը, առավել ընդունակ ֆեյլահներին առաջ քաշելով չոկատների, իսկ համապատասխան պատրաստականություն անցածներին՝ զնդերի ու վաշտերի հրամանատարական պատասխանատու պաշտոնները: Եղիվ Իսմայիլը, ահա, բարդացող իրազրություն մեջ նահանջելով իր նախորդի և սկզբնական շրջանում իր իսկ կիրառած պրակտիկայից, սկսել էր, ի վնաս արարների, առաջ քաշել այլտեսական, թուրքական (նաև միջինասիական թյուրքալեզու), լեռքեզական և քրդական ծագմամբ զինվորականների, որոնք, ինչպես վկայում էր Ֆրանսիացի մի ժամանակագրող, սնույնցան տգետ և ավելի վախկոտ էին, քան զինվորները, որոնց վրա ծանրացնում էին իրենց բռնակալական լուծքու շատատելով, որ տրանակում օսմանցիներն ու նրանց ստրուկներն են տիրում քոլոր աստիճաններին, ականատես հեղինակն ավելացնում էր, որ սպայակույտի զարոցի 200 ունկնդիրները բնամուրհներ կամ Պուսից հատկապես ուղարկված թուրքեր էին, այն դեպքում, երբ միայն բնի քանի արարներ, հատուկ շնորհի արժանացած քաջատություններ էին այնտեղ ընդունվում: Ավելին, մինչդեռ ուսումնարան զործուղվող թուրքերն ու մյուսները անմիջապես ստանում էին լնյտեմանտի կոչում, արարներն այդ կոչման կարող էին հավակնել միայն ուսումնառության վերջում, այն էլ՝ ոչ առանց մտավախության, քանի որ դասախոսներին հանձնարարվում էր խոչընդոտել քննական հանձնաժողովի առաջ նրանց հաջողությունը: Եթուրք սպաներն արագորեն հասնում են բարձր աստիճանի, հաճախ առանց ամենաանհրաժեշտ տարրական գիտելիքներն իսկ ձեռք բերելու, — արևտնագրում էր ժամատակագիրը:



Այս ամենի հետևանքով մեծացել էր լարվածությունն ընդմէջ սպասական երկու դասերի՝ «Ֆելլաւաների» (եզիպտացի արարների) և «չերքեզների» (այլազգիների), լարվածություն, որը կարևոր դեր էր ունենալու եզիպտական «վաթանի»-ազգային շարժման հետագա զարգացման գործում<sup>10</sup>։ Ասենք, որ մեր կարծիքով զվար թե տեղաբնիկ սպաների դասն իբր կամուսին ու հպարտությունը ինքզինք «Ֆելլաւաներ» անվանած լինի, ինչպես պնդում է մեր որսչ արարագետների եղովից Մենք ավելի հավանական ենք համարում, որ այդ դասից «չերքեզ» փաշա անվանված եկվոր ռազմա-ֆետոյալ ազնվականներն են արարանազնվական կալվածատեր սպաներին ավել իրենց բառապաշարում անկասկածելիորեն արճամարհական երանց ունեցող «Ֆելլաւաներ» մակդիրը։ Այդ հավանականությունը որոշակիորեն հիմնավորվում է այն իրողություններ, որ ժամանակակիցներից Կամիսերը սգաագործել է «տեղաբնիկ կամ ֆելլաւաներ անվանված սպաները» դարձվածքը<sup>11</sup>, իսկ Ա. Կուլիին ավելացրել է. «եզիպտացի սպաների հպարտությունն ամեն օր խոցվում էր թուրք կամ չերքեզ աստիճանակիցների խռոխա կնքվածքից և արճամարհալիք վերաբերմունքից»<sup>12</sup>։ Այնք, որ XIX դարի երկրորդ շառորդին մի տասնամյակից ավելի ապրել է Եզիպտոսում, գրել է. «Կահիրէի տեղաբնիկ ժողովուրդն ինքզինք սովորաբար կոչում է ալ-մըսրիյին, առկաջ Մըսր կամ անլ Մըսր, իսկ ավելի հաճախ՝ առկաջ ալ-բիլադ, ինչ որ նշանակում է Մըսրի ժողովուրդ, Մըսրի գավակներ, երկրի որդիներ։ Գյուղացիներին սովորաբար կոչում են ալ-ֆելլաւանի, այն է՝ հողամշակներ։ Քուրբերը հաճախ այդ տերմինով անվանում են Եզիպտոսի բոլոր բնակիչներին, զրա մեջ զննելով նվաստացուցիչ ոգի (եկոպիտ, անդաստիարակ մարդիկ, սխեզկատակներ)։ Երանք նույնպես սգաագործում են անլ ֆարաուն-Փարավոնի ժողովուրդ արճամարհական որակականը, որին եզիպտացիները, եթե համարնակությունից զուրկ չեն, պատասխանում են անլ-նիմուր—նեմուրի ժողովուրդ որակականով»<sup>13</sup>։

Համենայն դեպս փաստ է, որ 1876-ին, զեպի մթնվախա անհաշող զինարշավից հետո, խզիվ Իսմայիլը զեզերի և վաշտերի մահացած հրամանատար սպաներին վոխարինելիս ասաջ էր քաշել մի խումբ եզիպտացիներ<sup>14</sup>, որոնք արդեն այդ ժամանակ որոշակի նկրտումներ ունեին և իրենք իրենց ավել էին «վաթանի» ինքնանվանումը։

Այնքան, որքան արարներնում «վաթան» բառը շարունակում էր պահպանել «սինդլան» ու բնակչության վալլա ավանդական իր իմաստ-

աց, ապա, ինչ խոսք, որ բնականին իր ժամանակին ունեց բուն իսկ  
բնականին հզորացալու նշանակութիւնը, որը, սակայն, նուազեան-  
ազնիւ ու ավելի էր թափախուած ազգային ժողովան հասկացողութեան  
մէջ, ստանում էին ոչ մերօրյա բազմաբան-հայրենասեր ընկալու-  
մը՝ ապա զոնք ընկալողներն որդի ու տեր նշանակութիւնը: Չմտա-  
նանք, որ Հենց 1870-ական թվականներին հզորացան ժողովուրդ-  
կանութիւնը բնականին սահմանման մէջ ներգնում էր նոր տարր՝ հայ-  
րենասիրութեան, որը հանձնարարում էր ազգային կապը զնորոգել  
կրօնականին և Պապականութեան ոչ պակաս աշխատելու նաև ի փոքու հայրենի  
երկրի<sup>15</sup>։

Քույր դեպքերում բնականին սպանելու համախմբելի էին բնա-  
հիշողի դիրքում սովորած և բնականին զարգացած<sup>16</sup> Այն առ-Ռու-  
սիի շուրջ և 1876-ին ստեղծել ընդհատակայա մի ընկերութեան, որը,  
բայտ կուսակցական հարցադրած լինելով ընդհանրապէս փրկութեանը, իր  
անդամների մեծամասնութեան դասային թիւ մտաւոր, ուրեմն և գա-  
ղափարական-աշխարհայացքային անխուսափելի սահմանափակութեան  
հետեւանքով ներ-արհեստակցական պահանջների էր պատշաճեցրել «Ս-  
գիպոստը՝ հզորացողներին» լուրուզը:

Բնականին սպանելի՝ սոցիալական զիմապատկերից առաջ շա-  
նանք ուրվանկարել նրանց քաղաքական ներշնչարանի ցարդ արարա-  
գիտութեան էջերում անտեսուած հիմնականը:

Սկսեց միանալով Ն. Իվանովի այն հաստատմանը, որ 1876-ին  
իրենց գաղտնի ընկերութեան հիմնադրումից հետո «Ֆելլա» սպանելի  
մեծամասնութեանը, գիրքորոշելով հանդերձ ստեղծութեանների և  
եղբորականն զահիճի քաղաքականութեան գեմ, ընդհուպ մինչև  
1879 թ. հունիսին գահընկեց արվելու էլրիվ լոյալ էր խղիվ Իսմայիլի  
եկատամմաբ<sup>17</sup>։ Ռ. առ-Ստիզը, թեկուզ և բոլորացիական հիմք վե-  
րադրելով սոցիալական կազմակերպութեան, բայտ երևույթին Հենց այդ  
մեծամասնութեանը եկատն ունենալով է, որ խոսել է հունիսի վերջերից  
կազմակերպութեան զեկտմարների՝ նոր խղիվ Քառօրին սկզբանապէս,  
այլ խոսքով բնականին-ազգային ուղղութեան սիրաշահելու անհաղոյ  
փորձի մասին<sup>18</sup>, փորձ, որը կարող է կատարված լինել Քառօրին հետ  
ներդաշնակ աֆղանիականների միջոցով և որը լէր կարող լծախողվել  
այն պատճառով, որ Հենց այդ օրերին սեյիւղ Զեմալ աղ-Գին ալ-Աֆ-  
ղանին փառաբանել երկպառակել էր բնականին կուսակցութեանը՝ հիմ-  
նադրելով իր բնականին անկախ կուսակցութեանը:

«Վաթանիս սպաների շրջանում մինչև 1879 թ. Հունիսի 24-ը խզիվ Փսմայիլի զեմ գիրքորոշված փոքրամասնության մասին խոսակցութիւնն անհրաժեշտ է բացել փոքր-ինչ հեռվից. սպայական գազանի բնկերութիւն փաստական զեկավար Մահմուդ Սամի ալ-Բարուզիի առեզժվածից:

Սովետական, թե արտասահմանյան արարագետներին միայն ու միայն եւ. կիրքերն է, որ առ այսօր փորձել է լուծել ալ-Բարուզիի առեզժվածը: Մակայն եւ էլ, զորավար փաշայի զեմքի ու դիմակի ինչ-որ տարբերութիւն կատարելու գծով նիշու ուղու վրա ընկնելով, փաստորեն սխալ պատասխան է առաջադրել, մանավանդ, որ ալ-Բարուզիին հայտարարել է «վաթանիս սպայութիւնն շատավել հետեզակական սահմանադրականներից մեկը»<sup>19</sup>:

Ալ-Բարուզին «վաթանիս», ուրեմն տեղարնիկ-«Ֆեյլաւ» սպաներին գաշնակցած միակ շերքից չէր, անշուշտ: Նրա եման շերքեզական ծագում ունենին, բացի իր եզրայր Յակուբ Սամիից, եւս Ալի առ-Ռուբին, Համիդ Ամինը և ուրիշներ: Մակայն եւս «վաթանիս» ճակատում տվյալ պահին միակ շերքեզ-փաշան էր. շերքեզ մամուլը մի բնյի այդ հետեզիցը շատ արագ էր առաջ խաղացել ու զարձել զորավար փաշա<sup>20</sup>: Տրանսիայում և Անգլիայում կատարելագործված զինվորական, արարերներից բացի եւս սսմաներն ու պարսկերն լեզուների և պատմութիւնն ու գրականութիւնն քաջագիտակ, եւս միաժամանակ 1850-ական թթ. վերջերից եզիպտական քերթողութիւնն բարձրացող աստղն էր համարվում<sup>21</sup>: Հեծելազորային զեզի հրամանատար, եւս Նուրար փաշայի կառավարութիւնն օրոր նշանակվել էր կահիրեի ոստիկանութիւնն պետ, Քաուֆիի գահակալութիւնն հետո միադ փաշայի կառավարութիւնն կազմում վարելու համար սկզբում վակուֆների, ապա և ռազմական միներսրի պաշտանները:

Ալ-Բարուզին ավելի հետաքրքրական է շերքիվ այն իրողութիւնն, որ թող «վաթանիս սպայական միշավայրի առավել քիսայուն խելքի տերն», առավել «խիզախ ու վեռական» զեմքը լինելը, առավել բազմակողմանի պատրաստականութիւնը, ավելի բարձր ծագումն ու զիրքը, մանավանդ հավակնտութիւնը, ուն, որ բնքն իրեն զգում էր կարծես բարձր պաշտանների համար ստեղծված, առաջին օրից մինչև վերջինը կանգնած լինելով հանգերն եզիպտական «վաթանիս-ազգային շարժման հենց կենտրոնակետում, պատմագրութիւնն կողմից սրպես կանոն տեղադրվել է շարժման ետեմատում: Ամերիկացի զըն-

դասկես Չարլզ Լենդն ընդգծելով, որ եւ եզրպատական ժողովրդի հակաբրիտանական զինյալ բազմամարտիական ուժին էր և առաջնորդը, ուրեմն և շարժումը ղեկավարեց սկզբից մինչև վերջը, ավելացրել է Վուդկոֆն. իտարզավանքներին երա հակումը պատահաւ զարմալ այն բանի, որ Մամի զանգվածների պատկերացման մեջ մնաց պատմութեան ետեմասում: Տ. Բարաքաթն իր հերթին շեշտել է. Վիլիս մարզը, որ իր ազդեցութեան ուժով կարող է հավասարվել Օրաքիին, առանց սակայն ժողովրդի ալքում երա փոռքը կիսելու, Մահմուդ Մամի ալ-Բարուզին էս<sup>22</sup>:

Ալ-Բարուզի էամփով էլ հետազոտութեան անկէք պարզելու, որ սպայական-կազմակերպութեան հակախմամախլական փոքրամասնութեանն իր ներշնչանքն ստանում էր ուղղակի սամանյան մայրաքաղաքից: Մուլթանների նստավայրի զիվանատան եզրպատական հարցին վերաբերող փաստաթղթերն ուսումնասիրած Հասան Աղային, օրինակ, հաստատելով, որ եզրպատական սպաների զաղտնի կազմակերպութեան իսկական ղեկավարը ալ-Բարուզին էր, շեշտել է.—1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից, եւ բազմիցս Պոլիս այցելեց և հիմնականում իր անունից էր, որ իրականացվում էր կապը Արդ ալ-Հալիմ փաշայի, եսև եզրպատական սպաների զժողհանքն իր շահերին ժառանցեցել շանացող Արդուլ Համիդի նստավայր Յըլզըզի Քյոշկի հետ<sup>23</sup>: Ի միջի այլոց, հետազային, զատարանի առաջ կանգնած, ալ-Բարուզին խոստովանելու էր (և Օրաքին հաստատելու էր երա խոստովանութեանը); որ հալիմական շարժման զլիազոր ուղեշնչուն ու ղեկավարը ինքն էր եղել:

Արդ ալ-Հալիմ փաշան Մուհամմեդ Ալիի 35 երեխաներից կրտսերագույն մանն էր և ուրեմն 1866-ի սուլթանական հրովարտանով (որ թուլլաւարում էր խախտել եզրպատական զահըր առճմի ավազին հանձնելու կարգը պահելով ընտանիքի ներսում՝ հորից որդուն փոխանցել) կորցրած լինելով զահաժառանգման ամեն մի հույս, հանկարծորեն այն վերագտել էր ներեզրպատական քաղաքական խոսնակութեանների ուժբաններում: Կարիք չկա շեշտելու, որ եզրպատական տալանադի խորացման մեջ իրքք էլ չէր կարող իր որոշակի դերը շունեհալ ժառանգման նոր, արդեն ավելի քան մի տասնամյակ իշխող առճմը երկպառակող կարգը, մտնալանդ որ Արդ ալ-Հալիմը, ինչպես նշել է ժամանակակիցներից Տ. Բարաքաթը, սկողմնակիցներ ուներ երևելիների և իշխանների թվում<sup>24</sup>, Տարբեր վկայութեանների վրա հենվեով ն. Իվանովը.

իւ հերթին, հաստատել էր, որ «Պոլսում ապրող, քրիստոնյաների անհաշտ թշնամին համարվող և իրեն դահակալման իրավունքից զրկած Իսմայիլին ատող Արդ ալ-Հալիմ փաշան էր կանգնած սպայական դաժադրութիան ակունքների մոտ և որ բըժրոստ իշխանը» կանխօրոք եղիպտական միշավալրում կարևոր հենարան ստեղծելով Նանշին «մասններին (այլ իտարով ալ-Աֆղանիի հիմնադրած «Ազգային զինակին»,—Ն. Ն.) հարած ու նրանց միշտցով իր հետ կապ պահպանող սպայական փոքրամասնութիան, «1879-ին ապահովվեց Բարձրագույն Դռան աշակցութիամբ և պայքար շղթայադերձեց իր կորովալիբ ազգականի դեմ, նրազելով գրավել Եգիպտոսի գահը»<sup>26</sup>, Բնականաբար, Արդ ալ-Հալիմը չէր կարող Բարձրագույն Դռան նկատմամբ հանձն լաւնել մի պարտամուրհակ. եղիպտական խղիվութիւնը շեղել Օսմանեան կայսրութիւնից առավելագույն չափով ինքնուրուինացնելու իսմայիլական քաղաքականութիւնից և, թեկուզ առանց համահարթելու արարական վիշալնթեների շրջանակներում, հնարավորին չափ վերենթարկել սուլթանի գերիշխանութիւնը:

Այս ամենից բխում է մի տարրական ելրակացութիւն. այն, որ 1879 թ. ապրիլին ստորագրելով «Ազգային հայասգիւն» ու հարելով խոցիվ Իսմայիլի շուրջ ստեղծված բովաթանիս—ազգային ճամբարին, որ և նույնն է՝ «Վաթանիս Ետրաստեղծող կուսակցութիւնը, վերջինիս քվինվորական թեքս թեկուզ և փոքրամասնական, այլ ղեկավար դիրքերում կանգնած մեծազղեցիկ քարուղիականների ճանապարհով փաստորեն հետապնդում էր բովաթանիս—ազգային նահատի առաջադրանքներին ու նկրտումներին հակընդդեմ և ըստ էութիւն հակաազգային կուրս, որի զսպանակները գանձում էին սուլթանի քաղաքական գորակենտրոնի ձեռքում:

Մի ամբողջ շարք արարագետների կարծիքով քվինվորական դաժադրութիւն իսկական ղեկավարը հանդիսացող ալ-Բարուզիի հետ կապեր հաստատելով է, որ 1879 թ. հրկրորդ կեսին Օրարին տիրեն հասուկ էներգիայով օտարերկրացիների դեմ պայքարի մեջ մտաւ<sup>26</sup>, այլ խտրով զարծած ոչ միայն սպայական կազմակերպութիւն, ուրեմն և «Վաթանիս կուսակցութիւն քվինվորական թեքս պարագուլոր, այլ բովաթանիս—ազգային շարժման առաջիկ պոտենցիալ ղեկավարը: Ալ-Բարուզիի կողմից Օրարիի առաջ մղման հարցում անկասկած իր գերն ունեցած պետք է լինի այն իրողութիւնը, որ ի տարբերութիւն շեքեզ առ-Ռուզիի, նա տեղարեւիկ էր և ուրեմն ավելի հարմար դեմք էր բովա-

Քանի՜ս լինել հավակնող շարժումը զլիսավորելու: Եվ սակայն եռյնքան անկասկածելի պիտի համարել և այն, որ ես, որպես խղիվական առնի՜ք գեաս, իր սուլթանասիրության ու հետազոյնականության զոհ զնացած Արքաո Հիլմի I-ի ավագ որդու՝ ալ-Համի փաշայի մեկ հատիկ ազդեա ամուսինը, ալ-Քարուզիի կողմից առաջ էր քաշվել որպես սուլթանական-խալիֆական խարդավանքների թե հալիմական հավակնութուններին կենսագործման հարմարագույն գործիք:

Եվ սակայն Օրարին այստեղ մեզ համար եան հարմարագույն թեկնածուն է՝ Էվաթանիս սպանների, ուրեմն և Էվաթանիս կուսակցության պատկանելի բաղադրատարր շղիմվարական թեկն սոցիալական դիմապատկերը պարզելու տեսակետից:

Ահմեդ Օրարի ալ-Հյուսնինին ժամանակակցի վկայությամբ իր արտաքինի՝ սրարձը հասակի (մեկ մետր և ութսուն սանտիմետր), զեմքի ներզաշնակ գծերի, հաստ շուրթերի ու թաղ հոնքերի՝ շնորհիվ<sup>27</sup> Մուհամմեդ Սաիդ փաշայի օրոք բանակում արագ առաջ էր ընթացել և քսան տարեկանին փոխ-զնդապետի աստիճանով ու կայմական տիրազոսով զարձել էր փոխարքայի համհարզը, սակայն իսմայիլի օրոք անուշազորության էր մասնվել ու ավելի քան մի տասնամյակ սպանլուց հետո նրեսուններու տարեկանին արժանացել էր զնդապետի աստիճանին ու միրալայի տիրազոսին: Ի միջի այլոց, եթե մերժելի են բուրժուական հեղինակներին՝ Օրարիին շահակնոտ ապաշնորհ և շահասխոս ու տգետ խամանիկն ներկայացնելու շանքերը<sup>28</sup>, ապա ոչ միայն Ֆ. Մուշտեհլիի հետ կարող ենք հաստատել, որ Ահմեդ բեյն իր համազգեստի ներքո իրականում մեում էր շահասարակ ու կիսագրագետ մի ֆեյլաւհ<sup>29</sup>, այլ և Ն. Իվանովի հետ կրկնել, որ ես քուսովական պրակտիկ փորձ ու զինվորական հասուկ կրթութուն չունեմ<sup>30</sup>:

Վ. Բ. Լուցկին որարիական իրք թե սֆեյլաւհների շարքից՝ բարերացած սպաններին բազալիին զեմկրատական տարրեր՝ որակելով ու նրանց զորական բազնվականական փաշաներին՝ հակադրելով, փաստորեն ցանկացել է հուշել բանակի ներսում հակամարտության ինչպե՜ս ազգային, այնպե՜ս էլ սոցիալական ներքնածալք ունենալը, մանավանդ, որ այլուք ոչ միայն շեշտել է՝ սիրականում էլ ես (Օրարին, —Ն. Ա.) Ստորին Սզիպատսի Հարիյա-Մուզեա գլուցից ֆեյլաւհի սրդի էրս, այլ և ականատեսի նման վկայել է, որ ամիսներով առձիկ շատացող օրարիական սպանների շեշտանիքները սովահարվում էին<sup>31</sup>:



Արքայալ Սրարի բնի Բիւլլահուսթիանա վերաբերյալ պնդումը, որը հանդիպում է ոչ միայն Վ. Լուցիու մոտ<sup>32</sup>, հիմնադրով էլ նա, միշակ հողասեփականատեր և բարեկենցիկ գյուղացու, իր գյուղի շինիս ալ-բալայկ նշանակված մարդու, այլ խոսքով ուղղալի որդի, հորից Շարիլյա նահանգում ժառանգած 8 ֆեդդան (չուրը 2,5 հեկտար) հողը բանակում ժառանջիլիս իր բնակչություններին՝ օգնությամբ և բալ-բալայկոյ համագյուղացիների հողակտորների հաշվին հասցրել էր 570 ֆեդդանի (240 հեկտար) և փաստորեն վերածվել էր խոշոր կալվածատիրոջ<sup>33</sup>։ Արձանագրոնք, որ միջին հաշվով 50 և ավելի ֆեդդան հողասեփականատիրություն ունեցողները նդիպատում մաս էին կազմում կալվածատերերի դասակարգին և հողասեփականատեր եզիպտացիների 1,55 տոկոսը կազմելով տիրում էին մշակելի հողային ֆունդի 43,8 տոկոսին<sup>34</sup>, և, Կիլիկիոյն իրավամբ է Սրարիի սոցիալական զեմ-բը բնութագրել որպես «շահագործող տնտեսատեր գյուղացու՝ կալ-լակի, որ սգորել է աստիճանաբար դառնալ ու դարձել էլ է կալվածատեր»<sup>35</sup>։

Սրարիի տիպի Բիւլլահուսթիան էին նաև ընդհատակյա կազմակերպության անդամակցած ոչ եզիպտացի արար մյուս Եսոփահուրյալս սպաները, որոնք ըստ Վ. Չեանոփակայի, սիրենց նյութական դրու-թյամբ կարող էին լրիվ անելով ազգաբնակչության ապահոված խա-վին<sup>36</sup>, ըստ Գ. Ներսեսովի սոցիալական տեսակետից համարյա զըլ-խովին սկսւած էին գյուղական մանր-կալվածատիրական վերնախա-վի հեռա<sup>37</sup> և որոնց մասին Ա. Գուլոբիին իրավամբ գրել է։ «Նրանք զուրս էին եկել նոր կալվածատերերի, հարուստ գյուղացիների շարքե-րից»<sup>38</sup>։

Այստեղ մատնանշենք ուշադրութիան արժանի մի պարագա. XIX դարի վերջին քառորդի սկզբներին նդիպատում նորանձնող բուրժուա-զիտան սոսկ պայմանականորեն կարող է բեզիպտականա համարվելու Ալլանգակ իրողութիւն էր այն, որ երկրի քաղաքաբնակ ազգաբնակ-չութիան կազմում կապիտալիստական հարաբերութիւններ կրողները համարյա զլիտովին օտարերկրացիներ էին, իսկ նրանց միախառնված եզիպտացի, արար կամ եզիպտականացած եկվոր-մահմեդական տար-րերը մասների վրա էին հաշվվում։ Իրոք էլ այսպես ասած եզիպտա-կան բուրժուազիտանա ներմուծումն ու արտածումը, բանկային գործը, շինարարութիւնը, առևտուրն ու Տղճիմ արդյունաբերութիւնն իրենց ձևաբերում ամփոփած արևմտանկյուղացիներն ու ոչ-եզիպտական (հա-



բազմալին և արևելյան միջերկրականյան) ծագամբ բեզիպտականացած Կոմպրոգորներն էին կազմում:

Մշակութային նամակները, որոնք նախատեսված լին հրատարակման համար, արժեքավոր են նրանով, որ թույլ են տալիս փաստելու երիտթուրքերի քաղաքական գաղափարախոսության խորքերը: Օսմանիզմը երիտթուրքերի գաղափարախոսության մեջ կարևոր տեղ էր զբաղում զեռուս XIX դ. վերջերից: 1908—1909 թթ. հեղափոխությանը նախորդող տարիներին երիտթուրքական շարժման առաջնորդները ձգտում էին այն օգտագործել զլիսավորապես սրպես հոգատակ ժողովուրդների բուրժուական հուսակցությունների և կազմակերպությունների հետ գաղչների գաղափարական հիմք: Այդ նպատակով երիտթուրքական մամուլի էջերից լաշխրեն պրոպագանդվում էին քրոյոր օսմանցիների կարայություն և հավատարմության և բնամասմանյան հայրենասիրության գաղափարները, փորձեր էր արվում հավատացնել, որ սահմանադրության հռչակումը կլուծի երկրի բոլոր պրոբլեմները, այդ թվում ազգայինը:

1908 թ. հուլիսին իշխանության գլուխ անցնելուց հետո երիտթուրքերի առջև ծառայած հետևյալ կարևոր խնդիրը, մշակել ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ իրենց քաղաքականության հիմքերը՝ ելնելով օսմանիզմի ընդհանուր դրույթներից: Այդ խնդրի լուծման առաջին փորձը կուսակցության ծրագրի օգոստոսյան (1908 թ.) նախագիծն էր, որը և դարձավ նույն թվականի հոկտեմբերին, իթթիհազ վե քերարի համագումարի կողմից ընդունված ծրագրի տեքստի հիմքը: Երկու տեքստերի միջև որոշ տարբերություններ կային. օգոստոսյան նախագիծը կազմվել էր մի այնպիսի ժամանակ, երբ երիտթուրքերը ուր կերպով զգում էին Մակեդոնիայում լայն հեղինակություն վայելող սենթրին Մակեդոնա-Օդրիայան հեղափոխական կազմակերպության (էլեվիցա) աշակցության կարիքը: Այդ պատճառով նրանք որոշ զիշումների զնացին, որն իր արտացոլումը գտավ օգոստոսյան նախագիծում: Հետագայում ծրագրի վերջնական տեքստում նրանք այդ զիշումներից հրամարվեցին:

Մրազրում իրենց արտացոլումը գտան օսմանիզմի գովաբանյի համարյա բոլոր հիմնական դրույթները:

Հեռանելով զեռուս XIX դ. 60—70-ական թթ. շնոր օսմանները սահմանադրական շարժման զեկավարների կողմից ձևակերպված բոսմանյան ազգի կոնցեպցիային, երիտթուրքերը կայսրության բոլոր

Հայտաակններին, անկախ նրանց ազգութիւնից և գաղանակներից հռչակեցին օսմանցիներ (osmanliar) (կետ. 9 և 20): Որպես հոմանիշ ծրագրում օգտագործվում էր նաև բօսմանյան հայտաակներն արտահայտութիւնը (կետ 17): Օսմանյան կայսրութեան ոչ թուրք ժողովուրդները ստանում էին ստարբերս (unsurlar), այսինքն՝ օսմանյան ազգի տարբերս անվանումը: Այսպիսով, ենթակա ժողովուրդները, որոնք գրկված էին հույնիսկ առանձին էթնոսիմով նշվելու իրավունքից, ծրագրի հեղինակների կամքով մտցվում էին այսպես կոչված օսմանյան ազգին մեջ որպես նրա բաղկացուցիչ մասեր:

Րուսը ոսմանցիները, այդ թվում նաև ոչ մահմեդականները հռչակվում էին ազատ և հավասար օրենքի առջև, և առանց որևէ խտրականութեան կարող էին ընդունվել պետական ծառայութեան (կետ 9): Մրացրում մտցվել էր նաև կետ ոչ մահմեդականներին բանակ ընդգրկելու մասին (կետ 9): Այդ գրույթներով ծրագրի հեղինակները ձգտում էին ոչ թուրք ժողովուրդների մտա ստեղծել այսպես կոչված օսմանյան ազգին շրջանակներում հավասարութեան և ազատութեան հասնելու հնարավորութեան պատրանք, գրանով իսկ սժտեղակելով ազատագրական գաղափարախոսութեանից նրանց հեռացմանը ու օսմանյան տիրապետութեան դեմ պայքարի դադարեցմանը:

Օսմանիզմի կարևոր մասն էին կազմում ոչ թուրք ժողովուրդների երեխաներին օսմանյան հայրենիքին՝ հավատարմութեան ուղով դաստիարակելու մասին գրույթները: Մեր կարծիքով զա այն պատճառներից էր, որ ստիպեց կոնգրեսին մեծ ուշադրութեամբ դարձնել կրթութեան հարցերին, որոնք արտացոլվեցին նաև համազումարի կողմից ընդունված որոշումներում: Այսպես, «Շուրա-ի ումմեթ» թերթում հրատարակված որոշումների 13-րդ կետում հաստատվում էր, որ «հասարակական նախաձեռնութեաններից բանակարևորը լուսավորութեան տարածումն ու զարգացումն է»:

Լուսավորութեան քննադատում քաղաքականութեան գլխավոր նպատակ էր հռչակվում օսմանյան հպատակների դաստիարակումը միասնութեան և կարգի (intizam) ուղով (կետ 17)<sup>10</sup>: Այդ նպատակին հասնելու միջոցներ են՝ պետական վերահսկողութեան սահմանում կայսրութեան բոլոր գաղտնիների, այդ թվում նաև ոչ թուրք ժողովուրդների գաղտնիների նկատմամբ, պետական, այսպես կոչված «խառը» գաղտնիների ստեղծում՝ այսինքն գաղտնիներ, որոնցում մահմեդականների և ոչ մահմեդականների երեխաները կսովորեին համատեղ, պետական գաղտնիներում թուրքական լեզվով պարտադիր ուսուցում (կետ 17):

Բուրբ այս գրույթները փոխառված են ժողովրդական կրթության մասին օրենքից, որն ընդունվել էր 1869 թ. կայսրության մի խումբ աստիճանավորների՝ տնօրեն Կոնցեպցիայի կողմնակիցների շանքերով<sup>11</sup>: Մակայն երիտթուրքերը մտցրին հետևյալ փոփոխությունը. 1869 թ. օրենքով նախատեսվում էր այն բնակավայրերում, որտեղ ոչ մահմեդականները մեծամասնություն էին կազմում, նրանց երեխաների համար ստեղծել պետական տարրական դպրոցներ<sup>12</sup>: Երիտթուրքերի ծրագրում այդ մասին ոչինչ չի ասվում, միայն ընդգծվում է, որ տարրական դպրոցներում թուրքերեն լեզուն հանդիսանում է պարտադիր առարկա (կետ 17): Դրանով իսկ, երիտթուրքերի, որպես կառավարող կուսակցության գործունեության արդեն սկզբնական շրջանում պարզ դարձավ, որ օսմանիզմի նրանց մեկնաբանումն ավելի հետադիմական է, քան Քանդիմաթի ժամանակաշրջանի գործիչներինը:

Օսմանիզմի կարևոր գրույթներից էր կայսրության ժողովուրդների շրջանում թուրքերենի՝ որպես բոլորապես ազգիչ միասնական լեզվի տարածման զազափարը: Այդ նպատակին հասնելուն պետք է ծառայեին թուրքերենը որպես պետական լեզու պահպանելու, ինչպես նաև ողջ պաշտոնական գրագրությունը, հետևաբար նաև գաղտնագրությունը թուրքերենով վարելու, դպրոցներում ուսուցումը թուրքերենով տանելու մասին ծրագրի կետերը:

Երազրի մեջ կետ էր մտցվել 1876 թ. սահմանադրության 108-րդ հոդվածի նշքրիտ պահպանման հիման վրա գաղտնալին իշխանությունների իրավասությունների ընդլայնման մասին (կետ 5): Հայտնի է, որ երիտթուրքերը այսպես կոչված օսմանիզմի կողմնակիցներն էին: Սակայն տակտիկական նկատառումներից ելնելով նրանք կոմպրոմիսի գնացին ոչ թուրք ժողովուրդների կուսակցությունների ու կազմակերպությունների և արքայազն Մարահեզդինի խմբավորման հետ, որոնք պահանջում էին վարչական իշխանության ապակենտրոնացում: Այդ փոխզիջման արդյունքը եղավ ծրագրի 5-րդ կետը<sup>13</sup>:

Իթթիհազականների 2-րդ կենդրեսում (1909 թ.) կուսակցական ծրագիրը որոշ փոփոխությունների ենթարկվեց, ընայած և որոշվեց ընդհանուր առմամբ այն թողնել նույնը<sup>14</sup>: Մասնավորապես, ոչ թուրք ժողովուրդների ներկայացուցիչների քննադատության ազդեցության տակ ծրագրում կետ մտցվեց այն մասին, որ առաջին աստիճանի տարրական դպրոցներում բուսուցման լեզու պետք է լինի այս կամ այն ժողովրդի լեզուն (կետ 10): Այդ զիջումը բացատրվում է նրանով, որ 1909 թ. ապրիլի 13-ի (մարտի 31-ի) հետադիմական խռովության

ճշումից հետո բերիտթուրքերը ազգային փոքրամասնութիւնների շրջանում իրենց հեղինակութիւնն ամրապնդելու նպատակով որոշ փոխդիման զնացին նրանց հետ»<sup>15</sup> :

Նույն կոնգրեսում հաստատվեց «Երիտթիւրքի և առաջադիմութիւն» կոմիտէի ներքին կանոնադրութիւնը: Օսմանիզմի հետ կապված հարցերը նրանում լին շոշափում»<sup>16</sup> :

1908—1909 թթ. երիտթուրքերի ծրագրի ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ իշխանութիւնն զուէն անցնելուց հետո նրանք, հենվելով Քանզիմաթի գործիչների և XIX դ. 60—70-ական թթ. սահմանադրական շարժման առաջնորդների կոնցեպցիաների վրա, մշակեցին Օսմանյան կայսրութիւնն ամրապնդելու քաղաքական օսմանացման ծրագիրը :

Այդ նպատակին հասնելու միջոցներն էին.

1. «Երիտթուրք օսմանցիների հովասարութիւն և եզրայրութիւն, բուսմանյան ազգի» (որի մեջ բարբերիս իրավունքով մտնում էին ոչ թուրք ժողովուրդները) բուսմանյան հայրենիքին հովասարմութիւն և այլ զաղափարների լայն պրոպագանդան:

2. Բուսմանյան հայրենիքին հովասարմութիւն ուղղով ոչ թուրք ժողովուրդների նպատակաւ ուղղված եղաստիարակութիւնը և կառավարութիւնն հակոթութիւն տակ գանվող ժողովրդական կրթութիւնն հաստատութիւնների համակարգի միջոցով:

3. Թուրքերենի բռնի տարածումը սրպես բուսմանյան ազգի միասնական լեզու:

Դա փաստորեն երկրի ոչ թուրք ժողովուրդների թուրքացման ծրագիրն էր:

Զարմանալի չէ, որ այդ ծրագրի իրականացումը զգալի զգալարութիւնների հանդիպեց, որոնք պայմանավորված էին այդ պլաններին արաբների, հույների, հայերի և այլ քնշված ժողովուրդների դիմադրութիւնը: Երիտթուրքերի առաջնորդները, հովանարար, իրենց հաշիվ էին տալիս, որ բուսմանացման քաղաքականութիւնը ձախողվում է: Հուլիսյան հեղափոխութիւնն 2-րդ տարեդարձի կապակցութիւնը երիտթուրքերի խոսափող «Քանիս» թերթը հրապարակեց «Երիտթիւրքի և առաջադիմութիւն օսմանյան ընկերութիւն» կողմ ազգին, որտեղ փաստորեն ընդունվում էր, որ տարրեր համայնքների միջև միասնութիւնն ստեղծման ջանքերը անհաշուութիւնն մատնվեցին<sup>17</sup> : Այդ ստիպված էր խոստովանել նաև Քալէմթ-փաշան 1910 թ. օգոստոսին

Երիտթուրքերի փակ խորհրդակցութեան մասնակիցների առջև իր արտասանած էառումը<sup>28</sup>։

Գրա հետ մեկտեղ երիտթուրքերը զենեւ չէին հրաժարվում 1908 թ. մշակված օսմանացման քաղաքականութիւնից։ Վերը հիշատակված կուլում հայտարարվում էր, որ միասնութեան ստեղծման ուղղութեամբ շանքերը կշարունակվեն<sup>29</sup>։

Օսմանացման քաղաքականութեան հետ կապված հարցերը հիմնականներին մեկն էին 1910 թ. կայացած կուսակցութեան հերթական կոնգրեսում։ Կոնգրեսը հաստատեց «Իթթիհադի» նվիրվածութիւնը օսմանի դմինը նշվեց, որ երիտթուրքերը ձգտում են կայսրութեան ժողովուրդների ոչ թե միանումանը, այլ միավորմանը<sup>30</sup>։ Հավանաբար այդ հշտումն արվել էր Ջիա Գյոքալփի հայուցների ազդեցութեան ներքո։ Բոլոր դեպքերում, ինչպես ցույց կարվի ներքևում, այդ դրույթը հիմնականներից մեկն էր օսմանի դմի կոնցեպցիայում, որը ձևակերպվել էր 1911 թ. նոյեմբերի 14—15-ի վիլայեթական կազմակերպութիւններին ուղղված իթթիհադականների Կենտկոմի շրջաբերական նամակում։ Այդ փաստաթղթի հեղինակ է համարվում Ջիա Գյոքալփը։

Շարունակելով տակախական զիշումների քաղաքականութիւնը, համազումարը հայտարարեց, որ յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի օգտվելու իր ազգային լեզվից<sup>31</sup>։ Այդ հայտարարութիւնը հակասում էր օսմանի դմի վերևում հիշատակված ասիմիլյատորական միտումներին և նպատակ ունեւ քողարկելու երիտթուրքերի ազգային քաղաքականութեան իրական նպատակաուղղվածութիւնը։

Կոնգրեսի աշխատանքների ավարտից հետո ընկած ժամանակաշրջանը նշանավորվեց իթթիհադականների շարքերում անընդհատ աճող էգնածամով։ Որկրում երիտթուրքերի ուժի մից դժգոհութեան ուժեղացման, ազգային հարցի սրման պայմաններում երիտթուրքական վերնախավի շրջանում սկսեցին ձևավորվել տարրեր խմբավորումներ, որոնք տարածաշրջաններ ունեին, մասնավորապես, ենթակա ժողովուրդներին կայսրութեան կազմում պահելու առավել օպտիմալ միջոցների հարցում<sup>32</sup>։ Այսպես, 1911 թ. գարնանը Եթիոպիան և առաջադիմութիւն կուսակցութեան պառլամենտական ֆրակցիայի անդամները կազմակերպեցին այլախոհների խմբավորումը, որն սկսեց կուլվել ԷՀիզր-ի Ջեդիզ (նոր կուսակցութիւն)։ Այս խմբավորման կողմից առաջ քաշված ծրագրում, որը բաղկացած էր 10 կետերից, ընդգծվում էր, որ անհրաժեշտ է այսուհետև ևս վարել միավորման քաղաքական-

նության, սակայն «էլիմենտների» միավորման կոնկրետ միջոցները չէին նշվում<sup>22</sup>։

Օսմանացման նոր ուղիներ առավել ինտենսիվ փնտրում էր կուսակցության մեջ ղեկավար դիրքեր զավթած Քալանթի խմբավորումը, որի գաղափարախոսը նրա լիակատար վստահությունը վայելող Ջիաբին էր (Գյոքալփ)։ Օսմանիզմի ուսմունքի նոր մեկնարանման ուղիագծերը սկսեցին ավելի պարզորոշ նշմարվել արգեն նույն 1911 թ.։

Այս առումով հետաքրքիր փաստաթուղթ է երիթուրքերի Կենտկոմի 1911 թ. նոյեմբերի 14—15-ի շրջաբերական նամակը<sup>24</sup>։ Նրանում քննադատության են ենթարկվում «Ընդատություն և համաձայնություն» (Հյուրինթ վե Իթրյաֆ) կուսակցության անվանման հիմքում զբաղած գաղափարները, որի կուսակցությամբ տրվում է օսմանիզմի նոր բնութագրումը և հիմնավորում է նրա նոր՝ «Իթթիհադական» մեկնարանումը։ Հեղինակը (հավանաբար, գա Ջիա Գյոքալփն է) գրում է, որ սահմանադրության վերականգնումից հետո աստիճանաբար բացահայտվեցին օսմանիզմի տարրեր մեկնարանություններ։ Այդ հարցում խառնաշփոթությունից խուսափելու համար նա առաջարկում է տարրերն օսմանիզմի երկու մակարդակ. սոցիալական և քաղաքական։ Սոցիալական օսմանիզմը միավորում է հասարակության առանձին անդամներին, իսկ քաղաքականը՝ առանձին տարրերին, այսինքն ժողովուրդներին։ «Միաձուլման»<sup>25</sup> և «համաձայնություն»<sup>26</sup> կոնցեպցիաների կողմնակիցները խառնում էին այդ մակարդակները։ Միաձուլման կողմնակիցները պնդում էին, որ օսմանիզմը միավորում է առանձին անհատներին, իսկ «համաձայնություն» կողմնակիցները գրտնում էին, որ այն միավորում է միայն առանձին ժողովուրդների։ Այս երկու տեսակետներն էլ սխալ են, քանի որ հաշվի չեն առնում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են «էլիտն», պատմությունը, գրականությունը, զավանակները։ Սոցիալական տեսանկյունից այդ երևույթները արժանի են հարգանքի։ Սակայն քաղաքական տեսանկյունից բոսմանյան ազգի տարրերը, ոչ մի առանձին իրավունքներ չունեն։ Ընդունել այդպիսի իրավունքներ՝ նշանակում է ծառայել բոսմանյան միասնության ոչնչացմանը։

Միակ նշմարիտը՝ «Իթթիհադի» (միություն) տեսակետն է, համաձայն որի բոսմանյան ազգի տարրերը և սոցիալական օսմանիզմի տեսանկյունից չեզոք, գրականության և այլ բնագավառներում տարրերության իրավունք ունեն, սակայն, քաղաքական օսմանիզմի տեսանկյունից նրանք ոչ մի առանձին իրավունքով օժտված չեն։



Առաջինը, որ այդի է զարևում վերևում շարագրված կոնցեպցիայի վերլուծության ժամանակ, կայսրության ժողովուրդների լրիվ օսմանացման զազափարից հրատարումն է, զազափար, որի կենսագործման համար երիտթուրքերն այդքան շանքեր թափեցին և, որը նրանց առաջին ծրագրում արձանագրվել էր որպես գլխավոր նպատակ:

Օսմանիզմի այդ նոր մեկնարանման մշակման վրա ամենայն հավանականությամբ վճռական ազդեցություն թողեց օսմանացման քաղաքականության անհաշուղությունը, որը վճռական դիմադրության հանդիպեց ոչ թուրք ժողովուրդների կողմից: Ոչ թուրք ժողովուրդների լրակատար օսմանացման անհնարինության ընդունումը շրջադարձային կետ էր ազգային հարցում երիտթուրքերի քաղաքականության մեջ: Մի կողմից նրանք շարունակում էին քարոզել բոլոր օսմանցիների եղբայրության և միասնության զազափարը և ինքրցիայով շարունակում էին օսմանացման քաղաքականությունը, մյուս կողմից գիմում զազափարաքաղաքական ուրիշ ուսմունքների՝ պանիսլամիզմին և պանթուրքիզմին<sup>27</sup>:

Նոր քաղաքականության մշակման հարցերը քննարկվեցին երիտթուրքերի 4-րդ համագումարում (1911 թ.): Յուզոք, այդ համագումարի որոշումները զենևս լրովին հրատարակված լինելու Կրականություն մեջ բավական տարածված տեսակետի համաձայն, համագումարի զազափար որոշումներով նախատեսվում էր սկսել շրջադարձը օսմանիզմից դեպի պանիսլամիզմի և պանթուրքիզմի զոկտրինաները<sup>28</sup>:

Կոնգրեսում վերանայվեց և զգալիորեն լրացվեց երիտթուրքերի կուսակցության կանոնադրությունը<sup>29</sup>: Նրա մեջ մտցվեցին մի շարք զրույթներ օսմանիզմի ոգով, որոնք սակայն խիստ կերպով տարբերվում էին 1908 թ. ընդունված կուսակցական ծրագրի համապատասխան կետերից:

Այսպես, երիտթուրքերը պարտավորվեցին լսելու ընդոտեի... Նրանց նպատակների իրականացմանը, ովքեր ձգտում են ազգային և կրոնական տարբերություններն օգտագործելով, ինչպես նաև ալլ միջոցներով երկպառակություն և խռովություն սերմանել բոլոր օսմանցիների շրջանում<sup>30</sup>: Այսպիսով, օսմանցիների միասնության մասին կոչերը, հավասարության վերաբերյալ զրույթները 1911 թ. կանոնադրության մեջ փոխարինվեցին շանշատողականների հասցնին սպանալիքներով: Անհրատեղա է նկատի ունենալ, որ կանոնադրությունը նախատեսված չէր հրապարակման համար: Մինևույն ժամանակ



տարրեր տեսակի «կուրում», «ժողովրդին ուղղված դիմումներում», որոնց հաճախ դիմում էին երիտասրդները, հատկապես արիպուրիտանական 1911—1912 թթ. և բալկանյան 1912—1913 թթ. պատերազմների կապակցությամբ, շարունակվում էին պրոպագանդայի սովորական հայրենասիրության գաղափարները<sup>31</sup>։

Այդ առումով բնորոշ են արիպուրիտանական պատերազմի կապակցությամբ «Եթե՛րհազի» կոչերը<sup>32</sup>։

1911—1913 թթ. շարունակում էին ուժեղանալ վերահիշյալ միտումները։ 1913 թ. կեսին «Եթե՛րհազի» ղեկավարությունը ազգային հարցում ձևակերպեց նոր քաղաքականության հիմքերը<sup>33</sup>։ Գրանք սկսեցին աստիճանաբար դրսևորվել կուսակցական փաստաթղթերում։

1913 թ. համաժողովում ընդունված երիտասրդների ժրագրի և կանոնադրության տեքստերի վերլուծությունը վկայում է օսմանիդից նրանց աստիճանական հրաժարման մասին<sup>34</sup>։ Կուսակցության ժրագրի 42-րդ պարագրաֆում, որը նվիրված էր լուսավորության հարցերին, կարելի է գտնել օսմանիստական գրույթ այն մասին, որ երկրում լուսավորության տարածման նպատակն է օսմանյան ազգի միասնության ձևաքերտումը։

Նույն եզրակացությունը կարելի է հանգել նաև «Միություն և առաջդիմություն» կուսակցության շրջաբերական նամակի ուսումնասիրություն հիման վրա, որը վերնագրված է այսպես. «Ընկերություն (Միություն և առաջդիմություն) — Ռ. Ա.» կոզմից պաշտոնական նախաձեռնությունների ղեկավարման ուղիների մասին<sup>35</sup> և թվագրվում է մոտավորապես 1913—14 թթ.։ Այդ փաստաթղթում տալանալ է արտահայտվում այն մասին, որ սահմանադրական իրավունքներ և ազատություններ տրամադրելուց ավելի լավ կարողացան օգտվել ոչ մահմեդական ժողովուրդները, իրենց բավազակալին բանդաները վերածելով քաղաքական կուսակցությունների «Պետության մեջ, որտեղ պետական կրոնը իսլամն է, վրանդ առաջացավ, որ կառավարման մեքենայի ղեկի մոտ կգան ոչ մահմեդական ժողովուրդները»<sup>36</sup>։ Այդ պատճառով, «Եթե՛րհազի» առջև կանգնած են հետևյալ խնդիրները՝ պառլամենտի ընտրություններն անցկացնել այնպես, որ նրանք պետության շահերին վնաս չհասցնեն, այսինքն ոչ մահմեդական կուսակցություններին թույլ չտալ մեծամասնության հատել պառլամենտում և հետո ընտրված գեպուստաների մեծամասնությանը համախմբել իրենց ժրագրի շուրջը։

Այսպիսով, այս փաստաթղթում փաստորեն հռչակվում է, որ ոչ ոք  
օսմանցիների միասնությունը հասնելու ինդրից հրաժարումը կու-  
սակցության անդն կապտակ էր դրվում պաշտպանել կայսրության  
մահմեդականների շահերը: Օսմանիզմի այսպիսի ըմբռնումը կա-  
րելի է անվանել «Մահմեդական օսմանիզմ»:

Մյուս երկու շրջաբերական նամակներում, որոնք թվագրվում են  
մոտավորապես 1914—1915 թթ., արդեն բռնականորեն հիմնադո-  
րում է այնպիսի քաղաքականության իրականացման անհրաժեշտու-  
թյունը, որն ուղղված էր բնականականների և թուրքերի շահերի  
պաշտպանությանը՝ ի վնաս ոչ մահմեդական ժողովուրդների շահե-  
րի<sup>33</sup>: Իրանցից մեկում քննադատվում էր բնականական քաղաքակա-  
նությունը, որի անց էր կացվում ոչ մահմեդականների նկատմամբ  
Քանդիմաթի ժամանակաշրջանում: Հեղինակի կարծիքով, այն հանգս-  
րեց հրկրում իսլամի ազդեցության ուրախ նեղացմանը: Իսլա-  
մի դերի վերականգնումը հնարավոր է բնականական օսմանիզմի  
քաղաքականության իրականացմամբ, ըստ որի մահմեդականները  
պետք է մնային տիրապետող տարր: Միաժամանակ անհրաժեշտ է հաս-  
նել բոլոր մահմեդականների միավորմանը:

Այդ դրույթներն իրենց արտացոլումն գտան համազումարի կողմից  
կուսակցության ծրագրում կատարված փոփոխություններում<sup>34</sup>: Այս-  
պես, 1-ին պարագրաֆում նշվում էր այն դերը, որ պետք է խաղար  
չեյխ-ուլ իսլամը ռեֆորմների իրականացման գործում: Ենթադրության  
ոգով դրույթներ մտցվեցին նաև կուսակցության ծրագրի մյուս պա-  
րագրաֆներում: Պատահական չէ, որ Ջիա Գյոքալփը բնականական  
էր և, զնահատելով կոնգրեսի արդյունքները, գոհունակությամբ նշում  
էր իսլամի ազդեցության ուժեղացումը երիտթուրքական կուսակցու-  
թյան քաղաքականության վրա<sup>40</sup>:

Այսպիսով, երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերի ուսում-  
նասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու օսմանիզմի էվոլյուցիա-  
լի մասնակաշրջանները երիտթուրքերի իշխանության տարիներին 1908  
—1909 թթ. օսմանիզմը դիտվում էր որպես գաղափարա-քաղաքական  
ուսմունք, որի կենսագործումը հնարավորություն կտար մի կողմից  
հասնել ազգային-ազատագրական պայքարի ոչ մահմեդական ժողո-  
վուրդների հրաժարմանը, մյուս կողմից պայմաններ կստեղծեր նրանց  
աստիճանական թուրքացման համար: Սակայն, արդեն 1910 թ. նշմար-  
վեց օսմանիզմի, Քանդիմաթի գործիչներից և շատ օսմաններին սահմա-

ևազրական շարժումից ժառանգված, այդպիսի, կարելի է ասել, բազմա-  
զական բնրանման եզրածամբ: Մկասձ 1911 թ. երանում սսծեղանում է  
զուտ սեպրեսիվ կողմը:

1912 թ. երթաթուրքերի կուսակցական փաստաթղթերում հանգեւ է  
զալիս սսմանիզմի նոր տարրերակ, որը կարելի է անվանել սմանի-  
զական սսմանիզմ:

P. A. САФРАСТЯН

## ДОКТРИНА ОСМАНИЗМА В ПАРТИЙНЫХ ДОКУМЕНТАХ МЛАДОТУРОК (1908—1916)

### Резюме

В статье в качестве источников по истории османизма—основной идейно-политической доктрины младотурок в национальном вопросе—использованы программы, уставы, а также циркулярные письма ЦК партии «Единение и прогресс» владетским отделениям, опубликованные турецкими историками Т. З. Тунайи и К. Н. Дуру. На основе изучения этих документов выделяются основные этапы в истории эволюции османизма в период правления младотурок. В 1908—1909 гг. османизм рассматривался лидерами иттихадистов в качестве доктрины, проведение в жизнь которой дало бы возможность с одной стороны добиться отказа угнетенных народов Османской империи от национально-освободительной борьбы, а с другой—создало бы условия для их постепенной туркизации. В 1910 г. обозначился кризис такого «традиционного», унаследованного от «новых османов», понимания османизма, обусловленный все более усиливающимся сопротивлением нетурецких народов политике османизации. Начиная с 1911 г. в османизме нарастает чисто репрессивная сторона. Примерно к середине 1913 г. руководство партии сформулировало основы новой трактовки доктрины османизма. Анализ партийных документов выявляет новое понимание идеи османизации. Отныне во главу угла ставится достижение «единства» между «мусульманскими элементами османской нации».

1 Т. З. Tunaya, Türkiye'de siyasi partiler, 1859—1952. İstanbul, 1952.

2 К. Н. Duru, Ziya Gökalp. 2. b., İstanbul, 1965.

Երբարեւակն նսմանիզմի՝ սոցիոլոգ և բսմաստեղծ Ջիսս Գյոզսուլսթնն Եվրոսկսծ

- զբառը հասարակվելու պատճառն այն է, որ Ք. Ն. Գարսի կրակ է ամբարձր այդ փաստաթղթերի հեղինակը ՄԱԿ հիմք չունեց ընտանացվելու պատճառների այս պնդման հետ: Քննչու հայտնի է, Ջիյա Գյոթալիք սկսած 1869 թ. ընթացիկ է երիտթուրքերի կենտրոնի սեպու՝ լինելով ըստ կուլթյան կուսակցության ազգագրաբանության է թիվս ժյու հարցերի կենտրոնում եւս զբաղվում էր նաև սրբանի կազմակերպություններին և սազարյի փոքրամասնություններին հարցերով (տե՛ս E. B. Şapolyo, Ziya Gökalp, „İttihat ve Terakki“ ve Mesrutiyet tarihi. İst., 1943, էջ 108):
- 2 Զյուս պատճառակետության է, որ Ք. Ն. Գարսի կողմից հրատարակված փաստաթղթերը պատկանելի են Գրանկից արվարք պատկան են երս անձնական արժեքով (տե՛ս այդ մասին K. N. Durgu, İttihat ve Terakki hareketinin İst., 1957, s. 49; K. N. Durgu, Ziya Gökalp..., s. 42): Իսկ ժյուս երկուսը հանձնել է Երան Միջնաւու Եյուզըրյան (տե՛ս K. N. Durgu, Ziya Gökalp., s. 52): Միջնաւու Եյուզըրյան Բիզան 1912, 1916 և 1917 թթ. կոնգրեսներում ընտրվել է երիտթուրքական կուսակցության զիտալիք ջարտազար (տե՛ս T. Z. Tunaya, Türkiye'de..., s. 199):
- 4 Մանրամասն տե՛ս Ю. А. Петросян, Младотурецкое движение. М., 1971: Его же, Турецкая публицистика эпохи реформы в Османской империи. М., 1985:
- 5 1907 թ. սեպտեմբերից, երբ ստեղծվեց սմիտյան և առաջադիմության անձնական ընկերությունը, երիտթուրք սկսեցին սեփական ժյուս այդ կազմակերպության սեփականներին: Լեռագալում այդ ընկերությունը զարմով թաղարանի կուսակցության և սեփականից սմիտյան և առաջադիմության կուսակցություն:
- 6 Տալիք, ՄԱԿ Լեռքի սով չունեց այդ փաստաթղթի սեպուր, զստ մանրամասն շարադրանք տե՛ս В. И. Шнильков, Младотурецкая революция 1908—1909 гг. М., 1977. с. 179—181.
- 7 Տե՛սուր տե՛ս T. Z. Tunaya, Türkiye'de..., s. 205—210.
- 8 Այդ մասին տե՛ս АВПР, Ф. Политархия, д. 1031, 1908 г., лл. 14—15 об. Վ. Բ. Նախիկովան կում է, որ այդ պնդումները վերաբերում էին անձնական և զյուզաջանական հարցերին: Տե՛ս В. И. Шнилькова, Первый проект политической программы младотурок.— Народы Азии и Африки, 1973, № 4, с. 61—68:
- 9 Տե՛ս արդյունքների տե՛սում: T. Z. Tunaya, Türkiye'de..., с. 208.
- 10 Ա. Սարրուսի իր սերիալաարք Թուրքիան և հեղափոխությունը զբառը հասարակվել է երիտթուրքերի 1908 թ. ծրագրի ֆրանսերեն թարգմանությունը, որը լայնորեն օգտագործվում է մասնագրամական գրականության մեջ: Մեր կողմից ընդհան արտահայտությունը եւս թարգմանել է հետևյալ կերպ՝ «մասնական թաղարանների միասարքության և միասնականության սրբ մասնաւուս (homogène et uniforme) տե՛ս. A. Sarrou, La Jeune-Turquie et la revolution. Paris-Nancy, 1912. s. 42. Բովում է, որ մեր կողմից առաջադիմող թարգմանությունն սզնի ժյուս էր թուրքերին ընկալին:
- 11 Այդ մասին տե՛ս Р. А. Сафрустян, Доктрина османства в политической жизни Османской империи (50—70 гг. XIX в.). Ереван, 1985.

- 22 Տե՛ս արևելքի տերաում Düstür, c. 2, 1289, s. 184.
- 23 Ինչպե՛ս գրում է Բ. Չ. Քանալան, *Եվնեթյանները (Միսլանյանի և առաջադեմության—Թ. Ս.)*, ու թի պայմանով չամանակից ազգակենսական շարժականության հետ (Տե՛ս T. Tunaya, *Türkiyede...*, s. 184).
- 24 Փափոխված ձևերի տեսքով տե՛ս նույն տեղում, էջ 211—212:
- 25 В. И. Шнякыца, Младотурецким революция..., с. 256—257.
- 26 Երիտթուրքերի առաջին կանադայության տեսքով տե՛ս T. Z. Tunaya, *Türkiyede...*, 210—211.
- 27 Ինչպե՛ս բաժանելություն շարժականը տե՛ս F. Ahmad, *The Young Turqs Oxford, 1959*, s. 84.
- 28 Քանալանի նախ առաջին տեղում հրատարակվել է *Ֆրանսերեն Քարգանդայում*՝ R. Pinon, *L'Europe et la Jeune Turquie. Paris, 1911*, 100—102.
- 29 F. Ahmad, *The Young Turks...*, p. 84.
- 30 Պիեռը, Շնչվիզ Փարիզում հրատարակվող տե՛ս Քյուրթի պարբերականի վրա, բերում է Համազումարում քննարկված հարցերի շուրջը (տե՛ս R. Pinon, *L'Europe...*, p. 90). Ծագող, Քանալանի կիսատեղում է միայն այն որոշումները, որոնք վերաբերում էին ներկայացրած կյանքին: Տե՛ս T. Z. Tunaya, *Türkiyede...*, s. 191.
- 31 R. Pinon, *L'Europe...* p. 99.
- 32 Г. З. Аванс, Турция в период правления младотурок (1908—1918), М., 1972, с. 207—209.
- 33 Այդ ձևերը հրատարակել է Մ. Սալահեդինը՝ M. Salaheddin, *Bildikleri El-Kahire, 1918*, s. 153.
- 34 Տեսքով տե՛ս K. N. Dura, *Ziya Gökalp...*, s. 48—52.
- 35 Զիյան նրանց շարքին է դասում Քանալանի գործընկերներին:
- 36 նրանց թվին էին պատկանում սկզբնական և Համանախությունից հասանելիության հղանակները:
- 37 Ե. Ն. Սարգսյան, Փանդուրիզմի և պոստուրքերի պատկանները երիտթուրքերի ներքին շարժականությունում.—*Արևելագիտության հարցեր*, Երևան, 1953, № 1—2, էջ 5—19:
- 38 Տե՛ս, արհեստի Չ. կրտսերյան, *Երիտթուրքերը պատմության զատասանի առաջ*, գիրք II, Երևան, 1962:
- 39 Կանադայության փափոխված կենտրոնի տեսքով տե՛ս T. Z. Tunaya, *Türkiyede...* s. 212—214.
- 40 նույն տեղում, էջ 212:
- 41 Համազումարից հետո Երիտթուրքերը Հանդես եկան Հայաստանի բնակչությանը, որտեղ շարունակում էին ստանդարտ պրոպագանդան, տե՛ս Ազատամարտ, 1971, № 759, 724.
- 42 T. Z. Tunaya, *Türkiyede...*, s. 191—192.
- 43 Y. H. Bayur, *Türk İnkılatı Tarihi. C. 2, k. IV, Ankara*, s. 314.
- 44 Տեսքով տե՛ս T. Z. Tunaya, *Türkiyede...*, s. 214—218, 218—225.
- 45 Տեսքով տե՛ս K. N. Dura, *Ziya Gökalp...*, s. 42—47.
- 46 նույն տեղում, էջ 45:

- 37 Այս ակնմանը առաջարկել է Տերզ Ահմադի իղմից ակ՝ F. Ahmad, The Young Turks..., p. 136.
- 38 Տեքստից ակ՝ K. N. Durs, Ziya Gökalp..., s. 53—62, 67—76.
- 39 Փոխաբերած (ակնարկ) ակ՝ T. Z. Tunaya, Türkiyede..., s. 225—226.
- 40 Ziya Gökalp, İttihad ve Terakki kongresi.—Ziya Gökalp. Makaleler, VIII, Ank., 1981, s. 60

## ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱՐՇԵՍՏՆԵՐԸ

Նոր Զուգայի քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքը բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա է դարձել: Այն քննարկվել է հայ-ուսական, ուսու-իրանական կամ հայ-իրանական հարաբերությունների, առևտրական առևտրությունների, մշակույթի զարգացման և այլ տեսանկյուններից: Տեղի արհեստներին այս աշխատություններում անդրադարձել են այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել հարցադրումների բացահայտմանը: Այնինչ, արհեստագործությունը Նոր Զուգայի կյանքի ամենակարևոր բնագավառներից էր, որը հետաքրքիր է ոչ միայն իր բազմազանությամբ և ինքնատիպությամբ, այլև՝ արտադրանքի որոշակի իրերի համաշխարհային շուկայում ունեցած դերով:

XVII դ. առաջին տարիներին Սպահանի արվարձան դարձած Նոր Զուգայի բնակչությունը արտակարգ կենսունակությամբ սկսեց վերականգնել հին Զուգայից ժառանգած իր կենցաղը, այն հարմարեցնելով հասարակական-քաղաքական կյանքի նոր պայմաններին: Մի քանի տարիների ընթացքում Նոր Զուգայում կառուցվեցին ապարանքներ, տներ, կենդեցիներ: Ըստ գաղթած վայրերի Նոր Զուգան բաժանվեց թաղամասերի. շուգայեցիների, թավրիզեցիների, երևանցիների և այլն: Ցուրաքանչյուր թաղամաս ուներ իր օտցիալական, ինչպես նաև կրոնական (լուսավորչական և կաթոլիկ) բաժանումները: Գինեվաճառներն ապրում էին Փոքր Մեյդան թաղում (կամ ռՂարագեալ), որի կենտրոնական փողոցն էլ կոչվում էր Երբախան: Թավրիզեցիների թաղամասում ապրում էին ցորենավաճառները, կաավագործները, ոստայնակներն ու հյուսները: Բրուտագործները կենտրոնացված էին Հակոբյանենց կամ Եպրտանենց թաղում: Փոլերն թաղում (սանգթրաշ—քարտաշ) ապրում էին քարհատները: Թավրիզեցիների և Զարուն թա-



զամասերում բազմիքներ կային: 1654—55 թթ. շահ Արքաս II-ը Սպահանից Նոր Զուլա արտաքսեց Երևանից զաղթած բնակչությանը, որն իր Բազամասը ստեղծեց: Այսանդ ութ բազմիք կար:

Նոր Զուլայի արհեստավորները խմբավորված չէին բնկերություններում կամ համաքարություններում, ինչպես դա ընդունված էր հայկական ալլ քաղաքներում կամ ավաններում: Նորջուլայեցիների համար օրինակ կարող էին ծառայել նաև վաղ ժազում ունեցող իրանական էսնաֆությունները, որոնց կանոնադրության մեջ կարևոր տեղ էր արբվում անգամազրվողների կրոնական պատկանելիությունը:

Ընտու հարազատ վայրերից, հոգևոր կենտրոնից, օտարության մեջ, մահմեդականությանը ենթարկվելու ամենօրյա վտանգը զգացող, սեֆյան տիրակալների քմահաճույքին ենթակա նորջուլայեցիներին իրենց քաչանթարներն ունեին, որոնք ղեկավարում էին կզզիացած համայնքը և միջնորդ հանդիսանում համայնքի և Իրանի արքունիքի միջև: Գաղթօջախի արհեստավորությունն ինքնին մի մեծ բնկերություն կամ նաֆություն էր: Ինքնապաշտպանությունը համախմբում էր նորջուլայեցիներին: Եթազումք՝ ի զաղթականաց անտի գալով արհեստատերք իւրանքանչիւրոք վաստակօք արհեստին իւրոյ գտանէր զապրուստս—գրում է Լ. Տեր-Նովհանյանցը:

Նոր Զուլայի արհեստների մասին ունեցած մեր տվյալները շատ սուղ են: Գաղթավայրի պատմության հեղինակ Լ. Տեր-Նովհանյանցն իր աշխատության երկրորդ հատորի վերջում հիշատակում է մի շարք արհեստների անուններ. հացթուխ, ներկարար, շարվազար (քտրավանակա), դերձակ, սեկերիչ, ոստայնակ, հյուսն, փերեղակ (մանրավաճառ), գարրին, որմնագիր, սփրիչ, կոշկակար, համեսակար, նպարավաճառ, մսավաճառ, ցորենավաճառ և գուլպայավաճառ: Նա հիշատակում է նաև 140 տուն տնայնագործ-գուլպայագործների մասին (հիմնականում կանայք), որոնք տարին 25.000—30.000 զույգ գուլպա էին գործում արտահանման համար: Նույն տեղում նա ելում է, որ նոր Զուլան տարին 130—140 հազար (երևի՛ արշին) կտավ էր արտահանում:

Նոր Զուլայի Ամենափրկիչ վանքի Մատենադարանում պահպանվել է հայերեն և անգլերեն շարագրված անավարտ մի ձեռագիր, որը պարունակում է ոմն Ֆրանչեսկոյի հարցազրույցը Մոզամամ (Ամստերդամ) վաճառական խոշո Սաֆարի հետ: Նույն այս երկխոսությունը, որոշ էջումներով տպագրվել է Երևանի լեզուին գանձ գրքույկում:

Այն հարցին, թե չէ՞նչ գլխավոր սանիաթ (արհեստ—Ա. Ս.) կա

Հայոց մէջ իմա՛ նոր Զուգայում, խոշա Սաֆարը պատասխանում է. «Ամենայն հասարակ սանխաթ մեր ազգին մէջ կալ. ինչպես ասենք գերմիք, գթակահար, բարուկար, դալլար, խոտատ, գուրգար, որմնադիր, սկներիչ, դարբին, շուհակ, գրագիր, կազմարար, ծաղկարար, ներկարար, մազադաթագործ, ապրշմագործ, զարաֆ (սկեկար անող), նազգարու (պատասխագործ), սահաթսազ, տպագիր, բասմալի (կազապարագործ), և այլ բազումս: Այստեղ թվարկված շատ արհեստներ ոչ միայն հնագույն ծագում ունեն, այլև մասնագիտականացման որոշակի ավանդներ, որոնք ձևավորվել և կազմավորվել են միջնադարում»:

Նոր Զուգան ուներ նաև իր մասագորականությունը. պատմիչ, աշուղ, ուսուցիչ, գրիչ, ծաղկող, նկարիչ, մանդանկարիչ, թարգմանիչ և այլն: Օրինակ. անգլերենի թարգմանիչ էր ազա Դավիթը, գաղթավայրում շատ հարգված մի անձնավորություն, որին հետագայում թաղեցին սր. Մինաս եկեղեցու խորանի մոտ: Նշանավոր էին տուժալները՝ թարգմանիչները, որոնք գիտեին նաև ռուսերեն ու աշխատանքի էին անցնում Մոսկովայի Կրեմլի Դիվանագիտական սայանում (Քավաքալով եղբայրները, Գ. Լուսիկովը, Ռոմազամսկին և այլք): Նոր Զուգայում՝ ձեռագրեր էին ծաղկում, որը բազմաբնույթ արհեստների գիտակ անձնավորությունների կարիք ուներ: Ժամանակի նշանավոր մանրանկարիչներից էին հաշատուր Զուգայեցին, Մետրուպ և հաշատուր Երզանցիները, Ստեփանոս Զուգայեցին, Հայրապետը և այլք<sup>2</sup>:

Մի քանի արհեստավորների անուններ են պահպանվել. Լուհանենս Քարաաշը, կոշիկագար Վարդանը, խոտատներ Մարգարև ու Սահակը, շուհակներ Ավետև ու Փանոսը, գինեալիներ Զարարիան ու Նիկողայոսը, դարազ Մարգարը, սկներիչներ Արգարը, Խաչիկը, Փանոսը, սազանգարներ Ավետև ու Խաչիկը:

Հայ ժողովրդի պատմության մէջ է մտել դերակ Թումիկի (Թումասի) անունը:

Խաշատուր Կեսարացու Նոր Զուգայի առաջնորդ զառնալուց (1620 թ.) մի գոթք անց, տեղի են ունենում մի խումբ արհեստավորների ազանդագորական ելույթները: Դա հիմնականում հակալուսավորչական երևույթ էր, բայց ուներ նաև որոշակի սոցիալական գիրքավորում: Ազանդագորականները ժխտում էին Քրիստոսի աստվածային ծագումը, նրա կյանքին անընդհատ երևույթները, Հարությունը, Ահեղ Դատաստանը: Չէին ընդունում նաև խաչը, պատարագը, հաղորդությունը, լուսավորչական եկեղեցու յոթ խորհուրդները և այլն: Լոզնոր առաջնորդներին, վարդապետներին, քահանաներին և եկեղեց-

ցական այլ պաշտոնյաների նրանք խաբիրա էին անվանում: Այնքան նշանակալից է դառնում այս ազանդի գերը հասարակական կյանքում, որ հալատուր Կեսարացիին ստիպված է լինում 1642 թ. հատուկ Սինոդ հրավիրել և ազանդի ղեկավար զերմակ Քուսիկին խիստ դատապարտել: Քուսիկի գաղափարակիցն էր նաև Սև Պետրոսը: Հավանաբար հենց այս ազանդի ուսմունքի դեմ էր ուղղված նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի Հովսեփ Հարկմաթացու կեկզեցու նկարագարգումներում Լուսավորչական կեկզեցու յոթ խորհուրդները պատկերող նկարների ընդգրկումը<sup>12</sup>:

Այս սուղ տեղեկություններին օգնության են գալիս նյութական մշակույթի բազմաթիվ սրինակներ, որոնք հնարավոր են դարձնում որոշակի պատկերացումներ ունենալ նոր Զուղայի արհեստների վերաբերյալ:

Նոր Զուղան ուներ վանք, 24 կեկզեցի, ասպրանքներ, արևելյան շինարարությանը բնորոշ աներ (գրսից հարթ ու սվաղված պատեր, ներսում բակ, դեպի որը դուրս էին գալիս պատշգամբները, սենյակների դռներն ու լուսամուտները): Բակը փողոցի հետ էր կապվում կամարածև միջանցքով և փայտյա դարպասով:

Նոր Զուղայում դարգացած էր քարգործությունը: Տեղում քարհանքեր չկային: Փարը բերվում էր քաղական հեռու գտնվող լեռներից: Փարը տաշվում էր հմուտ վարպետների կողմից: Փարից նորուղայացի վարպետները կամուրջներ են կառուցել Զայանգեռուղ գետի վրա՝ շահի հանգստյան փոքր սենյակներով (Ալավերդի խանի կամուրջը), կառուցել են կեկզեցիներ: Փաղաքը հատուկ նարտարապետ ուներ, որի օրավարձը 6 շահի էր<sup>13</sup>: Փարից պատրաստում էին կեկզեցիների պատերի մեջ ազուցվող խաչքարեր կամ նվիրատվական սալիկներ, որոնք պարզ ևս ունեին և կրում էին իրանական արվեստի որոշակի ազդեցությունը. սլաքածև վերին մաս, պարզ ծաղիկներ և այլն: Այդպիսիները պահպանվել են սբ. Հովհաննեսի կեկզեցում (1610—1648 թթ. պատրաստված), ավելի պարզ օրինակները սբ. Գևորգ կեկզեցու ավագ խորանի ճակատային մասում (1610 թ.): Միաժամանակ, շարունակելով հայկական միջնադարյան մշակույթում կարևորագույն բնագավառ կազմող խաչքարերի արվեստը, վարպետները ստեղծում են նոր կոմպոզիցիաներ, որոնք իրենց ղեկորով բուրբավիճ այլ ոճական խումբ են կազմում: Հին Զուղայի խաչքարերի օրինակներով ստեղծված փոքրաչափ նմուշները այդ արվեստի վերջին արձագանքներն են:

Նորոգուպանցիները քարից, բազալտից շիրմաքարեր էին պատ-  
 րաստում, որոնք պատմա-մշակութային ուսումնասիրութեան հարուստ  
 նյութ են ներկայացնում: Ի տարրերութեան հին Զուղայի, որտեղ ըն-  
 դունված էր խաչքարն ու խոյատիպ քանդակը, այստեղ պատրաստում  
 են ոչ այնքան քարեր, երկարուկ քառանկյունիներ, որոնց վրա ամ-  
 րացվում են առանձին մշակված նեղ սուլաքարեր: Սուլաքարերի հար-  
 գարանքի, նրա ձևավորման մեջ հատկապես հանդես է գալիս քարը  
 մշակող և ձևավորող վարպետների գեղարվեստական ճաշակը: Ծա-  
 պանաքարերի շրջերիդի մեջ հաճախ արձանագրութուններ են տեղա-  
 վորում, իսկ ողջ տարածքի վրա փոխադրում են հիմնական կոմպո-  
 ճիցիան: Այն մեծ մասամբ թելադրված էր հանդուցյալ մասնագիտու-  
 թյունից: Շիրմաքարի կենտրոնում նրա կանգնած կամ նստած ֆի-  
 գուրն է, որի հագուստն ու առանձին մանրամասները էպատմում են  
 նրա կյանքի մասին: Ընտիր փորագրութուններ սնեցող շիրմաք-  
 արից են սազանդար Մատուրը, սահաթազ Մահկը, Երուսա-  
 գործ Գալուստը, ասեղնագործուհին, Եզրզագործուհին, Ճղարքիներ,  
 Եակեց պատրաստողը և այլն<sup>12</sup>:

XVII դ: վերջում, երբ Նոր Զուղայում, ինչպես նաև Մպահանում,  
 որտեղ նույնպես հալ քարտաշներ ու որմնագիրներ էին աշխատում,  
 դադարեցրին քարե կառույցների շինարարութունը, հալ արհեստ-  
 վորները զաղթում կամ պանդխտութուն էին գնում: Եւ Արքայ II-ը  
 ցանկանում էր կանխել այդ արտահոսքը և որոշակի արտոնութուններ  
 էր տալիս նրանց, որը սակայն արդյունավետ հետևանք չունեցավ:

Նոր Զուղայի շենքերը հիմնականում աղյուսից էին պատրաստում,  
 որը աղյուս-թրծողներ էր պահանջում: Աղյուսը թրծում էին քաղաքի  
 շրջակայքում հսկայական պաշարներով կուտակված ընտիր կավից:  
 Աղյուս շարողները հմուտ վարպետներ էին (օրինակ, Բեթղեհեմի Ե-  
 կեղեցու գմբեթը): Նրանք աղյուսից երկհարկանի տներ էին շարում,  
 սենյակների ներսի պատերի մեջ սյաքաձև փորվածքներ էին անում,  
 որոնք տարրեր նշանակումներ ունեին. պահարան, նկարի հարթութուն  
 և այլն: Ընդունելիության սենյակների պատերի տարածքների որոշ  
 հատվածներ կտրտում էին երաժշտական զործիքների ուրվագծերով:  
 Գրանք խորութուն ունեին, որոնց միջով անցնում էին երաժշտական  
 հնչյունները և յուրօրինակ արձագանքով ետ վերադառնում: Միաժա-  
 մանակ, այդ փորվածքները խախտում էին պատերի միօրինակ հար-  
 թութունները: Այգպիսի փորվածքներով էին ձևավորված խոշա Մա-  
 ֆարի, Տեր-Գրիգորի ապարանքները, ինչպես նաև այլ մասնավոր տներ

ու Սպահանի նշանավոր Ալի Ղափու պալատի երաժշտական դահլիճը<sup>13</sup>, Յուրաքանչյուր տուն շրհոր ունենր, որը պատրաստում էին գործին հմուտ մարդիկ: Տներն ունեին նաև իրենց սեփական հեծանները, կարասներն ու գինեատները: Ընդհանրապես, ամենաանհրաժեշտ արհեստներից էր բրուսազործությունը: Բրուսազործական իրերի այնքան մեծ պահանջարկ կար, որ նոր Զուլայում այդ արհեստավորների հասույն քաղամաս գոյություն ուներ: Սվազուղները պատի սվազի վրա նկարչական ձևավորումներ էին տեսում:

Նոր Զուլայում զարգացած է եղել որմնանկարչությունը: Վանքն ու եկեղեցիները նկարազարդվել են Հին և Նոր կառնկարանի քեմաներով, որտեղ առաջնահերթ են եղել Փրիստոսի, Աստվածամոր, սրբերի, պատմական գործիչների կերպարները, տերունական սյուսնիները, լուսավորչական եկեղեցու խորհուրդները և այլն: Հրավիրվել են ինչպես եվրոպացի, նույնպես և տեղի նկարիչները: Ամենափրկիչ վանքի նկարազարդումները եալատուր՝ Զուլայեցին որակում է որպես յուսմ գեղեցիկ և Ամենաչքնաղ յորինուածովք, և ոսկնհամուկ և երփներանգ որակօք ի ներքուտ պճնազարդ տեսութեամբ գեղազարդեալ: Այլ և գեղեցիկանկար և փառազարդ խորհրդական պատկերօք (զհինն ի նորս ածանցարար բաղդատելով) ծագէ ի ծագ և համասփիւռ զարմազան և հրապանոյն գեղգեղեալ<sup>14</sup>:

Նոր Զուլայի տաղանդավոր նկարիչներից էր Մինասը: Նրա շնորհը փայլել է տարրեր բնագավառներում. հաստոցային նկարչություն, որմնանկարչություն, ձեռագրերի նկարազարդում: Նա նկարել է քեմատիկ պատկերներ, դիմանկարներ, բնանկարներ՝ առաջացնելով ժամանակակիցների հիացմունքը: Ապարանքների նկարազարդումներում նա ներմուծել է շրջապատող իրականությունից վերցված տեսարաններ<sup>15</sup>: Մինասը միաժամանակ սհմուտ էր բժշկական արուեստի, մարդկայնոց ներհակ կրից և հիւանդութեան և յորից տարբրաց խառնուածոց, և դեղօրէից բնութեան և կազմելոյն ևս առաւել սպեղանեաց կազմելոյ: և զվերս բժշկելոյ: Եւ այլ ևս բազում և զանազան արուեստից հմուտ գոլով սորա<sup>16</sup>:

Նույնպիսի բազմակողմանի ընդունակությունների տեր էր Հովհաննես Մրբուզը (1643—1715): Կինելով հմուտ գտվանաբան, փիլիսոփա և թարգմանիչ, Հովհաննես Մրբուզը ոչ միայն ղեկավարել է Ամենափրկիչ վանքի նկարազարդումները, այլև զբաղվել է կոշիկակարությամբ, շուշակությամբ, դերձակությամբ և ժամաոործությամբ: Բազ-

մակողմանի և անշահախնդիր գործունեության համար նա արժանացել է ստիկզերալույա կոչմանը<sup>17</sup>։

Նոր Զուլայի եկեղեցիները մեազորվում էին հարձակակե զեկորատիվ սալիկներով, որոնցից շքեզ օրինակներ են պահպանվել զեռես 1619 թվից։ Ավետարանական սյունիները, կապույտ, կանաչ և զեղին շնարկով ուսացված բուսական հարուստ զարդանախշերը, նվիրատվական արձանագրությունները հայ վարպետների՝ բարձր կարողությունների վկայություններն են (ընտիր օրինակներ են պահպանվել Ռեթկեհեմի, սր. Ասավածածնի, սր. Քոմայի և Ամենափրկիչ վանքի եկեղեցիներում)։

Նոր Զուլայում փայտի գործի հմուտ վարպետներ կաշին։ Նրանք ոչ միայն լուսամուտների ու զուների փեղկերն էին մեազորում, այլև փայտե փորք կտորներից հառազայթանե վարդակներ էին պատրաստում և զրանցով մեազորում պատշգամբների առաստաղները, եկեղեցիների զուներն ու միշնորմները (խոշա Սաֆրազի տունը, Աղանուրի տունը, մի շարք եկեղեցիներ)<sup>18</sup>։ Այդ փայտե շրջանակներում նրբմե նկարազարդ փայլարներ էին անդադրում, լուսամուտների և անասաղի մեազորման մի մե, որը լայն տարածում ուներ Իրանում<sup>19</sup>։ Նոր Զուլայի ամենահմուտ վարպետներից էր Հակոբըանը (7—1671), որը պայտասական հյուանների զեկավարն էր, եաշատուր Կեսարացու տպարանական գործընկերը<sup>20</sup>։

Նոր Զուլայի նկարչության և փայտի զեզարվեստական փորագրության ընտիր օրինակ է սր. Գեորգ եկեղեցում պահպանված խալուր Կարմերանգ փայտը նուրր փորագրված է, իսկ զրան ավետարանական 24 տեսարաններ են նկարված (Ավետում, Մեունգ, Մկրտություն, Խաչնություն, Խալից իշեցում, Հարություն, Համբարձում, Ղազարոսի հարությունը, Հիսուն ու սամարացի կինը և այլն)։ Խալը պատրաստվել է 1666 թ., խոշա Ապովի պատվերով<sup>21</sup>։

Փայտի գործի վարպետներ էին նոր Զուլայի տպարանի տաշին գործիչները, որոնք իրենց զեկավար եաշատուր Կեսարացու հետ ինքնուրույն, ցործին անտեղյակ, տառեր փորագրեցին և առաջին գրքերը տպագրեցին<sup>22</sup>։

Նոր Զուլա այցելած եվրոպացի ճանապարհորդները հիացական առզեր են թողել անդի բնակչության տպրելակերպի մասին<sup>23</sup>։ Նրանց հիացրել են կրոնավորների շքերթային տարազները, խոշայական տներում տեղի ունեցած հյուրասիրությունների ժամանակ սեզաններին զրված սպասքը, զահլիճների կահավորումները և այլն։ Առաս-



տաղից շղթաներով կախված պղնձյա և երկաթյա լամպերով ու լուսամտափեղեկներով էին տեսական քրեքին լուսավորում սենյակները: 1846 թ. պատրաստված ընտիր կանթեզ կա Ամենափրկիչ վանքի թանգարանում, որը զրկապված է ավետարանական տեսարաններով: Կենցաղում ընդունված էր պղնձյա ամանեղևեր, այդ թվում՝ սկուտեղները, որոնք տարբեր ուտելիքների ու ձանր սպասքների համար էին (պղնձե թասի մի օրինակ պահպանվել է էլմիամենի վանքի հին վեհարանում, Մետաղ №408): Հախճապակե իրերը, հատկապես կանաչ շեքրակով ձևավորված ամանեղևներ, նորջուգայեցիկները բերում էին Չինաստանից, իսկ արծաթյա և փայտե ամանները տեղական արտադրանք էին:

Նոր Ջուղայում զարգացած էր սսկերլուծյունը, որի տեխնոլոգիան Շուց եկամ ավանդներ ուներ: Նոր Ջուղայի սսկերլունները ևս իրերը պատրաստում էին այնպես, ինչպես նույն այդ գործը կատարվում էր Հայաստանի այլ վայրերում և հին Ջուղայում:

Գինու արծաթե սսկեզած մի փարչ պահպանվել է Լ. Փյուրայանի հավաքածուում<sup>24</sup>: Արծաթից մասնատուփեր էին պատրաստում, վրան սսկեթել ասեղնազործ սյունետային տեսարաններ էին ամրացնում: Օրինակ, Հովհաննես Մկրտչի զլխատման արևելականացված տարբերակը Ամենափրկիչ վանքի թանգարանի մասնատուփի վրա<sup>25</sup>: Հայտնի էին նոր Ջուղայի ձկնազործի կազմերը: Գաղթավայրերից Կաֆան (Ղրիմը), Կ. Պոլսը և նոր Ջուղան հայտնի էին իրենց կազմերի արվեստով<sup>26</sup>: Ամենափրկիչ վանքի թանգարանում պահպանվում է դեռևս 1619 թ. պատրաստված ավետարանի մի կազմ, իսկ խաչելուծյան տեսարանով մեկ այլ կազմ՝ 1648 թվի է: Արծաթյա երկու կազմ պահպանվել են էլմիամենի վանքի Գանձատանը, ունի պարզունակ նկարչություն և խոշա թումկնց Գրեգորի պատրաստածն է (1768 թ., Մետաղ №№ 280, 281): Նորջուգայեցիկները տղամարդկանց արծաթյա գոտիներ ու կանացի բազմաթիվ զարդեր էին պատրաստում: Նշանավոր էին տեղական սկիհները (պարզ մի օրինակ՝ Ամենափրկիչ վանքի թանգարանում):

Նոր Ջուղայի եկեղեցիներն այնքան հարուստ էին թանկարժեք սպասքով, որ 1720 թ., ժողովրդի լքավորության պատճառով, եկեղեցիները պարտավորվում են սզարծաթի զարդս եկեղեցյալացն տալ ՚ի վճար աներաւ հարկին: Հարկ են տալիս, քրուրվաւ, փոքր ու մեծ խաչեր, սաղավարտի խաչեր, արծաթե սաղավարտներ, կանթեզ, տապանակ, սկիհ, մաղզման, քսկու ավազան, ձեռնախաչ, պատվանդան, խաչերի ինձորներ, զշոց, նահանչ, մեռեսման, արծաթով բռնած սաղավարտ,



սկիհի պատճանդան, քամար, ավետարանի կոստղ, վակաս, ավետարանի գաշա, խաշի պատճանդան, քսուր արծաթեղեն հենեց<sup>27</sup> (մտ 16,5 լիտր և կես շարեք; Մտ 100 կգ արծաթեղեն ու ոսկեղեն); Նոր Զուլայում առնական այնպիսի մեծ խաշեր էին պատրաստում, որ Թափորի ժամանակ զբանք մի քանի մարդ էր տանում: Խոշա Նազարի տան հյուրասիրության ժամանակ (1628 թ. ապրիլի 15) որսժակներն ու զավաթներն ամբողջովին ոսկուց էին, իսկ վարդաշերբի սրվակներն ու Եփրազի գինիների բաժակները՝ ապակուց<sup>28</sup>: Նոր Զուլայի գերեզմանատանը պահպանվել են ոսկերիչների տապանքարեր, որոնց արձանագրություններից հայտնի են դառնում մի քանի վարպետների անուններ. Լալրապետ (մահ. 1647 թ.), Մելցում (մահ. 1650 թ.), Գովլաթիարը (մահ. 1651 թ.), Սահակը (մահ. 1673 թ.), Ալավերդի (մահ. 1691 թ.), Ավետիքը (մահ. 1694 թ.), սրա հայրը՝ Զաքարը (մահ. 1695 թ.) և այլն: Ուշագրավ է, որ նույն գերեզմանատանը Թաղված է եվրոպացի ոսկերիչ Լուի Ռոբերտը (մահ. 1673 թ.): Կան նաև արխիվային փաստաթղթերում պահպանված ընծայագրեր. Աղաչանի որդի Նալատուրի (1642թ.), Կոստանդի (1704 թ.) և այլն<sup>29</sup>:

Նորջուլայացիների արհեստներում առաջնակարգ տեղերից մեկը զբաղում էր գործվածքների արտադրությամբ: Նրանք գործում էին մանեղապարզ բամբակյա կտորներից մինչև ամենաբարդ ու ամենաթանկ հյուսվածքները<sup>30</sup>: Գողթն զավառում, այդ թվում նաև հին Զուլայում գոյություն ունեցող ոստայանների աշխատանքի մասին պատկերավոր տողեր է թողել Մատթեոս Զուլայացի (XIV դ. վերջ—XV դ. սկիզբ) իր «Քննութիւն գործոց առաքելոց» գրքում: Ահա այն. «Ոստայանակ, ցորժամ ոստան հենէ, նախ լափէ զմի թելն և ապա հենէ. և ի գործելն՝ օտիւքն և ձեռք վճարէ. և զիւն գործէ՝ ծրարէ ի վերայ սալմնախն ոչ գիտելով, թե զիւն գործեաց՝ մինչև վճարէ. և ի վճարելն հատանէ, և ապա զարձեալ յետ տա ի սալմնէն, և կրկին լափէ, և տեսանէ զգործն. թէ բարի է՝ փառաւորի ի տեսանելն զնա, և թէ վարչէ՝ արտո՞ր. և ի ծախելն կրկին փառաւորի՝ զզինա առնելով աշխատանաց իւրոց»<sup>31</sup>:

Նոր Զուլա այցելած ճանապարհորդները նկարագրում են խնջույքի սեղանների ոսկեթել ու արծաթաթել ծածկոցները, մետաքսե ու Թավիշե բարձրը, վարազույրները, որոնք շլացնում էին իրենց փափկությամբ, նորությամբ ու շքեղությամբ:

Կարևորագույն կտորներից էին. դիպակը՝ մետաքսաթել, արծաթաթել ու ոսկեթել ամենանուրբ, կտորը, ալտաբասը, աքսամիտը,

ասպրան, քաղիչը, բնյրերակը, բյազը, գոլը, լիթը, դարան, գորանդը, զարբաֆը, զենդենը, զուֆը, խոզը, քամբան, գենժեն, կինդյակը, քիսեյան, միտկալը, շիզը, սիֆֆենդին, տաֆտան, օրյաբը և այլն: Կոնստան Զուզայեցին, իր տեղաբնական գործի ուսուցման եղտասագրքերում տեղավորած խնդիրների համար ազտագործում է բաուլաս, զառաֆ, խարայ, մուխիյարս և այլ կտորների անուններ<sup>22</sup>: Ամենաբարդ գործվածքներից էր քիմիա կամ նաշիճ կոչված թանկարժեք կտորը: «...զի զվարազ ոսկին ի վերայ ժորթոյ կանցենն և մանր թել կտրեն, և այնպէս հնարեն ի գործելն, որ այն քարակ թելին ոսկին երեսն ի վեր լինի. և վասն այսորիկ գծուար է այս գործ քան զամենայն իել...» գրում է Մաաթեոս Զուզայեցին<sup>23</sup> Կտորների այսորինակ հարստութունը պայմանավորված էր Իրանի և, հատկապես նրա նոր մայրաքաղաք Սպահանի արհեստավորական հետաքրքրություններից: Այս կտորների փափկությունը, ձևավորման հարստությունը, զարդանախշերի բազմազանությունը և գունային հնչեղությունը հիմք էր դարձել համաշխարհային շուկայում նրանց ունեցած մեծ համարմանը: Պատահական չէ, որ նրբ XVII դ. վերջում և XVIII դարի սկզբին Ռուսաստանում սկսեցին խրախուսել մետաքսագործական ֆաբրիկաների հիմնադրումը՝ առաջիններից էին նորշուզայեցիներ Իզմատ Շերիմանը, Ստեփան Խալզարովը, Դուկաս Շիրվանովը, Վասիլի Խաստատովը: Ռուսական մետաքսագործությունից բարձրագույն արտահայտություններից էր Մոսկվայի մոտ գտնվող Ֆրյանովո գյուղի լազարյանների ֆաբրիկան, որի համար նրանք ազտագործում էին Իրանի (Նան՝ նոր Զուզայի) մետաքսագործության փորձը, մասնագետներին, կատարելագործելով այն, հարմարեցնում էին տեղական ճաշակին:

Ռանապարհորդների հիշատակություններում տեսնում ենք «հրեղեկական գունազեղ սփռոցներ» անվանումը, որը վերաբերում է դաշն սփռոցներին:

Նոր Զուզայի գաղազարդ կտորների նմուշներ պահպանվել են որպես ձեռագրերի կազմերի աստառներ: Նոր Զուզայից լիթը, միտկալը կամ քաթանը ուղարկվում էր Հեղկաստան, որտեղ գրանք հասուցի մըշակման էին ենթարկվում, ասպս հոս էին բերվում և կաղապարների միջոցով ձևավորվում էին տեղական վարպետների կողմից<sup>24</sup>: Մի բանի վարագույրներ ու դարի մի ընտիր շապիկ է պահպանվել Վիկտորիայի և Ալեքսեյի թանգարանում<sup>25</sup>, իսկ XVIII դ. վերջում պատրաստ-

ված մի գրականի ժամկոց՝ էլ միանձնի Մայր տաճարի թանգարանում (Գործվածք N 609):

Նոր Զուլան գերեզաններ ունեւ, որոնք բնակչութեան հագուստներն էին կարում: Նորչուլայեցիների տարազը սկզբնական շրջանում պահպանեց իր նախկին տեսքը, իսկ ժամանակի ընթացքում ներմուծեց պարսկականից թելագործած ազդեցութուններ: Ժանապարհորդների վկայութեամբ հայ կանայք տարբերվում էին պարսկուհիներից ոչ միայն նրանով, որ փողոց էին զուրս գալիս երեսը բաց, այլև իրենց ճոխ հագուստներով: Կանայք վերինից թակալա էին հագնում, որի մէջքն ու զոյգը բաց էր, զլխին մի քանի փաթեթ էին կրում, վրան՝ կոտ, կապում էին քթկալ, տարկանեն զանաւածածկոցն որ մանգիլ կոչու, իսկ ամռանը զուխը ծածկում էին թոռով կամ շղարշով<sup>66</sup>: Արդուլարդի մեջ ոգտագործում էին թանկարժեք քարեր ու գազափկուտ: Գլխակապի տակ կապում էին երկշար ոսկե դրամներ, իսկ հարգարանքի մշուս կտորների վրա ամրացնում էին արծաթե կամ ոսկու վարակներ: Հագուստների մեջ նախատիրութունը տալիս էին ոսկեթել սատիկին կամ թափիշին, ընտրելով կտրմիւր և գեղին գույները: Կանայք բաց կանաչ էին սիրում, իսկ ազամարդիկ նախընտրում էին մուգ կանաչը: Գոտրները լայն էին, արծաթաթել, տարբեր տեսակի քարերով ընդելուղված նարմանգներով: Ուլունքները մարջանից էին կամ ոսկե գրամներից: Կրում էին ոսկե մատանիներ և ապարանջաններ<sup>67</sup>: Նորչուլայեցիների տարազների մասին պատկերացումներ ենք կազմում մի շարք տեղում պահպանված գեղանկարչական աշխատանքներից. խոշա Սուլթանը, նորչուլայեցի ամուսինները (Ա. Տեր-Քարսեղյանի տունը), Գերաք ազան, Միհասի նկարած Ոսկան և Հակոբջան Վելիջանյանները (Ամենափրկիչ վանքի թանգարան) գերեզմանաքարերի հարթաքանդակներից և այլն<sup>68</sup>:

Նոր Զուլայում գործված կտորներից կարում էին նաև հոգևորականների տունական զգեստներ. շուրջառ, -խույր, վակաս, բաղպան, հմիփորոն և այլն: Նորչուլայեցի կանայք հայտնի էին իրենց ասնդ-նագործութեամբ: Այնքան նշանավոր էին նրանց աշխատանքները, որ գրանք անվանվում էին տարմանի բաֆիւ՝ հայի կար: Երբեմն հագուստները ասեղնագործվում էին նաև մարգարիտներով, ընդելուղվում թանկարժեք քարերով<sup>69</sup>: Եկնդեցական մի շարք հագուստներ պահպանվել են Նոր Զուլայի Ամենափրկիչ վանքի թանգարանում, ինչպես նաև

էշմիածնի վանքի թանգարաններում. խոշա Գալթի և Նրա որդի Գրիգորի կվիրարիւրված, գույնզգույն կիսաթանկարժեք քարերով ընդհուրված կերպասոյա խուլրը (1653 թ., Գործվածք N 323), շուրջառի խաչը (1626 թ., Գործվածք N 176), ասեղնագործ վակաները (1691 թ., 1679 թ., Գործվածք N N 118 և 44) շուրջառի հասավածը (1610 թ., Գործվածք N 81), եաշելության տեսարանով կերպասոյա շքեղ շուրջառը (XVII դ., Գործվածք N 78) և այլն:

Հայտնի էին նոր Զուլայի գորգները, որոնց մեջ կային նաև ասեղնագործ օրինակներ: Կուստան Զուլայիցին իր խնդիրներին մեջ օգտագործում է ասեղնագործ գորգի հս մար կտոր զնելու օրինակ<sup>42</sup>: նոր Զուլայում պատրաստված ասեղնագործ գորգի մի ընտիր օրինակ պահպանվել է Էշմիածնի վանքում: Գորգի կենտրոնում ասեղնագործված է Պետրոս I-ի դիմանկարը, իսկ վերևում, հրեշտակների բռնած ժապավենի վրա ասեղնագործված է ռիբը կնքն բառը (XVIII դ. սկիզբ, Գործվածք N 6):

Լայն համարում ունենին թանկարժեք քարեր մշակողները: Թանկարժեք քարերը նոր Զուլա էին բերվում ինչպես Իրանի տարրիք շրջաններից, նույնպես և Շեղկաստանից ու արարական երկրներից: նոր Զուլայում կային թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի հրդեհողներ, ոսկեթելերի գրվագողներ ու գաշողներ (բասմա) և հարակից մասնագիտության տեղ մարզիկ:

Ինչպես տեսնում ենք նորջուլայիցիները աշխատասեր մարդիկ էին: Արհեստները նրանց համար ոչ միայն ապրուստի միջոց էին, այլև գոյության պահպանման միջոց: Արհեստները նրանց զեղարվեստական մտածողության բարձր արտահայտութուններն էին:

Նոր Զուլայի արհեստները սերտորին շաղկապված էին տեղի բնակչության կենցաղին, նիստուկացին, սովորութուններին: Այդ արհեստները շարունակում էին ինչպես հայկական միջնադարյան արվեստների ու արհեստների ավանդները, նույնպես և հին Զուլայում հիմնավորվածը:

Նոր Զուլայի արհեստները ոչ միայն սովյալ զաղթավայրի ազգագրության և կիրառական արվեստի արտահայտութուններն են, այլև XVII դ. հայ ժողովրդի մշակութի կարևոր օղակներից:

## РЕМЕСЛА НОВОЙ ДЖУЛЬФЫ

## Резюме

Общественно-культурная жизнь Новой Джуги XVII века неоднократно являлась источником научных исследований. Однако вопрос ремесел Новой Джуги впервые исследуется в данной статье, как отдельная и важная область общественно-культурной жизни армянской колонии.

Население Новой Джуги было разделено на сословия, где особое место занимали ремесленники. Историко-литературные источники, а также сохранившиеся образцы ремесленного и декоративно-прикладного искусства (Алмазный трон, надгробные плиты, росписи домов и церквей, изделия из меди, камня, произведения ювелирного искусства, набойки и т. д. из музеев Лондона, Москвы, Еревана, Новой Джуги) дают возможность восстановить систему ремесел армянской колонии в пригороде столицы Ирана-Исфагана.

Ремесленное производство Новой Джуги находилось в тесном взаимоотношении как с укладом жизни новоджугинцев, так и с устоями иранских ремесел. Одновременно оно своими корнями опиралось на традиции средневековых ремесел Армении.

1 Հ. Տեր-Լազնիսյանց, Փաստաթղթի նոր ձեռագրեր որ լիբրարիան, հ. II, նոր ձեռագրեր, 1881, էջ 278:

2 Իրանի էկոնոմիստները Լառնե հետազոտի ակադեմիստներ է գործունակում 1837 թ. ապրիլի 2-ին 9. Ենթադրելիս զատարիան-Կանակը 9. Արևիկյան-Էնե Վ. Արտեմիսյան, Հայ Կաթարստիստները Անգլոպերսիական թագազներում: Եր., 1971, էջ 212—216:

3 Հ. Տեր-Լազնիսյանց, Երզնե աշխ., հ. I, նոր ձեռագրեր, 1950, էջ 80:

4 Հ. Տեր-Լազնիսյանց, Երզնե աշխ., հ. II, էջ 256:

5 Հ. Տեր-Լազնիսյանց, Երզնե աշխ., հ. I, էջ 184:

6 Աճառագր, 1711, էջ 241—242:

7 Քարվեճ Եստիկյան, Թագազները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ. հ. I, Երևան, 1958, հ. 2, Երևան, 1964:

8 А. Б. Геворкян. Искусство копирования армянских миниатюр по памятникам Крыма, Новой Джульфы и Константинополя (XVII в.). Автореферат, Ереван, 1972, с. 8—12.

- 9 Զեֆարիա Սահլափազ, Փամբուսթյան, Կ. 11, Վաղարշապատ, 1870, էջ 63; Խաչատուր Զալալյեյի, Փամբուսթյան Փարսից, Վաղարշապատ, 1905, էջ 117; Մանր Ժամանակագրություններ. XIII—XVIII դդ. Կ. 1, Կազմեց Վ. Լափրյանը: Երևան, 1951, էջ 302—303, Ալուա Զավենկյան, Գրքուցներ Եւլ ազատագրական ժողով պամբուսթյանից, դիրք II, Երևան, 1959, էջ 894:
- 10 Լուսավորչական նկնղդու յոթ խորհուրդները պամպիսուց սեփեղագործ մի շաքար (XVII դ. Կազմեարար Եղբ Զուլալյան գործնած) պահպանվում է Լույսասակի պետական պամբուսթյան թանգարանում:
- 11 Լ. Տեր-Զավենկյանց, Եղբած աշխ., Կ. 1, էջ 80:
- 12 Եղբ Զուլալյի գերեզմանատան շինմանը ներգրավված ընդերհնակումներ է արել սպանիանական նկարիչ Արաուս Գուրգենյանց, որի աշխատանքներից մի քանիսն լուսանկարները սեփեղագործ ենք ենթա ժողովածուում:
- 13 Karapet Karapetian, *Islehan, New Julfa. The Houses of the Armenians*. I Roma, 1974, fig. 169, 179:
- 14 Խաչատուր Զալալյեյի, Եղբած աշխ., էջ 142:
- 15 ՏՄ՝ Մանյա Վաղարշյան, Լույ Կերպարվեստը XVII—XVIII դարերում, Երևան, 1974, էջ 25—22:
- 16 Սաֆել Գալիֆեյնի, Փամբուսթյան, Վաղարշապատ, 1898, էջ 612:
- 17 Խաչատուր Զալալյեյի, Եղբած աշխ., էջ 209—210:
- 18 Karapet Karapetian, Եղբած աշխ., fig. 290, 316; John Garwell, New Julfa Oxford, 1968, p. 68, 69, 70, 71 b.
- 19 Եղբ Զուլալյից Մանյա զեպած նկարիչ Քաղան Սալթանովն աշուպի լուսանումներ պատրաստելու Կաննիսարություն է արվում, փառքից Գեորգու Ալեքսանդրի Թաղանուանգի սեփեղի լուսանումները նկարչու. ներսից զուրս աճեն ինչ էրևա, իսկ զորից Եղբա ընթա:
- 20 Զավենկյանց, Եղբ Զուլալյու Կայերան սեփեղագործ թէ գործում: —Անահիտ, Փարիզ, 1908, № 4, էջ 21—26. Զուլալյա Յազուրու արարությունը, Երևան, 1928. էջ 1303. А. И. Успенский, Царские иконописцы и живописцы XVII века. С.-Петербург, М., 1910, с. 238.
- 21 Լ. Տեր-Զավենկյանց, Եղբած աշխ., Կ. 1, էջ 152—180:
- 22 Բ. Իլյանյան, Լույ գրքի պամբուսթյան, Կ. 1, Երևան, 1977, էջ 363:
- 23 Кавказ и Тевтаидер, Путешествия в Персию через Московию. 1601—1603 гг. М., 1896; Адам Оазарий, Подробное описание путешествия голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах. М., 1870; Adam Olearii, Ausführliche Beschreibung der Kundbaren Rayss nach Moscov und Persien., .. Schleswig, 1645; Pere Raphael du Mans, Etat de la Perse en 1660., Paris, 1690; Tournefort Pitton de, Relation d'un Voyage du Levant. Paris, T. II, 1718; Doulier Desland Andre, Les Beauter de la Perse ou la Description de ce qui de plus curieux dans ce royaume... Paris, 1673; Chardin Jean de, Voyages du Chevalier Chardin en Perse et autres Lieux de l'Orient. Paris, 1811; A Chronicle of the Carmelites in Persia and the Papal mission of the XVII and XVIII centuries, vol. I. London, 1939.

- 24 Հ. Սյուսայան, Ալեքսի մը հին հայ արձանագործության ժամ: — Գեղտեի, Վե-  
ճեարի, 1950, Կարկանդակի համար, էջ 77:
- 25 John Carswell, Եզգած աշխ., էջ 80<sup>0</sup>:
- 26 Հ. Տեր-Նանդյան, Մասնագործների արձանյա-ձևապատկերների մասին: — էջ-  
միտին, 1961, մ.թ., էջ 30:
- 27 Սերիլ Գալբրյան, Կրգուհներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի  
պատմության, Երևան, 1981, էջ 125—126:
- 28 Herbert Sir Thomas, Travel in Persia. New York, 1929, p. 121—122.  
Նոր Զուլայի հայ ապակեգործները միշտ աշխատել են պարսիական արձանի-  
քում: 1816 թ. վարդանանքից լին Բարեկ Ջալալյանը, Մանուկ Խաչիկյանը, Ալեք-  
սի Գրեմբյանը, իսկ Լալայի Տեր-Պալատյանը, Վարապետյանը իր նույն  
ապակեգործաց: Հ. Տեր-Նանդյանը, Եզգած աշխ., Կ. I, էջ 402:
- 29 Լ. Մյուսայան, Ոսկերչությունը նոր Զուլայում, նոր Զուլա, 1952, էջ 32, 72,  
82, 99, 102, 117:
- 30 Ա. Յեղարիսյանը գրում է, որ Սպահանի շրջակայքում 1660 ական է գտել կա,  
որտեղ բնակիչները հիմնականում չուլահագործությամբ են զբաղվում: Հայտնի է,  
որ այդ բնակչության մեջ հայերը զգալի թիվ էին կազմում: Адам О л е а р и н.  
Եզգած աշխ., էջ 732:
- 31 Լ. Խաչիկյան, Մասնա Ջուլայիցու կյանքն ու մասնագործությունը: — Բաների  
Մասնագործների, 1956, № 3, էջ 78:
- 32 Կաստանդ Ջուլայիցի, Ճազար Վանտանտանի մեջ զարբ. Մասնագործան,  
ձև. № 5294: Կույնի, Փղղղմու, 1687, նոր Զուլա, Մասնագործան, ձև.  
№ 8442:
- 33 Լ. Խաչիկյան, Եզգած աշխ., էջ 78:
- 34 З. Р. Тарах, Набойка в Армении, Ереван, 1978.  
1677 թ. հայ վանտանի Գալինիկ Ալիայի նախաձեռնությամբ Զրանիայում  
բացվում է գաշի արվեստանոց, իսկ 1699 թ. անդիպանները գրվում են նոր  
Զուլայի հայերին, անդամի զարգանալիցիցով լին կտրվող պատրաստելու ա-  
ռաչարիցով, որի մեծ պահանջը կար Անգլիայում: Կույնի սեղան, էջ 47—48:
- 35 Victoria and Albert Museum, Brief Guide to oriental Painted, Layed and  
Printed Textiles, London, 1950, p. 7, 20; Raymond Koechlin, Gaston Mige-  
on, Art musulman cent planches en couleurs chromatiques, tissus, tapis, mi-  
niatures, Paris (1956).
- 36 Հ. Տեր-Նանդյանը, Եզգած աշխ., Կ. II, էջ 289:
- 37 Cornelis de Bruyn, Travels into Moscovy, Persia and part of the East In-  
dies..., London, 1737, p. 227:
- 38 Հայ կին: Հայկական տարադ. Ուսումնասիրության և կարները Առաջի Գա-  
րիկի. Երևան, 1962, տարածակ 77:
- 39 Զնապալում անդնագործության հայտնի կենտրոն իր նոր Զուլայի որ. Կաս-  
տանդ կուսանցը: Սերիլ Գալբրյան, Հայկական անդնագործություն, Երևան,  
1972, էջ 24:
- 40 Կաստանդ Ջուլայիցի, ձև. 5294:



ՀԱՅ ՎԱՃԱՌԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎԵՅԱՆ ԻՐԱՆՈՒՄ  
XIX Դ. ՎԵՐՋԻՆ XX Դ. ՍԿՂՐԻՆ

XVII դ. սկզբից սկսած հայ վաճառականությունն ակտիվ դեր է խաղացել Իրանի այս կամ այն շրջանի տնտեսական կյանքում: Մինչև XVIII դ. առաջին քառորդը Իրանի արտաքին առևտրում վճռորոշ դիրքեր էին գրավում Նոր Զուղայի հայ վաճառականները: XVIII դ. վերջին XIX դ. սկզբին նրանք ակտիվ դեր էին խաղում Իրանական Ազրբեջանի՝ Ճառնավորապես Քավրիզի, ինչպես նաև Մերձկասպյան շրջանների՝ Գիլանի և Մազանդարանի առևտրում:

XIX դ. սկզբից սկսած հայ վաճառականները լայն գործունեություն էին ծավալել նաև Հյուսիս-արևելյան Իրանում, սակայն առևտրական այդ գործունեությունը մինչև այժմ չի գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Ներկա աշխատանքը կոչված է հնարավորության սահմաններում լրացնել այդ բացը և ի մի բերել XIX դ. վերջին XX դ. սկզբին Հյուսիս-արևելյան Իրանում հայ վաճառականության գործունեությանը վերաբերվող բազմաթիվ փաստերը:

Հայ վաճառականության վերակազմնորոշումը դեպի Հյուսիս-արևելյան Իրան ունեւր որոշակի պատճառներ: Նոր Զուղայի հայկական գաղութն այս շրջանում տնտեսական ակտիվ էր ապրում: Իրանական Ազրբեջանում, Գիլանում, Մազանդարանում ակտիվորեն զործող հայ վաճառականությունն ավելի ու ավելի մեծ շահով էր զգում օտարերկրյա առևտրական տների, ինչպես նաև իրանցի առևտրականների ահող մրցակցությունը: Դա ստիպում էր հայ վաճառականներին վերադարձնել իրանական շուկայի փոփոխված պայմաններին և փրկարել այնպիսի շուկաներ, որտեղ այդ մրցակցությունն ավելի թույլ էր: Նման շուկա հանդիսացավ Հյուսիս-արևելյան Իրանը (Աստարադ, Շահբուդ-Քաստամ, Կորասան): Ի տարբերություն Իրանական Ազրբեջանի, Գիլանի, Մազանդարանի և Իրանի հարավային շրջանների, Հյու-

սխարհիկական Իրանն իր աշխարհագրական դիրքի, առևտրական հարմար էանագարների և հզոր առևտրական կապիտալի քաղաքացիության պատճառով շատ քայլ էր կապված Արևմտյան Եվրոպայի հետ Միակ հարմար առևտրական ուղին Բանդար Նյազ-Շահրուզ-Նիշաբուր-Մեշհեզ Եանագարն էր, որն էլ մի քանի տասնամյակ շարունակ հանգիստնում էր Հյուսիս-արևելյան Իրանն արտաքին աշխարհի հետ կապող միակ ճիշ թե շատ հարմար ուղին:

Նենց այդ ուղին էլ ընտրեցին հայ վաճառականները, որոնց ներթափանցումը Հյուսիս-արևելյան Իրան այնքան արագ էր ընթանում, որ արդեն Ե...XIX դ. կեսին հայ վաճառականներն սկսեցին իրենց մեկնաբերել զարմանի մեծածախ առևտուրը Իրանի Հյուսիս-արևելքում, որինակ Շահրուզ-Բաստամում, որտեղ հնգյական, արևմտահարավյան և սուսական ապրանքներով առևտուրը գտնվում էր նրանց ձեռքում<sup>1</sup>:

XIX դ. երկրորդ կեսին Իրանն ավելի ու ավելի էր ներքաշվում համաշխարհային կապիտալիստական շուկայի ուղիք, ավելացնելով գլոբալառևտրական ապրանքների արտահանումը և արդյունաբերական ապրանքների ներմուծումը: Այդ գործընթացը, բնականաբար, դիպավ նաև Հյուսիս-արևելյան Իրանին: Բանդար Նյազ-Շահրուզ-Սարգեվար-Նիշաբուր-Մեշհեզ առևտրական ուղին առաջնահարգ զարգացավ Իրանի ամենաաշխույժ առևտրական ուղիներից մեկը, որի ամբողջ ներկարոթյամբ, առևտրական խոշոր կենտրոններում հաստատվեցին հայկական խոշոր առևտրական ընկերությունների ներկայացուցիչները: Օրինակ 70-ական թվականներին Բանդար Նյազում նշանակալի առևտուր էին վարում Արտեմիա Ազամովը, Ասաբեկ Մատուրովը, Ներսես Կրասինիկովը, Գևորգ Արիևը և ուրիշներ<sup>2</sup>:

Շահրուզում ևս հաստատվել էին Ազամովների և Կրասինիկովների խոշոր առևտրական ընկերությունների ներկայացուցիչները<sup>3</sup>:

Նրանց մի մասը, Իրանի պայմաններում, վարում էր նշանակալի առևտուր: Բաքվի մարտատան ավյալներով Ներսես Կրասինիկովը 1869 թ. միայն Բաքվի վրայով Իրանից Ռուսաստան էր արտահանել 49.725 ուրլու ապրանք և 3239 ուրլու դրամ<sup>4</sup>, միևնույն ժամանակ Իրան ներմուծելով 21.185 ուրլու ապրանք և 29.475 ուրլու դրամ<sup>5</sup>: Բացի այդ, նա Աստարայի վրայով Իրան էր ներմուծել ևս 15.100 ուրլու ապրանք<sup>6</sup>:

Նույն թվականին Ասաբեկ Մատուրովը Բաքվի վրայով Ռուսաստան էր արտահանել 6.050 ուրլու ապրանք և Իրան ներմուծել 20.955 ուրլու ապրանք և 5.550 ուրլու դրամ<sup>7</sup>:

Օգորդնիկովի վկայութիւնք Մարզաբում գործող հայ առևտրական ընկերություններից ամենանշանակալորք Ագամովների ընկերությունն էր, որի ներկայացուցիչ ներսես Տեր-Մովսեսովի առևտրական գործարհները գերազանցում էին Մարզաբի մյուս բոլոր հայ վաճառականների առևտրական գործարհները միասին վերցրած՝:

Հայ վաճառականների և ուրա Բաումգարտների շանքերով Շահրուդի և Բանգար Եյնզի միջև հաստատվել էր նույնիսկ կանոնաւոր հազորակցութիւն, որը հեղինակն անվանում է «հայկական փոստ»:

Մինչև անգրիժիկայան առևտրական ուղու փակումը 1883 թ., հայ վաճառականները զգալի չափով կողմնորոշւում էին դեպի արևմտաեվրոպական արտագրութիւն, Հյուսիս-արևելյան Իրան ներմուծելով հիմնականում Մարսելի շաքար, բնածարպամումեր և այլ ապրանքներ: Միաժամանակ նրանք Արևմտյան եվրոպա էին արտահանում զգալի քանակութիւնք բուրդ և մետաքսահումք: Սակայն հարկ է նշել, որ հայ վաճառականները, լնչին բացառութիւնք, անմիջական կապերի մեջ չէին Արևմտյան եվրոպայի և Կոստանդնուպոլսի հետ և շաքարը, բնածարպամումերը և մյուս եվրոպական ապրանքները գնում էին երկրորդ ձեռքից՝ հիմնականում Քիֆլիսում:

XIX դ. 80-ական թվականների կեսերից Հյուսիս-արևելյան Իրանում գործող հայ վաճառականները՝ շրջադարձ են կատարում դեպի ուսական արդյունաբերութիւն, որը պայմանավորված էր սրկնկաթի հանգամանքներով: Միչին Ասիայի միացումից հետո ցարական կառավարութիւնը տերիտորիալ նվաճումների քաղաքականութիւնից անցավ տնտեսական ներթափանցման քաղաքականութիւն, որն ուղեկցւում էր պրոտեկցիոնիստական միջոցառումներով: Զգտելով նպաստել ուսական արդյունաբերական ապրանքների ներթափանցմանը Արևելքի երկրներ, այդ թվում նաև Իրան, ցարական կառավարութիւնը 1883 թ. փակեց անգրիժիկայան տարանցիկ ուղին: Դա նկատելի հարված հասցրեց արևմտաեվրոպական առևտրին հատկապես Հյուսիս-արևելյան Իրանում, որի համար այդ ուղին արևմտաեվրոպական արդյունաբերական ապրանքների ներթափանցման միակ հարմար ուղին էր: Այժմ արդեն եվրոպական երկրների առևտուրը Հյուսիս-արևելյան Իրանի հետ կարող էր զարգանալ կամ Տրապիզոն-Քավրիզ ուղիով, կամ Պարսից ծոցի, և կամ Հնդկաստանի և անգլիական Բելուչիստանի վրայով, որը կապված էր բազմաթիւ դժվարութիւնների հետ:

Մինևոյն ժամանակ ցարական կառավարութիւնը սկսեց խրախուսադրամ վճարել Իրան արտահանվող ուսական շաքարի և մանուֆակ-

աուրայի համար (խրախուսադրամ վճարվում էր միայն ուսահագատակ վճառականներին)։

Արխիվային ավյալների և բազմաթիվ հեղինակների վկայությամբ Հյուսիս-արևելյան Իրանում Ռուսաստանի հետ ողջ առևտուրը գտնվում էր հիմնականում հայ վճառականների ձեռքում։ Եահրուզում, օրինակ, 7 ուսահագատակ հայ վճառականների առևտրական ընդհանուր շրջանառությունը 1884 թ. կազմում էր 1.596.550 ֆուլի<sup>10</sup>, նրանք Ռուսաստանից Եահրուզ էին ներմուծում հիմնականում շաքար, երկաթ, շուգուն, պողպատ, լիթ, իսկ Եահրուզից և նրա շրջակայքից արտահանում էին բամբակ, բուրգ, շոր միրգ և մետաքսահումք։

Ընդհանրապես շաքարի, երկաթի, շուգունի և մի շարք այլ ապրանքների ներմուծման մեջ հայ վճառականների տեսակարար կշիռը բավականին մեծ էր։ 1891 թ. Եահրուզ ներմուծված 26.000 ֆուլի (մոտ 400.000 ֆուլու) երկաթից 21.000 ֆուլիք ներմուծել էին Դավիթ Գրիգորյանցի, Ալեքսանդր Օսիպովի և Խաչար Քամրիզովի առևտրական գրասենյակները և միայն 5.000 ֆուլիք՝ պարսիկ վճառականները<sup>11</sup>։

Նույն թվականին Բանգար Գյազի վրայով Եահրուզ էր ներմուծվել 35.000 ֆուլի շաքար (120.000 ֆուլու), որից 20.000 ֆուլիք ներմուծել են վերահիշյալ վճառականները և Փանյանցը<sup>12</sup>։

Սակայն Հյուսիս-արևելյան Իրանում գործող հայ վճառականության հիմնական կենտրոնը Սարզևարն էր։ Բաումգարտենը, որը լավատեղյակ էր Խորասանի անտեսական կյանքին, նշում է, որ 19-րդ դարի վերջին Սարզևարում գործում էին հայկական 11 առևտրական ընկերություններ, որոնցից 4-ը խոշոր էին<sup>13</sup>։ Դրանց թվում էին այնպիսի խոշոր առևտրական տներ և ընկերություններ, ինչպիսիք էին Քումանյանցները, Մուլլանց, Տեր-Մկրտիչ և Ընկ.Վ. ԵՏեր-Գևորգյանց, Նասիրյանց և Ընկ.Վ. Մնացականով իղբայրները և ուրիշներ։

Արտամտեղք ևս նշում է, որ Սարզևարում գործող 14 խոշոր առևտրական գրասենյակներից 10-ը հայկական էին, որոնցից 9-ի տերերը ուսահագատակ էին, իսկ մեկի տերը՝ (Քումանյանց) պարսկահագատակ<sup>14</sup>։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Խորասանի երկրորդ առևտրական կենտրոնի՝ Սարզևարի արտահանման և ներմուծման մասամբ ապահովում կեսը գտնվում էր հայ վճառականների ձեռքում։ Նրանց տեսակարար կշիռը հատկապես մեծ էր արտահանման այնպիսի էլյուզերում, ինչպիսիք էին բամբակը, բուրգը, շոր միրգը։ Սարզևարում քնակվող 7 ուսահագատակ հայ վճառականները (Հախնազարյանց,

Փարսիանց, Վուլլանց և Հեկ.ս ընկերության գործակատար Գևորգ-  
յանց, Տեր-Ղազարով, Մնացականյանց, Ստեփանյանց, Ղարիբյանց)  
1892 թ. Սարգևարից Ռուսաստան էին արտահանել 67.500 փուֆ բամ-  
բակ, 65.000 փուֆ բուրդ, 15.000 փուֆ շոր միրգ՝ ընդհանուր ամամար  
147.000 փուֆ 2.380.000 զան զամարով<sup>15</sup>։ Դա կազմում էր Սարգև-  
վարի ողջ արտահանման մոտավորապես 55%<sup>16</sup>։ Միևնույն ժամանակ  
Նրանք Ռուսաստանից Սարգևար էին ներմուծել մոտավորապես նույն  
զամարի կտորեղեն, շաքար, շաքարավազ, հրկաթ և այլ իրեր, որը  
կազմում էր ամբողջ ներմուծման մաս 45%<sup>16</sup>։

Իրանի անտեսական կյանքին լավատեղյակ Փերզանի վկայությամբ  
հայ վաճառականները Սարգևարից Ռուսաստան էին արտահանում  
տարեկան 10—12 հազար հակ (1 հակը մոտավորապես հավասար է  
5 փթի) բուրդ, որի զգալի մասն այնուհետև առաքվում էր Անգլիա<sup>17</sup>։

Հայ վաճառականների ձեռքում էր գտնվում նաև Հյուսիս-արևել-  
յան Իրանի մյուս խոշոր քաղաքների և բնակավայրերի առևտուրը։  
Նիշաբուրում զգալի առևտուր էին վարում երկու խոշոր առևտրական  
աների՝ Քումանյանցների և Տեր-Մկրտիչև եղբայրների ներկայացու-  
ցիչները։ Բոշնուրգում լայն գործունեություն էին ծավալել Տեր-Մկրտիչև  
և Արունով առևտրական ընկերությունների ներկայացուցիչները, որոն-  
ցից առաջինի տարեկան առևտրական շրջանառությունը հասնում էր  
150.000 ուրլու, իսկ երկրորդինը՝ 200.000 ուրլու<sup>18</sup>։

Դամդանում միակ ուսահպատակ վաճառականը Կարապետյանց  
առևտրական ընկերության ներկայացուցիչն էր<sup>19</sup>։

Ռուս գինվորական Բենգերնի վկայությամբ Բանգար Գյազում  
գործում էին ուսահպատակ հայերի 10 առևտրական ընկերություն-  
ներ 1.700.000 ուր. տարեկան առևտրական շրջանառությամբ, չհաշ-  
ված պարսկահպատակ Քումանյանցներին, որոնց առևտրական շրջա-  
նառությունն անցնում էր 200.000 ուրլուց<sup>20</sup>։

Մեծ թվով հայ վաճառականներ էին ապրում Թուրքմենական ցե-  
ղերի շրջանում։ Նրանք կարողանում էին շահել ջրվորների համա-  
կրանքը և մեծ մեծակ շրջիլ Թուրքմենական աուլներում։ Օրինակ. գոկ-  
լանների Բայանգիր առճմի շրջանում ապրում էին 4 հայ վաճառական-  
ներ, որոնք խոշոր եղջերավոր անասուններ էին գնում Մերձ-կասպ-  
յան մարզի զորքերին մատակարարելու համար։ Նրանք համ-  
ընդհանուր հարգանք էին վայելում քովոր գոկլանների շրջանում, ո-  
րոնք պաշտպանում էին հայերին, ինչպես հարազատ մարդու 1891 թ.  
հայ վաճառականները գոկլաններից և Բոշնուրգյան խանության բնակ-

շությանից գնել և Ռուսաստան էին քշել սեղանուր առմամբ մոտ 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ և 7—8 հազար գլուխ ուշխար<sup>21</sup>։

Անշուշտ դժվար է խոսել հայ վաճառականների խիստ մասնագիտացման մասին։ Նրանք բոլորն էլ զբաղվում էին և արտահանմամբ, և ներմուծմամբ։ Լավ տեղյակ լինելով իրանական շուկայի կոնյուկտուրային և քնակշիտյան պահանջմունքներին, նրանք ներմուծում կամ արտահանում էին այն ապրանքները, որոնց պահանջն այդ պահին ավելի էր զգացվում։ Օրինակ, 1900 թ. սրեկարյանց և Կարապետյանց ընկերությունը Բանդար Գյազի վրայով Դամոսկ էր ներմուծել մոտ 10.000 փութ ռուսական ալյուր և վաճառել մեծ շահույթով<sup>22</sup>։

1891 թ. Քումանյանցների առևտրական տունը Եահրուզում Զանսուզ Միրզայից, կալվածատերերից և գյուղացիներից գնել էր 5.000 խարվար հացահատիկ և արտահանել Աստրախան<sup>23</sup>։ Սա խոսում է հայ վաճառականների օպերատիվության և շուկայի պահանջմունքներին արագորեն հարմարվելու կարողության մասին։

Մյուս կողմից սուսումնասիրությունները մեզ հանգեցրել են այն եզրակացության, որ հայ առևտրական ընկերությունները տարիներ շարունակ մասնագիտացել էին որոշակի տեսակի ապրանքների ներմուծման և արտահանման մեջ։ Հյուսիս-արևելյան Իրանից գնալի Ռուսաստան նրանց արտահանման հիմնական էլուղերն էին բամբակը, բուրդը, լոբ միրգը, մետաքսահումքը և խոշոր եղջերավոր անասունները։ Ռուսաստանից ներմուծում էին հիմնականում շաքար, շաքարավազ, երկաթ և այլ մետաղներ, քիչ չափով կտորեղեն։

XIX դ. վերջին պարսկական և թուրքական ծագում ունեցող վաճառականներն աստիճանաբար հայ վաճառականներին զուրս մղեցին ներմուծման այնպիսի էլուղերից, ինչպիսիք էին կտորեղենը և շաքարը։ Այսպես՝ Սարգևարում գործող վերահիշյալ 7 հայ վաճառականներից միայն Եղույանց և Ընկ.՝ առևտրական տունն էր ներմուծում ռուսական կտորեղեն, տարեկան մոտ 3000 փութ (մոտ 100.000 ոտրլու)<sup>24</sup>։

Հյուսիս-արևելյան Իրանում գործող հայկական խոշոր առևտրական տներից ևս երկուսը՝ «Տեր Մկրտիչ և եղբայրներ» և «Տեր-Սարգըսյանց, Արուստև և Գևորգյանց» առևտրական տները զգալի չափով զբաղվում էին կտորեղենի ներմուծմամբ։ 1908—09 թթ. Մեշհեզ ներմուծված 9000 հակ ռուսական բամբակյա կտորեղենից առաջինին բաժին էր ընկնում 1.500 հակ, իսկ երկրորդին՝ 2.000 հակ<sup>25</sup>։



նույն թվականներին Մեշեց ներմուծված 937.250 ուր. շաքարից և շաքարավազից վերահիշյալ առևտրական տներին բաժին էր ընկնում համապատասխանաբար 67.500 ուր. և 52.500 ուր.<sup>29</sup>, այսինքն հայ վաճառականների տեսակարար կշիռը կազմում էր ընդամենը 13%:

Չնայած հայկական համարյա բոլոր առևտրական ընկերությունները գրավում էին և արտահանմամբ, և ներմուծմամբ, սակայն նրանց առևտրական գործարքներում վճարողը, առաջատարը արտահանումն էր և շատ հաճախ ներմուծումը ենթարկվում էր արտահանման շահերին:

Ներմուծելով ուսաստանյան արտադրության ապրանքներ՝ հիմնականում շաքար և կտորեղեն, հայ առևտրական ընկերությունների ներկայացուցիչները միաժամանակ նախաձեռն էին տրամադրում հումքի անմիջական արտադրողներին: Նրր գալիս էր նրանց վճարելու ժամանակը, նրանք իրենց ներմուծած ապրանքները հաճախ վաճառում էին շատ էժան, որպեսզի ժամանակին վճարեն իրանական արտադրողներին, համոզված լինելով, որ իրանական հումքը վաճառելիս վերադիրով կհատուցեն իրենց վնասները: Ամենից հաճախ նախաձեռնար տրամադրում էին բամբակ և մետաքս արտադրողներին: Բամբակի դիմաց կնքվող վարկային գործարքներից, որոնք հայտնի էին բալաֆո առևտով, կորասանում տարածված էին երկու ձևեր՝ առաջին դեպքում արտադրողին տրված վարկի դիմաց վերցվում էր 12—15%, իսկ բամբակը հաշվվում էր նույն գնով, ինչով գնանշվել էր պայմանագրի կնքման ժամանակ, երկրորդ դեպքում՝ վարկի դիմաց տոկոս չէր վերցվում, բայց բամբակը գնահատվում էր 1 խարվար լմաքրված կամ 30 ման մաքրված բամբակի գնանշված արժեքից 5—10 դոսն էժան<sup>30</sup>:

Նախաձեռնարը միշտ արամադրվում էր որոշակի քանակությամբ բերքի դիմաց: Շատ հաճախ հայ վաճառականները նախաձեռնարը տրամադրում էին ոչ թե դրամով, այլ իրենց ներմուծած ապրանքներով:

Ինչպես ողջ Իրանում, այնպես էլ կորասանում գերակշռում էր մտեր ու միջին առևտրական կապիտալը: Հայ վաճառականների զգալի մասն ևս ունեյր սահմանափակ կապիտալը: Մինևնույն ժամանակ արդեն XIX դ. վերջին Հյուսիս-արևելյան Իրանում գործում էին այնպիսի խոշոր առևտրական ընկերություններ, ինչպիսիք էին Քումանյանցների, Տեր-Մկրտիչների առևտրական տները, Էնասիրյանց և Տեր-Պետրոսյանց, Էթեզարյանց և Կարապետյանց առևտրական ընկերությունները, վաճառականներ Փանյանցը, Մնացականովները, որոնց առևտրական շրջանառությունն անցնում էր մի քանի հարյուր հազար ուրլուց:



Ընդհուպ մինչև Միչին Ասիայի միացումը Ռուսաստանին և Անգլիականացյան երկաթուղու կառուցումը (1850—1855) հայ վաճառականները Հյուսիս-արևելյան Իրանի հետ առևտուրը վարում էին հիմնականում Բանդար Գյազի, Եսհերուզի և Սաբզևարի վրայով: Պատահական չէ, որ առևտրական խոշոր ընկերությունների ներկայացուցիչները հաստատվել էին հենց այս առևտրական կենտրոններում: Իրագրությունը կարուկ կերպով փոխվեց 80-ական թվականների կեսերից: Հյուսիս-արևելյան Իրանի հետ Ռուսաստանի առևտրում սկսեց վճռական դեր խաղալ Աշխարազը: Մի շարք խոշոր ընկերություններ, որոնք մինչ այդ գործում էին Անգլիոյվկասում, իրենց առևտրական գործարքները տեղափոխեցին Աշխարազ: Երանցից մի քանիսն այնպիսի վճռական դիրքեր գրավեցին Հյուսիս-արևելյան Իրանի տեսեսական կյանքում, որ Միսթանում սուսական փոխ հյուպատոս Միլլերը 1900 թ. արքունական խորհրդական Յևդյեբի միջոցով տեղեկություններ հայտնելով Միսթանի առևտրի մասին, Տեր-Մկրտիչ և Մնացականով ընկերություններին հրավիրում էր առևտուր սկսելու Միսթանում<sup>26</sup>, իսկ Բիրջանդի վաճառականները ցանկություն էին հայտնում կապ հաստատել Տեր-Մկրտիչ ընկերության հետ կտորեղեն, շաքար, կնքուսին, յուզունե իրնր ստանալու համար<sup>26</sup>:

Տեր-Մկրտիչ և կրտսերները Աշխարազում գործունեության 30 տարիների ընթացքում միայն սուսական կարեղենի առևտրից ավելի քան 2 մլն. սուրյու շահույթ էին ստացել<sup>26</sup>:

XIX դ. վերջին XX դ. սկզբին Իրանն ավելի ու ավելի մեծ շտապով էր ներքաշվում ապրանքադրամական հարաբերությունների ուղտ, որի հետևանքը Ռուսաստանի և մյուս երկրների հետ առևտրի շնորհիվ վերելքն էր: Արտաքին առևտրի բուռն զարգացման հետևանքով նկատելի փոփոխություններ էին տեղի ունենում նաև Հյուսիս-արևելյան Իրանի գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսական ավանդական կուլտուրաները (հացահատիկ և այլն) դուրս էին մղվում տեխնիկական կուլտուրաների կողմից, որոնք մեծ շտապով արտահանվում էին: Հյուսիս-արևելյան Իրանի արտահանման գլխավոր հյուղերից մեկը դառնում է բամբակը: Ռուսաստան արտահանվող իրանական բամբակի ավելի քան 40% տալիս էին Ասարաբազը և Խորասանը<sup>27</sup>:

Մինչև XIX դ. վերջը Ռուսաստան արտահանվող բամբակը մաքրվում էր ձեռքով և սեղմվում ձեռքի մամլիչներով: Օրինակ XX դ. սկզբին Քորբաթի-Լեյզարիում կար ընդամենը 3 ձեռքի մամլիչ<sup>28</sup>:

XIX դ. վերջին XI դ. սկզբին բամբակի արտադրության և արտահանման շնչառակի վերելքը նոր պահանջներ էր դնում իրանական բամբակ արտահանողների առջև: Զմայրոված բամբակի արտահանումը Ռուսաստան տնտեսապես ձեռնառու չէր, իսկ բամբակի մայրումը և մամուլումը նախկին մեթոդներով շարունակելն արդեն անհնարին էր:

Այդ էր պատճառը, որ XIX դ. վերջից նախ Մազանդարանում, իսկ ապա Աստրաբազում և Խորասանում հանգևոն եկան առաջին բամբակագործի գործարանները: Եվ քանի որ բամբակի արտահանումը գտնվում էր գերազանցապես հայ վաճառականների ձեռքում, քնականարար, այդ գործարանների մեծ մասը ևս պատկանում էր նրանց: Մյուս կողմից պարսիկ վաճառականները խուսափում էին իրենց կապիտալները ներդնել արդյունաբերության մեջ և հաճախ թաքցնում էին իրենց առևտրական շրջանառությունը, վախենալով իշխանությունների կամայականություններից:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Իրանում գործում էին ավելի քան 25 բամբակագործի գործարաններ, որոնց ճնշող մասը գտնվում էր Խորասանում և Մազանդարանում: Դրանք հիմնականում կառուցվում էին բամբակագործության խոշոր կենտրոններում, որտեղ հաստատվել էին իրանական բամբակի գլխավոր արտահանողները: Օրինակ, Նիշաբուրում գործում էին 4 բամբակագործի գործարաններ, որոնք պատկանում էին Պոզնանսկու բամբակաբերական ընկերությանը, Տեր-Մկրտիչև, Շախնազարյանց և Հնկ.ս և Եհալափյանց և Հնկ.ս առևտրական տներին<sup>22</sup>:

Սարգևարում նույնպես գործում էին 4 բամբակագործի գործարաններ, որոնցից երկուսը պատկանում էին Տեր-Մկրտիչևներին և Հախնազարյանցին: Այդ գործարաններից յուրաքանչյուրի կառուցումը նստել էր 40—50 հազար ուրլի<sup>24</sup>, եվ Սարգևարում, և Նիշաբուրում Տեր-Մկրտիչևների գործարանները համարվում էին լավագույններից մեկը: Դրանք կահավորված էին ժամանակակից սարքավորումներով և գնահատվում էին 80—90 հազար ուրլի<sup>25</sup>:

Այս քննադատում խոշորագույն ձեռնարկատերերից մեկը ռեթայանց և Հնկ.Վ առևտրական տունն էր: 1909 թ. Մամեդարազում գործում էր Աթայանցների բամբակագործի գործարանը: Գործարանի սարքավորումների վրա ծախսվել էր 7000 թուման: Հիմնական և շրջանառու կապիտալը կազմում էր 15.000 թուման<sup>26</sup>: Ընկերությունը գործարաններ ուներ նաև Միանարազում, Գերեզեզում, Զովինում և Բոչնուրդյան խանությունում: 1916 թ. Բոչնուրդյան խանությունում

շարք մասով ընկերությունը պատկանող խոշոր բամբակագործ գործարանը, իսկ հին գործարանի իր բաժինն Աթալյանցը 16 հազար թումանով վաճառեց Բոչևուրդյան խանին<sup>37</sup>։

«Աթալյանց և Ընկ.» առևտրական տունը լայն գործունեություն էր ծավալել Սարգևարի շրջանում։ Ազտելով ընդլայնել առևտրական գործարանները և ավելացնել զտված բամբակի արտահանումը Ռուսաստան, առևտրական տունը 1915 թ. նոր գործարան կառուցեց Սարգևարի շրջանում՝ Ջովկնում։ Ընկերության ղեկավարությունը կարծիքով նոր գործարանի գործարկումը հնարավորություն կտար այդ շրջանից Ռուսաստան արտահանել տարեկան ավելի քան 50.000 փութ մաքուր բամբակաթել<sup>38</sup>։ Գործարանը լավագույններից մեկն էր Իրանում և հագեցված էր ժամանակակից սարքավորումներով։ Հաշվա-վարկային բանկի աստիճանավորների գնահատմամբ այն արժեք մոտ 75 հազար ուրլի<sup>39</sup>։

Բամբակի արտադրության մյուս խոշոր կենտրոնը Աստարազըն էր՝ XX դարասկզբին Բանդար Գյազում գործում էին 4 բամբակագործ գործարաններ, որոնք պատկանում էին Երեզլարյանց և Կարապետյանց, Ենասիրյանց և Տեր-Պետրոսյանց ընկերություններին, վաճառական Ազամիրզայանցին<sup>40</sup> և Թումանյանցների առևտրական տունը<sup>41</sup>։

Կաշիմի վկայությամբ Բանդար Գյազում բամբակի առևտուրը գտնվում էր հիմնականում առաջին երկու ընկերությունների մեջում, որոնք օգտվելով իրենց մենաշնորհ դիրքից, հաճախ հումքը գնում էին չափազանց էժան գնով։ Նույն հեղինակի ավյալներով գործարանատերերից յուրաքանչյուրին հումքի թերակշռման հետևանքով մնում էր 7—12 հազար փութ մաքուր մանրաթել, որն անշուշտ չափազանցություն է<sup>42</sup>։

Այս, ինչպես նաև մյուս գործարանները սեզոնային էին։ Աշխատում էին տարեկան 2—3 ամիս, հիմնականում գործարանատերերին պատկանող հումքով։ Սակայն հաճախ ձեռնարկատերերը գտելու նպատակով սրտչակի վճարի դիմաց հումք էին ընդունում նաև տեղական բնակչությունից և մյուս արտահանողներից։ Օրինակ, Մամեդարազում գտնվող Աթալյանցների գործարանը մասնավոր անձանցից գտելու համար ընդունում էր տարեկան 1500—2000 փութ բամբակ, 1 փութ մանրաթելի համար 4 դոան վճարով<sup>43</sup>։

Ընդհանուր առմամբ գործարանների թողունակությունն այնքան էլ մեծ չէր։ Մամեդարազի գործարանի արտադրական կարողությունը օրական 400 փութ էր, սեզոնայինը՝ 35 հազ. փութ, Լյութֆարազինը՝ 20 հազար փութ<sup>44</sup>։ Որպես կանոն, այդ գործարանները լուսնին՝ ինք-

նուրույն անտեսական նշանակութիւնն և կոչված էին նպատակն աշխատանքի ընկերութիւնն անտարական շրջանառութիւնն ընդհանրապէս:

Բամբակազտիչ գործարանների հանդէս զայլ Իրանում այդ երկրի բամբակազտութիւնն մեջ օտարերկրյա կապիտալի ինտենսիվ ներթափանցման արդույնք էր: Անոնարկութիւնների մեծ մասը պատկանում էր բամբակի անտարում կարտոպի գիւղերը նվաճած աստաւոպատակ հայերի անտարական ընկերութիւններին: Անշուշտ, դրանք փոքր ձեռնարկութիւններ էին, բայց լինելով իրանական արդույնարերութիւնն սպիտակֆիլէ Նյույի ձեռնարկութիւնները չէին զգում Իրանից դուրս գործող օտարերկրյա կապիտալի կործանարար մրցակցութիւնը:

Հայ ձեռնարկատերերը մենաշնորհ գիւղք էին գրավում Իրանի մկնարդույնարերութիւնն մեջ: Գնու ՆՄՈՒ զարգացրելն XIX դարասկզբին Կասպից ծովի հարավային ափի մկնային հարստութիւնները գրավել էին աստրախանցի հայ վաճառականների ուշադրութիւնը: Սակայն մկնարդույնարերութիւնը Կասպից ծովի հարավում լայն հիմքի վրա դրվեց միայն 1873 թ., երբ աստրախանցի առաջին գիւղիայի վաճառական Ստեփան Կրանոզովը շահական կառավարութիւնից ստացաւ Աստարայից-Ատրինկ հատվածում մկնարսութիւնն մենաշնորհ իրավունք: Այդ ժամանակից սկսած մկնարսը և արտահանումն անշեղորեն աճեց: Եթէ 1890-ական թվականների սկզբին մկնարսը այդ շրջանում հասնում էր տարեկան միջին հաշվով մոտ 600.000 ուրլու, ապա 1890—1906 թթ.՝ 900.000—1.000.000 ուրլու, իսկ 1907—1912 թթ.՝ 2,5 մլն. ուրլու<sup>45</sup>:

Կրանոզովը և նրա հաջորդները զգալի կապիտալներ ներդրեցին պտեղծելով ժամանակակից մկնարդույնարերական ձեռնարկութիւնն՝ հզոր սարքավորումներով, ստանարաններով, ժամանակակից փոխադրանավերով, կահավորված նավակայաններով, պահեստներով և այլ սթանդակ շինութիւններով: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Կրանոզովների ընկերութիւնն կապիտալ ներդրումները կազմում էին 3.380.000 ֆրանկ<sup>46</sup>:

Մեկ օրիչ հետազոտողի՝ Յազանեպիի տվյալներով 1916 թ. դրանք հասնում էին 9000000 ուրլու<sup>47</sup>:

Այդ վիթխարի ձեռնարկութիւնն մկնարսարանների մի ժամն էլ զրտնրվում էր Աստարադի շրջանում: Գլխավոր մկնարսարանները զրտնրվում էին Կարասուի և Հաչի Նեֆեսի գետաբերաններում: Ընկերութիւնն այստեղ որսը կատարում էր տեղաբնակ թուրքմենների ուժերով, նախօրոք պայմանագիր կնքելով նրանց հետ: Անոնարսարանների

արտադրանքը տարեցտարի ավելանում էր: 1909—14 թթ. միջին հաշվով ձկան որսն Աստրաբադի շրջանում կազմել էր մոտ 557.000 ուտրլի<sup>16</sup>: նթև 1905 թ. ձկան արտահանումը Բանդար Գյադի վրայով կազմում էր քնդամենը 13.749 փութ, ապա 1911 թ. հասնում էր 401.500 փթի<sup>17</sup>:

Ինչպես և մյուս ձկնորստարաններում, Աստրաբադում ևս ընկերությունը զգալի կապիտալ ներգրումներ էր կատարում: Ընկերության կարիքների համար Կարասուում գործում էին էլեկտրակայան, հիդանդանոց ամբուլատորիայով, կառուցվել էին բարաքներ աշխատողներին համար, զցվել էին սևիսեր վազոնների համար:

Այսպիսով, XIX դարավերջին XX դարասկզբին Հայ վանառականները ակտիվ դեր էին խաղում Հյուսիս-արևելյան Իրանի տնտեսական կյանքում: Գերազանցապես նրանց ձեռքում էր գտնվում այնպիսի օպրանքների արտահանումը, ինչպիսիք էին բամբակը, բուրբը, շոք միրգը, մետաքսահումքը: Հայ վաճառականները նշանակալի դիրքեր էին զբաղեցնում նաև շաքարի, երկաթի, գործվածքեղենի, թորած նավթի ներմուծման մեջ: Մրկրի ներսում նրանք հիմնականում զբաղվում էին մեծածախ առևտրով:

Հայ վաճառականների ձեռքում էին գտնվում նաև Հյուսիս-արևելյան Իրանի սաղմնավորվող արդյունաբերության հիմնական ճյուղերը՝ բամբակի զտման գործը և ձկնարդյունաբերությունը:

С. Х. СТЕПАНИН

## АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО В СЕВЕРО-ВОСТОЧНОМ ИРАНЕ В КОНЦЕ XIX НАЧАЛЕ XX ВЕКОВ

### Резюме

В конце XIX начале XX вв. армянское купечество играло важную роль во всех сферах экономической жизни Северо-восточного Ирана. Установив тесные связи с непосредственными производителями иранского сырья, армянские купцы экспортировали из Северо-восточного Ирана в Россию хлопок, шерсть, шелк, сухофрукты. В то же время крупные армянские торговые дома и товарищества ввозили в Северо-восточный Иран русскую мануфактуру, сахар, железо, керосин.

До закрытия в 1883 году закавказского транзита, армянские купцы ввозили в этот район в основном западноевропейские товары, покупая эти товары через посредников в Тифлисе. После

закрyтия транзита, они переориентировались на российскую промышленность

В руках армянских крупных купцов находились также основные отрасли зарождавшейся промышленности Северо-восточного Ирана: строительство хлопкоочистительных заводов и рыбная промышленность.

- 1) Н. А. Кузнецова, Иран в первой половине XIX века, М., 1983, с. 183—185.
- 2) Ф. Вакхуиди, Очерки торговли с Персией, Азербайджан, Мазандеран, Астрабад, СПб., 1875, с. 93.
- 3) П. Огородников, Очерки Персии, СПб., 1878, с. 64.
- 4) Հայ վաճառականները ձեռք բերելուց առաջ իրեն ներմուծում էրան, որպեսզի հրահանգեմ եւս՝ իր արտադրանքներն վերստին կտնային զրաւոյ:
- 5) ЦГИА Гр. ССР, ф. 378, оп. 1, л. 11061, л. 74 об.
- 6) Եւրօ յանդում, ք. 101:
- 7) Եւրօ յանդում, ք. 72:
- 8) П. Огородников, Очерки Персии, СПб., 1878, с. 103.
- 9) Եւրօ յանդում, էջ 63, 352:
- 10) АВПР, ф. «Персидский стол», д. 1826, 1883—88 гг., л. 127 об.
- 11) Л. К. Артамонов, Поездка в Персию. Астрабад-Шахурдский район и Северный Хорасан, Тифлис, 1894, приложение, с. 55.
- 12) Եւրօ յանդում, էջ 52:
- 13) Ф. Баумгартен, Поездка по восточной Персии Л-га Волынского полка поручика Баумгартена в 1894 г., СПб., 1896, с. 54—55.
- 14) Л. К. Артамонов, Астрабад-Шахурдский район..., с. 225.
- 15) ЦГИА СССР, ф. 23, оп. 7, л. 183, лл. 69—70 об.
- 16) Եւրօ յանդում, ք. 70:
- 17) G. N. Curzon, Persia and the Persian Question, London, Longmans, Green and Co., 1892, v. 2, p. 510.
- 18) Бендерев, Астрабад-Вастамский район Персии. Поездка по району в 1902 г., Ашхабад, 1904, маршруты, с. 135.
- 19) Եւրօ յանդում, էջ 158:
- 20) Եւրօ յանդում, էջ 2:
- 21) Л. К. Артамонов, Астрабад-Шахурдский район..., ч. 2, с. 101.
- 22) Бендерев, Астрабад-Вастамский район Персии..., с. 247.
- 23) Л. К. Артамонов, Астрабад-Шахурдский район..., ч. 2, приложение, с. 58.
- 24) ЦГИА СССР, ф. 23, оп. 7, л. 183, л. 69.
- 25) ЦГИА СССР, ф. 600, оп. 10, л. 222, л. 43.
- 26) Եւրօ յանդում, ք. 36 Եւրօ յանդում:
- 27) А. Иас, Хлопководство в Хорасане. Сборник консульских донесений, вып. 5, СПб., 1905, с. 360.

- 28 АВПР, ф. «Среднеазиатский стол», оп. 485, д. 718, лл. 164—165.
- 29 АВПР, ф. Среднеазиатский стол, оп. 485, д. 720, л. 5.
- 30 А. Ф. Губаревич-Радобыльский, Значение Туркестана в торговле России с сопредельными странами в Азии, СПб, 1912, с. 203.
- 31 Библиотека хлопкового дела, кн. 10, М., 1928, с. 26—28.
- 32 А. Иас, Хлопководство в Хорасане, с. 350—351.
- 33 Ж. Я. Кассис, Экономическое положение современной Персии, Киев, 1915, с. 26.
- 34 *Исторический очерк*.
- 35 ЦГИА СССР, ф. 600, оп. 9, д. 990, 1915, л. 4.
- 36 Сборник консульских докладов (Северная Персия), М., 1933, с. 23.
- 37 ЦГИА СССР, ф. 600, оп. 10, д. 202, л. 4, ф. 600, оп. 9, д. 1083, л. 15.
- 38 ЦГИА СССР, ф. 600, оп. 9, д. 1083, л. 7.
- 39 *Исторический очерк*, р. 16.
- 40 Н. Н. Шафров, Персидское побережье Каспийского моря, его производительность и торговля, Тифлис, 1913, с. 71; А. М. Сахаров, Русская колонизация Астрабадской провинции в Персии, П., 1915, с. 46.
- 41 В. Б. Безсонов, Северные провинции Персии, П., 1917, с. 43.
- 42 Г. Кам, «Персидские земли» или «Новая азия», Кривноводск, 1914, с. 109.
- 43 Сборник консульских докладов, с. 23.
- 44 *Исторический очерк*.
- 45 M. L. Eastner, Russo-Persian Commercial Relations 1828—1914, University of Florida Monographs, Social Science, no. 28, Florida, University of Florida Press, 1965, p. 77.
- 46 The Economic History of Iran 1600—1914, Ed. by Ch. Issawi, Chicago—London, The University of Chicago Press, 1971, p. 236.
- 47 E. V. Yaganegi, Recent Financial and Monetary History of Persia, New—York, Columbia University, 1934, p. 21.
- 48 А. Ф. Назаров, Южное побережье Каспия, Труды научного института рыбного хозяйства, т. 4, М., 1929, с. 381.
- 49 Н. Н. Шафров, Персидское побережье Каспийского моря, с. 69—70.



## ՔՐԴԵՐԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ՎԱՐՎԱՍԻ ԵՈՒՐՁԸ

(ըստ արաբական աղբյուրների)

Արաբական նվաճողական արշավանքների ավարտից հետո զգալիորեն մեծացավ արաբների հետաքրքրությունը խալիֆայության հպատակ ժողովուրդների և երկրների պատմության ու մշակույթի նկատմամբ: Եթե առաջին շրջա խալիֆաների (632—661 թթ.) և Օմայանների (661—750 թթ.) օրոք հասկանալի պատճառներով արաբները հստակ պատկերացում չունեին նվաճված տարածքների և նրանց բնակիչների մասին, ապա Բաղդադի Աբբասյան դինաստիայի (749—1258 թթ.) տիրապետության ժամանակաշրջանում, ելնելով արքունիքի ռազմաքաղաքական և տնտեսական շահերից, քիչ թե շատ փոխվեց իրավիճակը: Այս շրջանում սկզբնավորվեց (հիմնականում VIII դ.) արաբական պատմաաշխարհագրական գրավոր բազմաթիվ սկզբնաղբյուրներում, բացի խալիֆայության ռազմաքաղաքական անցուղարձերի և աշխարհագրական մանրամասն նկարագրություններից, փորձեր են կատարվել նաև հպատակ մի շարք ժողովուրդների էթնիկական ծագումն ու ձևավորումը մեկնաբանելու ուղղությամբ: Պետք է ենթադրել, որ այս երևույթը պատահական բնույթ չէր կրում և բխում էր արաբական խալիֆայության ընդհանուր քաղաքականությունից, որի նպատակն էր հիմնավորել խալիֆայության տիրապետության բարեկանությունը և արաբների և հպատակ ժողովուրդների կարծեցյալ էթնիկական ընդհանրությունները: Ժողովուրդների էթնիկական ծագման հարցերի շահագետ պարզաբանումները արաբ միջնադարյան գործիչների կողմից կոչված էին ծառայելու ոչ միայն արաբական տիրապետության ամրապնդման, այլև խլամի՝ նոր կրոնի տարածման նպատակին: Ուստի մահմեդական միջնադարի գրեթե բոլոր հեղինակներն այս հարցում ևս մեծապես դիմել են Աստվածաշնչի և դիցաբանության ավանդություն-

ների նյութերին, առաջ քաշելով որոշ ժողովուրդների ինչպես արարական, այնպես էլ սեմական ծագումը:

Այս առևանկյունից արար Հեղինակների ուշադրությունից չէին կարող վրիպել իրանական ժողովուրդները, դրանց թվում, մասնավորապես, քրդերը: Ովքեր են եղել քրդերի նախաձայրերը և երբվանից են նրանք որոշոք անվան տակ հանդես եկել պատմության թափարարում: Այդ մասին էլ արար Հեղինակները հավաքել և գրառել են մի քանի վարկածներ:

Քրդերի էթնիկական ծագման պրոբլեմը, ինչպես ցույց է տալիս արարական պատմաաշխարհագրական գրականության ուսումնասիրությունը, ի տարբերություն խալիֆայության մյուս ժողովուրդների, առավել լրջորեն է մտահոգել արար Հեղինակներին: Պետք է ենթադրել, որ այս հանգամանքը մասամբ կապված էր այն փաստի հետ, որ քրդերը ապրելով աշխարհագրական կարևոր դիրք ունեցող տարածքների վրա, զգալի դեր էին խաղում արևելյան խալիֆայության ռազմաքաղաքական կյանքում:

Մեր արամադրության տակ եզած նյութերը ցույց են տալիս, որ քրդերի էթնիկական ծագման պրոբլեմը արարական սկզբնաղբյուրներում ունեցել է առևանգ պատմություն և շոշափվել է մոտավորապես VIII դ.: Ինչպես արդեն նշվեց, հայտնի պատճառներով արար Հեղինակները աշխատում էին հիմնավորել քրդերի արարական ծագման դադափաբը, որը արտացոլվել է քրդագիտական որոշ գործերի մեջ: Դրան, օրինակ, թուրքիկ կերպով անդրադարձել են Ն. Մառք, Վ. Նիկիտին, Վ. Միևորոկին, Մ. Զաքին, Մ. Օրանզը, Ռ. Տասիմին, Ռ. ալ-Ֆիլը, և ուրիշներ:

Սույն վարկածին հատուկ հոգված է եվրեյի սովետահայ քրդագետ Գ. Ակոպովը: Մակայն ընդհանուր գծերով ներկայացվելով քրդերի արարական ծագման վարկածը, նրա տեսադաշտից դուրս են մնացել արար մատենագիրների և աշխարհագիրների զգալի նյութեր: Բացի այդ, իր շարադրանքում բավարարվելով հայտնի մի քանի վկայականություններով, Գ. Ակոպովը վերլուծել է զուտ էթնիկական կարգի խնդիրներ, կանգ է առել առանձին էթնոհիմների վրա:

Ներկա հոգվածը շարադրելու համար օգտագործվել են IX—XV դդ. արարայնզու աղբյուրների նյութերը, որոնց զգալի մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Այդ նյութերի լույսի ներքո վարկածը դիմավում է գիտական նոր կողմով, վեր են հանվում նրա առաջացման և գոյատևման գրգռապատճառները:

Քրդերի արարական ծագման միջնագարյան վարկածին, որքան հայտնի է մեզ, առաջին անգամ անդրադարձել է հայտնի ծագումնաբան, մի քանի գործերի հեղինակ Սուհայմ իրն Հաֆսս Արու ալ-Յակզզանը<sup>4</sup> (VIII դ.): Արու ալ-Յակզզանի (որի աշխատությունները մեզ չեն հասել) այդ հիշատակությունը արար հեղինակները մատնանշել են քրդերի ծագման անշուքյամը<sup>5</sup>: Նրանց տվյալներով Արու ալ-Յակզզանն իր ռՄեծ ծագումնաբանությունը (Քիթար ան-Նասր ալ-քարիր) գրքում ընդգծել է, որ իբր քրդերի նախահայրն է ոմն շՔուրդ իրն Օմար իրն Ամր իրն Մասսաան<sup>6</sup>: Այս ծագումնաբանությունը որոշ հավելումներով և փոփոխություններով տեղ է գտել հետագա զարհրի արարական աղբյուրներում: Օրինակ VIII—IX դդ. հեղինակ Հիշամ ալ-Քալրիև (Իրն ալ-Քալրիև) իր նույնանուն երկում (Քիթար ան-Նասր ալ-քարիր), որը նույնպես եվրոպած է արարական ցեղերի տոհմաբանությունը, առաջ է քաշում քրդերի ծագման նոր տարրերակ: Նրա կարծիքով քրդերի նախահայրն է շՔուրդ իրն Օմար Ամր Մա սս-Մամաս-ն<sup>7</sup>: Սրբմն Մա սս-Մամայի փոխարեն շեմրու Մուզայիկյան<sup>8</sup>, որոնք, ըստ արար. ծագումնաբանության, նույն անձն են:

Արար հեղինակներին ամենից առաջ հետաքրքրել է «բուրդ» էթնոնիմը, որի րացաբարության ճանաչարհին սխուլաստիկ զազափարախոսությունը<sup>9</sup> կրոնական ազնեղությունները մղել է իդեալիստական հիմնավորման: շՔուրդ տերմինը, դիտելով որպես առանձին էթնիկական խմբի ինքնանվանում, նրա մեջ մարմնավորվել են այդ անունը կրող առասպելական մի մարզու (քուրդ), որի անունով էլ, իբր թե, նրա սերունդը կոչվեց քուրդ.  $\text{اكراد}$  — քրդեր —  $\text{اكراد}$  (հոգ. թիվ. արբադ): Այս մեկնաբանության հիմնավորման համար արար հեղինակները դիմել են նախախոյամական շրջանում ոչ լայն տարածում ստացած շՔուրդ անվանումներ:

Արու ալ-Յակզզանի և ալ-Քալրիի տարրերակներում քուրդ անվանումները հաջորդող անունները մեզ տանում են հետո՝ ակամայից աննշվելով բուն արարական էթնոսի խնդիրների հետ: Միջնագարյան արար հեղինակների պատկերացումներով արարների էթնիկական րացադարմասերը կազմված են եղել երկու հիմնական խմբերից, որոնք առասպելական լինելով՝ ունեն աստվածաշնչային երանգներ: Ըստ այդ տվյալների, հյուսիսային արարների նահապետը Իսմայիլն է, աստվածաշնչային Արրահամի որդին, իսկ հարավային արարներին՝ Յակթանը (Կահթանը): Այս երկու խմբերից առաջինը համարվում է արար-

բացած արար (ալ-արար ալ-մուսթաարիբա), իսկ երկրորդը իսկական արար (ալ-արար ալ-արիբա)։ Նրանց մեջ մտնող բազմաթիվ ցեղերն ու ցեղային միութիւնները ունենին իրենց անվանումները, որոնք հարգհետեւ տարածվելով արարական թերակզզում վերանվանվեցին նոր անուններով<sup>10</sup>։

Քրդերի արարական ծագման հարցում առաջարկած տոհմածառերը իրենց տարբերակներով վերաբերում են երկու խմբերին էլ։ Օրինակ, Աբու ալ-Յակզզանի տարբերակում բերված անունները մտնում են Մուղղար ցեղային միավորման մեջ, որը համարվել է արարացած արար<sup>11</sup>, իսկ ալ-Փայրիի տարբերակի անուններին հանդիպում ենք իսկական արարների տոհմածառի մեջ<sup>12</sup>։

Արարական աղբյուրներում այս տարբերակները հետզհետեւ ճշգրտվել և ավելացվել են նոր անուններով, որոնց երբեմն չենք հանդիպում արարական տոհմաբանութիւնը նվիրված հիմնական գործերում։ Օրինակ, Իրն Դուրայզը (IX դ.) նույնպէս նշելով քրդերի արարական ծագումը, նրանց նախահայրն է համարել Քուրդ իրն Մարդ իրն Օմար իրն Ամրա-ին<sup>13</sup>։ Ինչպէս երևում է այս տարբերակում, Մարդը նոր անուն է։ Սույն տոհմաբանութիւնը որոշ անունների նմանութիւնը հանդիպում է Իրն ալ-Ջավանիի, ալ-Արկաթիի և այլոց գործերում։ Քրդերին համարելով արար այս խոշոր ցեղային միութիւնի միջուկ, նրանք առիւթ են ամբողջ տոհմածառը ընդհուպ մինչև արարացած արարների առասպելական Ազնան նախահորը։ Այդ ծագումնաբանութիւնը համաձայն քրդերը համարվում են Քուրդ իրն Ամրու իրն Սասսաա իրն Մուադիյա իրն Բարբ իրն Հավազին իրն Մանսուր իրն Աքրամա իրն Խաֆսսա իրն Կայս իրն Ալլան իրն Մուղղար իրն Նիզար իրն Մուադ իրն Ազնան-ի սերունդը<sup>14</sup>, իսկ իրն Ռասսայն իր հերթին, որոշ լսփով կրկնելով Աբու ալ-Յակզզանին, ընդգծում է, որ նրանք Սասսաա Վասիկ իրն Մուհաբահ-ի սերունդն են<sup>15</sup>։

Մահմեդական միջնադարում մշակված այլևայլ տարբերակներ գրի է առել եզրագծացի պատմիչ ալ-Մակրիզին։ Հետ գրանց. քրդերը սերում են Քուրդ իրն Մուրդ (ոմանց մոտ Մարդ է,—Ա. Փ.) իրն Ամրու իրն Սասսաա իրն Մուադիյա իրն Բարբ իրն Հավազինից։ Ասում են, թէ նրանք Ամրու Մուղղայիկյա իրն Ամր Մա աս-Մամայի սերունդն են։ Ասում են, թէ նրանք (քրդերը,—Ա. Փ.) Համիդ իրն Քարիկ-Համիդ իրն Ջուհայր իրն ալ-Հարիս իրն Ասադ իրն Արդ ալ-Ազա իրն Կասսա իրն Փիլարի սերունդն են<sup>16</sup>։ Նման տարբերակներին ալ-Մակրիզին անդրադարձել է իր մեկ ուրիշ աշխատութիւնում<sup>17</sup>։

Քրդերի արարական ծագման վարկածն իր խայտարակատ պատմներով աստիճանաբար տարածվեց խալիֆայությունում, որին անդրադարձան վաղ շրջանից սկսած արաբ ականազոր հեղինակներ ալ-Իսթախրի<sup>15</sup>, Իբն Հատիբ<sup>16</sup>, ալ-Իզրիսի<sup>17</sup>, Իբն Յուսուֆ Արդ ալ-Քադր<sup>18</sup>, Աբու ալ-Քարաջաթ ան-Նասաֆին<sup>19</sup>, Իբն Խալիֆան<sup>20</sup>, Իբն Մանզուր<sup>21</sup>, Իբն ալ-Վարդին<sup>22</sup>, Աբու ալ-Ֆիդան<sup>23</sup>, Իբն Խալիֆան<sup>24</sup>, ալ-Հանբալին<sup>25</sup>, աղ-Գիմազիին<sup>26</sup>, ալ-Ֆիրուզբադին<sup>27</sup>, Իբն Բաթու-թան<sup>28</sup> և ուրիշներ։ Այն տեղ գտավ նույնիսկ արարական միջնադարյան պոեզիայում։ Ուշագրով է մեղրերել անհայտ բանաստեղծի հանգամանակով բանաստեղծությունը, որը կրկնում են տարբեր հեղինակներ, քարգմանաբար հնչում է հետևյալ կերպ. «Կյանքովդ եմ երգվում ես, քրդերը ոչ թե սրդիներն են (սերունդը) պարսկական, այլ քուրդ իբն Ամրու իբն Ամրա-ի»<sup>29</sup>։

Քրդերի էթնիկական ծագման հարցին նվիրված արարական սկզբնաղբյուրներում գոյություն ունեցող վարկածների և նրանց հետ առնչվող նյութերի ուսումնասիրությունը հիմք է տալիս հանգելու այն եզրակացության, որ նրանց արարական ծագումը իր մի քանի տարբերակներով ամփոփ և վերջնական ձևակերպում ստացավ X դ. արաբ հույանագիր գիտնական ալ-Մասուդու կողմից։ Նա հավաստի է գրառել է միջնադարյան ու դիցարանական վարկածների մի ամբողջ շարք։ Նրա շարադրանքից երևում է, որ նա ոչ միայն շփվել է քրդերի հետ, այլև բուն քրդական իրականությունից ևս նյութեր է գրի առել։ Այլ կերպ ասած, ալ-Մասուդին այն գործիչներից է, թերևս միակը մեր կարծիքով, որ քաջատեղյակ է եղել քրդական իրականությանը և քրդերի էթնիկական ծագմանը վերաբերող վարկածներին։ Ալ-Մասուդին այդ խնդիրներին անդրադարձել է իր հիմնականում «Մուրուզ ալ-զա՛հար վա մաադին ալ-շաուհարա և Քիթաբ աթ-թանրի՛ վա ալ իշրաֆ» աշխատություններում։ Հենց սկզբից էլ նա միանգամայն հիշտ է ընդգծել, որ քրդերի ծագման շուրջ գոյություն ունեն խիստ տարածայնություններ և զանազան կարծիքներ<sup>30</sup>։

Եթե վաղ և նույնիսկ ուշ շրջանի արաբ հեղինակներից շատերը հաճախ կառչել են «Քուրդ» առասպելական անձնանունից, ապա ալ-Մասուդու երկերում դրան մեծ կարևորություն չի արվել։ Նրա երկերում փորձ է կատարվում քրդերի ծագումը սերել արևելյան խալիֆայության տարածքում հաստատված հայտնի արաբ ցեղային միավորումներից։ Նրանցից ի մի բերելով մի քանիսը, ալ-Մասուդին նշում է, որ «Մարդկանցից ոմանք գտնում են, թե քրդերը [սերվել են] Ռաբիաս

իրն նիզար իրն Մասց իրն Ազնանի Բարք իրն Վախլից... որոշ մարդիկ  
զանում են, որ նրանք (այսինքն քրդերը սերվել են,—Ա. Փ.) Մուզղար-  
իքն նիզարից և Փուրզ իրն Մարզ իրն Մասաաա իրն Հազվագիկն սերունդն  
են... ոմանք էլ կարծում են, թե նրանք (քրդերը—Ա. Փ.) Ռարխաալից և  
Մուզղարից են...<sup>34</sup> Այնուհետև ալ-Մասուդին ավելացնում է, ընդգծե-  
լով հետևյալը. «Ինչպես էլ, որ սասցիներ քրդերի մասին, ապա նրանց  
ձագման վերարերյալ մարդկանց մեջ ամենատարածվածը և ամենա-  
նշմարիտը այն է, որ նրանք սերվել են Ռարխաա իրն նիզարից...»<sup>35</sup>  
Կատարված մեջբերումից ակնհայտորեն երևում է, որ ալ-Մասուդու  
մտա զխաղտրապես շեղավում են արարական ցեղերի առասպելական  
նախահայրերը՝ Ռարխաա իրն նիզարը և Մուզղար իրն նիզարը, որոնք  
ըստ միջնադարյան ժողովնարանների, եզրայրներ են և արարացած  
արարների Ազնան նահապետի ժողովրդը<sup>36</sup>։

Քրդերի արարական ձագումն իր բազմազան տարբերակներով  
տարածվել է նաև Այուրբյաններին<sup>37</sup> վրա (1169 թ. մինչև XV դ. վեր-  
ջը)։ Ակնհայտ է, որ Այուրբյան զինաստիան ի զմեռ Սալահ ադ-Դինի  
լավազանց ակտիվ գործունեություն ծավալից մահմեդական միջնա-  
դարում և փառարանվեց Հատկապես խաչակիրների դեմ պայքարում։  
Այս խնդրի մանրամասնությունների մեջ լատենլը ոչնչով չի փոխում  
սպասվող պատասխանը. իսկ դա հանգում է այն բանին, որ Այուրբ-  
յաններին վերագրելով արարական ժազում, զրանով արար Հեղինակ-  
ները աշխատել են տորինական հիմքի վրա զնել այն ժառայություն-  
ները, որ վերահիշյալ առձամառը՝ Հատկապես Սալահ ադ-Դինը, մա-  
տուցեց միջնադարյան մահմեդական աշխարհին<sup>38</sup>։

Այսպիսով, զուգահեռ անցկացնելով, ինչպես նշվեց, քրդերի սքուրդը  
էթնոնիմի և ոմն ռՓուրդը անձնանվան, ինչպես նաև առանձին ցեղային-  
միությունների և նրանց նախահայրերի հետ, արար Հեղինակները ձրդ-  
տել են լրացուցիչ մանրամասնություններով հիմնավորել իրենց տե-  
սակետը։ Հետևելով արարական աղբյուրների վկայակոչությունների  
ընթացքին, պետք է ենթադրել, որ միայն ռՓուրդը-անունը ըստ երևույ-  
թին չի բավարարել համոզիչ կերպով արար համարելու ալլախըզու կը-  
նիկական այդ խմբին Այս հարցին, ինչ որ լավով հազմանական պա-  
տասխան աալու համար, այսինքն՝ թե քրդերը-նախկին արարները,  
ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքների հետևանքով մեկնեցին Արարխալից և  
րնակվեցին ալլազդիների մեջ, արար Հեղինակները զիմել են իրենց  
հայտնի պատմական իրադարձություններին։ Մեզ արդեն ծանոթ ալ-  
Փալրին առաջիններից է, որ այդ փաստը կապել է նմենի Մարիբ ամ-



բարտակի փուլզման հետ նա գրում է, որ քրդերը, իբր, «Նկան (Հաստատվեցին) այն տարածքը, որում [այժմ] գտնվում են, երբ հեղեղ խորտակեց ալ-Արիմը և ցրվեց նմենի (ալ-Յամանի) բնակչութունը»<sup>25</sup>։

Հայտնի է, որ նմենի հսկա այս ամբարտակը, որը Մարիք քաղաքը և նրա շրջակայքը պաշտպանում էր լեռնային շրջնաշրջաններից կառուցվել էր Սարա Քաղափորների կողմից՝ VI դ. (մոտավորապես մ.թ. 542—570 թ. արանքում) շուրջ ճեղքեց ամբարտակը, քանզի լուվ այն՝ խորտակեց նաև Սարաջինների մայրաքաղաքը՝ Մարիքը և շրջակա շինությունները<sup>26</sup>։

Ամբարտակի փուլզումը, որի շրջով ոտոզվում էին հողերը, հսկայական վնասներ հասցրեց երկրի գյուղատնտեսությունը<sup>27</sup>։ Թեև լեռքեր գործադրվեցին այն վերականգնելու համար, բայց դրանից հետո նմենում ըստ երևույթին ոտոզման սխառնը և տեխնիկան խիստ տուժեց<sup>28</sup>։ Դրա հետևանքով կրկին սկսվեց հարավային Արաբիայից (Նմենից) արաբական ցեղերի արտագաղթը զեպի հյուսիս, Սիրիա, Միջագետք և այլուր։ Այս արտագաղթերը և նմենում Հիմյար Քաղափորության անկումը առավելապես պայմանավորված էին նաև երկրում առևտրի անկման հետ<sup>29</sup>։ Ահա պատմական այս իրադարձությունների հետ է առելի ալ-Քալբին քրդերի ենթադրյալ արտագաղթը նմենից՝ Մարիքի ամբարտակի փուլզման հետևանքով։ Ուշագրավ են այդ առթիվ ալ-Մասուդու երկում առաջ քաշած պատճառաբանությունները։ Նա գրում է, որ իբր քրդերը «հին ժամանակներում բաժանվեցին արաբներից, հաստատվեցին լեռներում և հովիտներում զանազան իրադարձությունների հետևանքով, ուր որպես հարեաներ ապրեցին քաղաքի և շինությունների (գյուղերի) աշամ<sup>30</sup> ու Ֆուրս<sup>31</sup> ժողովուրդների հետ։ Նրանք մոռացան իրենց լեզուն (արաբերենը, — Ա. Փ.), խոսեցին աշամների լեզվով։ Եվ յուրաքանչյուր քրդական ցեղ ունի իր խոսվածքը (լեզուն) քրդերենով...»<sup>32</sup> Արաբիայից քրդերի դուրս գալը ալ-Մասուդու մոտ կապվել է նաև արաբ «Հաստատվեցին»<sup>33</sup> կոնվենիտի հետ<sup>34</sup>։ Իսկ մեկ այլ պատճառը, ըստ ալ-Մասուդու, այն է, որ քրդերը հաստատվեցին լեռներում արտադարձեր և շուրջ հայթայթելու նպատակով մոռացան արաբերեն լեզուն՝ ուրիշ ժողովուրդներին հարևան դառնալու հետևանքով<sup>35</sup>։ Այս հարցին ալ-Մասուդին անդրադարձել է իր «Քիթաբ աթ-Քանդիհ վա ալ-իշրաֆա աշխատությունում, ուր բնագծել է գրեթե նույն միտքը, որ քրդերը զանազան հակամարտությունների հետևանքով շատ վաղուց են դուրս եկել Արաբիայից և հաստատ-



վելով «աշամների հողում, տարածվեցին, մոռացան իրենց լեզուն և [բազմանալով] դարձան համայնքներ ու ցեղեր»<sup>20</sup>։

Այս առթիվ պետք է նշել հետևյալը. ինչպես հայտնի է, ընդ ուժեղացավ պարսկահռոմեական մրցակցությունը, Արևելքում առևտրական ուղիներում ձևավորվեցին արարական իշխանություններ՝ Պետրան (Սարաթիններ-գոյատևեց մինչև 106 թ.) և Պալմիրան<sup>21</sup>։ Դա նպաստեց արարական ցեղերի ակտիվացմանը, և նրանք հեռզհեռ տարածվեցին կայսրության ու Իրանի սահմանամերձ գոտիներում։ 272 թ. Պալմիրայի անկումից հետո Սիրիայում իշխանության գլուխ անցան արար Ղասսանիները, որոնք հանդիսանում էին Բյուզանդիայի կամակատարներ<sup>22</sup> և ոգտագործվում էին քեղուիներին հակահարված տալու համար։ Նույն ժամանակաշրջանում (III դ.) ակտիվացան Իրաքում հաստատված արարները և նրանց հաջողվեց հիմնադրել լախմիների իշխանությունը։ Այս շրջանում է, որ արարական ցեղերը տարբեր նկատառումներով սկսում են Միջագետքից շարժվել և խորանալ դեպի արևմուտք։ Ապա ժամանակ առ ժամանակ ոգտվելով Սասանյան Իրանի թուլությունից, նրանք ոչ միայն սկսում են ուժեղացնել ասպատակությունները, այլև իրենց հոտերով տարածվում Միջագետքի հյուսիս և արևելյան շրջաններում<sup>23</sup>։

Ինչպես դժվար չէ նկատել քրդերի արարական ծագումը արար հեղինակները կատարելագործել են իրենց հայտնի իրադարձություններով նախախայմական շրջանում դեպի Սասանյան Իրանի և Բյուզանդական կայսրության սահմանները արարական ցեղերի տեղաշարժերով։ Իր գնանգան տարրերակներով սույն ծագումնաբանությունը սկզբած IX—X դդ. որոշ արձագանք գտավ նաև խալիֆայության տարբեր շերտաններում ջար ու ջրիվ քրդական ցեղերի մեջ։ Այդպիսի վկայություններ են հաղորդում Իբն Հաուկայլը<sup>24</sup> Փերմանի լեռնաբնակ քրդերի և ալ-Իսթախրի<sup>25</sup> Ճարս նահանգի քրդական կայատեղերի մասին։ Ավելի մանրամասն է հաղորդում ալ-Մասուդին իր «Մուրուջ ալ-զահարա» գրքում։ Նա ընդգծում է, որ առանձին ցեղեր իրենց ծագումը կապում են Ռարիաա իբն Նիզարի և Մուզար իբն Նիզարի հետ<sup>26</sup>, Իսկ «Քիթաբ աթ-Քանդի» վա ալ-Իշրաֆա-ում, նկարագրելով քրդական ցեղերի տեղաբաշխումը խալիֆայության տարբեր մասերում, գրում է, որ «Քուրդ բանիմաց ծերունիները, որոնց հետ հանդիպեցինք մեր հիշատակած երկրներում, հայտնեցին, որ իրենք [ծագումով] Քուրդ իբն Մարզ իբն Սասասա իբն Հարր իբն Հավազինի սերնդից են։ Նրանցից ոմանք գտնում են, թե իրենք Սուրայ իբն Հավազինի [սերունդն] են... Քրդ-

րից ոմանք գտնում են, թե Ռաբբաայից և Բաբբ իրն Վախից են...<sup>57</sup> Այդ մասին ուշագրավ են նաև ալ-Մակրիզիի հիշատակութիւնները: Նա գրում է, որ քրդական ալ-Մարվանիյա ցեղը գտնում է, որ սերվել է Օմայան զինաստիայի հայտնի զորահրամանատար Մարվան իրն ալ-Հաքամի (մահ. 680 թ.) սերնդից: Իսկ ալ-Հաքարիյա ցեղում ոմանք իրենց ծագումը նույնպես սերում են արարներէց<sup>58</sup>: Նման գատողութիւններ տեղ են գտել նաև Շարաֆ Կան Բիբիտի<sup>59</sup> (XVI դ.) և XIX դ. քուրդ հեղինակ Մելա Մահմուդ Բալազլի<sup>60</sup> աշխատութիւններում<sup>61</sup>:

Այսպիսով, շեշած, քրդերի արարական ծագման վարկածը բավականաչափ տարածվեց մահմեդական միջնադարում, այնուհանդերձ քրդերի էթնիկական ծագման պարզեման արարական աղբյուրներում մնաց վիճելի և չլուծված: Արար հեղինակների մի այլ խումբ՝ Իրն Կուբայրան, ամ-Քարարին, ադ-Գինավարին, Իրն ալ-Ասիրը, ադ-Դամայրին և այլք զինելով իրանական զիցարանութիւն և Սասանյան ավանդութիւն նյութերին, մատնացույց են անում քրդերի իրանական ծագումը: Առանձին հեղինակներ էլ տատանվել են և կրկնել Կախորդներին: Ուշագրավ է, որ ծագումով քուրդ Ալուբրյան զինաստիայի շառավիղներից մեկը՝ հայտնի պատմիչ Արու ալ-Ֆիդան այս խնդրում նս չի ծավալվել, որի աշխատութիւնում թուռցիկ ձևով տեղ են գտել միջնադարյան մի քանի կարծիքներ: Քրդերին նա մերթ համարել է պարսիկների մի էլուր, մերթ արար, որսեր, իբր թե հետո դարձել են Կարաթիներ: Հետևելով մեկ այլ ավանդութիւն՝ Արու ալ-Ֆիդան ընդգրծում է. «Ասում են, թե քրդերը աշամների արարներ են: այսինքն՝ իրանական քուրդներ<sup>62</sup>: Նույնանման տեղեկութիւններ է պարունակում Իրն ալ-Վարզիի աշխատութիւնը<sup>63</sup> և այլև Իր երկու աշխատութիւններում, ի մի բերելով քրդերի ծագման մասին արարական վարկածները, ալ-Մակրիզիի գրում է. «Սրանք ֆակիհների (իմաստուններ, գիտնականներ, օրենսդիրներ) ասածներն են քրդերի մասին, որոնցով երանք ձգտում են սիրաշահել նրանց (քրդերին,—Ա. Փ.), հենց որ իրենց է պատկանում իշխանութիւնը (քրդերին,—Ա. Փ.): Իրականում քրդերը մի ցեղ են աշամական (իրանական) ցեղերից...»<sup>64</sup>:

Նույնպես տեսնում ենք, արարական վարկածն իր զանազան տարրերակներով հերքվում է ալ-Մակրիզիի կողմից: Կրակելով նրա կարծիքը՝ հարկ ենք համարում ավելացնել, որ խնդրն առարկային վերաբերող նյութի պատշաճ մակարդակով հետազոտումը վկայում է այն մասին, որ, իրոք, չի կարող պատահել, որ այն առաջ քաշված լինէր քրդական միջավայրում: Դա հաստատում է այն հանգամանքը, որ վարկածը ար-

ձայնագրովն է նախ արարական աղբյուրներում և երկրորդը, ավելի կարևորը, մեզ ներկայացնող առհասարակը, ժազումնարանությունները պարզորոշ ցույց են տալիս, որ զբանք հազիվ թե վաղ միջնադարում ժանոթ լինեին քրդական ցեղերին: Բացի այդ, վկայակոչությունների շարադրանքից ցցուն ձևով նկատվում է արարական ողին և նրան բնորոշ մտածելակերպը: Մի փաստ, որ թույլ է տալիս ենթադրելու, որ վարկածը զուրկ է ճշմարտությունից և նրա տարբերակների անունները սուսկ մտացածին են:

Ի մի բերելով վերը նշվածը, կարելի է գալ որոշ եզրահանգումներին: Անկասկած քրդերը իբրև իրանալիզու ժողովուրդ սեմական ժողովուրդների հետ շունեն էթնիկական ընդհանրություններ: Այլ բան է, որ նրանք սեմական ժողովուրդների, մասնավորաբար, արաբների հետ ունենալով փոխադարձ շփումներ, հատկապես նախալմանական շրջանում, կրել են զբանց ազդեցությունը: Այլ խոսքով, քրդական առանձին ցեղերի արաբացումը և հակառակ երևույթը սկզբնավորվեց արաբական խալիֆայության ձևավորումից հետո և քուրդ-արաբական փոխհարաբերությունների նոր փուլի սաղմնավորման շրջանում: Սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ պատմական անժխտելի փաստ է, որ այս ընթացքում հենց քրդերի արաբացման պրոցեսն էր, որ անաղմուկ էր ընթանում, ավելի ինտենսիվ, քան հակառակը: Այդ պրոցեսը՝ քրդերի արաբացումը, համեմատաբար ավելի արագացավ մտավորապես X—XI դդ., երբ քրդերի կողմից մասսայական կերպով ընդունվեց իսլամը: Այս կապակցությունում արժե շեշտել աշխարհագիր Յակուբ ալ-Համավիի հետաքրքիր հիշատակությունը էրբիլի մասին, որտեղ պարզ գրում է, որ նրա բնակչությունը արաբացած քրդեր են<sup>65</sup>:

Ինչևէ, դարձյալ հարց է առաջանում, թե արարներին, այդուամենայնիվ, ի՞նչն էր մղում քրդերի արարական ժողովան վարկածն առաջ քաշելուն և մշակելուն:

Այս հարցի պատասխանը պետք է որոնել, մեր կարծիքով, այն պատմական գործընթացներին մեղ, որ ապրեց խալիֆայությունն իր գոյությունն երկար ու ձեռ գարեբի ընթացքում: Հայտնի է, որ Օմայան հարստության անկումից (750 թ.) հետո սկիզբ առավ խալիֆայության քայքայումը: Դրանով լայն թափ ստացան ժողովրդական շարժումները և ֆեոդալական երկպառակությունները: Արբաբյան արքունիք և նրա վարչական մարմիններ սկզբից էլ արագորեն ներթափանցեց պարսկական աարըրը, որը վարելով խալիֆայության ներքին ու արտաքին քաղաքականությունը՝ նոր լիցք էր հազարդում իրանական մո-

զովուրդների գործողութիւններին: Հասարակական-քաղաքական կյանքում յայնորոն կիրառվեցին Սասանյան իրանի վարչական միջոցառումները, հետզհետե ասպարեզից դուրս էին մղվում Օմայան պետութիւն կարգերը: Պատահական չէ, որ VIII—IX դդ. արաբ հեղինակ ալ-Զահաբը, գրում էր, որ Օմայան պետութիւնը արաբական էր, իսկ Արաբասյանը՝ իրանական<sup>20</sup>:

IX—X դդ. խալիֆայութիւնը ղեկավար մարմիններում նկատելի դարձավ նաև թյուրքական տարրի գործունեութիւնը<sup>21</sup>, Իսկ X դ. 40-ական թթ. (945 թ.), երբ պարսիկ Քուինները (իսկ հետո նաև սելջուկները) գրավեցին Բաղդադը և ամբողջ արաբական իրաքը, Արաբասյան խալիֆաները զրկվեցին աշխարհիկ իշխանութիւնից, պահպանելով լսկ հոգևոր իշխանութիւնը: Դրանով խալիֆայութիւնը որպես պետական մարմին փաստորեն կորցրեց իր գոյութիւնը<sup>22</sup>, Փաղաքական ա՛նա այս րտան իրագործութիւնները նպաստավոր պայմաններ էին ստեղծում քրդական տարրի ակտիվացման համար:

Արաբական սկզբնաղբյուրների նյութերը ցույց են տալիս, որ հատկապես այս խառը ժամանակաշրջանում քրդերը աչքի էին ընկնում անհնազանդութիւնը և որոշ շրջաններում վերջ էին տվել արքունիքին ու տեղական կառավարութիւններին արվելիք հարկերին<sup>23</sup>: Հաճանաբար այս հանգամանքները ևս երկրորդական գեր շնն խաղացել քրդերին սիրաշահելու, երանց՝ արաբների հետ կույնացնելու շանքերի մէջ: Ի դեպ, պատահական չպետք է համարել նաև այն, որ քրդերի ծագումը որոշ ժամանակահատվածում սերվում էր հատկապես արաբ Ռաբիաա, Մուզդար և Բաքր ցեղերից:

Արաբասյան հարստութիւն տիրապետութիւն շրջանում այդ ցեղային խոշոր միավորումների անունով էին կոչվում Զազիրայի (Վերին Միջագետք) երեք ստորարածանումները՝ Դիյար Ռաբիաա, Դիյար Մուզդար և Դիյար Բաքր<sup>24</sup>, որոնք էլ, մեր կարծիքով, կարելի է համարել քրդերի արաբական ծագման վարկածի միջավայրը:

Այստեղ, հատկապես, Դիյար Ռաբիաայում, արաբների հիմնական մրցակիցներն էին քրդերը: Մեզ հասած տվյալները վկայում են, որ երկու կողմերի փոխհարաբերութիւնները զլխավորապես պայմանավորված էին նրանց անասնապահական զբաղմունքով և զրա հետ կապված տեղաշարժերով: Նկարագրելով արաբ Շայրանի ցեղային միութիւն զբաղեցրած տարածքը Դիյար Բաքրում, Հասան ալ-Համադանին (X դ.) ընդգծում է, որ Քուր Արդինից զնպի հորասանի ևահանգը Շայրանցիների հետ կողք-կողքի բնակվում էին միայն քրդ-

դերը<sup>71</sup>։ Ապա Մուսուլի մարզում արարական Ռաբիաա և Մուզգար  
 ցեղային միութունների հետ միասին քրդական ալ-Հաքարիյա, ալ-  
 Հումայդիյա, ալ-Ջալալիյա և ալ-Լազիյա ցեղերը ունեին անասնա-  
 պահական ձեռնարկներ և ամառանոցներ<sup>72</sup>։ Իսկ երկու Ջաբերի միջև  
 ընկած արտաավայրերում և հովիտներում Իբն Հաուկայի վկայությամբ  
 ձմեռում էր քրդական ալ-Հազրանիյա խոշոր ցեղային միութունը,  
 որից հետո այստեղ ամառն էր անցկացնում արաբ Եայրանի ցեղը<sup>73</sup>։  
 Տեսեսական այս կացութանը, անասնապահությունը, ինչպես նշվեց,  
 հարկադրում էր երկու կողմերին լայն շփումներ ունենալ, որը հաճախ  
 ուղեկցվում էր արյունահեղ հակամարտություններով։ Ուստի քրդերի  
 առաջացումը արաբական Ռաբիաա, Մուզգար և Բաքր ցեղային միու-  
 թյունից ոչ միայն կմեղմացներ երկու կողմերի հակասությունները, այլև  
 քրդական միջավայրում կմեծացներ իսլամ տարածողների ռազմա-  
 քաղաքական և տեսեսական կշիռը։ Ուշագրավ է այս առթիվ կրկին  
 նշել ալ-Մասուդու այն վկայությունը, որ ամենատարածված և ամե-  
 նաճշմարիտ տեսակետը քրդերի ծագման մասին այն է, որ նրանք  
 Ռաբիաա իրն Նիզարից են<sup>74</sup>։ Ակնհայտ է, որ այս ցեղային միության  
 տեսլեր կրող Մասուլ կենտրոնով (Դիյար Ռաբիաա) շրջանում բնակ-  
 վում էին հիմնականում քրդերը։ Այս փաստը զարեյալ հաստատում է,  
 որ արաբական վարկածը պատահական բնույթ չի կրել և նրա առաջ  
 քաշումը ամուր հիմքեր էր ստեղծում քրդական անհնազանդ ցեղերի  
 մեջ իսլամի տարածման և խալիֆայության տարբեր մասերում նրանց  
 արարական ռազմական գործողությունների մեջ ներգրավելու համար։ Այլ  
 խոսքով, քրդերի արաբական ծագման վարկածի մշակումը և գոյատևումը  
 վերջին հաշվով բխում էր խալիֆայության ներքին ու արտաքին քա-  
 ղաքականությունից և իսլամի այսպես կոչված բնահանգանակների  
 եզրայրությունն սկզբունքներից։ Այն արտացոլում էր նվաճած եր-  
 կրքերի ժողովուրդներին միաձուլելու ուղղությամբ արաբների գործա-  
 դրած ջանքերը<sup>75</sup>։ Այս կապակցությամբ ի միջի այլոց հետաքրքիր է  
 ընդգծել, որ արաբ ծագումնաբանները աստվածաշնչային նյութերով  
 փորձեր են կատարել, որինակի համար, ցույց տալու Կասպից ծովի  
 առափնյա բնակիչների իրանական զայյամների արաբական<sup>76</sup>, իսկ  
 հաճախ այլ ժողովուրդների, դրանց թվում նաև պարսիկների սեմական  
 ծագումը<sup>77</sup>։

Ինչ վերաբերվում է քրդերի մեջ վարկածի արձագանքներին, ապա  
 դա կապված է քրդական վերնախավի մի մասի կեցվածքի հետ։ Արա-  
 բական ծագումը, նախնավանդ այդ առաջարկում էին իսլամ տարա-

ժողները, կոչված էր նպատակու թուրգ վերնախավի քաղաքական և  
տնտեսական գիրքերի ամբողջականը: Այլ խոսքով, մեականորեն ըն-  
դունելով արաբական ժաղումը, երբեմն նաև իսլամը, խալիֆայության  
հզնաժամային սուր փուլերում քրդական վերնախավը ստանում էր  
տնտեսական և քաղաքական որոշակի անկախություն: Քրդերի արա-  
բական ժաղման վարկածը կոչված էր մեկ ընդհանուր հունի մեջ գնել  
այս ժողովրդի շանքերը հանուն խալիֆայության շահերի, որը մահմե-  
դականության առկայության զուգընթաց բացասական հետքեր թողնոյ  
թուրգ ժողովրդի հասարակական-պատմական զարգացման բնական  
ընթացքի վրա:

А. П. ПОЛАДЯН

К ВОПРОСУ О СРЕДНЕВЕКОВОЙ ВЕРСИИ  
АРАБСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ КУРДОВ  
(по арабским источникам)

Резюме

Для написания настоящей статьи были использованы сообще-  
ния арабских и арабоязычных авторов VIII—XV вв. Большая  
часть этих материалов вводится в научный оборот впервые. Ис-  
следование указанных сообщений позволяет автору прийти к  
выводу о том, что версия об арабском происхождении курдов  
имела тенденциозный характер и преследовала определенные  
цели. В статье выявляются причины возникновения и распро-  
странения этой версии, которая, по мнению автора, возникла в  
среде господствующего народа—арабов во время правления Аб-  
басидов, а затем, в какой-то степени, нашла свое отражение и  
отклик среди верхушки курдов. Цель этой версии—оправдать  
господство арабов и способствовать его сохранению и распро-  
странению. Эта версия в какой-то степени способствовала также,  
распространению ислама среди курдов и была использована для  
их вовлечения в вооруженные силы халифата.





- 26 الاكراد ينسبون الى كرد بن مرد بن عمرو بن صعصعة بن معاوية بن بكر بن هوازن. وقيل هم من ولد عمرو مزيقياة بن عامر ماء السباع. وقيل من بنى حميد بن طارق تراجع الى حميد بن زهير بن العاص بن اسد بن عبد العزى بن قصي بن كلاب... اسقرزى، كتاب اسلوک لمعرفة دول الملوك، ج ١، القسم الاول، القاهرة، ١٩٣٤، ص ٣٠.
- 27 اسقرزى، كتاب المواضع والاعتبار بذكر الخط والاثار، ج ٢، مصر، ١٩٧٠، ص ٣٣٢.
- 28 Al-Istakhri, *Viae Regnorum*,—BGA\*, Lugd. Bat. Apud E. J. Brill 1870, p. 114 (*Wjwaxafak Al-Istakhri*).
- 29 Ibn Haukal, p. 187, 221:
- 30 Al-Idrisi, v. IV, p. 419:
- 31 التبريدى، ترميع المفلوب فى ذكر الملوك بنى ايوب، دمشق، ١٩٦٩، ص ٣٦، ٤٤، ٤٤٤، ٤٤٤٤.
- 32 ابن خلکان، وفيات الاميان، ج ٢، مصر، ١٩٦٩، ص ١٩٤-١٩٥.
- 33 ابن منظور، لسان العرب، ج ٢، مصر، ١٣٠٠، ص ٣٨٢.
- 34 ابن النوري، تاريخ، ج ١، مصر، ١٢٥٨، ص ٧٢.
- 35 Abul Fedae, *History antelamita Arabica*, 1831, p. 150.
- 36 ابن خلدون، كتاب العبر وديوان المبتداه والخبر، ج ٢، مصر، ١٩٤٤، ص ٣٠٠.
- 37 ابن العنقبى، در العقب فى تاريخ اميان حلب، ج ١، القسم الثانى، دمشق، ١٩٧٣، ص ١٥١٥-١٥١٦.
- 38 Ed-Dimichqui, p. 247 - 255:
- 39 التبريدى، القاموس المحيط، ج ١، مصر، ١٩٢١، ص ٣٦٠.
- 40 Ibn Batoutah, *Voyages*, t. II, Paris, 1854, p. 22:
- 41 لعمر ك ما كرد من ابناء فارس ولكنه كرد بن عمرو بن عامر... ابن خلکان، ص ٤٤٠.
- 42 وفيات الاميان، ج ٢، ص ١٩٥، ابن منظور، لسان العرب، ج ٢، ص ٣٨٢.
- 43 المسعودى، مروج الذهب ومعادن الجواهر، ج ٢، بيروت، ١٩٦٦، ص ٢٢٩.
- 44 ابن خلدون، ص ٤٤٤٤.
- 45 فاما لجناس الاكراد وانواعهم فقد تنازع الناس فى... 221-249، ص ٤٤٤٤.
- 46 بدلتهم: فمتهم من رأى انهم من ربيعة بن نزار بن معد بن عدنان من بكر بن وائل... ومن الناس من رأى انهم من مضر بن نزار وانهم من ولد كرد بن مرد بن صعصعة بن هوازن... ومنهم من رأى انهم من ربيعة ومضر... وما قلنا فى الاكراد فالاشهر عند الناس والاصح فى الساجم انهم من ربيعة بن نزار....
- 47 ابن حزم، جمهرة انساب العرب، القاهرة، ١٩٧٢، ص ٧-١١.
- 48 K. Z. Bizort, *Musulmanische dynastien*, M., 1971, z. 94-98; Cl. Cahen, *Ayyubids*,—The Enc. of Islam\* v. I, London, 1960, p. 796-807; معجم الانساب والامرات الحاكمة فى التاريخ الاسلامى، القاهرة، ١٩٥١، ص ١٥٠-١٥١.
- 49 Արարիկն սփրեւորարկերով եղած նշանքը վերաւ ձեւ որ Արարիկն առ- ճանաչող եղել է առաջին արարիկը, որի նախահայրը՝ Եսայն Պէրիկը (Հարսու- սանիկ) յճկեցի է Բարսղ. արեւելեան Քրիստոս, որ և սփրեւորակ է երա-

հանրագրերի գործունեությունը: Այսպիսիները արարական ծագման անընդ  
 դանազան կաթմբներ, որոնք յնչպես կասկածելի են համարվել, ամենաբարձր  
 կրկնել են շատ նկրկաններ: Այնուամենայնիվ պետք է ասել, որ նրանց ամենից  
 սուղը բնագծով են միջնագարում գերիշխող անսակման՝ նրանց թուրք լինելու  
 մասին, ապա այնպիսի անկրկնություններով նրանց ծագումը կապել են արարական  
 այս կամ այն զեղծ է կայմիսի նման խաղիքաների հետ: Այսու նկրկանները  
 հազարամյակներ շուրջ են ապրել, որ Այսպիսի ասաններ իրենաներ ետևելու  
 չեն միայն իրենց արարական ծագումը: Գեա ամենի, նրանց իր հայաստանի են,  
 որ հանգամանքների շնորհիվ պարզապես ապրել են ջրգերի մեջ է ինամիական  
 կապեր են հաստատել նրանց հետ: Իհարկե Այսպիսիները արարական ծագումից  
 չհրամարվելը ընտել գործունե չի առաջացնում, որովհետև զու հնարավորություն  
 էր ապրել նրանց մահմեդական աշխարհում ջնջումից: Իրենց սուղմաշխարհա-  
 կան գործունեությունը: Ե՛ն

ابن تغرى بردى، انجوز، زاهره، قمر ملوك مصر، 56  
 وناهاره، ج 16، قاهره، 1936، ص 123، ابن خلدون، وفيما بين الايام، ج 2،  
 ص 190، الحنبلي، شفاة القلوب في مناقب بني ايوغ، بغداد، 1978، ص 23-24،  
 الزبيدي، ترويح القلوب، ص 136، مقريزي، كتاب اسنوك، ج 1، القسمة الاولى،  
 ص 142، ابن واصل، اجازة، ص 100، مفرج الكروان في ذللة بني ايوغ، ج 1، ص 100-101  
 արարական ազդեցությունների նյութիկերի ոչ բազմակիզման է թերի սամանասրու-  
 թյունը թուրք է ամենի մամանակակից որոշ արար պատմաբանների արար համեմ  
 թելու ոչ միայն Այսպիսի անհաստիան, այլև նրանց ջեղձ՝ սուղմաշ ջրգերին: Ե՛ն

تاجي معروف، عروبة العلماء، المستوفين الى البلدان الافريقية في بلاد الروم  
 وجزيرة وشهر زور والزامجان، ج 3، بغداد، 1978، ص 16-17

30 ed-Dimichqi, 56. \* الحاطمي سميل العرب وتغرى اهل اليمن وايدى سبأ، p. 255.

40 A Mikalser, Historie islama, t. I, СПб. 1895, c. 27-28.

41 A. E. Bejaeva, նշված աշխ., էջ 62.

42 նույն տեղում:

43 A. Mikalser, նշված աշխ., էջ 29.

44 շեքանա անվանումն ունի մի քանի իմաստներ: Ավելանական շրջանում արարները  
 աչում սակայն ի նկատի ունենն ոչ արարաբնու (ոչ արար) ժողովուրդներին,  
 հասնապես իրանցիկներին, իսկ «Թիլուց ալ-աշամա» — بلاد العرب (աշամների  
 երկիր) անելով հասնանում էին նրանց:

45 «Նարուս բառացի նշանակում է պարսիկներ, ինչպես նաև որոշ կենսագետներ  
 իրանցր:

46 المسعودي، مروج الذهب، ج 2، ص 249

47 հաստատելների ջրհոսանքա արարական ջեղը ծագումով նմանից է: Իշխել է մի-  
 լիստում, Պահաստիանում: Այս ջեղը գոյություն է մինչև իսլամի երևան գալը:  
 VII Գ:

48 المسعودي، مروج الذهب، ج 2، ص 249

49 նույն տեղում:

50 Al-Masudi, Kitab al-Tarikh wal-Ishraf, —, BGA\*, t. VII, Lugd. Bat. Abud,  
 E. J. Brill, 1894, p. 89 (այսուհետև Al-Masudi).

51 Н. Ф. Пугачевская, Арабы у границ Византии и Ирана в IV—VI вв., М.—Л., 1964, с. 22.

52 كارل بروكلمان، تاريخ الشعوب الإسلامية، بيروت، 1973، ج 1، ص 27

53 Н. Ф. Пугачевская, *ibid.*, *ibid.*, *ibid.*, 28.

54 Ibn Hikal, p. 121.

55 Al-Istakhrī, p. 114.

56 المسعودی، مروج الذهب، ج 2، ص 101

57 وقد ذهب قوم من متأخري الأكراد ولؤي الدرأية منهم من شاهدناهم فيما ذكرنا من البلاد إلى أنهم من ولد كرد بن مرد بن صعصعة بن حرب بن هوازن. ومنهم من يرى أنهم من سبيع بن هوازن... ومن الأكراد من يذهب أنهم من ربيعة ثم من بكر بن وائل... — Al-Masudi, p. 86.

58 المسعودی، كتاب المواضع، ج 2، ص 127—128، المقريزي، ك السلوك، ج 1/1، ص 3

59 Шараф-хан Бндинги, Шараф-наме, т. I, М., 1967, с. 83, 152, 167, 175, 220, 232, 290, 313, 357, ...

60 М. М. Везикян, Ираны и обычаи курдов, М., 1963, с. 9—10. *Տճ՝ս քննարկը էջ 202.*

61 Այս կարգի պեղումները, ինչպես նշում է Վ. Մինորսկին, շարունակում են ըստ գոյատևելի քրդական որսը շնչկրում և հասկապես նրանց զննարար ընտանիքներում: *Տճ՝ս В. Ф. Минорский, Заметки и впечатления, СПб., 1915, с. 14* Քրդերի ապարանի ծագման վերինը, որքան էլ տարբերված է, ապրումում գտած նաև քուրդ ծագվածի տարազան հասվածները մեկը՝ եզրկական հասվածներում: Չարեր ի վեր կրեական համարվածների հոգի վրա թշնամարտ որոնազրկում լինելով մահմեդականությանը և մահմեդական ծագվածներին, զրանց թվում քուրդ մահմեդական հասվածին, եզրկերի մեջ շարունակում է գոյատևել այն միտքը, որ իրենք ծագումով որսը Սմալյան առևճի խաղիվածները են Սմալյանների և նրանց տարբեր կուրդերի ու միջնադարյան որսը այլևայլ քուրդախաղիված ընտանիքների հետ են կապում իրենց ծագումը նշելի հանդերձան իշխող գրեթե ոչինչ քրդերի և Սմալյան խաղիվածների ազգակցական կուրդ որսաբերվել է նաև եզրկական սկառեմենն առաջ (սև մառյան) տարբեր գրեթե: *Տճ՝ս*

مسماعل بك چول، الميزيدية، قديما وحديثا، بيروت، ص 13-14، سعيد اندلوجيس، الميزيدية، بغداد، 1973، ص 10-11، 14، 15، صديق السلولجيس، الميزيدية، الموصل، 1979، ص 3-3...

62 Abul Fedae, p. 150.

63 ابن الوردي، تاريخ، ج 1، ص 11

64 المسعودی، كتاب الاعتبار، ج 2، ص 272

65 ياقوت الحموي، معجم البلدان، ج 1، بيروت، 1920، ص 138

66 الجاحظ، البيان والتبيين، ج 2، بغداد، 1970، ص 14

67 К. Э. Босворт, Нашествия зарирров: половецкие тюрки в мусульманском мире: — «Мусульманский мир 950—1150», М., 1981, с.20—33. *Տճ՝ս նաև*

كارل بروكلمان، تاريخ الشعوب الإسلامية، ص 245-247

- 68 М. Петрушевский, Развитие феодального общества в Иране (X—нач. XIII вв.) — «История Ирана», М., 1977, с. 134.
- 69 Вторая залюка Абу Дулафа, М., 1960, с. 18.
- 70 „The Enc. of Islam“ v. II, London 1962, р. 243—249; Հազրան, որ-  
անց, ինչպես եղին, արարական ցեղերը հաստատվել էին նախափառական  
չրքանում և արար աշխարհագրիները այն բանում էին երեք տարաների-  
մանում իր խաղիկությունը հյուսիսային փոխարքայության հազմի մեջ, Արց  
փոխարքայությանը չհաղթում իր Արմինյան (Հայաստան, Վիրջ, Ազգանց, Միր-  
վան, Գարսնայ), Արարատափեր, Վերին Միջագետքը և Փոքր Ասիայի սա-  
մանները շրջանները, Ամրող Հազրանի մայրաքաղաքը իր Մասուլը Արար-  
յանները որք այն բանակից փախչանք երկու բանակներին՝ Մասուլ (ալ-  
Մասուլի) և Հազրան Տէ՛ս Ա. Յե-Ղուղյան, Արարական խաղիկությունը հյու-  
սիսային փոխարքայությանը.—Միհրազուր և Միջին Արևելքի երկրներ և ժող-  
գույրները, 3, արարական երկրներ, Ծրան, 1967 թ., էջ 164: Տէ՛ս նաև Կրտսե-  
րու և արաբական լատինագրեր, Երևան, 1977, с. 152:
- Արարական նվաճումներից սկսած զեպի այս տարանքը սկսվեցին արարական  
ցեղերի նոր արտագաղթերը նրանցից մի մասը Ծմար խաղիկության որք (K24—  
544 թթ), ախալզուրեն մասնակցություն հանդես բերեց նվաճումներին, Հազրա-  
յան արարական ցեղերի քաղաքական ու անտեսական կշիռը մեծացավ Ծմարան-  
ների որք, իր ցեղայիններին հազմից սկսվեց Միջագետքի գաղութացումը:
- 71 حسن الممذاني، وصف جزيرة العرب، «الغمامة» ١٩٧٢، ج ٢، ص ١٠٣
- 72 Ibn Hukal, p. 114:
- 73 նույն տեղում, էջ 150:
- 74 المسعودي، مروج الذهب، ج ٢، ص ٢٠١
- 75 նման երևույթ նկատվում է նաև մեր սրբույթում, Իր նաուկից մեկում մամուկին  
Իրարի պոնդիգեկու Արց ալ-Մարիմ Նասիմը բացնիքայ Հայաստանության է ու-  
րիկ բրգերի և արարների նույն ժազման մասին Տէ՛ս المصنف الممذاني، مروج الذهب، ج ٢، ص ٢٠١
- 76 Ed-Dimichqi, p. 254—255:
- 77 նույն տեղում:

ԲԱՆԱՍԻՐՈՒՅՑՈՒՆ

Տ. Ս. ԱՍԱՏՐԱՆ

ՀՈՊԱԿԻԱԿԵՐՏ -gal ՎԵՐՋԱՄԱՆՑԸ ԽՐԱՆԱԿԱՆ ԼԵՂՈՒՆԵՐՈՒՄ

1. Միջին և նոր արևմտաօրենական լեզուներում, ինչպես հայտնի է, անվան հոգնակի մեկ կազմութիւնը հանգում է հիմնականում հին իրան. սեռական հոգնակի\*—նոն և վերացական անուններ կազմող \*—լյա—նա—վերջավորութիւններին. որոնք համապատասխանորեն տվել են—նո/—նո և՛ (l/i)hա՛. Մրանց հետ միասին, սակայն, որոշ նոր բարբառներ ի հայտ են բերում հոգնակի կազմութիւն նոր միջոցներ. որոնցից է, մասնավորապես—gal(—yal, al և —el տարբերակներով) վերջածանցը. որը հանդիպում է հիմնականում շնչավոր առարկաներ ցույց տվող անունների հետ՝. Այն սարածված է զլիսավորապես Իրանի կենտրոնական բարբառներում, ֆարսում, Զեֆրում (Իսֆահանից հյուսիս-արևմուտք). ինչպես նաև հյուսիս արևմտյան Միջագետքի բարբառում, գուրանիում, քրդական հարավային բարբառներում և բելուչերենում՝. Հիշյալ տծանցը՝ որպես հոգնակի կազմութիւն մեկուկի, լայն սարածում ունի նաև լուրտական խոսվածքներում (բախարի և ալլն)։ Այն բարբառներում, որտեղ հանդես է գալիս այս անանցը, որպես օրենք, նրան զուգահեռ միջա օգտագործվում են նաև վերջում նշված հոգնակիակներս միջոցները՝—նո/—նո, ն(⟨նա)։ Այս երկուկի պատճառը հավանաբար այն է, որ սկզբնապես այն արտահայտել է հավաքականութիւն իմաստ, որը զեռն կենդանի է օրինակ, հարավային քրդական Սուլեյմանիյի բարբառում, հմմ. gā'yaլ' gāgal 'խոշոր եղջերավոր անասունների հոտ', մե 'ոչխար' megal 'ոչխարների հոտ' և ալլն՝ հմմ. նաև մուկրիում՝ kuřgal 'տղաներ' (kuř 'տղա'), barxegal/barxal 'գառներ' (barx 'գառ'՝)։ Մինալի բարբառում՝ گال 'մարդիկ', گالان Թշնամիներ, گالان աղջիկներ և ալլն՝ հետաքրքրու-

կան է այն փաստը, որ ընտանիքը քրոնիկոսի հյուսիսային կուրմանջի բար-  
բառներում այս ձևալիքը գոյություն չունի, այնուհանդերձ կարելի է  
նշել մի որինակ՝ sayai 'չներ' (հմմ. So—sayalē xwa hilda hāt jam  
ma) ժ/բ անդրիններին (բա. ըներին) հազաքեց կիպ մեզ մոտ, bāvē  
min... sayai čar: aliya dīda sakinandinē շալրա ըներին կանգնեցնում  
էր շորս բոլորը: Դուրանիում, ինչպես նաև բելուչերենում, այս  
ածանցը ունի բազմապիսի սահմանափակ կիրառություն, կանգույնի  
բարբառում (պարանի)՝ isfabūnyal 'խֆահանցիներ', բելուչերենում՝  
Jangal 'կանալք', malel 'աներ' և այլն<sup>9</sup>: Ինչպես սովեց, —gal ածանցը  
չայն առարժում ունի նաև լուրական խոսվածքներում, հմմ. որինակ,  
Մեծ լուրերի խոսվածքում՝ zangal 'կանալք', hōnaya! 'աներ', 300iyal  
'մարդիկ', aspal 'միեր', sarel 'զլախներ' և այլն<sup>10</sup>: Բախտարի և մա-  
մասանի խոսվածքներում՝ girzayal 'սոնեաներ', xargal 'սովանակներ',  
sagal 'չներ', hōnaya! 'աներ' և այլն<sup>10</sup>: Լուրի բարբառում այս ածան-  
ցով կազմում են նաև ցուցական գերանունների հոգնակի ձևերը՝ I(n)  
այս, īngal 'որանք' ũ(n) 'այն', ũngal 'նրանք': —gal ածանցով հոգ-  
նակի կազմությունները լուրիում երբեմն ստանում են նաև կրկնակի  
հոգնակիություն՝ —ūn ցուցիչով՝ korgal/korgalūn 'աղաներ' zīngal/zīn-  
galūn 'կանալք', bərgal/bərgalūn սովանակներ (հմմ. korgalūnə nūn  
bədūn 'աղաներին հաց օվնք')<sup>11</sup>: Հմմ. նաև Չեֆրեի բարբառում (-gel  
ձևով) pūr-gel-ō 'աղաներ', esser—gel—ō 'աստղեր' և այլն<sup>12</sup>:

Մեզրո առարկա ածանցը -galā ձևով (բազմապիսի սահմանափակ  
կիրառով) հանդես է գալիս նաև պամիրյան լեզուներում՝ շուգնաներե-  
նում, սուչաներենում, բարթանդերենում, հմմ. սուչ. šowgalā 'կովեր',  
wīšēgalā 'թռչուններ',<sup>13</sup>bačgalā երեխաներ<sup>14</sup>:

Ինչպես կարելի է նկատել, -gal ով հոգնակի կազմությունները  
հիմնականում առարժում են Իրանի կենտրոնական և հյուսիս-արևմա-  
յան շրջաններում: Այս արեալից է այն, հարևանարև. թափանջի այլ  
բարբառային շրջաններ:

2. Սկսած Թ. Յուստիի հայտնի աշխատությունից, հետազոտող-  
ները համամիտ են այն կարծիքի հետ, որ հիշյալ ձևալիքը ժազումով  
նույնն է՝ Իրանական լեզուներում առբեր իմաստային երանգներ ու-  
նեցող gal լեզուների հետ, հմմ. քրդերենում՝ gal 'հետ, միասին', (-ak  
ածանցի հետ՝ galak 'շատ'), կենտրոնական բարբառներում և պարսկե-  
րենում՝ galah 'հատ' և այլն<sup>15</sup>: Պարմանջիում -gal ձևալիքը կազմում  
է նաև gali կոչական մասնիկը (հմմ. gali mirovān 'օ՝ մարդիկ')<sup>16</sup>: Այս

բառը ծագում է հին իրանական \*garda-/grda- ձևից, որը ազանդված է հին պարսկերենում (հմմ. արամեերենում գրաված grd')<sup>11</sup>:

Այս լեզուների՝ որպես հոգնակիակերպ ձևույթ հանդես գալու համար տիպարական օրինակ կարող է ծառայել պամիրյան սարիկուրեն, շուգնաներեն և սուշաներեն լեզուներում հոգնակի կազմաթյուն մի ձև, որը հանդում է պարսկա-արաբական xw[il] 'ազմաթյուն' բառին և որը նույնպես որտապրոծվում է որպես հոգնակիակերպ ձևույթ. հմմ. sowōrxēl 'հեծյալներ', xw[il]čx[il] 'ազաներ' և այլն<sup>12</sup>:

Г. С. АСАТЯН

## СУФФИКС МНОЖЕСТВЕННОГО ЧИСЛА—GAL В ИРАНСКИХ ЯЗЫКАХ

### Резюме

Как известно, в средне- и новозападноиранских языках суффиксы, образующие мн. число имени, восходят главным образом к др.—иран. окончанию родительного надежа мн. числа \*—ānām (даншему ān/—ān) и к др.—иран. форманту, образующему абстрактные имена, \*—īya—īwa- (даншему (i/i)hā). Однако, наряду с этими, в новозападноиранских языках встречаются новообразования, среди которых можно отметить суффикс -gal, который встречается в основном в диалектах Центрального Ирана, в гурани, в южнокурдских диалектах, в лурском и—в ограниченной степени—в белуджском. Употребление этого суффикса для образования мн. числа отмечено спорадически и для восточноиранских диалектов (памирских). Главным центром распространения указанного суффикса, однако, является Центральный Иран. Суффикс -gal восходит к имеющей различные семантические оттенки в иранских языках лексеме gal (ср. в курдском: gal «вместе», galak «много», gal «люди» (вокативная частица), в персидском: galah «стадо» и т. п.). Это слово восходит к др. иран. \*gard-/grda- (ср. арам. grd').



- 1 Յ՛՝ R. Gauthiot. Du pluriel persan en-hâ.—MSL., t. 20, f. 2, p. 73—75—  
Այս արհեստը, բացառաբան են կազմում մասնագրություն, քրդերենի էություն-  
ային բարբառները, որոնք թվի ընթացման վարքը որոշակաբան է  
միայն թեք նշարի ներքին է իզաֆեռային բառակազմության մեջ է կազ-  
մում է սեռի կասեգորիայի նկատմամբ։ Ուղիք նշարում թվի վարքը որոշակաբան է  
է բայ-ստորոգյալի միջոցով նմ. xort hâi 'երկուսուսուրը նկատմամբ է' xort hatin  
'երկուսուսուրը նկատմամբ'։ min martiv îhnd/-in ku darg/-îk ուղարկեցի եղև  
կարմանիին էություն արհեստը բարբառներում իզաֆեռային բառակազմ-  
ության նկատմամբ ենունների կազմում կազմության նամար նարն է գայի-ծ  
վերջագրությունը, որի նպատակը շարք պարզորոշ արդյունք էլ է նմ. այս  
նկատմամբ ստուգաբանության մի փորձ՝ P. Л. Цаболов, Очерк исторической  
морфологии курдского языка. М., 1978, էջ 9, ըստ որի —ծ-ը ստուգանք է  
այսպես կոչված շարակազմական մակարդակում նկատմամբի միանունների՝  
-en (< -ân)-ի միջոցով, որը էություն արհեստը բարբառներում արդյունք է —ծ  
թվի կազմանիին էություն արհեստը բարբառներում —en:
- 2 G. Morgenstierne, Neu-iranische Sprachen.—HbO. Iranistik, Erster Abach  
mit. Leiden-Köln, 1958, S. 199.
- 3 R. Gauthiot, Op. cit., p. 73. iranische Dialektzeichnungen aus den Nach-  
lass von F. C. Andrius. Berlin, 1939, S. 172—176.
- 4 Յ՛՝ D. N. Mackenzie, Kurdish Dialect Studies. I, London, 1961. §177, n. 1,  
p. 24.
- 5 К. Р. Эюби, И. А. Смигноза, Курдский диалект Мукри. Ленинград, 1968  
с. 21.
- 6 F. Justi, Kurdische Grammatik. SPb, 1880, S. 123—124.
- 7 Թեք սեռական գրությունները, է՝ արձ Մամուզ, Երևան, 1969  
էջ 80.
- 8 R. Gauthiot, Op. cit., էջ 78. O. Mann, K. Hadank, Kurdisch-perstische Fors-  
chungen. Bd 2, Abt. III, Berlin, 1900, s. 104. տե՛ս նաև ներքին, մասն-  
գրություն, ման. Ն յ Յ՛՝ նաև՝ W. Geiger, Etymologie des Balûçî. Mün-  
chen, 1890, S. 17.
- 9 O. Mann, Kurze Skizze der Luridialekte.—SPAW, 39, 1904, S. 1181.
- 10 А. А. Керимова, Лурские и бактиярские диалекты. Основы Иранского  
языкознания. Новороссийские языки. М., 1962, с. 293—294.
- 11 Թեք գրությունները
- 12 W. Geiger, Kleinere Dialekte und Dialektgruppen.—GIPh, 1 Bd, 2 Abt.  
Strassburg, 1898—1901. էջ 290; նմ. նաև՝ Очерк историко-типологического  
исследования иранских языков, т. II, Москва, 1975, էջ 270—271.
- 13 Օսիտ..., էջ 237.
- 14 W. Geiger, Op. cit., էջ 274.
- 15 է՛՛. F. Justi, Op. cit., S. 124. E. Wilhelm. La Langue des Kurdes.—Le  
Muséon, 1863, էջ 490; J. Darmasteter, Études iraniennes II. Paris, 1883,  
էջ 21; R. Gauthiot, Op. cit., էջ 72.
- 16 D]. Bedir Khan, R. Lescot. Grammaire Kurde (Dialecte Kurmandji). Paris,  
1970, p. 98.

- 17 *Šk's dšhpndmš* H. S. Nyberg, A Manual of Pahlavi II, Wiesbaden, 1974, p. 80. Geo Widengren, Henrik Samuel Nyberg and Iranian Studies.—Acta Iranica-5, Leiden, 1975, p. 438—439.
- 18 *Šk's dšhpndmš* Т. Н. Пахалова, Памирские языки. Москва, 1969, с. 22; *Id.*, *ibid.* R. Gauthiot, Op. cit. p. 73.

ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ  
 ՊԱՐՄԻ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ  
 (70-ական թթ.)

Գյուղացիության հարցը, նրանց հոգի վիշտը, միշտ էլ եղել է Իրանի սոցիալական կյանքի ամենացածր կողմերից մեկը: Պարսիկ գրողները միշտ էլ անդրադարձել են այդ թեմային, սակայն նրանցից շատերը սահմանափակվել են սոցիալական վերնախավերին դաստիարակելու, նրանց վերափոխելու լիբերալ բարոյականությունը: Գասական գրականությունից եկող այդ դիրքորոշումը, կարելի է ասել, մինչև այժմ էլ կաշկանդված է պահում պարսիկ հեղինակներից շատերին՝ զրկելով նրանց կյանքի բազմակողմանի և ճիշտ մեկնարանման հնարավորությունից:

Նրանց երկերի գաղափարական հերոսները, հաճախ, խեղճ ու կրակ մարդիկ են, տարիներ շարունակ քարի ու քույի հետ կռիվ բռնող տաժանակիրներ, աղելով ու արդար, սակայն ոչ ուժեղ և ընդդիմացող, ոչ էլ բժրասու ու պայքարող: Նրանց երկերում պակասում էր գրողի հայեցողությունը: Հեղինակներն իրենց հերոսների մարդկայնությունը չէին հակադրում նրանց սոցիալական եկարագրին, այլ մարդը և մարդկայինը հակադրում էին հասարակական շար ուժերին:

70-ական թվականների պարսկական զեղարվեստական գրականությունը ժառանգեց քննադատական սեպիլիմին հարած վարպետներ՝ Զամալ-զազեի, Մադեզ Հեդայաթի, Բողոբզ Ալավիի, Զալալ-Ալ-Ահմադիի, էթեմադ-զազեի (Բեհազին), Զամալ-Միր-Մադեզիի և ուրիշների թողած գրական արժեքների ազդեցությունը<sup>1</sup>:

Պարսիկ առաջադեմ գրողների համար ստեղծագործական այս ժամանակաշրջանը սկսվեց հասարակական-քաղաքական անկասու պայմաններում:

60-ական թվականների սկզբին, Իրանի միապետական կառավարության միջոցառումները՝ ազդարարյին ուժերով կատարելու ուղղությամբ, տեղի ունեցավ ժողովրդական լայն մասսաների ազդային-դեմոկրատական շարժումների նշման տակ:

Շահի կողմից, այսպես կոչված, քուսապարսիստական քաղաքականությունը Մայիտակ հեղափոխությունն անվան տակ, արդեն մինչև 70-ական թվականների սկիզբը զբոսորդեց իր իսկական զեմքը: Շահի կողմից լիազորված հողային բարեփոխման պատասխանատու պաշտոնյա Աբասնյանին խոստովանում էր, «Նուրային բարեփոխման բնթացքում ցուցաբերված խաբականությունն հետևանքով առաջացել են այնպիսի սուր բարդություններ, որ եթե անմիջապես միջոցներ չնկատարվեն, ապա կալվածատերերի և գյուղացիների միջև եղած հակասությունները զնալով ավելի են սրվելու»:՝

Սոցիալ-քաղաքական ներքին խմորումները չէին կարող մեկուսացված մնալ և իրենց զեղարվեստական արտացոլումը չգտնել պարսիկ պետության զրոյների ստեղծագործություններում: Գրաթեևությունը շրջանցելու նպատակով, զբոսներից սմանք գրում էին ներթափան իմաստով՝ հակեցված ալլարտեական բովանդակությամբ, կամ անցյալը արդիական կենսահայացքով վերաբաղակցելու հնարանքով, իսկ սմանք էլ սպասում էին պատեհ առիթի, իրենց զբվածքները լույս աշխարհ հանելու համար:

Ահա թե ինչու 60-ական թվականների վերջին և 70-ական թվականների պարսկական գրականությունը լիովին լավից ստեղծագործական հնարավոր արգասիքը: Գրողներից շատերը քաղաքական բարենպաստ պայմաններ չգտան լիովին զբոսորելու իրենց ստեղծագործական կարողությունները: Եվ ոչ միայն այն պատճառով, որ շահի և նրա բռնապետական կարգերը հովանավորող իմպերիալիստական համախոհների կողմից ստեղծված իրավիճակը՝ փոշիացնում էր այն միտումները, որոնք կարող էին վնասել նրանց «հեղինակությունը», այլ նաև այն բանի հետևանքով, որ իրականությունը մկրատում էր հանրային-քաղաքական տեսակետները, արգելակում նրա զարգացումն ու ծավալումը:

Վերջին տասնամյալ ժամանակահատվածում պետության պարսիկ արձակագիրների ընտրած թեման հիմնականում մնում է գյուղը, գյուղացիների տարերային, բայց միասնական պայքարը շահագործման դեմ: Ստեղծագործություններում ծավալված զեպքերը, ոչ թե մտա-

ցածին են ու արհեստականորեն միմյանց հարմարեցված, այլ իրականության գեղարվեստական վերարտադրությունը՝

Այն ի մի բերենք նրանց երկերի մեջ արծարծված դադափարական ուղղվածության միասնությունը, որը զլիսավորապես կապված է հեղինակներին քաղաքական մակարդակի աստիճանական զարգացման հետ, ապա պետք է ասել հետևյալը: Յոթնասունական թվականներին ստեղծագործող գրողներից շատերը ակնհայտորեն ձերբազատվել էին նախորդ գրողների զգալի մասի պատմական ու քաղաքական մտածելակերպի սահմանափակվածությունից, գալով այն համոզմունքին, որ առանց աշխատավոր զանգվածների միահամուռ պայքարի, միակնական իշխանության և ֆեոդալիզմի մնացուկների դեմ հազիվանկարանկարելի է: Նրան ավելացնենք նաև աշխատավոր ժողովրդի նկատմամբ ունեցած պարտիկ գրողների անսահման սերն ու սոցիալական դերի գնահատանքը:

Ահա թե ինչու դասակարգային պայքարի սրմանը զուգընթաց առավել առաջավոր գրողներ, ովքեր ավելի արմատական հայացքով էին նայում հասարակական հարաբերություններին և խորամուխ էին լինում դասակարգային պայքարի էություն մեջ, զգում էին, որ ժողովուրդների կյանքում հասունանում է սոցիալական խոշոր փոփոխությունների իրականացում, և գնալով ավելի մեծ զգեսությունը էին արևազանքում աշխատավորությունը հուզող հարցերին՝

Սամազ Բեհրանգիի «Մք հուր վա հեղար հուր» (Մի գեղծ և հազար գեղծ), վիպակը այլաբանական գողարիկ մի ստեղծագործություն է:

Հիշյալ պատմվածքի գեղարվեստական արժեքն այն է, որ նրա մեջ ռեալիստորեն պատկերված է հողազուրկ գյուղացու ծանր վիճակը, նրա դժգոհությունը, բողոքը և առողջ գատաղությունը: Հողը պետք է աշխատավորինը լինի, նրանը, ով մշակում և արգասավորում է այն.— այս է ահա հեղինակի պատկերացումը, նրա ստեղծագործության առանցքային բովանդակությունը, որ միևնույն ժամանակ, աշխատավոր գյուղացու՝ հողի մասին ունեցած դարավոր ցանկության գրեթե ամեն է, նրա հազարամյակներով փայփայած երազների արտահայտությունը:

Ս. Բեհրանգին սյուժետային շատ հետաքրքրական ելակետ է ստեղծում: Գյուղացու խնամած այգում երկու գեղձի ծառեր են աճում: Սակայն բերքատվության ժամանակ, նրանցից մեկը, որ մի օտարազգիի ձեռքով էր բերված, և բավականին խոշոր գեղձների էր, առաա բերք էր տալիս, իսկ մյուսը՝ բուն հայրենի հողի վրա աճած, վտիտ մի ծառ էր,

որը ծագկնելուց հետո, ոչ մի բերքի հատիկ անգամ չէր տալիս: Այդեպանի խնամքը կամ ծառը կտրելու սպառնալիքը արդյունք չեն տալիս: Մասը մնում էր տխուր և անպտուղ: Փոքրամարմին զեղձենին բերք չի տալիս, որովհետև իրեն խնամող մարդիկ չկան: Երանք լքել են հայրենի գյուղը: Կարիքը երանց ախպել է թափանել օտարության մեջ: Փոքրիկ զեղձենին բերք չի տալիս, որովհետև գիտե՞ր՝ օտարերկրացի ծառի տված զեղձերի հետ մեկտեղ իր բերքն էլ, օտարին ծառա դարձած տերը, հանձնելու է կալվածատիրոջն ու օտարերկրացի «Սահարին»:

Պատկերելով հայրենի զեղձենուն, հմտորեն միահյուսելով սիմվոլներն ու ալեգորիաները, համեմատություններն ու հակացությունները, հեղինակը դրսևորել է իր հայացքները: Վտիտ զեղձենու անբերրիության երևույթի պատկերումը Ա. Բեհհամզիին թելադրել է կառուցվածքի համապատասխան են, զա պատմվածք-դիմանկարի մեծ է, որ ենթադրում է միայն մեկ կերպար՝ վտիտ զեղձենու կերպարը: Կառուցվածքային այս տարատեսակի մեջ դրամատիկ տարրը շատ ուժեղ է, բայց գրաման իբրև կտեն, կատարվում է այդ միակ կերպարի (Վտիտ զեղձենու) ապրումների մեջ, որպես հոգնկան գրամա: Այստեղ զեպքերը արտաքին դրսևորում չունեն: Գործողությունը հարազատի և օտարի թշնամական վերաբերմունքն է, որի առաջացրած բախման հոգեբանական անդրազարմումն ենք միայն տեսնում:

Հողի իրավացի տիրոջ՝ գյուղացու իրավունքների պաշտպանության գերում է հանգստ գալիս Ասաղոլլա էմադին իր «Գավանհայե քուհի» (Լեռնային փշաթփեր) վիպակում:

Ե՛րջա է, վիպակի սյուժեն չպատեհաարանված ոտմանտիկական է, բայց իր ընդհանրության մեջ գրողի ազդած՝ Մազանդարան նահանգի հազարավոր գյուղերի ամբողջական տեսլիստական սեղմ պատկերումն է: Այստեղ, ինչպես հայելու մեջ, արտացոլվել է պարսիկ գյուղացիության հոգեբանական ու սոցիալ-քաղաքական վիճակը: Թեև կյանքի ճանաչողական պակասը հեղինակին հանգեցրել է որոշ կարևոր մոմենտների մակերեսային արտահայտմանը:

Մակայն, ս՞րն է այն գիծը, որ աչքի է ընկնում Ա. էմադիի վիպակի հերոսների մեջ, ինչ առանձնահատուկ հոգեբանությամբ են բերողվում երանք:

«Գավանհայե քուհի» վիպակը, այնպիսի ժամանակաշրջանի արտահայտություն է, երբ ազգաբային ռեֆորմի հետևանքով ավելի էին սրվում տեսեսական հարաբերությունները, և դրա երևան գալու հետ

մեկտեղ, այդ համեմատութիւնը էլ գլուղացիութեան մեջ խմորվում էր հոգեբանութիւնը:

Ա. Էմադիի ռեալիզմի արժանիքն այն է, որ նա արտացոլում է գլուղի շարքաշ աշխատավորութեան հայացքների բեկումը ավելալ ժամանակաշրջանում: Գլուղի բարեփոխման կիսատ-պատ իրականացումն Իրանում, գլուղական վերնախավին դրդեց ավելի շատ մասժել անձնական շահերի մասին, արմատավորելով նրա մեջ էգոիզմը:

Ընդհանակը Ահմադ-խանի և նրան հակադրվող՝ հոլագործ Գոլ-Մամադի միջոցով, արտահայտել է այն սոցիալական բողոքը, որը աստիճանաբար վերանելով փոխարինվում է անհաղթահարելի ցասման, և ընդգրկում է շահագործվող գլուղացիութեան հոժ բազմութիւնը՝ ընդհուպ մինչև զինված պաշտպանութիւնը:

Սրաշուն ու չրի անբավարարութիւնը խանձել է շրջանի գլուղների ցանքատարածութիւնները: Միակ փոքրիկ գլուղը, որը փրկվել է կալվածատիրոջ ու բնութեան ազնաից Գոլ-Մամադի ապրած գլուղն է: Գլուղացիների տքնաշան ու հարատեւ աշխատանքի շնորհիվ այն մնացել է քիչ թե շատ անվնաս: Ահմադ-խանը ամեն զեռով, բնութեամբ ուղում է ետ խելն անֆորմի ժամանակ գլուղացիներին վարժակալման պայմանով հանձնված հոլագործները:

Գլուղացիները լավ գիտեն, թե ինչ ահալոր վիճակ է սպասում իրենց, եթե Ահմադ-խանը իրականացնի իր լարարատիկ մտադրութիւնը:

Ա. Էմադին համակրում է նրանց, ովքեր կապված են հայրենի հողին ու արդար վաստակին, ովքեր ողեշնչված են ազնիվ աշխատանքի անուրջով, ովքեր ամենածանր տաժանակրութեան պայմաններում անզամ պահպանում են իրենց հոգու վեհութիւնը և որ ամենակարեւորն է՝ արյան զեռով զիմադրում են Ահմադ-խանի և նրա նմանների ստեճգութիւնները: Եվ զիմադրում՝ ոչ թե տան անկյունում կուշ ձկած բողոքի մղկտանքով կամ համագլուղացիների հետ համատեղ բարձրաձայն արտուելով, այլ համատեղ պայքարով՝ զինված բահ ու մահակներով: Նման թեմատիկ նախասիրութիւնը, և այսպես կաշված, մարզկանց հավաքական բնավորութեան ստեղծման խնդիրը, համեմատաբար նոր է արդի պարսկական գրականութեան մեջ: Բնականաբար, պայքարի պրորիմը նշված ժամանակահատվածի գրականութեան համար խիստ կենսական է, մի որոշ իմաստով՝ հասարակաշնորհն պարտագիր: Եվ պատահական չէ, որ այդ խնդրի զեղարվեստա-



կան յաժման համար, մի շարք պարսիկ հեղինակներ ուղիներ են որոնում յարովի:

Ա. էմադին ասցիալական հակասութիւններն ավելի սրելու նպատակով, տեղեւոյն է հարակից միջնորդող օգակներ, որտեղ Ահմադ-խանի բռնի տիրակալութիւնից բացի, երևան է գալիս նա զազանաբարս վերարեքմունքը տեհնազանգ գյուղացիների նկատմամբ: Գյուղի բնակչութիւնը սպառնալու համար, նա արդեն երկու անիւր է գործել: Մակայն Գուլ-Մամադի շուրջ հավաքված մարդկանց կամքը աննկուն է: Գուլ-Մամադը կերտված բնավորութիւնն է, թանկ ու ամբողջական: Երևույթների գեղջիկական վերագնահատումները, որոշ համագյուղացիների հաշմուղականութիւնն ու երկշտութիւնը, աշխատավորի ազնիվ հայացքը իր գործի նկատմամբ, նրան դարձրել են կշռադատ ու համարձակ մտածող:

Ըմեր և Ահմադ-խանի փոխհարաբերութիւնն պատմութիւնը,— ասում է Գուլ-Մամադը,— երկու թեմ կրակների պատմութիւնն է: Քամին,— շարունակում է նա,— կարող է հանգցնել մամի բոցը, իսկ եթե կրակն ընկել է անտանն է վառվում, քամին ավելի է բորբոքում հերդեհը<sup>25</sup>:

Հեղինակն իր հերոսի շուրթերով, սրտակի հստակութեամբ է արտահայտում իր կենսափոխադասութիւնը՝ թեկուզ արյան զնով պաշտպանել գյուղացու իրավունքները, հոգու վեհանձնութիւնն ու գյուղի աշխատավորութիւնը պատկանող հողը:

Ընչս արտաավարը,— ասում է նա Ահմադ-խանին,— մեր սրտի խորքում է տեղադրված, մեր արյունն ու ջրտինջով է շաղախված: Այս արդատավարը մեր կյանքն է: Այն նման է հարազատ երեխային, որին ծնել, սնել, սիրել ու մեծացրել եւս<sup>26</sup>:

Ա. էմադին մեկ այս, մեկ այն գյուղացու կողմից ասված բողոքի արտահայտութիւնների, սրախտութիւնների, դիպուկ դարձվածքների ու կենցաղային բազմազույն մանրութիւնների միջոցով, որոնք մեզ բերված են վիպակի տարրեր հասցնելով, տալիս է իր մամանակաշրջանի գյուղի տեսնական ժանր վիճակը: Մակայն ինչպես ազատվել սգայլերի սհմակից, ինչպես վերացնել շահագործումն ու անարդարութիւնը, հին, միջնադարյան կարգերի շնորհ շղթաները, որի խորտակումը օգի և ջրի նման անհրաժեշտ է գյուղացուն: Գյուղացուն մտատանջող այս հարցերին հեղինակը պատասխանում է իր վիպակի հերոս՝ Գուլ-Մամադի միջոցով: Այդ պատասխանը գործնական է և արտահայտում է ամբողջ գյուղի արամադրութիւնը: Ըմենք արյան

գնով կաշառագան ենք մեր իրավունքն ու պատիվը.—ասում է Գուլ-Մամազը,—շատերն են ագահարար այն գրել մեր արտազայրերի վրա, սակայն մենք փշրել ենք նրանց գիշատիչ ժանիքները: Իսկ հիմա, առավել ևս անողորմ պետք է լինել նրանց նկատմամբ: Այժմ միասնաբար՝ ազամարզ, կին, երեխա, բուրբա զինված պետք է դուրս շղերտենք գլուզը հոշոտող գայլերին<sup>11</sup>: Ահա գրողի պատասխանը այդ հարցին:

Հեղինակի իրազործվում է: Ահմադ-խանն իր մարդկանցով ու անասուններով, ցոք ու ցրիվ արված, դուրս է շարժվում գյուղից: Էճազիանակը վեհուժամբ էր լցրել նրանց ուղին,—այսպես է բնութագրում հեղինակը աշխատանքի ու հողի ազատագրման համար ուղքի էլած, հյուղականների մեջ բնակվող, պարսիկ գյուղացիներին:

Հերոսների այս խմբի ընտրությունը Ա. Համազին ցանկացել է ընդգծել պարսկական գրականության մեջ քիչ արժարժված մի պորբլեմ, քն ինչպես, ի՞նչ պայմաններում է արթնանում ժողովրդի միտքը, ինչպես են գյուղի շարքաշ բնակիչները մտնում բարդ իրազարձույթունների ալեպատույտի մեջ, ինչպես է հողի ազատության գեմոկրատական իդեան միտանանում զինված պայքարի հետ: Հողի նկատմամբ սերը Ա. Համազինի հերոսների համար (նաև իրեն՝ հեղինակի համար), տանջագին, ամբողջ էությունը կլանող, բայց ողջախոհ, գործունյա զգացման է: Երբ, հազիանակից հետո, Գուլ-Մամազը համագյուղացիների շրջապատում կու է անում ռՄահակները միշտ պատրաստ պահել, ապա նրա զինակից Ղուամհուսեյնը ասում է. ռՄենք նման ենք լեռնային փշափերի: Քեժ արևի տակ խանձվում ու պապակվում ենք ժարավից, բայց շենք ոչնչանում: Աշնան փոթորիկն ու ձմռան սառնամանիքը մեզ տեղահան անել չեն կարող, ինչու՞, որովհետև մեր արմատները խորը և ամուր են բռնել հողը<sup>12</sup>:

Հարազատ մնալով իրականությանը և շշմարտացի կերպով պատկերելով պարսիկ գյուղացու հավաքական կերպարը, Մահմուդ Դովլաթաբազին ևս իր ռՄավարերանէ վիպակում, ընթերցողին օրյակտիվորեն բերում է այն եզրակացության, որ իրանի գյուղացիությունը ստրկական վիճակից կարող է փրկվել միասնական պայքարով, և այդ այն զեպքում, երբ նրանք կգիտակցեն իրենց դասակարգային շահերը և պայքարի կելենն իրենց իրավունքները գեմահարող բուրբ տեսակի շահագործող տերերի գեմ<sup>13</sup>: Գաղափարական այս միտումը մարմնավորելու համար Մ. Դովլաթաբազին գյուղական քնմատիկային է հա-

րի մի այլ տեսանկյունից: Վաշխառու անհրճից բացի, գյուղում անտանձ տիրակալություն էին անում իշխանության պաշտոնյաները՝ ժանդարմների բռնությամբ ու խոշտանգումներով: Վիպակում գրանար-վել է գյուղացու ատելությունն ու նողկանքը այն կամայականության դեմ, ինչը գալիս է քայքայելու գյուղական կյանքի ու արգար աշրատանքի անդորրը: Եվ դա միանգամայն հասկանալի է: Գյուղն ու գյուղացին, ըստ Մ. Դովլաթբարադիի, ցանցի մեջ ընկած, շահագործվում են նաև կառավարության ժանդարմների կողմից: Նրանք հանկարծակի ինքնազուլու ու ապօրինի կերպով հարձակվում են գյուղի բնակչության վրա, իբրև թե գորակույիկներ հավաքագրելու համար, մինչդեռ, նրանց գլխավոր նպատակը գյուղացիներին կողոպտելն էր:

Վիպակն սկսվում է ժանդարմների արշավի ահազանգով: Նրանց մուտքը ավերում է գյուղացիների հոգևոր աշխարհը, ենթարկելով մարդկային տանտայանքների բարձրացող ախրին: Տեսեսական ժայռահող քայքայման սպառնալիքը դամոկլյան սրի պես կախվում է գյուղի բնակչության վրա: Վեպի գլխավոր հերոս՝ Ղանբարի համար, անտանելին միայն զինծառայությունից ազատվելու փրկագինը չէ, որ անդիշողարար պահանջում են ժանդարմները: Ոգրեղգականն այն է, որ գյուղը ամայանում է աշխատող ձևերից, ընտանիքները զրկվում են տարեկան բերքի աննշան եկամտից: Ղանբարիի ահազանգով գյուղի պատանիները թաքնվել են ով որտեղ կարողացել է:

Հեղինակն այստեղ չի մոռանում նկարագրելու ժանդարմների խառնվածքը բնորոշող այնպիսի ճշմարտացի պատկերում, որը միանգամայն համոզիչ է դարձնում վիպակում ծավալվող հետագա զեպքերի ընթացքը:

Մ. Դովլաթբարադին ընտրել է ստեղծագործական գեղարվեստական մի ուղի՝ այն է, երևույթների քաղմապիսություն մեջ ուղադրություն դարձնել որակական այն տարրերին, որոնք շերտ առ շերտ կուտակվելով, ստեղծում են իրականության նկատմամբ ինքնազիտակցության հատկանիշներ: Ա. էմադիի պես, Մ. Դովլաթբարադին ևս մերժում է պասսիվ, քաբացած բարոյախոսությունը: Նկարագրելով ժանդարմների կողմից գործադրվող խոշտանգումների բազմաթիվ տեսարանների մի ամբողջ շարան, գրողը նպատակադրվել է ավելի ընդգծված կերպով բացահայտելու գյուղի բնակչության զինված պայքարի միասնությունը, ուղղված՝ բռնի ուժերի դեմ:

Վիպակի ստեղծագործական խնդրի լուսարանման համար խիստ եշանակալից է հերոս՝ Ղանբարիի հոր ծնծի տեսարանը ժանդարմների

կողմից: Անտանեյի խոշտանգումների ցավից ուշակորույս ժերունին, չի մատնում իր որդու թաքստոցը:

Նոր տառապանքի ժանրութունը, հայրական տան ավերումը, համայնուղացիների գնդակահարութունն ու խարազանումը, մի պահ ոտքի է կանգնեցնում գյուղի ամբողջ բնակչությանը: Թաքստոցից դուրս եկած Ղանբարիի գլխավորությամբ սկսվում է անհավասար ուժերի կռիվ: հրացանավոր ժանդարմների և մահակներով զինված գյուղացիների միջև:

Մ. Գովյաթարագին սոցիալական ներազգացություն ուժով վերարտադրում է Իրանի աշխատավոր գյուղացու կյանքի դեմ ուղղված ստորության դրոհը: Վեր է հանում այդ հասարակ, պարզ մարդկանց ուղերթությունը նշման ու անարդարության պայմաններում, բացելով հակասություններ, որոնք թևն կային, բայց ներհամ էին, չէին հայտնարեթելի ամբողջ բացորոշությամբ: Պարսիկ գյուղացին եկել է այն համոզման, որ բռնութունը ազերսանքով չի վերանա, նրան պետք է դիմադրել: զենքի ուժով, ակտիվ պաշտպանությամբ: Բախումների ժամանակ ձերբակալված ու արսորված Ղանբարին փախուստի է դիմում: Սակայն այդ փախուստը ոչ թե իր հետքերն ու անունը կորցնելու, ոչ թե ծայրված թափառական կյանք վարելու մտազրություն է, այլ Ղանբարին վերադառնում է հայրենի գյուղը իր համագյուղացիների հետ շարունակելու պայքարը:

Նեղինակը սոցիալական հեռանկարով է ստում իր վիպակի ավարտը, որտեղ և ակնհայտ եևով երևան է գալիս անարդարության դեմ պայքարի նախընտրած եղանակի իդեալականացումը:

Աքսորից վերադարձած Ղանբարիի համար, այն ինչ պիտի ասեր համագյուղացիներին, դժվար էր: Պատասխանատվության ժանրութունը նա զգում է իր ուսերի վրա: Ղանբարին լուս խորհելուց հետո, խորհրդավոր ու հաստատուն մայնով, հայտարարում է. «Մահակները դուրս բերեք մառաններից: Պետք է մահակներ վերցնենք, առաջինը ես ինքս եմ վերցնում...»<sup>15</sup>:

Նույն այն անծածկույթ միտումը տեսնում ենք հեղինակի «Հայեհայե թխարանի» խորագիրը կրող ժողովածուի մի շարք պատմվածքներում<sup>16</sup>:

Իր «Բանգ» (Բանտ), պատմվածքի կառուցվածքը՝ մուտքից, նույնիսկ խորագրից սկսած մինչև ավարտը օրգանական մի ամբողջություն է:

Պատանի Ասաղուլային հայրը գյուղից բերել է քաղաք և աշակերտ է սվել մեծ գորգագործարանի տեղ Մոզաֆարի մոտ: «Գիրքորդ»

հիշեցնող այս պատմվածքում հեղինակը կենտրոնացրել ու վերաբ-  
տադրել է սոցիալական կյանքի կանկրետ խտացումներ:

Պատանի Ասաղուլայիև աշխատեցնում են անխնա, պահելով նրան  
կիսաքաղց և կիսամեղի: Մեծն ու անքնաթշուռը ծայրահեղ հյուժում են  
աղային: Քվում է, Ասաղուլան ևս Գիրորի նման իրականության զոհնե-  
րից մեկն է լինելու: Սակայն Գովլաթարալին իր հերոսին ներկայաց-  
նում է դամոն կարգերի դեմ ելնողի: Գրողը կապիտալիստական քա-  
ղաքի շահագործական հոսանքի առկա ընկած պատանի գյուղացիների  
ժահը լի համարում որպես անհրաժեշտ դատապարտվածություն: Ա-  
սաղուլան ատելություն բուռն ցասումով, գիշերով հրդեհում է տիրոջ  
գործարանն ու ունեցվածքը և անկատ փախում քաղաքից:

Այսպիսով, տեսնում ենք, գյուղացիության ծանր վիճակի հետ  
մեկտեղ բնազդ պատմվածքում իր արտացոլումն է գտել Ասաղուլայի  
նման գյուղացի անթիվ պատանիների սոցիալական բողոքը բարոսե-  
լաշ դատակարգի դեմ, ինչպես և նրանց, թեկուզ տարերային, ինք-  
նարուխ շարժումը՝ ընդդեմ շահագործողների:

Այս առումով պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում նաև  
Ահմադ Մահմուդի Էլարիբեհաե վերնագիրը կրող ժողովածուի մի շարք  
պատմվածքները<sup>15</sup>:

Այդ պատմվածքներից մեկում, որի հերոսն է տիրոջ կարգերի դեմ  
ընդդիմացած Նեմաթը, հեղինակը ընդգծում է այդ հերոսի նկատմամբ  
ժողովրդի առժամ ընդհանուր համակրանքը: Ա. Մահմուդը զեղարվես-  
տական հիանալի հնարանքով է պատկերում այն հոր ուսերի վրա  
նստած գյուղացի մանուկ ականատեսի աչքերով:

Հայրը ուսերի վրա բռնած իր երեխային, խնդրում է պատմել, թե  
քաղաքի հրապարակում ինչպես են պատժում մերտակալված նեմա-  
թին:

Հավաքված բազմության առաջ նեմաթին կանգնած գիրքով պա-  
շեպատում են ամբողջ հասակով: Սով ահա հոր և մանկան միջև փո-  
խանակվող հարց ու պատասխանի միջոցով հեղինակը ներկայաց-  
նում է պատժի իրադործման պատկերի նկարագրությունը:

— Ի՞նչ ևս տեսնում, աղաս:

— Հրացանավոր մարդկանց:

— Էլ ի՞նչ...

— Նեմաթին էլ եմ տեսնում:

— Ի՞նչ եղաղ...

— Սկանցին գաղով ծեփել նեմաթին:

—Ասա ...

—Ն՞չ առեմ, հայրիկ ...

—Քո ու բուսաթից խոտիբ...

—Հայրիկ, էլ չկա, Նեմաթը չի երևում: Երա փոխարեն գաշե սյուն... Այնտեղ մի գաշե սյուն եմ տեսնում:

Այս երկխոսությունը հետևում է պատմվածքի վերջին պարբերությունը. «Հայրս սարսուռաց, կարծես ողնաշարը ծալվեց: Զգում էի, քն ինչպես երա ուտերը ցնցվում էին հեկեկոցից: Քուխալը պատել էր, երկինքը գորշացել և բարակ անձրև էր մաղում»:

Այս ալլարանական և զեղարվեստական ներբանալությունը արտահայտած Հեղինակի պարբերությունը, որը կարող է իսկապես, փոխարինել շատ էլիգի, իր սիմվոլիկ իմաստով կրկին անգամ պարփակում է ժողովրդի սերը, երա անբացատրելի կսկիծը ազատության ու արգարության համար կռիվ ելած և ներքին թշնամիների դեմ կուտակված ու փոթորկված առևտությունը թրի վերածած Հեղինակը, այն զրել է իր պատմվածքներից մեկի գլխավոր հերոս Նեմաթի և երա համախոհ ընկերների ձեռքում: Երանք միասնաբար, զենքը ձեռքներին կրոջում են գլուխը հարկադրանքի ենթարկած հարստահարողների դեմ, երանց հափշտակած ցորենն ու ալլուրը վերագարնելով գլուխացիներին:

Ա. Մահմուդի այս շրջանի ստեղծագործության ամենաբնորոշ և կարևոր գիծը ժողովրդական խավերի կյանքի արտացոլման խորացումն ու զրական կերպարների կերտումն է: «Ղարիբեհաս պատմվածքի մեջ բացահայտված են ժողովրդական ըմբոստությունն ազելի ցայտուն կրողներ. գլուխական ռազմիկների խումբը և երա վաղափարական, անվհեբ խմբապետ՝ Նեմաթը, Միրով, ներքին գոհունակությունը և առևանկան գունդությունը է նկարագրում Հեղինակը կեղեքման դեմ ոտքի ելած խմբին, զենիվ երանց սիրանքներ գործելու տպավորել իրավիճակների մեջ: Եստ անգամներ են ձերբակալում Նեմաթին, սակայն երան հաղթվում է փախել, և առանց թաքստոցներում պահվելու, եորից շարունակում է հերոսական իր պայքարը գլուխի աշխատավորության թշնամիների դեմ:

Սրբ մի առիթով ժանգարմանը առաջարկում են Նեմաթին հանձնել զենքերը, եա պատասխանում է. «Մտոր արարածներ, ես ծառայում եմ ձեր կողմից սովի մատնված ու հարստահարված գլուխացիներին: Իսկ դուք ո՞ւմն եք ծառայում, ասացեք ո՞ւմ ... Երկիրը թալանող օտարերկրյա զավթիչներին...»<sup>12</sup>:



«Ղարիբեհաւ-ն փոքրիկ, բայց խիստ բովանդակալից պատմվածք-  
գրամա է, գրեթէ ամբողջովին բախումներու Այն ժողովրդական ըմբոս-  
տութեան և միասնաբար գործելու ևս մի օրինակ է պարսկական նո-  
բագոյն գրականութեան մեջ: Պատմվածքի ավարտը սրտառու է, բայց  
հերոսական:

70-ական թվականներին սկզբին, պարսկական արձակագրութեան  
ասպարեզում նոր անուն է նստեր Մուսլենը՝ իր ռեական ինքնատի-  
պութեամբ:

«Մուսլենը դար անբարս պատմվածքների ժողովածուում ներկայաց-  
նում է գեղեցիկ և հարկերում պարոզների ուրախանալու և պարելու իրա-  
վունքի ազատութունը<sup>17</sup>: Մակայն, իրականում, դա նրանց քաղաքա-  
ցիական իրավունքի պաշտպանութեան պոսթիումն է:

Մուսլենը մշակներին կողմից կազմակերպված ուրախութեան ցույ-  
ցը անակնկալի է բերում գործարանատիրոջը: Նրա համար արտակարգ  
անսովոր է այդ երևույթը: Բախումը լուծվում է սևագործ բանվորների  
հաղթանակով: Եղբայներն առած նրանք հարձակվում են իրենց ու-  
րախութեանը արգելող բարբարոս և նրա օգնականների վրա, դուրս են  
շարտում գործարանից և ձեռք-ձեռքի աված շարունակում են իրենց  
պարն ու երգը, իսկ զուտնալին ավելի զորեղ է փչում պարեղանակը:

Ինչպես տեսնում ենք, Ն. Մուսլենի այս պարզ ու հստակ պատմ-  
վածքը, որպես իրականութունը ընդհանրացնող պատկեր, հնա-  
բանագրութուն է առաջին հանգիստ ժամանակի հատկանշական կող-  
մերը, նրա հասարակական, քաղաքական վիճակը և ժողովրդական  
զանգվածների մեջ տիրող հոգեբանութունը: Իսկ դա նշանակում է, որ  
գրողը քայլում է ժամանակի հետ:

Այսպիսով, 70-ական թվականներին հանդես եկած գրողները, այս  
կամ այն լափով ունեն քաղաքական-քաղաքացիական որոշ գեմք, ներ-  
կայացնում են հասարակական կենդանու իդեալ: Չի կարելի, իհարկե,  
երանցից պահանջել լիովին ձևավորված և ճշտորեն ձևակերպված աշ-  
խարհայացք, սակայն ակներև է միտումը՝ պայքարը սոցիալական շա-  
րիքի դեմ: Գրական հերոսը պայքարի մարզ է, իր թարմ ու զգուտաց-  
նող կերպարով:



ОТРАЖЕНИЕ БОРЬБЫ СЕЛЬСКИХ ТРУЖЕНИКОВ  
В ПРОИЗВЕДЕНИЯХ ПЕРСИДСКИХ ПИСАТЕЛЕЙ  
(70-е гг.)

Резюме

По сравнению с произведениями персидских писателей предыдущих поколений, авторы 70-х годов XX столетия акцентируют внимание на мотивах политико-гражданственного характера. Этот факт особенно ярко проявляется в произведениях малых полетов. В рассказах и повестях наиболее ошутимо отображаются жизнь и чаяния поработенных сельских тружеников, однако внимание авторов не концентрируется на конкретной проблеме. В этих произведениях создаются цельные образы истинных смынов Ирана, которые стоят на страже интересов народа. Эти герои, выходящие из народа, у писателей-патриотов наделяются качествами, которые присущи борцам за светлое, людям, бросающим вызов трудностям и смело смотрящим в будущее. Им чужды таинные пороки, как ограниченности, пассивности в борьбе и страха. Они живут той жизнью, в которой идет борьба за прогрессивное и гражданское.

- 1 Անճրամեղա և իջ համարում էլել, որ Ենթադրելու Իրանի իշխանական կառավարության վարած Ենթադրելու և արտադրելու քաղաքականության Ընտանեցող, 1979 թ. Ընտ քաղաքնեցված է գրականության ստաշումը՝ Մովսիսյանի Միսիսյանի Ընտանարար Ընտանում էլելու Ընտանեցողի այլ անընտանությունների վերաբերյալ անընտանություններ ստաշում ըստներ:
- 2 С. А. Агаев, Иран в прошлом и настоящем, М., 1981, с. 140.
- 3 احمد اكبر مازندرانی: نگاهى به زندگى رفايى. ج. روز و دهقانان امروز. تهران 1350 هـ.
- 4 Անճրայ Անճրայ Միսիսյանցիների վերաբերյալ աշխատության մեջ քերված պատմական այն փաստերը, որ սխտած 50-ական թթ. մինչև մեր արերը տեղի են տեղել, ինչպես Իրանի Ընտանային (Միսիսյանցի), այնպես էլ հարավային և արևելեցիներում գտնվող պաշտական վարչերում, սխտատեղի փաստագրություններ և՛ Իրանի պաշտպանության հանցող կիրառած կամայականությունների և գրանց զեմ պաշտ պաշտպանության ըմբոստ և անհարգվածի, ընդունալ մինչև զեմնեղ պաշտպանության մասին:
- 5 Անճրամեղա Իրանի ստաշումը և հարեմուտը պաշտները քաղաքականությունը

Եսթաբլիսում էջ թարգմտված մի այլ հնգադրյում, թան 1878 թ. իրամական հնգադրյումը:

- 6 1970. «سید بهرنگی» \*يك هنر و هزار هنر\* «تبریز»  
Մամուլ Քննարանին Համարվում է միջին սերնդի գրողներին, նա Հանաչված է նաև որպես լավագույնն երգիծարաններին մեկը՝ Համանականին պարսկական գրականության ասպարեզում:
- 7 1976 «تهرانی» \*گونهای عمادی\*  
Հնչեմանը Իրանի Մազանդարան նահանգի գրողներին է և գրել է նույն շրջանում ազգայն գրողներին կյանքի ու սիրաներին մասին:  
8 Ա. Էմադի, Երվանդ գրակ., էջ 22:  
9 Եսթան անգում, էջ 24:  
10 Եսթան անգում, էջ 25:  
11 Եսթան անգում, էջ 44:  
12 1973 «تهرانی» \*گاوآزانان\*  
13 Եսթան անգում, էջ 81:  
14 1971 «تهرانی» \*لایهای بیایانی\*  
15 1971 «تهرانی» \*احمد محمود\*  
Ա. Մանժուզը եւր անուն չէ պարսկական արդի գրականության մեջ, նա ասեց-  
մազբորեկ սինչ է մեր գարի 50-ական թվականներին Է-րդ կնայց: Ա. Ման-  
ժուզը Հանաչված է որպես սեռիկմին Կարամ գրողներին մեկը:  
16 Ա. Մանժուզ, Դարիրենա, էջ 35:  
17 1973 «تهرانی» \*ناصر مؤذن\*  
ناصر مؤذن

## Լ. Լ. ՏԵԽՆՏՍԸ

### ՀԵՎԱՓՈՆԱԿԱՆ ՑՐԱՄԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐՈՂ ԲԵՀԱՂՆՈՒ «ԱՅՍ ՊԱՐՈՆՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ» ՎՊԱԿ-ՀՈՒՇԱԿՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Այսօրվա Իրանը բանտում պետք է ճանաչել: Այսօրվա՝ ասել է թե 70-ական թվականների սկզբի, երբ Իրանի անվտանգության մարմինների քրտրահամոթյամբ ազդի պարտից արձակի նշանավոր վարպետներից Մուսամազ էթեմազզադեն (Բեհազին) շչուրընկալվում էր թեհրանի բանտերում, որտեղից ստացած իր ապավորություններից, ապրումներից, հանդիպումներից ու խոհերից պիտի գրեր իր «Հարսիկ», «Այս պարտների շչուրընկալի-հուշագրությունը»:

Նրա բանտարկության առիթը պարսիկ մի այլ հանրաճանաչ գրողի՝ Ֆերեյդուն Քոնջարունիի մերթադարձությանն էր: Այդ մերթադարձության ղեմ բողոք-հայտարարությամբ հանդես էր եկել Իրանի գրողների ընկերությունը այն ուղղությամբ վարչապետին, դատախազին ու մի քանի այլ պաշտոնատար անձանց: Բողոքի տակ ստորագրել էին 54 գրչի մշակներ: Այս փաստն իսկ մեկն է այն պատմական բազմաթիվ վաղի քաղաքացիներից, որ Իրանի 30-ական թվականների պատմությունը իր հայտնի տխուր ու դժան զրսևորումներով կրկնվում էր: Նրանք ու կես տասնամյակ առաջ պատմության սև էջերի առաջին օրինակը գրել էր հայր միապետը՝ Ռեզա Փեհլևին, դժան հաշի-հարգար տեսնելով Իրանի առաջադիմական, ղեմնդրատական մտքի առաջիկա աչքի ընկնող ներկայացուցիչների հետ:

70-ական թվականներին բողոք-հայտարարություն էին գրել 54-ը, իսկ 30-ական թվականների կեսերին՝ շահական ղեղաններն էին նետվել Երկրի հասարակական խիղճը մարմնավորող 52 ղեմնդրատ-մարտիկներ, որոնցից Քազի էրանիի, Հասան Քարարիի, Բողոք Այազիի անվան հետ են կապված 30-ական թվականներին Իրանում բռնության, հետադիմության ղեմ պայքարի բազմաթիվ հերոսական էջեր: Հայրենիքի առաջընթացի այդ 53-նվիրակներին գործի արժանի գնահատա-

կանք ամենց գրող-հրատարակախոս, նրանց զինակից և բանտակից ընկերը՝ Բողոք Ալավին: Եւ իր «Փանջահ» սե նաֆարըս (53 հոգի) գրեց արդեն 40-ական թվականներին՝ երկրում զեմեղրատական շարժման վերելքի տարիներին, ապագա սերունդներին թողնելով զոկտոր էրանիի և նրա համախոհ-զինակիցների վավերական դիմանկարները:

Կրկնվել էր պատմութունը: Իրանի ամերիկյան տեխնիկայի վերջին խոսքով սարքավորված բանտերում էին արդեն այն սերնդի որդիները, որոնց լավագույն ապագայի համար մզած պայքարի առաջամարտիկներն էին 53-ը: Պատմութունը կրկնվում էր անգամ մանրամասներով. հայր միտակետի 30-ական թվականներին ձեռնարկած բարեփոխութունները և 60-ական թվականներին որդի-միտակետի բարեփոխութունները, որն այս անգամ արդեն արձատականութուն հավակնող իր ընդգրկումներով, անողոք էր դրանց վերաբերմամբ դրսևորված մտքի ու գործի ամեն կասկածի ու քննադատության վերաբերյալ:

Հարազատ ժողովրդի զառանրեն կրկնվող պատմության եկամամբ չէր կարող անտարբեր մնալ իրանական 1905—1911 թթ. հեղափոխութունից ի վեր զեմեղրատիայի, ազատության հակաիմպերիալիստական պայքարի զեղարվեստական իմաստավորման արդեն կեդարյա փորձ կուտակած առաջադիմական գրականութունը: Փորձին արժանի իրատեսությամբ նրա ներկայացուցիչները ընկալում և զեղարվեստորեն վավերացնում էին այն սուր հակասութունները, որոնք շրջելու, բխացնելու նպատակին էր ուղղված «Դեպի մեծ քաղաքակրթութուն» ազգակույզով 60-ական թվականներին իրագործվող սոցիալ-ուֆորմիզմի քաղաքականութունը: Ավելին, նրանք հաշտությամբ բացահայտում էին այն նոր սոցիալ-անտեսական, բարոյական հակասութունների հանգույցները, որոնք շերտազրվում էին կապիտալիստական զարգացման ուղին ոտք դրած, բայց քաղաքականապես շնորհացած հասարակության հին վերքերին:

Մեծ շանասիրությամբ պրոպագանդվող բարեփոխութունների, նավթադուրների բումի, «2500-ամյա մեծ Իրանի» փառաբանման ազմեկոս մթնոլորտում երկրի առաջադիմական մտքի ներկայացուցիչները քաղաքացիական անդիշողականությամբ պատկերում էին այն ժրագրավորված խափանումները, որոնք թաքնված էին բարեփոխումների դեռևս նոր գործադրված մեխանիզմում: Այս թեմային էին նվիրված արդի Իրանի այլի ընկնող արձակագիրներ Ծ. Քոնքաբոնիի, Խ. Շահանիի, Ա. Յադրբիի, Մահմուդ Դոլվաթարադիի, Ահմադ Մահմուդի մի շարք պատմվածքները:

Սմ ծնվում են «Հարսիները», այս անգամ արդեն XX դ. երկրորդ կեսի «հարսիները»: 70-ական թվականների սկզբին պարսից գրականությունը հարստացավ այդ ժանրի երկու ստեղծագործությամբ:

Պատմության դասերի գիտակցությունից ներշնչված գիմակայությունում էր համակված Մեհդի Ահադան Սալեհի (Օմիդ) «Տասներկուերորդ պարագրաֆ» ստեղծագործությունը, որն ունի «Պոեմ Հյուսված բանտային հուշերից» ենթադրանագիրը<sup>5</sup>: Պոեմում ընկերների վերաբերյալ բանաստեղծի հուշերը միշարկվում են նրանց հետ իր երևակայական զրույցով: «Միշարհար» սերը, իսկ ես կյանքն եմ հանաչում» սրտի ու մտքի կշռույթով Իրանի 70-ական թվականների բանտային կյանքի նանաչողական արձեճը այսպես էր բանաձևում պոեմում Օմիդը:

Նրան երկրորդում էր Մոհամադ էֆենդազադեն (Քեհազինը) իր «Այս պարոնների հյուրը» վիպակ-հուշագրությունում, որի վավերական էջերը համոզում են, որ Քեհազինի եզրակացությունը ըստ ամենայնի հիմնավոր է: Այդ մեկնակետով առաջնորդվելով, հեղինակը կարողացել է աշխատ համոզել և համակողմանի ներկայացնել բանտում իր տեսածն ու լսածը, որ ընթերցողը ևս ընդգրկուն պատկերացում է կազմում հասարակական-քաղաքական այն տրամադրությունների մասին, որոնցով ապրում էր երկիրը, այն սոցիալ-քաղաքական լիցքերի մասին, որոնք 70-ական թվականների սկզբին Իրանը հասցրել էին հեղափոխական իրադրության նախադասնը:

Վիպակը օրագրության բնույթ ունի, որի նյութը, սակայն, օրավուր գրառված տպավորությունների կանսիկությունը շունչի Բանտային առօրյան նրա օրակարգային մանրամասները, որոնք ներկայացված ու իմաստավորված են հեղինակային խոհարարական, երբեմն էլ, ըստ տեղի, սարկաստիկ կամ հումորով արված գիտարկումներով, ստեղծում են այն բնորոշ, կենդանի մթնոլորտը, ուր ծավալվում են դրսի աշխարհից կտրված, բայց այդ աշխարհով ապրող բանտարկյալների հույզերը, պարպվում է նրանց հաճախ ծայրաբևեռ հայացքների տվառողը:

Վիպակում հաշոդ է գտնված նաև ճանաչողական նյութի ներքերման ձևը: Մինևույն խմբավորման կամ կուսակցության պատկանած բանտարկյալները իրենց «կոմունաներն» են ստեղծել: Ճաշի, թելի սեղանի շուրջ հավաքվում են նրանք ու «կոմունայի» հյուրերի հետ անշտապ զրույցներում բացում իրենց սիրտը, մտքեր են փոխանակում, վիճում: Առաջին իսկ էջերից զգացվում է սեպտիստ գրողի մեծ փորձառությունը, մանրամասների միջոցով ախպականը, բնորոշը պատկերե-

լու կարողութիւնը: Գրողը սոսկ թվարկում է իր մենախցի պատերի մահազրութիւնները, և ընթերցողին պարզ է զտնուում, որ բանտարկ-  
յալների ճնշող մեծամասնութիւնը երիտասարդութիւնն է, հատկապէս  
ուսանող երիտասարդութիւնը<sup>6</sup>:

Եվարդան Մտեփանյան, Ռեզա Բարաճման, Հոսեյն Լոթֆարազի,  
Նուշիրվանֆուր: Սա՛ տնտեսագիտութիւն ֆակուլտետի ուսանող, այն  
մեկը՝ արվեստագիտութիւն, մյուսը՝ մանկավարժական ինստիտուտից,  
այս էլ պոլիտեխնիկից<sup>7</sup>: Հնաս գրողը իր մենախցի լուսամտի ճա-  
ղերին կառչած բակից կլօխ նրանց մարտաշունչ երգը՝

էլ, ընկերներ, հերոսներ,

կյանքներս տանք հայրենիքին անվարան<sup>8</sup>:

Մանրամասն զրույցներ կունենա նրանցից շատերի հետ, ու այդ զրույց-  
ներից նրան կպարզվի մի նոր աշխարհ՝ 60-ական թվականների Իրանի  
երիտասարդութիւն աշխարհը, իր խռովքներով ու ձգտումներով: Այս  
ձգտումներին ու խռովքներին ի տես՝ գրողը կխորհի. «Ե՛ւ յոյսով է  
այս իշխանութիւնը: Անհեռատես դաժանութիւն, որ բանտի մեջ է  
ներփակում իր հասարակութիւն ծաղիկը, հասարակութիւն ապագան:  
Փակում է, որովհետեւ այլ են իր և նրա՝ ապագայի պատկերացումները:

Բայց այլազան ու տարրեր են նաև իր իսկ երիտասարդութիւն  
պատկերացումները երկրի ապագայի, այդ ապագան տանող ուղիների  
վերաբերյալ, ինչպէս որ բազմաշերտ են նրա ներկայացուցիչները՝  
սոստրակաւներ, բարձր զինվորականութիւն ներկայացուցիչների  
զավակներ, բանվորներ, արհեստավորներ, զինվորական ծառայութիւ-  
նից խուսափած երիտասարդներ: Նրանք այդ տարիներին երկրում և  
արտասահմանում գործող տարրեր կուսակցութիւնների, խմբավորում-  
ների, արհմիութենական կազմակերպութիւնների երբեմնի անզամներ  
են: Ը՞վ նրանց զրույցներից ու վիճարկումներից ներկայանում է այն  
տարանշատվածութիւնն ու պտռակտվածութիւնը, որով 60-ական  
թվականներին բնորոշվում էին իրանական հասարակական-քաղաքական  
շարժումները:

Հեղինակի հետ զրույցիս սկրտասահմանում Քուդէ կուսակցու-  
թիւն հեղափոխական կազմակերպութիւնն<sup>9</sup> հետ իր ունեցած տարա-  
ձայնութիւններն է պարզում այդ կազմակերպութիւնից հեռացած ու-  
սանողը: Իրանը վերաբերում են Երանի քաղաքական իրադրութիւն,  
հեղափոխական պայքարի հնարավորութիւնների ու ձևերի գնահատ-  
մանը, ասել է թէ հեղափոխական շարժման հարցերի հարցին: Ի դեպ,

այս հարցերին էին անշվում բուն իսկ ռՔուդիէ հետ նրա երիտա-  
սարգական սեկցիայի անդամների տարածախուժյունները, որոնք և  
հիմք դարձան կուսակցութիւնից նրանց հեռանալուն<sup>10</sup>։

Որիտասարդն իր կազմակերպութիւն կողմից գործուղված է եղել  
Զինաստան, ու նրա գրույցներից ակնհայտ է դառնում այն ազդեցու-  
թիւնը, որ մատչականութիւնը ունեցել էր արտասահմանում ծավալ-  
ված իրանական երիտասարդական շարժման, նրա տարրեր խմբավո-  
րումների վրա։ Մարքսիզմ-լենինիզմի գալստականների անունից հան-  
գես եկող ուսանողը, ասանց իսկ զույգն կասկածի կրկնում է «Վարպի  
անանսութիւնը միայն շաքարին կապելու», «Իսֆահանի մետալուր-  
գիական գործարանը գիտավորյալ հումքից զուրկ վայրում կառուցելու»  
մասին մատիստական պրոպագանդայի կողմից ժամանակին տարած-  
վող հակասովետական մտացածին մեղադրանքները<sup>11</sup>։

Արտասահմանում և երկրի ներսում գործող զանազան ընդդիմադիր  
կուսակցութիւնների (կազմակերպութիւնների) և խմբավորումների տե-  
սակեանից ըստ ամենայնի ներկայացուցչական է բանտարկյալների քա-  
նակակազմը։ Ընթերցողն այստեղ հանդիպում է և՛ Քուրդիստան օսթան-  
ների (նահանգների) ղեմնկրատական կուսակցութիւն ներկայացուցիչնե-  
րին, «Ժրանի ժողովրդի կուսակցութիւն» (Հեղքե մեզլաթե Իրան<sup>12</sup>)  
հիմնադիր Դարյուշ Յորուհարին ու այլ պանիրանիստների, «Ժսլամի  
ժողովուրդների կուսակցութիւն» (Հեղքե մելալե էսլամ), «Ժսլամի  
մարտիկներ»-ի (Ֆեղայանե էսլամ), «Զինվորական կազմակերպու-  
թիւն» (Սազեմանե Նեզամի) երբեմնի անգամներին։

Բեհզադինը այդ գործիչներին պատկերում է ոչ միայն ինքնաբու-  
թագրման հետքով, նրանց խոսքի կամ գործողութիւն միջոցով։ Հա-  
նախ և հաջողութիւնը նա դիմում է նաև կենդանի մանրամասներով  
զծվող դիմանկարի կամ հեղինակային քննադատման միջոցներին։ Արի-  
նակ, պանիրանիստների առաջնորդ Դարյուշ Յորուհարը հեղինակային  
քննորոշմամբ սինքրավատաւ ու անշտապ էս պահում իրեն։ Դիպուկ  
քննորոշում, Բահրեյնի ինքնորոշման խնդրում կառավարութիւն քննա-  
դատութիւնը հանգես եկած և այս հողի վրա պառակտման հասած  
կուսակցութիւն հիմնադիրը կարիք ունի իր պարտութիւն դառնութիւնը  
«հպարտ ու վստահ» պահածքով քաջցնելու։ Բայց նրա կոտրվածու-  
թիւնը գրանարվում է անուղղակի։ Որիտասարդ բանտարկյալների երգի՝

«Թե մեր պայքարն արյունով ողողվի, համփից ետ լմնանք,  
Ոչ մի քայլ չընկրկենք, մինչև վերջին շունչը մահվան»



խոսքերին ունկնդիր Տորուհարը գառնործն նետում է. «Ահ, նորից նույն բլեթները: Տեսանք, քե այդ հերոսական ընդդուումները ինչ խայտառակ վերջ ունեցան»<sup>13</sup>. Ներքին մենախոսությամբ հեղինակը նկատում է. «Ամեն շարժման մեջ էլ կա այս սխալմամբ եկամտներից (ուղեկիցներից—Լ. Շ.): Գալիս են, գնում, հակահարված ստանում: Եթե շարժումը կենսական արմատներ ունի, կենդանի կմնա ու կանի, նոր ուժ ներառելով, նման այն գետին, որ առվակներից է սնվում»<sup>14</sup>:

Բանասեր կոտորում էր շարժման ուղեկիցներին, պատահմամբ եկամտներին: Հեղինակը ընթերցողին հանդիպեցնում է այդպիսի մի քանի ուղեկիցների: Բանտի ավագ տեսչի բնորոշմամբ, դրանք տալն հիփի-միփիներից են, կամ բրիգադային զենբրայի կամ՝ դիվիզիայի հրամանատարի տղա, որ հարել են շարժմանը էրեկեց ցույց տալու: Համարի Միջնադարյան ինկվիզիցիայի կտտանքները հիշեցնող բանտային խոշտանգումները (դրանք հեղինակը նկարագրում է զուսպ, գնալից գնալք ներկայացվող փաստերով, գրանով խուսափելով ճշող նատուրալիզմից) կտարել, խեղել են բանտարկյալներից մի քանիսի անձը, բանականությունը:

Արցունքն աչքերին իր անմեղություն մասին զրույցներով շրջապատին ձանձրացրել է զինապահեստի պայթեցման մեղադրանքով քանված շինարար բանվորը: Շրջապատին ու իր վիճակին անհաղորդ քարկտիկ խաղացող մանկան է վերածվել օգահենություն ձախողված փորձի մասնակից ուսանողը: Բանտարկյալներին սարսուռ է բերում «Նդիա Միլոշի» կերպարանքով դատապարտչայի՝ բանտով մեկ թընդացող երգի ձայնը. «Ճակատագրի փողոցի դարբինները շարունակ շղթաներ են կռում առյուծների համար»: Բանտարկյալների ճշող մեծամասնությունը, սակայն, առյուծի պես արժանպատիվությամբ է կրում իր շղթաները, նախապատրաստվում գալիք պայքարին: Նրանց հուզում են հատկապես ապագա հեղափոխության շարժի ուժերի հետ կապված խնդիրները: Հակասական, հաճախ իրարամերձ են այս առթիվ բանտարկյալների կարծիքները, կարծիքներ, որոնք ժամանակի զանազան տեսությունների հաճախ լմարսված, մակերեօային ընկալման վկայությունն են:

Հարցի առթիվ ծագած վեճում նրանցից ոմանք այն կարծիքին են, քե «Այսօրվա դրությունը, աշխարհում ոչ միայն հեղափոխության ուղեղը, այլև շարժիլ ուժը մտավորականությունն է» ու, որպես հաստատում իրենց տեսակետի, միաժամանակ վկայակոչում են Մաո, Կաստրո, Չե Գուարա անունները: Ուշագրավ է բանտարկյալներից մեկի

առարկութիւնն այս տեսակեալին: Նա ըստ էութեան նիշա է ընկալում Չն Դնարայի պարտութեան պատճառները՝ գյուրահամալսութիւն, շտապողականութիւն, ընչազուրկ զանգվածներին համախմբելու և իր և տակից տանելու անկարողութիւն:

Գաղափարների այս բազմաձայնութիւնը որանք քննում են Իրանում հեղափոխական շարժիչ ուժի առկայութեան խնդիրը, շննում են պարզել՝ գյուղացիութիւնը, թե պրոլետարիատը կարող է լինել տիրանում հաղթական հեղափոխութեան շարժիչը:

Նրանցից ոմանք այն կարծիքին են, թե տիրանի պրոլետարիատը չի կարող շարժիչ ուժ լինել, քանի որ բարձրակարգ ապահովագրութիւնը, զանազան արտոնութիւնները ամբողջովին փչացրել են բանվորներին, և գործը պետք է սկսել գյուղից<sup>15</sup>:

Դիւզում ապագա հեղափոխութեան լիցքերի առկայութեան կողմնակից բանտարկյալների ընդարձակ փաստարկներում 70-ական թվականների սկզբին արդեն մեկ յոթնամյակի լինելութիւն անցած ուֆորմների՝ գյուղացիութեանը բերած արդյունքների սթափ դնահատական կա, զրանց հետեանքով գյուղում և քաղաքում ծնունդ առնելից նոր հակասութիւնների կանխատեսումը:

Եւա, մի կտոր թուղթ են սվել ձեռքները (գյուղացիների—Լ. Մ.) որպես պայմանագիր: Դիր կծի մեշ ու շուրջ խմբի: Դեռ մինչև 15 տարի որպես հողի արժեքի մարում, կալվածատիրոջը պիտի բերքի մաս առնու: Իրենց բաժին 2—3 հեկտար հողի համար տեղան էլ չեն կարող վճարել: Դրամագլուխ էլ չունեն: Ստիպված ընկնում են պարտքի տակ, բանկին լինի, բերքը արմատի վրա գնողին, թե գյուղի վաշխառուին, տարբերութիւն չկա: Ի վերջո հողը լքում, գալիս են քաղաք, գործի հույսով, որը չկա, կամ անվազն մեծ մասի համար չկա: Որոշ ժամանակ ուզածիդ պես դռնեզուռ քարշ գալուց հետո, հենց որ քաղաքի հեքիաթի ճշմարտութիւնը հասկացան, դառնում են դեպի հողը, որից օտարացել են: Քաղց, հուսահատութիւն<sup>16</sup>:

Ոչ պակաս ճանաչողական արժեք ունի Իրանի պրոլետարիատի հեղափոխականութիւնը ապացուցելուն հետամուտ երիտասարդ բանտարկյալի խոսքը: Նա բնկված համոզում է, թե պետք չէ կուլ տալ Իրանում բաշխատանքի և կապիտալի անտագոնիզմի վերացման մասին պաշտոնական պրոպագանդայի կողմից շանաղբարար հրամցվող սուտը:

Մուրհմն,—հեղանքով նկատում է նա,—որպես մեկ դասակարգ, պայքարից ալևս ձեռք են քաշում... Եվ դուք դրան հավատո՞ւմ եք:

—Քանն էլ այն է, որ տեսնում ենք:

—Իրանի իշխանությունը ևս մեզ պես տեսներ ու այս բոլոր ճշումների, ձերբակալությունների ու բանտարկությունների համար պատճառ չգտնե՞րք<sup>17</sup>:

Եթեաւ ուշադրով է բանավիճողներից մեկի գիտողությունը, որն ըստ էության բացահայտում է 60-ական թվականների վերջերին Իրանում բանվորական շարժման մասին ստեղծված պատկերացումների խաբուսիկությունը:

«Մի բան էլ կա,—նկատում է նա,—իշխանության ուժն ու խորամանկությունը, զործարանի օգուտներում բանվորների մասնակցության մասին իր բարձրագույն խոստումներով քողարկում է այդ (կապիտալի և աշխատանքի—Վ. Շ) անտազոնիզմը<sup>18</sup>:

Բանտարկյալների բանավիճում այս ծայրաբևեռ տեսակետների բախումն ավելի քան ճիշտ պատկերացում է առլիս գաղափարական այն սուր հակասությունների մասին, որը բնորոշ էր 60-ական թվականներին Իրանում ծավալված քաղաքական պայքարին: Մի կողմից՝ բուն թափ ստացած կապիտալիստական զարգացման պայմաններում բանվորական շարժման առանձնահատկության իրատես ընկալում, մյուս կողմից՝ այդ շարժման լիցքերի ժխտում:

Գաղափարական այս բանավիճը ճանաչողական այլ կարևոր եզրեր ևս ունի: Այստեղ դժգոհ չէ նկատել նաև գաղափարական այն էկզիսկալիզմը, որով տառապում էին երկրում և արտասահմանում գործող զանազան կուսակցական խմբերն ու խմբավորումները:

«Ապիտակ հեղափոխության» ծրագրով անցկացվող վերափոխությունների արդյունքների, զրանց բերած և խոստացած բարիքների նկատմամբ Իրանում գրանորված դժգոհության ու տրամազրոյությունների մասին պատկերացումը գրողը ամբողջացնում է խոշոր հողատիրության — ներկայացուցիչներից մեկի վերաբերմունքով: Մոլուցքի հասնող առևտրյամբ է խոսում քարաշյի խոշոր հողատեր Ջարզամֆարը հողային ռեֆորմի մասին, չվարանելով այն անվանել բնածագուն դավաճանություն, որ բանգամալույծ է գարձնում Իրանի գյուղատնտեսությունը:

Ջարզամֆարը իր եզրոր հետ բանտ է ընկել, որովհետև լի հոժարել իր 60 միլիոն արժեցող հողը (ո՞ր՞ալ թե թուման—հեղձում է հեղինակը) կառավարող կուսակցություններից մեկի գլխավոր քարտուղարին վաճառել: Նա անդրդվելի է մնացել նաև գլխավոր քարտուղարի հովանավոր մինիստրի հորդորներին՝ վաճառել հողը ու պրո-

ենէ զհոգային ռեֆորմի գլխացազանքիցա: Գործել է կամայականութեամբ, չեն օգնել արգարադատական մարմիններին արժան բողոքները: Կամայականութեան մեխանիզմը կալվածատերը ինքն էլ է հասկանում: Ե՞նում են դատախազի մտա, տեսնեմ, ոնց որ դրա ականջին մի բան են փսփսացել: Հաշտութեան մասին է խոսում ու նման բաներիցս<sup>19</sup>, Կպել են կալվածատիրոջ իրավունքներին, ու հանկարծ եւ դարձել է ոչ ավելի, ոչ պակաս, առաջինների կարեկից, իր կարեկցանքի խոսքում ակամայից բացահայտելով հոգային ռեֆորմի բռնութեաները:

Ենեղներ, գլխերիս դարձել են հոգատեր: Էն էլ ինչ գլխացազանքներով, գրասենյակային քաշքշուկներով, վարչական հակայական ծախսերով, որոնք ի վերջո՝ դժբախտների գրպաններից են քաշում, զեւ մի կողմ թողած հողի արժեքի ապառիկ վճարները, որ պետք է տան այլքները դուրս գալովս:

Կալվածատերը շարախնդում է պրոպագանդիզոլ այն ծրագրի վրա, որով նախատեսվում էր մեքենայացնել գյուղատնտեսական արտադրությունը. 25<sup>10</sup> վ կարող է իրագործել այդ Այս 2—3 միլիոն գյուղական բնտանիքները, որոնց երկու, երեք, ամենաշատը՝ հինգ հեկտար կտոր-կտոր արած հողեր են ավել: Այդ դժբախտները ի՞նչ կարող են անել: Նույնիսկ դրա համար գրամոզլուի շունեն: Ասում են նրանց վարկ կտան, ինչքա՞ն, ու նրանց ո՞ր տեղը կծածկի, համ էլ ինչի՞ վրա կմտխվի: Նրանց մերկ ու տղիւր կին ու երեխային մի-երկու օր նոր բաներ կհազդնի ու մի ուղի՞-արանգիտտոր կրերի թարեքին: Նորից էն քաղցածությունն ու դատարկամեռնությունը, մինչև կոկորդ հասնող պարտքը<sup>20</sup>:

Զարգամֆարը քամահրանքով է վերաբերվում հոգային ռեֆորմի ծրագրերին, դրանց արդյունքում կանխատեսելով սուզի, խրոնիկական քաղցի հեռանկար: Այդ բարեփոխումների նկատմամբ իր ատելութեամբ թաքցնելու գիտավորությունը Զարգամֆարը լրմեղանքով վրա է տալիս. 29<sup>11</sup>, մտտաղ, ի՞նչ էք ուսում: Ես էլ եմ ասում, թե պապենական ունից պետք է հրաժարվել: Ոչ արքաք, ոչ ռայաթ, այդ արդեն մեռավ-գնացա:

Նա մանրամասնում է իր պատկերացումները երկրի տնտեսության առողջության համար, ըստ իրեն, առավել ձեռնառու խոշոր հողատիրության զարգացման մասին: Նրա կարծիքով, լավագույն հանապարհը Եգիպտի ավելորդ բնակչությունը մորիլիզացնելու միջոցով խոպան հողերը յուրացնելն է, որը կարելի է իրագործել գյուղատնտեսական

բանկից արամադրած վարկերի ու հոգատերերից պարտադիր վերցված փոխառության միջոցով:

Ինչպես հայտնի է, երկրում գոյություն ունեցող բոժիմն ու կարգերը փոխելու լուրջ, խնամքով մշակված իր ծրագրերն սուեր նաև հոգևորականությունը: Հոգևորականության զանազան խավերը եերկայացնող կազմակերպություններից յուրաքանչյուրը յուրովի էր պատկերացնում այդ ծրագրերի իրագործման ուղիները:

Վիպակում, ինչպես պետք էր սպասել, շատ են հոգևորականության եերկայացուցիչները, անուղղակի վկայություն 60-ական թվականներին թափ առած հոգևորական ընդդիմադիր շարժման ու կառավարող շրջանների՝ դրա դեմ ուղղված բռնության մասին: Նրանց մեջ կան և ռՅեզայանն էսլամս կազմակերպության անդամներ, որոնցից մեկը Ե...ասում են, մասնակցել է պրեմիեր մինիստր Հսեյն Ալի Մանսուրի սպանությանը<sup>21</sup>:

Այստեղ են համելյնի երկերը վաճառելիս, կամ նրա անձնական հանձնարարությամբ գրանք Իրան փոխադրելիս բռնված գրավաճառներ, հոգևորականներ: Նրանք բանաում կազմակերպել են իսլամի օրենսդրության (Ֆիքհ) և ուսմունքի ուսումնասիրման դասընթացներ, լեզուներ են սովորում, անհրաժեշտության դեպքերում՝ միջնակարգի դասադրքեր սերտում: Նրանց մեջ հատկապես շատ են ԵՄՆուալն էսլամս կուսակցության անդամները, մեծ մասամբ երիտասարդներ: Նրանցից մեկը՝ Հոշաթին, նրա նկատմամբ յուրաքիներքի ցուցաբերած հարգամեծար վերաբերմունքից զատելով, այդ կուսակցության դիրք ունեցող անդամներից մեկն է: Հեղինակը խնդրում է նրան պարզել Իրանում անցկացվելիք վերափոխությունների վերաբերյալ իր կուսակցության ծրագրերը:

Հոշաթին ուղղակի նշում է, որ իր՝ ԵՄՆուալի ժողովուրդներն կուսակցության նպատակն ԵՄՆուալի իշխանության հաստատումն է, քանի որ իսլամի Երնդարնակ ու համակողմանիս, ԵՄՆուալարակողմած ու նկունս շիա ուսմունքը կարող է քաղաքակրթության հետ համաքալլ լինել: Որպես այդպիսի իշխանության ախպար նա մատնանշում է իսլամի նախնական շրջանում Երնդարնակների ախրակալս (ամիր արմուսնին) Ալիի խալիֆայության ժամանակաշրջանը: Իր դրուցակցի այն հարցին, թե նրանք ինչպես են պատկերացնում իսլամի իշխանությունը ներկայիս համաշխարհային ասպարեզում իմպերիալիզմի և սոցիալիզմի գոյության պայմաններում և ունեն արդյոք որոշակի պատկերա-

ցում այդ պայմաններում ստեղծվելիք պետականության քաղաքական, տնտեսական, նյութական և մշակութային, գիտական անկախության հասնելու ուղիների մասին, Հոլաթին պատասախանում է. «Բնարկն մենք այսօրվա աշխարհում ենք սպրում և ստիպված ենք նկատի առնել մարդկանց զասակարգային հակումները: Մենք շանում ենք հասարակագիտական և տնտեսագիտական խնդիրներին տեղյակ լինել և այսօրվա գիտությունից ոգնություն ստանալ: Մենք պայքարում ենք իմպերիալիզմի և գեապոսիզմի դեմ, իսկ սոցիալիզմից ընդունում ենք այն, ինչը տեղավորվում է իսլամի սկզբունքներով կազմակերպվող հասարակության մեջ: Մական նորից եմ կրկնում, այս ամենը՝ իսլամի գրույթների շրջանակներում և հանուն իսլամի կատարյալ տիրապետության»<sup>22</sup>:

Բազմազան ծրագրեր, բազմազան գաղափարներ: Գրանց շատագուցներից շատերը բանտ են ընկել, ձախողված պայքարի կամ մատնության հետևանքով: Նրանք այստեղ են բերել նաև իրենց զբոս ասարածայնությունները: Բայց պայքարում ձեռք բերած որոշակի փորձը նրանց հուշում է միավորվելու անհրաժեշտության մասին: Այդ հարցը հուշում է բուրբին, հատկապես երիտասարդությանը: Միավորումը նրանք պատկերացնում են որպես իրենց բաժանող հակասությունների մոտացում էրենց միմյանցից տարանջատող սահմանադատումներից հրաժարում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Բենադինը ուղղակի նշում է, որ ինքը արտակարգ կարևորություն է տալիս ընդգիմապիւր ուժերի միավորման խնդրին և իր պարտականությունն է համարում: ամեն պատե՛ առիթով բանտարկյալների հետ կիսել իր նկատառումները. «Դուքն այս զնգանի շորս պատերի ներսում պայքարի միասնական սերունդ կազմավորվի»<sup>23</sup>:

Այս ոացիոնայ, ժամանակի ազգային-ազատագրական և հեղափոխական պայքարի փորձով իրեն արդարացրած գաղափարը հնչի՛ նակի համար կարևոր է դառնում իր երկրի երիտասարդությանը խնամակալ-հոգեբարձունքի կեղծավոր մասհոգությունը հանգես հկող գաղափարական գաստիարակների ազդեցությունից հետո պահելու տնտակետից: Իսկ թե որքան շատ էին գրանք երկրում ամերիկյան իմպերիալիզմի ամենակայություն, իրանական պաշտոնական մամուլի շանագրության պայմաններում, առաջագեմ գրողը ավելի քան լավ գիտեր:

Բենադինը, որ ամբողջ վիպակում հաղվադեպ է ուղղակի միշտ-



ժառանգորդների զբաղմունքն ու վեճերին, իր վերաբերմունքը մեկուսի, ներքին մեկախոսության միջոցով արտահայտելով, առիթը բաց չի թողնում ընդառաջ գնալ միավորման մեմայի շուրջ բացված զբաղմունքներին, լինի դա շուրջամի ժողովուրդները կուսակցության, թե շուրջամի մարտիկները կազմակերպության անդամների հետ:

Երկրի ընդդիմադիր ուժերի համախմբման լավագույն մեք նրան պատկերանում է բլոկի՝ ճակատի մեղմ, ճակատ, որը պետք է հիմնվի նրանց բուրնի համար ընդհանրական նպատակների վրա. պայքար հանուն ազատության, ընդդիմ թանակալության, խնայելիախղճի: Գրողի այս նկատառումներում դժվար չէ նկատել Իրանի՝ 60-ական թվականներին այսպես կոչված «Երկրորդ ազգային ճակատի» հուսադրի գործունեության արձագանքները: Սակայն պատահական չէ, որ հեղինակը մեթոմ է գաղափարական կոմպրոմիսի գեղմ միավորումը: Այդպիսի միավորման ախար որինակն արդեն իրողություն էր ի դեմս շիրանական սովորողների և ուսանողության համաշխարհային կոնֆեդերացիայի (Ազգային միություն), որի պատակտման պատճաններից մեկը գաղափարաքաղաքական տարանջատվածությունն էր<sup>24</sup>:

Վիպակը որոշակի պատկերացում է առլիս գաղափարական որոնումների մասին, որոնք բնույթ չին այդ շարժմանը, որոնումներ, որոնք բարդանում չին զանազան քաղաքական էրտարմիտատական տեսությունների լմարված ազդեցությամբ: Այսպես, հեղափոխության շարժիչ ուժերի և իրողություն ուղիների վերաբերյալ վերը հիշված բանավեճը առև կրկնում է սերտասահմանում թուղի կուսակցության հեղափոխական կազմակերպության և «Թուֆան» խմբավորման կոնֆլիկտը՝ որտեղից սկսել հեղափոխությունն Իրանում հարցի առթիվ: Ի դեպ, առաջինի բանում գտնվող անդամներից մեկը հեղինակին ուղղակի հայտնում է իրենց այդ կոնֆլիկտի մասին: «Թուֆանը», ինչպես հայտնի է, հանդես գալով շեշտված մատիտական դիրքորոշմամբ, այն տեսակետին էր, թե հեղափոխությունը պետք է սկսել գյուղից, ծավալել ծայրամասերում և վերջում միայն ներտանել քաղաքները<sup>25</sup>: Պրոլետարիատի՝ որպես հեղափոխության շարժիչ ուժի միտման այս տեսակետից զատ, վիպակում արտացոլում են ստացել բանտարկյալ երիտասարդների մատիտական այլ հայացքներ և:

Այսպես, ԱՄՆ-ի հետ 1960-ական թվականների վերջերին ՍՍՀՄ-ի բարելավված հարաբերությունները բանտարկյալներից ումներ չեն վարանում որակել սգրմեմ տերությունների գործարք: Պատահական չէ,



որ հետագայում Իրանի ժողովրդական կուսակցությունը (Քուզե) սուր հակահարված տվեց այդ գաղափարներին, բացահայտելով Իրանում գործող մասնական զանազան խմբավորումների կեղծ հեղափոխական էությունը, որոնք պառակտում էին դիմադրողական շարժումը, ի վերջո թուլացնում հակամիադեոտական և հակաիմպերիալիստական պայքարը<sup>26</sup>։

Անհրամեշտ է նշել, որ Խման գաղափարական զրսևորումները վիպակում առանց ընդդիմախոսության չեն մնում։ Բանավեճերից մեկի մամանակ երիտասարդներից մեկը, ինչպես Բեհազինն է բնորոշում Ելաշուլանեն (կամակորարար) կրկնում է ՍՍՀՄ-ի դեմ մատիստների հերյուրանքներից մեկը։ Նա բարբառում է, թե ՍՍՀՄ-ը բիրտազգային ասպարեզում ալլես այն հեղափոխական ուժը չէ, որ նա կանգնած է «հեղափոխության էսենսպարհին» (իմա՝ արգելակում է հեղափոխական շարժումները)։ Նրան համոզիչ առարկում է Իրանական Ազգրեշանի Դեմոկրատական կուսակցության անդամ, հեղափոխական պայքարի մարտիկի գաղափարները բանտում թրծած Մոթամազիանը։ Հիշելով քաղցր պատույնների պատճառով քարակոծ ու ճղակոտոր դարձող թթենու ալլաբանությունը, նա դառը ժպիտով նկատում է. «Մուրման և Իսրայելն է ժողովուրդների թշնամին, որը խլում է արարների հոգերն ու երկու միլիոն արարների խփում, թափառական է դարձնում, և Մովսաթ, որ կանգնում է, Անվտանկության խորհրդում անց է կացնում զենիարացիա ու բացի քաղաքական պաշտպանությունից զենվորական, մշակութային ու տնտեսական օգնություն ջույց տալիս Երանց»<sup>27</sup>։

Մասական գաղափարների նկատմամբ իր վերաբերմունքը Բեհազինը արտահայտել է սպանիչ երգիծանքով գծված մի երիտասարդի կերպարով։ «Այս բարձր էակաթից ու լայն դեմքից, այս հաստ ու մկանուտ վզից ուժ է թափում։ Լայն կուրծք ու հեղափոխականի փակօձիք բանկանի տակից գեղազովող կլորիկ որովայն։ Իզուր չէ, որ տղերքը նրան շրկիք Մասո են ասում»<sup>28</sup>։ Իր հուշակալուր նախատիպին շարժումներով անգամ կապկում է տեսության սակունքներից չուր խմողս երիտասարդը։ Նրա մեջ տեսքս անքան է պալարվել, որ էլ տեղ չկա։ Այս դիմանկարում նաև շրջապատի հակակրական մեթոդական վերաբերմունքի անդրադարձումը կա հեղափոխության կոկոզավիզ քառասրանիս նկատմամբ։ Բեհազինը պատահական լի գործածում այտանդ պալարվելս (ամաս քյարդան) արտահայտությունը։ Օտարամուտ, պալարանման գաղափարական այս հովերը, որքան էլ աղքեցիկ, սոսկ հո-

վեր էին: Լեզրենակը բանտի երիտասարդների մեջ տեսնում էր մի թշուր  
շունչ, որը թեև բուրբուրում էր, բայց գործնականում եղանակներ ուներ:

ՅՕ-ական թվականներին նոր միայն կազմավորվող երիտասարդա-  
կան խմբերն ու խմբավորումները քաղաքական, գաղափարական և  
պրակտիկայի իրենց որոնումներում ակնդետ հետևում էին աշխարհի  
չորս ծայրերում ծավալվող ազգային ազատագրական, ղեմնկրատական  
շարժումներին, վերջիններիս հաջողված փորձից զասեր առնելու հետ  
մեկտեղ պայքարի ներշնչանք ստանալով: Հայտնի է, որ Քեհրանի  
համալսարանի ուսանողների գաղտնի խմբավորումներում ուսումնա-  
սիրում էին Զինատանի, Վինտեամի, Կուրայի և Ալմիրի փորձը, թարգ-  
մանում Ծ. Կասարոյի, Զե Գևարայի և միջազգային հեղափոխական  
շարժման այլ հայտնի գործիչների երկերը<sup>50</sup>:

Ազգային-ազատագրական, ղեմնկրատական, հեղափոխական շար-  
ժումների փորձի ճանաչումն իր հետ լէր կարող լրերն էլ համե-  
քաշվելու ձգտում, լցանել ինտերնացիոնալիզմի սերմեր: Այս արա-  
մազգույնությունների առաջին վառ արտացոլումը կա վիպակ-հուշագրու-  
թյունում:

Բանտ են ընդունել երեք երիտասարդ, որոնք բռնվել են Իրանի  
սահմանագլխին: Նրանք նպատակ են ունեցել ռանցնել Իրաք, հետո  
պաղեստինցիների հետ միանալու և Իսրայելի վրա հարձակվելու հու-  
մարս<sup>51</sup>: Երիտասարդների այս շարժումը (որն ի ղեկավարում պրոֆա-  
կատորների թագնացմամբ ձախողվել էր) հեղինակը կոչում է «նոր  
օրվա լուսավոր ուրվագիծ»: Ի ղեկ, հայտնի է, որ սովորողների և ու-  
սանողների համաշխարհային կոնֆեդերացիան սերտ կապեր ունեց  
Պաղեստինի Ազատագրության կազմակերպության հետ, որն առաջինին  
օգնություն էր ցույց տալիս պարտիզանական կազմերի պատրաստման  
գործում<sup>52</sup>:

Վիպակում ընդ օրվա լուսավոր ուրվագիծ հայտածման մի այլ  
եղանակայից վկայություն են կա: Քաղաքականների բանտում լուր է  
հասնում Զիլիի պառլամենտական ընտրություններում ժողովրդական  
միասնությունից դաշինքի հաղթանակի, այդ դաշինքի առաջադրած սո-  
ցիալիստ-մարքսիստ թեկնածուի (Ս. Ալլենդեյի—Լ. Շ.) հանրապետու-  
թյան նախագահ ընտրվելու մասին: Յնժում են բանտարկյալները,  
հատկապես շահմանական կազմակերպության սպաները: Այդ հաղ-  
թանակը նրանց հույս է ներշնչում: Անմիջապես հիշում են Բուլիթիան,  
Պերուն, Վենեսուելան: Գուցե հնարավոր լինի այդ երկրներում ևս պառ-

լամենտական պայքարի միջոցով իրագործել հակամիպերիտիստական, դեմոկրատական շարժման նպատակները:

Այդ ոգևորություն վրա ասես սառը շուր է լցնում գիլանցի երիտա-  
սարգի նկալիկը: «Փուշ, հավատալիս չի գալիս, տեսես ինչ ֆանդ կա  
մեղքա: Առանց ակնել գնելու տղեմոկրատիայի նկատմամբ արմատա-  
ցած հավատի», «արհեստակցական կազմակերպությունների բավարար  
ուժիս որոշիչ գործոնների վերաբերյալ ընկերների փաստարկներին, գի-  
լանցին համառոտ կեղծում է. «Գուցե և այդպես է, չգիտեմ, բայց ես  
փնտրում եմ, տեսե՛մ հրացանն ու գնդացիներ ու՛մ ձեռքին է՛ն»<sup>22</sup>: Գիլան-  
մարդի այս խոսքերը ասես սթափեցնում են բանտարկյալներին առա-  
ջին ոգևորությունից:

Նրանք փորձում են առարկել, թե ե՞ժարը հեզուտ դեմոկրատական  
ուժերի ժանրանալու դեպքում «իշխող դասակարգերի կռալիցիայի ա-  
մեն մի դիմացություն կարող է իջուր, ինքնասպանություն նման լի-  
նելու: Անդրգվելի է գլուղացի երիտասարդը, և նրա համառ փաստարկ-  
ներին ի շուր ներկաները մտաբերում են հետո և մտտիկ պատմական  
անցյալի դասերը՝ Փարիզյան կոմունա, Մեղոնեզիտ: Նորից հետևում է  
գիլանցու խոսքը. «Դուք ասում եք, տեսություն կա, դրա իրագործումը  
պատրաստություն է պահանջում, չանք է պահանջում: Գործը պետք է  
պատրաստել և նյութապես, և գաղափարապես: Քանի որ հակառակորդը  
մարզված է, գործի սանձերը ձեռքին են, դրամը, եկամտի աղբյուր-  
ները, կառավարական հիմնարկները, բանկը, արտաքին կապերը...  
Նրան չպետք է ժամանակ տալ ուղքի գալու կրած հարվածից: Պետք է  
նրա եղունգներն արմատից կտրել, կայունության բոլոր հնարավորու-  
թյունները պետք է նրանից խլել»<sup>23</sup>:

Այսօր արդեն պատմության դաժան իրողություններ հաստատված  
զարմանալի հեռատեսություն (հիշենք, որ այս խոսքերը ասվում էին  
1971 թ.), Բայց այս հեռատեսությունը պատճառարանված է հնչում  
մի քաղաքական բանտարկյալի շուրքերին, որն իր ծննդավայր Գիլա-  
նում 1921 թ. Ֆեշված ջանգալիների շարժման դասերին մանկուց ա-  
կանջալուր լինելու հնարավորություն էր ունեցել և հեղինակի բնո-  
րոշմամբ սիր գլուղի դասակարգային բախումներում էր ստացել իր  
հեղափոխական թրծվածքը:

Ակներևաբար, գիլանցին բանտում և բանտից դուրս հեղինակի  
ճանաչած հեղափոխականների հովաքական կերպարն է: Խիստ ժլատ,  
բայց դիպուկ նկատված մի քանի գծերով ընթերցողը տեսնում է նրա  
«շոշափելիության չափ կենդանի կերպարը: «Համա տաքերան է

այս գիտնցին, կարեւորասակ է, թիչ կեն թթով նրան կարելի է հեղից ճանաչել բնրանի անկյունից անպակաս շիրուխով: Շարունակ ծամում է այն, երբնին խոր փոք տալիս ու քանի որ աչքերը շիրուխին հասելու սովորութիւն ունի, շիւ է թվումս<sup>25</sup>:

Վննի մեջ գիւանցին գլաքարի է նման, որին բննք տալ կլինի, բայց առամին տալ՝ ոչ:

Բեհազինը շէր կարող շտեղծել ժողովրդական զանգվածներից սերված, դասակարգային պայքարի կոսմոսով և հեղափոխական առաջադիմական տեսութայամբ զինված մարտիկի այսպիսի մի կերպար:

Գատելով բանտային հանդիպումների ու զրույցների վերաբերյալ նրա խոհ-մենախոսութիւններից, Բեհազինին խորապես մտահոգում էր Իրանում որովոր ահող ընդդիմազրութիւն շարժման ապագան: Գաղափարապես ու կազմակերպականորեն տարանջատ էր այդ շարժումը, բայց, ինչպես գրողն է պնդում, եռակցվելու էր, քանի որ սնվում էր ժողովրդի արմատներ ունեցող ցասումից:

Նա ուներ ժողովրդի կամքի արտահայտիչ, այդ կամքին կյանքը նվիրաբերող մարտիկի պեղոսիտական իր իգեալը, որը մարմնավորել էր դեռևս 1940-ական թվականներին գրված «Գլուխացու աղբիկը» վիպակի հերոս Ահմադ-Գոյի կերպարում<sup>26</sup>, հեղափոխական ուսմանտիկայի շնչով ստեղծված սկզբնապարվեցնք, բնրանական գորգ առձակ բանաստեղծութիւններում:

Պատմութիւնը կրկնվում էր նրկում խմորվում էր նոր հեղափոխութիւն: Բեհազինը նորից գրական կյանքի պիտի կուշեր իր գեղագիտական իգեալը, որն այս անգամ հննվում էր ոչ միայն պատմութիւն, այլև արդիականութիւն դասերին:

Պարսից արդի պոետիայի մասին բանտարկայւնների խնդրանքով իր կարողացած գասախոսութիւններից մեկում Բեհազինը այսպես է բնորոշում գրականութիւն, գրողի պարաքը ժողովրդի նկատմամբ՝ «Մարդկանց կողքին լինել, նրանց մեջ կենդանացնել հույսը, բացել նրանց աչքերը գեղեցկութիւն և էշմարտութիւն նկատմամբ, որովհետև ճշմարտութիւնը ուժ է, գեղեցկութիւնը ուժ է»<sup>26</sup>: Բեհազինը ուներ իրավունք ասելու այս խոսքերը, քանի որ նա ստեղծել էր մի երկ, որը գորու էր իր հայրենակիցներին նանաչել տալ 70-ական թվականների սկզբի Իրանը իր հակասութիւններով ու հույսերով, խմորվող տրամադրութիւնների այն լիցքերով, որոնք պիտի առաջիկա հեղափոխական իրադրութիւնը նախապատրաստեին:

ОТРАЖЕНИЕ РЕВОЛЮЦИОННЫХ НАСТРОЕНИЙ  
В МЕМУАРНОЙ ПОВЕСТИ ИРАНСКОГО ПИСАТЕЛЯ  
БЕХАЗИНА «ГОСТЬ ЭТИХ ГОСПОДЬ»

Резюме

В основу повести Бехазина легли его воспоминания из тюрьмы, куда он в 1970 г. был брошен шахскими властями по поводу составления и подписания протеста-заявления «Общества писателей Ирана» в связи с арестом известного прозаика Ф. Тонкабони.

Писатель день за днем представляет свои встречи, беседы с заключенными, передает их споры по различным социально-политическим проблемам страны, международной жизни. Среда заключенных представляет как бы микромир политической жизни Ирана начала 70-х годов. Многоголосен этот мир, и в его многоголосии отражаются не только идейно-политические настроения различных течений иранского движения сопротивления, но и противоречивость, организационная раздробленность самого движения.

Повесть дает отчетливое представление и об одной характерной тенденции, проявленной к началу 70-х годов: перебороть раздробленность, вплотную на основе объединяющей все течения цели: борьба за свободу, против шахского деспотизма, империалистического насилия.

Все это, подкрепленное реалиями исторических событий времени и страны, придает большую познавательную значимость повести Бехазина.

Писатель имел право декларировать долг творцов слова: «Быть рядом с народом своим, открыть ему глаза на красоту, на правду. Ибо красота это сила, правда—сила».

Повесть «Гость этих господь» подтверждение этого гражданского творческого кредо Бехазина.

1 Ռեճիֆէ, Մեճման ին ազալան, Քեճրան, 1950/1971 (այսուհետ՝ Մեճման ին ազալան): «Հարֆէ»-Քանաքիլէ եղբորգրութեանն զիբր Այսու ի զիբրաւ-  
զան ազրէշանան զզրոյն գարֆալիզու քանաքիլէ հարան Շիրզանի  
(1120—1185)՝ քանաքիլ զրզան, քանաքիլան ու ազրիպիլան աւարգարթիլիզ  
զաւարտուղ շարիֆներ ին զզրզանու:

2 Յերէշու Քանաքիլին սիսէ ի սանգարտիլէ 60-ական թվականներ սիլլի-  
Հեղինակ ի Մարզը զանգաւուս (Մարզի զար զաթաւ), սեւի զիլլիս (Մա-  
րի ի իւր), սեւիմաւուսիլէ զիլլիզա (Քիլիլէ զաթրանէ), սեւիզար զիլլիզա

առաջինը (Սեֆարեանի շարժերն) և սեֆեր ազգույն զուգարթը (Ճագարթույն շահրն շուրազ) գրքերը Բախարվել էր պատմագրների վերջին մտազգայն հրատարակման ազգիսով: Շնչ որում այն ձեռագրների՝ բանվորական շարժման թեմայով արված սկզբնական պատմագրքը նվիրված է Քեհազինին:

- 3 Այս առիթմաբարձրական մասին տե՛ս Գ. Օ. Մովսեսյան, Творчество Бозорца Алтая, Ереван, 1980, с. 28—29.
- 4 Сквозь телену тумана, М., 1977, с. 7; Ա. Տ. Գյումաշյան, Крестьянский вопрос в современной персидской прозе, Тбилиси, 1977; Дж. Х. Дорри, Современная персидская сатирическая проза, М., 1977.
- 5 սեֆարեա, 1871, թիվ 11:
- 6 Մեհմանն թն ազալան, էջ 3:
- 7 Խույն տեղում, էջ 21 (Թարգմ. Լ. Ն.):
- 8 Խույն տեղում:
- 9 Սազմանն լեզվարթն Շեքրն Քույն զար խարթը:
- 10 Նազմաննաբարձրանը 1966 թ. հիմնել են Քույնից Վառլանտ նրախարարական սեղանայն տեղանները: Տե՛ս E. New Jersey, 1983, p. 454.
- 11 Մեհմանն թն ազալան, էջ 57:
- 12 Լրիվ տեղանույց սերականան ազգի՝ պանիստմարթն հիմնագրերով հուսանաբարձրանն Նիհազդի է 40-ական թվականներն վերջերին: Տե՛ս Իրան, Հայաստան, Մ. 1975. Վ. 89; E. Abrahamian, Նշված աշխ., էջ 437.
- 13 Մեհմանն թն ազալան, էջ 25:
- 14 Խույն տեղում:
- 15 Խույն տեղում, էջ 114:
- 16 Խույն տեղում:
- 17 Խույն տեղում:
- 18 Խույն տեղում:
- 19 Խույն տեղում, էջ 37—38:
- 20 Խույն տեղում, էջ 121:
- 21 Պրեմիեր-մինիստրը ազանել էր 1966 թ. հունվարին սեֆարեանն իսլամն հարձակաբարձրան տեղաններին ձեռն նկարով: Տե՛ս Մ. Տ. Իվանով, Иран в 60—70-х годах XX века, М., 1977, с. 161.
- 22 Մեհմանն թն ազալան, էջ 93:
- 23 Խույն տեղում, էջ 54:
- 24 А. Г. Данишин, Иранские молодежные организации в странах Западной Европы (1960—70-е годы), Всесоюзная школа молодых востоковедов, Тезисы, т. 1, ч. 1, М., 1982.
- 25 E. Abrahamian իսն, նշված աշխ., էջ 454:
- 26 Ն. Մ. Խախանյուր, Մասիզմ վա թազմարթն տն զար Իրան (Մասիզմը և նրա արձագանքները Իրանում) ք. շ. 1353 (1974—1975):
- 27 Մեհմանն թն ազալան, էջ 101:
- 28 Խույն տեղում, էջ 142:
- 29 E. Abrahamian, նշված աշխ., էջ 482:
- 30 Մեհմանն թն ազալան, էջ 144:

- 31 E. Abrahamian, *Յղագրագրք*, էջ 483.
- 32 Մեհմեթ ին ազադան, էջ 146.
- 33 Նուրի ահալաճ, էջ 148.
- 34 Մեհմեթ ին ազադան, էջ 145.
- 35 Վրացիք 1921 թ. Վրացի հեղափոխության շարժման ճիշտ գնահատման և ար-  
 արագության (պարզից արժեքում) Վրացիքի ժողովրդականության ան՝ Վ. Ս. Գյու-  
 նախանի, *Крестьянский вопрос в современной персидской прозе*, Тбилиси,  
 1977, с. 35—50.
- 36 Մեհմեթ ին ազադան, էջ 71.



Ք Ո Վ Ա Ն Կ Ա Կ Ո Ւ Փ Ց Ո Ւ Ն

ՔԱՄԱՆԱՅԻՆ ԱՅՈՒՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԵՐՈՍՄԵՆՐ

Ա. Ռ. Լավալենդյան, Քուրթիայում շեր պատմական կոնցերտիայի մշակման հարցի շուրջ (XX գ. 80-ական թթ.)	3
Թ. Ա. Մանասյան, Եգիպտոսի տնտեսության մեջ տրայ գանձի քաղաքականության ներդրումը	17
Գ. Վ. Լավիլյու, Եսպանիայի գաղութարարության մի ջանի ապակները	27
Գ. Խ. Մանվելյան, Իրաքի կոմերսը և առաջադեմական ուժերը կոմերս ազդեցության համար պայքարում (1870-ական թթ.)	35
Ա. Գ. Մասնադրյան, Ալգալիե հակառի ժամակցությանը 1875—1878 թթ. իրանական հեղափոխությանը	55

ՄԻՋԱՅՄԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՆՆԵՐԻ ՊԵՐՈՍՄԵՆՐ

Հ. Մ. Գեֆգոյան, Միրիայի պայքարը շեր փթրուցում ջոմփակիի հեղափոխական համարիտարի վերանայման համար	72
Ե. Լ. Սարսանակչյան, 1845 թ. Գրան-Կոնտայի կզմումի կհամար Արարական լիգայի դիրքորդման փախուման հարցի շուրջ	82
Հ. Ս. Սարսանակչյան, Քուրթիայի դիրքորդումը Սովետական Միության կհամար Հայրենական ժեղ պատերազմի առիթներին (1941—45 թթ.)	82
Ա. Լ. Մանուկյան, Պաղեստինի հարցը 932-ի ճերտվորարկիայի քաղաքականությունում	112

ՄԻՋՅԵ ԵՎ ԵՈՐ ԳԱՐԻՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՐՈՍՄԵՆՐ

Մ. Յ. Քաղայան, Յամանյան կազմային համակարգի (իթիլում) պատմությանը	124
Ռ. Ս. Գանիկյան, Յամանյան կազմայինում քաղաքական միտիներների գործունեության պատմությունը (XIX գ. վերջ XX գ. սկիզբ)	138
Հ. Գ. ՈՒՅԼԻՅԱՆ, Մաքիայական հեղափոխությանը և քաղաքականությանը	158
Ա. Ա. Հարությունյան, Անգլիական արապականության արապերումը Եգիպտոսում XIX գ. 80-ական թթ.	172
Ա. Ա. Մկրտչյան, Սասանյանայալի 717—718 թթ. պաշարումը արապերի կողմից՝ քաղաքական աղբյուրներին	186
Ե. Հ. Կաղարյան, Եգիպտական շվաթական կուսակցության արևելափոխական թեր	230

Գ. Լ. Սարալյան, Ազգիական արգասության հարցը իմաստիական գաղափարախոսության մեջ	223
Ծ. Ա. Սահրաւայան, Ամանկից՛ի զնկարինան երիտօրոքերի կուսակցական փաստագրերում (1908—1916 թթ.)	229
Ա. Վ. Սանֆանյան, Կոչ Հուլայի արհեստները	232
Ս. Խ. Սանֆանյան, Հայ զանաազանութիւնը Հյուսիս-արեւելյան Իրանում	256
XXX Գ. Վերջին XX Գ. սկզբին	266
Ա. Գ. Փալաւլան, Քրդերի արարական ծագման միջնադարյան վարկածի շուրջը (չսու արարական աղբյուրներ)	282

ՔԱՆԱԽՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Ա. Ասատրյան, Հոգեակնակներս -ընդ անանցը իրանական լեզուներում	300
Լ. Լ. Մովսիսյան, Ծայրի աշխատավորութեան գոյքաւորի սրտաշարումը գործիք գրողների կրկնում (70-ական թթ.)	305
Լ. Լ. Մկրտչյան, Հեղափոխական արամազրութիւնների սրտաշարումը իրանական գրող Քեհազնի սկստ գործերի հարցը վիզակ-հուլայութեանում	319

## СОДЕРЖАНИЕ

### СОВРЕМЕННЫЕ СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

<i>А. Р. Омамсиан</i> —К вопросу о выработке в Турции «новой исторической концепции» (30-е гг. XX в.)	5
<i>Ж. А. Мамасян</i> —Исдержки политики «открытых дверей» в экономике Египта	17
<i>Г. В. Новикова</i> —Некоторые аспекты идеологии Насера	27
<i>К. Х. Самвелян</i> —Компартия и прогрессивные силы Ирака в борьбе за эмансипацию женщины (70-ые годы)	38
<i>А. Г. Стаболовьян</i> —Участие Национального фронта в иракской революции 1978—1979 гг.	55

### ПРОБЛЕМЫ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

<i>Г. М. Грыгорян</i> —Борьба Сирии за пересмотр концессионного соглашения с «Ирак Петролеум Компани»	72
<i>Ш. Л. Карджанулян</i> —К вопросу об оценке позиции Арабской лиги в отношении франко-levantийского кризиса 1945 г.	85
<i>Р. С. Корхмазян</i> —Позиция Турции относительно Советского Союза в период Великой Отечественной войны (1941—1943 гг.)	93
<i>А. Л. Мамучарян</i> —Палестинская проблема в ближневосточной политике ФРГ	113

### ПРОБЛЕМЫ СРЕДНЕВЕКОВОЙ И НОВОЙ ИСТОРИИ

<i>М. Т. Боджолян</i> —Из истории османской откупной системы (валтызам)	124
<i>Р. С. Дамцелян</i> —Из истории деятельности протестантских миссионеров в Османской империи (конец XIX—начало XX вв.)	138
<i>О. Г. Инджикян</i> —Социальная психология и геноцид	158
<i>С. А. Арутюнян</i> —Укрепление английского господства в Египте в 80-ых годах XIX века	173
<i>А. А. Малкомян</i> —Осада Константинополя арабами в 717—718 гг. по вранских источникам	185
<i>Е. О. Наджарян</i> —«Всеенное крыло» египетской партии «Ватани»	200

<i>П. А. Сароджан</i> —Вопрос социальной справедливости в идеологии исламизма . . . . .	223
<i>Ф. А. Софрастан</i> —Доктрина османизма в партийных документах младотурок (1906—1916) . . . . .	239
<i>А. В. Степанян</i> —Ремесла Новой Джульфы . . . . .	253
<i>С. Х. Степанян</i> —Артизанское кузнечество в северо-восточном Иране в конце XIX начале XX веков . . . . .	258
<i>А. П. Поладян</i> —К вопросу о средневековой версии арабского происхождения курдов (по арабским источникам) . . . . .	282

#### ФИЛОЛОГИЯ

<i>Г. С. Асатрян</i> —Суффикс множественного числа <i>-ga</i> в иранских языках . . . . .	300
<i>Г. О. Мовсисян</i> —Отражение борьбы сельских труженников в произведениях персидских писателей (70-е гг.) . . . . .	305
<i>Л. Г. Шехоян</i> —Отражение революционных настроений в мемуарной повести иранского писателя Бехазина «Гость этих господ» . . . . .	319

Իրագրում է ՀԽՍՀ ԳՈ արևնագիտության ինստիտուտի  
գիտական խմբակի անդամը


Հրատ. խմբակիչ Ե. Հ. Գևորգյան, Ս. Ե. Պալասանյան  
Նկարիչ Ե. Վ. Արամյան  
Տեխ. խմբակիչ Լ. Կ. Հատարյանյան  
Սրբագրիչ Մ. Գ. Քչկյան

ИБ № 1249

Հանձնված է շտրվածքի 21.04.1988 թ.: Ստորագրված է պապիրոսիան 6.01.1989 թ.:  
ՎՃ 02100: Իրագր. 60X84<sup>1/2</sup> թուղթ N 1: Տպատեսակ սղորի սղորահան, բարձր  
պապիրոսիան: Պաշ. 19,88 մմ., ապագր. 21,38 մմ.: Ներք. մակույ 19,88:  
Հրատ.-հարկարի. 18,88 մմ.: Տպարանակ 1500: Հրատ. N 7455: Փառվիչ N 635:  
ԳճԷ Զ. 70 Կ.

ՀԽՍՀ ԳՈ Հրատարակչության, 375019, Երևան, Մարշալ Բաղդասարյան պող. 24 գ.:  
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀԽՍՀ ԳՈ Հրատարակչության պալատ, 375210, ք. Էջմիածին:  
Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин.



ՄԵՐ ՉԱՎՈՐԵԿ ՄԻՋԻՆ  
ԱՐԵՎԵԼԻՔԻ  
ԵՐԿՐՆԵՐ  
ԵՎ  
ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ  
XV

